ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 6-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԵՎԱՆ
2017

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 6-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Երևան
«Արման Ասմանգուլյան» ԱՁ
2017

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМ. О. ТУМАНЯНА

МАТЕРИАЛЫ РЕСПУБЛИКАНСКОЙ СТУДЕНЧЕСКОЙ 6-ОЙ КОНФЕРЕНЦИИ

Ереван
«Арман Асмангулян» ЧП
2017

RA MINSITRY OF EDUCATION AND SCIENCE

VANADZOR STATE UNIVERSITY
AFTER H. TOUMANYAN

MATERIALS OF THE 6TH REPUBLICAN STUDENT CONFERENCE

Yerevan
"Arman Asmangulyan" Individual Entrepreneur
2017

ՀՏԴ 378 : 06
ԳՄԴ 74 . 58
Հ 316

Տպագրվում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Գ. Կ. Խաչատրյան, բ.գ.դ. (խմբագրական խորհրդի նախագահ)
Ա. Մ. Սանթոյան, բ.գ.թ. (խմբագրական խորհրդի նախագահի տեղակալ)
Լ. Հ. Պետրոսյան, բ.գ.թ. (պատասխանատու քարտուղար)

Խմբագրական խորհրդի անդամներ

Ռ. Հ. Եղոյան, գ.գ.դ., ԳԱԱ թղթ. անդամ, **Ֆ. Վ. Մովսիսյան**, պ.գ.դ., **Գ. Լ. Եթիմյան**, պ.գ.դ., **Պ. Հ. Գևորգյան**, մ.գ.դ., **Ս. Մ. Փարսադանյան** ֆ.մ.գ.թ., **Հ. Պ. Հարությունյան**, բ.գ.թ., **Վ. Ա. Փիլոյան**, բ.գ.թ., **Լ. Յ. Վարդանյան**, բ. գ. թ., **Ռ. Ա. Ավագիմյան**, հ.գ.թ., **Ն. Ս. Բարսեղյան**, տնտ.գ.թ., **Հ. Կ. Հակոբյան,** արվեստագիտության դոցենտ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 6-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ:
Հ 316 /ՀՀ ԿԳՆ; Վանաձորի պետական համալսարան, Խմբ. խորհուրդ՝
Գ. Խաչատրյան և ուրիշն. – Երևան: ԱՋ «Արման Ասմանգուլյան», 2017. –352 էջ:

Ժողովածուն ամփոփում է ՎՊՀ 2016 թ. նոյեմբերի 14-ին կայացած ուսանողական միջբուհական գիտաժողովի նյութերը, որոնք խմբագրական խորհրդի անդամների կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

ՀՏԴ 378 : 06
ԳՄԴ 74 . 58

ISBN 978-9939-875-05-7

© Հեղինակային խումբ, 2017
© Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, 2017

ՀՏԴ 378 : 06
ԳՄԴ 74 . 58
Հ 316

Печатается по решению научного совета
Ванадзорского государственного университета им. О. Туманяна

Редакционный совет

Г. К. Хачатрян, д.ф.н. (председатель редакционного совета)
А. М. Сантоян, к.ф.н. (заместитель председателя редакционного совета)
Л. Г. Петросян, к.ф.н. (ответственный секретарь)

Члены редакционного совета

Р. Г. Едоян, д.с/х.н., член-кор. НАН РА, **Ф. В. Мовсисян,** д.и.н, **Г. Л. Етимян**, д.и.н., **П. О. Геворкян**, д.п.н.,С. М. Парсаданян, к.физ.-мат.н., **А. П. Арутюнян**, к.ф.н., **В. А. Пилоян**, к.ф.н, Л.Ю. Варданян, к.ф.н., **Р. А. Авагимян**, к.псих.н., **Н. С. Барсегян**, к.э.н., А. К. Акопян, доцент искусствоведения

МАТЕРИАЛЫ РЕСПУБЛИКАНСКОЙ СТУДЕНЧЕСКОЙ 6-ОЙ КОНФЕРЕНЦИИ.
Հ 316 /Министерство образования и науки РА, Ванадзорский государственный университет, Ред. совет – Г. Хачатрян и др. – Ереван. «Арман Асмангулян» ЧП, 2017.– 352 стр.

В сборнике обобщены материалы межвузовской студенческой конференции, состоявшейся в ВГУ 14 ноября 2017г., которые были рецензированы, отредактированы и рекомендованы к печати по решению редакционного совета.

ՀՏԴ 378 : 06
ԳՄԴ 74 . 58

ISBN 978-9939-875-05-7

© Авторская группа, 2017
© Ванадзорский государственный университет им. О. Туманяна, 2017

ՀՏԴ 378 : 06
ԳՄԴ 74 . 58
Հ 316

Printed by the resolution of the Academic Council of
Vanadzor State University after H. Toumanyan

Editorial Board

G. K. Khachatryan Doctor of Philological Sciences (Chairman of Editorial Board)
A. M. Santoyan Candidate of Philological Sciences (Deputy Chairman of the Editorial Board)
L. H. Petrosyan Candidate of Philological Sciences (Secretary-in-charge)

Editorial Board Members

R. H. Yedoyan, Doctor of Agricultural Sciences, Member of NAS, **F. V. Movsisyan**, Doctor of Historical Sciences, **S. M. Parsadanyan,** Candidate of Physical and Mathematical Sciences, **G. L. Yetimyan**, Doctor of Historical Sciences, **P. H. Gevorgyan**, Doctor of Pedagogical Sciences, **H. P. Harutyunyan**, Candidate of Philological Sciences, **V. A. Piloyan**, Candidate of Philological Sciences, **L. Y.Vardanyan,** Candidate of Philological Sciences, **R. A. Avagimyan**, Candidate of Psychological Sciences, **N. S. Barseghyan**, Candidate of Economic Sciences, **H. K. Hakobyan,** Associate Professor of Art.

MATERIALS OF THE 6TH REPUBLICAN STUDENT CONFERENCE.
Հ 316 / RA Ministry of Education and Science, Vanadzor State University. Editorial Board: G. Khachatryan, etc. – Yerevan. “Arman Asmangulyan” Individual Entrepreneur, 2017. – 352 p.

The collection summarizes the materials of student intercollegiate conference, held on November 14, 2016 in VSU. The materials have been reviewed, edited and recommended for publication by the members of the editorial board.

ՀՏԴ 378 : 06
ԳՄԴ 74 . 58

ISBN 978-9939-875-05-7

© Author group, 2017
© Vanadzor State University
after H. Toumanyan, 2017

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ПЕДАГОГИКА, ПСИХОЛОГИЯ, СОЦИАЛЬНАЯ РАБОТА

PEDAGOGY, PSYCHOLOGY, SOCIAL WORK

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՔՎԵՍՏԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Անահիտ Հովակիմյան
ՀՊՄՀ, Մանկավարժություն և մեթոդիկա, 4-րդ կուրս
*Գիտ. ղեկավար՝ մ. գ. թ. **Աստղիկ Բալայան***

***Հանգուցային բառեր՝** ուսուցողական քվեստ, տեսակներ, կառուցվածք, կարևորություն*

Կրթության ժամանակակից միտումներից է ուսուցման գործընթացն այնպես կազմակերպել, որ միաժամանակ իրականացվեն սովորողների բազմակողմանի զարգացումը, ուսուցումը և դաստիարակությունը՝ կիրառելով առավելագույնս հետաքրքիր ու խթանող ձևեր [3]: Այսինքն՝ առաջ է քաշվում շատ կարևոր մի խնդիր՝ հետաքրքիր դարձնել ուսուցման գործընթացը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական, անհատական առանձնահատկությունները: Այդ մոտեցումը առավել քան կարևոր է պահպանել տարրական դպրոցում՝ որպես անձի ձևավորման և զարգացման օղակ: Հետևաբար, ուսուցչի համար առաջնային են դառնում սովորողների անձնային որակների ճանաչումը, ճանաչողական, ինքնուրույն գործունեության, հաղորդակցական և այլ կարողությունների զարգացման, դրանց ակտիվ կիրառությունն ապահովելու միջոցներին տիրապետելը:

Հաշվի առնելով ժամանակակից հասարակության պահանջները՝ կարող ենք վստահաբար ասել, որ հասարակական հարաբերություններում կողմնորոշվելու ունակությունը, տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելը, մշտապես սովորելու, ինքնազարգացման և ինքնիրացման վրա կենտրոնանալու ցանկությունն ու կարողությունը ձևավորվում է կրտսեր դպրոցական տարիքից: Ուստի, անգնահատելի է տարրական դպրոցում աշխատող ուսուցիչների դերը, իսկ նրանց ներկայացվող մասնագիտական ու բարոյական պահանջները՝ խիստ:

Տարիներ շարունակ փորձ է արվում գտնել ուսուցման կազմակերպման այնպիսի արդյունավետ մոտեցումներ ու մեթոդներ, որոնք կտան վերոնշյալ խնդիրները լուծելու հնարավորություն: Սովորողների ակտիվության տեսակետից ավելի արդյունավետ է կանգ առնել ուսուցման փոխներգործուն մեթոդների վրա, քանի որ դրանց հիմքում ընկած է փոփոխական կազմով խմբերով աշխատանքի սկզբունքը, երբ սովորողներն աշխատում են միմյանց հետ՝ փորձելով համատեղ լուծել ուսումնական խնդիրները:

Այսօր մեծ համբավ է վայելում ուսուցողական քվեստի մեթոդը: Իր բուն իմաստով քվեստը (անգլ. թարգմանաբար՝ quest – փնտրել) նշա-

նակում է խաղ, որը խաղի մասնակցից պահանջում է մտավոր խնդրի լուծում՝ սյուժեի զարգացման համար [2]: Սյուժեն նախօրոք կազմում է ուսուցիչը՝ հաշվի առնելով քվեստի անցկացման վայրը, ժամանակը, մասնակիցների տարիքը և այլ առանձնահատկություններ, ընդ որում՝ այն կարող է լինել ճկուն՝ կախված մասնակիցների ցուցադրած արդյունքից և պատասխաններից [1]: Ուսուցման գործընթացում քվեստը հատուկ մշակված և կազմակերպված հետազոտական աշխատանք է, որի ընթացքում սովորողը նախօրոք նշված տեղում տրամադրված հարցաշարով իրականացնում է որոնումներ [5]: Այն կարող է իրականացվել ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցի սահմաններից դուրս (թանգարանում, գրադարանում, բակում, անտառում և այլն):

Կախված բովանդակությունից՝ քվեստը կարող է լինել.

- ***Գծային***, որտեղ խաղը կառուցված է շղթայածև. պատասխանելով հարցին՝ մասնակիցներն ստանում են հաջորդ հարցը և այսպես շարունակ:
- ***Գրոհային***, որտեղ մասնակիցներից յուրաքանչյուրն ստանում է առաջադրանք և ինքնուրույն գտնում նրա կատարման ելքը:
- ***Օղակային***, որը նույն գծային քվեստն է, միայն այն տարբերությամբ, որ իրականացվում է օղակաձև, այսինքն՝ խմբերի մեկնարկը տրվում է տարբեր տեղերից, որը նրանց համար նաև վերջնակետ է [4]:

Ուսուցողական քվեստը հիմնականում կառուցվում է այսպես՝



Տարրական տպրոցում ուսուցողական քվեստը կարող է իրականացվել առաջին դասարանից սկսած՝ հաշվի առնելով սովորողների հետաքրքրությունները, ուսուցման նպատակները, սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Ուսուցողական քվեստ կարող է անցկացվել, օրինակ, մայրենիի արտադասարանային պարապմունքների ժամանակ, երբ սովորողներն այցելում են Մատենադարան: «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում կարելի է կազմակերպել ուսուցողական քվեստ Հայաստանի բնության պետական թանգարանում, որտեղ երեխաները խմբերով իրենց տրամադրված հարցաշարով կարող են շրջել ցուցասրահներում և գտնել հարցերի պատասխանները: Քվեստի անցկացման արդյունքը կլինի այն, որ երեխաները կկարողանան ոչ միայն համագործակցելով փնտրել և գտնել այն տեղեկությունը, որը պահանջվում է իրենցից, այլ զուգահեռ կյուրացնեն այն:

Ուսուցողական քվեստ իրականացնող մանկավարժը պետք է նախևառաջ հստակ սահմանի քվեստի նպատակն ու խնդիրները: Հանրահայտ է, որ կրտսեր դպրոցական տարիքում սովորողների գործողության առաջնային տեսակը խաղայինից աստիճանաբար վերածվում է ուսումնականի, ինչը կրտսեր դպրոցականների համար որոշակի դժվարությունների պատճառ է դառնում: Մենք կարծում ենք, որ ուսուցողական քվեստը կարող է և՛ օգտակար, և՛ ուսուցողական, և՛ զարգացնող ազդեցություն ունենալ կրտսեր դպրոցականների վրա՝ նրանց օրը դարձնելով ավելի հետաքրքիր և տեղեկատվությամբ ու գաղափարներով հարուստ: Այս մեթոդի կիրառումը կնպաստի սովորողների կողմից համագործակցված աշխատանքի կատարմանը, ինքնուրույն տեղեկություն գտնելու, որոնողական աշխատանք կատարելու, հասկանալով կարդալու, արագ կողմնորոշվելու կարողության զարգացմանը: Հետևաբար, առաջարկում ենք այս մեթոդը ևս կիրառել տարրական դպրոցում՝ ի թիվս արդյունավետ այլ մեթոդների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Жебровская О.О. Международный Вебинар «Живые» квесты в образовании (современные образовательные технологии)» [Электронный ресурс].- Режим доступа: http://ext.spb.ru/index.php/webinars/2209-22012013-qq-qq.html (дата обращения: 04.06.2015).
2. Квест (значения) // Википедия [2015-2015] (дата обновления: 25.03.2015).- URL: http://ru.wikipedia.org/?oldid=69566952 (дата обращения: 25.05.2015).
3. Осяк С.А. Нестандартные формы уроков //Перспективы науки.- 2012.- № 11 (38).- С. 62-64.
4. Осяк С.А., Султанбекова С.С., Захарова Т.В., Яковлева Е.Н., Лобанова О.Б., Плеханова Е.М. ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КВЕСТ - СОВРЕМЕННАЯ ИНТЕРАКТИВНАЯ ТЕХНОЛОГИЯ // Современные проблемы науки и образования.- 2015.- № 1-2.
5. Пешня И.С. Интерактивные технологии обучения как средство развития профессиональной компетентности курсанта военизированного вуза: автореф. дис. ... Канд. пед. наук.- Иркутск, 2005. - 20 с.

ИСПОЛЬЗОВАНИЕ ОБРАЗОВАТЕЛЬНОГО КВЕСТА В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Анаит Овакимян
АГПУ, Начальная педагогика и методика, 4-ый курс

РЕЗЮМЕ

***Ключевые слова**: образовательный квест, типы, структура, важность.*

В статье говорится об одном из интерактивных методов – о квесте. Представлены особенности, виды, структура, способы проведения квеста. Автор предлагает использовать его и в начальной школе, основываясь на том, что метод интересный, способствует развитию образовательной деятельности учащегося.

THE USE OF EDUCATIONAL QUEST IN PRIMARY SCHOOL

Anahit Hovakimyan
ASPU, Pedagogy and Methodology, 4th course

SUMMARY

***Key words**: educational quest, kinds, structure, importance.*

The article dwells upon the quest: one of the interactive methods of education. Its peculiarities, kinds, structure and implement means are stated in the article. The author suggests use it in primary school being based on the interest, educational and developmental sides of this method.

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Արմինե Խրոյան
ՀՊՄՀ, Սկզբնական կրթության ֆակուլտետ,
Մանկավարժություն և մեթոդիկա, 4-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ բ.գ.թ., դոցենտ ***Արմենուհի Մխիթարյան***

Հանգուցային բառեր՝ *հեքիաթ, հեքիաթաթերապիա, հոգեբանություն, զարգացում, տարրական դպրոց*

Ժողովրդական բանահյուսությունն ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը, սերնդեսերունդ փոխանցվելով, բյուրեղացել, հասել է մինչև մեր օրերը՝ ձևավորելով և ամբողջացնելով այն կրողների ազգային դիմագիծը՝ հարուստ նյութ դառնալով ինչպես ժամանակակից գեղարվեստական գրականության, այնպես էլ պատմագիտության և արվեստի զարգացման համար:

Հայկական բանահյուսության կարևոր ժանրերից մեկը հեքիաթն է: Հեքիաթը վիպական բանահյուսության հնագույն տեսակներից է: Այդ հարուստ և բազմազան նյութը ցույց է տալիս տարբեր ժողովուրդների բանահյուսությունների նմանությունները և համընկնումները՝ միաժամանակ զարմացնելով բովանդակության և լեզվի յուրահատկությամբ:

Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական արժեքավոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են որպես քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով [1,180]:

Դեռևս հնագույն ժամանակներից հեքիաթների միջոցով սերնդեսերունդ փոխանցվել են մարդկության իմաստությունն ու գիտելիքները:

Հեքիաթը՝ որպես երեխաների հետ համատեղ աշխատանքի տեխնոլոգիա, լայնորեն կիրառվում է հոգեբանության մեջ: Դրա կիրառման երևույթն ստացել է հեքիաթաթերապիա անվանումը:

Ինչպես գրում է Ի.Վ. Վեչկովը, [2, 23] հեքիաթն օգտագործում են թե՛ բժիշկները, թե՛ մանկավարժները, և յուրաքանչյուր մասնագետ հեքիաթում առանձնացնում է այն ռեսուրսը, որն օգնում է իրեն՝ իրականացնելու մասնագիտական խնդիրների լուծումը: Հեքիաթի ճիշտ ժամանակին պատմելը երեխայի համար կարևոր է այնքան, որքան մեծահասակների համար հոգեբանական այցելությունը:

Հեքիաթի օգնությամբ ընթերցողը կամ լսողը հանդիպում է ինքն իրեն, բացահայտում իր գաղտնի, դեռ ոչ բացահայտված կողմերը: Մասնագետները հեքիաթների օգնությամբ կարող են բացահայտել լուրջ հոգեբանական խնդիրներ: Հեքիաթի շուրջ տարվող աշխատանքների ընթացքում պետք է կարևորել հերոսների այն արարքները, որոնց շուրջ զարգանում են հեքիաթի դեպքերը: Դրանց միջոցով են որոշվում գլխավոր հերոսի արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր միտքը [1,181]:

Հեքիաթի գործառույթները: Առանձնացնում են հեքիաթի մի քանի հիմնական առանձնահատկություններ՝ [3,33]

1. Հեքիաթի տեքստն առաջացնում է էմոցիոնալ տատանումներ ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների մոտ,
2. Հեքիաթաթերապիա հասկացությունը հիմնված է փոխհարաբերությունների վրա, որն իր մեջ պարունակում է ինֆորմացիա՝

- ✓ Կենսական կարևոր գոյացությունների վերաբերյալ,
- ✓ Կյանքի արժեքների վերաբերյալ,
- ✓ Նպատակի առաջադրման մասին,
- ✓ Հեղինակի ներաշխարհի մասին (խոսքը հեղինակային հեքիաթների մասին է),

3. Հեքիաթներում սիմվոլիկ կերպով ներկայացվում է ինֆորմացիա այն մասին, թե՝

- ✓ Ինչպե՞ս է կառուցված այս աշխարհը, ո՞վ է այն ստեղծել,
- ✓ Ի՞նչ է կատարվում մարդու հետ իր կյանքի տարբեր շրջաններում,
- ✓ Ինչպիսի՞ դժվարությունների է հանդիպում մարդը և ինչպե՞ս հաղթահարել դրանք,
- ✓ Ինչպե՞ս առանձնացնել և գնահատել սերն ու ընկերությունը,
- ✓ Ինչպիսի՞ արժեքներով առաջնորդվել կյանքում,
- ✓ Ինչպե՞ս կառուցել հարաբերություններ ծնողների և երեխաների միջև,
- ✓ Ինչպե՞ս ներել:

Ե.Վ.Չեխի տեսակետի համաձայն՝ կարելի է առանձնացնել հեքիաթի հետ աշխատանքի մի քանի եղանակ՝ [6, 24]

- ✓ Հեքիաթի պատմում,
- ✓ Հեքիաթի նկարում,

- ✓ Հեքիաթի հորինում,
- ✓ Տիկնիկի պատրաստում,
- ✓ Հեքիաթի ընդլայնում:

Թերապևտիկ հեքիաթի տեսակներն են՝

Ժողովրդական հեքիաթներ: Ժողովրդական հեքիաթները ստեղծվել են դարերի ընթացքում, պահպանել բարոյաէսթետիկ սկզբունքները, մարդկանց միջև ունեցած փոխհարաբերությունները, այդ իսկ պատճառով էլ միշտ կիրառվել են մանկավարժական նպատակներով:

Դիդակտիկ հեքիաթներ: Ուսուցողական հեքիաթները երեխաներին պատմում են նոր հասկացությունների մասին, հիմք են հանդիսանում նոր գիտելիքների ձեռքբերման համար: Այս հեքիաթներում անձնավորվում են թվերը, տառերը, առարկաները և այլն:

Դիագնոստիկ հեքիաթներ: Դիագնոստիկ հեքիաթները երեխայի գաղտնի մտքերի և հետաքրքրությունների բացահայտման միջոցներ են: Երեխան իր ենթագիտակցական մակարդակում ընտրում է հեքիաթի որևէ հերոսի և ցանկանում նմանակել նրան: Կախված հերոսի կերպարային առանձնահատկություններից՝ կարելի է կատարել եզրակացություններ:

Պրոֆիլակտիկ հեքիաթներ: Հեքիաթներ լսելու ընթացքում երեխաներն ակամայից գիտելիքներ են կուտակում իրենց և շրջակա միջավայրի մասին, ձևավորվում է երեխայի անձը, դրվում է նրա հետագա կյանքի հիմքը:

Բուժիչ-հոգեբանական հեքիաթներ: Հեքիաթ լսելով՝ երեխան իրեն նույնականացնում է իր կյանքի իրավիճակը հիշեցնող հերոսի հետ, վերապրում է նրա տխրությունն ու ուրախությունը: Նրա հետ միասին հայտնվում է խնդիրների մեջ և դրանցից ելքեր փնտրում: Դրա շնորհիվ իրական կյանքում նա սկսում է իրեն զգալ ավելի պաշտպանված և ինքնավստահ՝ օգտագործելով դրական հերոսի կիրառած հնարքները իր խնդիրները կարգավորելու ժամանակ:

Մեդիատիվ հեքիաթներ: Մեդիտատիվ հեքիաթներն ուղղված են որոշակի դրական հուզական վիճակի առաջացմանը: Դրանք երեխային օգնում են ազատվել լարվածությունից, հոգնածությունից և գրգռվածությունից [3, 42]:

Որպես տարրական դասարանների ապագա ուսուցիչ, կարծում ենք, որ հեքիաթն ունի կարևոր դեր և նշանակություն երեխայի ինքնադրսևոր-

ման գործընթացում: Ունենալով շատ փոքր կենսական փորձ՝ երեխան դժվարանում է ճիշտ ելքեր գտնել տարբեր իրավիճակներից, ընդունել որոշումներ կամ կողմնորոշվել, իսկ հեքիաթն օգնում է նրան առաջացած խնդրին տալ ճիշտ լուծում՝ առաջնորդվելով իրեն ծանոթ հեքիաթի բովանդակությամբ:

Երեխան միշտ բացասաբար է արձագանքում իրեն ուղղված պարտադրանքին, սկսում է կատարել իրեն առաջադրվածի ճիշտ հակառակը՝ ցանկանալով ցույց տալ, որ ինքն արդեն մեծ է և ինքնուրույն: Այս իրավիճակներում լուծման ամենալավ միջոցներից մեկը հեքիաթն է, որը կարող է գոյություն ունենալ կամ պարզապես հորինվել հենց նմանատիպ իրավիճակին լուծում տալու համար: Կարևոր է մեծ ուշադրություն դարձնել հեքիաթի բովանդակությանը, հերոսների ընտրությանն ու դեպքերի նկարագրությանը:

Հեքիաթի ընտրությունը պետք է հետապնդի որևէ կոնկրետ նպատակ, իսկ արդյունքն ու հետևանքները պետք է լինեն կանխատեսելի և մտածված: Պետք է հաշվի առնել, որ հեղինակային հեքիաթները ոչ միշտ են նախընտրելի, քանի որ դրանք արտահայտում են հեղինակի տեսակետը, նրա ներաշխարհն ու հայացքները, որոնք երբեմն չեն համապատասխանում երեխայի ներաշխարհային առանձնահատկություններին: Բացի այդ՝ հեքիաթը, հեքիաթի հորինումն ու դրա շուրջ կատարվող աշխատանքը նպաստում են երեխայի երևակայության, ինքնուրույնության և այլ որակների ձևավորմանը:

Տարրական դասարաններում կիրառվում են հեքիաթի շուրջ աշխատանքի մի շարք առաջադրանքներ: Այդպիսի առաջադրանքներից են անավարտ հեքիաթի լրացումը, հեքիաթի սկզբնամասի հորինումը, հեքիաթի պատմումը՝ հակառակ տրամաբանությամբ, հերոսների ավելացումը հեքիաթում ու դրանց դերի որոշումը և այլն:

Ստորև ներկայացնենք մի քանի հեքիաթներ, որոնք կիրառվել են որպես երեխայի և ընտանիքի միջև առկա միջանձնային հարաբերությունների բացահայտման միջոցներ: Որպես առաջադրանքի տեսակ ընտրվել է անավարտ հեքիաթի լրացումը: Աշխատանքն իրականացվել է մանկավարժական պրակտիկայի շրջանակներում երրորդ դասարանի աշակերտի հետ: Ստացված արդյունքները հնարավորություն են տվել բացահայտելու նրա և ընտանիքի մյուս անդամների փոխհարաբերությունների առանձնահատկությունները, որոնք իրենց հերթին որոշակի

ազդեցություն էին թողնում նրա ուսումնական առաջադիմության և դասընկերների հետ միջանձնային հարաբերությունների կառուցման վրա:

Հեքիաթ 1՝ «Գառնուկը»

Կար-չկար մի գառնուկ իր մայրիկի հետ: Գառնուկը մեծ էր և անգամ կարողանում էր ինքնուրույն խոտ ուտել: Մայրիկը նրան երեկոյան մի փոքր կաթ էր տալիս, որը նա շատ էր սիրում: Սակայն մի անգամ մայրիկի մոտ բերեցին ավելի փոքրիկ գառնուկ, որը միայն կաթ էր խմում և ինքնուրույն ոչինչ չէր կարողանում անել: Մայրիկը գառնուկին ասաց, որ նա այսուհետ ստիպված է միայն խոտ ուտել, քանի որ կաթը երկու ձագուկներին միաժամանակ չի բավականեցնի:

Ինչպե՞ս վարվեց գառնուկը:

Հեքիաթ 2՝«Ճանապարհորդները»

Մի անգամ մայրիկն ու հայրիկը, տատիկն ու պապիկը, մորեղբայրն ու հորաքույրը և բոլոր երեխաները մեկնեցին կայարան: Նրանցից մեկը նստեց գնացքն ու հեռացավ և հավանաբար՝ անվերադարձ:

Ո՞վ էր նա:

Հեքիաթ 3՝ «Ավազե տունը»

Մի տղա ավազից գեղեցիկ մի տնակ կառուցեց: Տնակը բավականին լայն էր, բայց կարող էր տեղավորել միայն մեկ հոգու: Տղայի քույրիկին տնակը շատ դուր եկավ, և նա խնդրեց տնակը իրեն նվիրել:

Ի՞նչ ես կարծում, տղան ինչպե՞ս վարվեց:

Հեքիաթ 4՝«Զբոսանք»

Մի տղա իր մայրիկի և հայրիկի հետ միասին գնացել էր անտառ զբոսնելու, և նրանք շատ ուրախ էին: Երբ նրանք տուն վերադարձան, տեսան, որ քույրիկի դեմքի արտահայտությունը փոխվել է: Ինչպիսի՞ նոր արտահայտություն է ստացել քույրիկի դեմքը: (Տղաների համար)

Մի աղջնակ իր մայրիկի և հայրիկի հետ միասին գնացել էր անտառ ՝ զբոսնելու, և նրանք շատ ուրախ էին: Երբ նրանք տուն վերադարձան, տեսան, որ քույրիկի դեմքի արտահայտությունը փոխվել է: Ինչպիսի՞ նոր արտահայտություն է ստացել քույրիկի դեմքը: (Աղջիկների համար)

Հեքիաթ 5՝ «Հիմար երազ»

Մի անգամ մի աղջիկ անսպասելի արթնացավ ու ասաց. «Ես մի շատ սարսափելի երազ եմ տեսել իմ ընտանիքի մասին»:

Ի՞նչ երազ էր տեսել նա:

Արդյունքների քարտ

Անուն, ազգանուն՝ Էրիկ Ղազարյան Տարիք ՝ 8 տարեկան
Անցկացման ամսաթիվը՝ 10.09.2016թ.
Եղբայր՝ 5 տարեկան

Աղյուսակ 1

Հեքիաթ	Պատասխան	Վարքագիծ	Վերաբերմունք
Գառնուկը	Կհեռացնի փոքրիկին և մայրիկի հետ կմնա միայնակ	Թշնամական	Խանդ(պայքար մայրական սիրո համար)
Ճանապար-հորդները	Կրտսեր տղան	Թշնամական	Ագրեսիվության դրսևորում դեպի եղբայրը
Ավազե տնակ	Կնվիրի նրան	Զիջողական	Կիսվելու պատրաս-ակամություն
Զբոսանք	Նա տխրել էր, որ իրեն չէին տարել զբոսանքի	Թշնամական	Խանդ
Հիմար երազ	Նա տեսել էր, որ ծնողներն իրեն միայնակ են թողնում մութ անտառում և հեռանում	Թշնամական	Խանդ

Եզրահանգումներ՝ Թշնամական պահվածք – 80%
Զիջողականություն – 20%

Ունի բացասաբար արտահայտվող վերաբերմունք եղբոր նկատմամբ, վախ ծնողների սիրուց զրկվելուց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015, 314 էջ:
2. Вачков И.В. Сказкотерапия. Развитие самосознания через психологическую сказку. –М.: Ось- 89, 2007. -144 с.
3. Киселева М.Б. Арт-терапия в работе с детьми: Руководство для детских психологов, педагогов, врачейи специалистов, работающих с детьми. - СПб.: Речь, 2006. – 160 с.
4. Притчи, сказки, метафоры в развитии ребенка. - СПб.: Речь, 2007. – 296 с.
5. Ткач Р.М. Сказкотерапия детских проблем. СПб.: Речь; М.: Сфера, 2008. - 118 с.
6. Чех Е.В. Я сегодня злюсь. Расскажи мне сказку. –СПб.: Речь; М.: Сфера, 2009. – 144 с.

РОЛЬ СКАЗОК В НАЧАЛЬНЫХ КЛАССАХ С ТОЧКИ ЗРЕНИЯ ТЕРАПЕВТИЧЕСКОЙ ФУНКЦИИ

Армине Хроян
АГПУ, Факультет начального образования.
отд. начальная педагогика и методика, 4-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *сказка, сказкатерапия, психология, терапевтический, развитие, начальная школа.*

В начальных классах, мероприятия проводимые вокруг сказок могут носить терапевтический характер. Сказка, как технология работы с детьми, широкомасштабно применяется в психологии. Ее применение в основном направлено на преодоление некоторых психологических барьеров у детей. Существует множество различных заданий в методологии проведения сказки, в основе которой лежат различные цели. Выполнение этих задач направлено на развитие у учащихся таких качеств, как воображение, память, мышление, формулировка (или связанность) текста и других качеств.

THE ROLE OF FAIRY TALES IN THE POINT OF VIEW OF THERAPEUTIC FUNCTION PERFORMANCE IN PRIMARY CLASSES

Armine Khroyan
ASPU, Faculty of Preschool Education,
Pedagogy and Methodology (elementary education), 4th course

SUMMARY

Keywords: *fairy-tale, fairy-tale therapy, psychology, therapeutic, development, elementary school.*

In primary classes the target work done within the scope of fairy tales may have therapeutic meaning. Fairy tales are widely used in psychology as a technology of work done with children. Its use greatly helps children to overcome some psychological problems. There are different work tasks within the scope of fairy tales, which performance has different aims. The performance of these tasks also promotes the development of pupils' imagination, thought, coherent speech and other qualities.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԱԿԻՐՆԵՐԻ ՀԵՏ

Արմինե Շախկյան
ՎՊՀ, Սոցիալական աշխատանք, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ մ.գ.թ. ***Զարուհի Գրիգորյան***

Հանգուցային բառեր՝ *ՄԻԱՎ համաճարակ, պրոֆիլակտիկ ծառայություններ, ռիսկային վարքագիծ, սոցիալական աշխատանք ՄԻԱՎ վարակակիրների հետ, սոցիալ-հոգեբանական ասպեկտներ, համակողմանի մոտեցում*

Ցանկացած պետություն, ժողովուրդ, հասարակության յուրաքանչյուր անդամ կանգնած է լրջագույն խնդրի առջև՝ կապված մարդու իմունային անբավարարության վիրուսի (ՄԻԱՎ) արագ տարածման հետ: Նախկինում այն եղել է դանդաղ տարածվող համաճարակ, սակայն այսօր այս «դինամիկ, անկայուն» համաճարակը դուրս է եկել վերահսկողությունից: ՄԻԱՎ-ը սահմաններ չի ճանաչում, այն տարածված է ամենուր:

ՄԻԱՎ վարակը երկարատև ընթացքով քրոնիկ վարակիչ հիվանդություն է, որի հարուցիչը մարդու իմունային անբավարարության վիրուսն է՝ ՄԻԱՎ-ը: Ներթափանցելով օրգանիզմ՝ ՄԻԱՎ-ն ախտահարում է իմունային համակարգը, ինչի հետևանքով օրգանիզմը կորցնում է վարակների, նաև մի շարք չարորակ ուռուցքների դեմ պայքարելու ունակությունը: [6, էջ 48]

Քառորդ դար է անցել ՄԻԱՎ վարակի առաջին դեպքի հայտնաբերումից: Այս ընթացքում ՄԻԱՎ-ն արմատապես փոխել է աշխարհը. այն խլել է ավելի քան 25 մլն. տղամարդու և կնոջ կյանք, որբացել են միլիոնավոր երեխաներ: Այսօր աշխարհում 40 մլն. մարդ տառապում է ՄԻԱՎ վարակով: Այժմ համաճարակը դարձել է լուրջ սպառնալիք 21-րդ դարի գլոբալ առաջընթացի համար:

Վարակի փոխանցման վերաբերյալ շրջանառվող վարկածներից ավելի հավանականը «Վարակի փոխանցումը պրիմատներից մարդուն» վարկածն է: Այս մասին առաջին անգամ իրենց կարծիքն են արտահայտել Լյուկ Մոնտանեն և Ռոբերտ Գալլոն:

Եթե հակիրճ ձևով ներկայացնենք համաճարակի զարգացման պատմությունը, ապա կարելի է ասել, որ 1978 թ. ի հայտ են եկել ՄԻԱՎ

վարակի առաջին ախտանշանները, 1983 թ. ՄԻԱՎ-ը բացահայտվել է, 1987 թ. գրանցվել է ՄԻԱՎ վարակի առաջին դեպքը, 1988 թ. ՄԻԱՎ վարակի առաջին դեպքը գրանցվել է Հայաստանում, իսկ 2015թ. տվյալներով աշխարհում ՄԻԱՎ վարակից տառապում է ավելի քան 40 մլն. մարդ: [11]

Այսօր գործում են միջազգային խորհրդատվական և պրոֆիլակտիկ ծառայություններ՝ ուղղված ՄԻԱՎ-ի դեմ պայքարին: Այդպիսի ծառայությունները ստեղծվում են, մասնավորապես, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ազգային ծրագրերի, հասարակական կազմակերպությունների միջոցով:

Վերջին տասնամյակներում շատ երկրներ դժվարին ճանապարհ են անցել ՄԻԱՎ վարակակիրերի համար օրենսդրական դաշտի մշակման, սահմանափակումների և արտոնությունների հստակեցման, խտրականության դեմ պայքարի ծրագրերի մշակման ընթացքում:

ՄԻԱՎ վարակով տառապող անձինք հասարակության մեջ ունենում են տարբեր խնդիրներ, որոնց մեծ մասը պայմանավորված է տեղեկատվության բացակայությամբ, պետական աջակցության անբավարար մակարդակով, հասարակության խտրական վերաբերմունքով: Արդյունքում տուժում են ոչ միայն ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, այլև ամբողջ հասարակությունը, քանի որ խարանի ու խտրականության պատճառով մարդիկ նույնիսկ այն դեպքում, երբ գիտակցում են, որ ՄԻԱՎ-ով վարակվելու տեսանկյունից ռիսկային վարքագիծ են երբևիցե դրսևորել, այդ վախը թույլ չի տալիս, որ նրանք հետազոտվեն, պարզեն վիրուսի առկայության փաստը, իսկ արդյունքում կարող են վարակել նաև հասարակության այլ անդամների:

ՄԻԱՎ վարակն ունի վառ արտահայտված սոցիալական և վարքագծային հատկանիշներ, և դրա դեմ պայքարելու միայն բժշկական միջոցառումների իրականացումը չի կարող արդյունավետ լինել: Սակայն գործնականում այս հիվանդության կանխարգելմանն ուղղված միջոցառումների շարքում դեռևս առաջնային է համարվում բժշկական միջամտությունը: Բայց պետք է նշենք, որ ՄԻԱՎ-ը չպետք է ընկալել միայն որպես բժշկական խնդիր, այն լայն իմաստով սոցիալ-տնտեսական խնդիր է:

ՄԻԱՎ վարակակիրն ունենում է ոչ միայն առողջական, այլ նաև լուրջ սոցիալ-հոգեբանական խնդիրներ, որոնց լուծմանը շատ դեպքերում բուժաշխատողը չի կարող համապատասխան մոտեցում դրսևորել: Հենց այստեղ է, որ հասունանում է ՄԻԱՎ վարակահիրների հետ իրակա-

նացվող սոցիալական աշխատանքի անհրաժեշտությունը: [5, 113]

Միանգամայն պարզ է, որ ՄԻԱՎ համաճարակը, ի տարբերություն այն համաճարակների, որոնք ունեն տեղական բնույթ, տարածված է բոլոր երկրներում և մայրցամաքներում: Բացառություն չէ նաև Հայաստանը, ուր ՄԻԱՎ վարակակիրների թիվն աճում է ԱՊՀ երկրներից Հայաստան վերադարձող այն քաղաքացիների թվի աճի հաշվին, որոնց մոտ արդեն իսկ ախտորոշված է ՄԻԱՎ վարակ և առկա են վարակի կլինիկական դրսևորումներ: Վերջին չորս տարիների ընթացքում գրանցված հիվանդների կեսից ավելին հիմնականում վարակվել են Ռուսաստանում և Ուկրաինայում:

2013 թ. դրությամբ Հայաստանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 1541 դեպք: Գրանցված ՄԻԱՎ վարակակիրների ընդհանուր թվում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 1066 դեպք (69%), իգական սեռի ներկայացուցիչների մոտ գրանցվել է 454 դեպք (29%): ՄԻԱՎ վարակի 28 դեպք էլ (2%) գրանցվել է երեխաների շրջանում: ՄԻԱՎ վարակակիրների մոտ 56%-ը ընդգրկված են 25-39 տարեկանների խմբում: [10]

ՄԻԱՎ վարակի սոցիալ-հոգեբանական ասպեկտները ուսումնասիրելով՝ կարելի է առանձնացնել այն հիմնական խնդիրը, որ ունենում են ՄԻԱՎ վարակակիրները: Մենք կարծում ենք, որ այդ հիմնական խնդիրը հիվանդի սոցիալական մեկուսացումն է: Շրջապատում միանալով տվյալ անձի վարակակիր լինելու մասին՝ նրան հեռացնում են աշխատանքից, նրանից հրաժարվում են ընկերներն ու հարազատները: Հենց նման իրավիճակում է հիվանդը զգում իրեն աջակցող մեկի կարիքը, որի դերում կարող է հանդես գալ սոցիալական աշխատողը: Սակայն պետք է նշենք, որ Հայաստանում դեռևս զարգացած չէ ՄԻԱՎ վարակակիրների հետ իրականացվող սոցիալական աշխատանքի մշակույթը: Այդ իսկ պատճառով սոցիալական աշխատանքի այս ոլորտը կներկայացնենք զարգացած երկրների փորձով, որտեղ այսօր արդեն իրողություն և անհրաժեշտություն է ՄԻԱՎ վարակակիրների հետ իրականացվող սոցիալական աշխատանքը:

Սոցիալական աշխատանքը ՄԻԱՎ վարակակիրների հետ ենթադրում է հիվանդության տարբեր աստիճաններում գտնվող հիվանդների համար մասնագիտացված բժշկական օգնության և խնամքի կազմակերպում, սոցիալական աջակցության և հոգեբանական օգնության տրամադրում:

Սոցիալական աշխատողի առաջին քայլը պետք է լինի իրազեկումը: Շատ հաճախ մարդիկ խուսափում են շփվել հիվանդի հետ՝ վախենալով վարակվել նրանից: Սոցիալական աշխատողի խնդիրն է հասարակությանը մանրամասնորեն ներկայացնել վիրուսի փոխանցման ուղիները, տեղեկացնել, որ վարակը ամենօրյա շփման ընթացքում և օդակաթիլային ճանապարհով չի փոխանցվում, հորդորել բարյացկամ վերաբերմունք դրսևորել հիվանդի նկատմամբ: [1, 80-81]

ՄԻԱՎ վարակը կարող է փոխանցվել.

1. չպաշտպանված սեռական հարաբերությունների դեպքում, երբ զուգընկերներից մեկը վարակված է ՄԻԱՎ-ով,
2. արյան միջոցով (թմրանյութերի ներարկային օգտագործում, չախտազերծված ներարկիչների, բժշկական պարագաների օգտագործում, վարակված դոնորական արյան փոխներարկում),
3. մորից երեխային (հղիության ընթացում, ծննդաբերության ժամանակ, կերակրելիս):

Սոցիալական աշխատողը վարակի փոխանցման ուղիների մասին ինֆորմացիա տրամադրելուց հետո պետք է տեղեկացնի, թե ինչ քայլեր են անհրաժեշտ ձեռնարկել վարակից խուսափելու համար: Մանսավորապես, անհրաժեշտ է.

- զերծ մնալ թմրամիջոցներ ընդունելուց,
- օգտագործել մեկանգամյա օգտագործման ներարկիչներ,
- խուսափել պատահական սեռական կապերից կամ մշտապես պահպանակ օգտագործել: [4, 198]

Այս ինֆորմացիան հանրությանը կարող է փոխանցվել տեղեկատու սոցիալական գովազդներով, ռադիոյի, հեռուստատեսության համապատասխան թեմատիկ հաղորդումների շրջանակներում, ձեռնարկների, տեղեկատվական թերթիկների միջոցով:

Պրոֆիլակտիկ միջոցառումները ենթադրում են ոչ միայն բնակչության ուսուցում, այլ նաև աշխատանք արդեն վարակված մարդկանց հետ: Այս տեսանկյունից սոցիալական աշխատանքում առանձնացնում են առաջնային և երկրորդային կանխարգելում:

Առաջնային կանխարգելումը ենթադրում է ՄԻԱՎ վարակի ձեռքբերման նախազգուշացման քայլերի ձեռնարկում, առողջապահական համակարգի գործառնման կարգի և դրանից օգտվելու իրավունքի մասին ինֆորմացիայի տրամադրում:

Երկրորդային կանխարգելումը ենթադրում է ՄԻԱՎ վարակակրին

անհրաժեշտ բժշկասոցիալական օգնության կազմակերպմանն ուղղված միջոցառումներ, բուն սոցիալական աշխատանքի կիրառում առողջապահության և անհրաժեշտ այլ ոլորտներում: [5, 75-77]

Սոցիալական աշխատողի խնդիրներից է նաև այն ընտանիքների հայտնաբերումը, հաշվառումը, աջակացումը, ուր ապրում է ՄԻԱՎ վարակակիր: Շատ կարևոր է ընտանիքի հոգեբանական վերականգնումը, բարենպաստ մթնոլորտի ձևավորումը, ընտանեկան փոխհարաբերությունների կայունացումը, որպեսզի նրանք կարողանան հարմարվել իրենց ընտանիքի անդամի նոր կարգավիճակին: Մենք կարծում ենք, որ սոցիալական աշխատողը պետք է ոչ միայն աշխատի հիվանդի միկրոմիջավայրում, այլ նաև լայն սոցիալական միջավայրում, որը կարող է նպաստել հասարակության մեջ ՄԻԱՎ վարակակիրների նկատմամբ համապատասխան հասարակական գիտակցության ձևավորմանը:

Հարկ է իմանալ, որ ՄԻԱՎ-ով ապրելը բարդ խնդիր է, որը պահանջում է բավականին ուժ և ժամանակ, որոշակի դժվարություններ, որոնք հիվանդը ի զորու չէ ինքնորույն հաղթահարել: ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց կյանքում կան որոշակի փուլեր, երբ սոցիալական աշխատանքը առանձնակի կարևոր է: Դա առաջին հերթին տեղեկատվությունն է ախտորոշման վերաբերյալ, որը ստիպում է հիվանդին որոշակի ցնցում ապրելուց հետո ընտրել կյանքի ռազմավարություն: Այստեղ կարևոր է հիվանդի մոտ «ամեն ինչ կորած չէ» դիրքորոշման ձևավորումը: [2, 168]

Կարևոր է հիվանդի այն բոլոր իրավունքների և արտոնություններ պաշտպանությունը, որոնք նախատեսված են օրենսդրությամբ: Սոցիալական աշխատողը նախ տեղեկացնում է հիվանդին, թե ինչ արտոնություններ նա ունի (լինում են դեպքեր, երբ հիվանդը տեղյակ չէ այդ մասին), այնուհետև աջակցում է նպաստների, թոշակների, սուբստիդիաների տրամադրման հարցում: Հնարավոր է՝ հիվանդն ունենա լուրջ նյութական խնդիրներ: Այս պարագայում սոցիալական աշխատողը դիմում է նաև համապատասխան ծառայությունների օգնությանը: Սոցիալական աշխատողը հոգում է, որ հիվանդին անվճար տրամադրվի համապատասխան տեղաշարժվելու միջոց, եթե դրա անհրաժեշտությունը կա:

ՄԻԱՎ վարակակիրների հետ աշխատանքում սոցիալական աշխատողի հիմնական խնդիրներն են.

1. կենսագործունեության այնպիսի պայմանների ստեծում, որոնց շնորհիվ հիվանդն իրեն կզգա սոցիումի լիարժեք անդամ,

2. ինքնուրույնության աստիճանի բարձրացում, կարողությունների

զարգացում, որպեսզի հիվանդը կարողանա ինքնուրույն վերահսկել իր կյանքը և լուծել առաջացած խնդիրները,

3. այնպիսի պայմանների ստեղծում, որը կնպաստի հնարավորությունների առավելագույնս դրսևորմանը և նոր կարգավիճակին հարմարվելուն,

4. դրական արդյունքի ձեռքբերում, երբ հիվանդն այլևս չի ունենա սոցիալական աշխատողի աջակցության կարիքը: [9, 348]

Սահմանված նպատակներին հասնելու համար սոցիալական աշխատողը կատարում է հիվանդի պատմության ուսումնասիրություն, հոգեբանական աջակցություն է ցուցաբերում հիվանդին և նրա ընտանիքի անդամներին, ինչպես նաև համակարգում է սոցիալական խնդիրները, իրականացնում հիվանդի շահերի պաշտպանություն առողջապահության և սոցիալական աջակցության այլ հաստատություններում, լուծում է հիվանդի զբաղվածության խնդիրը:

ՄԻԱՎ վարակակիրների հետ սոցիալական աշխատանքում կարևոր նշանակություն ունի խորհրդատվությունը, որի ընթացքում սոցիալական աշխատողը օգնում է հիվանդին ուսումնասիրելու և հասկանալու իր խնդիրը, գտնելու դրա լուծման տարբերակներ: Դա նպաստում է խորհրդառուի անձնային ռեսուրսների մոբիլիզացմանը, գործունեության մոտիվացիայի ձևավորմանը:

Ցանկացած գործունեություն արդյունավետ է, երբ դրանում ընդգրկված են տարբեր ոլորտի մասնագետներ: Դա վերաբերվում է նաև ՄԻԱՎ վարակակիրների հետ իրականացվող սոցիալական աշխատանքին: Իր գործառույթների իրականացման ընթացքում սոցիալական աշխատողը ցուցաբերում է համակողմանի մոտեցում և համագործակցում է տարբեր կազմակերպությունների և ծառայությունների հետ: ՄԻԱՎ վարակակիրների հետ սոցիալական աշխատանքի համակարգային մոտեցումը ենթադրում է.

1. մեթոդների և տեխնոլոգիաների լայն շրջանակի օգտագործում,

2. միջմասնագիտական համագործակցում,

3. օգնության տարատեսակ ձևերի ապահովում:

Նման մոտեցումն անհրաժեշտ է բարձր սոցիալական արդյունքի հասնելու համար: ՄԻԱՎ վարակակիրների հետ սոցիալական աշխատանքի միջմասնագիտական մոտեցման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

- ✓ կողմերի շահագրգռվածությունը խնդրի լուծման գործում,

- ✓ ջանքերի և հնարավորությունների միավորում,
- ✓ վիճելի հարցերի լուծման ընթացքում կառուցողական համագործակցություն:

ՄԻԱՎ վարակակիրների հետ աշխատող սոցիալական աշխատողները պետք է տիրապետեն համապատասխան էթիկային, ունենան հիմնարար գիտելիքներ և հմտություններ, կարողանան հանգիստ քննարկել ինտիմ և «արգելված» թեմաներ, (դուրս չգալով մշակութային նորմայի շրջանակներից), պահպանեն գաղտնիություն, իմանան ՄԻԱՎ վարակակիրներին անհրաժեշտ առաջնային և մասնագիտացված օգնության ձևերի մասին, նպաստեն ՄԻԱՎ վարակակիրների ինքնօգնության խմբերի ստեղծմանը, ինչպես նաև հիվանդին տրամադրեն տեղեկատվություն նրան անհրաժեշտ գործող ծառայությունների և, իհարկե, սոցիալական աշխատանքի մասին: [8, 170]

Այսպիսով, կարող ենք ասել, որ ՄԻԱՎ վարակի խնդիրը գլոբալ բնույթ է կրում, և ընդհանուր առմամբ այն մարդկության առջև ծառացած ամենասուր և արդիական խնդիրներից մեկն է: Ներկա ժամանակաշրջանում սոցիալական աշխատանքը ՄԻԱՎ վարակի դեմ պայքարի հզոր միջոց է, ինչն էլ ենթադրում է, որ սոցիալական աշխատողները պետք է անընդհատ ընդլայնեն իրենց գիտելիքներն ու փորձը: Գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է համակարգային մոտեցման կիրառմամբ: Մեր կարծիքով, Հայաստանում նույնպես ՄԻԱՎ վարակի խնդիրը արդիական է, և հասունացել է ՄԻԱՎ վարակակիրների հետ իրականացվող սոցիալական աշխատանքի ոլորտի զարգացման անհրաժեշտությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Басов Н.Ф. Технологии социальной работы с молодежью, Кострома, 2013 г. – 447 с.
2. Гуревич, К.Г. Профилактика ВИЧ/СПИДа в детско-молодежной среде: учебное пособие для студентов педагогических вузов / Под ред. К.Г. Гуревича, Л.М. Шипицыной. — М., 2006 г. – 80 с.
3. Гэри Ллойд. Практика социальной работы при ВИЧ- инфицировании Хрестоматия по технологии социальной работы, Барнаул. – 2000 г.
4. Зайнышев, И.Г. Технология социальной работы: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / Под ред. И.Г. Зайнышева. — М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2002 г. – 240 с.
5. Кушлекайте М.И. и др. Отношение медицинских сестер к инфицированным ВИЧ и больным СПИДом // Социологические исследования. 2006 г. – 265 с.
6. Лазарев, В.Ф. Модель центра медико-социальной реабилитации молодых ВИЧ-инфицированных / В. Ф. Лазарев, А. К. Долгушин; под ред. А. К. Долгушина. – М .: ИНФРА-М, 2002 г. – 54 с.
7. Теоретические и практические основы деятельности специалиста социальной сферы // сб. мат. по итогам всеросс. науч.-практич. конференции. – Екб., 2008 г.
8. Топчий Л.В. Этика социальной работы.: Учебно-методические материалы и программа общепрофессиональной учебной дисциплины / Л.В. Топчий. – М .: ВЛАДОС. – 1995 г. – 176 с.
9. Холостова, Е.И. Технологии социальной работы: учебник / Е.И. Холостова. - М .: ИНФРА-М, 2001 г. - 400 с.
10. http://arka.am/am/news/interview/hasarakutyuny+teragnahatum
11. http://knowledge.allbest.ru/sociology/

ОСОБЕННОСТИ СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ С ВИЧ ИНФИЦИРОВАННЫМИ

Армине Шахкян
ВГУ, Социальная работа, 4-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *ВИЧ-эпидемия, профилактические услуги, рискованное поведение, социальная работа с ВИЧ-инфицированными, социально-психологические аспекты, комплексный подход.*

Социальная работа с ВИЧ-инфицированными, направленная на преодоление глобальной проблемы ВИЧ-инфекции, в настоящее время является насущной необходимостью. Необходимо осознавать, что данная проблема касается не только здоровья и для ее урегулирования требуется многоаспектный подход.

SPECIFICS OF SOCIAL WORK WITH HIV-INFECTED PATIENTS

Armine Shakhkyan
VSU, Social Work 4th year

SUMMARY

Key words: *HIV pectilence, preventive services, isky behavior, social work with HIV intector, social-psychological aspect, over-roll approach.*

Today the social work with HIV-infected patients has already become an important need directed to the overcoming of the global problem. We should realize its not just a health issue and requires a multi-disciplinary approach for its resolution.

ԴԵՌԱՀԱՍԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ: ՁԳՈՒՇԱՆԱ՞Լ, ԹԵ՞ ԽՐԱԽՈՒՍԵԼ

Արմինե Սևումյան
ԱրՊՀ, Մանկավարժության և սպորտի ֆակուլտետ,
Հոգեբանություն, մագիստրատուրա 1-ին կուրս
Գիտ. ղեկավար՝ հ.գ.թ., դոցենտ՝ ***Վիտյա Յարամիշյան***

Հանգուցային բառեր՝ *համակարգիչը և առողջությունը, վնասակար գործոններ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, դեռահասության տարիք, հոգեբանական և ֆիզիկական վնաս*

Համակարգիչը մտել է մեր կյանք, առանց դրա անհնար է պատկերացնել մեր առօրյան, բայց միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ առողջության պահպանումը մեր կյանքի կարևորագույն խնդիրն է: Մեզ բոլորիս հայտնի է, որ համակարգիչը կարող է վնասներ հասցնել մարդու օրգանիզմին: Այդ վնասը կարող է լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական:[3] Համակարգիչների հետ աշխատելիս ֆիզիկական վնաս առաջացնող վնասակար ազդեցությունների նախապայմաններն են՝

• *Էլեկտրամագնիսական ճառագայթում:* Ժամանակակից մոնիտորները դարձել են առողջության համար հարաբերականորեն անվնաս: Մոնիտորի շուրջ գոյություն ունի էլեկտրական և էլեկտրամագնիսական դաշտ: Մոնիտորից արձակվում և տարածվում են ոչ զգալի ազդեցություն ունեցող ռենտգենային ճառագայթներ:

• *Աչքերի հոգնածություն և տեսողության ծանրաբեռնվածություն:* Տեսողության ծանրաբեռնվածության պատճառով է, որ ոչ տևական ժամանակահատվածից հետո դեռահասների և չափահասների մոտ առաջանում է գլխապտույտ և գլխացավ: Համակարգչով երկար աշխատելիս տեսողական գերհոգնածությունը կարող է առաջացնել տեսողության անկում: Շատ կարևոր է մոնիտորի և աչքերի միջև ճիշտ տարածության պահպանումը, այն է՝ 70 սմ: Ամեն կես ժամը մեկ խորհուրդ է տրվում կտրվել մոնիտորից և նայել հեռուն: Այս վարժությունը օգնում է պահպանել տեսողությունը: Մեկ-մեկ պետք է փակել աչքերը երկու երեք րոպեով: Դրա շնորհիվ աչքի մկանները հանգստանում են, վերականգնվում է տեսողական ռեցեպտորների զգայունությունը, որոնց շնորհիվ ապահովվում է պարզությունն ու պայծառությունը

• *Ցավեր պարանոցի, մեջքի, դաստակների հատվածում:* Երբ մենք երկար ժամանակ համակարգչի առջև նստում ենք նույն դիրքով, մեջքի մկաններում լարվածություն է առաջանում, արյան շրջանառությունը դանդաղում է, ինչի արդյունքում հնարավոր է առաջանա բորբոքում:

Խոսքը մկանային յուրահատուկ «շրջափակման» մասին է: Ինչո՞ւ շրջափակում, որովհետև մեջքի մկանները ճնշում են նյարդերը, որոնք դուրս են գալիս ողնուղեղից՝ առաջացնելով ցավ և զգայունակության խախտում: Եթե ճնշման են ենթարկվել պարանոցի հատվածի նյարդերը, տհաճ լարվածություն կառաջանա մեջքի հատվածում, ըստ նստած դիրքի՝ հնարավոր է ցավեր լինեն նաև ոտքերի հատվածում:

• *Մաշկային ցան, ալերգիա, մազաթափություն, թթվածնային քաղց:* Համակարգիչը, ինչպես յուրաքանչյուր էլեկտրասարքավորում, էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուր է: Էլեկտրամագնիսական դաշտը նպաստում է ձեռքերի, դեմքի և պարանոցի ալերգիկ երևույթների, մազերի չորությանը: Սենյակում, որտեղ համակարգիչներ են աշխատում, պետք է լինի լավ օդափոխման համակարգ: Մոնիտորների հեռավորությունն իրարից պետք է լինի 9-10 մք: Արցունքներ, կոպերի և բիբերի կարմրություն, ցավ ճակատի հատվածում, հոգնածություն, այս բոլորը «դիսփլեյական» հիվանդության ախտանիշներն են, որոնք կարող են ի հայտ գալ, եթե երկար և առանց ընդմիջումների հետևում են էկրանին: Աստենոպիայի (տեսողական հոգնածություն) առաջին նշաններն զգացվում են համակարգչի առջև առանց ընդմիջման 45 րոպե աշխատանքից հետո:

Հոգեբանական վնաս՝

• *Ինֆորմացիայի կորստից առաջացած սթրես:* Երբ վիրուսի ազդեցությունից համակարգիչը, «կախվում է», տեղի է ունենում կարևոր ինֆորմացիայի կորուստ, աշխատանքի դանդաղում, որը կարող է առաջացնել նյարդային, ագրեսիվ պահվածք, ճնշման բարձրացում, հիշողության և քնի խախտումներ:

• *Կախվածություն համակարգչից՝ որպես հոգեկանի վրա ազդող երևույթ:* Իրական կյանքի դժվարին իրավիճակներում, այլ մարդկանց հետ շփվելիս դեռահասը փնտրում է այն, ինչ ինքը չի գտնում գրքերում, հեռուստացույց դիտելիս, կամ համակարգչից օգտվելիս:[4]

Համակարգչով երկար աշխատելը վատ է անդրադառնում մեր օրգանիզմի տարբեր օրգան համակարգերի՝ բարձրագույն նյարդային համակարգի, ներզատիչ, իմուն և վերարտադրողական համակարգերի, տեսողության և հենաշարժիչ համակարգի ֆունկցիաների վրա: Ճիշտն ասած՝ այս բոլորը մենք կարող ենք ձեռք բերել նաև առանց համակարգչի՝ ոչ ճիշտ ապրելակերպի պատճառով:

Ստորև թվարկված բոլոր բացասական երևույթներն իրենց ազդեցությունն են ունենում մեր հոգեվիճակի վրա: Բժշկական տեսանկյունից, եթե մոնիտորը կարող է վնասել մեր տեսողությունը, ապա հոգեկանի

վրա կարող են ազդել վիրտուալ ազդակները, ինչպիսիք են խաղերը, համացանցը: Ներկայումս համացանցը դարձել է այնպիսի գրավիչ կենտրոն, որը դեպի իրեն է ձգում դեռահասներին՝ առաջացնելով համացանցային կախվածություն: Ց. Պ. Կորոլենկոն նշում է, որ կախվածության խնդիրը սկսվում է այն ժամանակ, երբ իրականությունից խուսափելու ձգտումը, կապված հոգեկան վիճակի փոփոխության հետ, գիտակցության մեջ դառնում է գերակայող, վերածվում կենտրոնական գաղափարի՝ անջատելով անձին իրականությունից:[1]

Համակարգչային ադիկցիան համացանցից հոգեբանական կախվածության ֆենոմեն է, որն իր հերթին արտահայտվում է իրականությունից կտրվելով, որի ընթացքում այդ գործընթացը սուբյեկտին գերում է այն աստիճան, որ նա հայտնվում է իրական աշխարհում գործելու անկարող վիճակում: Համացանցի օգտագործումը էապես զարգացման միտում ունի: Համացանց-դեռահաս հարաբերությունները կարևոր են երկու տեսանկյունից. դեռահասների համար համացանցը վերածվում է լարվածության դեմ պայքարելու համար հարմարավետ ու հասանելի միջոցի. իրական ես-ը արտահայտելու կարողությունը, համացանցի թվացյալ անանունությունը նույնպես հրապուրիչ ասպեկտ է դեռահասների համար, ինչը նրանց թույլ է տալիս ներգրավվել այնպիսի վարքագծերում, որոնք անհասանելի են իրական կյանքում: Համակարգչի դիմաց հաճույք զգալով՝ նրանք միաժամանակ իրենց մեջ արմատավորում են անհավասարակշռություն, անուշադրություն, անփութություն, ինքնամեկուսացում, բոլոր տիպի սովորական արժեքների արժեզրկում, ներքին կողմնորոշման կորուստ, անտարբեր վերաբերմունք մտերիմների նկատմամբ:

Մեր հետազոտության նպատակն է բացահայտել համացանցի ազդեցության, կախվածության աստիճանը դեռահասի անձի ձևավորման գործում, գտնել կապը դեռահասի ագրեսիվ վարքի և համացանցի ազդեցությամբ առաջացող կախվածության աստիճանը, դրանց նպաստող գործոնները:

Որպես հետազոտության օբյեկտ՝ ընտրել ենք 10-16 տարեկան դեռահասներին: հետազոտությանը մասնակցել են ք.Ստեփանակերտի Հ. Բալասանյանի անվան թիվ 5 և Խ. Աբովյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցների, ինչպես նաև պարարվեստի քոլեջի աշակերտները: Ուսումնասիրությունների համար օգտագործվել է համակարգչի առջև անցկացրած ժամանակի վերաբերյալ 3 հարց, հետազոտվողների քանակը՝ 668 աշակերտ:

Համակարգչի առջև անցկացրած ժամանակի վերաբերյալ հետազոտության համար տրվել են հետևյալ հարցերը.

1. Օրվա ընթացքում որքա՞ն ժամանակ եք տրամադրում համա-

ցանցին,

2. Ո՞ր սոցիալական ցանցերն են Ձեզ հետաքրքրում,
3. Առավել հաճախ ինչպիսի՞ համակարգչային խաղեր եք խաղում:

Ուսումնասիրվող ցուցանիշների միջինների փոփոխությունները արտացոլված են ստորև բերված աղյուսակներում:



Աղ. 1 Դեռահասների կողմից ծախսվող ժամանակը համացանցում

Աղյուսակում ամփոփված է հարցման մասնակիցների՝ համացանցում անցկացվող ժամանակը (տևողությունը): Հարցումների ժամանակ աշակերտները նշել են, որ համացանցը օգտագործում են նաև որպես տեղեկատվություն ստանալու միջոց, ինչպես նաև ուսումնասիրում են այլ նյութեր և հետևում են տեղական ու համաշխարհային նորություններին: Այս ամենը վկայում է, որ համացանցը որպես կրթության և տեղեկատվության աղբյուր՝ դեռահասների մոտ անցել է հետին պլան: Այս պարագայում կարևոր է, որ համացանցը դեռահասների համար չվերածվի վարքի շեղման աղբյուրի:



Աղ.2 Դեռահասներին հետաքրքրող սոցիալական ցանցերը

Հիմնականում դպրոցականներին հետաքրքրում են այն կայքէջերը, որտեղ կարող են լսել և բեռնել երաժշտություն, դիտել ֆիլմ, ծանոթանալ նոր մարդկանց հետ, ձեռք բերել նոր ընկերներ և շփվել նրանց հետ:



Աղ.3 Դեռահասներին հետաքրքրող խաղերը

Հարցման բոլոր մասնակիցներից (668) միայն 78 աշակերտ բացարձակապես հետաքրքրված չէ համակարգչային խաղերով: Հարցվածներից 197 աշակերտի հետաքրքրում են տրամաբանական մտածողությամբ ուղղորդված խաղերը: Իսկ հարցվածների զգալի մասը՝ 255 աշակերտ, հետաքրքրված են ռազմական բովանդակությամբ խաղերով, որոնցում առկա են սպանություններ, պայթուններ, արյան և բռնության տեսարաններ, ահաբեկչական հարձակումներ, որոնք ագրեսիվ վարքի ձևավորման և արտահայտման հիմք են հանդիսանում:

Համացանցային կախվածությունը նպաստում է հոգեբանական մի շարք խնդիրների ձևավորմանը, առաջացնում կոնֆլիկտային վարքագիծ, ագրեսիվություն, հոգեկան անկայուն վիճակ, հարատև դեպրեսիա, վիրտուալ տարածության նախընտրություն իրական կյանքից, հասարակության անդամների հետ հարմարվելու դժվարություն, ժամանակի վերահսկողության ընդունակության կորուստ, համակարգչից օգտվելու հնարավորության բացակայության դեպքում՝ տհաճության զգացումի առաջացում:

Կրթության ոլորտում համակարգիչները մեծ կիրառություն ունեն, նրանք ազդում են ուսումնական գործընթացի տարբեր փուլերի վրա: Տեղեկատվական տեխնոլոգիաները մոտիվացիա են առաջացնում՝ դեռահաս-երեխաների մոտ մեծացնելով վերջիններիս հետաքրքրությունները:

Համակարգիչը և համացանցը հնարավորություն են տալիս օգտվելու տարբեր էլեկտրոնային գրադարաններից, տարբեր տեղեկատուներից, ուսումնական գործընթացն ապահովում են տարբեր տեսակի ուսումնամեթոդական նյութերով, զարգացնում սովորողների ստեղծագործական ունակությունները: Այդ է պատճառը, որ համակարգչից պետք է օգտվել խելամտորեն և կանխամտածված՝ հաշվի առնելով վերը նշված բացասական ազդեցությունները:

Համակարգիչը մեքենա է, որը մշակում է տվյալները հրամաններ ցանկի համաձայն: Անհրաժեշտությո՞ւն, թե՞ առողջությանը սպառնացող նոր միջոց: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպիսի նոր մոտեցում և քայլեր կիրականացվեն համակարգչային աշխատանքի ճիշտ կազմակերպման համար: Աշխատանքի ոչ ճիշտ կազմակերպման դեպքում համակարգիչը կարող է դառնալ առողջության վատթարացմանը նպաստող լրացուցիչ գործոն, ակայն ճիշտ կահավորման և համակարգչով աշխատելու որոշ կանոնների պահպանման դեպքում այն կդառնա առողջության համար անվտանգ և մեր կյանքը զգալի հեշտացնող միջոց: Արդի դարաշրջանը բոլորիս հայտնի է որպես տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջան, և դեռահասներին համակարգչից զերծ պահելը հնարավոր չէ:

Այսպիսով՝ 21-րդ դարում դեռահասներին մտածել սովորեցնել կարող են միայն համակարգիչները: Դեռահասներին խորհուրդ չի տրվում արգելել համակարգչից օգտվելը, այլ անհրաժեշտ է ուսուցանող և զարգացնող ծրագրերից ազատ օգտվելու հնարավորություն տալ: Հետագա բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ է դեռ մանկուց երեխայի մոտ ձևավորել ճիշտ վերաբերմունք համակարգչի նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Короленко Ц. П., Социодинамическая психатрия, Новосибирск, 1999г., 464 ст.
2. Попов С. В., Санкт-Петербург, Валеология в школе и дома, Союз, 1997, 256 ст.
3. Баловсяк Н. В., Компьютер и здоровье Издатель, Питер, СПб. 2008 г., 86 ст.
4. «Компьюлента», 23 июня, 2005г.

ПОДРОСТОК И КОМПЬЮТЕР: ПРЕДУПРЕЖДАТЬ ИЛИ ПООЩРЯТЬ

Армине Севумян
АрГУ, факультет педагогики и спорта
Психология магистратура 1 курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *компьютер и здоровье, негативный фактор, современные технологии, подростковый возраст, психологическая и физическая вред*

В статье рассуждается о положительном и отрицательном влиянии пользования компьютером (интернетом) и притоком неправеренной информации на психологию подростка. представлены результаты исследований не проведенных в школах Степанакерта, на основе сделанных выводов разработаны психологические рекомендации.

TEENAGER AND COMPUTER: TO BE WARNED OR TO ENCOURAGE

Armine Sevumyan
ASU Faculty of of Pedagogy and Sports
Psychology Masters 1 year

SUMMARY

Key words: *computer and health, negative factor, modern technologies, adolescence, Psychological and physical harm*

The article discusses both positive and negative influence of the use of computers(internet) on the psychology of teenagers. The article introduces the results of the research done at the schools of the city Stepanakert. The psychological recommendations were drafted based on the conclusions of the research.

ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Նարգիզ Մկրտչյան
ՀՊՄՀ, Գեղարվեստական կրթության ֆակուլտետ, 2-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ մ.գ.դ. ***Յու. Յուզբաշյան***

Հանգուցային բառեր՝ *Մանկավարժական հայացք, երաժշտական դաստիարակություն, պատգամներ, համակարգ, սկզբունքներ, ստեղծագործական ունակություններ, ազգային երաժշտանոց*

Մեծ էր Կոմիտասի դերը հայ երաժշտամանկավարժական մտքի զարգացման բնագավառում:

1869 թվականի սեպտեմբերի 26-ին Փոքր Ասիայի (Թուրքիա) Կուտինա (Քյոթահիա) քաղաքում արհեստավոր ԳևորգՍողոմոնյանի և Թագուհի Հովհաննիսյանի ընտանիքում ծնվեց Սողոմոն Սողոմոնյանը՝ ապագա մեծ երաժիշտ Կոմիտասը:

Մեկ տարեկան երեխա էր, երբ մահացավ մայրը: Տեղի քառամյա դպրոցն ավարտելուց հետո նա ուսումը շարունակեց Բրուսայում (Բուրսա), սակայն հոր մահից հետո (մեկտարիանց) նրա ուսումն ընդհատվեց: Պատանու ապագան կանխորոշեց գեղեցիկ ձայնը: Էջմիածնի հանձնարարությամբ Ճեմարանի համար լավ ձայն ունեցող երեխա ընտրելիս խորաթափանց եպիսկոպոս Դերձակյանը քսան որբերից Սողոմոնին առանձնացրեց: «Եթե բախտն ինձ չժպտար, և ես Ս. Էջմիածին, և ապա Գերմանիա չգնայի, կլինեի իմ հայրենիք Կուտինայում շատ-շատ մի կոշկակար, որովհետև որբիս խնամող Հարություն հորեղբայրս էլ կոշկակար էր և ակնհայտ բան է, որ ես էլ ամենայն հավանականությամբ, նրան պիտի աշակարտեի»,– գրել է Կոմիտասը:

Էջմիածնում անցկացրած տարիներին Կոմիտասի վրա մեծ ազդեցություն թողեցին հայ գեղջուկի երգն ու երաժշտությունը, և ուսումնառության տարիներից նա իր կյանքը նվիրեց ժողովրդական երգերի ու երաժշտության գրառմանը, ուսումնասիրությանն ուայնուհետև՝ մշակմանը:

1893 թ., ավարտելով ուսումը Էջմիածնում, Կոմիտասը նշանակվեց Ճեմարանի երաժշտության դասատու և երգչախմբի ղեկավար: Նույն թվականին աբեղա ձեռնադրվելիս, ստանում է «Կոմիտաս» անունը՝ 7-րդ դարի եկեղեցական գործիչ, երգաստեղծ Կոմիտաս Աղցեցու պատվին:

Ինքնուրույն աշխատանքի տարիները ցույց տվին երաժշտական-տեսական գիտելիքների պակասը: Լուրջ մասնագիտական կրթություն

ստանալու նպատակով նա 1895 թ. աշնանից Թիֆլիսում պարապում է Մ. Եկմալյանի մոտ, իսկ հաջորդ տարի մեկնում Գերմանիա:

Բեռլինում Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում ուսանելուց բացի, Կոմիտասը միաժամանակ հաճախում էր Բեռլինի համալսարանի փիլիսոփայական բաժանմունքը:

Կոմիտասը դասավանդում է նոտագրության եվրոպական համակարգով, քանի որ հասկանում էր, որ առանց եվրոպական նոտագրությանը տիրապետելու ապագա երաժիշտներին դժվար կլինի ծանոթանալ համաշխարհային երաժշտական մշակույթի շատ ու շատ նմուշների հետ: Նա ճիշտ է մեկնաբանում ու բարձր գնահատում ուսուցչի դժվարին դերը գալիք սերունդների դաստիարակման գործում:

Թեև Կոմիտասը մանկավարժական ուղղվածությամբ որոշակի տեսական աշխատանքներ չի գրել, սակայն նա իր երաժշտամանկավարժական հայացքներն ամփոփել է հոդվածներում, դասախոսություններում և կիրառել գործնական աշխատանքում: Նրա մանկավարժական գործունեության մասին հետաքրքիր տեղեկություններ կան նրա աշակերտների, ժամանակակիցների հուշերում, ինչպես նաև նամակներում:

Կոմիտասի «Մանկիկ Վահագնին» խրատականը, որը գրել է 1911-ին Ալեքսանդրիայում և «Պարն ու մանուկը» դասախոսությունը, որը կարդացել է 1912-ին Թուրքիայի Եսայան դպրոցում, նրա մանկավարժական հայացքների խոսուն վկաներն են:

Կարևորելով ազգային երաժշտության և պարի դերը հայ երեխաների մտավոր, ֆիզիկական, գեղագիտական, ինչու չէ, նաև էկոլոգիական դաստիարակության բնագավառներում, Կոմիտասն իր մտքի և բնավորության պարզությամբ՝ դիմում էր մանուկներին:

«Սիրուն մանկիկ, կայտառմանկիկ, օր մը դուն այլ պիտի մեծնաս ու մարդ դառնաս: Քեզի մէկ պզտիկ խրատիկ մըտամ:

Միտքդ մարզէ ազնիվ գիտություններով և մաքուր գեղարուեստով: Իմաստունի ծովածավալ մտքէն որսա գիտութիւն և գեղարուեստագէտի սրտեն բարի բարի զգացումներ»: Շարունակելով միտքը Կոմիտասն ասում է. «Կարդա բնութեան գիրքը, որ կարելի չէ ոչ մէկ բանով գրել, ոչ մէկ ձայնով արձանագրել, ոչ մէկ գույնով նկարել և ոչ մէկ գործիքով դրոշմել... Սիրուն մանկիկ, պայծառ մանկիկ, սիրէ բնութիւնը»...

Կոմիտասը գտնում է, որ բնությունը կյանքի ճանաչողության դպրոց է, այն պետք է ուսումնասիրել և սովորել: «Սիրի՛ր բնությունը, սովորի՛ր

նրանից ճանաչել կյանքը»,– գրում է Կոմիտասը: [2, 94]

Կոմիտասի կարծիքով ժողովրդական երգերը և պարերը բնության երևույթներն ու պատկերները, ժողովրդի կյանքի բազմազան կողմերն արտահայտող գանձեր են: «Ժողովրդի երգեցողութիւնն ունի ինքնուրույն դպրոց, ուր դաս են առնում ամենքը ամեն ժամանակ, երբ կարիք են զգում: Գեղջուկի դպրոցը, ուսուցիչը և առարկան բնութիւնն է»: Ահա թե ինչու, ժողովրդական երգը և պարը պետք է դառնան երեխաների երաժշտական դաստիարակության և պարային կարողությունների զարգացման հիմնաքարը: Արվեստի այդ երկու տեսակները հուզազգացմունքային լիցք են հաղորդում երեխաներին ու զարգացնում նրանց հոգևոր ներաշխարհը, ազգայինի զգացողությունը, կենսաբանական բնազդը, մտածողությունը և ծանոթացնում հայ ժողովրդի պատմությանը, հոգևոր և կենցաղային արժեքներին: «Երաժշտության նպատակը ինչն է»,– հարց է տալիս Կոմիտասը, միաժամանակ պատասխանում,– «Երաժշտութեան նպատակն է հոգին ու սիրտը կապել, մտաւոր գործողութիւնը, կարողութիւնը սրտի զգացմանց հետ միացած արտահայտել, այնպէս որ մեր սիրտը մաքրուի, որ նմանուի արծաթին, այսինքն շատ մաքուր լինի»: [3,138]

Կոմիտասը բարձր է գնահատում դպրոցների դերը ազգի դաստիարակության գործում: Նրա առաջ քաշած կարևորագույն դրույթներից մեկն էր երեխաների երաժշտական դաստիարակության գործի կազմակերպումը՝ հիմնված ժողովրդական երգի վրա: Կոմիտասը գտնում էր, որ երաժշտապես զարգացած ազգ ունենալու համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ երաժշտական ուսումնական հաստատություններ, ի վիճակի լինել պատրաստելու սեփական ազգային մանկավարժական կադրեր և պրոֆեսիոնալ երաժշտական կրթության հիմքում անպատճառ դնել ժողովրդաազգային երաժշտությունը:

«Պարն ու մանուկը» դասախոսության մեջ Կոմիտասը ասում է. «Երգը ներքին՝ հոգեկան զգացումին արտահայտութեան մէկ ձևն է, ուրեմն շարժում մըն է, պարն ալ ինքնին շարժում մը ըլլալով, երգը կը զուգորդի պարին հետ»: Շարունակելով իր միտքը, նա նշում է, որ, «Մտաւոր զարգացումի աստիճանին վրայ կըգտնուի պարին շարժումն ալ: Ուրեմն ազգի մը քաղաքակրթութեանն է կաուած իր պարին շարժումներու զարգացումը»: [3,77] Մեջբերելով «Առողջ միտք՝ առողջ մարմնի մեջ» արտահայտությունը՝ Կոմիտասը գրում է. «Երգեցողությունն ու պարը կառույգացնեն, կմարզեն մարմինը: Զգացումներն ինչ ուղղութեամբ

որ ընթանան, երգն ու պարն ալ նույն արտահայտութեամբ երեւան կուգան»: [3,77] Կոմիտասը, կարևորելով հոգեբանամանկավարժական գիտելիքների իմացությունը, խորհուրդ է տալիս երգերի ուսուցման ընթացքում հաշվի առնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները, ընկալման և երգչային ձայնի հնարավորությունները, ուսուցման մատչելիության, հաջորդայնության, գիտականության սկզբունքները: Որպեսզի երգեցողությունը լինի հուզական, այն պետք է գիտակցված լինի և արտահայտիչ կատարվի, այլապես «դատարկ հնչումէն դատարկ զգացում կառաջանայ: Զգացումները կանոնաւորելու, ուղղելու, զարգացնելու համար հարկ է երգեցողութեան աւանդումին նպատակայարմար ուղղութիւն մը տալ»,– գրում է Կոմիտասը: Հաշվի առնելով ժողովրդական երգերի հուզազգայական ուժը՝ Կոմիտասը խորհուրդ է տալիս «Երեխաներին տխուր երգ չտալ երբեք, այլ ամէն ինչ պետք է աշխույժ եռանդ ներմուծէ անոնց հոգիներէն ներս»: [3,79]

Այս հոդվածում Կոմիտասը ցույց է տալիս ընդհանրապես շարժման և մասնավորապես պարի դերը երեխաների երաժշտական զարգացման գործում: Նա գտնում է, որ ցանկացած ազգին բնորոշ գծերը, նրա բարքերն ու քաղաքակրթության աստիճանը արտահայտվում են պարի, շարժման միջոցով: Չնայած այն բանին, որ պարելիս մարդիկ կատարում են մարմնի տարբեր տեսակի շարժումներ, իրենց ցանկությամբ ընտրելով դրանք, սակայն այդ շարժումներն անկախ նրանց կամքից ի ցույց են դնում նրանց ներքինը: «Պարն ամենաիմնական նշանակություն ունեցող երևույթ մըն է. ամեն գեղարվեստ պարի մեջ կպարփակվի: Իբրև շարժում՝ պարը շատ կարևոր դեր ունի ապագա դպրոցական կյանքի գեղարվեստական շարժումի մեջ, վասնզի պետք է գիտենալ, թե ամեն գեղարվեստ,– ինչպես՝ յերաժշտություն, քանդակագործություն, ճարտարապետությունև այլն,– շարժում է…»: Անրադառնալով կրթության և դաստիարակության բովանդակային խնդիրներին՝ Կոմիտասը գրում է, որ «Մանուկը բարոյական կեանքի փիլիսոփայութիւնը, կեանքի հասկացողութիւնը չունի: Պէտք է անոր հոգեկան զգացումներուն հավասարակշիռ դաստիարակութիւն մը տալ: Մենք մանուկներու հոգեկան պահանջներուն յարմարացուած դասագրքեր չունինք»: [3,78] Կոմիտասի կարծիքով երաժշտության ուսուցիչը մասնագիտական լավ գիտելիքներով ու մեթոդական պատրաստություն ունենալուց բացի, պետք է լինի նաև նրբազգաց, հոգատար ու արդարամիտ մարդ: «Ուսուցիչը դա մշակ է, որ երի-

տասարդության մեջ տարածում է կրթությունը, գիտությունը, լուսավորությունը այնպես, ինչպես հողագործը սերմ է ցանում իր ընտանիքի և հասարակության համար»: [2,74]

Երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից ելնելով՝ Կոմիտասը ասում է. «Եթե մանուկը չի հասկանար ձեր դասավանդութիւնը, յանցանքը ձերն է, որովհետև չէք կրցած հասկանալ անոր հոգին, պետք է վար իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը, և զայն առնելով ձեզի հետ բարձրացնել»: [3,78] Կարևորելով ընտանիքի և դպրոցի համագործակցությունը՝ Կոմիտասը գրում է. «Մանուկը բնախօսական պակաս չունի, եթե օժտուած է, ընտանիքը որքան զարգացած ըլլայ, մանուկն ալ այնքան մտքի առաւելութիւններով երեւան կուգայ: Պետք է անոր կարողութիւնները չափաւորել, կոկել, կանոնաւոր զարգացում մը ապահովել»: [3,78]

Կոմիտասի կարևորագույն խնդիրներից մեկը երաժշտական կադրերի պատրաստումն էր: Նա մեծ ցանկություն ուներ ազգային երաժշտանոց ստեղծելու: Դա հայրենիքում չի հաջողվում իրականացնել էջմիածնի վանական հայրերի և հոգևոր ղեկավարների անբարիացակամ վերաբերմունքի պատճառով: Նա ստիպված մեկնում է Թուրքիա, Կոստանդնուպոլիս իր իղձերը իրագործելու համար: Սակայն Թուրքիայում Կոմիտասին չի հաջողվում ստեղծել երաժշտական ուսումնական հաստատություն: Չհուսահատվելով անհաջողություններից՝ Կոմիտասը հայ պատանիների և երիտասարդների համար կազմակերպում է երկարատև դասընթացներ, սեմինարներ, խորհրդատվություններ: Նրա մի խումբ աշակերտներ դարձան իրենց ուսուցչի գործի շարունակողները (Բ. Կանաչյան, Վ. Սարգսյան,Վ. Սրվանձտյան, Մ. Թումաճյան, Հ. Սեմրջյան, Ա. Ապաճյան և այլք):

Կոմիտասը «Պարն ու մանուկը» դասախոսության ավարտին ասել է. «Երգեցողութիւնը սիրտին հետ կապ ունի, որ ուղղակի հոգիին կերթայ: Ուսուցիչ պարոններ ու քոյրեր, զգուշութեամբ ու երկիւղածութեամբ մոտեցէք դաստիարակութեան գործին. Խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված էք սերունդ մը, որ ապագայ ազգն է. Սխալ ուղղութեամբ ազգ մը կը խորտակէք վերջը»: [3,79]

Կոմիտասին չհաջողվեց իր մանկավարժական հայացքները, մտահղացումները իրականություն դարձնել բոլորիս հայտնի պատճառով. 1915թ. Մեծ եղեռն, աքսոր, հոգեկան հավասարակշռության կորուստ և այլն:

Եվրոպական տարբեր երկրներում և տարբեր ժամանակներում առանձին կոմպոզիտոր-մանկավարժներ ստեղծել են երեխաների երաժշտական դաստիարակության համակարգեր, որոնք բովանդակությամբ և սկզբունքներով համահունչ են Կոմիտասի երաժշտամանկավարժական հայացքներին: Այսպես օրինակ, շվեյցարացի կոմպոզիտոր Էմիլ Ժակ Դալկրոզը (1865-1950) երեխաների երաժշտական դաստիարակության իր համակարգի հիմքում դրել է երաժշտառիթմական շարժումը և պարը, մարմնի և հոգու զարգացման սկզբունքները: Այն գործունեության մեջ է դրվել 1910-ական թվականներից [6]: Կոմիտասի «Պարն ու մանուկը» դասախոսությունը նույն ժամանակաշրջանի ծնունդ է: Մյուսը հունգարացի կոմպոզիտոր Զոլտան Կոդայի (1882-1967) ստեղծած համակարգն է, որի հիմքում դրված է հունգարական ժողովրդական երգը և պարը, ինչպես նաև նոտաներով երգեցողությունը՝ լադային սոլմինիզացիան: Այն գործածության մեջ է դրվել 1930-ական թվականներից [5]:

Գերմանացի կոմպոզիտոր Կառլ Օրֆը (1895-1982) մեծ նշանակություն է տալիս երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանը և մանկական ռիթմական ու մեղեդային նվագարաններով նվագելուն [7]: Կոմիտասը նույնպես խորհուրդ է տալիս ազգային նվագարանները՝ սրինգը, շվին, բլուլը կիրառել երեխաների երաժշտական դաստիարակության գործընթացում: Քանի որ այդ նվագարանների «…հնչյուններն ամենեն մոտիկն են մարդկային սրտին, ամենեն հարազատ արտահայտիչը անոր բոլոր զգացումներուն»: Ինչ վերաբերում է երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանը, ապա, Կոմիտասը գրում է. «Եթե մանուկը ինքնաբերաբար երգէ չպետք է արգիլէլ»:

20-րդ դարի երկրորդ կեսին երեխաների երաժշտական դաստիարակության համակարգերից մեկը ռուս կոմպոզիտոր և մանկավարժ Դմիտրի Կաբալևսկու (1904-1987) համակարգն է, որի հիմքում դրված են երաժշտության երեք տեսակները՝ երգը, պարը, քայլերգը և երաժշտապես գրագետ ունկնդրի դաստիարակումը [3, 207]. Կոմիտասը նույնպես կարևորում է երգի, պարի և քայլերգի զարգացնող և դաստիարակող հնարավորությունները:

Այսպիսով՝ երբ ծանոթանում ենք երեխաների երաժշտական դաստիարակության ուղղությամբ աշխարհի «Մեծերի» աշխատանքներին, նկատում ենք, որ բոլորն էլ երաժշտությունը և պարը դիտել են որպես մարդու դաստիարակության միջոց: Հայոց կաթողիկոս Վազգեն 1-ինը

գրել է, թե Կոմիտասի գործը կարելի է արժևորել միայն մեսրոպյան չափանիշով. «Ինչպես սուրբ Մեսրոպը իր ազգին ու աշխարհին պարգևեց կոթողը հայոց լեզվի, այնպես էլ Կոմիտաս Վարդապետը պեղեց, մաքրեց և լույս աշխարհ բերեց կույս աղբյուրը հայ ազգի: Հայ ժողովուրդը կոմիտասյան երգի մեջ գտավ, ճանաչեց իր ոգին, ինքնությունը»:

Կոմիտասի հայացքներն ու պատգամներն այսօր էլ ունեն կիրառական նշանակություն: Դրա վկայությունը Հայաստանում երեխաների երաժշտական դաստիարակության համար ստեղծված համակարգն է, որում մեծ ավանդ ունի պրոֆեսոր-երաժիշտ Յուրի Յուզբաշյանը, ում գլխավորությամբ հայկական դպրոցներում 1-ից 7-րդ դասարանների «Երաժշտություն» առարկայի համար ստեղծել են ծրագրեր, դասագրքեր, ուսուցչի մեթոդական ձեռնարկներ և տեսալսողական պարագաներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յուզբաշյան Յու.Վ., Կոմիտասի երաժշտամանկավարժական հայացքների համամարդկային նշանակությունը: Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, Զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2014, - 575 էջ:
2. Յոյլյան Ի., Կոմիտաս, Երևան, ՀՍՀՀ, ԳԱ հրատ, 1969, - 190 էջ
3. Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ և հոդվածներ, գիրք Բ, «Սարգիս Խաչենց» Փրինթինֆո, Երևան, 2007, - 574 էջ
4. Кабалевский Д.Б, Педагогические размышления, Москва, “Педагогика”, 1996, -188 с.
5. Мартинов И.И., Золтан Кодай, Москва, «Советский композитор», 1970. -253 с.
6. Шторк К., Система Далькроза, Л.М., «Петроград», 1924. -134 с.
7. Элементарные музыкальные воспитание по системе Карла Орфа, Москва, «Советский композитор», 1978. – 360 с.

ПЕДАГОГИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ КОМИТАСА

Наргиз Мкртчян
АГПУ, Факультета художественного воспитания, 2-ой курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *педагогический взгляд, музыкальное воспитание, заповеди, система, принципы, творческие способности, национальная консерватория чистые науки.*

В докладе говорится о педагогических взглядов Комитаса, которые обобщены в лекциях «Маленькому Ваагну» и «Танец и ребенок» и в других работах. Затем проводятся параллели с общечеловеческими достижениями в области музыкального образования детей, в частности с принципами системы музыкального образования детей созданные Эм. Жак-Далкрозом(Швейцария), З. Кодаем (Венгрия), Карлом Орфом (Германия) и Д Кабалевским (Россия).

PEDAGOGICAL VIEWS OF KOMITAS

Nargiz Mkrtchyan
ASPU, The Faculty Of Art Education, 2^{d} year

SUMMARY

Key words: *Pedagogical view, musical education, commandments, system, principles, creativity, national conservatory of pure science*

The report refers to the pedagogical views of Komitas, which are summarized in the lectures "Little Vahagn" and "Dance and the Child" and in other works. Then parallels are driven with universal achievements in the field of musical education of children, in particular with the principles of musical education of children by Em. Jacques Dalkroz (Switzerland), Z. Koda (Hungary), Charles Orf (Germany) and D. Kabalevsky (Russia).

ՊՐՈԲԱՑԻՈՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՎԱԽԱԽՏՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Նարե Ասլիզադյան
ՎՊՀ, Պատմաաշխարհագրական ֆակուլտետ,
Սոց. աշխատանք 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ մ.գ.թ. ***Զարուհի Գրիգորյան***

Հանգուցային բառեր՝ *Պրոբացիոն ծառայություն, սոցիալական վերահսկողություն, իրավախախտ, մարդու իրավունքներ, ուղղիչ հաստատություն, արդարադատության համակարգ, հանցագործություն, դատապարտյալ, իրավախախտ վարք*

Սոցիալական աշխատանքի ձևավորումը սերտորեն կապված է սոցիալական վերահսկողության արդի համակարգի ձևավորման հետ, ավելին, այն սոցիալական վերահսկողության նորագույն ինստիտուտ է, որը ձևավորվել է պատմական զարգացման որոշակի ժամա-նակահատվածում և կոչված է փոխարինելու վերահսկողության հարկադիր սանկցիաներին և մեղմելու պետական հարկադրանքի առավել խիստ միջոցների ազդեցությունը: Սոցիալական աշխատանքի դերակատարությունը ամփոփված չէ սոսկ մասնագիտացված ծառայություն լինելու մեջ, խորքային առումով այն արտացոլում է սոցիալական վերահսկողության համակարգի արդի ընկալումները, հանցագործության, պատժի և արդարադատության գիտական զարգացման մոտեցումներն ու պահանջները:

Սոցիալական վերահսկողության համակարգի իդեալական գործառնության դեպքում բացառվում է ցանկացած շեղում և ապահովում է հասարակական լիակատար համերաշխություն: Սակայն հասարակության՝ որպես սոցիալական համակարգի էական հատկանիշներից է շեղումը, և սոցիալական վերահսկողության խնդրի ուսումնասիրությունը պետք է ներառի նաև շեղումների նկատմամբ ուսումնասիրությունը ոչ թե որպես բացառություն կամ ախտաբանություն, այլ նորմալ սոցիալական երևույթ: Փիլիսոփայական մտքի մեջ այս խնդիրը արտացոլվել է դեռևս պատմական վաղ անցյալում. Պլատոնը և Արիստոտելը խոսել են հասարակական կարգի պահպանման և այդ կարգը խախտող անձանց մասին: Իրենց աշխատություններում այս հարցն են քննարկել գրեթե բոլոր փիլի-

սոփաները և հասարակագետները: Այդ դատողությունները հանգել են մեկ միասնական մոտեցման, որ հասարակական կարգի պահպանման, սոցիալական վերահսկողության, շեղվող վարքի և պատժի հիմնահարցերը փոխկապակցված են արդիական բոլոր հասարակություններում: Այս առումով բեկումնային ժամանակահատված է համարվում 18-19-րդ դարերը, երբ գիտության մեջ առաջ քաշվեցին սոցիալական վերահսկողության համակարգի ու մասնավորապես պատժի հումանիզացման նոր գաղափարներ: [1]

Աշխարհի շատ երկրներում իրավախախտների ուղղման գործում հաջողությամբ կիրառվում է սոցիալական աշխատանքը, որը՝ որպես իրավախախտների հետ տարվող մասնագիտական գործունեության ձև, իր հիմքում ունի այն գաղափարը, որ իրավախախտի մեկուսացումը խնդրի մասնակի, սակայն ոչ արդյունավետ եղանակ է: Իրավախախտի ազատազրկումը պատժիչ հաստատություններում էլ ավելի է խորացնում իրավախախտ վարքը և դժվարացնում ուղղումը: Այն ավելի արդյունավետ է այլընտրանքային պատժամիջոցների կիրառման դեպքում:

Այս ոլորտում առաջատար է համարվում Մեծ Բրիտանիան, որը համաշխարհային պրակտիկային առաջարկեց նոր՝ պրոբացիայի ծառայությունը: «Պրոբացիա» (probation) արտահայտությունը թարգմանաբար նշանակում է փորձաշրջան: Այսինքն՝ դատարանը փորձաշրջան էր սահմանում այն մարդու համար, որը խախտել էր օրենքը և ենթակա էր ազատազրկման: [2]

1960-ականներին պրոբացիան դարձավ լայնորեն կիրառելի իրավական ինստիտուտ աշխարհի շատ երկրներում: Բանտերում կին աշխատողների թվի աճի և նրանց ազդեցության ընդլայնման արդյունքում նրանց կողմից խրախուսվող սոցիալական աշխատանքի գաղափարն ընդունելի դարձավ ոլորտի քաղաքականության պատասխանատուների կողմից: Սոցիալական աշխատանքը քայլ առ քայլ ընդգրկվեց արդարադատության համակարգ՝ որպես մասնագիտական գործունեություն, որն անհաժեշտ էր իրավական ինստիտուտների գործունեությունն արդյունավետ, հումանիստական և մարդու իրավունքների տեսանկյունից արդարացված դարձնելու համար: Իրավախախտների հետ սոցիալական աշխատանքը, ձևավորվելով հումանիսատական տիրույթում, առավել բուռն զարգացում ապրեց մարդու իրավունքների դոկտրինի զարգացմանն ու իրավական ամրագրմանը զուգահեռ: Եթե մինչ այդ ոչ ինստի-

տուցիոնալ ծառայությունները իրականացնում էին որոշակի առաքելություն՝ ելնելով քրիստոնեական արժեհամակարգից, ապա մարդու իրավունքների հռչակագրի ընդունմամբ սոցիալական աշխատանքի էթիկական ու գործառնական հիմքը ամրապնդվեց նաև իրավական արժեքներով: Մարդու իրավունքների հռչակագիրը դարձավ այն հարթակը, որի հիման վրա սոցիալական աշխատանքը մեծապես ինստիտուցիոնալացվեց և ներառվեց համայնքային, պետական, միջազգային կառույցների ու հաստատությունների մեջ: [3]

Սոցիալական աշխատողը, մտնելով արդարադատության համակարգ, աստիճանաբար ընդլայնեց իր գործունեության շրջանակները և դերերը՝ հանդես գալով որպես պրոբացիոն ծառայող, անչափահասների դատարանի ծառայող, ինստիտուցիոնալ խորհրդատու, դեպք վարող, տուժողի հետ աշխատող և այլն: Տարբեր դերերի ստանձնմամբ սոցիալական աշխատանքը իր վրա վերցրեց նաև միջնորդ ծառայություն լինելու կարևոր առաքելությունը:

Աշխարհում գոյություն ունեցող յուրաքանչյուր երկիր առանձնանում է իր սոցիալ-մշակութային արժեքներով և ավանդույթներով, ինչը, բնականաբար, ազդեցություն է ունենում տվյալ երկրի իրավական համակարգի և պրոբացիոն ծրագրերի իրագործման և կազմակերպման կոնկրետ համակարգի վրա: Որոշ երկրներում գործում են սոցիալական աշխատանքի զարգացած պրոբացիոն ծառայություններ, որոնք ներառում են հանրային ծառայություններ (աշխատանքներ), տուժող-հանցագործ, հաշտեցում և այլն: Աշխարհի շատ երկրներում (Ավստրիա, Չեխիա, Լատվիա, Էստոնիա, Ֆինլանդիա և այլն) սոցիալական աշխատանքի պրոբացիոն ծառայությունների գործառույթներն ընդգրկում են ինչպես չափահասներին, այնպես էլ անչափահասներին:

Ուղղիչ հաստատություններում սոցիալական աշխատանքի դերակատարությունը մինչ այսօր եղել և մնում է գիտական ու պրակտիկ վեճերի, հակադիր մոտեցումների առարկա: Խնդրո առարկայի շուրջ մասնագետների մի մասը հակված է բանտերում սոցիալական աշխատանքի դերակատարությունը վերապահել պրոբացիայի ծառայողներին. այս մոտեցման առանցքային հիմնավորումն այն է, որ բանտային ծառայողները չեն կարող արդյունավետ իրականացնել սոցիալական աշխատանքի առաքելությունը, քանի որ ազատազրկման հաստատությունների հիմնական փիլիսոփայությունը և առաջնային գերակա նպատակը անվտան-

գությունն է, որից կախված են սոցիալական աշխատանքի ծառայության շրջանակները: Հետազոտողների մյուս մասը շեշտադրում է հենց ազատազրկման վայրերում բանտային ծառայողներ, սոցիալական աշխատողներ ունենալու անհրաժեշտությունը: Այս մոտեցումը բխում է այն փաստարկներից, որ ուղղիչ հաստատություններում դատապարտյալների հետ ամենօրյա շփումների ընթացքում նրանց խնդիրներին լավագույնս կարող են արձագանքել այն մասնագետները, որոնք ամեն օր աշխատում են այնտեղ: Բացի այդ՝ սոցիալական աշխատանքի ծառայությունն իր ընդհանուր ազդեցությունը կարող է ունենալ բանտի կառավարման խնդիրների շրջանակում և որոշակի հավասարակշռություն ստեղծել անվտանգության ու վերականգնողական աշխատանքների միջև: [4]

Կարծում ենք՝ պրակտիկայում երկու մոտեցումներն էլ ունեն դրական և բացասական կողմեր, դրանց արդյունավետությունը կարող է կախված լինել կիրառման նպատակներից, սոցիոմշակութային այն համակարգից, ուր ներդրվում է ծառայությունը:

Սոցիալական աշխատանքի խնդիրները ազատազրկման հաստատություններում ներառում են դատապարտյալների վերականգնումը, ընտանեկան կապերը և սոցիալական վերաինտեգրումը, դատապարտյալների կարիքների գնահատումը, դատապարտյալի շահերի պաշտպանությունը, ինչը կրկնահանցագործության վրա ազդելու, այն նվազեցնելու մեխանիզմ է, որն արտացոլում է պատժի ազդեցությունը և իրավախախտի կողմից հետագայում նոր հանցագործությունների կատարման կանխումը: [5]

Ինչպես ցանկացած մարմնի, այնպես էլ պրոբացիոն ծառայության հիմնադրման և արդյունավետ գործունեության համար, առավել ևս, երբ այդ ծառայությունն իրականացնում է բազմամասնագիտական լայնածավալ աշխատանքներ, խիստ անհրաժեշտ է պահպանել այն հիմնարար սկզբունքները, որոնք ապահովելու և ամրագրելու են տվյալ ծառայության գործունեության ու գործողությունների շրջանակը:

Իրավախախտների հետ տարվող սոցիալական աշխատանքում կարևորվում են պրոբացիոն ծառայությունների այն սկզբունքները, որոնք կապված են հանրային անվտանգության և արդարադատության պատշաճ իրականացման, հանցագործություն կատարած անձի իրավունքների հարգման, ինչպես նաև այլ ծառայությունների համագործակցության հետ: [6]

Պրոբացիոն ծառայությունների դերակատարության մեջ կենտրոնական են զեկույցները, որոնք պատրաստվում են պրոբացիոն սոցիալական աշխատողների կողմից, սակայն դատարանի կամ մինչդատական վարույթն իրականացնող մարմինների համար պարտադիր պայման չեն, քանի որ վերջիններս որոշումներ կայացնելիս ազատ են: Իսկ այսպիսի զեկույցներ ներկայացնելու ժամկետները յուրաքանչյուր երկրում տարբեր են: Պրոբացիոն ծառայություն իրականացնող մարմիններն իրենց գործառույթներն իրականացնելիս տեղեկատվություն են տրամադրում դատարանին և հետաքննության ու նախաքննության մարմիններին: Տրամադրվող տեղեկատվությունը պետք է բխի հանցագործի ու տուժողի շահերից և տեղեկություն պարունակի հանցագործի վարքագծի հնարավոր փոփոխության և սոցիալական վերաինտեգրման մասին:

Պրոբացիոն ծառայողները պատրաստում են զեկույց ամբաստանյալի վերաբերյալ և ներկայացնում դատարանին, իրականացնում են ազատության մեջ գտնվող մեղադրյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն, օժանդակություն, աջակցություն, սոցիալական ծրագրերի իրականացում, մեղադրյալի և տուժողի հաշտեցում: [1]

Հայաստանում պրոբացիայի ծառայության ստեղծումը և զարգացումը հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով. պրոբացիայի ծառայության ստեղծումը բխում է քրեական արդարադատության ոլորտում եվրոպական երկրների որդեգրած քաղաքականությունից: Մասնավորապես, մարդու իրավունքների ու ազատությունների առաջնայնությունը, մյուս կողմից դրանց պաշտպանությունը այն հիմնարար արժեքներն են, որոնք երաշխավորվում են պետության կողմից, և պետական հարկադրանքի բոլոր միջոցները, այդ թվում՝ պատիժը, պիտի հիմնված լինեն այդ արժեքների վրա: Պետական հարկադրանքի և վերահսկողության գործառույթներ ունեցող ոլորտում առավել ցայտուն և նկատելի է, թե որքանով է Հայաստանը իրապես որդեգրել այս քաղաքականությունը և որքանով է պատրաստ իրականացնել այն բարեփոխումները, ստեղծել այն օրենսդրական, իրավական դաշտը, որի վերաբերյալ ստանձնել է համապատասխան պարտավորություններ:

Պրոբացիայի ծառայությունն ապացուցել է իր տնտեսական արդյունավետությունը կիրառության բոլոր ձևերում և մոդելներում: Միանշանակ է, որ անձին ազատությունից զրկելով՝ պետությունը որոշակի նյութական միջոցներ է ծախսում նրան պահելու համար: Եթե հասարակության ան-

վտանգությունն առավել վտանգված կարող է լինել, ապա հանրությունը նախընտրում է ազատազրկումը: Սակայն եթե անձի վտանգավորության չափը չի ազդում համընդհանուր անվտանգության վրա, ապա ընդհանուր հասարակական շահը պահանջում է, որպեսզի նա կրի այլընտրանքային պատիժ: Անձը, կատարելով հանցագործություն, արդեն իսկ որոշակի վնաս է հասցնում պետությանը, իսկ ազատազրկմամբ ոչ միայն չի հատուցվում այդ վնասը, այլև հասարակությունը շարունակում է հարկեր վճարել պետությանը, որպեսզի վերջինս պահի դատապարտյալին: Մեր կարծիքով, եթե խնդիրը նաև տնտեսական հիմնավորման տեսանկյունից դիտարկվի, ապա Հայաստանը որպես սահմանափակ ռեսուրսներ, այդ թվում՝ բնակչություն ունեցող երկիր, չի կարող իր վրա վերցնել պատժի այնպիսի արդյունավետ տեսակ, ինչպիսին ազատազրկումն է և կիրառել հանցագործությունների մոտ 90%-ի նկատմամբ:

Պրոբացիայի ներդրումը դրական է նաև սոցիալական առումով. ինչքան անձը ավելի քիչ մեկուսանա հասարակությունից, այնքան հետագայում նրա վերասոցիալականացման պրոցեսները ավելի հեշտությամբ կարող են իրականացվել:

Պրոբացիայի ծառայության այսպիսի հրամայականի պարագայում ակնհայտ արդիական է սոցիալական աշխատանքի մասնագիտության հզորացումը, մասնագետների ակտիվ ընդգրկումը պրոբացիայի ծառայության կազմակերպման աշխատանքներին, ինչպես նաև համապատասխան կրթություն ապահովող բուհերի կողմից ուսումնական առարկայական ծրագրերի վերանայումը: Սա կարևոր է ոչ միայն մասնագիտական զարգացման տեսանկյունից, այլև նախ և առաջ պրոբացիայի արդյունավետության ապահովման համար, որովհետև սոցիալական աշխատանքի վրա հիմնված պրոբացիոն ծառայությունը խթան կհանդիսանա արդարադատության համակարգում սոցիալական մոտեցումների առաջխաղացման համար, ինչը արդյունավետ աշխատանքի կարևոր նախապայման է: Արդարադատության համակարգում սոցիալական աշխատողի՝ որպես մասնագետի ընկալման, նրա դերի ձևավորման համար բացառիկ է հենց պրոբացիայի ծառայությունում սոցիալական աշխատանքի գործառույթների հստակ սահմանումը և դրան համապատասխան սոցիալական աշխատանքի իրագործումը մակրո և միկրո մակարդակներում: Մենք կարծում ենք, որ սոցիալական աշխատանքի խթանման համար կարևոր նախապայման է մասնագետների ակտիվ մասնակ-

ցությունն ու նախաձեռնողականությունն իրականացվող գործընթացներում:

ՀՀ-ում ներդրվող պրոբացիոն ծառայությունները պետք է նպաստեն հանցագործությունների, կրկնահանցագործությունների նվազմանը, հանցանք կատարած անձի ուղղմանը, հասարակությունում հանցանք կատարած անձի վերասոցիալականացմանը, սոցիալական արդարության վերականգնմանը, հասարակության անվտանգության ապահովմանը՝ հանցանք կատարած անձի կողմից նոր հանցագործությունների կատարման հավանականությունը նվազեցնելու միջոցով: [2]

Այսպիսով՝ սոցիալական աշխատանքը արդարադատության համակարգում ներառված է տարբեր ինստիտուտների մեջ կամ գործում է որպես առանձին միասնական ծառայություն, որին դիմում են արդարադատության մարմինները: Այդ ինստիտուտների մեջ կարելի է առանձնացնել պրոբացիան՝ որպես մասնագիտական ծառայություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովակիմյան Գ., Գասպարյան Ա. 2013, Սոցիալական աշխատանքը քրեական արդարադատության համակարգում, Երևան:
2. «ՀՀ իրավական ու դատական բարեփոխումների 2012–2016 թվականների ռազմավարական ծրագիր»:
3. Басов Н.Ф. 2008, Основы социальной работы: Учебное пособие: Академия.
4. Жукова В.И., Галагузова М.А 2002, Социальная работа с осужденными: Учебное пособие: МГСУ.
5. Масковский М. 2007, Социальная работа в пенитенциарных учреждениях: Учебное пособие: Психолого-социальный институт
6. Probation Rules 2010, Recommendation CM/Rec of the Committee of Ministers to member states on the Council of Europe.

ОСОБЕННОСТИ ИСПЫТАТЕЛЬНОГО КОНТРОЛЯ СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ С ПРАВОНАРУШИТЕЛЯМИ

Наре Аслизадян
ВГУ, Факультет истории и географии,
Социальная работа, 4-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *Испытательный срок службы, общественный контроль, преступник, права человека, тюрьмы, справедливость, преступление, тюрьма, делинквентность.*

Пробационные службы, осужденный, социальная психологическая работа, агрессивность, тревожность.

Пробационные службы предусматривают комплекс социально-психологических работ, способствующих психологической готовности осужденных – жить и реинтегрироваться в общество. Эти меры будут направлены на уменьшение агрессивностьи, тревожностьи и агрессивных межличностных отношений осужденных, что, в свою очередь, будет способствовать реадаптации осужденных.

PROBATION CONTROL FEATURES IN SOCIAL WORK WITH OFFENDERS

Nare Aslizadyan
VSU, Faculty of History and Geography, Social Work 4th year

SUMMARY

Keywords: *Probation service, social supervision, offender, human rights, justice, crime, correctional institutions, the justice system, prison, delinquency.*

Probation service, psychological readins, convict, society.

Summarizing we have to note that the probation services provides comprehensive psycho-social activities, which contributes to the psychological readiness of convicts exempting from punishment to live and reintegrated into society. These measures will contribute to prisoners' aggressiveness, anxiety, and reduce aggressive interpersonal relations, thus contributing to exempt readaptatsiayin convict.

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ռիմա Պետրոսյան
ՎՊՀ, Մանկավարժություն և հոգեբանություն, 2-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ մ. գ. թ., դոցենտ ***Լիզա Հարոյան***

Հանգուցային բառեր՝ *բռնություն, իդենտիֆիկացիա, ագրեսիա, էսկալացիա*

Բռնության հիմնախնդիրը այն մտահոգիչ թեմաներից մեկն է, որն առավել արծարծվում է հասարակության շրջանում: Խնդրի արդիականությունը կապված է բռնության հետևանքով առաջացած տարատեսակ պաթոլոգիաների, դրանց հետևանքների հետ, որոնք հետագայում լուրջ խնդիրներ են առաջացնում: Ուսումնասիրության նպատակն է՝ բացահայտել ՀՀ-ում երեխաների նկատմամբ կիրառվող բռնության ստատիստիկան, բացահայտել այն պատճառները, որի հետևանքով երեխաները ենթարկվում են բռնության և գտնել խնդրի լուծման հնարավոր ուղիները: Բռնությունը՝ որպես խնդիր, կրում է համապետական բնույթ՝ միշտ էլ համարվելով մանկավարժական առանցքային խնդիրներից մեկը: Բռնանալ մեկ ուրիշի, հոգեբանական սթրեսի ենթարկել վերջինիս «ինչո՞ւ» և «ինչի՞ համար» առաջին հայացքից սովորական թվացող այս հարցերի հիմքում լուրջ հոգեբանական գործոնի ազդեցություն կա, որը ենթակա է խորը և տրամաբանական ուսումնասիրման: Խնդիրը ուշադրության կարիք ունի, քանի որ միտված է էսկալացիայի:

Բռնությունը ֆիզիկական ուժի կամ իշխանության դիտավորյալ կիրառումը կամ կիրառման սպառնալիքն է որևէ անձի, անձանց խմբի կամ հանրության նկատմամբ, որը բերում է կամ կարող է բերել մարմանական վնասվածքի, հոգեբանական վնասի, ֆիզիկական կամ մտավոր թերզարգացման, ծայրահեղ դեպքում՝ մահվան: [5] Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է այն, որ երեխան, բռնության ենթարկվելով, զգալով ու ապրելով այդ ցավը, տեսնելով ծնողի ագրեսիվ վերաբերմունքը, ինքն էլ է սկսում դրսևորել վարքային նույն մոդելը: Հոգեբանական ուսումնասիրությունները առաջավոր հոգեբանների կողմից կատարված վկայում են այն մասին, որ հայտնի բռնակալներ, ինչպիսիք են Իվան Ահեղը, Ադոլֆ Հիտլերը, Ստալինը և շատ ուրիշներ, մանկության ժամանակահատվածում ապրել են ծանր պայմաններում, որտեղ կիրառելի է եղել բռնությունը: Ապահով ընտանիքի դերով կարևորվում է երե-

խայի գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, որը վերջինս հետագայում օգտագործում է կյանքում և աշխատանքում: Կարևոր է ծնողի դաստիարակության ոճը, կարևորվում է նաև այն, որ յուրաքանչյուր վեճ, կոնֆլիկտ ծնողների միջև բացասական է ազդում երեխայի մտավոր ինտելեկտուալ զարգացման վրա, բարդույթավորում՝ դարձնելով նրան չափազանց զգայուն և խոցելի: Երեխան բացի ընտանիքից՝ բռնության է ենթարկվում նաև դպրոցում ուսուցիչների կողմից. ուսման բնագավառում հաճախակի է կիրառվում բռնություն, սակայն այն նույնականացվում է պատժի մեթոդի հետ: Ի տարբերություն բռնության՝ պատիժը հասկացում, համոզում է դպրոցականների համար, տեսանելի է դարձնում իր կատարած սխալների հետևանքը, պարտավորեցնում է նրան չկրկնել նույն արարքը: [1, 299] Բռնությունը խոչնդոտ է երեխայի ներդաշնակ և համակողմանի զարգացման ճանապարհին:[2,57] Երեխաների նկատմաբ բռնությունը տարբեր տեսակների է լինում: Ներկայացնենք առավել տարածվածները՝ իրենց հետևանքներով հանդերձ՝

- Ընտանեկան բռնություն, որից առավել տուժում են կանայք և երեխաներ: Ծնողները կիրառում են հոգեբանական, հուզական, ֆիզիկական բռնություն երեխաների նկատմամբ: Այսպիսի պայմաններում չի կարող ձևավորվել կայուն ընտանիք: Նման ընտանիքների երեխաների մոտ ձևավորվում է ընտանեկան սխալ մոդել, որը հետագայում խանգարում է սեփական ընտանիք կազմելուն: Նման ընտանիքի երեխաները աչքի են ընկնում ագրեսիվությամբ, ինքնամփոփ են, շփման և հաղորդակցման խնդիրներ ունեն: [3]
- Ֆիզիկական բռնությունը ենթադրում է ֆիզիկական ուժի կիրառում անչափահասի նկատմամբ՝ վերջինիս պատճառելով ֆիզիկական վնասվածքներ: Սրա տարատեսակներից է սեռական բռնությունը, որը առավել տարածված է դեռահասների շրջանում, որի հետևանքով առաջանում են գինեկոլոգիական խնդիրներ, անպտղություն, բարդույթներ հղիության ընթացքում, վիժումներ, սեռական դիսֆունկցիաներ, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ: Այն ներառում է ծեծ, հարված, իրերի խլում:
- Դպրոցական բռնությունը աշակերտների մոտ առաջացնում է իդենտիֆիկացիայի խանգարումներ:
- Հուզական բռնությունը զոհի մոտ առաջացնում է հուզական լարվածություն, նվաստացումը իջեցնում է տուժողի ինքնագնահա-

տականը: Տեսակներն են՝ ծաղրուծանակը, անվանակոչումները, անտեղի նկատողությունները, ոչ օբյեկտիվ գնահատականները, գոռալը:

- Հոգեբանական բռնություն՝ բնութագրվում է մեկ անձի կողմից մյուսին այնպիսի պահվածքի ենթարկումը, որը բերում է հոգեբանական ցնցման և արտահայտվում է զոհի անհանգստությամբ, խրոնիկ դեպրեսիայով, հետտրավմատիկ սթրեսային խանգարմամբ: Այն ենթադրում է սպառնալիք ժեստերի միջոցով, հայացքով, խոսքերով, շանտաժ, վիրավորանքներ, անհարկի վերաբերմունք, ազատության սահմանափակում:[4]

Վանաձորում կատարած սոցիոլոգիական հետազոտության 100 հարցվածների պատասխանների հիման վրա ստացել ենք հետևյալ տվյալները. բռնությունը իշխող է այն ընտանիքներում որտեղ՝

1. ծնողներից մեկը (երկուսը) հարբեցողներ են (43%),
2. ծնողներից մեկը (երկուսը) թմրամոլներ են (5%),
3. ծնողներից մեկը (երկուսը) գործազուրկ են (12%),
4. ընտանիքն ապրում է սոցիալ տնտեսական ոչ բավարար պայմաններում աղքատություն (13%),
5. համացանցի, հեռուստատեսության, ֆիլմերի, մամուլի միջոցով (պարբերաբար բռնություն է քարոզվում (8%),
6. պետության կողմից բավարար չափով չեն պաշտպանվում երեխայի իրավունքները (6%),
7. ՀՀ-ում դեռևս կայացած չէ ոլորտի հոգեբան, սոցիալական աշխատողներ գերազանց իմացություն ունեցող մասնագետների ինստիտուտը (5%),
8. դեռևս կա այն թյուր մտայնությունը, որ հայ ընտանիքում բռնությունը նորմալ երևույթ է (10%):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2005:
2. Բաբանսկի Յու., Իլյինա Տ., Ստրոկին Ն., Մանկավարժություն, Երևան, 1986:
3. www.autopap.ru
4. www.hey-em.do.am
5. www.hogebaninfo.am

НАСИЛИЕ ДЕТЕЙ В СОВРЕМЕННЫЕ ВРЕМЕНА

Рима Петросян
ВГУ, Педагогика и психология, 2-ой курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *насилие, идентификация, агрессия, эскалация*

Сегодня причинны насилия. Ухудшение демокртичнего состояния в стране,ысложение воспитателных задач, ухудшение психоческого и эмоционального состояния соверменного челобека. В наше время дети нуждаются в защите. Эти и похожие задачи существуют в армянском обществе и есть необходимость вмешательства.

CHILDREN'S VIOLENCE IN OUR DAYS

Rima Petrosyan
VSU, Pedagogy and psychology, 2nd year

SUMMARY

Key words*: violence, identification, aggression, escalation.*

Today couse violencein resulted in the deterioration of the democratic situation in the country, the complexity of modern men's psychological, emotional and educational problems complicated inner world. Nowdeys, there is a need to protect children. These and similar issues are taken into the fringe of society and there is interference.

ՈՒՍՄԱՆ ՄԵՋ ՉԱՌԱՋԱԴԻՄԵԼԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՆԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Ռիմա Պետրոսյան
ՎՊՀ, Մանկավարժություն և հոգեբանություն, 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ մ.գ.թ. ***Նելլի Ներկարարյան***

Հանգուցային բառեր՝ *չառաջադիմել, իդենտիֆիկացիա, ներառական կրթություն*

Արդի ժամանակաշրջանում բոլորի համար կրթությունը կրում է պարտադիր բնույթ, քանի որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է ունենա գիտելիքների պաշար: Կարևորելով ուսումը անձի ձևավորման և զարգացման գործընթացում՝ կարևորում ենք նաև դրա հետ կապված խնդիրները, մասնավորապես չառաջադիմելը որպես մանկավարժական հիմնախնդիր: Այն կրում է համապետական բնույթ և անկախ ՏՏ և ձեռք բերած հաջողություններից և կրթության ոլորտ ներմուծած նորարարություններից՝ այն համարվում է տարածված: Դեռևս Մովսես Խորենացին է վկայել, որ աշակերտների մեջ կան ծույլեր: 1868 թվականին Ներսիսյան դպրոցի սաներից 12 հոգի հետ տարվեցին ցածր դասարաններ, 53-ը հեռացվեցին դպրոցից, որպես չառաջադիմողներ. վկայում է Լեոն: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրության խնդիրը ունի դարերի պատմություն: Չառաջադիմելու պատճառները զանազան են, և ամենամեծ վտանգը այս հարցում ուսուցիչների այն մտայնությունն է, որ ուսման մեջ աշակերտի չառաջադիմելը միշտ էլ դիտարկվել է «օրինաչափ երևույթ»: [1,25-50] Աշակերտների զարգացման, նրանց գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորորմանը նպաստում են ընտանիքը, դպրոցը, միջավայրը, սակայն սխալ կլինի միանշանակ համարել թվարկված սոցիալական ինստիտուտների միայն դրական ազդեցությունը, քանի-որ կարող են այդ գործոնները ազդել չառաջադիմելու վրա: [2,58-65] Չեն կարող ուսուցանել այն ուսուցիչները, որոնք՝

- Չունեն լիարժեք գիտելիքներ,
- Նրանց վերաբերմունքը երեխաների նկատմամբ մարդասիրական չէ,
- Ցածր է վարքի և վարվեցողության կուլտուրան,
- Չեն տիրապետում ուսուցման արդի մեթոդներին,
- Զուրկ են մանկավարժական վարպետությունից,

Ընտանիքը ևս կարող է խոչընդոտել, երբ՝

- Նյութական պայմանները ոչ բավարար են,
- Գոյություն ունի կաշառքի սովորություն՝ «ի՞նչ տամ, որ սովորես…»,

- Ծնողները չեն կիսում երեխայի ապրումները,
- Ունեն անընդելի և ցածր կուլտուրա,
- Ապագայի հեռանկարը բացակայում է,
- Երեխաների կատարած արարքները չեն գնահատվում և վերլուծվում մեծահասակների կողմից, կիրառում են բռնություն՝ ֆիզիկական, հուզական:

Միջավայրի բացասական ազդեցությունը բնութագրվում է հետևյալ պատճառներով՝

- Երբ շրջապատում առկա է անթույլատրելի արարքներ՝ թղթախաղ, ալկոհոլ, թմրամիջոցների օգտագործում,
- Երբ հասարակական համակեցության կարգ ու կանոն է խախտվում՝ որոշ «արտոնյալների» կողմից,
- Մարդկանց նկատմամբ անարդարացի վերաբերմունքը: [4, 20-123]

Այս գործոնների վերացումը կնպաստի երեխաների ճիշտ և գրագետ զարգացմանը: Չառաջադիմելու պատճառների երեք խումբ է առանձնացրել Պ.Պ. Բորիսովը՝

1. Ընդհանուր մանակվարժական պատճառներ՝ ուսուցիչների կողմից ուսումնադաստիարակչական աշխատանքների թերություններ,
2. Հոգեախտաբանական պատճառներ,
3. Սոցիալ-տնտեսական և սոցիալական պատճառներ:

Խնդիրը արդիական է, քանի վոր դպրոցներում ինտեգրված նոր կրթական ծրագրերը, բարեփոխումները դեռևս բավարար չեն շոշափվող հարցին լիարժեք լուծում տալում համար: Խնդիրը բացի պատճառներից ենթադրում է նաև ախտորոշում և կանխարգելում: [3,120]

Չառաջադիմելու հաղթահարման ուղիները գտնելուց առաջ նախ պետք է ճիշտ ախտորոշել պատճառները: Կանխարգելիչ են համարվում տնային աշխատանքները, որոնք խորացնում և լայնացնում են սովորողների ձեռք բերած գիտելիքները, դրանք կայունացնելը, վերածելը համոզմունքների, կիրառումը պրակտիկայում և այդ գիտելիքների հիման վրա զարգացնելը նրանց կարողությունները և հմտությունները: Լրացուցիչ պարապմունքները իրականացվում են ուսուցչի կողմից, որը պետք է հաշվի առնի երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Նախկինում չառաջադիմելը կասեցնելու նպատակով կիրառում էին աշակերտին չփոխադրելու մեթոդը, որն արդյունավետ չի համարվում: Ներկայումս խնդիրը լուծվում է հանրակրթական դպրոցներում հատուկ դասարաններում, որտեղ երեխայի հետ աշխատում է բազմամասնագիտական թիմը, երեխայի գիտելիքների մակարդակը հասցվում է նորմային, լրացուցիչ պարապմունքը իրականացվում է երեխայի դասերին զուգահեռ: Չառաջադիմությունը վերացնելու նոր մոտեցումնե-

րից է մինչամուսնական դիֆերենցացիան: Այն հիմնվում է երեխայի դպրոցին պատրաստվածության մակարդակի վրա: Հաղթահարման համար կարևոր է ուսուցիչների և ծնողների համագործակցությունը, նրանց համատեղ աշխատանքը:

Ներկայումս Ներառական կրթական համակարգը առաջարկում է լուծման զանազան ուղիներ, հնարավորությունների մեծ համակարգ խնդրի հետագա էսկալացիան կանխելու համար:

Հետազոտություն ենք անցկացրել ք. Վանաձորի Ստ. Շահումյանի անվան թիվ 6-րդ դպրոցում, որի ժամանակ ծանոթացանք Ներառական կրթական համակարգի դրական և բացասական կողմերին, ուսումնասիրեցինք բազմամասնագիտական թիմի աշխատանքը չառաջադիմելու խնդիր ունեցող աշակերտի հետ: Բացի այդ մեր կողմից կրրառվել են զրույցի, դիտման, և պրոյեկտիվ մեթոդներ: Փորձարարական աշխատանքի արդյունքում եկանք այն եզրակացության, որ չառաջադիմելու պատճառ է հանդիսանում ծնողների ոչ հետևողական աշխատանքը, ուշադրության պակասը, ուսուցիչների ոչ ճիշտ մոտեցումը: Երեխայի հետ զրույցում պարզեցինք, որ մայրը 50 տարեկան է և քիչ է զբաղվում իր դասերով, ավելի շատ հետաքրքրություն էր դրսևորում մաթեմատիկա առարկայի նկատմամբ, երբ բացատրվում էր դասը և հետաքրքրություն առաջացնում Վ.Ք.-ի մոտ հաջորդ օրը նա վերարտադրում էր կարդացածը: Պրոյեկտիվ մեթոդի կիրառման արդյունքում եկեանք այն եզրակացության, որ երեխան ապրում է այնպիսի ընտանիքում, որտեղ տիրում է ընտանեկան անկայուն մթնոլորտ. հայրը հաճախակի է օգտագործում ալկոհոլ:

Վանաձոր քաղաքում իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքում կատարեցինք հետևյալ եզրակացությունները.

1. Առաջնային խնդիրը կապված է ծնողների, նրանց զարգացվածության մակարդակի և գիտելիքների հետ: Նրանց ոչ հետևողական և գրագետ աշխատանքի արդյունում երեխաների մոտ առաջանում են զանազան խնդիրներ ուսմումնական գործընթացում (50%),

2. ուսուցիչների գիտելիքների ոչ լիարժեք և արդիական լինելը, նրանց կողմից դաստիարակության և ուսուցման գործընթացում մեթոդների և հնարների սխալ ընտրությունը (23%),

3. իրավասու մարմինների ոչ ճիշտ և հետևողական աշխատանքի կազմակերպումը (որպես օրինակ ԿԳՆ-ի, անչափահասների տեսչության, մարզպետարաններում կրթական բաժինների անկանոն աշխատանքը (10%)),

4. դպրոցներում համապատասխան մասնագետների և ռեսուրսների բացակայությունը (18%):

Խնդիրը կարևորվում է ներկայիս ներառական համակարգի պահան-

ջին համապատասխան:

Ուսումնասիրության և հետազոտության հիման վրա կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- Ուսուցիչները պետք է պարբերաբար հարստացնեն իրենց գիտելիքները, մշտապես տեղյակ լինեն կրթությանը սպառնացող խնդիրներին,
- Ուսումնական և դաստիարակչական գործընթացում ուսուցիչների կողմից ճիշտ ընտրվեն մեթոդները, դրանք լինեն հնարավորինս արդիական,
- Ուսումնական գործընթացում ներգրավել ժամանակակից առաջավոր մանկավարժների գաղափարներ,
- Դասղեկի, դասավանդող ուսուցիչի, ծնողի միջև մշտապես պետք է կապ լինի,
- Հնարավորինս վերացնել ընտանեկան այն խոչընդոտները, որոնք սպառնում են ուսումնական գործընթացին,
- Ծնողները պետք է զերծ պահեն իրենց երեխաներին սխալ միջավայրից,
- Ծնողներին հատկացնել բավականչափ տեղեկատվություն ներկայիս կրթական համակարգի վերաբերյալ,
- Երեխաներին հեռու պահել ընտանիքում տեղի ունեցող վեճերից (հայր-մայր, մայր-սկեսուր և այլն),
- Լուրջ մոտեցում ցուցաբերել երեխայի ուսումնական և դաստիարակչական գործընթացին՝ անկախ տարիքային և սեռային պատկանելիությունից,
- Համագործակցության նպատակով մշտական կապ պահպանել դպրոցի և ընտանիքի միջև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2005:
2. Բալյան Ա.Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, «Լույս», 1982:
3. Գևորգյան Պ. և ուր., Աշակերտի ուսման մեջ հետ մնալու պատճառները և դրանց հաղթահարման ուղիները, ԳՊՄԻ-ի գիտաժողովի նյութերի ժողովածու, 2009:
4. Մինասյան Մ. Ն., Ուսման մեջ հետ մնալու պատճառները և դրանց կանխման և հաղթահարման ուղիները, Երևան, «Լույս», 1980:

В ОБРАЗОВАНИИ НЕПРОГРЕСС КАК ПЕДАГОГИЧЕСКАЯ ПРОБЛЕМ

Рима Петросян
ВГУ, Педагогика и психология, 4-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *непрогресс, идентификация, инклюзивное оброзование*

Неуспеваемость в учебе одна из главнейших задач педагофики. Содействие учителей и родителей поможет избежать этой проблемы. В настоящем времени Инклюзивное оброзование обучение создает новую группу проблем. Так де есть необходимость для решения задачи приложит необходимые усилия.

THE EDUCATION UNPROGRESS AS A PEDAGOGICAL PROBLEM

Rima Petrosyan
VSU, Pedagogy and psychology, 4th year

SUMMARY

Key words: *unprogress, identification, inclusive education*

Unprogress is one of the pedagogical issues. Thanks to the joint efforts of the teachers and parents as possible to avoid the problem. The inclusive education brings with it a whole system os issues related to the subject matter. There is a need to take strong steps to solve them.

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ИСКУССТВОВЕДЕНИЕ

ART SCIENCE

ՄԱՐՏՈՒՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ «ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵՐԳԵՐ» ՎՈԿԱԼ ՇԱՐՔԸ

Էմմա Թորիկյան
ԵՊԿԳ, Երաժշտագիտություն, 1-ին կուրս
*Գիտ., ղեկավար՝ դոցենտ **Ռիտա Աղայան***

***Հանգուցային բառեր՝** Մարտուն Իսրայելյան, Վոկալ շարք, Վահան Տերյան:*

Ինչպես հայտնի է հայ պոեզիան մշտապես անսպառ աղբյուր է եղել հայ կոմպոզիտորական դպրոցի համար: Հայ կոմպոզիտորները, դիմելով մեր հանճարեղ պոետներին, ամեն անգամ յուրովի մոտեցում են ցուցաբերել տեքստին, հուզական ոլորտին ու բովանդակությանը, ինչն արտացոլվել է նրանց նույնքան յուրօրինակ գրվածքներում:

Խնդիր ունենալով ուսումնասիրել հայ պոետների գեղարվեստական բովանդակության արտոցոլումը հայ կոմպոզիտորական արվեստում՝ ուսումնասիրության նյութ ընտրեցինք Մարտուն Իսրայելյանի վոկալ ժանրի ստեղծագործությունները: Մարտուն Իսրայելյանը ծնունդով գյումրեցի է, երաժշտական կրթություն ստացել է նախ՝ Լենինականի Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում՝ կոմպոզիտոր Ազատ Շիշյանի դասարանում, ապա Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանի ղեկավարությամբ: 1969 թվականից Մարտուն Իսրայելյանը ՀՀ կոմպոզիտորների միության անդամ է: Ներկայումս Մարտուն Իսրայելյանը Երևանի պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ամբիոնի պրոֆեսոր է: Հեղինակ է մի շարք գործիքային և վոկալ ժանրի ստեղծագործությունների: Կոմպոզիտորի գրչին են պատկանում Վահան Տերյանի, Միսաք Մեծարենցի, Հենրիկ Էդոյանի, Գրիգոր Նարեկացու խոսքերով գրված շարքեր: Այս զեկուցման մեջ մենք կներկայացնենք Վ. Տերյանի խոսքերով գրված վոկալ շարքը՝ մեցցո-սոպրանոյի ու սիմֆոնիկ նվագախմբի համար:

Վ. Տերյանը հայ բանաստեղծական իրականության մեջ հայտնի է որպես մեծ քնարերգու, ում սիրո անուրջները, անորոշ, երերուն տրամաբանություններն ու մենությունները շաղախված են «լուսավոր թախիծով կամ ուրախալի տխրությամբ», որն էլ հեղինակի քնաերգության ամենա-

բնորոշ հատկությունն է կազմում: Ահա այս տրամադրությունները՝ կապված բնության՝ հիմնական աշնանային պատկերների հետ, իրենց արտահայտումն են գտել Մ. Իսրայելյանի ներկայացվող ստեղծագործության մեջ:

Շարքը եռամաս կառուցվածք է՝ վառ արտահայտված երկշերտ կերտվածքով՝ մեղեդի և նվագակցություն: Դրամատուրգիայի յուրաքանչյուր միավոր ընթանում է միևնույն կերպարային ոլորտում:

Ողջ ստեղծագործությունը վեր է խոյանում սեկունդա և կվինտա ինտոնացիաներից, որոնք, զարգանալով տարբերակային կրկնողության և ածանցյալ կոնտրաստի սկզբունքով, ծնում են տարաբնույթ, իրենց հուզականությամբ չափազանց տպավորիչ մեղեդային դարձվածքներ, որոնք իրենց հերթին յուրօրինակ ամփոփում են գտնում թեմատիկ հարմոնիայում՝ ստեղծելով բազմաձայնության կազմակերպման մոդալ սկզբունք:

Կտավում մեծ տեղ է զբաղեցնում օրկեստրային պարտիան: Այն մի կողմից ձուլվում է մեղեդու տրամադրությանը, մյուս կողմից հակադրվում՝ ընդգծելով նրա արտահայտչականությունը: Յուրաքանչյուրի դեպքում նվագախմբի հնչողականությունը չափազանց գունեղ է և ընկալվում է որպես աշնանային պատկերների հարուստ ներկապնակ:

Նկատելի է կոմպոզիտորի բանաստեղծական տեքստի մոտեցման երկու տարբերակ. մի դեպքում հեղինակը նույնությամբ վերարտադրում է բանաստեղծական տեքստը՝ ընդգծելով յուրաքնչյուր տողի ավարտը՝ երկար պահված նոտաներով կամ պաուզաներով, իսկ վերջում դրված կախման կետերը արտահայտվում են մեղեդական գծի կամ օրկեստրային պարտիայի ընդլայնման միջոցով, մյուս դեպքում կոմպոզիտորը դիմում է բանաստեղծական տեքստի առանձին բառերի կրկնությանը՝ ընդգծելով այդ բառերում ամփոփված իմաստի կարևորությունը:

Առաջին բանաստեղծությունը՝ «Աշնան երգ», վերցված է «Մթնշաղի անուրջներ» ժողովածուից: Ընթերցենք մեկ հատված.

Ցրտահար, հողմավար.
Դողացին մեղմաբար
Տերևները դեղին,
Պատեցին իմ ուղին…

Այստեղ իշխում են հուսահատական, ափսոսանքի ծանր խոհեր: Այն բաժանված է երեք էպիզոդների՝ ստեղծելով եռամաս կառուցվածք: Յու-

րաքանչյուր բանաստեղծական քառատողին նախորդում է օրկեստրային նախանվագ, որը մի կողմից ամփոփում է նախորդ ասելիքը, մյուս կողմից՝ նախապատրաստում հաջորդին: Սկսվում է օրկեստրային նախանվագով՝ լարային կազմի կատարմամբ: Վերի ռեգիստրը, թափանցիկ ֆակտուրան՝ ձայների աստիճանական մուտքով և ներքընթաց սեկունդային քայլերով, ստեղծում են այն մթնոլորտը, որում ընթանալու է պատումը: Մեղեդին շարժվում է ալիքաձև, դիատոնիկ հնչյունաշարով, մոտիվներն ունեն յամբական կառուցվածք: Երկրորդ էպիզոդում նկատվում է ռեգիստրի փոփոխություն և տևողության կրճատում: Առաջին նախադասության ալիքաձև շարժերին հակադրվում են երկրորդ նախադասության վերընթաց քայլերը, իսկ մոտիվների յամբական կառուցվածքը փոխարինվում է ամֆիբրախիկով: «Հողմավար» բառին հաջորդող կախման կետերն իրենց շարունակությունն են գտնում օրկեստրում՝ թեմատիկ նյութի զարգացմամբ: Երրորդ էպիզոդը ընկալվում է որպես դինամիկ ռերիզա: Այստեղ հաստատվում է մասի ինտոնացիոն բջիջը՝ ներքընթաց սեկունդան և կվինտան, որը վերջնանվագում երկու պիանո թափանցիկ հնչողությամբ կանգ առնելով, ամփոփում է «լյա մի դո սի» թեմատիկ ուղղահայացի մեջ:

Երկրորդ մասի բանաստեղծությունը՝«Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն», վերցված է «Ոսկի հեքիաթ» ժողովածուից: Ընթերցենք մեկ հատված.

Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն,
— Բարդիներն են բաց պատուհանիս տակ,
Դու ես, որ դարձյալ թախիծով հիշում,
Կանչում ես նորից կարոտով հստակ:

Ի տարբերություն նախորդ ժողովածուի՝ այստեղ ափսոսանքն ու տառապանքը փոխարինված են սիրային լուսավոր պատկերներով՝ անիրական ցնորք–կնոջ հայացքով, նրա հետ հանդիպման սպասումով ու հույզերով: Բանաստեղծությունը կազմված է 5 մտքից, որոնք կոմպոզիտորի կողմից միավորված են եռամաս կառուցվածքի մեջ: Այստեղ տերյանական պոեզիային բնորոշ հակադրություններն իրենց դրսևորումն են գտնում թեմատիկ նյութի կազմակերպման մեջ: Օրկեստրում թեմատիկ նյութը հիմնված է անհեմիտոն լադի վրա, ինչին հակադրվում է վոկալ պարտիայի խրոմատիզմով հագեցած հիասքանչ մեղեդական գիծը: Նվագախմբի պարտիան իր հնչողականությամբ շատ հագեցած է՝ շնոր-

հիվ սիմֆոնիկ կազմի ամբողջական օգտագործման, և հանդես է գալիս որպես ինքնուրույն կերպար՝ հիասքանչ, եթերային ու տերյանական «հուշիկ տրամադրություններին միանգամայն համահունչ»:

Շարքի գլխավոր բարձրակետը հնչում է երկրորդ էպիզոդում: Այստեղ միավորված երրորդ և չորրորդ տները միմյանց հաջորդում են առանց օրկեստրային նախանվագի, մոտիվը դառնում է քորեյ, մետրը՝ փոփոխական, ինչն էլ ավելի է մեծացնում երերուն անկայունությունը, որը զարգանալով, ի վերջո, հասնում է կուլմինացիայի «ինձ ես որոնում աղոտ աշխարհում» տողի վրա՝ ընդգծելով ողջ ստեղծագործության ոչ միայն երաժշտական, այլև բանաստեղծական շեշտը: Բարձրակետից հետո վերադառնում են նախկին գույներն՝ իրենց հետ բերելով վերջին ռեպրիզայի հատվածը, որտեղ նկատելի է կոմպոզիտորի առանձնահատուկ ուշադրությունը բանաստեղծության իմաստային հանգուցալուծմանը ներկայացնող տողին՝ «Անտես ու հուշիկ, Իմ շուրջը շրշում»՝ տողերը տրոհվում են առանձին բառերի, որոնք անջատվում են միմյանցից մեծ տևողությամբ կամ ֆերմատայի միջոցով:

Ցիկլի վերջին մասը ներկայացվում է Տերյանի «Ոսկե շղթա» ժողովածուից:

«Ոսկեհանդերձ եկար և միգասքող» բանաստեղծությունը: Ընթերցենք մեկ հատված.

Տերևներիդ դանդաղ թափվող ոսկով,

Տխուրաչյա աշուն, սիրած աշուն.

Մետաքսներով քնքշաշրշյուն:

Այստեղ ևս ներկայացված են աշնանային մոտիվներ, որոնք, սակայն, միանգամայն տարբերվում են նախորդներից զգացմունքների նոր փնջով: Այստեղ է, որ տերյանական լուսավոր թախիծը իր «անչար ավաղներով, քնքշագին օրորներով» միաձուլվում է «տխուրաչյա աշնան» պատկերներին: Վերջին մասը ևս կազմված է երեք էպիզոդից, ինչը համապատասխանեցված է բանաստեղծական երեք քառատողերին: Անասելի շքեղ է օրկեստրը. աստիճանական մուտքերի, փայտափողայինների պասաժների, գալարափողերի յուրօրինակ տեմբրի օգտագործմամբ տեսանելի է դառնում աշնանային լուսավոր բնապատկերը՝ իր ողջ գույներով: Օրկեստրային նախանվագի թեմատիկ նյութը ունի անհեմիտոն լարային հենք, հնչում է գալարափողի մոտ՝ իր մեջ ամփոփելով լուսավոր և միաժամանակ խորհրդավոր երանգներ: 9-րդ տակտից սին-

կոպների միջոցով լարայինները խախտում են մետրի եռամասայնությունը՝ հանգեցնելով երկմաս մետրի: Վոկալ պարտիայի ուղղվածությունը վերընթաց է, ամֆիբրախիկ մոտիվներով, խրոմատիզմով՝ հագեցած չափազանց գեղեցիկ մեղեդային դարձվածքներով: Բանաստեղծական ամեն տողը համընկնում է մեկ երաժշտական նախադասության: Հետաքրքիր հարց ու պատասխան կա ձայնի գալարափողերի, հոբոյի և ֆլեյտայի միջև: Երկրորդ էպիզոդին նախորդող նախանվագում միայնակ հնչում են գալարափողերը, որոնք, կարծես հիշեցնում են թախիծի, տխրության մասին: Բայց մուտք է գործում լուսավոր մեղեդին և հեռացնում այդ տրամադրությունները: Երրորդ էպիզոդը դիատոնիկի է, որը ևս մեկ քայլ է դեպի լուսավորը, ամֆիբրախիկ մոտիվները փոխվում են երաժշտական տրոհման: Իսկ վերջին տողը կրկնվում է՝ ամեն անգամ բառային նոր կրճատումներով այնպես, որ վերջում մնում է «աշուն» բառը՝ վերջինիս ամենապայծառ դրսևորմամբ, որ իր հաստատումն է գտնում օրկեստրային վերջաբանում:

Ամփոփելով նշենք, որ այս ցիկլում տեղ գտած բանաստեղծություններն ու դրանց երաժշտական մեկնաբանությունները ամփոփ ձևով արտահայտում են տերյանական պոեզիային բնորոշ տրամադրություններոը՝ իրենց համադրումներով ու հակադրումներով: Ջգտումները՝ մասնավորից ընդհանուրը, թախծալիից լուսավորը, մեկտեղելով կոմպոզիտորի համանման մտահաղացմանը, իրենց ինքնատիպ արտահայտումը գտան այս վոկալ շարքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մարտուն Իսրայելյան, «Աշնան երգերի տետր»՝ սոպրանոյի և սիմֆոնիկ նվագախմբի համար (ըստ Վ. Տերյանի), Եր., 1986:

ВОКАЛЬНЫЙ ЦИКЛ МАРТУНА ИСРАЭЛЯНА «ОСЕННИЕ ПЕСНИ»

Эмма Торикян
ГЕГК, Музыковедение, 1-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *Мартун Исраэлян Вокальный ряд, Ваан Терян*

Армянская поэзия всегда являлась неиссякаемым источником вдохновения для армянских композиторов. Обращаясь к нашим великим поэтам, они каждый раз демонстрируют новый подход к текстам, эмоциональной сфере, содержанию. В докладе представлен вокальный цикл Мартуна Исраеляна «Осенние песни», написанный на слова Ваана Терьяна. Вошедшие в этот цикл стихотворения выражают характерные для терьяновской поэзии настроения и образы, в их сопоставлениях и конктрастах.

COMPOSER MARTUN ISRAYELYAN'S VOCAL SYCLE "AUTUMN SONGS"

Emma Torikyan
YSC GB, Musicology, 1st year

SUMMARY

Keywords: *Martun Israyelyan, Vokal sycle, Vahan Teryan*

The Armenian poetry has always been a continuing source for the Armenian composing school. The Armenian composers have always used our well-known poets' works every time showing a new, unique attitude to the text, context and the touching sphere and which has been shown in the writings which are unique, too. As an observing point we chose M. Israyelyan's vocal works wrote by Vahan Teryan's words.

We should mention, that the poems in these cycles and their musical explanations shortly describe moods characteristic to Teryan's poetry, mixed with compositions and contrasts.

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ԿԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարդիթեր Կարապետյան
ՀՊՄՀ, Գեղարվեստական կրթության ֆակուլտետ,
մագիստրատուրա 1-ին կուրս
Գիտ. Ղեկավար՝ մ.գ.թ., դոցենտ ***Գոհար Մելիքսեթյան***

Հանգուցային բառեր՝ *խաչքար, տապանաքար, պատկերաքանդակ, երաժշտական գործիքներ, թառ, փանդիռ, սրինգ, շեփոր:*

ՀՀ ամբողջ տարածքը պատված է քարակերտ հուշարձաններով՝ ի թիվս հոյակերտ խաչքարերի և տապանաքարերի: Յուրաքանչյուր խաչքար կամ տապանաքար ունեցել է իր ստեղծման շարժառիթը՝ բժշկման, սահմանների պաշտպանության, պատմական փաստերի վավերացման, փրկչագործության և վերջապես ծառայել է որպես մահարձան:

Հոդվածի նպատակն է ներկայացնել Հայաստանի տարածքի երաժշտական թեմայով քարակերտ հուշարձաններ, որոնք հայ ժողովրդի կյանքում երաժշտության կարևոր դերի և նշանակության վկայություններն են:

Հայ մատենագրության մեջ շատ չեն երաժշտական գործիքների ու երաժիշտ-կատարողների մասին վկայությունները, մանրանկարչական պատկերումները: Այդ բացը մասամբ լրացնում են հնագիտական նյութերը, որոնք վերաբերում են նաև նախաքրիստոնեական շրջանին: Հայտնի է Սևանա լճի ափամերձ Ծովակ գյուղից հայնաբերված եղջերափողը, իսկ Կարմիր բլուրում՝ բրոնզե ծնծղաները:

Հայաստանում, 4-րդ դարից սկսած, կերտվել են խաչքարեր, որոնք վաղ շրջանում կոչվել են «Խաչ» կամ «Սուրբ նշան», իսկ արդեն XIX դարից սկսեցին կոչվել Խաչարձան կամ Խաչքար [2, 125; 3,169; 5,432-433]: Խաչքարերի նշանակությունն առանձնակի ընդգծելու համար դրանք, սկսած V դարից, տեղադրվում էին պատվանդանի վրա՝ բարձրադիր վայրում, առավել հնչեղություն հաղորդելու նպատակով: Այդ մասին մեզ տեղեկություններ է հաղորդում Ագաթանգեղոսը [8,37]: Նմանատիպ կոթող հայտնաբերվել է Զրվեժում [8, 9]:

Քնարի, շնչական երաժշտական գործիքներով կատարող նվագածուների քանդակներով է զարդարված էրեբունիում հայտնաբերված մ.թ.ա V դ. եղջերագավաթը: Լարային գործիքի պատկերով երաժիշտների տերակոտային արձանիկներ են գտնվել Արտաշատ քաղաքատեղիում, Դվինում՝ ապակե սրվակ՝ լարային նվագարանի պատկերով [15, 34], ոսկրե սրինգներ՝ Գառնիում և Դվինում: Շեփոր է վերարտադրված Գեղարդի XIII դ. վիմափոր եկեղեցու բեմի [16, 80] և Մշո Առաքելոց եկե-

ղեցու քանդակազարդ դռան վրա, Մաշտոցյան Մատենադարանի XII-XVI դդ. մանրանկարներով զարդարված ձեռագրերի էջերում՝ նվագարանների ձևի, կառուցվածքի հնարավորինս ճշգրիտ արտապատկերումով:

Հայ երաժշտական մշակույթի ուսումնասիրության համար հետաքրքիր է Սյունիքի Պառավաձոր հնավայրում գտնվող թվագրված խաչքարը՝ 1221թ. [7,99-105]: Վերջինիս ձախ կողմի հատվածում պատկերված է բամբիռը (փանդիռ) ձեռքին նվագասաց գուսան: Բամբիռի սիմերին հպած նվագասացի ձախ ձեռքը, լայն բացած մատներով, շեշտում է երաժշտական գործիքի լարերին դիպչելը: Խաչքարի քանդակը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել նաև բամբիռի կառուցվածքի և ձևի մասին: Գործիքի գուշը թիանման է: Նվագարանի գրիֆը՝ պարանոցը, կարճ է ու լայն: Բացակայում են ձայնաշարերը, գլխիկի մանրամասները, լարիչ ականջները: Սակայն գուշի և գրիֆի վրա որոշակի նշմարվում են քառաղի բամբիռի լարերը: Գուշի և գրիֆի ստորին մասից կախված է նվագարանն ուսելու պարանը: Այս խաչքարը որևէ հայտնի նվագասաց-գուսանի հիշատակին է նվիրված [11,32]: Պակաս ուշագրավ չէ նույն տարածաշրջանում գտնվող XII դ. մեկ այլ՝ մեջտեղից երկու կես եղած գեղաքանդակ խաչքար: Խաչքարերի միջնամասում խաչի պատկերն է: Հարթաքանդակի աջ կողմում ծալապատիկ նստած կին երաժշտի պատկերն է: Երաժշտի դեմքը պատկերված է դիմացից և դիմային մասը շրջափակող գլխաշորը իջնում է կրծքին: Աջ ձեռքով բռնել է ջութակ հիշեցնող գործիք, իսկ ձեռքը տարել դեպի ձախ: Ուշագրավ է խաչքարի արձանագրությունը, որն ավանդում է, թե կանգնեցվել է 1194 թ. Աբլիեջի որդի Վասակի կողմից՝ իր եղբայր Հասանի հիշատակին: Կնոջ պատկերի մոտ հիշատակված է հանգուցյալ Հասանի մոր՝ Խուշուշի անունը:

Բացի խաչքարերից երաժշտական գործիքների պատկերներ կան նաև տապանաքարերի վրա: Հորիզոնական տապանաքարերից տեղեկանում ենք երաժշտական գործիքների մասին, որոնք կիրառվել են տարբեր տոնակատարությունների ժամանակ: Հացառատի տապանաքարերից մեկի վրա պատկերված է հարսանեկան տեսարան, որտեղ շատ հստակ երևում են ձիերին հեծնած հարսն ու փեսան, հարսնախպերը, երաժիշտներ և գինի բաժանող մարդը. տեսնում ենք դուդուկ, դափ, քանոն, քամանչա և թառ [6, 331]: Հացառատի տապանաքարերից մեկի (XVI դարի) վրա չորս անկյուններում հրեշտակները նվագում են գալարափող՝ ավետելով Քրիստոսի գալուստը: Նմանատիպ պատկեր ենք տեսնում նաև Սոդքի XVII դարի խաչքարի վրա [13, 220]: 2015 թվականին Տավուշի մարզի Բերդավան քաղաքից ոչ հեռու գտնվող Գառդուշի սարի շրջակայքում արված պեղումների արդյունքում հայտնաբերվել են տապանաքարեր, որոնց վրա պատկերված են խնջույքի տեսարաններ՝

երաժիշտների և երաժշտական գործիքների պատկերաքանդակներով (տե՛ս նկ. 1): Երաժիշտների մեջ պարզ երևում է նաև կին երաժիշտ: Այս ամենի պատմական վավերացումն է Նորատուս գյուղի IX-XII դդ. մեկ այլ տապանաքար, որի վրա պատկերված է նվագարանների «համաստեղություն»: Միմյանց կողքի նստած երաժիշտների ձեռքին նվագարաններ են՝ քանոն, փանդիռ և դափ [14, աղյուսակ 1423]: Քարեգործության այս նմուշները Հայկական մշակույթի անգնահատելի գոհարներից են: Ներկայացված խաչքարերն ու տապանաքարերը հնարավորություն են ընձեռում ճանաչելու և գնահատելու մեր նախնիների թողած ժառանգությունը:

Նկ. 1 Նոյեմբերյանի տարածաշրջան, XVI դարի տապանաքար:

Քարեգործության այս նմուշները Հայկական մշակույթի անգնահատելի գոհարներից են: Ներկայացված խաչքարերն ու տապանաքարերը հնարավորություն են ընձեռում ճանաչելու և գնահատելու մեր նախնիների թողած ժառանգությունը: Հայոց ազգային նվագարաններով պատկերաքանդակներն ապացուցում են դրանց պատկանելիությունը հայ ժողովրդին և նրա գալիք սերունդներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազարյան Լ. Ռ., Հայկական խաչքար, Երևան, 1978:
2. Աղասյան Ա. Վ., Հայ Արվեստի պատմություն, Երևան, 2009:
3. Աղասյան Ա. Վ., Հակոբյան Հ. Հ., Ղազարյան Վ. Հ., Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձաններ, Երևան, 1984:
4. Այվազյան Ա. Ա., Զուղա Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան, 1984,
5. Այվազյան Հ. Մ., Քրիստոնյա Հայաստան Հանրագիտարան, Երևան, 2002:
6. Բարխուդարյան Ս. Գ., Դիվան հայ վիմագրության, Երևան, 1973:
7. Կարախանյան Գ. Հ., Երաժիշտ կատարողների քանդակներ XII-XIII դդ. խաչքարերի վրա, Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1976, թիվ 3:
8. Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1984:
9. Ղազարյան Վ. Հ., Հակոբյան Հ. Հ., Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97» ՍՊԸ, 2013:
10. Մարգարյան Ե. Գ., Հայկական խաչքարի մշակույթ, Երևան, 2010:
11. Մելիք-Վրթանեսյան Կ. Ե., Տոնյան Մ. Ա., Երաժշտական բացատրական բառարան, Երևան, 1989:
12. Շահինյան Ս. Մ., Խաչքար տիեզերական արարչագործության սրբազան համակարգը, Երևան, 2012:
13. Պետրոսյան Հ. Լ., Խաչքարերի ծագումը, գործառությունը, իմաստաբանությունը, Երևան, 2007:
14. Զանփոլադյան Հ. Մ., Քալանթարյան Ա. Ս., Հայաստանի հնագիտական հուշարձանները, Միջնադարյան Հայաստանի առևտրական կապերը VI-XIII դդ., պրակ IV, Երևան, 1988:
15. Ցիցիկյան Ա. Մ., Հայկական աղեղնային արվեստը, Երևան, 2011:
16. Քոչարյան Ա. Կ., Հայ ժողովրդական նվագարանները, Երևան, 2008:

КАМЕННЫЕ СВИДЕТЕЛЬСТВА МУЗЫКИ

Вардитер Карапетян
Студентка 1-ого курса магистратуры
Факультета художественного воспитания
Армянского государственного
педагогического университета им. Х. Абовяна

РЕЗЮМЕ

Ключевые слова: *хачкар, надгробия, ваяния, музыкальные инструменты, тар, бандура, флейта, труба*

В Армении с древнейших времён на надгробиях, а после принятия христианства и на хачкарах изображались светские и религиозные сцены, на которых видим музыкантов с музыкальными инструментами, что свидетельствует о наличии струнных, духовых и ударных инструментов в духовной и светской жизни армянского народа.

Таким образом, хачкары Паравадзора XII-XIII вв., надгробия Норатуса, Хацарата и Тавуша свидетельствуют о важной роли и значении музыки в многовековой культурной жизни нашего народа. В статье представлены доказательства, которые свидетельствуют, если не об этнической принадлежности изображённых музыкальных инструментов, то о распространённости в жизни наших предков, а также отношение скульптора к данному искусству.

STONE EVIDENCE OF THE MUSIC

Varditer Karapetyan
Student of the 1st year, magistracy the Faculty of Art Education
Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan

SUMMARY

Keywords: *cross-stone, tombstones, carved painting, musical instruments, tar, pandora, flute, trumpet.*

Discussing carved paintings of cross-stones and gravestones, we can state that in Armenia in different periods, in different periods, on the secular and religious scenes, that are depicted on the cross-stones and gravestones, we see the musical instruments, which indicates the presence of string plucked, wind and percussion instrumentsin the spiritual and social life of the Armenian people.

Thus, cross-stones of Paravadzorof XII-XIII centuries, tombstones of Noratus, Hatsarat and Tavush, evidence on the important role and value of music in the Armenian centuries-old cultural life. The article presents evidence that suggestsif not always on the ethnicity of instruments mentioned, but about their usage period, regional characteristics, the usage in various ritual, as well as the sculptor’s attitude towards craft and art.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ,
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИЯ,
ЮРИСПРУДЕНЦИЯ

HISTORY,
JURISPRUDENCE

1848 Թ. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Աղունիկ Սահակյան
ՎՊՀ, Կրթության կառավարում, Մագիստրատուրա 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր ***Ֆելիքս Մովսիսյան***

Հանգուցային բառեր՝ *Փետրվարյան հեղափոխություն, Հուլիսյան միապետություն, ժամանակավոր կառավարություն, Լամարթին, Լեդրյու-Ռոլլեն, Լուի Բլնան, Պրուդոն*

1840-ական թթ. Ֆրանսիայում ընտրական իրավունքի համար պայքարն առաջ բերեց քաղաքական հուզումներ, որը վերածվեց հեղափոխության:

Իրադարձությունները սկիզբ առան 1847 թ. վերջերին, երբ Լուի Ֆիլիպը մտադրվեց իր հայեցողությամբ Ֆրանսիայի ընտրական օրենսդրության մեջ այնպիսի փոփոխություններ մտցնել, որը հնարավորություն կտար պատգամավորների թեկնածությունների առաջադրման, նրանց ընտրության և այլ հարցերի վերաբերյալ վճռական ձայնի իրավունքը վերապահվի իրեն: Հարցն առանձնապես սրվեց այն բանից հետո, երբ ի պատասխան Լամարթինի՝ դրա վերաբերյալ արված հարցադրմանը, Լուի Ֆիլիպը պատասխանեց՝ «անում եմ այն, ինչ նպատակահարմար եմ գտնում»: Իրավիճակն էլ ավելի սրվեց 1848 թ. փետրվարի սկզբներին, երբ «Նասիոնալ» թերթը տագնապալից հաղորդագրություն տարածեց այն մասին, որ կառավարությանը հրաման է տրվել զորքերի և ազգային գվարդիայի ընդհանուր հրամանատար Թոմաս Ռոբեր Բյուժոյին բանակը մարտական պատրաստվածության մեջ դնելու և սրա հետ կապված ռազմական նախնական պատրաստություններ տեսնելու մասին: Առիթը առավել քան հարմար էր վերաբերմունք դրսևորելու համար, և սկսվեց այն մեծ իրադարձությունը, որը պետք է դառնար Ֆրանսիայի պատմության ամենափայլուն էջերից մեկը [5, 260-261]:

Ժողովրդական լայն զանգվածների պայքարը ղեկավարելու, այդ պայքարին ուղղություն հաղորդելու գործում իրենց որոշակի դերն ունեին «Նասիոնալ» և «Ռեֆորմ» թերթերը: Նրանց համատեղ ջանքերով արդեն ստեղծվել էր իրենց ակումբը, որտեղ մշտապես հավաքվում էին Դյուֆոն դը լ'Էրը, Արագոն, Լամարթինը, Լեդրյու-Ռոլլենը, Կրեմյոն և այլք [3, 14]:

Իր անելիքներն ավելի լավ պարզաբանելու համար ակումբը աշխատանքի բաժանման հետևյալ սկզբունքն էր սահմանել. նրա անդամներից մի քանիսը՝ Լամարթինը, Լեդրյու-Ռոլլենը, Գարնիե-Պաժեսը, հանդես էին գալիս Ազգային խորհրդում պալատի տարբեր նիստերում, որտեղ առաջ

էին քաշում գերազանցապես այն հարցերը, որոնք իրենց էջերում բարձրացնում էին «Նասիոնալն» ու «Ռեֆորմը»: Ակումբի անդամների մյուս մասը նույնն անում էր անմիջապես ժողովրդի մոտ՝ հրապարակներում, այգիներում, փողոցներում, խաչմերուկներում: Առաջին խմբին պաշտոնապես անվանում էին «պալատական հրապարակախոսներ» կամ ֆրանսերեն՝ «օրատոր դը պալե», իսկ երկրորդներն ստացել էին «խաչմերուկի հրապարակախոս», ֆրանսերեն՝ «օրատոր դը կարֆուր» անվանումը [9, 139-140]:

«Նասիոնալ» և «Ռեֆորմ» ակումբների՝ կառավարության կազմում գտնվող գործիչների միջև երկարատև վիճաբանությունից և քննարկումներից հետո ստեղծվեց «ժողովրդական պատգամավորների» կոմիտե, որի նպատակն էր հետևել կառավարության գործունեությանը, մասնակցել նրա նիստերին, ժողովրդին անմիջապես տեղեկացնել դրանց արդյունքների մասին և հասնել Ֆրանսիան հանրապետություն հռչակելուն:

Ժամանակավոր կառավարությունը կոալիցիոն էր, այն փոխզիջում էր տարբեր դասերի միջև, որոնց համատեղ ուժերով տապալվեց հուլիսյան միապետությունը: Սակայն նրանց շահերը երբեմն հակադրվում էին միմյանց: Կառավարությունում ղեկավարի դերը պահպանում էին բուրժուա-հանրապետական նախարարները, որոնք զբաղեցրել էին կառավարական հիմնական պաշտոնները: Ժամանակավոր կառավարության նախագահ էր ընտրվել Ֆրանսիական մեծ հեղափոխության և 1830թ. հեղափոխության մասնակից Դյուֆոն դե Լ'էրը: Սակայն կառավարության փաստացի ղեկավարը Լամարթինն էր, որն զբաղեցրել էր արտաքին գործերի նախարարի պաշտոնը: Նախարարների թվում էին նաև դինաստիական ընդդիմության ներկայացուցիչ և բուրժուական հանրապետականներին հարող փաստաբաններ Կրեմեն և Մարին, որոնք զբաղեցրել էին արդարադատության և հասարակական աշխատանքների նախարարների պաշտոնը: Մանրբուրժուականների առաջնորդներից միայն Լեդրյու-Ռոլլենին ստացավ ներքին գործերի նախարարի կարևոր պաշտոնը, իսկ Ֆլոկունը պաշտոն չստացավ: Անպորտֆել նախարարի պաշտոն ստացան նաև Լուի Բլանը և Ալբերտը, որպես ժամանակավոր կառավարությունում աշխատավոր խավերի ներկայացուցիչներ [5, 267-268]:

Ալֆոնս Մարի Լուի դե Լամարթինը Ֆրանսիացի բանաստեղծ և քաղաքական գործիչ է: Երիտասարդ տարիքում Լամարթինը ծառայել է թագավորական գվարդիայում, 1823-1829թթ. եղել է Նեապոլի և Ֆլորենցիայի դեսպանատան քարտուղար: Պոլինյակը նրան առաջարկում է ստանձնել արտգործնախարարի պաշտոնը, սակայն նա հրաժարվում է, քանի որ չէր կիսում այդ հաստատության հետադիմական գաղափարները:

1829թ. նա նշանակվում է Լեոպոլդ Սակսեն-Կոբուրգ-Գոթացու դեսպանորդը: Տեղեկանալով հուլիսյան հեղափոխության մասին՝ Լամարթինը հրաժարական է տալիս: 1833թ. ընտրվում է Պատգամավորների պալատի անդամ և իրեն հայտարարում է անկախ պահպանողական գործիչ: Քաղաքականության մեջ նա, ամենից առաջ, բարոյախոս էր, սոցիալական հարցերում՝ զարգացման և կրոնական հանդուրժողականության գաղափարախոս, ազատության պաշտպան [4, 492]:

Լամարթինը չուներ քաղաքական որոշակի ծրագրեր: Նա աջակցում էր Մոլեի պահպանողական կաբինետին, բայց երբ վերջինիս կողմնակիցները խնդրեցին նրան նախագահել պալատում, Լամարթինը հրաժարվեց՝ ասելով, որ ինքը առաջադիմական է, իսկ նրանք՝ պահպանողականներ: 1840 թ. հակադրվելով Թիերի՝ արևելյան հարցի հետ կապված քաղաքականությանը, Լամարթինը հանդես եկավ Օսմանյան կայսրությունը վերացնելու կոչով: Նա առաջարկում էր Կոստանդնուպոլիսը տալ Ռուսաստանին, Եգիպտոսը՝ Անգլիային, իսկ Սիրիան՝ Ֆրանսիային: 1843թ. նա դարձավ Գիզոյի պահպանողական հոսանքի վճռական հակառակորդը [4,493]:

Լամարթինն իր փառքի գագաթնակետին հասավ 1847թ., երբ լույս ընծայեց իր «Ժիրոնդիստների պատմություն» աշխատությունը: Տպավորությունը շատ մեծ էր: Այս գիրքը ժիրոնդիստների ջատագովությունն էր: Սա ոչ այնքան գիտական, որքան գեղարվեստական աշխատություն է: Այն դիմանկարների և նկարագրությունների մի շարք է, տոգորված հանրապետական տրամադրություններով:

Լուի Ֆիլիպի հրաժարականից հետո (1848թ. փետրվարի 24) Լամարթինն ընդդիմացավ Օռլեանի դքսուհու ռեգենտությանը և հանդես եկավ կրքոտ ելույթով, որտեղ առաջարկում էր հաստատել ժամանակավոր կառավարություն և հրավիրել Ազգային ժողով: Ժամանակավոր կառավարության կազմում Լամարթինին վերապահվեց արտգործնախարարի պաշտոնը: Միայն հանգամանքների բերումով Լամարթինն անմիջապես վճռեց իրականացնել հանրապետության ղեկավարումը, որտեղ շնորհիվ իր տաղանդի և ճարտասանության, հակակշռում էր պահպանողականներին և արմատականներին: Այս փոթորկալից օրերին Լամարթինը ցուցաբերեց մեծ քաջություն և տակտիկա: Փետրվարի 25-ին, երբ ժամանակավոր կառավարության գոյությունը վտանգի տակ էր, Լամարթինը հանդես եկավ իր հայտնի ելույթով, որտեղ մանրամասն նկարագրում էր հեղափոխության վտանգները և փառաբանում եռագույն դրոշը՝ ի տարբերություն կարմիրի [5, 271]:

Մարտի 4-ին Լամարթինը եվրոպական արքունիքներին ուղարկեց

խաղաղասիրական ոգով տոգորված մանիֆեստներ: Ժողովրդական հուզումների պատճառով մարտին և ապրիլին Լամարթինը դիմեց զինված ուժերի օգնությանը: Իրավիճակը խաղաղվեց, սակայն Լամարթինի ժողովրդականությունն ընկավ: Մայիսի 15-ի ապստամբությունը ճնշվեց կրկին Լամարթինի հսկայական ջանքերի շնորհիվ: Դա նրա փառքի վերջին օրն էր: Նա միշտ ցանկանում էր հաշտեցնել բոլորին: Լամարթինի մերձեցումը Լեդրյու-Ռոլլենի և գեներալ Կավենյակի հետ օտարացրեց նրան և արմատականներից և պահպանողականներից: Հունիսյան իրադարձությունները վերջ դրեցին նրա մասնակցությանը երկրի ղեկավարման գործում: Նախագահական ընտրությունների հետ կապված՝ նա գնաց Ժյուլ Գրեվի մոտ: Նա առաջարկում էր նախագահական ընտրություններն անցկացնել ոչ թե համաժողովրդական ընրությունների միջոցով, այլ Պատգամավորների պալատում: Նախագահական ընտրություններում Լամարթինը շատ քիչ ձայներ հավաքեց (8 հազար քվե կամ ընտրողների 0,2 տոկոսը): 1849 թ. նա չընտրվեց օրենսդիր ժողովում, չնայած որպես թեկնածու՝ առաջադրվել էր տաս դեպարտամենտներում: Վերադառնալով գրական գործունեությանը՝ նա հիմնադրեց և խմբագրեց «Conseiller du people» քաղաքական ամսագիրը:

Ալեքսանդր Օգյուստ Լեդրյու-Ռոլլենը Հուլիսյան հեղափոխության և Ֆրանսիական երկրորդ հանրապետության նշանավոր գործիչներից էր, մանր-բուրժուականների առաջնորդը: Լեդրյու-Ռոլլենը փարիզյան հասարակ փաստաբան էր: 1841թ. նա ընտրվեց Պատգամավորների պալատի անդամ: Նախընտրական ելույթներում նա իրեն անվանում էր հանրապետական, հանդես էր գալիս համընդհանուր ընտրական իրավունք հաստատելու դիրքերից: Նա ընտրական իրավունքը համարում էր սոցիալական հակասությունները լուծելու միջոց, բացահայտ հայտարարում էր, որ ինքը աջակցություն է փնտրում ոչ թե խորհրդարանում, այլև ժողովրդի շրջանում: Նա իր կուսակցության առջև խնդիր էր դրել քաղաքական ռեֆորմների ճանապարհով վերափոխել սոցիալական կառուցվածքը՝ դարձնելով այն ծայրահեղ դեմոկրատական, բայց ոչ սոցիալիստական ուղղվածությամբ: Նա բազմիցս և վճռականորեն արտահայտվում էր մասնավոր սեփականության անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության և սոցիալիզմի քննադատության դիրքերից: Այդ ելույթների պատճառով նա նույնիսկ կանգնեց դատարանի առջև: Ատենակալները մեղադրական վճիռ կայացրին ոչ թե նրա ելույթի, այլ դրա հրատարակման համար: Սակայն դատավճիռը անվավեր ճանաչվեց: Հետագայում Լեդրյու-Ռոլլենը արդարացվեց [2, 14]:

Պատգամավորների պալատում նա հանրապետական կուսակցու-

թյան ոչ մեծաթիվ անդամներից մեկն էր, որը ոչ միայն քննադատում էր կառավարությանը, այլ նաև գլխավորում էր դինաստիական ընդդիմությունը, պահանջում էր ամեն հարմար առիթով ուղղակիորեն հաշվի առնել ժողովրդի կարծիքը՝ հանրաքվեի անցկացնելու ճանապարհով:

Պառլամենտական ձախ ուժերի գլխավոր օրգանի՝ «La National»-ի չափավորությունից դժգոհ լինելով՝ Լեդրյու-Ռոլլենը 1843թ. դարձավ արմատական «La Reforme» թերթի հիմնադիրներից մեկը, որը շուտով գերիշխող դիրք ձեռք բերեց: Այս թերթը, Բլանի պնդմամբ, իր առջև սոցիալիստական ծրագիր էր դնում, որը սոցիալիստներին առիթ է տվել Լեդրյու-Ռոլլենին համարելու իրենց գաղափարակիցը:

Նա Ֆրանսիայի քաղաքական կյանքում հանդես էր գալիս հանուն «հանրապետության հռչակման և ղեկավարման», «հեղափոխության սկզբունքների բացահայտման ու հաստատման», ինչպես նաև հատուկ հանձնաժողովների ստեղծման: Իր քաղաքական դիրքորոշումը նա հատուկ շրջաբերականներով պարզաբանում է՝ ընդգծելով, որ ժողովրդի լիազորությունները սահմանապակված չեն և որպես հեղափոխական-պետական իշխանության ներկայացուցիչներ նրանք պետք է լինեն հեղափոխականներ: Ըստ Լեդրյու-Ռոլլենի՝ ժողովրդական ներկայացուցիչները «օժտված են բռնապետության լծակներով», որոնք սահմանապակվում են միայն իրենց խղճով, որ ռազմական ուժը գտնվում է իրենց ձեռքում: Կոմիտատները պետք է աշխատեին, որ առաջիկա ընտրություններում ապահովեին հանրապետականների բացարձակ մեծամասնությունը: Այն հարցին, թե արդյո՞ք կառավարությունը պետք է ազդի ընտրությունների վրա, Լեդրյու-Ռոլլենը իր շրջաբերականներում պատասխանում էր. «կառավարությունը, դավաճանության մեջ մեղադրվելու սպառնալիքի տակ, չպետք է սահմանափակի քվեների քանակը: Այն պետք է աշխատի ոչնչացնել հակահեղափոխականությունը Ֆրանսիայում» [7, 151]:

Սակայն բացի հրահանգներից, բացատրություններից և համընդհանուր ընտրական իրավունքի պահանջից՝ Լեդրյու-Ռոլլենը չէր ներկայացնում որևէ միջոց այդ խնդիրները լուծելու համար: Նա վճռականորեն դեմ էր արտահայտվում ընտրությունների ժամանակ ճնշումներ գործադրելուն:

Կոմիտատների արտահերթ ընտրությունները անսպասելի արդյունքների հանգեցրին: Լեդրյու-Ռոլլենի դեմ կառավարությունում ընդդիմություն ձևավորվեց, որի մեջ գերակշռում էին չափավոր տարրերը և հասարակության միջին խավերը: Նրան մեղադրում էին յակոբինյան հայացքներ ունենալու, բռնապետություն հաստատելու փորձի մեջ: Չնայած դրան նա Փարիզի աշխատավոր բնակչության շրջանում մեծ հեղինակու-

թյուն ուներ: Թեպետ Ազգային ժողովում գերակշռում էր չափավոր-լիբերալների խմբավորումը, Լեդրյու-Ռոլլենը Արագոյի, Գարնե-Պաժեսի, Մարիի ու Լամարթինի հետ ընտրվում է գործադիր կոմիտեում, որը 1848թ. մայիսի 10-ից ստանձնել էր ժամանակավոր կառավարության գործառույթները: Հեղափոխական խմբավորումը մայիսի 15-ի իրադարձություններից հետո Լեդրյու-Ռոլլենին ընդգրկեց նոր կառավարության մեջ: Այդ ժամանակ նա Լամարթինի հետ իրականացնում էր բանակի ղեկավարումը ապստամբությունը ճնշելու համար: Դրա հետևանքով նրա ժողովրդականությունը խիստ ընկավ, միաժամանակ իշխանական շրջանակները նրան դիտում էին որպես դավադիր գործիչ: Հունիսյան իրադարձություններից հետո Լեդրյու-Ռոլլենը դարձավ «Լեռ» կուսակցության առաջնորդներից մեկը՝ վերագրելով այդ անունն իրեն՝ ի պատիվ Առաջին հանրապետության մոնտանյարների հիշատակի:

1849թ. նա կրկին ընտրվեց պատգամավոր: Հունիսին անհաջող ապստամբությունից հետո, որի ղեկավարներից մեկն ինքն էր, ստիպված էր փախչել Անգլիա, որպեսզի խուսափի դատարանից: Այնտեղ նա գրեց սուր պաֆլետ «Անգլիայում սկսված անկումը»: 1870թ. Օլիվիեի կառավարության օրոք, Լեդրյու-Ռոլլենին թույլատրվեց վերադառնալ Ֆրանսիա: 1871թ. նա ընտրվեց պատգամավոր, սակայն հաշտության պայմանագրի կնքումից դժգոհ՝ հրաժարական տվեց և հեռացավ քաղաքականությունից:

1830-1840-ական թթ. Ֆրանսիայում ռեֆորմիստական գաղափարներով հանդես եկավ Լուի Բլանը, որին հետագայում վիճակված էր զգալի դերակատարում ունենալ 1848թ. հեղափոխությունում: 1840-ական թթ. նա դեմոկրատական ընդդիմության ամենահայտնի ներկայացուցիչներից էր, որը դեմ էր հուլիսյան ռեժիմին և ֆրանսիական սոցիալիզմի առաջնորդների գաղափարներին:

Լուի Բլանը դեռ քսան տարեկան չկար, երբ սկսվեց հուլիսյան հեղաշրջումը: Նա շատ երիտասարդ տարիքում սկսեց իր գրական կարիերան երկու չափածո պոեմներով, ապա հանդես եկավ նաև քաղաքական հոդվածներով: 1834թ. նա մեկնեց Փարիզ և այստեղ անմիջապես աշխատակցեց «Ընդհանուր առմամբ» թերթին: Լուի Բլանի հոդվածները ուշագրավ էին, և Արման Կարրելը նրան առաջարկեց աշխատակցել նաև իր թերթին՝ «La National»-ին: Ավելի ուշ Գոդֆրուա Կավենյակը՝ հանրապետական կուսակցության առաջնորդներից մեկը, նրան հրավիրում է աշխատակցելու իր խմբագրած «Ռեֆորմ» թերթին: 1839թ. երիտասարդ հրապարակախոսին արդեն հաջողվում է հիմնել իր սեփական օրգանը, որը նա անվանեց «Քաղաքական, սոցիալական և գրական առաջընթացի

տեսություն» [1, 287]:

Բոլոր այն թերթերը, որոնց նախկինում աշխատակցել էր Լուի Բլանը, ունեին դեմոկրատական ուղղվածություն, բայց դրանցում գերիշխողը քաղաքական գաղափարներն էին, թեև դրանցում Լուի Բլանն անդրադառնում էր նաև զուտ սոցիալական հարաբերություններին: Նրա հիմնած թերթը հենց սկզբից ստեղծվեց՝ որպես սոցիալական ռեֆորմների օրգան: Դրանում 1839թ. հրատարակվեց Լուի Բլանի առաջին հրապարակախոսական աշխատանքը՝ «Աշխատանքի կազմակերպումը», որն անմիջապես մեծ հաջողություն բերեց նրան: Այս աշխատությունը, հետագայում փոփոխություններ կրելով, բազմիցս վերահրատարակվեց: «Աշխատանքի կազմակերպումը» հաջողությամբ ընդունվեց աշխատավորների շրջանում: Շուտով Լուի Բլանը հրատարակեց մի ծավալուն հոդված, որը մեծ տպավորություն գործեց բուրժուազիայի վրա: Դա հայտնի «Տասը տարվա պատմություն» (1830-1840թթ.) աշխատությունն էր, Լուի Ֆիլիպի կառավարման առաջին շրջանի վերաբերյալ: Այս աշխատության մեջ Լուի Բլանին հաջողվեց օգտագործել հսկայական քանակությամբ նյութեր, որոնք մինչ այդ անհայտ էին հանրությանը: Հատկանշական է, որ շատ բաներ Լուի Բլանին հաղորդել են Հուլիսյան միապետությունը ատող լեգիթիմիստները: Այս գրքում հուլիսյան կառավարությունը ենթարկվել է սուր և խիստ քննադատության [1, 287]:

Այս հաջողությունը Լուի Բլանին ոգևորեց ձեռնամուխ լինել Ֆրանսիական մեծ հեղափոխության պատմությունը գրելուն, որը ավարտին հասցրեց աքսորի մեջ 1851 թ. դեկտեմբերյան հեղաշրջումից հետո: Այդ ընթացքում նա շարունակում էր աշխատակցել Կավենյակի թերթին: Նրա ազդեցությամբ այս թերթն աստիճանաբար ձեռք է բերում սոցիալիստական բնույթ: 1848թ. սկզբին, երբ ընթանում էր փետրվարյան հեղափոխության նախապատրաստությունը, «Ռեֆորմը» հրապարակում է իր քաղաքական ծրագիրը, որը, ըստ էության, կրկնում էր «Աշխատանքի կազմակերպման» հիմնական դրույթները: 1846թ. Լուի Բլանին առաջարկում են դառնալ Պատգամավորների պալատի անդամ, բայց նա մերժում է: Աշխատավոր դասակարգի շրջանում ունեցած իր հեղինակությամբ, հանրապետականականների շրջանում ունեցած աչքի ընկնող դիրքով նա չէր կարող մնալ ստվերում, երբ սկսվեց Փետրվարյան հեղափոխությունը: Կարելի է ասել, որ իր «Տասը տարվա պատմություն»-ով նա մեծապես վնասել էր հուլիսյան միապետությանը: Նրա մյուս հոդվածներում որոշ չափով նախանշվում էին հեղափոխության բնույթն ու նրա ուղղվածությունը՝ վերականգնել յակոբինյան ավանդույթները և որոշակի ծրագիր տալ սոցիալական շարժմանը:

Պիեր Ժոզեֆ Պրուդոնը ֆրանսիական հայտնի մտածողներից է, անարխիստական գաղափարախոսության հեղինակներից մեկը: Պրուդոնը հայտնի դարձավ իր առաջին իսկ աշխատությամբ՝ «Ի՞նչ է սեփականությունը» (1840 թ.), որտեղ առաջադրված հարցին պատասխանում էր Բրիսսոյի ձևակերպմամբ՝ «սեփականությունը գողություն է»: Հետագայում նա իր գաղափարները զարգացնում է «Զգուշացում գործարարներին» (1843 թ.), «Տնտեսական հակասությունների համակարգ կամ Փիլիսոփայության աղքատությունը» (1843 թ.) աշխատությունների մեջ, որտեղ պահանջում է հավասարություն բոլորի համար [6,382]:

1843թ. հրատարակվում է նրա «Քաղաքական ընդդիմության սկզբունքներ կամ հումանիտար կարգերի հաստատում» հոդվածը: Նրա «Տնտեսական հակասությունների համակարգ կամ Փիլիսոփայության աղքատություն» աշխատությունը մեծ հաջողություն է ունենում ոչ միայն Ֆրանսիայում, այլև Գերմանիայում, որտեղ մեկ տարվա մեջ երեք անգամ լույս են տեսնում նրա թարգմանությունները [8, 250-251]:

Պրուդոնը ցանկանում էր հրատարակել «Le people» («Ժողովուրդ») թերթը, բայց հուլիսյան միապետության կառավարությունը չի թույլատրում: Բուն հեղափոխությանն մեջ Պրուդոնն ակտիվ մասնակցություն չի ունենում և իր թերթում խիստ քննադատության էր ենթարկում սոցիալիստական խմբավորման գործողությունները: Նա ընտրվում է ազգային ժողովում: Պրուդոնը մշակում է մի ծրագիր, որտեղ առաջարկում էր առաջիկա երեք տարվա համար բարձր հարկեր սահմանել, որը հնարավորություն կտար ժողովրդին տրամադրել էժան տոկոսադրույքներով, անգամ անհատույց վարկեր, սակայն նրա նախագիծը մերժվում է [8,252]:

Պրուդոնը 1849թ. մարտին դատապարտվում է երեք տարվա ազատազրկման և պարտավորվում է վճարել 3 հազ. ֆրանկ տուգանք: Պատժից խուսափելու նպատակով Պրուդոնը փորձում է փախչել Բելգիա, բայց Փարիզում ձերբակալվում է:

1852թ. բանտից դուրս գալուց հետո Պրուդոնը գրեթե չի խառնվում քաղաքականությանը և բազմիցս հրաժարվում է մասնակցել ընտրություններին: 1858թ. հրատարակված «Հեղափոխության և եկեղեցու արդարադատություն» աշխատության համար Պրուդոնը կրկին մեղադրվում է և դատապարտվում է երեք տարվա ազատազրկման, բայց փախչում է Բելգիա, որտեղ գրում է իր «Պատերազմ և խաղաղություն», «Աշխատավոր խավերի քաղաքական ունակությունների մասին» և այլ աշխատություններ:

Պրուդոնի գործունության վրա մեծ ազդեցություն են ունեցել մասոնական օթյակները: 1847թ. նա Բեզասոնում ընդունվում է «Անկեղծու-

թյուն, միասնություն և բարեկամություն» մասսոնական օթյակի մեջ: Պրուդոնն առանձնապես ջանքեր չի գործադրում մասսոնական առաջընթաց ունենալու համար, այդ պատճառով ենթավարպետի աստիճանից վեր չի բարձրանում: Պրուդոնի՝ օթյակի մեջ ընդունվելու փաստը, Մելլորի կարծիքով, վկայում է Ֆրանսիայի՝ մեծ Արևելքում աթեիզմի տարածման միտումը: Այստեղ վերջին տարիներին նրա հեղինակությունը շատ մեծ էր:

«Հեղափոխության և եկեղեցու արդարադատության մասին» աշխատությունում Պրուդոնը վկայում է իր պատկանելությունը մասսոնական օթյակին հետևյալ խոսքերով. «Ինչպես յուրաքանչյուր մահկանացու, ամենից առաջ ստանալով Լույս, ես պետք է պատասխանեմ երեք հարցի. ի՞նչ է պարտավոր մարդն անել իր մերձավորների համար, իր երկրի համար, Աստծո համար: Առաջին երկու հարցերին իմ պատասխանը կանխատեսելի է: Երրորդ հարցի համար՝ ինչո՞վ է պարտական մարդն Աստծուն, ես պատասխանեցի՝ պատերազմով» [8, 256]:

Այսպիսով, 1848 թ. ֆրանսիական հեղափոխության նշանավոր գործիչները, ընդգրկված լինելով տարբեր, երբեմն նույնական գաղտնի կազմակերպությունների մեջ, իրենց քաղաքական հայացքներով միասնական չէին: Նրանցից յուրաքանչյուրը հետապնդում էր որոշակի, երբեմն ծայրահեղ հակադիր շահեր, որն էլ բացասաբար անդրադարձավ հեղափոխական պայքարի հետագա ընթացքի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Շտիկյան Ս., Ստեփան Ոսկանյանի կյանքի և գործունության փարիզյան տարիները, Պատմա-բանասիրական հանդես, N 1, Եր., 1974 թ.:
2. Иванова К. С., Теория и практика радикализма во Франции 1830-1840х гг., Воронеж, 2011 г.
3. Лависс и Рамбо. История 19 века, том 5, М., 1938.
4. Ламартин *А.* История Жирондистов, М., 2013.
5. История Франции, отв. ред. А. З. Манфред, том 2, М., 1973.
6. Новая философская энциклопедия, под ред. Степин, Гусейнов и др., 2010 г., Москва, 2010 г.
7. Солтыков-Щедрин Собрание сочинении Публицистика 1868-1883, том 9, М., 1878.
8. Туган Барановский М. И., Очерки из новейшей политической экономики, 1903.
9. Большая советская энциклопедия, Вавилов, том 5, М, 1950.

ВИДНЫЕ ДЕЯТЕЛИ ФРАНЦУЗСКОЙ РЕВОЛЮЦИИ 1848 Г.

Агуник Саакян
ВГУ, Управление образования,
магистратура, 1-ый курс

РЕЗЮМЕ

***Ключевые слова**:Февральсакая революция, Июльская монархия, Временное правитеьство, Ламартин, Ледрю-Роллен, Луи Блан, Прудон*

После победы Февральской революции 1848 года во Франции было образовано Временное правительство, в состав которого вошли семь буржуазных республиканцев правого крыла, группировавшихся вокруг влиятельной оппозиционной газеты «Насионал», два левых республиканца- Ледрю-Роллен и Флокон, а также два мелкобуржуазных социалиста- публицист Луи Блан и рабочий Альбер. Председателем Времменого правитеьства был избран адвокат Дюпон, но он не пользовался большим влиянием. Фактическим главой правительства стал министр иностранных дел Ламартин.

IMPORTANT FIGURES IN THE FRENCH REVOLUTION OF 1848

Aghunik Sahakyan
VSU, Education Management
Master 1st year

SUMMARY

***Key words:** February Revolution, July Monarchy, Provisional Government, Lamartin, Ledru-Rollin, Louis Blanc, Prudon*

After the victory of the February Revolution of 1848 in France was formed Provisional Government, which consisted of seven right-wing bourgeois republicans grouped around the influential opposition newspaper “La National”, the two left-wing republicans such as Ledru-Rollin and Flokon, as well as two petty-bourgeois socialist publicists Louis Blanc and the worker Albert. Advocate DuPont was elected Chairman of the Provisional Government, but he did not enjoy much influence. The actual head of the government was Foreign Minister Lamartin.

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՏՈՒՍՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻՆ

Զինա Ավետիսյան
ԳՊՀ, Պատմություն, 4-րդ կուրս
*Գիտ. ղեկավար՝ պ.գ.թ. **Արսեն Հակոբյան***

***Հանգուցային բառեր**՝ հարսանիք, ամուսնություն, ընտանիք, հարս, փեսա*

Աշխատանքի նպատակն է ներկայացնել ամուսնական ծեսը Նորատուս գյուղում 20-րդ դարի երկրորդ կեսին:

Հոդվածը հիմնված է դաշտային ազգագրական նյութի վրա: Դատային ազգագրական նյութը հավաքվել է 2016 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Նորատուս գյուղում: Նյութը ներառում է մոտ 10 հարցազրույց 50-80 տարեկան բանասացների հետ և բացառապես վերաբերում է Նորատուս համայնքին՝ քննարկելով հարսանեկան ծեսի բաղադրիչներն ու դրանց առնչվող յուրահատկությունները:

Ինչպես ցույց է տալիս մեր նյութը, 20-րդ դարի երկրորդ կեսին աղջիկների համար ամուսնական տարիք էր համարվում 17-18-ը, տղաների համար՝ 23-25-ը: 22 տարեկան աղջիկը համարվում էր «դախացած»: Եղել են նաև այնպիսի դեպքեր, երբ ամուսնացել են ավելի վաղ՝ 14 կամ 15 տարեկանում, սակայն այդ դեպքերը խիստ հազվադեպ էին. վաղ ամուսնացողների հանդեպ վերաբերմունքը մի փոքր այլ էր:

Ամուսնացողների տարիքային տարբերությունը 2-7 տարի էր: Սովրաբար կույսը կույսի հետ էր ամուսնանում, այրի տղամարդիկ՝ այրի կանանց կամ տանը մնացած աղջիկների: Օտար ազգությունների մեջ ամուսնությունը բացառված էր, իսկ գյուղից դուրս՝ հազվադեպ:

Բեշքյարթման[1] բավականին տարածված էր, սակայն մեծ մասամբ բեշքյարթմա եղածները միմյանց հետ չէին ամուսնանում: Դրա հիմնական պատճառը այն սոցիալական տարբերությունն էր, որը գոյանում էր տարիների ընթացքում: Այդ ամենը հաճախ ավարտվում էր թշնամությամբ:

Ազգակցականների ամուսնությունը խստիվ արգելվում էր: Պահպանվում էր ազգակցության և արյունակցության 7 աստիճանը:

Հարսնացուի ընտրությունը կատարվում էր խմբային եղանակով: Փեսայի հարազատները հավաքվում և մատնանշում էին այն աղջիկնե-

[1] Դա այն իրողությունն էր, երբ երկու ընտանիքներ ցանկանում էին բարեկամանալ, ուխտում էին, որ եթե տարբեր սեռի երեխաներ ունենան, ամուսնացնեն միմյանց հետ:

րին, որոնք լավ ընտանիքից էին, աչքի էին ընկնում համեստությամբ, աշխատասիրությամբ, չէին մառանում թվել նաև մոր բարեմասնությունները: Այնուամենայնիվ տղան էր ընտրում աղջկան, իհարկե, ծնողների համաձայնությամբ:

Առաջին քայլը աղջիկ տեսնելն էր: Զանազան պատրվակներով տղայի հարազատները այցելում էին աղջկա տուն՝ հասելով իրենց գալու նպատակը, սակայն աղջկա հարազատները շատ լավ կռահում էին նրանց գալու նպատակը, թեև ցույց չէին տալիս:

Դրան արդեն հաջորդում էր աղջկա տուն խնամախոս գնալը: Փեսայի մոտիկ հարազատները՝ քեռին, հորեղբայրը, հորեղբոր տղան, գնում են հարսի տուն: Այստեղ գովերգում էին փեսային, նրա աշխատասիրությունը, խելոքությունը, ընտանիք պահելու կարողությունը և այլն: Եթե իրենց աղջկան այդ տղային տալու մտադրություն չէր լինում, նրանց ճանապարհում էին՝ բերելով մի շարք փաստարկներ իրենց մերժման համար, իսկ եթե համաձայն էին, նշանակում էին նշանադրության օր: Հիմնականում այդ արարողությունը թողնում էին շաբաթ օրը:

Աղջիկ առևանգելու դեպքեր հազվադեպ էին պատահում, երբ ինչ-ինչ պատճառներով ծնողները չէին համաձայնում կամ երիտասարդներն էին սիրում միմյանց: Շատ հազվադեպ էր պատահում, որ հայրը հետ էր բերում աղջկան, հազվադեպ էր պատահում նաև, որ տղային հանձնում էին ոստիկաններին: Մեծ մասամբ հաշտվում էին և ամուսնացնում երիտասարդներին: Իսկ հետ եկած աղջիկը որոշ ժամանակ անց ամուսնանում էր «իրեն չափավորի» հետ:

Նշանադրության օրը գալիս էին փեսայի հարազատները՝ առանց փեսայի: Նա գալիս էր այն դեպքում, երբ նրան հատուկ հրավեր էին ուղարկում և, հարսի եղբայրը կամ մոտիկ հարազատներից մի տղա գնում էր նրա հետևից: Փեսան առանց հրավերի չէր գալիս: Եթե հրավեր չէր լինում, ապա փեսան իր իսկ նշանդրեքին չէր մասնակցում, իսկ հարսի մատին մատանին դնում էր սկեսուրը: Նշանդրեք եկածները հարսին բերում էին մատանի, այլ ոսկյա իրեր, զանազան նվերներ՝ զգեստ, կոշիկ, գլխաշոր, դրա հետ մեկտեղ՝ անուշեղեն, խմիչք ու նման այլ բաներ: Սակայն պետք է նշել, որ նկարագրվող ժամանակաշրջանը համընկնում էր հետպատերազմյան շրջանին, և փեսայի հարազատները շատ «զուսպ» էին իրենց ձեռնարկումներում: Նրանք իրենց հետ տանում էին մի մատանի կամ ականջօղ, օղի և մի շոր: Սակայն հետագայում արդեն վիճակը քիչ-քիչ բարելավվեց, և ժողովուրդը «վերադարձավ» իր նախկին դիրքին:

«Հրավիրված» փեսան մատանին դնում էր հարսի աջ ձեռքի մատնեմատը:

Նշանադրության օրը տղամարդիկ և կանայք առանձին-առանձին

էին նստում: Ամբողջ երեկո փեսայի հարազատները երգում էին, պարում և ուշ երեկոյան ցրվում:

Նշանադրությունից մի քանի օր անց փեսան քաղցրություն և խմիչք առած գալիս էր հարսի տուն: Նրանք քենիի կամ այլ հարազատի հետ առանձնանում էին սենյակում, սակայն հարսը փեսայի հետ այնքան ժամանակ չէր խոսում, մինչև վերջինս նրան մատանի չէր նվիրում: Սա կոչվում էր «խոսալ»: Դրանից հետո փեսայի այցելությունները դառնում էին հաճախակի: Նա կարող էր գալ շաբաթը մեկ անգամ՝ երեկոյան՝ իր հետ բերելով քաղցրավենիք և խմիչք:

Նշանդրեքից մի քանի օր հետո՝ սկզբից փեսայի, ապա հարսի հարազատները մյուսի հարազատներին «ղոնաղ» էին կանչում և միմյանց ճանապարհում զանազան նվերներով:

Հիշյալ ժամանակաշրջանում ընդունված էր «փեսախում» կոչվածը: Աղջկա հայրը թույլ էր տալիս, որ փեսան գիշերի իրենց տանը, աղջկա հետ: Շատ հաճախ աղջիկը փեսայի տուն էր գնում արդեն իսկ հղիացած:

Ամբողջ ընթացքում, երբ հարսը և փեսան նշանված էին, հարսը փեսայի տուն չէր գնում: Միայն մեկ-երկու անգամ, երբ ինչ-որ առիթի դեպքում հյուր էին կանչում և նվերով ճանապարհում:

Այս ընթացքում հարսի և փեսայի հարազատները ևս նրանց հյուր էին կանչում: Հյուրասիրում էին՝ նախապես լավ պատրաստություն տեսած, և նվերով ճանապարհում էին:

Պատահում էր, որ նշանված էին մնում մի քանի շաբաթ, մի քանի ամիս, հաճախ նաև մի տարի՝ կախված խնամիների սոցիալական վիճակից ու հարսանիք անելու կարողություններից:

Հարսանիքը հիմնականում անում էին աշնանը, երբ բոլոր գործերը ավարտած էին լինում, «հարստությունները» կուտակած: Պատահում էր, որ հարսանիք էին անում նաև գարնան ամիսներին՝ բացառելով մայիսը: Մայիսին հարսանիք չանելը եկել է հնուց և առկա է տարբեր ազգերի մոտ: «Մայիսին հարսանիքների արգելքը ծանոթ է նաև եվրոպական ժողովուրդներին: Դեռևս Պլուտարքոսն էր առաջարկել մայիսին ամուսնանալու արգելքի հինգ բացատրություն, սակայն մերօրյա հեղինակները ավելի հակված են այն կապել հռոմեական լեմուրիաների հետ՝ հետևելով Օվիդիանոսի առաջ քաշած վարկածին: Լեմուրները պատշաճ հուղարկավորության չարժանացած հանգուցյալների ուրվականներն էին, որոնք գիշերները շրջում էին՝ մարդկանց խելքահան անելով: Նրանց էին նվիրված մայիսի 9-ը, 11-ը, 13-ը, երբ փակվում էին տաճարները, ու չէին կատարվում ամուսնության արարողությունները:

Ռուսները նունպես ձգտում էին մայիսին հարսանիք չանել՝ այս սովորույթը բացատրելով *май* բառի անհաջող համընկնումով *маяться* «տանջվել» բառի հետ: Հայերենում «մայիսին» տալով բացասական

հանգավորում՝ «մայիս-վայիս», նույնպես երբեմն փորձում են բացատրել մայիսին հարսանիք չանելու սովորությունը» [3, 165]:

Հարսանիքի օրը որոշվում էր երկկեղմ խնամիական համաձայնությամբ: Այն միշտ որոշվում էր անել շաբաթ օրը:

Հարսանքիքի օրը որոշելուց հետո առաջին հրավերը ուղարկվում էր քավորին: Քավորը ընտանիքի մոտ անձնավորությունն էր, տարածված էր «պապենական քավոր» հասկացությունը, երբ այդ «պաշտոնը» անցնում էր սերնդեսերունդ: Մյուս հյուրերին կանչում էին՝ նախօրոք կազմված ցուցակի համաձայն: Այդ պատասխանատվությունը իր վրա էր վերցնում մոտիկ հարազատներից մեկը:

Հարսանեկան պատրաստությունները սկսվում էին մի քանի օր առաջ: Առաջին արարողությունը «տաշտադրեքի» արարողությունն էր, որը արվում է հինգշաբթի օրը: Այս արարողությոնը կատարվում էր և՛ փեսայի, և՛ հարսի տանը: Հավաքվում են մի քանի մոտիկ կանայք, խմոր են հունցում և թխում հացը:

Ուրբաթ օրն էլ կատարվում էր եզմորթեքի արարողությունը: Այն կատարվում էր դհոլ-զուռնի հնչյունների ուղեկցությամբ: Այդ օր փեսայի մայրը թել էր թաթախում մորթված անասունի արյան մեջ և պահում էր այն: Դեն էր նետում հարսանիքից հետո: Դա արվում էր, որպեսզի չար աչքերը փեսային «կապ չգցեին»:

Հարսի շորը կարում էր գյուղում մեծ վաստակ վայելող դերձակը: Շորը լինում էր սպիտակ: Ավելի վաղ, այսինքն՝ պատերազմի ավարտից անմիջապես հետևող շրջանում, հարսի շորը կարում էին այն կտորից, ինչ որ այդ ժամանակ ընկնում էր ձեռքի տակ՝ հաշվի չառնելով գույնը:

Ահա որոշված շաբաթ օրն էլ սկսվում էր հարսանյաց արարողությունը: Հարսանիքը անցկացնելու համար կարգի էին բերում հացատունը, հազվադեպ նաև գոմը, զարդարում այն: Ավելի ուշ հարսանիքները անում էին արդեն տանը:

Կարևոր էր նաև *ազաբի* ընտրությունը: Այն նախկինի պես մեծ արարողությոմբ չէր ընթանում, երբ թուրը հանում էին վաճառքի, այլ ընտրում էին փեսայի մերձավորներից մի չամուսնացած երիտասարդի և կարգում «ազապ-պաշի»: Թուրը, որը հանձնվում էր նրան, ընդհանուր էր ամբողջ գյուղի համար: Այն զարդարված էր գունավոր ժապավեններով: Հարսնաքույր էլ դառնում էր հարսի կրտսեր քույրը, իսկ եթե չկար այդպիսին, մոտիկ հարազատներից մեկը: Շատ էր կարևորվում նաև «ուստի» դերը: Ուստա լինում էր սովորաբար հարսի եղբոր կինը, հաճախ նաև քույրը կամ մորաքույրը: Նա հանդիսանում էր հարսի ուղեկցորդը և մինչև հարսանիքի ավարտը հարսի հետ կապված ամբողջ պատասխանատվությունը ընկնում էր նրա ուսերին: Նա պետք է հարսին «ազիզ» պահեր մինչև վերջ:

Հարսանիքը սկսվում էր երեկոյան ժամը 5-ին: Փեսայի տանը սկսվում էր ուրախությունը: Առաջին պատվավոր հյուրը քավորն էր: Նա իր հետ անպայման բերում էր սկուտեղ՝ մեջը քաղցրավենիք, խմիչք, մրգեր: Սկուտեղը հանձնվում էր «քիլարչուն»: Քիլարչին մառանապետն էր և եղած մթերքի պատասխանատուն: Նա սովորաբար լինում էր վստահված անձանցից մեկը: Նրան հեգնանքով կոչում էին նաև «քիլարի կատու»:

Քավորը իրավունք ուներ իր հետ բերել մի քանի մարդ, որոնց ինքը կցանկանար, բայց նրանք հարսանիքին հրավիրված չէին: Նրանք կոչվում էին «քավորի պլնգ» կամ «քավորի աղվես»:

Այնուհետև հավաքվում էին նաև մյուս հյուրերը: Զուռնա-դհոլի ուղեկցությամբ ազաբին էր հանձնվում թուրը, իսկ փեսայի կրծքին էին կապում կանաչ ժապավենը՝ աջ ուսից ձախ կռնատակ:

Դրանից հետո քավորի ուղեկցությամբ հարսանյաց թափորը երգով-պարով գնում էր հարսի տուն: Նրանք իրենց հետ տանում էին մի քանի զարդարված սկուտեղներ: Մեկի մեջ հարսի շորը, որի մեջ անպայման լինում էր կոնֆետներ, իսկ մյուսի մեջ խմիչք, քաղցրավենիք ու միրգ:

Փեսան կանգնում էր մեջտեղում, ազաբը՝ նրա աջ կողքը, քավորը՝ ձախ: Հարսի տանը նրանց դիմավորում էին և տանում ներս: Այստեղ փեսայի կրցքին էին ամրացնում կարմիր ուսկապը:

Կանաց հարկաբաժնում կատարվում էր հարսի շոր հագցնելու արարողությունը: Հարսի շորերը հագցնում էր քավորի կինը: Քողն էլ ձգում էր գլխին: Այս ամենը, իհարկե, ուղեկցվում էր երգով ու պարով: Այնուհետև հարսի հայրը գալիս էր, բռնում հարսի ձեռքից, տանում սեղանի մոտ ու աղջկան հանձնում փեսային: Ավելի ուշ՝ փեսան ինքն էր մտնում կանանց հարկաբաժին, հայրը կամ եղբայրը տալիս էին աղջկա ձեռքը և միասին դուրս էին գալիս սենյակից:

Այստեղ երգում էին «Տանում են ադե ջան, տանում են»: Բոլորը լաց էին լինում: Հարսին հոր տանից հանելու ժամանակ փեսայի առաջ արգելքներ էին դնում: Դանակով փակում են ելքի ճանապարհը և բացում են միայն գումարի դիմաց: Այս ժամանակ հարսի եղբայրը պահը բաց չէր թողնում և մի խնամապաչ էր «կորզում» փեսայի հարազատներից մեկից: Դա կարող էր լինել փեսայի քույրը, եղբոր կինը կամ մորաքույրը: Նրանք էլ, լավ իմանալով «վտանգի» մասին, պաշտպանվում էին, իսկ հաճախ էլ այս ամենը կռվի առիթ էր դառնում և ոչ բարեհաջող ավարտ էր ունենում:

Հարսի տանից դուրս գալիս եկածներին գաթա էին բաժանում, որպեսզի հարսը «կսմաթով» լինի: Դուրս գալիս փեսայի կողմից եկածները հարսի տանից կաթսայի կափարիչ էին գողանում, որ հարսը բերանը փակ լիներ:

Այնուհետև հարսին տանում էին փեսայի տուն, բայց ոչ նույն ճանա-

պարհով: Եկեղեցի գնալու սովորույթ չկար: Խորհրդային իշխանությունների վարած քաղաքականության արդյունքում եկեղեցին վերածվել էր պահեստի: Մոտ 70-ամյա պետության արգելքները իրենց ազդեցությունը չէին կորցրել նաև հետխորհրդային շրջանում և եկեղեցու նախկին «դիրքերը» նորից վերականգնվեցին բավականին ուշ:

Իսկ ինչ վերաբերում է զագսին, ապա ամուսինները զագսավորվում էին միայն երեխայի ծնվելուց հետո՝ ծննդյան վկայական ստանալու անհրաժեշտությունից ելնելով:

Հարսին փեսայի տուն բերելու ժամանակ արդեն մութ էր լինում: Այդ ժամանակ մաշալներ[2] էին վառում և երգում.

Մաշալ բռնեք լուս հլնի,
Հարս թագավոր դուս հլնի:

Փեսայի տանը արդեն հարսին ընդառաջ էր գալիս փեսայի մայրիկը: Նա փեսային ու հարսին քաղցրաջուր էր խմեցնում, հարսի ուսերին լավաշ էր գցում, որպեսզի հարսը «կսմաթով» լինի, ափսե էր դնում շեմքին, որը կոտրելով առաջ էին գալիս: Սա էլ արվում էր, որ չարը խափանվեր: Կոտրված ափսեի փշրտանքները փեսայի մայրը հավաքում և պահում էր, որպեսզի այդ կտորներով «թուղթուգիր» չանեն:

Այնուհետև հյուրերը տեղավորվում էին իրենց համար նախատեսված հարկաբաժիններում՝ տղամարդիկ և կանայք առանձին: Սկզբնական շրջանում հարսը և փեսան ևս առանձին էին նստում: Սակայն ավելի ուշ նրանք միասին նստում էին տղամարդկանց բաժնում մինչև հարսի պարը: Դրանից հետո արդեն առանձնանում էին, որպեսզի անկաշկանդ օգտվեին սեղանից: Սակայն կար մի սովորույթ, ըստ որի՝ հարսը չէր նստում, մինչև սկեսուրը նվեր չէր տալիս կամ չէր խոստանում: Նա կարող էր խոստանալ ոսկյա մատանի, գորգ կամ էլ կարող էր ասել «տղաս քեզ նվեր» կամ էլ եթե միևուճար տղա էր՝ «էս տուն ու տեղը քեզ նվեր»:

Հարսի հարազատները գալիս էին մի փոքր ուշ՝ հարսի հոր գլխավորությամբ: Հարսի մայրը հարսանիքի օրը չէր գալիս, այլ հաջորդ:

Հարսանիքը շարունակվում էր երգ ու պարի, կենացների ու մաղթանքների ուղեկցությամբ:

Հիմնական ուտեստներից էին տոլման, խաշլաման և փլավը: Որպես աղանդեր՝ լինում էր գաթան:

Կանանց հարկաբաժնում էլ տեղի էր ունենում հարսի բերած օժիտի մի մասի բացման արարողությունը: Իսկ ամբողջական օժիտը բացում էին հաջորդ օրը: Նշենք, որ հետպատերազմյան շրջանում օժիտը շատ «համեստ էր»: Այն իրենից ներկայացնում էր մի քանի տեսակի կտորներ

[2] Մաշալը աթարից պատրաստված կերոն էր, որը լուսավորում էր փեսայի ու հարսի ճանապարհը:

և հագուկապի պարզունակ իրեր: Սակայն հետագայում դրա «սահմանները» ընդլայնվեցին: Աղջկան որպես օժիտ տալիս էին պահարան, մահճակալ, կարի մեքենա, հագուստի զանազան տեսակներ և այլն: Կարևոր է նաև նշել, որ օժիտի պատրաստման հարցում օգնում էին մոտ հարազատները՝ թեթևացնելով հարսի հոր «հոգսը»:

Հարսը նվերներ էր բերում ընտանքի բոլոր անդամների համար: Հատուկ սկուտեղ կար նաև փսայի համար, որը կոչվում էր փեսափայ և իր մեջ ներառում էր վերնաշապիկ, մայկա, գուլպա և այլն:

Հարսանյաց արարողությունը ավարտվում էր գիշերը և հյուրերը ցրվում էին իրենց տները: Հաջորդ օրը «խնամականչ» էր տեղի ունենում: Գալիս էին հարսի մոտ հարազատները և մայրը: Փեսայի կողմն էլ նրանց նվերներով ճանապարհ էր դնում: Հարսի մորն էլ ոսկյա մատանի էին նվիրում:

Հայտնի է, որ հիշյալ շրջանում սովորական գյուղական տունը բաղկացած էր 3 սենյակից՝ հացատուն, սրահ և օթախ (սենյակ): Նորապսակներին հատկացնում էին սենյակը, իսկ ընտանիքի մյուս անդամները քնում էին հացատանը: Երբ ամուսնանում էր հարսի կրտսեր տեգրը, նրանք զիջում էին իրենց սենյակը նրանց, իսկ իրենք էլ «համալրում» էին հացատանը քնողների շարքերը:

Մի քանի օր հետո հարսը ջուր էր տաքացնում և լվանում սկեսրայրի ոտքերը: Նա դրա համար նվեր չէր տալիս հարսին:

Նորահարսին սկզբում «ազատում էին» ծանր գործերից: Նա թեթև գործեր էր անում, ինչպես օրինակ տուն մաքրելն էր, տան գործերով զբաղվելը, ջրի գնալը:

Հարսը պարտավոր էր «հարսնություն» անել ընտանիքի բոլոր անդամների հետ: Այդ ամենը տևում էր բավականին երկար, հաճախ նաև տարիներ: Խոսում էր միայն, երբ սկեսրայրը կամ սկեսուրն էին թույլ տալիս կամ էլ խոսում էր կրտսեր տեգոր կամ տալի միջոցով:

Հարսանիքից 7 օր հետո հարսի մայրը, քույրերը, մոտիկ հարազատները գալիս էին գլուխ լվանալու: Երկու շաբաթ հետո հարսի հայրն ու մայրը նրան տանում էին իրենց տուն, հետ էին բերում, մեկ շաբաթ հետո էլ մեծ շուքով, բորով-բողչով գալիս ու տանում էին դարձ: Դարձից վերադառնալիս նրան նվերներ էին տալիս: Դարձ էին տանում նաև տաղավար տոներին և նույնպես նվերներով ճանապարհում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բդոյան Վ., Հայ ազգագրություն, Եր., 1974:
2. Լալայան Ե., Ազգագրական հանդես, հ. 14, Եր., 1906:
3. Շագոյան Գ., Յոթ օր, յոթ գիշեր, Եր., 2012:

СВАДЕБНАЯ ЦЕРЕМОНИЯ В НОРАТУСЕ В СЕРЕДИНЕ 20-ГО ВЕКА

Зина Аветисян
ГГУ, История 4-ый курс

РЕЗЮМЕ

***Ключевые слова**: свадьба, брак, семья, невеста, жених*

Статья которая основана на собранном нами полевом, этнографическом материале, обсуждает свадебную церемонию в Норатусе в середине 20-го века. Представлены составляющие свадебного ритуала – возраст вступления в брак, церемония прошения руки девушки, сватовство, обручение, свадебная церемония, связанные с ним местные особенности и послебрачные отношения.

THE WEDDING CEREMONY IN NORATUS IN THE MIDDLE OF 20TH CENTURY

Zina Avetisyan
GSU, History 4th year

SUMMARY

***Key words:** wedding, marriage, family, bride, groom*

The wedding ceremony in Noratus in the middle of 20th century is discussed in the article based on field ethnographic material collected by us. Wedding ritual components: marital age, proposal, in-law relationship, engagement, wedding ceremony, local features connected with it and matrimonial relations are submitted.

ПРАВОВАЯ КУЛЬТУРА КАК УСЛОВИЕ СТАНОВЛЕНИЯ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА

Асмик Согомонян
Российско-Армянский (Славянский) Университет,
Юриспруденция, 3-ий курс
Научный руководитель к.ю.н. ***Даллакян Л. Г.***

Ключевые слова: *правового воспитания населения, мероприятий по повышению уровня культуры*

Одним из основных условий существованияразвитого гражданского общества является высокий уровень правовой культуры, который выступаетрегуляторомотношений членов общества в разных сферах, «выражает этику взаимоотношений субъектов общественной жизни с правом, законами, другими юридическими феноменами» [5, стр. 122]. Этика взаимоотношений в обществе по поводу права,строится на деятельности государства, СМИ, участия в юридической практике (участие в судебных процессах в качестве истца, ответчика, потерпевшего) [5, стр. 121], самообразованию, в данном случае мы рассматриваем этику как «нормы поведения, ораль, совокупность нравственных правил среди членов какого-нибудь общества…» [9].

Еще одним пластом создания правовой культуры является взаимосвязь исторического развития, этнической и национальной особенности населения с характерными методами и способами реализации и внедрения в общество уважения к праву. Смоленский М.Б. утверждает: «многовековые пласты патриархально – коммунитарного, общинного менталитета … нетерпимость, явно пренебрежительное отношение к закону при не менее очевидном уважении к «порядку», неприязнь к власти в целом и в то же время надежда, вера в доброго, справедливого лидера, вождя, при длительном отсутствии значимых демократических свобод, постоянное стремление к «воле»…»[8, стр. 197]. Такого же мнения придерживается Морозова Л.А., которая описывает данную тенденцию «подчинения

Под «образом мышления, нормой и стандартом поведения» Морозова Л.А. понимает правовой менталитет общества, которое характеризуется «устойчивостью, особым правовым духом общества или народа, нормативно-ценностными ориентациями, обусловленными культурно-историческими, религиозно-этническими и морально-психологическими особенностями развития. Национальный правовой менталитет должен обязательно учитываться при разработке новых актов,

иначе они не будут восприняты обществом и, следовательно, не будут эффективно использоваться в повседневной жизни».

Ссылаясь на вышесказанное, утверждаем, что процессы становления общества и права параллельно и взаимнодополняя, развиваются как две тесно связанные системы: государство создает определенную психологию отношения к праву, предпосылки и направленность правового воспитания общества.

Дляполучение конкретноговзгляда на право, должны учитываться правовые акты, непосредственно влияющие на понимание данного процесса. Статьей первой Конституции Армении государство устанавливает – «Республика Армения – суверенное, демократическое, социальное, правовое государство.» [11] – данная статья не подлежала изменениям с 1995 года.Комментарии к Конституции РА дают следующее пояснение «правовому государству» – только правовое государство создает важнейшие условия для существования гражданского общества. В первую очередь, гражданское общество – организованное общество, которое имеет способность к саморегулированию и плодотворному самоконтролю в тех сферах, которые, не смотря на это, остаются под ведением государства. В результате этого сферы ведения государства сокращаются и, в то же время, благодаря контролю гражданского общества, в остальных сферах ведомых государством повышается плодотворность осуществляемой деятельности [9].

Проанализируем понятие «правовое государство», которое закреплено в большинстве конституций мира. «Правовое государство признается в США в форме "господства права" (ruleoflawstate)что, означает приоритет права и обязанность государства во всех своих действиях опираться на закон и другие правовые нормы» [3, стр. 46].Вкомментариях к первой статье Конституции РФ: «Один из основных признаков такого государства заключается в том, что государственная власть в нем ограничена».Под ограниченностью власти стоит понимать: «…установление Конституцией и действующим законодательством пределов государственной власти. При этом ограничение государственного вторжения в сферу индивидуальной автономии личности осуществляется посредством признаваемых за человеком и гражданином неотъемлемых прав и свобод, которые не могут быть нарушены или произвольно ограничены государством» [12].Именно благодаря ограничению государственного вмешательства существование гражданского общества возможно.

Для полноценности гражданского общества, то есть общества,

«куда государству вход воспрещен», обществу необходимо знать свои права и свободы, уметь реализовывать свои желания, не нарушая прав других лиц, законы, устои государства.Индивиды гражданского общества должны брать на себя ответственность за здоровое функционирование всех сфер социума, в первую очередь, личным примером создавая благоприятные прецеденты. «Верное, адекватное осознание права имеет важнейшее значение для жизнедеятельности индивида, его поведения, юридического мировоззрения, культуры, гражданской позиции. Неразвитое или деформированное правосознание служит питательной средой многих правонарушений, других антиобщественных аномалий» [5, стр. 117]. Появление в обществе таких индивидов является сигналом, как самому обществу, так и государству к действиям по урегулированию возникших отклонений. Для «профилактики»Матузов Н. И., Малько А. В. в учебном пособии для студентов предлагают следование следующей формуле «знать - уважать – соблюдать» [5, стр. 123].

Многие авторы устанавливают перечень действий для недопущения «дефективного» поведения, цели, стремление к которым создаст наиболее развитое гражданское общество. Галстян И. Ш., Лаута О. Н. рассматривая правовую культуру молодежи, ставят следующие задачи по повышению уровня культуры: «выявить уровень развития правовой культуры у современной молодежи; разработать комплексную систему мер правового образования и просвещения молодежи; сформировать у молодежи уважительное отношение к праву и потребность в правомерном поведении» [4, стр. 261].

Так же предлагается в качестве целей «выработка у личности лояльного отношения к праву и закону, привитие навыков законопослушного поведения. Интеграция личности в социальную систему, ее подготовка к полноценному и продуктивному существованию, к функционированию в структурах гражданского общества и государства, усвоение личностью социальных ценностей, специальное формирование правовых представлений и навыков исполнительного поведения, формирование правосознания личности» [12, стр. 5].

Вышеназванное есть основа политики по правовому воспитанию населения. Правовое воспитание — важнейший компонент правовой социализации личности, который характеризуется как система мер, направленных на формирование уважительного отношения к правовым нормам. Его целью является формирование у индивида привычки соотносить свои поступки с общепринятыми в обществе правовыми нормами, что способствует его правовой культуре [6]. Таким образом,

мы видим неразрывную связь правового воспитания и правовой культуры, где одно является базисом другого.

Проблема правового воспитания населения с переходом к рыночным отношения становится более актуальной. Требуетсяустановление конкретно-определенных действий по наиболее эффективной работе с разными слоями населения.

К такому роду действиям отнесем:

1. Привлечение к деятельности учебных заведений (школ, колледжей) в данной сфере судей, адвокатов, следователей – профессиональных юристов, практиков, которым предлагается чтение курса лекций по одной из наиболее актуальных тем.

2. Создание условий для студентов старших курсов юридических факультетов, магистрантов прохождения практики и проведения кружков и внешкольных занятий для более заинтересованной молодежи.

3. Создание крупной юридической клиники для школьников, студентов и сотрудников учебных заведений, деятельность которых будет основана на добровольных началах.

(Выше предложенные мероприятия не требуют финансового вложения, а ограничиваются деятельностью безвозмездного характера)

4. Учитывая особенности каждого марза Армении, на областном уровне разработать программу повышения культуры посредством мероприятий, конкурсов, олимпиад. Схожее предложение было сделано аспирантом Саакян М.В. - «в связи с модернизацией Образования разработать и принять Указом Президента Российской Федерации региональную программу развития высокой правовой культуры в республике [Адыгея]» [7].

К такому роду деятельности отнесем проведение олимпиад на знание своих прав для детей и подростков, конкурсы на тему «новый знак дорожного движения» и т.д.

5. Ознакомление молодежи с отдельными отраслями права, в которое вовлечено большинство населения страны для получения базовых знаний, гдеопределение отрасли права каждого региона может осуществляться на основе опросов и заинтересованности граждан-право социального обеспечение, семейное права, гражданское право, защита прав потребителей.

Четвертый и пятый пункты политику повышения правовой культуры осуществляют на уровне марзов, городов.

6. Ввести дисциплину, предметом которой будет ознакомление с основными правами и обязанностям гражданина. Данное предложение не требуетвыделения дисциплины «правоведение» из курса

«обществознание; обществоведение», которое есть в школьных программах. Такое предложение ставит целью своей помощь молодежи в изучении основных прав и свобод.

7. На всех факультетах университетов вне зависимости от направления обучения ввести курс «правоведения», данная функция осуществляется в некоторых университетах и не на всех направлениях, то есть является локальным.

8. Пропаганда уважения к праву через телевизионные передачи; СМИ; социальные рекламы, видеоролики; социальные сети. Нами предлагаются различные способы распространения информации, что связано с разнообразием предпочтений современного общества, базирующегося в основном на возрастной разнице.

Последние три предложения могут быть осуществлены при взаимной деятельности министерств республики, органов государственной власти.

Именно постоянная политика в сфере правового воспитание населения, выраженная в перечисленных пунктах, служит базой высокого уровня правовой культуры гражданского общества. При проведении разного рода мероприятий, не имеющих постоянный характер, возможность правового развития общества не может быть обеспечена на высоком уровне. Общество как потребитель воспринимает предоставляемую информацию на уровне своего развития, трансформирует ее и воспринимает на уровне своего сознания. Так, повышение уровня правовой культуры меняет восприятие мира и отношение к предоставляемой информации, дает возможность анализа своего поведения, не требует вмешательства государства в лице его органов, а как саморегулирующееся явление обеспечивает себясамостоятельно.

Тем самым, такие системы как право и общество, не могут существовать изолированно друг от друга. В вопросе о взаимоотношении права и общества большинство ученых придерживаются мнения об их взаимосвязи. Алексеева С.С. так же придерживается концепции о взаимодополняющих и одновременно развивающихся системах права и общества: «…право не может быть выше достигнутого экономического и духовного уровня данного общества и развивается вместе с ним» [1].

В данной статье мы дали определение понятиям «правовая культура» и «гражданское общество» базируясь на теории права и Основном законе государства. Обратились к причинам и задачам, стоящим как перед государством, так и перед саморегулирующимся обществом. В результате вышеизложенного анализа вывели ряд

мероприятий, которые были подразделены по масштабности работы в сфере повышения правовой культуры, финансовых вложений и заинтересованности молодого поколения в воспитании населения.

Синхронное развитие данного комплекса (общество, правовая культура) есть принадлежность обоих элементов к одному уровню, обязанность по развитию которого в равной мере лежит на личности, обществе и государстве в целом.

ЛИТЕРАТУРА

1. Алексеев С. С., (Электронный ресурс) http://www.konspekt.biz/index.php?text=46103. б.д. (дата обращения: 11 октябрь 2016 г.)
2. Арутюнян А.,Вахаршян Г. (Электронный ресурс) http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf.(дата обращения: 11 октябрь 2010 г.)
3. Баглай М. В. конституционное право зарубежных стран. Москва: НОРМА, 2004.
4. Лаута Н. И, Галстян Ш.О., К вопросу о правовой культуре молодежи, Ленинградский юридический журнал, 2015: 257-264.
5. Малько А. В., Матузов Н.И., Теория государства и права. юристъ, 2004.
6. Рукавишников В. О. «Социальная напряженность.» 1990.
7. Саакян В. М. «Пути повышения правовой культуры российского общества.» Вестник Адыгейского государственного университета, 2010: 1-3.
8. Смоленский М. Б., «Правовая культура, личность и гражданское общество в России: формула взаимообусловленности.» Правоведение, 2003: 197-204
9. Ушаков. Д. Н. (Электронный ресурс) http://ushakovdictionary.ru/ Толковый словарь Ушакова. 1935-1940 (дата обращения: 11 октября 2016)
10. Щукин М. А. «Правовая культура молодежи как объект социологического исследования» Вестник Адыгейского государственного университета. Серия 1: Регионоведение: философия, история, социология, юриспруденция, политология, культурология, 2011: 1-5
11. «Конституция Республики Армения.» (в редакции 2015г.)
12. Комментарии к Конституции РФ (Электронный ресурс) http://constrf.ru/razdel-1/glava-1/st-1-krf. (дата обращения: 11 октября 2016)

ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Հասմիկ Սողոմոնյան
Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան
Իրավագիտություն, 3-րդ կուրս

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հանգուցային բառեր. *բնակչության իրավական կրթություն, մշակույթի մակարդակի բարձրացում*

Սույն հոդվածում քննարկվել են իրավական մշակույթի և քաղաքացիական հասարակության փոխադարձ հարաբերությունները: Հեղինակը ներկայացնում է արտասահմանյան մասնագետների իրավական մշակույթի ծավալման առաջարկներ, որի վերլուծման և ընտրության մեթոդով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներկայիս իրավիճակը, առաջարկվում է մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է բնակչության իրավական կրթությունը:

LEGAL CULTURE AS A CONDITION OF FORMATION OF CIVIL SOCIETY

Hasmik Soghomonyan
Russian-Armenian (Slavonic) University
Low, 3th year

SUMMARY

Key word: *legal education of the population, measures to increase the level of culture.*

In this article, we will examine the relationship between legal culture and civil society, the policy of State in this field. The authors are given a number of proposals by foreign experts for improving the legal culture, which is analyzed by the selection method and taking into account the current reality in the Republic of Armenia a number of activities are proposed for the legal education of the population.

ԻՆՔՆԻՐԱՎՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Յուրի Գասպարյան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիա,
Իրավագիտություն, Մագիստրատուրա, 1-ին կուրս
*Գիտ. ղեկավար՝ ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան***

Հանգուցային բառեր՝ *ինքնիրավչություն, հանցակազմ, էական վնաս, ենթադրյալ կամ իրական իրավունք, իրավունքների ինքնագլուխ իրականացում, հանցագործության սուբյեկտ, վիճարկում*

ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի առաջին մասում տրված է ինքնիրավչության հետևյալ բնորոշումը՝ «Ինքնիրավչությունը՝ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքներն ինքնակամ (ինքնագլուխ) իրականացնելը, որն էական վնաս է պատճառել անձանց իրավունքներին կամ օրինական շահերին կամ խոշոր վնաս՝ պետական կամ հասարակական շահերին»:

Ինքնիրավչության հիմնական անմիջական օբյեկտն անձի կողմից իր իրավունքների իրացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ հանդես են գալիս անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև պետական և հասարակական շահերը [1, 51]: Այն այլընտրանքային է և կախված է նրանից, թե հանցագործության իրականացման արդյունքում ինչ նպատակով է պատճառվել վնասը:

Անդրադարձ կատարելով ինքնիրավչության օբյեկտիվ կողմին՝ պետք է նշել, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ են շփոթում ինքնիրավչությունը շորթման, մարդու առևանգման, կողոպուտի և այլ հանցագործությունների հետ:

Օբյեկտիվ կողմից ինքնիրավչությունը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

1. Հանրորեն վտանգավոր արարք (իրական կամ ենթադրյալ իրավունքներն ինքնակամ (ինքնագլուխ) իրականացնելը), այլ կերպ՝ ինքնագործունեություն,

2. Հանրորեն վտանգավոր հետևանք (էական վնաս անձանց իրավունքներին կամ օրինական շահերին կամ խոշոր վնաս՝ պետական կամ հասարակական շահերին),

3. Պատճառական կապն արարքի և հետևանքների միջև:

Նշված հատկանիշներին կարելի է ավելացնել նաև արարքի վիճարկելիությունը:

Այս կերպ հանցավոր ինքնիրավչության օբյեկտիվ կողմը եզրափակվում է ինքնակամ որոշ արարքների կատարմամբ (այսինքն հաստատված կարգին հակասող), որոնց օրինականությունը վիճարկվում է տվյալ կազմակերպության կամ քաղաքացու կողմից, քանի որ նրանց է պատճառվել էական վնաս:

Ուսումնասիրելով Վարդան Միշիկի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարնի 23.12.2010թ-ի թի ԱՎԴ1/0063/01/09 որոշումը՝ ակնհայտ է դառնում, որ ՀՀ վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնել, որ անհրաժեշտ է ինքնիրավ գործողությունների իրավաչափությունը վիճարկվի անձի (կազմակերպության) կողմից, որի բացակայությունը բացառում է ինքնիրավչության հանցակազմը: Որպես վիճարկում՝ հարկ է հասկանալ շահագրգիռ անձի կողմից իրավապահ մարմիններին համապատասխան հայտարարություն (դիմում, բողոք) ներկայացնելը՝ ինքնիրավ գործողությունների արդյունքում իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ [2]:

Ելնելով այն հանգամանքից, որ արարքը որպես ինքնիրավչություն որակելու համար պարտադիր է դրա վիճարկումը, կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ ՀՀ քր. օր.-ի 322 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունը դասել մասնավոր մեղադրանքի գործերի շարքին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածում կատարելով համապատասխան լրացում:

Հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է էական և խոշոր վնաս պատճառելը (ՀՀ քր. օր-ի 322-րդ հոդվածով նախատեսված): Անձի արարքի արդյունքում էական վնաս պետք է պատճառվի անձանց իրավունքներին կամ օրինական շահերին: «Էական վնաս» և «խոշոր վնաս» հատկանիշները գնահատողական են: Ըստ Յա. Մ. Բրայնինի՝ գնահատողական են կոչվում օրենսդրի կողմից չկոնկրետացված և քրեական օրենքի կիրառման ընթացքում հստակեցվող հասկացությունները [3, 63]:

Ինչ վերաբերում է վնասը խոշոր կամ էական համարելուն, ապա դա կախված է անձանց իրավունքներին կամ օրինական շահերին պատճառված վնասի չափից, տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի փաստացի գույքային կամ ֆինանսական դրությունից: Այդ վնասը կարող է արտահայտվել զգալի նյութական վնասի, անձի սահմանադրական իրավունքների խախտման ձևով [3, 54]: Պատճառված վնասի էական կամ խոշոր լինելը պետք է որոշվի ինքնիրավ գործողությունների կա-

տարման պահի կապակցությամբ:

Պետք է նաև տարբերել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «իրական» և «ենթադրյալ» իրավունքը, որքանով են դրանք հանդիսանում հանցավոր ոտնձգության հատկանիշ՝ ՀՀ քչ. օր-ի 322-րդ հոդվածով նախատեսված: Իրական իրավունքի ինքնագլուխ իրականացումը ենթադրում է, որ անձը խախտում է այդ իրավունքի իրականացման կարգը (օրինակ, օրինական հիմքով ստանալով բնակարանի օրդեր՝ անձը, չսպասելով նախկին բնակիչների կողմից բնակարանը ազատելուն, ինքնակամ զբաղեցնում է այն) [4, 18]:

Առավել վիճելի է «ենթադրյալ իրավունք» հասկացությունը: Ենթադրյալ է համարվում այն իրավունքը, որն իրականում չի պատկանում անձին, սակայն վերջինս սխալմամբ կարծում է, թե ինքն օժտված է այդ իրավունքով: Այդ իրավունքը պետք է բնութագրվի հետևյալ հատկանիշներով.

- այն օբյեկտիվորեն անձին չի պատկանում,
- հանցավորը գտնվում է մոլորության մեջ, կարծելով, որ դա իր իրական իրավունքն է:

Եթե վերջինս կարծում է, որ ինքն ունի տուժողի նկատմամբ պահանջի իրավունք, սակայն այդ ենթադրությունը հիմնավորված չէ իրավական շարժառիթներով կամ դրանք խաղում են աննշան դեր, ծառայում են որպես առիթ, ապա հանցավորը որևէ իրավունք չի իրականացնում, և նրա արարքը չի կարող որակվել որպես ինքնիրավչություն: Ենթադրյալ իրավունքի իրականացում ասելով հասկանում ենք, որ անձն իրականացնում է այնպիսի իրավունք, որը փաստացիորեն չունի, պայմանով, որ նա լիովին համոզված է հակառակում [1, 52]:

Ինքնիրավչության հանցակազմը նյութական է. հանցագործությունն ավարտված է համարվում քաղաքացիների իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս, իսկ պետության և հասարակության շահերին՝ խոշոր վնաս պատճառելու պահին [5, 870]:

ՀՀ գործող օրենսդրության համաձայն հանցավոր ինքնիրավչության սուբյեկտ կարող է լինել միայն ֆիզիկական մեղսունակ 16 տարին լրացած անձը, ով ընդունակ է գիտակցել իր գործողության (անգործության) փաստացի էությունն ու ղեկավարել դրանք: Բացի դրանից այդպիսի անձն իրավունք ունի տուժողին ներկայացնել պահանջներ՝ հիմնվելով իրական կամ ենթադրյալ իրավունքի վրա: Սա չի նշանակում, որ, ինչպես նշվում է մի շարք աղբյուրներում, ինքնիրավչության սուբյեկտը հատուկ է, քանի որ՝

1. այդպիսի իրավունք կարող է ծագել յուրաքանչյուր անձի մոտ,

2. քրեական օրենսգրքում սահմանված չեն ինքնիրավչության սուբյեկտի հատուկ հատկանիշներ:

Եթե ինքնիրավ գործողությունները կատարվել են պաշտոնատար անձանց կողմից, ապա հանցանքը որակվում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի հատկանիշներով, այլ ՀՀ քր. օր-ի 308 և 309 հոդվածների հատկանիշներով: Նույն արարքները՝ կատարված առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողների կողմից, որակվում են ՀՀ քր. օր-ի 214-րդ հոդվածի հատկանիշներով:

Գործող ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված է, որ ինքնիրավչության սուբյեկտ կարող է լինել միայն ֆիզիկական մեղսունակ 16 տարին լրացած անձը: Հարկ է նշել, որ 16-18 տարեկան անձին ինքնիրավչության համար քրեական պատասխանատվության ենթարկելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նրա իրավական գիտելիքները: Հանցավորը պետք է գիտակցի, որ տարածայնությունները պետք է պարզաբանվեն դատարանում կամ վարչական ընթացակարգով, այլ ոչ սահմանված կարգի խախտմամբ: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից»:

Իրավունքի պաշտպանության օրենքով սահմանված համապատասխան հնարավորությունները անձանց մոտ ի հայտ են գալիս 18 տարեկան հասակում: Այդ պարագայում անտրամաբանական կլինի պահանջել 18 տարին չլրացած հանցագործության սուբյեկտից պահպանել սահմանված ընթացակարգը (իր իրական կամ ենթադրյալ իրավունքների իրականացման համար դիմել դատարան) և դրանք չիրականացնեն ինքնակամ:

Ելնելով վերը նշվածից, մեր կարծիքով, առավել նպատակահարմար կլինի որպես ինքնիրավչության սուբյեկտ՝ սահմանել 18 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձանց, իսկ 16-18 տարեկան անձնց կողմից համանման արարքներ կատարելու դեպքում նրանք պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից, եթե փաստացի կատարած արարքներն այլ հանցակազմ չեն պարունակում:

Մեկնաբանելով ՀՀ քր. Օր-ի 322-րդ հոդվածը, թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացության, որ տվյալ հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ անձը, ով իրավունք ունի տուժողի նկատմամբ պահանջ-

ներ ներկայացնել՝ հիմնված իրական կամ ենթադրյալ իրավունքի վրա: Ինքնիրավ գործողություններ են համարվում միայն իր իրավունքների իրացմանը ուղղված գործողությունները: Մեր կարծիքով, նշված պարագայում երկու կողմերի միջև պարզ իրավահարաբերությունների առկայությունը բավարար և ինքնիրավչության համար պարտադիր է, որ իրավունքի իրացմանն ուղղված գործողությունները իրականացվեն հենց լիազորված սուբյեկտի կողմից: Կարող են հանդիպել դեպքեր, որ տուժողին պահանջները ներկայացվեն դրա իրավունքը չունեցող անձի կողմից: Այդ իրավունքի կրողներ չհանդիսացող անձինք կարող են ինքնիրավչության համար պատասխանատվություն կրել միայն այն դեպքում, երբ իրավատերը որևէ կերպ ներգրավել է նրանց իր իրավունքների իրացմանը: Վերը նշված իրավունք ունեցող անձը կարող է այլ անձանց աջակցությանը դիմել, կամ իր իրավունքները համապատասխանաբար փոխանցել ուրիշի: Այդ պարագայում վերջիններս պետք է ընդունեն ներկայացուցչական դերը որպես պարտատեր և ներկայացնեն տվյալ անձի շահերը: Եթե լիազորված անձինք դուրս գան այն իրավունքների շրջանակից, որոնց համար պարտատերն իրենց լիազորել է, ապա որևէ իրավունքի իրացման մասին խոսք չի կարող լինել: Նման հիմքով իրականացված գործողությունները կարող են որակվել ոչ թե ինքնիրավչություն, այլ սեփականության դեմ ուղղված որևէ հանցանք: Նշվածից բխում է, որ ինքնիրավչություն կատարած սուբյեկտը պետք է ունենա առնվազն տուժողի նկատմամբ պահանջի ենթադրյալ իրավունք, այլապես նրա գործողությունները պայմանավորված կլինեն ոչ թե իր իրավունքները վերականգնելու ցանկությամբ, այլ օրինակ տուժողից վրեժ լուծելուն, վնաս պատճառելուն կամ շահադիտական նպատակներով: Մեր կարծիքով, նման դեպքերը չեն դիտվում որպես ինքնիրավչություն, այլ կարող են ի հայտ գալ սեփականության կամ անձի դեմ ողղված այլ հանցակազմ:

Կարող են հանդիպել դեպքեր, երբ ինքնիրավ գործողություններ իրականացվեն պահանջի ներկայացման անհատական հանձնարարականի բացակայության պայմաններում իրավունք ունեցող և լիազորված անձի կողմից համատեղ, ուստի այդ պարագայում ՀՀ քր. Օր-ի 37-րդ հոդվածի համաձայն նրանք պետք է պատասխանատվության ենթարկվեն որպես հանցակիցներ:

Ինքնիրավչության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է որպես դիտավորությամբ կատարված հանցագործություն, որը դրսևորվում է ինքնիրավ գործողությունների նկատմամբ ուղղակի դիտավորությամբ, իսկ հետևանքների նկատմամբ ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ: Ինքնիրավչությունը, որը կատարվել է անզգուշությամբ, իր մեջ չի պա-

րունակում հասարակական վտանգավորություն, ուստի չի կարող լինել քրեորեն պատժելի: Ինքնիրավչության սուբյեկտի դիտավորությունը որոշվում է նրանով, որ անձը գիտակցում է իր գործողությունների հանրային վտանգավորությունը և նախատեսում է հնարավոր հետևանքները, այսինքն՝ սուբյեկտի կողմից իր իսկ գիտակցումը ոչ այնքան նրա գործողության դատապարտելիության մասին է, որքան գիտակցումը, որ իր կողմից իրականացվում են ինքնիրավ գործողություններ, որոնք հակասում են օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգին:

Վրա հասնող հետևանքների դիտավորության ուղղակի կամ անուղղակի լինելը որևէ էական նշանակություն չունի:

Ինքնիրավչության ժամանակ ուղղակի դիտավորությունը կայանում է նրանում, որ անձն օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ ցանկանում է պատճառել էական վնաս և միևնույն ժամանակ գործում է առանց այն անձի համաձայնության, որի իրավունքը խախտվում է:

Անուղղակի դիավորությունը տարբերվում է ուղղակի դիտավո-րությունից նրանով, որ անձն իր գործողություններով չի նախատեսում ոչ միայն պատճառել էական վնաս, այլ դրսևորում է անտարբերություն դրանց վրա հասնելու նկատմամբ, կամ գիտակցված թույլ է թալիս հետևանքների վրա հասնելը:

Հանցավոր մտադրության ծագումը գործողության կատարման պահին որևէ ազդեցություն չի ունենում հանցանքի որակման վրա, սակայն դա անհրաժեշտ է հաշվի առնել պատիժը նշանակելու ժամանակ: Շարժառիթի և նպատակի որոշում ինքնիրավչության որակման համար ունի ֆակուլտատիվ նշանակություն:

Ինքնիրավչության ժամանակ նպատակը ծագում է շարժառթի հիման վրա, իսկ նպատակը և շարժառիթը միասին կազմում են այն հիմքը, որի հիման վրա ծագում է մեղքը՝ որպես սուբյեկտի կամային գործողություն:

ՀՀ քր. Օր-ի հոդված 322-ի 2-րդ մասում նախատեսված են հանցակազմի ծանրացնող հանգամանքները՝ նույն արարքը բռնություն գործադրելով կամ դրա գործադրման սպառնալիքով կատարելը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 01.11.2012թ-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ

սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք [6]:

Բռնությունը ենթադրում է ամեն տեսակի ֆիզիկական բռնություն՝ ծեծ, խոշտանգում, առողջությանը վնաս հասցնելը: Բռնության գործադրման դեպքերը կլանվում են ինքնիրավչության հանցակազմի կողմից, բացառությամբ՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, ծանրացուցիչ հանգամանքներում խոշտանգման, ծանրացուցիչ հանգամանքներում առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերի: Նշված դեպքերում արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ [5, 871]:

Բռնություն գործադրելու սպառնալիքը նշանակում է տուժողի նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառելու հնարավորությամբ վախեցնելը: Ծանրացուցիչ հանգամանքի առկայության համար անհրաժեշտ է, որ սպառնալիքը լինի իրական:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 08.06.2012թ-ի թիվ ԿԴ1/0025/01/11 որոշման մեջ բացահայտել է այդ հատկանիշների բովանդակությունը, սակայն ոչ թե ինքնիրավչության, այլ ՀՀ քր. Օր-ի 137-րդ հոդվածով նախատեսված հանցագործության շրջանակներում (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը): Սակայն վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված՝ սպառնալիքի կոնկրետ և իրական լինելուն վերաբերող իրավական դիրքորոշումները լիովին կիրառելի են նաև ինքնիրավչության հանցակազմի կապակցությամբ: Այդ դիրքորոշումները հանգում են հետևյալին. «կոնկրետությունը ենթադրում է այն հանգամանքի հստակեցում, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը՝ սպանել, առողջությանը ծանր վնաս, թե խոշոր չափի գույքային վնաս հասցնել: Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Միևնույն ժամանակ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն ֆակուլտատիվ նշանակություն ունի, առաջնայինն օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Հնարավոր են դեպքեր, երբ օբյեկտիվ իրադրությունը հիմք չի տալիս սպառնալիքն իրական գնահատելու համար, սակայն անձն իր հոգեկան լարված վիճակի, հոգեկան առանձնահատկությունների կամ այլ պատճառներով իրականությունը խեղաթյուրված է ընկա-

լում՝ կարծելով, թե սպառնալիքն իրական է: Օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքեր, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, սպառնալիք տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանվաորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն: Հետևաբար սպառնալիքի իրական լինելու հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է լուծվի՝ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով» [7]:

Եթե ինքնիրավ գործողությունները պարունակում են այլ ինքնուրույն հանցակազմ (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը, ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալն առանց հափշտակելու նպատակի և այլն), ապա քրեական պատասխանատվությունը վրա է հասնում միայն այդ հանցագործությունները նախատեսող հոդվածով [1, 56]:

Նշված վերլուծությունն ուղղված է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված 322-րդ հոդվածի կատարելագործմանը և իրավակիրառ պրակտկայում հանցանքի որակման ժամանակ սխալների նվազեցմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Գ., Մարկոսյան Մ., Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Մեկնաբանություն: Երևան 2014թ.:
2. ՀՀ վճռաբեկ դատարանի 23.12.2010թ. Թիվ ԱՎԴ1/0063/01/09 որոշման 13-րդ կետ:
3. Брайнин Я.М. Уголовный закон и его применение. М. Юрид. Лит.,1967:
4. Скорилкина Х., Даданов С., Анненков А., Отграничение самоуправства от вымогательства//Законность, N 2, 2001:
5. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Դասագիրք բուհերի համար ԵՊՀ հրատարակչություն: Երևան, 2012:
6. ՀՀ վճռաբեկ դատարանի 01.11.2012 թ., թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման 18-րդ կետ:
7. ՀՀ վճռաբեկ դատարանի 08.06.2012թ., թիվ ԿԴ1/0025/01/11 գործի վերաբերյալ որոշման 18-րդ կետ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ СОСТАВА САМОУПРАВСТВА

Юри Гаспарян
Образовательный комплекс полиции РА,
Юриспруденция, магистратура 1-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *самоуправство, состав преступления, значительный ущерб, действительное или предпологаемое право, самоуправная реализация прав, субъект преступления, оспаривание*

В юридическом практике самоуправство часто путается с вымогателством, нарушением конфиденциалности частной жизни, похищением человека, грабежом и с другими преступлениями.

Обектом исследования в статье является уголовно-правовая характеристика самоуправства и особенности квалификации. В частности, на основе существуюших правовых норм и анализа мнений ученых, автором был сделан вывод о том, что преступление, предусмотренное в ч. 1 ст. 322 УК РА предусмотреть в качестве дел частного обвинения, а в качестве субъекта самоуправства предусмотреть физическое, вменяемое лицо, достигшое 18-летнего возраста. В статье представлены аргументы соответствующий предложенияй.

SOME ISSUES OF IMPROVING THE CORPUS DELICTI OF ARBITRARINESS

Yuri Gasparyan
Educational complex of police of the RA,
Law, Master 1st year

SUMMARY

Key words: *arbitrariness, corpus delicti, significant damage, real or supposed right, arbitrarily realization of rights, subject of crime, contestation*

In legal practice arbitrariness is often confused with extortion, violation of private property, kidnapping, robbery and other crimes.

This article is aimed at revealing the criminal legal nature of arbitrariness and the particularities of its qualification as a crime. In particular, based on the existing legal regulations and scientists' opinions, the analysis resulted in the necessity of making some changes in the Criminal Code of RA. Specifically, suggestions are made to the amendment of the first part of the article 322 of the RA Criminal Code, regarding this crime as a private accusation case and defining as a subject of arbitrarinessany natural not mentally ill person above the age of 18. Additionally, the appropriate arguments to the suggestions are presented in the article.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Նոննա Ալավերդյան
ԳՊՀ, Պատմություն, մագիստրատուրա 1-ին կուրս
Գիտ. ղեկավար՝ ***Մ. Ղազարյան***

Հանգուցային բառեր՝ *ազգային հարց, սահմանային-տարածքային բաժանում, ուզբեկա-տաջիկական, ղրղզա-ուզբեկական, ղրղզա-տաջիկական, ղազախա-ուզբեկական, թուրքմենա-ղազախական հակասություններ*

ԽՍՀՄ-ի կազմավորումը, ինչպիսին էլ այն լինի իր բնույթով, նորագույն պատմության կարևորագույն էջերից է: Սակայն այս պետությունը ձևավորվեց հիմնականում բռնի ուժով. շատ հաճախ հաշվի չէին առնում հենց իրենց՝ բոլշևիկների կողմից հռչակված ազգերի ինքնորոշման իրավունքը, ազգային առանձնահատկությունները, պատմությունը, շահերը: Նրանց համար առաջնային էին միայն սոցիալիստական հեղափոխության սին գաղափարները, խորհրդային, կուսակցական շահերը: Եվ սխալված չենք լինի, եթե ասենք, որ ԽՍՀՄ-ի փլուզման հիմնական պատճառներից մեկն էլ ազգային հարցն էր, այսինքն՝ ազգային հարցում բոլշևիկների վարած քաղաքականությունը:

Խորհրդային իշխանությունների ազգային քաղաքականության մեջ լուրջ սխալներից էին սահմանային-տարածքային բաժանումները: Սահմանները բաժանվում էին տարբեր սկզբունքներով՝ շատ հաճախ հաշվի չառնելով էթնիկական պատմական սկզբունքները. մեկ այլ ազգով բնակեցված և պատմականորեն այդ ազգին պատկանող տարածքները տրվում էին այլ ազգի, ինչը հետագայում հանգեցրեց բարդ բախումների: Տրամաբանությունից դուրս նման քայլերը լարվածություն էին առաջ բերում ազգային հարաբերությունների ոլորտում: Դրանց նպատակը մի կողմից ազգային լարվածության առաջացման ճանապարհով ազգերին մեկ միության մեջ պահելն էր, մյուս կողմից՝ նրանք փորձում էին ազգային հարցը երկրորդական տեղ մղել՝ նպատակ ունենալով առաջնային տեղ մղել ինտերնացիանալիզմի և կոմունիզմի գաղափարներն ու նպատակասլաց քաղաքականությամբ մերձեցնել նրանց:

Միջին Ասիայում ևս բոլշևիկների վարած քաղաքականության արդյունքում ի հայտ էին եկել ազգային տարածքային-սահմանային վեճեր: Դրա պատճառները պետք է փնտրենք դեռ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: 1918 թ. Միջին Ասիայում ստեղծվեց Թուրքմենստանի ԻԽՍՀ-ն, 1920 թ.՝ Բուխարայի և Խորեզմի ժողովրդական Խորհրդային Հանրապետությունները, ինչպես նաև Ղրղզստանի (Ղազախստանի) ԻԽՍՀ-ն:

Վերջինս 1925թ. վերանվանվեց Ղազախստանի ԻԽՍՀ: Սակայն այս պետություններում կային տարբեր ազգեր՝ ուզբեկներ, տաջիկներ, թուրքմեններ, ղրղզներ և այլն: 1920-1924 թթ. Թուրքմենստանի, Բուխարայի և Խորեզմի Խորհրդային Հանրապետություններում կազմավորվեցին Ուզբեկական ԽՍՀ-ն, Թուրքմենական ԽՍՀ-ն, Տաջիկստանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը՝ Ուզբեկական ԽՍՀ-ի կազմի մեջ, Կարա-Ղրղզստանի Ինքնավար Մարզը (1925 թ. մայիսից Ղրղզստանի ԻՄ, իսկ 1926-ից՝ Ղրղզստանի ԻԽՍՀ)՝ Ղազախստանի ԻԽՍՀ-ի մեջ (վերջինս էլ, մինչև 1936թ. ՌԽԴՍՀ-ի) [4, 401]:

Իսկապես, ուզբեկները, տաջիկները, թուքմենները, ղազախները և ղրղզները ձևավորեցին ազգային պետություններ, բայց նրանց սահմանների որոշման ժամանակ խորհրդային իշխանությունները թույլ տվեցին մեծ սխալներ: 1924-1925 թթ. պետությունների սահմանազատումը հանգեցրեց նրան, որ Միջին Ասիայի բոլոր պետություններում ազգային փոքրամասնություններ հայտնվեցին: Օրինակ՝ Ուզբեկստանի ԽՍՀ-ի սահմաններից դուրս հայտնվեցին 433 հազար ուզբեկ, որից մոտ 120 հազ. Ղրղզստանի տարածքում, 98 հազ.՝ Տաջիկստանում, 78 հազ.՝ Ղազախստանում, 64 հազ.՝ Թուրքմենստանում, և համարյա երկու միլիոն տաջիկ՝ Ուզբեկստանում [11, 5-6]: Այս երևույթը բնորոշ էր Միջին Ասիայի մյուս երկրներին: Ավելին, ազգային քաղաքականության սխալներից մեկն էլ այն էր, որ տարբեր ազգերով բնակեցված շրջանները այդպես էլ անկախություն ձեռք չբերեցին, նրանք ստացան ինքնավար մարզի կարգավիճակ և տրվեցին այս կամ այն պետությանը: Օրինակ՝ պամիրի ազգով բնակեցված Պամիրի շրջանը, որի հիմքի վրա հետագայում 1925 թ. հունվարի 2-ին ձևավորվեց Լեռնա-Բատախշանի Ինքնավար Մարզը, մտավ Տաջիկստանի կազմի մեջ [13, 195]: Կամ էլ կարակալպակներով բնակեցված Կարա-Կալպակյան ինքնավար մարզը, որը սկզբում գտնվում էր Թուրքմենստանի ԻԽՍՀ-ի կազմի մեջ, ապա մի կարճ ժամանակ մտավ ՌԽՖՍՀ-ի, այնուհետև Ղրղզստանի ԻԽՍՀ-ի և վերջում՝ Ուզբեկստանի ԽՍՀ-ի կազմի մեջ [4, 401]: Այս հանգամանքը բավական սրում էր ազգամիջյան հարաբերությունները:

Հարց է առաջանում՝ ինչու էին Խորհրդային իշխանությունները սահմանները այնպես գծել, որ Միջին Ասիայում ազգամիջյան հարաբերություններն այսքան սրված լինեին: Մենք կարծում ենք՝ սրա պատճառն այն է, որ նրանք վախենում էին, թե թյուրքական այս բոլոր ազգերը կարող էին առաջնորդվել պանթյուրքիզմի կամ պանիսլամիզմի գաղափարներով, որը կհանգեցներ այդ ազգերի միավորմանը: Ահա այս է պատճառը, որ խորհրդային ղեկավարները փորձեցին կանխել ազգերի հնարավոր միավորումը և նրանց միջև լուրջ վեճեր առաջացրին:

Միջին Ասիայում ազգամիջյան հարաբերություններն առավել սրված էին երեք ազգերի՝ ղազախների, ուզբեկների և տաջիկների միջև, որի հիմնական պատճառը տարածքային-սահմանային վեճերն էին: Տարածքային առումով գոյություն ուներ և մինչև հիմա գոյություն ունի սահմանային վեճ Ղրղզստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի միջև Ֆերգանայի հովիտի հարավային մասի համար[1]: Ղրղզստանում գտնվող Օշի մարզը, Տաջիկստանի ԻԽՍՀ-ում գտնվող Խոջենտի մարզի Ատշսկի, Իսֆարինսկի, Կանիբադսկի շրջանները, Ուզբեկստանում գտնվող Նամանգանի, Ադիջայի և Ֆերգանայի մարզերը դարձան վեճի առարկա: Սրա հետևանքով ի հայտ էին եկել ազգային-տարածքային վեճեր Ուզբեկստանի և Ղազախստանի, Ղրղզստանի և Ուզբեկստանի, Ղրղստանի և Տաջիկստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի միջև:

Բացի տարածքային վեճերից կային նաև սահմանային լուրջ հարցեր: Նշենք, որ խորհրդային տարիներին այս պետությունների միջև սահմանները հստակ որոշված չէին, և նրա անկումից հետո սա ևս լուրջ խնդիրների տեղիք տվեց: 2000թ կազմվեց հանձնաժողով, որը պետք է հստակեցներ Միջին Ասիայի պետությունների միջև եղած սահմանները: Բայց այդ գործընթացը դեռևս ավատված չէ [11, 5-10]:

Ուզբեկա-տաջիկական ազգային հակասությունները Սամարղանդի և Բուխարայի համար էին, որոնք տաջիկները համարում են իրենց պատմամշակութային տարածքները: 1925 թ. Բուխարայի մեծ մասը անցավ Ուզբեկստանի կազմի մեջ: Պետք է նկատենք, որ այս որոշման հարցում մեծ դեր ուներ նաև Խորհրդային Ուզբեկստանի նախագահ Ֆայզուլա Խոջաևան, որը մինչև 1927 թ. պետության անվիճելի առաջնորդն էր և Մոսկվայի հատուկ վստահությունը: Սրա պատճառն այն էր, որ Ստալինը, ի դեմս նրա, Միջին Ասիայում հենարան էր տեսնում և Ուզբեկստանի կազմի մեջ մտցրեց այնպիսի կարևոր տարածքներ, ինչպիսիք են Սամարղանդը, Բուխարան, Ֆերգանան, Խիվան, Տաշքենդը և որոշ ժամանակ նաև Խոջենդը. վերջինս 1929 թ. մտավ Տաջիկստանի կազմի մեջ [8]: Նշված տարածքներում բնակչության մեծ մասը տաջիկներ էին: Մոսկվան Ուզբեկստանը դիտում էր, որպես իր հենարանը Միջին Ասիայում: Այս մասին 1925 թ. փետրվարին ասել է ԽՍՀՄ-ի Միջին ընտրական հանձնաժողովի նախագահ Մ. Կալինինը, որը, անդրադառնալով Բուխարայում տեղի ունեցած Ուզբեկստանի կոմկուսի առաջին համագումարին, նշում է. «Ուզբեկստանը ունի հսկայական մշակութային պոտենցիալ, տեխնիկական հնարավորություններ, արևելքի հարուստ քաղաքներ և մարդկային ռեսուրսներ, որը պետք է մեծ դեր խաղա Կենտրոնական Ասիայում, կարելի է ասել հեգեմոն դեր…»[5, 630]:

Միայն 1929թ. Արևելյան Բուխարայի լեռնային մասը՝ Ատշկի և Իս-

ֆարինսկի շրջանները, Ուզբեկստանի կազմից հանվեցին և ներառվեցին Տաջիկստանի կազմի մեջ [9, 43]: Ավելին, Տաջիկստանը, ինչպես արդեն նշվեց, մինչև 1929 թ. ԻԽՍՀ-ի կարգավիճակով մտնում էր Ուզբեկստանի կազմի մեջ: Այս ամենը սրում էր ազգամիջյան հարաբերությունները:

Առանձին հետազոտողներ պնդում են, որ գոյություն է ունեցել, այսպես կոչված, Չիչերինի նախագիծը: Օրինակ՝ տաջիկ պատմաբան Մ. Շուկուրովը հաճախ ասում էր, որ խորհրդային ղեկավարները 1920-ական թթ. իրենց հավանությունն են տվել այն ժամանակվա ԱԳ նախարար Գեորգի Չիչերինի պլանին: Ընդ որում, այն կազմվել է հայտնի արևելագետ Վասիլի Բարտոլդի հետ միասին: Եթե այդ պլանը հաստատվեր, ապա Միջին Ասիայի քարտեզը այսօր այլ ձև կունենար: Համաձայն այս ծրագրի՝ Տաջիկստանը պետք է դառնար լիարժեք հանրապետություն: Չիչերինն առաջարկել է Բուխարայի էմիրությունը և Սամարղանդը միավորել Տաջիկստանի ԻԽՍՀ-ին: Բայց պլանը Ստալինի սրտով չէր [2]:

Այսպես, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, ինչպես մյուս տարածքային վիճելի հարցերում, այնպես էլ այս դեպքում, լուրջ կոնֆլիկտ առաջացավ երկու երկրների միջև: Մինչև օրս տաջիկա - ուզբեկական տարածքային-սահմանային վեճը շարունակվում է, և այն մնում է չլուծված՝ սպառնալով վերածվել պատերազմի:

Ղրղզա-ուզբեկական ազգային հակասություններ: Առաջին տարածքային վեճը Ղրղզստանի և հարևան երկրների միջև առաջ եկավ 1924թ.-ին: 1924թ. հոկտեմբերի 28-ին կազմավորված ղրղզական առաջին կառավարության առաջին նիստը տեղի ունեցավ նոյեմբերի 10-ին: Օրակարգի առաջին հարցը վերաբերում էր մի հանձնաժողովի ստեղծմանը, որը պետք է քննարկեր սահմանագծման հարցը: Ստեղծվեց Հավասարության հանձնաժողով, որի որոշմամբ Ղրղզստանին անցավ Սուլուկթան: Ղրղզստանի և Ուզբեկստանի հետ վիճելի էին համարվում Արավանսկի շրջանը, Կարասուն և քաղաք Օշը: Տարածքային վեճի պատճառով Ստալինը 30-ական թթ. 5 տարի ժամկետով վետո դրեց յուրաքանչյուր տարածքային վեճի վրա: Սակայն դա չխանգարեց, որ հետագայում այն շարունակվի նոր թափով: Այս տարածքների նկատմամբ վեճը շարունակվում է նաև մեր օրերում:

Մյուս կողմից, խորհրդային իշխանությունների վարած քաղաքականությունը խորացնում էր այդ վեճը: Այսպես, խորհրդային իշխանությունները տարբեր ժամանակներում վարծով կամ այլ հիմունքներով Ղրղզստանի տարածքում ստեղծվեցին ուզբեկական չորս էքսկլավներ (եթե անկլավը անկախ չէ և պատկանում է մեկ այլ պետության, ապա այն համարվում է վերջինիս էքսկլավը)՝ Սոխը և Շախիմարդան շրջանները,

Չոն-Գարան, Ջանգայլը, իսկ Ուզբեկստանում էլ գտնվում էր ղրղզական էքսկլավ Բարակ գյուղը [3]:

1955 թ. Սոխի շրջանը վարձով տրվեց Ուզբեկստանի ԽՍՀ-ին, 70 տարի ժամկետով: Այս պահից սկսած կոնֆլիկտ առաջացավ երկու երկրների միջև նշյալ տարածքի շուրջ: Ինչ վերաբերում է Շախիմարդանին, ապա այն 1930 թ. Ղրղզստանի կազմից հանվեց և ներառվեց Ուզբեկստանի կազմի մեջ:

Այս հակասությունները արտահայտվեցին ԽՍՀՄ-ի անկումից հետո, որի ապացույցը 1990 թ. Օշի կոնֆլիկտն էր, 2010 թ. հունիսի 10-13-ի Ղրղզստանի հարավում ուզբեկների և ղրղզների միջև ռազմական բախումներն էին: Դեռևս շարունակվում են երկու երկրների միջև սահմանագծման բանակցությունները: Սակայն անհամաձայնության հիմնական պատճառը այն է, որ Ուզբեկստանը սահմանագծման համար օգտագործում է 1927թ քարտեզը, իսկ Ղրղզստանը առաջ է քաշում 1954թ. քարտեզը [10, 50-51]:

Ղրղզա-տաջիկական ազգային հակասություններ: Ղրղզստանի և Տաջիկստանի միջև վիճելի էին համարվում Տաջիկստանի հյուսիս-արևելյան շրջանները՝ Իսֆարինսկի շրջանը: Տաջիկստանի հետ վիճելի էին նաև Բատկենի և Լայլյկսկի տարածաշրջանների որոշ տարածքներ, մասնավորապես Տաջիկստանի երկու էքսկլավները՝ Արևմտյան Կալաչը (Տաջիկստանի ԽՍՀ-ին անցել է 1930թ.), Վորուխը: 1944թ. Ղրղզստանի ԽՍՀ-ի Բատկենի շրջանի «Լենինի» կոլտնտեսությունը Տաջիկստանի ԽՍՀ-ի Իսֆարինսկի շրջանի «Լենինի» կոլտնտեսության հետ միավորվեց, ինչի արդյունքում Տաջիկստանին անցան սահմանային շատ տարածքներ:

Այս երկու պետությունների սահմանները վերջնականապես չորոշվեցին, որի արդյունքում, մինչև օրս կարգավորված չէ այս հարցը: ԽՍՀՄ-ի անկումից հետո այն տեղիք է տվել սահմանային հակամարտության: Խորհրդային իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով 2014թ. երկու երկրների միջև ռազմական բախում տեղի ունեցավ: Այսօր այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ տաջիկա-ղրղզական սահմանի 990 կիլոմետրի վրա գոյություն ունեն 70 վիճելի տարածքներ, և մինչև օրս սահմանագիծը երկու պետությունների միջև որոշված չէ:

Ղազախա-ուզբեկական ազգային հակասություններ: Վեճի առարկա էր Արալյան ծովի վրայով անցնող սահմանի հարցը: Ինչպես գիտենք, 1924թ. Ղազախստանի ԻԽՍՀ-ի կազմում ներառվեց Կարկալպակյան Ինքնավար Մարզը (կարակալպակներով բնակեցված), որը մինչ այդ գտնվում էր Թուրքմենստանի ԻԽՍՀ-ում: 1936 թ. դեկտեմբերի 5-ին Ստալինի նախաձեռնությամբ ստեղծվեց Ղազախստանի ԽՍՀ-ն, իսկ

Կարկալպակյան Ինքնավար Մարզը վերածվեց ինքնավար հանրապետության և մտավ Ուզբեկստանի ԽՍՀՄ-ի կազմի մեջ [6]: Այդ պայմաններում Արալյան ծովը 1920-ական թթ. մինչև 1936 թթ. գտնվում էր Ղազախստանի կազմի մեջ:

Տարածքային վեճի առարկա էր նաև Սիրդարյան մարզը, հատկապես Տաշքենդի շրջանը և քաղաք Տաշքենդը: 1927թ. Տաշքենդ շրջանը և քաղաքը Ղազախստանի կազմից հանվեց և հանձնվեց Ուզբեկստանի ԽՍՀ-ին:

1956թ. փետրվարի 13-ին Ղազախստանի կազմից Ուզբեկստանի կազմ տեղափոխվեց Սովյալ տափաստանի մի մասը [12, 36-37], ինչպես նաև Հարավային Ղազախստանի որոշ շրջաններ (ներկայումս Ուզբեկստանի մաս կազմող Ջիզակի, Նավոյի, Սիրդարյան մարզերը), Բոստանդուկի շրջանը և Օրջոնոկիձեի շրջանի մի մասը: Նույն թվականին Ղազախստանից Ուզբեկստանին անցան նաև Սարագաշի, Կիրովի, Մահտարալի, Ձետսուի շրջանները, որոնք Խրուշչովը հանձնեց Ուզբեկստանին, իսկ 1971թ. ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղարը այդ տարածքների մեծ մասը վերադարձրեց Ղազախստանին, բայց մինչև հիմա Ուզբեկստանը չի հրաժարվում այդ տարածքների նկատմամբ իր հավակնություններից [6]:

Տարածքային-սահմանային խնդիրները շարունակվեցին նաև ԽՍՀՄ-ի անկումից հետո: 2003թ. երկու երկրների միջև սկսվեցին բանակցությունները սահմանային վիճելի տարածքները և սահմանագիծը որոշելու նպատակով: Արդյունքում երկու կողմերը եկան համաձայնության:

Թուրքմենա-ղազախական ազգային հակասություններ: 1923-1924 թթ. արյունալի բախումներ են տեղի ունեցել Մանգըշլակի ղազախների և Կրասնավոդկսի թուրքմենների միջև, որից հետո լուրջ ազգային հակասություններ չէին նկատվում: Սակայն պահպանվում էր տարածքային-սահմանային վեճը երկու երկրների միջև: 1932 թ. Կարա-Բողազ-Գյոլի ծոցը և ծոցի հարավից հյուսիս ձգված միջհանրապետական սահմանները անցան Թուրքմենստանին՝ պատճառաբանելով, որ վերջինս չունի արդյունաբերական կամ հանքարդյունաբերական օգտակար ռեսուրս [7]:

Այսպիսով, ինչպես տեսանք, ազգային հարցը բավական սրված էր Միջին Ասիայի երկրներում: Խորհրդային իշխանությունների վարած սխալ քաղաքականությունն էլ ավելի բարդացրեց իրավիճակը, որի արդյունքը եղան հետխորհրդային շրջանում այդ պետությունների միջև լարված հարաբերությունները, ինչպես նաև մինչև հիմա չլուծված տարածքային-սահմանային հարցը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Абашин С.Н., Бушков В.И. (отв. ред.) Ферганская долина: этничность, этнические процессы, этнические конфликты М., 2004.
2. Бобохонов Р., Национально-территориальное размежевание и образование союзных республик в Центральной Азии (1924-1936 гг.), Ч. 1. Источник http://www.centrasia.ru/newsA.
3. Васильевич А., Киргизо-узбекская пограничная война, Источник-http://forum.rusbeseda.org/index.php?topic=8322.0;wap2.
4. В Большой Советской Энциклопедия, Национально-государственное размежевание Советских республик Средней Азии, М. 1970.
5. Калинин М., Избранные произведения. - М. 1960. Т. 1.
6. Карабекова Жанара,Установление границ независимого Казахстана. Узбекистан Источник: http://ehistory.kz/media/upload/1466/2014/06/26/a85af947d9dc47afa7eb13dc1811dc6b.pdf.
7. Карабекова Жанара, Установление границ независимого Казахстана. Туркменистан. Источник-http://e-history.kz/media/upload/1466/2014/06/26/c9908c51848ac96c02fa734fc2a83a05.pdf
8. Каримов Р., Треугольник Узбекистан-Афганистан-Таджикистан как очаг напряженности в Центральной Азии, Источник - http://www.ca-c.org/journal/cac-04-1999/st_07_karimov.shtml
9. Левитин Л., Узбекистан на историческом повороте: критические заметки сторонника Президента Ислама Каримова, М.: Вагриус, 2001.
10. Мурзаканова А.А., Вестник КРСУ. 2013. Том 13. № 4.
11. Рахимов Мирзохид, Проблемы многосторонних межгосударственных отношений в Центральной Азии. // Современные тенденции международных отношений в Центральной Азии. Ж. «ЕвроАзия» № 6,М.: 2008.
12. Сборник законов СССР и указов Президиума Верховного Совета СССР. 1938 г. — июль 1956 г / под ред. к. ю. н. Мандельштам Ю. И., М., 1956.
13. Шарафиева О.Х., Горный Бадахшан после распада СССР, Вестник Томского государственного университета 2009 № 323.

НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В СРЕДНЕЙ АЗИИ

Нонна Алавердян
ГГУ , История, Магистратура, 1-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *национальный вопрос, погранично-территориальные распределения, узбекско-таджикски, кыргызско-узбекский, кыргызско-таджикский, казахско-узбекский, казахско-туркменский конфликты*

Советские власти во время своего существования в национальной политике допустили серьезные ошибки. Из них особенно важны погранично- территориальные распределения. Границы разделялись по разным принципам и очень часто не учитывались этнические, исторические принципы, что и стало причиной напряженности в национальных отношениях. Одним из таких напряженных центров являлась Средняя Азия, которая, в свою очередь стала причиной межгосударственных напряженных отношений в послесоветской эпохе.

THE NATIONAL ISSUE IN THE MIDDLE ASIA

Nonna Alaverdyan
GSU, History, Master 1st year

SUMMARY

Key words: *the national issue, border-territorial division, the conflicts between Uzbekistan and Tajikistan, Kyrgyzstan and Uzbekistan, Kyrgyzstan and Tajikistan, Kazakhstan and Uzbekistan, Turkmenistan and Kazakhstan*

During their lifetime the Soviet authorities have made serious mistakes in the national policy. Some of the grossest mistakes were those of border-territorial divisions. The borders were divided by various principles. Very often neither historical nor ethnic principles were taken into account and it caused a lot of tension in the international relationships. One of those conflict centres was the Middle Asia, which later became the cause of tense interstate relations and wars in the post-Soviet period.

ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ

Աննա Սաղաթելյան
ԳՊՀ, Պատմություն, 4-րդ կուրս
*Գիտ. ղեկավար՝ պ.գ.թ. **Արսեն Հակոբյան***

***Հանգուցային բառեր**՝ թաղման ծես, Գավառ, հանգուցյալ, յոթեք, քառասունք, գերեզմանաքար, սուգ, գերեզմանատուն*

Հոդվածի նպատակն է ներկայացնել թաղման ծեսի ավանդական և ժամանակակից դրսևորումները Գավառ քաղաքում: Աշխատանքի հիմնական աղբյուրներն են 2016 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Գավառ քաղաքում 40-70 տարեկան շուրջ 20 բնակիչների շրջանում կատարած դաշտային աշխատանքների միջոցով հավաքված ազգագրական նյութը և հայ ազգագրագետ, բանահավաք, հնագետ Երվանդ Լալայանի ուսումնասիրությունները Նոր Բայազատի շրջանում 20-րդ դարի սկզբին [1]:

Թաղման ծեսը մշակույթի կարևոր տարր է, որը ներկայումս կարգավորվում է եկեղեցական կարգի, սովորույթների, օրենքի [13] միջոցով, սակայն հոդվածում շեշտը դրվում է թաղման ծեսի՝ որպես ժողովրդական սովորույթի քննարկման վրա:

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծիսակարգերը: Դրանք ներառում են ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին: Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը [2, 31]:

Ըստ Ա. Սարգսյանի՝ «Ծիսակարգը խիստ կանոնակարգված է, անփոփոխ, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն՝ դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր» [3, 78]:

Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ իրավիճակներում (ծնունդ, պսակադրություն, մահ և այլն) [4, 357]:

Թաղման ծեսը, կապվելով կյանքի եռամասնյա կաղապարի վերջին օղակին, մարդկության պատմության բոլոր փուլերում, բոլոր ժողովուրդների համար եղել է կենցաղային ամենատարողունակ սովորություններից մեկը [5, 132]: Այն, գալով հազարամյակների խորքից, կրել է մի շարք փոփոխություններ, սակայն այսօր էլ չի կորցրել իր մեծ դերն ու ազդեցությունը մարդկային կյանքի, հոգեբանության և մտածելակերպի վրա:

Համաձայն «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի՝

հուղարկավորությունը մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) կամ մահացածի աճյունասափորը հողին հանձնելու կամ աճյունասափորը հուշապատի մեջ տեղադրելու ծիսական արարողություն է [13]:

Ժողովրդական ստուգաբանությամբ հուղարկավորությունը մեկնում են իբր «հող ուղարկել»: Հուղարկավորություն, յուղարկաւորութիւն կամ յուղարկութիւն բառը նշանակում է «ի ուղի արկանել», այսինքն՝ «վերջին ուղու մեջ գցել, ճանապարհել» [10, 40]:

Ժողովրդականի և եկեղեցականի ներդաշնակ փոխկապակցվածությունը և իրարահաջորդությունն սկսվում էր հիվանդի հոգեվարքով, որի ժամանակ թե՛ քահանային էին կանչում՝ վերջին Ս. Հաղորդությունը կամ թոշակը տալու, եւ թե՛ հոգեվարքն ուղեկցվում էր հիվանդի վախճանը հնարավորինս հանգիստ դարձնելու ժողովրդական հավատալիքներով [6, 6]:

Գավառում թաղման արարողակարգերը ներկայումս կատարվում են մեծամասամբ քահանաների բացակայության պայմաններում, չնայած նրան, որ 20-րդ դարասկզբին գրեթե բոլոր թաղումները կատարվել են հենց քահանաների գործուն մասնակցությամբ: Թե ինչպես են օրհասի ժամին հարազատներն ապավինել քահանայի տված Ս. Հաղորդությանը եւ սրբերի զորությանն ու բարեխոսությանը, երևում է Նոր Բայազետի գավառի ժողովրդական կենցաղին նվիրված նկարագրության հետևյալ հատվածից. «Նոր-Բայազէտի ժողովուրդն էլ խոր հաւատում է ճակատագրին, այս պատճառով եւ ոչ այնքան բժշկութեան, որքան սրբերի միջամտութեան եւ կախարդութեան են դիմում՝ օրհասը փոքր ինչ յետաձգելու: Այսպէս՝ խնդրում են քահանային, որ Հազարափրկչի կամ մի այլ մասունք բերի հիւանդին համբուրել տալու կամ բժշկութեան աւետարան կարդայ նրա գլխին եւ կամ եկեղեցում, ժամասացութիւնից յետոյ ծանուցում անէ՛ նրա ծանր հիւանդութեան մասին եւ խնդրէ ժամաւորներին «Տէր ողորմեա» ասել, նրա համար բժշկութիւն հայցել: Երբ այս միջոցները չեն օգնում, պառկեցնում են հիւանդին մի սայլի վրա եւ մի ոչխար առած գնում մօտակայ զօրաւոր սրբերից մինի դուռը, մատաղ անելու եւ բժշկութիւն հայցելու, նրա հանդերձից մի կտոր կտրում են եւ կապում սուրբ համարուած ծառի ճիւղերից, որպէսզի նրա հիւանդութիւնը այդտեղ կապուած մնայ եւ կամ նրա շապիկը հանում տալիս են մի աղքատի, որպէսզի այսպիսով նրա հիւանդութիւնը սրան փոխադրուի»[1, 57]:

Ե. Լալայանի կատարած ուսումնասիրությունների համաձայն՝ «գուշակելու համար թէ հիւանդն առողջանալու է թէ ոչ՝ մի ամանով ջուր են տալիս նրան խմելու, և մնացած ջուրը սրսկում մի որևէ կենդանու, յաճախ շան վրայ. եթէ սա սոսկում է, դողում, դա նշանակում է, որ հիւանդը մեռնելու է» [1, 58]:

Ըստ մեր նյութի՝ Գավառ քաղաքի բնակչության մեծ մասը այսօր էլ հավատում է ճակատագրին, այդ իսկ պատճառով քիչ չեն դեպքերը, երբ հիվանդին բուժելու համար հարազատները դիմում են ոչ միայն

բժիշկներին, այլև բախտագուշակներին: Բանասացներից շատերը պատմում են, որ եղել են դեպքեր, երբ մահամերձի հիվանդության պատճառը բժիշկներին չի հաջողվել պարզել, և միայն թղթաբացին դիմելուց հետո է պարզ դարձել, որ տվյալ մարդու վատառողջությունը կապված է «թուղթ ու գրի», վախի հետ և բուժվել է միայն թղթաբացի կողմից: Գավառում տարածված է նաև երազներին մեծ հավատ ընծայելը: Գավառցիները հավատում են, որ եթե տվյալ անձին հարազատ հանգուցյալներից մեկը երազներում նրան այցի է գալիս և կանչում իր մոտ, ապա նա էլ շուտով մահանալու է, եթե վերջինս, իհարկե, երազում չի մերժել նրան և գնացել է նրա հետ:

Երբ հոգեվարքը մոտենում է, սակայն մահամերձը չի կարողանում հոգին ավանդել, հարազատներից մեկի՝ արտերկրում գտնվելու պարագայում, վերջինիս նկարը դնում են հիվանդի կրծքին, որպեսզի նրա հոգին խաղաղավի և հանգիստ լքի մարմինը: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին նկարի փոխարեն դրսում գտնվողի հագուստներից մի բան դնում էին հիվանդի երեսին, որպեսզի «կարոտը առնե» և հանգիստ մեռնի [1, 58]:

Ըստ մեր հավաքած նյութի՝ հոգեվարքի ժամանակ հարազատները ամեն կերպ աշխատում են չաղմկել, բնակարանում ոչինչ ձևափոխման չենթարկել՝ հիվանդին «հոգեդարձ» չանելու նպատակով: Նախորդ դարում տեղի է ունեցել հակառակը. մարդիկ սաստիկ աղմուկ են բարձրացել, հրացան արձակել, որպեսզի հիվանդի կյանքը ևս երեք կամ յոթ օրով երկարացնեն [1, 58]:

Մահանալուց հետո հանգուցյալի[1] աչքերը փակում են, ձեռքերը՝ խաչում կրծքին: Բնակարանում գտնվող բոլոր հայելիները, պահարանները վարագուրում են: Ըստ բանասացների՝ հայելին, իբր թե հանգուցյալի հոգին վերցնում է իր մեջ, և հանգուցյալի հարազատները, ծածկելով այն, թույլ չեն տալիս, որ հանկարծ հոգին մտնի հայելու մեջ:

1900-ականներին տանը հանգուցյալին լողացնելու կարգ էր իրականացվում. քահանան օրհնում էր մի կաթսա սառը ջուր, որով լողացնում էին հանգուցյալին (կին հանգուցյալի պարագայում՝ կանայք, արական սեռի ներկայացուցչի դեպքում՝ տղամարդիկ), ապա ավելացած ջրով տան բոլոր կանայք լվանում էին իրենց ձեռքերը, որպեսզի աշխարհի «ցաւ ու չոռից» ազատվեին [1, 59]: Ի տարբերություն այս ամենի՝ մեր օրերում հանգուցյալի մարմինը շտապօգնության մեքենայով անմիջապես տեղափոխվում է դիահերձարան, որտեղ նաև լվանում են այն:

Ըստ Լալայանի՝ նոր բայազետցիները ննջեցյալին պատանքում էին, իսկ ավելացած կտորից (ըլջըկ) քահանան մի գոտի և մի խաչածև գլխաշոր էր պատրաստում և իր ձեռքով գոտին կապում էր հանգուցյալի մեջքին, իսկ գլխաշորը՝ դնում երեսին: Պատանքի հոգևոր իմաստի մասին

[1] Գավառում «հանգուցյալ»-ին անվանում են «մեռել»:

Արամ դպիր Դիլանյանը գրում է. «Պատանքը պատում ու կապում է մարմնի բոլոր զգայարանները, որը նշանակում է, որ մարդն այլևս անկարող է չար կամ բարի գործեր գործել, այդ պատճառով էլ պատանք է կոչվում» [9, 154]: Պատանքած ննջեցյալին փաթաթում էին կտորով և դնում դագաղի մեջ, որը հիմնականում պատրաստում էին հասարակ տախտակներից: Այսօր դիահերձարանում հանգուցյալին հագցնում են նրա «դասական» (տղամարդու դեպքում՝ պիջակ և տաբատ, կանանց պարագայում՝ պիջակ կամ ժակետ և շրջազգեստ) հագուստներից համեմատաբար ամենաանորը և նոր կոշիկներ: Հանգուցյալի մյուս հանդերձները բաժանվում են հարազատներին, կարիքավոր մարդկանց, կամ շարունակում են կրել տվյալ տան անդամները:

Նշենք, որ դագաղով թաղելու սովորությունը համընդհանուր տարածում է ստացել 1930-ական թվականներից[2]: Երվանդ Լալայանի հաղորդած տվյալների համաձայն՝ նոր բայազետցիները դագաղ պատվիրելու համար հանգուցյալի հասակը թելով չափում էին՝ հավատալով, որ դագաղի փոքր-ինչ մեծ լինելու դեպքում տան անդամներից ուրիշն էլ շուտով կմահանա [1, 59]: Այժմ դագաղները գնում են սգո խանութներից. դագաղի չափսերը տարբեր են լինում՝ կախված հանգուցյալի հասակից: Դագաղների վրա երկաթե խաչ է ամրացված լինում, որը, ըստ մի քանի դագաղավաճառների՝ հետագայում կարող է ննջեցյալների՝ քրիստոնեության հետևորդ լինելու ապացույց դառնալ: Հարկ է նշել, որ ննջեցյալի վերմակն ու դոշակը հանում են դուրս և դնում ջրի մեջ, որպեսզի նրա հոգին խաղաղություն գտնի:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Գավառում հանգուցյալին թաղում են մահվանից երկու օր անց և ոչ դրանից շուտ, որպեսզի ծանոթներն ու հարազատները հնարավորություն ունենան վերջին հրաժեշտը տալու նրան[3]: Ննջեցյալի դագաղը տան մեծ սենյակներից մեկում, հիմնականում հյուրասենյակում դրվում է այնպես, որպեսզի հանգուցյալի դեմքը նայի դեպի արևելք: Սեղանը, որի վրա դրվում է դագաղը, նախապես ծածկվում է կտորով, ոչ վաղ անցյալում օգտագործում էին տան ամենաթարմ գորգը: Երկու գիշեր շարունակ ննջեցյալի «քունը» հսկում են երկու-երեք տղամարդ: Եթե մահացածի մարմինը դրված է լինում եկեղեցում, այս դեպքում նրա մոտ ոչ ոք չի մնում: Այդ երկու օրերի ընթացքում՝ երեկոյան ժամերին, հանգուցյալի ոտքերի մոտ մոմեր են վառում, որոնք հետո թաղվում են հանգուցյալի հետ:

---

[2]«Հուղարկավորությունների կազմակերպման եվ գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ հանգուցյալի դիակը գերեզմանատուն կարող է տեղափոխվել միայն դագաղով [13]:

[3]Հանգուցյալի թաղումը կատարվում է մահվան պահից ոչ շուտ, քան 24 ժամ հետո («Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենք, հոդված 10. կետ 10) [13]:

Թաղմանը նախորդում է հոգեհանգստի օրը, երբ ժամը 18:00-19:00-ի սահմաններում հարազատները գալիս են իրենց ցավակցությունը հայտնելու հանգուցյալի ընտանիքին: Այս ընթացքում դուդուկահարների նվագակցությամբ հնչում են սգո երգեր:

Թաղման օրը կանանց և տղամարդկանց համար նախատեսվում են առանձին սենյակներ: Ժամը 12:00-ից հետո կանայք նստում են հանգուցյալի մոտ և սկսում են տարբեր դրվագներ հիշել նրա կյանքից, որն ուղեկցվում է լացով: Հանգուցյալին տանից դուրս տանելուց առաջ սենյակից դուրս են գալիս բոլոր կանայք, դուրս են բերվում տանը գտնվող ծաղիկները: Ննջեցյալի տանը թաղման օրը հնչում է կենդանի երաժշտություն: Դագաղը դուրս են տանում մահացածի մտերմագույն հարազատները: Դրսում նախապես հանգստասեղան է պատրաստվում նախորդի օրինակով, որի վրա էլ դրվում է դագաղը: Հինգից վեց րոպե անց դագաղը բարձրացնում և շրջում են այնպես, որպեսզի հանգուցյալի դեմքը նայի դեպի նրա տունը՝ վերջին անգամ տեսնելու և հրաժեշտ տալու համար: Ապա սեղանը շուռ են տալիս, որպեսզի այդ տանը մահացության նոր դեպքեր չլինեն: Դագաղը մի քանի քայլ տանում են ոտքով, ապա՝ դնում մեքենայի մեջ: Մեքենայի դիմաց փակցված է լինում հանգուցյալի դիմանկարը: Հարկ է նշել, որ ոչ շատ վաղ անցյալում՝ 1990-ականներին և 2000-ականների սկզբին, թաղման թափորը ոտքով էր ուղեկցում հանգուցյալի դագաղը տանող հարազատներին մինչև գերեզմանատուն: Դեպի գերեզմանատուն տանող ճանապարհին ննջեցյալի հարազատները իրենց տների առջև սեղաններ էին պատրաստում(դնում էին օղի և կոնֆետ), որոնց մոտ մի քանի «օղորմաթաս» խմելուց հետո թափորը շարունակում էր ճանապարհը: Այժմ գերեզմանատուն գնում են մեքենաներով: Ճանապարհին՝ Գավառի Սբ. Աստվածածին եկեղեցու մոտ, կանգ են առնում և հանգուցյալի դեմքը շրջում դեպի եկեղեցին, ապա՝ շարունակում: Այստեղ մինչ նախորդ դարի վերջերը դագաղը դնում էին Սբ. Ստեփանոս մատուռի մոտ գտնվող «հանգստաքար» կոչվող սեղանի վրա, հարազատներն ու մյուս ներկաները խոսքեր էին ասում, ապա շարունակում ճանապարհը դեպի հանգուցյալի գերեզմանատեղի: Դեպի գերեզմանատուն տանող նոր ճանապարհի կառուցման, ինչպես նաև մեքենաներով գերեզմանատուն գնալու պատճառով «հանգստաքար»-ը, կորցնելով իր երբեմնի դերը, քանդվել է: Պետք է նշել, որ բուն թաղման ժամանակ կանայք պարտավոր են հեռանալ գերեզմանատնից և ոչ մի դեպքում չնայել հանգուցյալի կողմը, քանի որ կինը, լինելով կյանքի խորհրդանիշը, կյանք տվողը, ըստ Եկեղեցու՝ չպիտի մասնակցի մարմնի թաղմանը, հողի մեջ ամփոփմանը: Այս ավանդույթը Գավառում պահպանվել է մինչ օրս:

Կանայք գերեզմանատնից գնում են սգո հանդիսությունների սրահ (հազվադեպ են դեպքերը, երբ «հոգեհացը» տանն է կազմակերպվում): Հարկ է նշել, որ մինչ սրահ մտնելը, դրա մուտքի առջև տեղի է ունենում

լվացվելու արարողությունը: Այն հիմնականում դրսում է տեղի ունենում, իսկ ջուր լցնողները երիտասարդներ են: Լվացվելը ունեցել է (ունի) «ցավից ու չոռից» մաքրվելու խորհուրդ [7, 147]:

Ե. Լալայանի և մեր կատարած ուսումնասիրությունների համեմատությունը ցույց է տալիս, որ հոգեհացի և ընդհանրապես սգո սեղաններին մատուցվող կերակրատեսակները ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվել, բայց մի բան մնացել է անփոփոխ՝ դրանք պետք է լինեն պարզ, դյուրամարս և սահմանափակ քանակությամբ:

Լալայանի հաղորդած տվյալների համաձայն՝ թաղման օրը մատուցել են բոզբաշ և փլավ, երբեմն նաև թարմ ձուկ և խաշլամա (յուղի մեջ կարմրացրած միս) [1, 63]: Այժմ Գավառում թաղման օրը մատուցվող ուտեստներն են խաշած միսը (կոչվում է «խոքու խաց»), փլավն (բրձնով, չամիչով և չրերով) ու քյուֆթան: Սեղանին դրվում է հաց, պանիր, կանաչեղեն, բանջարեղեն (վարունգ, լոլիկ, պղպեղ), լոբի, երշիկեղեն, թթու, խաշած հավ, զեյթուն: Տարեց հարազատների, հարևանների, ծանոթների բացակայության դեպքում նրանց ընտանիքի անդամների հետ «փայ» են ուղարկում՝ հիմնականում «խոքու խաց» և լավաշ դնելով:

Դառնալով գերեզմանատանը տեղի ունեցող գործողություններին՝ հարկավոր է ասել, որ այս օրը խունկ չեն ծխում: Գերեզմանափոսը իջեցնելուց հետո հարազատները հրաժեշտի խոսքեր են ասում՝ ուղղված ննջեցյալի հասցեին, և հող ցանում դագաղի վրա՝ այս կերպ «ցավն ու չոռը» հողի հետ տալով հանգուցյալին [7, 147]: Ապա ննջեցյալի մի քանի հարազատներ ցավակցություններ են ընդունում ներկաներից, որը կոչվում է «ձեռ տալ», որից հետո տղամարդիկ սեղան են պատրաստում և տարբեր կենացներ ասում ննջեցյալի հոգու հանգստության և նրա հարազատների առողջության համար: Այս ամենից հետո տղամարդիկ նույնպես գնում են սգո հանդիսությունների սրահ՝ կրկին նախապես լվացվելով:

Գավառում կանանց և տղամարդկանց, փոքրերի և ծերերի, հարուստների և աղքատների թաղման արարողակարգերը կառուցվածքային առումով էապես չեն տարբերվում: Սակայն հետաքրքրական է այն, որ հանգուցյալի տարիքով լինելու պարագայում՝ հուղարկավորներն ասում են «էկանք հարսանիք» և նույնիսկ հացկերույթը երգերով են լցնում:

Ըստ բանասացների՝ մինչև մեր դարի սկիզբը հանգուցյալի հետ վերջինիս ցանկությամբ հիմնականում թաղում էին նրա նամակներն ու նրա մասին տեղեկություններ պարունակող լրագրերը, սակայն թանկարժեք զարդեր չէին թաղում (այսօր ևս), քանի որ հայտնի էին նախկինում պատահած դիակապտության մի շարք դեպքեր:

Թաղման հաջորդ բաղադրիչներից է հաջորդ օրը կատարվում է հոգեհանգիստ, որը, ըստ Եկեղեցու, կոչվում է «այգալացն» կամ «այգուց»: Ըստ Եկեղեցու՝ այն կապված է Ավետարանի Հարության հատվածի հի-

շատակության հետ, երբ յուղաբեր կանայք այգաբացին գալիս են Քրիստոսի գերեզման՝ Նրան օծելու, և տեղը թափուր են գտնում (Մարկոս 16.1-11): Այս արարողությունը ժողովրդի մեջ հայտնի է «ինքնահող» անունով [11]:

Սակայն հետաքրքրականն այն է, որ Գավառում այս արարողությունը չի կատարվում, այլ թաղման օրվան հաջորդում է, ինչպես տեղացիներն են ասում, մխիթարանքը: Հանգուցյալի տանը մեկ սենյակ առանձնացնում են իրենց ցավակցությունն հայտնելու եկած կանանց համար: Տղամարդկանց համար մեկ այլ սենյակում պատրաստում են սեղան: Վերջիններս շատ արագ ցավակցում են հանգուցյալի հարազատներին և «օղորմաթաս» խմելուց հետո դուրս են գալիս: Այս օրը տղամարդիկ փոքր հանգանակություններ են կատարում:

Թաղման ծեսի մեջ մտնում են տարբեր բաղադրիչներ, որոնցից է նաև յոթեքի արարողությունը: Նախկինում խստորեն պահպանվում էր յոթ օրը լրանալուց հետո՝ տվյալ շաբաթ օրը, յոթեքը նշելու կարգը: Սակայն մեր օրերում դրան մեծ ուշադրություն չի հատկացվում: Մխիթարանքի օրը հայտարարվում է յոթեքի մասին, և մահացածի հարազատները ներկաներին խնդրում են մասնակցել դրան: Հանգուցյալի հարազատները հավաքվում են նրա տանը, ապա՝ ժամը 14:00-ից հետո գնում գերեզմանատուն: Խունկ ծխելուց հետո կանայք գնում են սգո հանդիսությունների սրահ, իսկ տղամարդիկ կրկին սեղան են պատրաստում, «օղորմաթասեր» խմելուց հետո միանում են կանանց:

Յոթեքին մատուցվող ճաշատեսակներն են խաշած իշխանը, քյուֆթան և փլավը: Սեղանին դրվում են բոլոր այն մթերքները, ինչ թաղման ժամանակ, սակայն ավելացվում են նաև աղցաններ, մրգեր, թխվածք: Յոթեքի օրը նույնպես կատարվում են հանգանակություններ, որին մասնակցում են ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք: Նշենք, որ կազմվում են ցուցակներ՝ պահպանելով յոթեքին մասնակցած մարդկանց անունները և նրանց տված գումարների չափերը, որպեսզի հետագայում հանգուցյալի ընտանիքի անդամներն էլ, գնալով նրանց տուն, տանեն համապատասխան գումար:

Մեր նյութերը ցույց տվեցին, որ յոթեքից հետո հանգուցյալի ընտանիքի անդամները և ամենամոտ հարազատները նշում են նրա մահվան տասնհինգը: Կրկին հավաքվում են ննջեցյալի տանը, ապա գնում գերեզմանատուն, որից հետո վերադառնում են տուն: Այս դեպքում մարդկանց շրջանակը շատ ավելի նեղ է:

Տասնհինգին հաջորդում է քառասունքը, ինչի կատարման սովորությունն էլ, ըստ Եկեղեցու, ունի իր իմաստը: Այն մեծապես կապված է Տեր Հիսուսի Հարությունից հետո մինչև Համբարձում ընկած 40 օրերի հետ, երբ Հիսուս տակավին շրջում էր մարդկանց մեջ ու քարոզում իր առաքյալներին (Գործք. 1:3): Ահա այս օրինակով էլ Սուրբ Եկեղեցին հավատում է, որ մահից/թաղումից հետո հոգին 40 օրեր տակավին երկրի վրա

է: Գավառցիները Այս 40 օրերի ավարտին, որպես, այսպես ասած, հրաժեշտ էլ կատարում ենք քառասնօրեքի կարգը [12]: Այժմ Գավառում քառասունքը նշվում է մահվան օրվանից հաշված 40-րդ օրվան հաջորդող շաբաթ օրը: Եթե, իհարկե, դրան չի նախորդում տաղավար տոներից որևէ մեկը: Վերոնշյալ պարագայում քառասունքը կատարվում է այդ օրվան հաջորդող մեռելոցին: Այս արարողակարգին մասնակցում են միայն նրանք, ովքեր նախապես հրավիրված են եղել: Խունկ և ծաղիկներ են տարվում գերեզմանատուն, որտեղ տղամարդկանց համար սեղան է պատրաստվում: Պետք է նշել, որ եթե հանգուցյալի գերեզմանաքարի վրա մինչ քառասունքը նկար չի լինում, ապա նրա դիմանկարը ամեն շաբաթ տանում են գերեզմանատուն՝ իրենց այցը ավելի հասցեատուղղված դարձնելով: Տվյալ դիմանկարի վրայի սև ժապավենը քառասունքից հետո թաղվում է նույն գերեզմանափոսում:

Քառասունքի հիմնական ճաշատեսակներն են քյուֆթան, խաշլաման և իշխան ձուկը:

Մահացածի տարելիցը կրկին հրավիրովի սկզբունքով է կազմակերպվում՝ պարունակելով այն բոլոր տարրերը, որոնք իր մեջ կրում էր քառասունքը:

Հարկ է նշել, որ Գավառում ամեն շաբաթ օր հանգուցյալի տան անդամները այցելում են գերեզմանատուն առնվազն մինչև քառասունքը, շատերը՝ նաև դրանից հետո:

Ննջեցյալի տանը 40 օր լույս է վառվում: Գավառցիները կարծում են, որ հոգին 40 օր շարունակ թափառում է տանը, և չի կարելի նրան խավարի մեջ թողնել:

Նախկինում ննջեցյալի համար 40 օր սուգ էին պահում: Սրա հետ է կապված նաև մորուք պահելը և սև զգեստ կրելը [8, 173]: Աղոթողի կերպար ստանալու համար կային տարբերանշաներ. տղամարդիկ մորուք էին պահում, կանայք էլ սև զգեստ էին հագնում, կամ սև շալ կապում և դրանով տարբերվում էին սովորական կենցաղով ապրող մարդկանցից՝ ցույց տալով, որ իրենք սուգի մեջ են: Այժմ, յոթեքից հետո տղամարդկանց, իսկ տասնհինգից կամ քառասունքից հետո՝ կանանց, նրանց հարազատները սգահան են անում՝ տանից դուրս բերելով:

Գավառում տանը գտնվող ժամացույցները կանգնեցնում են, և ժամացույցի սլաքները 7 օր պետք է ցույց տան հանգուցյալի մահվան ժամը:

Գերեզմանատեղերի պատրաստման համար վարձվում են գերեզմանափորներ: Մինչ 20-րդ դարի կեսերը Նոր Բայազետում ընդունված էր մի քանի մետաղյա դրամների նետումը գերեզմանի հատակը: Ըստ Գեդեոն Միքայելյանի՝ այս գործողությունը խոսում էր ննջեցյալի համար նոր տուն գնելու մասին: Երբեմն գերեզման փորելիս հանդիպում էին մի այլ՝ նախկինում թաղված ննջեցյալի: Որպեսզի գերեզմանի մեջ հին և նոր ննջեցյալները խաղաղ «ապրեն», նոր ննջեցյալի տերերը պետք է մի քա-

նի մետաղյա դրամներ նետեին այդ հին գերեզմանը, որպես տան վարձ [7, 147]: Գերեզմանաքարերը սովորաբար քրիստոնյաները տեղադրում են դեմքով դեպի արևելք, քանի որ, ըստ Եկեղեցու, փրկությունը Հիսուսի Քրիստոսի շնորհիվ արևելքից է գալու: Գավառի գերեզմանատանը տեղադրվող գերեզմանաքարերի հիմնական տեսակներն են գրատախտակածև քարերը և խաչքարերը, կան նաև կիսանդրիներ: Մինչև հանգուցյալի մահվան տարելիցը նշելը պարտադիր է գերեզմանաքարի պատրաստ լինելը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լալայան Ե. Ա., Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք, Ազգագրական հանդես, 1907, XVI, էջ 57-65:
2. Սարգսյան Ս. Ա., Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Երևան, Տնտեսագետ, 2004:
3. Սարգսյան Ա. Հ., Մշակույթի տեսություն, Երևան, Տնտեսագետ, 2003:
4. Գեղամյան Ա. Ա., Ծեսը, ծիսակարգը, սովորույթը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2015:
5. Հարությունյան Ե., Հայ ժողովրդական սգո երգեր, Հայ ազգագրություն և բանահյուսություն հ. 24, Երևան, Գիտություն, 2007:
6. Ավագյան Ն., Վերջին հաղորդության և թաղման կանոնի տան կարգի ժողովրդական և եկեղեցական արարողությունների համեմատական քննություն, էջմիածին, 2014:
7. Միքայելյան Գ. Հ., Նոր Բայազետ, Հայ ազգագրություն և բանահյուսություն հ. 11, Երևան, 1980:
8. Բդոյան Վ. Հ., Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974:
9. Դիլանյան Ա., Հոգեհանգստի խորհրդաբանությունը, Երևան, 2011:
10. Գալստյան Հ. Ա., Ճիշտը և սխալը, Երևան, 2007էջ: http://grapaharan.org/index.php/ Ճիշտը_եւ_սխալը
11. http://www.surbzoravor.am/post/view/hogehangist
12. http://www.sarkavagagirq.net/2013/06/7-40.html
13. «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենք: (http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2599)

СОВРЕМЕННЫЕ И ТРАДИЦИОННЫЕ ПРОЯВЛЕНИЯ ПОХОРОННОГО РИТУАЛА В ГОРОДЕ ГАВАР

Анна Сагателян
ГГУ, История 4-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова*-похоронный ритуал, Гавар, покойник, семь дней, сорок дней, надгробие, траур, кладбище*

В механизме сохранения и наследования народной культуры важную роль играют традиции, ритуалы, церемонии и обряды формировавшиеся в прошлом и передающиеся из поколения в поколение.

В статье рассматриваются элементы погребального ритуала в городе Гавар (заупокойная, погребение, ритуал соболезнования, семь дней, сорок дней, годовщина), виды надгробий, блюдо, а также современные проявления народных верований, в сопоставлении этнографического материала, конца 19-ого века и начала 20-ого века.

TRADITIONAL AND CONTEMPORARY MANIFESTATIONS OF FUNERAL RITUALS IN GAVAR

Anna Saghatelyan
GSU, History 4th year

SUMMARY

Keywords*-funeral rituals, Gavar, dead, yotek /7 days after death/, forty days after death, tombstone, mourning, cemetery*

Traditions, rituals and ceremonies, that are formed in the past and transferred from generation to generation, play an important role in preserving and inheriting mechanism of folk culture.

The constituent parts of funeral rituals in Gavar (agony, burial, consolation, yotek /7 days after death/, forty days after death, death anniversary), tombstones types, food, and contemporary forms of folk beliefs through a combination of ethnographic material from the end of 19th century to the early 20th century, are discussed in the article.

ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տիգրան դպիր Ասատրյան
Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոց, 3-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ ***Գ. Բադալյան***

Հանգուցային բառեր՝ *արաբներ, խալիֆայություն, Ներսես Գ Տայեցի, եկեղեցական ժողով, Ձվարթնոց տաճար, արաբական արշավանքներ, հայ եկեղեցի*

Է դարի սկզբին մեկուսացած կյանքով ապրող Արաբական թերակղզու բնակչության կյանքում տեղի ունեցավ դարակազմիկ իրադարձություն. հաղթանակեց նոր միաստվածական կրոնը՝ իսլամը, որը միավորեց արաբական ցեղերին և հիմնեց հզոր ու լայնատարած պետություն՝ Արաբական խալիֆայությունը:

Իսլամը, որի այսպես ասած հիմնադիրը Մուհամմեդն է, հավատացյալին երաշխավորում էր անձնական ազատություն և բոլոր մահմեդականների իրավական հավասարություն՝ անկախ նրանց տեղից, դիրքից, սոցիալական կացությունից: Ըստ նրանց՝ աշխարհը բաժանված է երկու իրարամերժ մասերի՝ հավատացյալների, այսինքն՝ իսլամը դավանողներ, և անհավատներ՝ մյուս կրոններին պատկանողներ:

Պետք է նշել, որ արաբները, անցնելով իշխանության գլուխ և մի քանի հաղթական արշավանքներից և ճակատամարտեր տանելուց հետո, դարձան Առաջավոր Ասիայի ամենավտանգավոր ախոյանները, մասնավորապես երբեմնի հզոր Բյուզանդիայի և Պարսկաստանի համար: 626 թ. արաբներն առաջին անգամ բախվելով բյուզանդական զինված ուժերի հետ՝ հաղթեցին նրանց և գրավեցին Դամասկոսը, իսկ հաջորդ տարին արաբները Խալիդ իբն ալ-Վալիդ զորավարի հրամանատարությամբ [1, 306] Յարմուկ գետի ափին բյուզանդական զորքի հանդեպ, որի շարքերում կռվում էր նաև մի հայկական զորախումբ՝ հայազգի Վահան զորավարի հրամանատարությամբ, առաջխաղացումը նաև դեպի Ասորիք և Միջագետք: 634 թ. հետո արաբները արտակարգ հաջող կռիվներ էին մղում նաև Պարսկաստանի դեմ: Եվ արդեն 637թ. Քադեսիայի ճակատամարտում նրանք, ծանր պարտության մատնելով թվապես գերակշիռ պարսկական զորքերին, գրավեցին նաև պարսից հինավուրց մայրաքաղաք Տիզբոնը: Սասանյանների դարավոր տիրապետության վերջնական կործանումը փաստորեն տեղի ունեցավ 642թ. Նեհավենդի ճակատամարտում, որից հետո արաբները իրենց արյունոտ թաթը գցեցին Հայաստանի վրա:

Ասորիքը, Միջագետքը և Պարսկաստանի մի որոշ մասը գրավելուց

հետո 640թ. արաբական զորագնդերը առաջին անգամ Իյադ զորավարի գլխավորությամբ ներխուժեցին Հայաստան: Թեոդորոս Ռշտունին, լսելով արաբների ներխուժման մասին, շտապել էր փակել Ջորա պահակի (Բաղեշի) լեռնանցքը, բայց արաբները շատ արագ էին շարժվում: Իյադ զորավարը Ջորա պահակից անցավ հյուսիս ու ներխուժեց Տարոն, որտեղ առաջին անգամ հանդիպեց դիմադրության: Տարոնի իշխան Տիրան Մամիկոնյանն ութ հազարանոց զորքով դուրս եկավ արաբների տասնութ հազարանոց զորքի դեմ, սակայն պարտվեց: Այս դեպքերի մասին նկարագրված«Տարոնի պատմության» մեջ [2, 285-286]: Ապա արաբները, կողոպտելով շրջակայքը, անսպասելորեն հայտնվեցին Արարատյան հովտում և բանակեցին Դվինի մոտ և հոկտեմբերի 6-ին հրի ու սրի մատնեցին կաթողիկոսանիստ Դվին քաղաքը՝ կողոպտելով, գերեվարելով ու սրածելով նրա բնակչությանը: Այս ընթացքում Թեոդորոս Ռշտունին Նախճավանում էր և այս օրհասական պահին իր ժողովրդի կողքին չէր:

Պատմական սկզբնաղբյուրները հաստատում են, որ Դվինի անկման հիմնական պատճառները նրա գրեթե անպաշտպան լինելն էր, քանի որ, ինչպես նշում է Ղևոնդը. «Նրանք քաղաքը պատերազմելու ընդունակ այրերից թափուր գտան, քանզի ամենքը Թեոդորոս իշխանի հետ գնացել էին, և միայն կանայք, մանուկներ և այլ խառնիճաղանջ բազմություն կար, որի մեջ պատերազմելու ընդունակ այրեր չկային» [3, 22], ինչպես նաև պատմիչը հավելում է, որ գերեվավարվածների թիվը 35000 էր հասնում, մինչդեռ Մխիթար Այրիվանցին ավելացնում է, որ սպանվածների թիվը 12000 էր: Դվինի գլխին պայթած աղետն անշուշտ ծանրորեն հարվածեց նաև Հայոց եկեղեցուն: «Սուրբ եկեղեցիները,– գրում է Ղևոնդը,– ուր հեթանոսները չպետք է մտնեին, քանդված ու քայքայված, անօրենների ոտից կոխան էին դարձել: Քահանաները սարկավագներով ու պաշտոնյաներով հանդերձ ժպիրի և անողորմ թշնամիների սրով խողխողված էին»[3, 22]: Անգամ շատերին հստիպեցին հրաժարվել քրիստոնեական հավատից: Արաբական զորքի ներխուժումը Հայաստան մահացու սպառնալիք էր նաև Բյուզանդական կայսրության համար:

Արաբների կողմից Դվինի ավերվելուց հետո այնտեղ ժամանեց Թեոդորոս Ռշտունի սպարապետը, որն իմանալով Եզր կաթողիկոսի մահվան մասին՝ եպիսկոպոսների և նախարարների հավանությամբ առաջարկեց կաթողիկոս ձեռնադրել Տայոց Ներսես եպիսկոպոսին, որը ծնունդով Տայքի Իշխան գյուղից էր:

Ներսես հայրապետի հրամանով հավաքվեցին Դվինի կոտորածին զոհ գնացածների դիակները, որոնք ցրված էին քաղաքում և քաղաքը շրջապատող դաշտում, և պատշաճ կազմակերպեց նրանց թաղումը: Նրա կողմից կոտորածի զոհերն իսկական նահատակներ համարվեցին, և նրանց թաղման վայրում տաճար կառուցվեց՝ իբրև վկայարան: Շատե-

րի կարծիքով, այն, հավանաբար, պատմագիրների կողմից հիշված Սբ. Սարգիս եկեղեցին էր:

Կոստանդին Բ կայսեր (648-668 թթ.) օրոք աքսորից Հայաստան վերադարձան Վարազտիրոցը և նրա որդի Սմբատ Բագրատունին: Նրանց աքսորից ազատելու կարգադրություն էր տվել Հերակլ կայսրն իր մահից քիչ առաջ: Ստեղծված քաղաքական կացությունը, երբ պարսիկները ջախջախվել էին, իսկ արաբներն աստիճանաբար ստեղծում էին իրենց տերությունը, ստիպեց Ներսես Տայեցուն հակվել դեպի բյուզանդացիները, և այդ մտադրության մեջ, ի դեմս Թեոդորոս Ռշտունու, նա համախոհ ձեռք բերեց: Նրանք երկուսով կայսրին նամակ գրեցին՝ խնդրելով Վարազտիրոց Բագրատունուն նշանակել Հայաստանի կուրապաղատ: Ըստ որում՝ Ներսես կաթողիկոսը, մինչև նամակն ուղարկելը, հանդիպեց կայսրին, իրենց նամակի հետ ուղարկեց նաևՎարազտիրոցի թուղթը:

Կոստանդին Բ կայսրը ընդունեց առաջարկը, 641 թ. զորք ուղարկեց Հայաստան, Պրոկոպիոս զորապետի գլխավորությամբ, Վարազտիրոցին վերահաստատեց իր նախկին պատիվների մեջ, պատանդությունից ազատեց նրա կնոջն ու զավակներին, և Պարսից նախկին մարզպանն անցավ երկրի գլուխ, իսկ Թեոդորոս Ռշտունուն նշանակեց Հայոց զորավար՝ շնորհելով նաև պատրիկի տիտղոս: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ «Ներսես Մեծ հայրապետը, Կոստանդին կայսրից թույլատվություն խնդրելով, Ռշտունյաց տեր Թեոդորոսին հայոց զորավար է նշանակում» [5, 87]: Սակայն աքսորն ու զրկանքները հարվածել էին նրա առողջությանը, և նա հիվանդանալով՝ շուտով մահացավ: Նրա մարմինն ամփոփվեց Դարույնքի տոհմական հանգստարանում:

Հայերի խնդրանքով կայսրը Վարազտիրոցի պաշտոնում նշանակեց նրա որդուն՝ Սմբատին՝ տալով նույն պատիվները և կուրապաղատի աստիճան: Հայ զորագնդերի սպարապետ նշանակվեց Թեոդորոս Ռշտունին: Մ. Օրմանյանը Սմբատ Բագրատունու կյուրապաղատությունը դնում է 642 թ.: Կայսրը ջանում էր ռազմապես կենսունակ հայ ազատանու զորակցությամբ պատնեշ կանգնեցնել իսլամի դեմ:

Այս ընթացքում Հայաստանը կրկին ենթարկվեց արաբների ավերիչ արշավանքին: Թշնամու զորագնդերը ներխուժեցին Այրարատ, Վասպուրական և Աղվանից մարզպանության հայկական երկրամասերը: Արաբները, շարժվելով դեպի արևմուտք, պաշարեցին Արծափը, որի բերդապահները համառ դիմադրություն ցույց տվեցին: Վերջինս գրավվեց միայն այն բանից հետո, երբ բերդի պաշտպանների անզգուշության հետևանքով արաբները հայտնաբերեցին ամրոց տանող գաղտնի անցքը և տիրացան նրան 643 թվի օգոստոսի 10-ին: Սակայն արաբների հաջողությունը երկար չտևեց, քանի որ շուտով հայտնվեցին Թեոդորոս Ռշտունու գնդերը, որոնք ջախջախեցին արաբական զորագունդը:

Անհաջողություն կրեց նաև Աղվանից մարզպանություն ներխուժած զորագունդը Նախճավանի մերձակայքում, որը ստիպեց երրորդ զորագնդին նահանջել Վասպուրականից:

Արշավանքը, որ առավելապես հետախուզական բնույթ էր կրում, ավարտվեց, և արաբները հեռացան Միջագետքի տափաստանները: Խաղաղություն հաստատվեց մինչև 650 թվականը, որը բարենպաստ պայմաններ ստեղծեց Հայոց կաթողիկոսի շինարարական լայն գործունեության համար: Այդ պատճառով Ներսես Գ-ն Հայոց պատմության մեջ հայտնի է որպես «Շինող» կամ «Շինարար» մականունով: Հայոց հայրապետը վերանորոգեց Սբ. Սարգսի եկեղեցին Դվինում, որն այրվել էր արաբների կողմից քաղաքի գրավման ժամանակ: Կառույցների թվում հիշատակվում է Խոր Վիրապի եկեղեցին: Սակայն Ներսես կաթողիկոսին հատկապես մեծ հռչակ բերեց Սբ. Գրիգոր կաթողիկեն կամ Զվարթնոցը, որը հայտնի է նաև Առապարի Սբ. Գրիգոր կաթողիկե եկեղեցի անունով: Ըստ Սեբեոսի՝ երբ Գրիգոր Լուսավորիչը դուրս եկավ Խոր Վիրապից, Տրդատ Մեծ արքան նրան դիմավորեց այն վայրում, որտեղ որ կառուցվեց Զվարթնոցը, ինչպես նաև ավելացնում, որ Գրիգորի տեսիլքում հրեշտակների բազմությունը «Զուարթնոց» այդ նույն վայրում երևաց Սբ Գրիգորին [4, 143-144]: Հայոց հայրապետը հաստատվեց Զվարթնոցում, կառուցեց հայրապետանոց, տնկել տվեց այգիներ ու ծառաստաններ 7 Քասաղ գետից էլ ջուր բերեց դրանք ոռոգելու համար: Արաբական արշավանքների վտանգն աչքի առաջ ունենալով՝ նա ամուր և բարձր պարիսպներով շրջապատեց հայրապետանոցը:

Հայոց կաթողիկոսի կարևոր ձեռնարկումներից մեկը եղավ Դվինի ժողովի գումարումը, որի կարևորագույն նպատակներից էր կանխորոշ ծրագիր մշակել իսլամի ահագնածավալ տարերքին դիմակայելու համար: Բացի այդ էլ անհրաժեշտ էր երկիրը զերծ պահել Բյուզանդիայի կողմից սպասվող դավանական ոտնձգություններից: Այս հանգամանքներից ելնելով՝ որոշվեց կաթողիկոսանիստ Դվինում ժողով գումարել: Ըստ Կանոնագիրք Հայոցի՝ ժողովը գումարվել է Կոստանդիանոս կայսեր կառավարման չորրորդ տարում, այսինքն՝ 645թ: Ժողովը հավատարիմ մնաց Հայոց Եկեղեցու հակաքաղկեդոնիկ ուղղվածությանը և համապատասխան որոշումներ կայացրեց: Ժողովի առաջնահերթ նպատակն էր նաև իսլամի սպասվող ճնշմանը դիմակայելու համար Հայոց եկեղեցու իրավունքների կանոնականացումը, դրանք հաստատուն հիմունքներով օրինակարգելը: Ժողովի նպատակներ նաև ամուսնա-ընտանեկան (է կանոնը կարգադրում էր տղամարդուն կամ կնոջը, որի ամուսնուն գերեվարել էին, ամուսնանալ միայն յոթ տարի սպասելուց հետո, այլապես ավելի վաղ ամուսնանալու և առաջին ամուսնու վերադառնալու դեպքում՝ նրանք պարտավոր էին վերադառնալ առաջինի մոտ), ինչպես

նաև եկեղեցու սոցիալ-տնտեսական (չոտնահարել եկեղեցիների, եկեղեցականների և երիցուհիների իրավունքները, չհափշտակել նրանց հասույթները, նրանց վրա հարկեր և տուրքեր չդնել, վանքերի մեջ բնակություն չհաստատել) հարցերի կարգավորումը: Այսպիսով, ի դեմս 645թ այս ժողովի, Հայ Առաքելական եկեղեցին շոշափում էր ոչ այնքան ներեկեղեցական մասնավոր խնդիրներ, որքան պետական, հասարակական-քաղաքական սուր հնչեղություն ունեցող հարցեր, որոնք առնչվում էին երկրի քաղաքական զարգացման հնարավոր հեռանկարների հետ:

Դվինի ժողովից հետո հայերը շուտով սկսեցին մերժել հույների հետ հաղորդակցությունը՝ խորշելով նրանց պատարագից և թույլ չտալով հույներին մասնակցել իրենց պատարագին: Կոստանդին կայսրը և Պոլսի պատրիարք Պյուռոսը հրամաններ ուղարկեցին Ներսես Գ-ին և Թեոդորոս Ռշտունուն՝ պահանջելով, որ հավատի հարցերում միաբան լինեն հոռոմների, այսինքն՝ հույների հետ, և հայազգի գիտնական Դավիթ Բագավանցուն ուղարկեցին Հայաստան, որպեսզի նա հայերին ետ պահի հույների հետ դավանաբանական հակասություններից: Վերջինս Դվին ժամանեց կայսերական հրովարտակով ու պատրիարքական կոնդակով և պահանջեց, որ Հայոց կաթողիկոսն ու սպարապետն ընդունեն Քաղկեդոնի ժողովի որոշումները:

Հասկանալի է, որ Բյուզանդիան քաղկեդոնականության արծարծման միջոցով ձգտում էր ամրացնել իր քաղաքական ու կրոնական դիրքերը Հայաստանում: այս նպատակով կայսեր նախածեռնությամբ 648 թ. Դվինում գումարվում է մի հատուկ եկեղեցական ժողով, որտեղ քննության է դրվում բյուզանդական դավանանքի ընդունման հարցը: Ժողովը, սակայն, բյուզանդացիների համար ցանկալի ընթացք չունեցավ: Այնտեղ հաղթանակ տարան Թեոդորոս Ռշտունու կողմնակիցները և քաղկեդոնական դավանանքի ընդունման առաջարկությունը միահամուռ կերպով մերժվեց:

Կոստանդ կայսրին տված մերժողական պատասխանից հետո Թեոդորոս Ռշտունուն մնում էր արագորեն համախմբել իր ուժերը և նախապատրաստվել Բյուզանդիայի հնարավոր հարձակումների առաջն առնելու: Հոգևորականությունը, ի դեմս կաթողիկոս Ներսես Գ-ի, կրոնական հանգամանքից ելնելով, մեծ մասամբ հակված էր դեպի Բյուզանդիան, իսկ նախարարները, փորձելով ապահովել երկրի անվտանգությունը, պատրաստ էին համաձայնության գալ արաբների հետ, սակայն քրիստոնեությունը պահպանելու պայմանով: Այս նպատակով Թեոդորոս Ռշտունու ներկայացուցիչները 652 թ. մեկնում են Դամասկոս Ասորիքի արաբական կառավարիչ Մոավիայի մոտ ու նրա հետ կնքում մի պայմանագիր, որի մեջ ուշադրություն են գրավում հետևյալ կետերը.

ա) Հայերն ընդունում էին Արաբական խալիֆայության գերիշխանու-

թյունը և հեռանում բյուզանդացիներից,

բ) Հայերը երեք տարով ազատվում էին հարկերից, իսկ այնուհետև պարտավորվում վճարել այնքան, որքան կամենան,

գ) Հայաստանին իրավունք էր տրվում ունենալու 15000 հոգուց կազմված հեծելազոր, որի ամբողջ ծախսերը կատարվելու էին խալիֆայության հաշվին: Հայկական հեծյալ ուժերը հիմնականում պետք պաշտպանեին Հայաստանի ու Անդրկովկասի սահմանները,

դ) Արաբական խալիֆայությունը պարտաավորվում է պահպանել Հայաստանի ներքին ինքնուրույնությունը: Արաբները չպետք է գրավեն Հայաստանի բերդերը և ամրությունները, արաբ իշխանավորներ չպետք է լինեին, ամրոցներում արաբական կայազորներ չպետք է հաստատվեին,

ե) Օտար տերությունների և Բյուզանդիայի հարձակումների ժամանակ Արաբական խալիֆայությունը պարտավորվում էի օգնել հայերին՝ ցույց տալով ռազմական օգնություն:

Հիշյալ պայմանագրի կնքումը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանն առժամանակ արաբների ասպատակություններից ապահովելու համար: Հայ-արաբական պայմանագիրը էլ ավելի է ամրանում, երբ Թեոդորոս Ռշտունին անձամբ մեկնում է Դամասկոս՝ Մոավիայի մոտ: Կայսրը սկզբում փորձեց հայերին խնդրանքներով իր կողմը գրավել՝ առաջարկելով հայ քաղաքական գործիչներին գալ Կոստանդնուպոլիս կամ էլ նրանց հետ հանդիպել Կարինում որոշելու համար իրենց անելիքները: Կոստանդ Բ կայսրը 100-հազարանոց զորքով մտավ Հայաստան, գրավեց Կարինը, որտեղ մեկնեցին նաև մի քանի նախարարներ՝ հակվելով կայսեր կողմը: Կայսեր կողմն անցան Ծոփքի, Սպերի, Բագրատունյաց, Մանանազքի, Դարանաղքի, Եկեղյաց, Կարնի, Տայոց նախարարները, որոնք մեծապես խրախուսվում ու քաջալերվում էին Հայոց կաթողիկոսի և եպիսկոպոսների կողմից: Սակայն Թեոդորոս Ռշտունին՝ իր կողմնակից 40-ի չափ նախարարներով, հավատարիմ մնաց հայ-արաբական պայմանագրին: Կայսրը սպարապետությունից հանեց Թեոդորոս Ռշտունուն և նշանակեց Մուշեղ Մամիկոնյանին և փորձեց ռազմական ուժով ծնկի բերել ընդդիմադիր նախարարներին: Բյուզանդական զորքերը սկսեցին ավերել երկիրը և ձերբակալել նախարարներից նրանց, ում հնարավոր էր: Թեոդորոս Ռշտունին և իր կողմնակիցները երկրի ու եկեղեցու գանձերը տեղափոխեցին Վասպուրական[a]՝ ամրանալով Աղթամար կղզում: Ներսես Գ-ի և Մուշեղ սպարապետի խնդրանքով հալածանքները մի պահ դադարեցին, և կայսրը 20 հազարանոց բանակով ժամանեց Դվին ու իջևանեց կաթողիկոսարանում::

Այս ընթացքում Կոստանդնուպոլսում խռովություններ եղան, հյուսիսային ցեղերը հարձակվեցին կայսրության կենտրոնական նահանգի

վրա, որի հետևանքով կայսրը ստիպված եղավ շտապով հետ վերադառնալ՝ զորքերի հրամանատարությունը հանձնելով Մորիանոսին՝ հունական և հայկական զորագնդերով: Արաբները փորձեցին բյուզանդացիներին դուրս մղել Հայաստանից, նրանց օգնում էր Թեոդորոս Ռշտունին՝ իր կողմնակից նախարարներով: Սակայն մինչև Նախճավան ու Դվին հասած արաբական զորքերին սառնամանիքները ստիպեցին ետ քաշվել, և Մորիանոս զորավարը որոշ հաջողություններ ունեցավ: 653 թվին պատերազմական գործողությունները ծավալվեցին նոր թափով, և արաբներն ու Թեոդորոս Ռշտունու զորամասերը բյուզանդացիներին քշեցին Հայաստանից: Դաշնակից զորքերը հասան և գրավեցին Տրապիզոնը, որի կառավարչությունը նույնպես Հայաստանի ու այսրկովկասյան երկրների հետ հանձնվեց Թեոդորոս Ռշտունուն: Հայոց հայրապետը այս ժամանակ գնաց իր ծննդավայր՝ Իշխան գյուղ և այնտեղ մնաց շուրջ վեց տարի: Հայոց կաթողիկոսը չէր հրաժարվել ո՛չ հայրապետական իշխանությունից, ո՛չ էլ իրավունքներից: Նա ստիպված էր եղել թողնել միայն քաղաքական ասպարեզը, որովհետև Թեոդորոս Ռշտունին և նրա կողմնակիցները խիստ զայրացած էին նրա բռնած դիրքից: Թեոդորոս Ռշտունին փորձեց կրկին հանդիպել Մուավիայի հետ և ինչ-որ ձևով վիճակը կարգավորել, սակայն Դամասկոսում մահացավ, իսկ նրա մարմինը բերվեց Հայաստան ու ամփոփվեց տոհմական հանգստարանում: Ներսես Գ Տայեցի Շինող կաթողիկոսը մահացավ 661 թվին՝ իր կողմից Զվարթնոցի եկեղեցուն կից կառուցված կաթողիկոսարանում և թաղվեց նույն տեղում [6, 865]:

Այսպիսով՝ քաղաքական այս պայքարում Հայաստանը կարողացավ պահպանել իր ինքնուրույնությունը անգամ այն ժամանակ, երբ արաբական խալիֆայությունը իր գերիշխանությունն էր հաստատում Հայաստանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայ ժողովրդի պատմություն, հատոր Բ, Երևան, 1984 թ.:
2. Յովնան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941 թ.:
3. Ղևոնդ, Պատմություն, Երևան,1982 թ.:
4. Սեբէոս եպիսկոպոս, Պատմութիւն, Երևան, 1939 թ.:
5. Հովհ. Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան, 1996թ.:
6. Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, Ա հատոր, Սբ էջմիածին, 2001 թ.:

УСТАНОВЛЕНИЕ АРАБСКОГО ВЛАДЫЧЕСТВА В АРМЕНИИ

Тигран Асатрян
Духовная семинария Вазгенян, 3-ий курс

РЕЗЮМЕ

***Ключевые слова**: арабы, халифат, Нерсес III Тайеци, церковный собор, храм Звартноц, арабские наступления, армянская церковь*

Наша цель данной работе заключается в представлении политической ситуации в Армении в VII-VIII веках. Еще мы обратились к церкви в этом веке, особенно мы говорили о Нерсес III Тайеци, который в этом периоде был католикосом Армении. Обратились к его строительственой деятельности и к разным церковным вопросам. Для этой работе мы использовали разные источники, которые обратились к этому периоду.

THE BASIS OF THE ARAB DOMINION IN ARMENIA

Tigran Asatryan
Vazgenyan theological academy of Sevan, 3th year

SUMMARY

***Key words:** Arabs, caliphate, Nerses III Tayetsi, church cathedral, Zvartnots Cathedral, Arab approaches, Armenian church*

Our purpose of this work consists in representation of a political situation in Armenia in the 7-8th centuries. Still we addressed church in this century, especially we spoke about Nerses III Tayetsi who in this period was the Catholicos of Armenia. Addressed its construction activity and different church questions.

For this work we used different sources which addressed this period.

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անի Օհանյան
ԳՊՀ, Պատմություն, 4-րդ կուրս
*Գիտ. ղեկավար՝ պ.գ.թ. **Արսեն Հակոբյան***

***Հանգուցային բառեր**՝ եկեղեցի, սրբավայր, ուխտատեղի, բնակչություն, սովորույթ, ավանդություն, Գավառ*

Աշխատանքը նվիրված է Գավառ քաղաքի մի քանի հայտնի սրբավայրերի՝ քաղաքի բնակչության կյանքում ունեցած կրոնական և մշակութային դերի վերհանմանը: Քննության առարկա նյութն իր ժամանակագրական ընդգրկմամբ հասնելով մինչև մեր օրեր՝ առաջին անգամ է ուսումնասիրության ենթարկվում՝ որպես բաղկացուցիչ մաս քաղաքի առաջացման, ձևավորման և ժամանակակից պատմության: Եղած մասնագիտական գրականությունը սեփական ազգագրական դիտարկումներով և բանահավաքչությամբ լրացնելու միջոցով փորձ է արված հնարավորինս համակողմանիորեն ներկայացնելու Գավառ քաղաքի սրբավայրերի առաջացման, ժողովրդի կյանքում ունեցած նշանակության, ժամանակի ընթացքում այդ նշանակության կրած որոշակի բովանդակային փոփոխությունների պատմությունը: Անդրադարձ կկատարվի նաև դրանց հետ կապված սովորույթներին ու ավանդություններին, որոնք ևս խոսում են սրբավայրերի ունեցած դերի և դրա նկատմամբ բնակչության վերաբերմունքի մասին:

Յուրաքանչյուր ժողովրդի, նրա անցյալի, կերպարի, սովորույթների, վարք ու բարքի մասին վկայում են ոչ միայն նրա մասին առկա գրավոր և բանավոր տեղեկությունները, այլև նյութական հուշարձանները: Այդ հուշարձանների թվում մեծ կարևորություն ունեն հոգևոր ու կրոնական շինությունները, որոնք հաճախ միաժամանակ և՛ նյութական արժեք, և՛ գրավոր վկայություններ են: Դրանք այն սրբավայրերն են, որոնք հաճախ առատորեն խոսում են տվյալ ժողովրդի անցյալի և ներկայի մասին:

Նմանատիպ սրբավայրերով հարուստ է նաև Գավառ քաղաքը, որոնցից մի քանիսը հատկապես մեծ ժողովրդականություն են վայելում, ու Գավառ քաղաքի բնակիչների և ոչ միայն նրանց համար կրոնական մեծ նշանակություն ունի:

Ներկայիս Գավառ քաղաքը հիմնել են բայազետցիները, որոնք 1829-1830 թվականներից սկսած գաղթել են Արևմտյան Հայաստանի Բա-

յազետ քաղաքից և բնակություն հաստատել այն ժամանակ ձկնառատ Քյավառ գետի (Գավառագետի) շրջակայքում [1, 114]: Հենց այդ գետի մոտ էլ կառուցվել է քաղաքի ամենահին թաղը՝ Բանդի թաղը, որտեղ այժմ էլ գտնվում են քաղաքի մի քանի հայտնի սրբավայրեր:

Գավառից Արծվաքար տանող ճանապարհին՝ քաղաքի ծայր արևելյան մասում, գտնվում է Սուրբ Հովհաննեսի կամ, ինչպես գավառցիներն են ասում, «Սըրփհովանեսի» ուխտատեղին: Հանդիպակաց ժայռի ահագին քարեր գլորվել-թափվել են իրար վրա, և առաջացել է մի քարայր՝ երեք ոչ մեծ բաժանմունքներով: Այժմ քարայր-սրբատեղին մատուռի է վերածված. գավառցիները ժայռի մեծ մասն իր պատերի ներսում ամփոփող փոքրիկ շինություն են կառուցել բազալտե սրբատաշ քարերից, մատուռի տանիքին խաչ է տեղադրվել, և այն վայրում, որտեղ ժամանակին ճգնել է սուրբ Հովհաննես անունով ճգնավորը՝ գողտրիկ քրիստոնեական ուխտատեղի է առաջացել:

Ուխտատեղու մասին ամենավաղ հիշատակությունը վերաբերում է 16-րդ դարին. քարայրի մեջ՝ մուտքի դիմաց, մի խաչքար կա, որի վրա արձանագրված է. «Սուրբ Խաչս բարեխաւս Ծատուրին. թվ. ՌԽԴ (=1595). Քիրամ կազմող. Ծատուրս եդի ի խաչի ոտն զապրանացս տասն. ինչ մարդ որ հանէ ի սրբոյն՝ խռով կենայ սուրբն…» [2, 100]: Սրբատեղին հիշատակվում է նաև դրանից փոքր-ինչ հեռու գտնվող քարի վրա, որի բովանդակությանը կանդրադառնանք ավելի ուշ:

Ելնելով այն հանգամանքից, որ բացի վերոհիշյալ խաչքարի և քարի արձանագրություններից, բացի Սուրբ Հովհաննես ուխտատեղիի մասին առավել վաղ շրջանի այլ գրավոր հիշատակություններ չկան, դրա առաջացման ժամանակը մնում է չհաստատված: Ըստ ավանդության՝ այդ քարայրում ճգնել է ս. Հովհաննես անունով մի ճգնավոր [2, 101]: Այդ քարերի մեջ մոտ 4 տարի մնալուց հետո ինչ-որ անհայտ հիվանդության պատճառով կյանքից հեռացած ճգնավորին հողին են հանձնում իր իսկ ապաստարանից քիչ հեռու [3]: Որոշ ժամանակ անց աճյունն անհայտ պատճառներով տեղափոխվել է Երանոս (Մարտունի) [2, 101]:

Տեսակետ կա նաև, որ ս. Հովհաննեսի քարայրը հեթանոսական ժամանակներից մնացած մի սրբատեղի լինի [2, 101]:

Ուխտատեղի բարձրանալու համար սանդուղքներ են կառուցված: Շուրջ քսան սանդուղք բարձրանալով՝ ձախ կողմում տեսնում ենք մի ծառ, որի վրա թաշկինակներ են կապված: Որևէ իր թողնելու այդ սովորույթը բավականին տարածված է հավատացյալ ժողովրդի մոտ: Նույն Սուրբ Հովհաննես մատուռի երկրորդ բաժանմունքում գլխաշորեր կամ շորի կտորներ են թողնում, որոնցից յուրաքանչյուրի վրա խաչեր են

ասեղնագործած լինում: Ըստ բանասացների՝ ծառի վրա կապվող թաշկինակները և խաչազարդ կտորները ժողովրդի մեջ հայտնի են «շուշվա» ընդհանրական անվանումով և այն խորհուրդն ունեն, որ ուխտավորն իրենից մի իր է թողնում սրբին, որպեսզի վերջինս իր «սրտի մուրազը» կատարի: Ուխտատեղի են բերվում նաև սրբապատկերներ, մանրակերտ եկեղեցիներ:

Որևէ իր թողնելու սովորույթի ակունքները գալիս են նախնադարյան վաղ ժամանակներից և, դրանք բնության անշունչ առարկաների ոգեղենացման, ինչպես նաև մարդու և ոգեղենացած առարկաների միջև պատկերացվող խորհրդավոր կապի արտահայտություններ են [4, 6]: Այդ շրջանին են վերաբերում նաև հայերի մեջ ցայսօր գոյատևող ժայռերի, ծառերի, ջրի, կենդանիների ու թռչունների նկատմամբ պաշտամունքի ակունքները, որոնք բոլորն էլ դրսևորվում են՝ կապված Սուրբ Հովհաննես սրբատեղիի հետ:

Դեռ մատուռին չհասած՝ սանդուղքի աջ կողմում մատաղ անելու վայրն է: Մատաղի կամ զոհաբերության հիմնական կենդանիներն են գառը, այնուհետև ոչխարը, ցուլը, իսկ թռչուններից՝ աքաղաղը: Զոհաբերության այդ սովորույթը նույնպես քրիստոնեական միջավայր է եկել նախնադարյան ժամանակներից և հնագույն տոտեմիստական պատկերացումների վերապրուկ է [4, 7]: Հետագայում քրիստոնեությունը, ինչպես շատ հարցերում, այս դեպքում ևս, այսպես ասած, «հաշտեցրել» է հինն ու նորը, և մատաղը ստացել է Աստծուն նվիրաբերելու և աղքատներին ողորմություն տալու իմաստ [5]:

Աստվածաշնչյան «աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն, և ըստ նրա տվածի էլ՝ Աստված պիտի հատուցի նրան (Առակ. ԺԹ 17)»[6] մտքի խորհուրդն է, որ մարդկանց կողմից իրականացվում է զոհաբերության միջոցով: Սուրբ Հովհաննես, ինչպես նաև մյուս սրբատեղիներում, գավառցիների կողմից մատաղ անելու հիմնական պատճառներն են՝ երեխայի ծնվելը կամ հակառակ երևույթը, երբ զույգը չբերության խնդիր ունի, երազ տեսնելը, հիվանդություն ունենալը կամ դրանից բուժվելը, որևէ դժբախտ պատահարից փրկվելը և այլն: Սբ. Հովհաննես ուխտի են գնում նաև տարբեր սրբերի տոնակատարությունների օրերին: Օրինակ Հովհաննես կամ Մկրտիչ անունով անդամ ունեցող ընտանիքները (ըստ ցանկության) հունվարի 14-ին՝ Հովհաննես Մկրտչի տոնակատարության օրը, գնում են այդտեղ մոմ վառելու, հաճախ՝ մատաղ անելու:

Վերջին աստիճանը բարձրանալով՝ հասնում ենք այն հարթությանը, որի վրա գտնվում է մատուռը: Այն շրջապատված է շուրջ երեք տասնյակ խաչքարերով և տապանաքարերով: Ժայռերի մեջ և դեպի մատուռ տա-

նող բարեկարգված հարթության վրա կանգնեցված բազմաթիվ այդ խաչքարերը նվիրաբերված են տարբեր գավառցիների կողմից, և դրանց մեծ մասի, ինչպես նաև շինության դիմապատի ու դռան վրա փորագրված են բարերարների անունները: Դրանց գերակշիռ մասը 21-րդ դարի հուշարձաններ են:

Մատուռը ներսից բաղկացած է, ինչպես նշվեց, երեք փոքր բաժանմունքներից, որոնցից յուրաքանչյուրում տեղեր են հատկացված մոմ վառելու համար: Առաջին բաժանմունքում է գտնվում վերը հիշատակված 1595 թվականի խաչքարը, որը այսօր գրեթե անընթեռնելի է դարձել ժամանակի և մոմերից առաջացած մոխրաշերտի պատճառով: Ընդ որում՝ մոմերը վառում են ոչ միայն իրենց համար հատուկ նախատեսված ճրագակալների վրա, այլև հենց ժայռի պատերին: Այդ պատճառով էլ այսօր մատուռը ներսից լիովին մոմապատված է:

Առհասարակ, գավառցիները, Սուրբ Հովհաննեսի սրբավայր ասելով, հասկանում են ոչ միայն մատուռը, այլև քարայրից մոտ հարյուր քայլ հեռու գտնվող հանքային աղբյուրը, որը հնում կոչվել է «Կաթնաղբյուր», իսկ այսօր գավառցիները այն անվանում են նաև «Ճլճլիկ»[1]: Հայտնի է, որ դեռևս հեթանոսական շրջանից պաշտամունքի առարկա են եղել աղբյուրները, որոնց վերագրվել է տարբեր հիվանդություններ բուժելու հատկություն: Դրանք առհասարակ ժողովրդի մեջ հայտնի են եղել «լուսաղբյուր» և «կաթնաղբյուր» անուններով [7, 18]: Սուրբ Հովհաննես ուխտատեղիին մոտ այս աղբյուրի պաշտամունքը, որը այսօր ժողովրդի մեջ ընկալվում է զուտ որպես քրիստոնեական երևույթ, դրսևորվում է ջրին բուժիչ և գերբնական հատկություններ վերագրելով: Այդ պատճառով էլ սրբավայրում մոմ վառելուց հետո մարդիկ անպայման խմում են այդ հանքային աղբյուրի ջրից և հետներն էլ դրանից տուն տանում ընտանիքի անդամներին կամ հարազատներին «սուրբ ջրից բաժին հանելու համար»:

Սուրբ Հովհաննես սրբավայրի հետ կապված մի շարք զրույցներ կան պահպանված և՛ մեր օրերից, և՛ առավել հին ժամանակներից: Հետաքրքրական է այդ հին ու նոր ավանդությունների զուգահեռ դիտարկումը, ինչը որոշ չափով լույս է սփռում բնակչության կրոնական սովորույթների և նույնիսկ նրանց ժողովրդագրական կազմի փոփոխությունների մասին: Բերենք մի քանիսը:

Շուրջ քսան տարի մատուռն ինքնակամ իր ընտանիքի հետ հսկող

[1] Այդպես են անվանում, քանի որ աղբյուրը խիստ բարակ է և իր փոքրիկ ավազանին հասնելով ցածր ձայն է առաջանում: Ձրի այդ ձայնը գավառցիները կոչում են «ճլճլալ», այդտեղից էլ՝ «ճլճլիկ» բառը:

Ալիկը, որը այդ տարիների ընթացքում բազմաթիվ երևույթների է ականատես եղել սրբավայրի հետ կապված, մի առիթով պատմել է, որ 1988թ. մի կույր կին այդ ջրով մի քանի անգամ լվացվելուց հետո սկսել է տեսնել… [3]

Նա նաև պատմել է մի դեպք, որը տեղի է ունեցել 2005 թվականին:

Լացակումած մի կին եկել է մոմ վառելու և աղոթելու իր որդու համար, ում պետք է վիրահատեին այդ օրը: «Սրբավայրում այդ օրը դեռ ոչ մի մոմ չէին վառել,- պատմել է Ալիկը:- Խեղճ կինը երկար աղոթելուց հետո մոմերն առանց վառելու դրեց մոմակալի մեջ և մոտեցավ ինձ կրակ խնդրելու: Դժբախտաբար ես էլ լուցկի չունեի: Եվ պատկերացրեք մեր զարմանքը, երբ մտածելով մոտենում էինք մոմերին ու տեսանք, որ մոմերն արդեն վառվում էին, առանց մեր միջամտության…»[3]

Հետաքրքրական է, որ նման մի դեպք էլ գրանցել է Երվանդ Լալայանը 20-րդ դարի սկզբին: Ըստ Ե. Լալայանի՝ մի պառավ կին իրեն պատմել է, որ երբ 14 տարեկան է եղել, քրոջ հետ գնացել է Ս. Հովհաննես ուխտի: Ցանկանալով մոմերը վառել՝ հասկացել են, որ մոռացել են լուցկի բերել: Նեղսրտած և իրենց մոռացկուտության վրա զայրացած՝ մոմերը դրել են մատուռում և դուրս եկել: Քարայրից փոքր-ինչ հեռանալով՝ ետ են շրջվել և տեսել, որ մոմերը վառվում են [2, 101]:

Մեկ այլ հետաքրքիր զրույց էլ պահպանվել է մի քրդի հետ կապված: Մի քուրդ ս. Հովհաննեսի մատուռի մոտով անցնելիս կանգ է առել և բարձրաձայն ասել «Ս. Հովհաննես, այնպես արա, որ ոտքերիս մաշիկները այս մեկ տարում չմաշվեն, թե չէ…» սկսում է հայհոյել: Այդ խոսքերից հետո քրդի ոտքերը թուլացել են և նա չի կարողացել քայլել: Նրան իր տուն են տարել, որտեղ մեկ տարի նա թուլացած ոտքերով է մնացել, մինչև հաջորդ տարի՝ դեպքի նախորդ օրը: Այդ օրը նրա ոտքերը կրկին առողջացել են և նա իր նոր մնացած մաշիկներով գնացել է Սուրբ Հովհաննես մատուռ՝ իր հետ սրբին տանելով մեկ մատաղացու [2, 101]:

Այս զրույցների դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ Ս. Հովհաննես սրբավայրի զորության նկատմամբ բնակչությունը մեծ հավատ է ունեցել և ունի: Հատկապես նկատելի է հավատը ժայռի ու մերձակա աղբյուրի՝ հիվանդություններ բուժելու հետ կապված: Բացի այդ, հարկ է ուշադրություն դարձնել սրբավայրի մասին ավանդությունում քրդի մասին հիշատակությանը. դա թույլ է տալիս եզրակացնել, որ ի տարբերություն ներկա ժամանակների՝ առնվազն մեկ դար առաջ Գավառի տարածքում հայերի կողքին բնակվել են նաև քրդեր, որոնք նույնպես հավատացել են այս սրբի զորությանը:

Մատուռի մուտքից մոտ 10 մետր առաջ գտնվող և աղբյուրի

վերևում կանգնեցված խաչքարերի հետ կապված կա մի հավատալիքային սովորույթ. դրանց վրա փոքրիկ քարեր են ամրացնում հետևյալ կերպ. երազանք պահելով քարը սեղմում են խաչքարին, այնուհետ երեք անգամ աջ ու ձախ շարժում և թողնում: Եթե քարը չի պոկվում, նշանակում է երազանքը կիրականանա, եթե պոկվում է՝ ոչ: Իսկ հնում նմանատիպ մեկ այլ սովորույթ է եղել. քարայրի և նրա մոտ գտնվող մի քարի մեջ մեխեր են մտցրել և եթե մեխն առանց ծռվելու մինչև վերջ մտել է քարի մեջ, նշանակել է՝ պահած երազանքը իրականանալու է [2, 100]:

Սուրբ Հովհաննեսի քարայրից փոքր-ինչ հեռու գտնվում է ևս մեկ ուխտատեղի Սուրբ Գևորգ անունով: Սակայն մարդիկ միայն Սբ. Գևորգ գնալու սովորություն չունեն և երբեմն այնտեղ գնում են Սուրբ Հովհաննեսում մոմ վառելուց հետո: Ըստ ավանդության՝ այստեղ ճգնել է Թովմա ճգնավորը, որի անունը հիշատակվում է Սբ. Գևորգ և Սբ. Հովհաննես սրբավայրերի միջև ընկած տարածքում գտնվող մի ժայռաբեկորի վրա թողնված արձանագրությունում: Դրանում մասնավորապես ասվում է. «Ի թվին ՋՂԸ (=1549) Թոմայս ծառա Աստուծոյ եկ Գավառէն ի ծառայութն սբ. Ովանիսին, շատ աշխատեցաք. յիշեցեք ի Քրիստոս»[8, 66]: Քանի որ, ինչպես դեռևս Ղևոնդ Ալիշանն է ասել, Սուրբ Գևորգը գտնվում է «ի դժուարակոխ վայրի»[9, 43], այնտեղ հիմնականում բարձրանում են մեծահասակները, իսկ երեխաներին թույլ չեն տալիս[2]:

Բանդի թաղում է գտնվում նաև Գավառի ամենահին՝ Սուրբ Կարապետ բազիլիկ եկեղեցին: Դրա հիմնադրման մասին ավանդված է հետևյալը: Հին Բայազետից գաղթը 1829-1830 թթ. կազմակերպել են Արծրունի եղբայրները՝ Բարսեղ և Մկրտիչ աղաները: Հենց նրանց և հատկապես Բարսեղ աղայի կողմից է հիմնադրվել Նոր Բայազետ քաղաքը և նա է իրականացրել նաև եկեղեցու կառուցումը [10], որը բայազետցիները իրենց հայրենի քաղաքի եկեղեցու պատվին կոչել են Սուրբ Կարապետ [9, 43]:

Սբ. Կարապետը կառուցվել է 1848 կամ 1838 թվականին (կառուցման տարեթվի վերաբերյալ միանշանակ կարծիք չկա): Սկզբում այն կիսաքարաշեն-կիսափայտաշեն է եղել և միայն հետո՝ 1865 թ. է կառուցվել եկեղեցին սրբատաշ քարերով [10]:

Խորհրդային տարիներին, ինչպես բազմաթիվ այլ եկեղեցիներ, Սբ. Կարապետը ևս փակվել և պահեստի է վերածվել: Այն կիսավեր վիճակում է մնացել մինչև 2012 թվականը, երբ Գավառի շուրջ 65 համաքաղաքացիներ ծնունդով գավառցի Սամվել Սինանյանի գլխավորությամբ ձեռ-

[2] Սրբատեղին Սուրբ Հովհաննեսից փոքր-ինչ վերև է գտնվում, անզգուշության դեպքում հեշտությամբ կարելի է ժայռերից ցած գլորվել:

նարկում են նորբայազետցիների առաջին հավատո տունը վերականգնելու աշխատանքները: 2012 թ. մայիսից նորոգման աշխատանքները սկսվում են, և արդեն աշնանը, բարերարների խոստմանը համաձայն, եկեղեցին պատրաստ էր վերաօծման, որը տեղի է ունեցել 2012 թ. նոյեմբերի 17-ին՝ վերածվելով ժողովրդական տոնախմբության և նշանավորվելով նաև 25 երեխաների մկրտությամբ: Երկրորդ կյանք ստացած եկեղեցու առաջին սուրբ պատարագը մատուցվել է նոյեմբերի 18-ին՝ ձեռամբ Գեղարքունյաց թեմի այն ժամանակվա առաջնորդ Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի:

Վերաշինման աշխատանքները կատարվել են բավական հմտորեն. մաքրվել և պահպանվել են եկեղեցու տարածքում առկա երկու խաչքարերը: Մեկը կառուցման ժամանակ ագուցվել է եկեղեցու արևելյան պատին կենտրոնին և ունի հետևյալ բովանդակությունը. «Խաչս բարէխաւս Մարմոս եպիսկոպոսին. Մելքսեթ կազմող»[8, 66]: Իսկ երկրորդը ագուցված է եկեղեցու շրջապարսպի մուտքի մոտ. «Խաչս բարեխաւս Բարեքին. Քիրամ կազմող»[8, 66]: Այս արձանագրությունների կազմման ժամանակը որոշվում է դրանցում հիշատակված երկու վարպետներով, որոնք 16-րդ դարի երկրորդ կեսի անձիք են [8, 66]:

Եկեղեցու համար կառուցվել է զանգակատուն, հոգևոր տունը նաև ապահովված է անհրաժեշտ գույքով և սպասքով: Բացի այդ, եկեղեցին ներքուստ զարդարված է Արտյոմ Մելքոնյանի հեղինակած խորանի աստվածամոր և ատյանի 12 առաքյալների նկարներով:

Վերակառուցումը երկրորդ շունչ տվեց ոչ միայն եկեղեցու արտաքին տեսքին, այլև բնակչության կյանքում նրա ունեցած երբեմնի կարևոր նշանակությանը: Վերաօծումից հետո բնակչությունը սկսել է այդտեղ հաճախել մոմ վառելու, Սբ. Կարապետում տեղի են ունենում նաև պատարագներ, պսակադրության արարողություններ, մկրտություններ:

1920 թվականից հետո, խորհրդային երկրի մշակութային և գիտական մակարդակի վերելքի պայմաններում, նոր թափ և որակ էր հաղորդվել հնագիտական-հետախուզական ու սիստեմատիկ աշխատանքներին: 1924-1964 թթ. հնագիտական աշխատանքների համատեքստում ուսումնասիրությունների է ենթարկվել նաև Կամո քաղաքը [11, 6]՝ ներկայիս Գավառը: Քաղաքի կենտրոնին մոտ, դեպի արևելք գտնվող ժայռի վրա հայտնաբերվել են ուշ բրոնզի դարաշրջանի կիկլոպյան ամրոցի և դրա տարածքում հետագայում՝ ուրարտական ժամանակաշրջանում, կառուցված բերդ-ամրոցի ավերակներ [11, 7]: Մասնավորապես, 1927 թ. այդ ժայռի վրա հայտնաբերվել է մի արձանագրություն, որում Ռուսա 1-ինը հայտարարում է, որ նվաճել է Վելիքուխե երկիրը, արտաքսել նրա

թագավորին, նշանակել կառավարիչ, կառուցել հզոր ամրոց՝ անվանելով այն Խալդեի քաղաք [7, 7]: Այն բարձունքը, որի վրա կառուցված է եղել նախաուրարտական և ուրարտական ամրոցը, ժողովրդի կողմից ստացել է «Դարի գլուխ[3]»՝ բայազետի բարբառով «Դարի գլոխ» և «Բերդի գլուխ» անվանումները: Ժայռի հնագույն, արևմտյան մասը եռանկյուն սուր ծայրն է, ուր շարքով կանգնած են հիանալի քանդակներով խաչքարեր և մեծամեծ տապանաքարեր, որոնք պատկանել են քաղաքի տանուտերերին և նրանց տոհմակիցներին [8, 49]: Քարափի վրայի հարթությունը, որի եռանկյունաձև մասում կանգնած է եղել բերդ-ամրոցը, միջին դարերից վեր է ածված գերեզմանատան [1, 110]. դրա տարածքում այժմ էլ, խաչքարերով ու տապանաքարերով շրջապատված, կիսավեր վիճակում կանգնած է Ս. Ստեփանոս անունը կրող, հասարակ քարերից կառուցված մի մատուռ: Բազմաթիվ խաչքարերից մեկը շինության արևելյան պատի մոտ է գտնվում, որի ստորին պատվանդանի արձանագրությունը հնագույնն է Գավառի տարածքում: Դրա բովանդակությունը հետևյալն է. «Ի թուին ԲՃՂԱ ես Ամիր Վահապս որդի Վասիլ իշխանի շինեցի զէկեղեցիս և զգաւառանո առուն հանեցի կնի վանից ձորէն եւ սարերէն» [1, 111. 8, 52]: Մասնագետները ԲՃՂԱ՝ 291 թվականը, տարբեր կերպ են հաշվում. մի դեպքում Սմբատյանցն ու Լալայանը 291-ին գումարել են Հայոց մեծ թվականը՝ 551, ստանալով 842, իսկ մյուս դեպքում Ավդալբեգյանը հաշվել է փոքր թվականով՝ 1083 գումարելով և ստանալով 1374 [8, 52]: Խաչքարի քանդակների ոճը նկատի ունենալով՝ ընդունվում է երկրորդ տարբերակը, իսկ 1374 թվականը համարվում է Սուրբ Ստեփանոս մատուռի կառուցման տարեթիվ:

Հայտնի է, որ խորհրդային տարիներին Սբ. Ստեփանոս մատուռը հսկել է Սալաթ անունով մի կին: Առհասարակ, 20-րդ դարում այս մատուռը գործել է և մարդիկ այցելել են այդտեղ մոմ վառելու նպատակով: Սակայն վերջին 30-40 տարիների ընթացքում Սուրբ Ստեփանոս կիսաքանդ մատուռը գրեթե լիովին մոռացության է մատնվել բնակչության կողմից: Քաղաքի մի քանի տարեց մարդկանց հետ զրույցի արդյունքում պարզվեց, որ դա պայմանավորված է եղել թաղման արարողության մեջ տեղի ունեցած որոշակի փոփոխություններով:

Բանն այն է, որ նախկինում մահացածի մարմինը նրա մտերմներից

[3] Հ. Աճառյանի Հայերեն արմատական բառարանում դար նշանակում է «բարձրաւանդակ, զառիվայր և շեղ բարձրութիւն», ինչպես նաև «եզերք, ափ» (Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1926, էջ 631): Գավոջցիները «Դարի գլուխ» կամ «Դարի գլոխ» արտահայտությունը օգտագործում են՝ նկատի ունենալով բառի բերած առաջին իմաստը:

մի քանիսը՝ թափորի ուղեկցությամբ, պատգարակով տանում էին մինչև գերեզմանատուն: Եվ քանի որ Սուրբ Ստեփանոսը գտնվում էր գերեզմանատան տարածքում, թաղման թափորի անդամներից շատերը մտնում և մոմ էին վառում այնտեղ: Իսկ այն բանից հետո, երբ ավտոմեքենաները քաղաքում սկսում են շատանալ և ինչպես մահացածի մարմինը, այնպես էլ՝ արարողության անդամներին այդուհետ մեքենաներով են տեղափոխում, իսկ մեքենաների ճանապարհին այլ էր, Սբ. Ստեփանոսը «մեկուսանում է» և քիչ-քիչ մոռացվում քաղաքացիների մոտ:

Գավառ քաղաքի ամենամեծ եկեղեցին Սուրբ Աստվածածինն է: Այն Հայաստանյայց առաքելական եկեղեցու Գեղարքունիքի թեմի առաջնորդանիստն է [12, 205]: Եկեղեցու կառուցման նախաձեռնողը 1901թ. Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ) եկեղեցիների բարեկարգիչ նշանակված Խորեն աբեղա Մուրադբեկյան է եղել[4]: Եկեղեցու շենքի ճարտարապետը Վասիլի Միրզոյանն է:

1902թ. Մուրադբեկյանի ջանքերով և բարեգործ Հայրապետ Խաչատրյանի (Կոլոտ Հայրապետ) դրամական օգնությամբ և հասարակության հանգանակած դրամական միջոցներով հիմք է դրվել Նոր Բայազետ քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցմանը: 1902թ. հուլիսի 14-ին Սևանի վանքի վանահայր Սարգիս եպիսկոպոս Փիլոյանը, տեղի հոգևորականության մասնակցությամբ կատարել է նորակառույց եկեղեցու հիմնօրհներգությունը:

«Նոր Բայազետի Ս. Աստվածածին եկեղեցին մոտ 8 տարի է, ինչ փակված մնում էր խարխուլ լինելու համար, արդեն քանդել են և կամենում են նորից շինել: Եկեղեցու հին շենքի քանդելու աշխատանքին, որ 1000 ռուբլի ավելի փող կնստեր հասարակության վրա, ձրիաբար մասնակցեցին տեղիս շինարարները և այլ դասակարգերը: Աշխատանքին մասնակցում էին նաև առաջնակարգ վաճառականները անձամբ: Նույնիսկ շրջակա գյուղացիները գործակալի հորդորմամբ, մասնակցում են մեր եկեղեցու աշխատանքին՝ իրենց սայլերով ձրիաբար քար ու հող կրելով: Աշխատանքի ամբողջ ընթացում ամեն օր նվագում է ասիական երաժշտությունը՝ դափ ու զուռնան, ավելի գործելու եռանդ ներշնչելով բանվորներին, որոնք իրավ որ, մի սիրտ և մի հոգի դարձած աշխատում են անտրտունջ, օրական 200-300 ձրի բանվոր տալով,-գրում է «Մշակ» թերթը»[13]:

Շինարարական աշխատանքները ավարտվել են 1905 թ.. առաջին պատարագը մատուցել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը

[4] 1932 թվականի նոյեմբերի 13-ին օծվել է Ամենայն հայոց կաթողիկոս:

(Խրիմյան Հայրիկ)[13]:

Իր գործառնական նշանակությամբ Սուրբ Աստվածածին եկեղեցին ամենամեծ դերն ունի գավառցիների կյանքում: Այդտեղ են տեղի ունենում բոլոր եկեղեցական արարողությունները՝ պատարագներ, պսակադրություններ, մկրտություններ, հազվադեպ նաև՝ թաղման արարողություններ[5]:

Հարկ է նշել, որ զոհաբերության կամ մատաղի իրողության հետ կապված Սուրբ Աստվածածին եկեղեցին և Սուրբ Հովհաննես մատուռն ունեն որոշակիորեն տարբեր գործառույթներ: Եթե կենդանին[6] պետք է մորթվի զոհաբերություն անող անձի տան տարածքում, ապա Սուրբ Աստվածածնում միայն տանում և օրհնում են աղը: Այդ օրհնված աղը տուն բերելով՝ լցնում են զոհաբերվող կենդանու բերանը, հետո միայն մորթում: Ի տարբերություն Սբ. Աստվածածին եկեղեցու, որի տարածքում մատաղ անելու սովորությունը գավառցիների մոտ բացակայում է, Սուրբ Հովհաննեսի տարածքում, ինչպես արդեն նշվել է, նույնիսկ հատուկ վայր է հատկացված այդ արարողությունն իրականացնելու համար: Ընդ որում, եթե տանը մատաղ անելու պարագայում օրհնած աղ կերակրելը պարտադիր է, ապա «սրբի դռանը»՝ այսինքն որևէ սրբի մատուռի մոտ, սրբավայրում մատաղ անելու դեպքում աղ կերակրելը կամընտրական բնույթ է կրում:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում կարելի է նշել, որ Գավառի սրբավայրերը ժամանակի ընթացքում կրել են որոշակի փոփոխություններ՝ տարածական և գործառնական առումներով: Իրականացվել են վերանորոգման և վերաշինման աշխատանքներ, որոշ սրբավայրեր երկրորդ շունչ են ստացել: Որոշներն էլ կորցրել են իրենց երբեմնի նշանակությունը բնակչության հոգևոր կյանքում: Սակայն ակներև է, որ բնակչությունը պահպանում է իր նախնիների հոգևոր ավանդույթները, և կապը մարդու և սրբավայրերի միջև Գավառում բավականին ամուր է:

[5] Տեքստում նշված է հազվադեպ բառը, քանի որ Գավառի տարածաշրջանում եկեղեցով թաղման արարողությունը մեծ տարածում չունի:

[6] Գավառի տարածաշրջանում զոհաբերության ամենատարածված կենդանին գառն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լալայան Ե. Ա., Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք. Նոր-Բայազէտ քաղաք, Ազգագրական հանդես, 1908, 18, 2, 110-115:
2. Լալայան Ե. Ա., Նոր-Բայազէտի գաւառ. Սրբեր, Ազգագրական հանդես, 1908, 17, 1, 100-103:
3. Գզրարյան Դ., Սուրբ Հովհաննես սրբավայր, www.rau.am/radio/index.php
4. Հարությունյան Ս. Բ., Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, «Մուղնի» հրատ., 2001, 81:
5. http://www.armenianchurch.org/index.jsp?sid
6. http://ter-hambardzum.net/մատաղի-խորհուրդը-և-պատրաստման-ձևը
7. Ղարագյոզյան Ա. Հ., Գեղամա երկիր (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, Նոյյան տապան, 2004, 35:
8. Բարխուդարյան Ս. Գ., Կամո քաղաք (Նոր-Բայազետ-Գավառ), Դիվան հայ վիմագրության, 1981, հ. 4, 2, 49-67:
9. Ալիշան Ղ., Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, 565: https://archive.org/details/SisakanTeghagrutiwnSiwneatsAshxarhisisakanTopographyOfTheLandof
10. http://miutyungegharkunyats.blogspot.am/p/blog-page_5065.html
11. Մարտիրոսյան Հ. Ա., Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Հայաստանի հնագիտական հուշարձանները 2. Բրոնզեդարյան հուշարձաններ., Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1964, հ. 2, 156:
12. Գեղարքունիքի թեմ, Քրիստոնյա Հայաստան, 2002, հ. 1, 205:
13. Մշակ, 25 հուլիսի, 1902:

ПРОСТРАНСТВЕННОЕ И ФУНКЦИОНАЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ СВЯТЫХ МЕСТ ГОРОДА ГАВАР

Ани Оганян
ГГУ, История, 4-ый курс

РЕЗЮМЕ

***Ключевые слова**: церковь, святилище, место паломничества, население, традиция, легенда, Гавар*

Статья посвящена выявлению значимости святых мест – Святого Иваннеса, Святого Геворга, Святого Карапета, Святого Степаноса и Святого Аствацацина, в городе Гавар, в духовной, культурной жизни населения. На основе имеющейся литературы, собственным этнографическим наблюдениям, представлен процесс формирования святых мест, их функциональное значение. Представлены народные традиции и обычаи, связанные со святыням, как часть культуры ведения быта.

THE SPATIAL AND FUNCTIONAL SIGNIFICANCE OF THE HOLY PLACES OF GAVAR

Ani Ohanyan
GSU, History 4th year

SUMMARY

***Key words:** Church, sanctuary, a place of pilgrimage, population, tradition, legend, Gavar*

The article is dedicated to sanctuaries of Gavar: St. Hovhannes, St. Gevorg, St. Karapet, St. Stepanos and St. Astvatsatsin churches, revealing the significance of spiritual, cultural life of the population. Formation process and operational importance of the sanctuaries are submitted based on the available literature and own ethnographic observations. National customs and traditions associated with the sanctuaries as part of everyday culture are presented.

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

АРМЯНСКИЙ ЯЗЫК, ЛИТЕРАТУРА

ARMENIAN LANGUAGE, LITERATURE

ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Անի Չատինյան
ՎՊՀ, Բանասիրական ֆակուլտետ, Հայոց լեզու և գրականություն մագիստրատուրա 1-ին կուրս
*Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ **Լիլիթ Պետրոսյան***

***Հանգուցային բառեր՝** Համանուն վերջավորություններ, քերականական իմաստներ, եղանակաժամանակային ձևեր, դիմաթվային ձևեր, ներկայի հիմք, անցյալի հիմք, կրավորաձև խոնարհում, ներգործաձև խոնարհում*

Համանունությունը լեզվի մեջ հանդես եկող հայտնի երևույթներից է՝ դիտված ու բնութագրված լեզվաբանության կողմից՝ որպես նույն ձևի, բայց տարբեր բնույթի ու արժեքի միավորներ: Համանուն բառերի ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն բառարանագրության, այլև լեզվի ընդհանուր տեսության որոշ հարցերի ուսումնասիրման տեսակետից: Համանունությամբ կարող են օժտված լինել լեզվական տարբեր մակարդակների միավորները: Համանուն բառերի ծագումը, զարգացումը, գործառությունն ուսումնասիրվում են տարբեր լեզվաբանական ուղղությունների կողմից: «Լեզվաբանության մեջ ոչ մի բնագավառ չի ունեցել այնպիսի արագընթաց հաջողություններ, ինչպես համանունների ուսումնասիրությունները»,– նկատել է անգլիացի լեզվաբան Ս. Ուլմանը:[4] Համանունների ուսումնասիրությամբ զբաղվող ենթագիտաճյուղը կոչվում է համանունաբանություն: Ուսումնասիրելով համանուններին տրվող տարբեր սահմանումները՝ առանձնացրել ենք Ռ. Ն. Շալունցի հետևյալ ձևակերպումը. «Համանուն են կոչվում երկու և ավելի բառեր և բառաձևեր, որոնք արտասանությամբ նույնն են, բայց հակադրվում են բառական կամ բառաքերականական իմաստներով»:[5, 321]

Սույն հոդվածում առանձնացրել ենք միջին հայերենի դիմավոր բայերի համանուն վերջավորությունները՝ քննելով դրանց առաջացման պատճառները և իմաստային առանձնահատկությունները: Բայական համակարգում կիրառվող վերջավորութուններն ունեն տարբեր եղանակաժամանակային և դիմաթվային արտահայտությունները, քննել ենք զուգադրության մեթոդով:

Միջին հայերենում արդեն հաճախադեպ էր դիմավոր բայերի և եղանակավորող բառերի համատեղ կիրառությունը, որի պատճառով էլ ավելանում են բայի եղանակային իմաստները և գրաբարի երեք եղանակներից երկուսը՝ սահմանականը և հրամայականը, պահպանում են իրենց իմաստային առանձնահատկությունները, իսկ ստորադասականի իմաս-

տը ճյուղավորվում է, և սկսում են գործածվել ըղձական, հարկադրական և ենթադրական եղանակները: Ինչպես նկատեցինք, ստորադասական եղանակն իր երկու ապառնիներով գրեթե անգործության է մատնվում և դուրս է գալիս կիրառությունից: Բավական է ասել, որ Հովհաննես Թլկուրանցի բանաստեղծը ստորադասականի գործածության միայն մեկ դեպք ունի, այն էլ գրաբարյան քարացած արտահայտության մեջ.

«Ով արբէ զդայ սրբութեամբ,
Ոչ ճաշակէ զմահ յաւիտեան.
Նա ի յիս ***բընակեսցէ***
Եւ ես ի նմա անգրաւական» (Տաղեր, էջ 168):

Եղանակների փոփոխությանը զուգահեռ կատարվում է նաև ժամանակային ձևերի փոփոխություն, և պարզ ժամանակային ձևերին փոխարինելու են գալիս բաղադրյալ ժամանակաձևերը՝ արտահայտված վաղակատար, ապակատար և անկատար դերբայներով:

Սահմանական ներկան և անկատար անցյալը, հիմնականում պահպանելով իրենց դիմաթվային արտահայտությունները, սկսում է կիրառվել ***կու*** մասնիկի հետ: ***Կու*** մասնիկը մեր գրավոր աղբյուրներում առաջին անգամ երևում է XII դարում, և Արսեն Այտընյանը, քննելով այն հարցը[3, 56-57], թե ինչ բառ է այս մասնիկը, առաջ է քաշել այն տեսակետը, թե ‹‹հնոց ***կու*** մասնիկը՝ ***կայ ու*** բառերուն բաղադրութիւնն է, եւ թէ ամփոփմամբ ըսուած է ***կու նայի***՝ փոխանակ ***կայ ու նայի»***: Կու մասնիկը հետագայում ու ձայնավորի հնչունափոխությամբ դարձել է ***կը, կի,*** իսկ նոր ժամանակներում՝ ***կ՛:***

Գրաբարյան ***էք*** վերջավորությանը հավելվում են նաև մյուս դիմաթվային արտահայտությունները՝ որպես համանուններ, օրինակ՝ միջին-հայերենյան պայմանական եղանակը կազմվում է գրաբարյան ներկա բայաձևերի վրա ***կու*** մասնիկի ավելացումով: Կազմության տեսակետից բոլորովին չի տարբերվում միջին հայերենի ներկայից: Այսինքն՝ նախադասություններից դուրս չի կարելի որոշել սահմանական ներկա և անցյալ անկատարը՝ միջին հայերենի պայմանականի ապառնիից և անցյալ ապառնիից: Այս է պատճառը, որ արևմտահայ քերականները պայմանական եղանակ առանձին չեն ընդունում: [3, 56-57]

Այսպիսով՝ համանունությունը շարունակում է պահպանել ***էք*** վերջավորությունը՝ բոլոր դեպքերում արտահայտելով հոգնակի թվի, ներկրորդ դեմքի իմաստ.

ա. ներկայի հիմքին գումարվելով՝ արտահայտում է իրականում կատարվող գործողության գաղափար՝ զուգադրվելով ***կու*** մասնիկին, օրինակ՝ կու գրեմ, կու պատմեմ:

բ. նույն ներկայի ձևով արտահայտում է նաև հրամանով կատարվող գործողության գաղափար՝ զուգադրվելով ***մի՛*** մասնիկին: Ներկայի և

անցյալ հիմքերին միանալով՝ եղանակաժամանակային տարբեր համանուններ է դրսևորում ***էք*** ձևը: Այն, միանալով առաջին հիմքին, կազմում է սահմանական ներկան (կու ծախէք, կու սիրէք, կու զատէք), իսկ երկրորդ հիմքին ավելանալով՝ կազմում է արգելական հրամայականը (հատանել՝ հատ-հատէք):

գ. անցյալ կատարյալի հիմքին գումարվելով՝ արտահայտում է իրականում կատարված գործողության գաղափար, ինչպես՝ ***շարժեցէ՛ք***:

է վերջավորրությունը, միանալով բայի առաջին հիմքին, ձևավորում է ներգործածձև խոնարհման սահմանական անկատար ներկա ժամանակածևը, օրինակ՝ ***կու գտանէ, կու շարժէ*** և ***ե*** ու ***ի*** (միջին հայերենի զարգացման 15-18-րդ դդ.) խոնարհման պարզ բայերի բուն հրամայականը ***(գրէ, հայէ)*** հմմտ. գրել-գրեաց-գրե՛ (եա>է):

«*Մէկ **խոսէ՛** միրտս հաւանայ*» (ՆՀԲ էջ 69):

Այսպիսով՝ միջին հայերենյան սահմանական ներկան (անկատար ներկա) և անցյալ (անկատար անցյալ) ժամանակածևերը նույն գրաբարյան ձևերն են ***կու*** մասնիկի հավելումով (կու գրեմ, կու գրէի):

Առանց դիմաթվային փոփոխությունների է գործածվում ***-ան*** վերջավորությունը՝ կցվելով մի դեպքում առաջին, մյուս դեպպքում՝ երկրորդ հիմքին: Առաջին հիմքին ավելանալով՝ կազմվում է սահմանական ներկան (*կու աղամ*), երկրորդ հիմքին ավելանալով՝ անցյալ կատարյալը՝ հոգնակի թվի 3-րդ դեմքի իմաստով:

-ի վերջավորությունը, միանալով բայի առաջին հիմքին, ձևավորում է կրավորաձև խոնարհման սահմանական ներկա ժամանակածը, օր.՝ ***կու իջանի, կու սիրի*** և այլն: 2-րդ հիմքին միանալով՝ ձևավորում է ներգործածձև խոնարհման անցյալ կատարյալը՝ բոլոր դեպքերում արտահայտելով եզակի թվի 1-ին դեմքի իմաստ: Օր.՝ ***սիրեցի, խաղացի:***

-իք վերջավորությունը, կցվելով 1-ին հիմքին, ձևավորում է կրավորաձև խոնարհման սահմանական ներկան, օր.՝ ***կու շարժիք***, և անցյալ անկատարը, օր.՝ ***կու շարժէիք:*** Երկրորդ հիմքում այն հանդես է գալիս իբրև ***-էք*** վերջավորության տարբերակ՝ հոգնակի թվի, 2-րդ դեմքի իմաստով, օր.՝ ***կու գրեցէք*** կամ ***կու գրեցիք:***

-ին վերջավորությունը՝ անցյալ անկատարում հանդես է գալիս որպես ***-էին*** վերջավորության բաղադրիչ՝ արտահայտելով հոգնակի թվի 3-րդ դեմքի իմաստ: Նույն դիմաթվային վերջավորությամբ է հանդես գալիս նաև անցյալ կատարյալում՝ կցվելով բայի 2-րդ հիմքին՝ ձևավորվելով ներգործածձև խոնարհման հարացույց, օրինակ՝ ***շարժեցին:***

-Այ վերջավորությունը ևս միանում է 1-ին և 2-րդ հիմքերին, առաջին հիմքին ավելանալով՝ կազմվում է սահմանական ներկա (*կու գողանայ*), երկրորդ հիմքին ավելանալով՝ անցյալ կատարյալ (*շարժեցայ*): Ներկա ժամանակում այն՝ իբրև հասարակ վերջավորություն, արտահայտում է

եզակի թվի 1-ին դեմքի իմաստ: Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևում ***-այ*** վերջավորությունը հանդես է գալիս կրավորաձև խոնարհման հարացույցում՝ եզակի թվի, 1-ին դեմքի իմաստով, ինչպես՝ ***գողացայ*** բայաձևը նշանակում է կամ ***գողացա,*** կամ ***գողացվեցի:***

-Այք վերջավորությունը, առաջին հիմքին ավելանալով, կազմում է սահմանական ներկան՝ առանց սեռային տարբերակման, օրինակ՝ ***կու գողանայիք***: 2-րդ հիմքին ավելանալով՝ ձևավորում է անցյալ կատարյալ ժամանակաձևը՝ կրավորաձև խոնարհմամբ, օր.՝ ***շարժեցայք:***

-(յ)իր վերջավորությունը գրաբարում գումարվում էր միայն բայի առաջին հիմքին՝ արտահայտելով կամ անցյալ անկատար (*շարժէիր*) կամ արգելական հրամայականի իմաստ (*մի՛ շարժիր*): Միջին հայերենում, մասնավորապես 15-18-րդ դարերում անցյալ կատարյալի ե խոնարհման պարզ, ինչպես նաև պատճառական բայերի եզակի 2-րդ դեմքում տիրապետողն արդեն ***–իր*** վերջավորությունն է, ինչպես՝

«*Մնացիր չարեաց զաւակ*»(ՀԹՏ, էջ 193):

«… Փորեցիր քեզ գուբ ու խոր,
Վառեցիր հանց հոտ ու բոց»
«Հոգիս կորցրիր, զալում
Ինչ փընչացրիր զալում» (ՆՀբ էջ 7):

-Եաց վերջավորությունը, ավելանալով 2-րդ հիմքին, կազմում է անցյալ կատարյալ ժամանակաձևը՝ եզակի թվի 3-րդ դեմքով (*շարժեաց, հնչեաց, յղեաց մատնեաց, չարչարեաց*) և ե խոնարհման բուն հրամայականի կրավորաձև տարբերակը (*շարժեա՛ց-շարժվի՛ր*):

-Եր վերջավորությունը, ավելանալով 1-ին հիմքին, կազմում է արգելական հրամայականի ներգործաձև խոնարհումը, այն համանուն է վաղակատար ներկա և անցյալ ժամանակները ձևավորող ***–եր*** մասնիկին: Օր.՝ ***ծանծրացուցեր:*** Առհասարակ վաղակատար ներկան և անցյալը ձևավորվում են ***–ել*** և ***-եր*** վերջավորություններն ունեցող բայաձևերի վրա և օժանդակ բայի ներկա և անցյալ անկատարի ավելացումով՝

«Ֆըրի՛կ, հերիք ես դու խաւսել,
Ձամէն մարդ ես ծանծրացուցեր»:

Միջին հայերենի բայական համակարգում վերջավորություններին հատուկ է լրիվ համանունությունը, բացառությամբ ***-եր*** և ***-էր*** համահունչ համանունների**:**

Կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ համանունությունը հիմնականում դրսևորվում է ներգործաձև և կրավորաձև խոնարհումներին պատկանող տարբեր հարացույցերում:

Եզրակացություններ

1. Հետևյալ եղանակաժամանակային ձևերում կարող են լինել համանունություններ՝

Աղյուսակ 1

Ներկա	Արգելական հրամայական
Ներկա	Բուն հրամայական
Ներկա	Անցյալ կատարյալ
Ներկա	Անցյալ անկատար
Անցյալ անկատար	Անցյալ կատարյալ
Անցյալ կատարյալ	Արգելական հրամայական
Անցյալ անկատար	Արգելական հրամայական
Արգելական հրամայական	Վաղակատար ներկա
Արգելական հրամայական	Վաղակատար անցյալ
Անցյալ կատարյալ	Բուն հրամայական

2. Հետևյալ դիմաթվային ձևերը կարող են դրսևորել համանունություններ՝

Աղյուսակ 2

2-րդ դեմք հոգնակի թիվ (ներկա)	2-րդ դեմք հոգնակի թիվ (անցյալ կատարյալ)
2-րդ դեմք եզակի թիվ (ներկա)	1-ին դեմք եզակի թիվ (անցյալ կատարյալ)
3-րդ դեմք եզակի թիվ (ներկա)	3-րդ դեմք հոգնակի թիվ (անցյալ կատարյալ)
3-րդ դեմք եզակի թիվ (ներկա)	3-րդ դեմք եզակի թիվ (անցյալ կատարյալ)
2-րդ դեմք եզակի թիվ (անցյալ կատարյալ)	2-րդ դեմք եզակի թիվ (արգելական հրամայական)
1-ին դեմք հոգնակի թիվ (անցյալ անկատար)	1-ին դեմք հոգնակի թիվ (անցյալ կատարյալ)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, 1976թ., Երևան, էջ 579:
2. Աճառյան Ա., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան 1971թ., 985 էջ:
3. Ա. Այտընյան, Քերականութիւն, Ձապել Հ Ասատուր, Երևան, 1987 թ., 130 էջ:
4. Շալունց, http://lraber.asj-oa.am/2153/1/56.pdf
5. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Երևան, 1972 թ., 303 էջ:

ОМОНИМИЧНЫЕ ОКОНЧАНИЯ ГЛАГОЛА В СРЕДНЕАРМЯНСКОМ

Ани Чатинян
ВГУ, Факультет армянской филологии,
Отдел армянского языка и литературы, магистратура 1-ый курс

РЕЗЮМЕ

Узловие слова: *Омониимичхых окончаний, граматические окончания, пассивность преклонение, формы времени, цифровые формы.*

По данной статье научно классифицировали генеологию омонимичных окончаний личного глагола в средие армянском. Обращаясь омонимичным окончаниям грамматических значений, их представили по способам выражения видовременных форм. Во – первых, обратились на омонимию окончаний глагольных видовременных форм, образовавшихся от основы настоящего на основах настоящего и прошедшего, затем на омонимию парадигмы окончаний глагольных видовременных форм, образовавшихся от основы прошедшего на основах прошедшего и настоящего. Соответственно, представили именно в каких видовременных и спрягаемых формах могут быть омонимии и особенно глаголы какого спряжения имеют омонимичные виды.

HOMONIMIC VERBAL ENDINGS IN MIDDLE ARMENIAN

Ani Chatinyan
VSU, Faculty of Philology,
The Armenian Language and Literature Department, Master 1st year

SUMMARY

Keywords: Homonymous endings, grammatical meanings, weather patterns, mascof forms, the basis of the present, the basis of the past, passive conjugation, acting conjugation.

With this article we have scientifically classified the origins of the homonymous verb ends. Referring to the grammatical meanings of the homonymous ends we have presented them according to their time expression. Firstly we have referred to the homonymous of verbal ends of present time in the basis of present and past simple then to the homonymous of verbal ends of past time which are formed with the basis of present and past time. Accordingly we have presented that in what time forms and verb forms homonymy can be and especially what verbs with conjugation have the most homonymous forms.

ԵՐԱԺՇՏԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌՈՎ ԳՐՎԱԾ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Լիլիթ Դուլինյան
ՎՊՀ, Բանասիրական ֆակուլտետ,
Հայոց լեզու և գրականություն, 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Լիլիթ Պետրոսյան***

Հանգուցային բառեր՝ *Արարատյան բարբառ, երաժշտական ոլորտ, նվագարան, կազմություն, կառուցվածք, հնչյունափոխություն, կիրառություն*

Երաժշտական տերմինները և այդ ոլորտին պատկանող բառերը բազնազան են: Դրանք կիրառվում են ինչպես հայ գրական լեզվում, այնպես էլ բարբառներում:

Մեծ է դրանց կիրառությունը ժողովրդական բանահյուսության մեջ, մասնավորապես հեքիաթներում, որոնցից մենք ուսումնասիրել ենք Արարատյան բարբառով գրված հեքիաթները:

Մեր նպատակը վերոհիշյալ բարբառով գրված ժողովրդական հեքիաթներում վկայված երաժշտական ոլորտին պատկանող բառերի իմաստային, կառուցվածքային, ինչպես նաև կիրառական առանձնահատկությունների քննությունն է:

Թեման արդիական է. հիշյալ բառերը ոչ միայն բարբառագիտական, այլև լեզվաբանական հարուստ նյութ են ամփոփում: Այսպես՝ հայտնաբերում ենք բառերի այնպիսի իմաստներ, որոնք վկայված չեն բառարաններում կամ այնպիսի նվագարաններ, որոնց մասին աղբյուրագիտական հիշատակություններ չկան:

Առաջին հերթին քննության ենք ենթարկել իմաստային առանձնահատկությունները, համապատասխանությունը բառարանային իմաստներին, իմաստային տարբեր նրբերանգները տվյալ կոնտեքստում: Անդրադարձել ենք հնչյունափոխական դեպքերին, կապակցելիությանը բայերի հետ, հաճախադեպությանը և այլն:

Մեր ուսումնասիրության տիրույթում են եղել նաև երաժշտական գործիքների կիրառական առանձնահատկությունները:

Ըստ իմաստի՝ հիշյալ բառերը բաժանվում են հետևյալ խմբերի.

- Իրանիշ, որոնք էլ բաժանվում են 2 խմբի՝ նվագարաններ և երաժշտական եղանակներ,
- Անձնանիշ, որոնք նվագածուներն են:

Ըստ ձայներանգի, հնչման ուժգնության, նաև ձայնածավալի՝ երաժշտական գործիքները լինում են փողային, լարային, հարվածային:

Փողային գործիքներից առկա են ***զուռնան, պարկապզուկը, շվին, բլուլը, պոզը, նայը,*** հարվածային գործիքներից՝ ***դափը, նաղարան, դհոլը, դավուլը,*** լարային գործիքներից՝ ***սազը***, ***տավիղը***, ***քնարը, սանթուրը, չոնգուրը*** և այլն:

Երաժշտական գործիքները հանդես են գալիս նաև հոմանշային շարքերով: Ասվածը վերաբերում է հատկապես հարվածային գործիքներին: Այսպես օրինակ՝ ***դավուլ*** *և* ***դհոլ*** բառերն արտահայտում են նույն իմաստը՝ նշանակելով «թմբուկ [7,312]»: Թմբուկը նաև ***դափ*** բառի իմաստներից մեկն է [7,319]: ***Նաղարա*** բառը ևս նշանակում է թմբուկ [9,132]: Դրանով պայմանավորված էլ այս կամ այն իրավիճակում դրանք փոխարինում են իրար: Բերենք օրինակներ՝

«*Հարուստ հերը սկսեց <u>դավուլ-զուռնեն</u> ածիլ տալ: Գգիրը ամենքին էլ ձեն տվուց, մեծրեց, հարսանիքն էկավ դուռը»* [4,263] կամ «*Մոգին վեր ա կալնում <u>զուռնա, դհոլ</u> ու ճամփա ընգնում դպա թգավորի ամարաթնին»* [4,18] կամ «*Թագավորը բերում ա օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում: Ի՜նչ <u>դափ ու զուռնա</u>, ի՜նչ քեֆ, ի՜նչ ուրախություն, որ էլ հալ ու հեսաբ չկար»* [2,38]:

Շվին և ***բլուլը*** հովվական սրինգներ են, բայց ունեն արտաքին և ձայնարտաբերման տարբերություններ. շվին փայտից կամ եղեգից պատրաստած սրինգ է յոթանցքանի փողի ձևով և օգտագործվում է կենդանիներին հմայելու, կախարդելու համար: Բլուլը սրնգի ավելի թավ ձայնով տեսակն է [7,198], որը հենց այդ նշանակությամբ էլ գործածվում է հեքիաթներում, օրինակ՝ *«էդ չոպանն իմացավ, որ իրան պըտի դուս անի, գնաց մի հատ բլուլ առավ, սկսեց ածիլը»* [3,80] կամ *«Երկար ճամփա գնացին, մի սարի դոշին մտիկ տվին, որ մի չոբան բլուլ ա ածըմ, էտ ոչխարը թև են բռնե հաղըմ են, արածըմ»* [1,332]:

Շվին, ինչպես վերը նշեցինք, հովվական սրինգ է՝ ըստ բարբառային բառարան [9,282]: Այս նվագարանի կիրառությանը հանդիպում ենք միայն 2-րդ հատորում, և հետաքրքիր է այն փաստը, որ վերոնշյալ իմաստով որևէ կիրառություն չենք տեսնում:

Նայ փողային գործիքը, որ նաև դուդուկ է նշանակում [7,136], հանդիպում է հեքիաթներում միայն մեկ անգամ՝ «Նաչար-օղլու հեքիաթում» *«Էկան դափով, զուռնով, նայով, սազով, դամով ուրախութեն անելով տարան թաքավորի պալատը»* [1,177]: Սակայն դա հիշյալ նվագարանի միակ իմաստը չէ. նայը կամ նեյը մի շարք ժողովրդական նվագարանների ընդհանուր անվանումն է. Նայ են կոչվում օրինակ արաբական, ուզբեկական, մոլդավական սրինգները [6,177]: Մերձավոր Արևելքի ժողովուրդների մոտ փողային գործիքները կոչվում են նայ կամ նեյ, որը թեպետ նշանակում է եղեգ, սակայն գործածվում է փողի իմաստով, իսկ արդեն հայկական

որոշ շրջաններում նեյ կամ նայ անվանում են դուդուկը [11,163]:

Ինչ վերաբերում է ***պոզ*** բառին, ապա այն ևս պետք է քննության ենթարկենք նվագարանների, մասնավորապես փողայինների շարքում: ***Պոզ*** բառի երաժշտական գործիքի իմաստը վկայված է Հայոց լեզվի բարբառային բառարանում, որտեղ պոզ բառի իմաստներից մեկը հետևյալն է. «եղջյուրաձև փող» [10,97]:

Արարատյան բարբառով գրված հեքիաթներում հանդիպող լարային նվագարանները՝ ***չոնգուրը, սազը***, ***սանթուրը, տավիղը***, ***քնարը,*** արևելյան լարային նվագարաններ են:

Չոնգուր արևելյան լարավոր նվագարան՝ թառի նման, սակայն գործածված է *սազի* փոխարեն, այսինքն նույն սազն է: Ներկայացնենք ամբողջ հատվածը. *«Մուկն ասավ. — Դե ինձ տուր չոնգուր, դու փախիր կորիր: Դա փախավ, կորավ: Քիրն էկավ տանը տեհավ սաբոկները ընդի ա, Մուկն էլ սազն ա ածում, նա գիտի թե ախպերն ընդի ա, գիտի ոչ, թե փախել ա»* [4,311]:

Մուգուկանդ գործիքի ծագման կամ իմաստի մասին որևէ տեղեկություն չունենք: Այս նվագարանը վկայված չէ բառարաններում: Վկայություններ չկան ոչ միայն իմաստի, նշանակության մասին, այլև ծագման և կազմության: Այն հանդիպում է միայն երրորդ հատորի «Ղահրամանա-Ասլան թաքավորներ» հեքիաթում. *«Տավղին, քնարը, մուգուկանդը չարի լիս ածեցին, էդ տղին քեֆ շանց տվին»* [3,144]: Թեև որևէ վկայություն չկա այս բառի մասին, այնուամենայնիվ ակնհայտ է, որ գործ ունենք երաժշտական գործիքի հետ, քանի որ կիրառվել է իրանիշ բազմակի անդամների շարքում:

Իրանիշ երաժշտական բառերի հաջորդ խումբը ներկայացնում են երաժշտական եղանակները՝ ***դամ, տաղ***, ***հաղ(խաղ), երգ***, ***ֆասլ, մուգիկ***, ***դավուլ-զուռնա, դափ-զուռնա, զուռնա-դհոլ,*** տարբեր երաժշտական բառեր ու արտահայտություններ՝ ***մուղամ, գարմոն, հոյնար, հորովել:***

Անդրադառնանք ***դավուլ-զուռնա, դափ-զուռնա, զուռնա-դհոլ*** բառերին: Սրանք ընդգրկել ենք երաժշտական եղանակներ խմբի մեջ, քանի որ թեև առանձին-առանձին դրանք երաժշտական գործիքներ են, բայց միասին նշանակում են համապատասխանաբար ***դավուլով ու զուռնայով, դափով ու զուռնայով, զուռնայով ու դհոլով*** երաժշտություն: Պատահական չէ, որ բառարաններում էլ դրանք առանձին բառահոդվածով են ներկայացված:

Երաժշտական ոլորտի բառերի հաջորդ խումբը կազմում են անձնանիշները՝ նվագածուները, այսինքն՝ այն մարդիկ, որոնք նվագում են որևէ երաժշտական գործիքի վրա: Դրանք են՝ ***չալղըչի, չաղլի, աշուղ, աշըղ, զուռնաչի, դավլ-զուռնաչի, զուռնա-դհոլչի, դափ ու զուռնաչի,***

դաֆինա: Դրանց մեջ ենք ներառում նաև ***ածող*** և ***ասող*** բառերը, քանի որ, գործածվելով որևէ նվագարանի հետ, արտահայտում են նվագածուի իմաստ, ինչպես՝ սազ ածող, հաղ ասող և այլն:

Չալղըչին չալղի նվագողն է: ***Չաղլին,*** սակայն, գործածված է հեքիաթներում իբրև նվագածու: ***Դաֆինա*** նշանակում է թմբկահար [3,585]: ***Դափ*** բառն էլ, ինչպես վերը նշեցինք, թմբուկ է նշանակում: Փ>ֆ անցումը, հայերենի համար օրինաչափ է: Եվ այս բոլոր փաստերը թույլ են տալիս ենթադրել, որ ***դաֆինա*** հենց դափ նվագող է նշանակում:

Նկատելի են հնչյունափոխության դեպքեր, ինչպես շեշտից կախված (աշուղ>աշըղ, դավուլ>դավըլ), այնպես էլ փոխազդեցական (տավիղ>տավղի), բարբառային տարբերակներ՝ խաղ>հաղ:

Երաժշտական գործիքները և եղանակները կապակցվում են հետևյալ բայերի հետ՝ ***ածել, ասել, երգել, փչել, քոքել, ծնկծնկացնել, կլկլացնել, հաղալ, հնարել, զանել, զարկել, զլել***:

Ամենահաճախադեպը ***ածել*** բայն է: ***Ասել*** բայը հանդես է գալիս միայն ***հաղ (խաղ)*** և ***տաղ*** բառերի, ***փչել*** բայը՝***փողային***, ***զարկել***ը՝ ***հարկանային*** նվագարանների հետ, իսկ ***քոքել, ծնկծնկացնել*** և ***կլկլացնել*** բայերը միայն ***սազ***, իսկ ***զանել*** բայը միայն ***նաղարա*** նվագարանի հետ: ***Երգել, հաղալ*** և ***զլել*** բայերը չեն կապակցվում որևէ երաժշտանիշ բառի հետ: Տե՛ս աղյուսակ 1*:*

Աղյուսակ 1

Բայ	Երաժշտական գործիք կամ եղանակ																			
	ջուռնա	***հավթոմիլոհոմ***	***փիշ***	***նալբանդ***	***ծամ***	***ֆյուտ***	***փխոմ***	***ոսխոմոտց***	***նկոմ***	***հոխոմ***	***ֆոռ***	***նվիռատ***	***սոռգէ***	***սհաբդոտ***	***սհաբդոտ2***	***սհաբդոտ3***	***նոտ (նոտ)***	***նոտ***	***ֆոլկլորոտց***	***գնել***
ածել	+			+							+	+	+		+				+	
ասել																	+	+		
երգել																				
փչել	+	+	+	+	+	+														
քոքել											+									
ծնկծնկացնել											+									
կլկլացնել											+									
հաղալ																				
հնարել																				+
զանել								+												
զլել																				
զարկել							+		+	+										

Անդրադառնանք շարահյուսական կիրառություններին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Արարատյան բարբառով գրված հեքիաթները և քննության ենթարկելով դրանցում առկա երաժշտանիշ բառերը՝ եկանք այն եզրակացության, որ դրանք լայնորեն կիրառվել են ժողովրդի կողմից և իրենց արտահայտությունը գտել նաև հեքիաթներում: Այդ բառերը հաճախ գործածվել են իրենց ոչ բառարանային իմաստներով՝ դրսևորելով իմաստային տարբեր նրբերանգներ: Հասկանալի է դառնում նաև, որ հեքիաթասացները ծանոթ են եղել այլ ժողովուրդների նվագարաններին՝ դրանց անվանումները ևս հիշատակելով հեքիաթներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր 1, Երևան, 1959:
2. Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր 2, Երևան, 1959:
3. Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր 3, Երևան, 1962:
4. Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր 8, Երևան, 1977:
5. Հայկական սովետական հանրագիտարան, Հատոր 3, Երևան, 1977:
6. Հայկական սովետական հանրագիտարան, Հատոր 8, Երևան, 1982:
7. Հայոց լեզվի բարբառային բառարան, Հատոր 1, Երևան, 2001:
8. Հայոց լեզվի բարբառային բառարան, Հատոր 2, Երևան, 2002:
9. Հայոց լեզվի բարբառային բառարան, Հատոր 4, Երևան, 2007:
10. Հայոց լեզվի բարբառային բառարան, Հատոր 5, Երևան, 2008:
11. Քոչարյան Ա., Երաժշտական գործիքները Հայաստանում, Պատմաբանասիրական հանդես, թիվ 3, 1963:

ВЫРАЖЕНИЕ МУЗЫКАЛЬНЫХ СЛОВ В НАРОДНЫХ СКАЗКАХ, НАПИСАННЫХ НА АРАРТСКОМ ДИАЛЕКТЕ

Лилит Гулинян
ВГУ, Факультет филологии,
Отдел армянского языка и литературы, курс 4-ый

РЕЗЮМЕ

***Ключевые слова**:: Араратский диалект, музыкальная сфера, музыкальный инструмент, структура, чередование зжуков, использование*

Сказки на Араратском диалекте содержат богатый фольклорный, етнографический и языковой материал. Интересны особенно слова музыкальной сфере в лексиконе сказок, которые делятся на одушевленные и неодушевленные группы. Изучая смысловые, структурные и практические особенности этих слов делаем интересные открытия.

THE EXPRESSION OF MUSICAL WORDS IN TALES WRITTEN IN ARARAT DIALECT

Lilit Ghulinyan
VSU, Faculty of Philology,
The Armenian Language and Literature Department, 4th year

SUMMARY

***Key words:** Ararat dialect, the field, musical instrument, structure, sound interchange, application*

Tales of dhe Ararat dialect contain rich folklore, ethnographic and linguistic matterial. Spencially interesting are the words of the music industry in the lexicon of tales, which are divided into personal and object groups. Studying these words semantic, structural and practical features making remarkable discoveries.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐՈ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆԻ «ԷՄՄԱ» ՎԵՊՈՒՄ

Լիլիթ Ներսիսյան
ԳՊՀ, Բանասիրական ֆակուլտետ, 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Ն. Ղազարյան***

Հանգուցային բառեր՝ *Վրթանես Փափազյան, Էմմա, Սուրենյան, վեպ, կերպար, սեր, հայրենիք, Տուրգենև, հայրենասիրություն*

Վրթանես Փափազյանի «Էմմա» վեպում արտացոլված են հայրենասիրության և սիրո խնդիրները: Վեպի գլխավոր հերոսի՝ Սուրենյանի միջոցով հեղինակը ցույց է տվել մի ողջ երիտասարդության, որ պետք է ընտրություն կատարեր օտար երկրում անհոգ ապրելու կամ հայրենիքում մաքառելու միջև: Ընտրությունը ավելի դժվար է, եթե մի կողմում հայրենիքն է, մյուս կողմում՝ սերը: Սակայն սա սովորական սիրո պատմություն չէ, այն ավելի խորն է, քան կարելի է պատկերացնել: Սա մի վեպ է, որն արտացոլում է ազգային լրագրերի վիճակը, հեղինակի վերաբեմունքը ազգային գործիչների ու քաղաքական կուսակցությունների նկատմամբ, որն այնքան էլ դրական չէ:

«Էմմա» վեպը կոմպոզիցիոն առումով բազմախոստում երկ էր, այս վեպով հեղինակը ցանկանում էր ներկայացնել Հայաստանը՝ իր ողջ հոգսերով ու նպատակներով: Հեղինակն այդ վեպի վրա համեմատաբար շատ աշխատեց. 1900-ին նա, ինչպես խոստովանում է նամակներից մեկում, աշխատում էր հիմնովին վերափոխել երկի լրագրային տարբերակը: Ու թեև 1901-ին վեպը լույս տեսավ առանձին հրատարակությամբ և ընթերցողին ներկայացվեց իբրև ավարտուն ստեղծագործություն, այն փաստորեն կիսավարտ գործի տպավորություն է թողնում: Ընդհանրապես լայն կտավը Փափազյանի տարերքը չէր: Յուրաքանչյուր անգամ, երբ գրողը ոտք էր դնում վեպի ժանրի սահմանները, առավել կամ նվազ չափով ի հայտ էին գալիս կառուցվածքային բացթողումները, և որովհետև «Էմման» առաջին լուրջ փորձն էր այդ ճանապարհին, նման թերությունները ամենից շատ այնտեղ ի հայտ եկան: Սակայն դա չի նշանակում, որ վեպը զուրկ է գեղարվեստական-գաղափարական արժանիքներից: Դա մի երկ էր, որտեղ առավել որոշակիությամբ երևան եկան գրողի քաղաքական, սոցիալական ու մշակութային հայացքները, և եթե իբրև կառուցիկ ամբողջություն՝ վեպը վրիպումներ ունի, ապա դրվագների մեջ խորը հետաքրքրություն է առաջացնում:

«Էմմայի» առաջին և երկրորդ մասերի իրադարձությունները տեղի են ունենում Եվրոպայում, մասնավորապես Շվեցարիայի քաղաքներում և միայն վերջին՝ երրորդ մասում, որը կազմում է վեպի մոտ մեկ քառորդը, դեպքերը տեղափոխվում են Թիֆլիս և Բաքու: Հենց միայն այս հան-

գամանքը նորույթ էր հայ գրականության համար և չէր կարող հետաքրքրություն չառաջացնել ընթերցողների շրջաններում: Վեպի տարաշխարհիկ երանգը, սակայն, ընթերցող «որսալու» գայթակղիչ խայծ չէր. այն պայմանավորված էր հայոց պատմության բարդ իրողություններով: Դարի վերջերին մեր իրականության հորիզոնում երևան էին եկել ազգային-քաղաքական կուսակցություններ, որոնք, հաստատվելով «ազատ աշխարհի» մի քանի կենտրոններում, սկսել էին ակտիվորեն միջամտել Արևմտյան Հայաստանի դառը ճակատագրին: Երկրի բուն ներսում իրարամերժ զգացումների տեղիք տված այդ կուսակցությունների գործունեությունը բավականաչափ լուրջ հիմքեր էր տալիս գեղարվեստական գրականության ուշադրությունը գրավելու համար, և Փափազյանը, ինչպես ուրիշ շատ դեպքերում, իր ձեռքն է վերցնում նախաձեռնությունը: Նշանակետ ունենալով ահա այս նորօրինակ երևույթի գնահատությունը՝ գրողը ծրագրում է սույն առանցքի շուրջը համախմբել իր բազմաչարչար հայրենիքի սոցիալ-քաղաքական կացության այլակողմ արտահայտությունները և գեղարվեստական քննիչ վերլուծումներով ի ցույց դնել ժողովրդի փրկության արգասավոր ուղիները: Վեպի մի շարք եվրոպացի հերոսների և մասնավորապես կենտրոնական դեմքի՝ շվեդուհի էմմա Կարլսենի հետ հայազգի կերպարների մերձավոր կապերի ու փոխհարաբերությունների ֆոնի վրա արծարծվում են նաև ժամանակի մարդկությանն զբաղեցնող բարոյա-քաղաքական այլևայլ խնդիրներ: Մանավանդ բնավորությունների աշխարհագրական ձեռքբերումների, դրանց վերաձևումների, սոցիալական հոգեբանության այլասերումի և ուրիշ խնդիրներ, որոնք թաքուն թելերով առնչվում էին հայության բախտի հետ:[1, 153-154]

Օտարազգի հերոսների առկայությունը վեպում նպատակ ունի նաև «կողմնակի» հայացք պարտադրել ազգային-ազատագրական շարժման «ուժեղների» գործունեությանը և այդպիսով «անաչառ» քննադատությամբ կանխել սրանց քաղաքական պահվածքի թուլությունները: Այս ամենը, այսպես ասած, վեպի միջուկն է, որին հասնելուց առաջ գեղարվեստական հմուտ փոխհարաբերությունների մեջ ստեղծվում են հետաքրքրական բնավորություններ, գծագրվում վիպական հանգամանքներ, ծայր առնում ուշագրավ խոհեր եվրոպական ու ասիական իրականությունների նույնատիպ և տարամետ ցավերի վերաբերյալ: Մի խոսքով, էքսպոզիցիոն ուրվագծերում Փափազյանի գրիչը անբասիր է [1, 154]:

Վեպի գլխավոր հերոսը՝ Սուրենյանը, թողել է Ժնևը և եկել Լոզան, որպեսզի մոռանա այն սերը, որը նրան երկար ժամանակ տանջել էր: Էմման միշտ հետաքրքրվում էր Հայաստանով: Սուրենը նրա խնդրանքով հաճախ էր խոսում Հայաստանից, պատմում այն ճնշումների մասին, որ գործի էին դնում թուրքերը: Գալիք մասնախմբի երեկույթի համար

էմման տալիս է գումար, որ կարողանան աջակցել թշվառ վիճակում գտնվող հայերին: Սուրենյանը Ժնևում ուներ համախոհներ, որոնք ևս հետամուտ էին այդ գործին: Սուրենյանը իրեն համարում էր համոզված ազգային գործիչ, հետաքրքրվում էր դարավերջի սոցիալական տարբեր գիտություններով և քաղաքական հարցերով: Սուրենյանի ընկերներն են սոցիալ-դեմոկրատական գաղափարներով համակված Սմբատյանը, Վուլկանը, Պողոսյանը: Սուրենյանի հայրենասիրական գործունեությունը արտասահմանում կրում է վերացական բնույթ: Վուլկանը միշտ նրան խրատում է և ասում, որ հայրենիքից հեռու նա միայն կարող է ճառեր որոտալ իր փափուկ և տաքուկ սենյակից: Վուլկանի միջոցով Փափազյանը քննադատել է հայ մտավորական այն խավերին, որոնք, որոշակի պատկերացում չունենալով հայրենիքի մասին, նրա ազատագրության ու առաջադիմության վերաբերյալ օդային ամրոցներ են կառուցում:

Կարծիքներ են եղել, թե Փափազյանը ամբողջովին բաժանում է Սուրենյանի հայացքները և քաղաքացիական պահվածքը: 1902-ին գրողը բողոքում է այդ տեսակետի դեմ և ճշգրտում իր հայեցակետը. «Սուրենյանը Փափազյանը չէ: Փափազյանը կա «էմմայի» մեջ և կոչվել է Վուլկան: Սուրենյանը տիպն է ֆանտազեոր և միայն խոսքերով տրաքոցներ հանող-թույլ բնավորության տեր ուսանողների: Հիշիր էմմայի հուսահատությունները, երբ նկատում է, որ Սուրենյանը միմիայն ֆանտազեոր է և աշխատում է նրան գործի մարդ շինել: Ոչ մի կապ չկա Սուրենյանի և Փափազյանի մեջ» [1,160]:

Փափազյանի շունչը զգացվում է նաև էմմայի մեջ: Էմմայի աչքերով նայում է և նրա բերանով խոսում է հենց ինքը՝ Փափազյանը:

Սուրենյանի համար սերը ամեն ինչ է, նա նույնիսկ պատրաստ է ամեն ինչ թողնել հանուն սիրո. այդպես է բնորոշում նաև Մարթա Կրեյսլերը, ով նույպես սիրել է Սուրենյանին, բայց երբ վերջինս նրա կողքին էր, Մարթան ուղղակի նողկում էր նրանից: Նա պարզապես չէր կարող սիրել մի մարդու, ով սիրուց բացի ուրիշ քայլի ընդունակ չէ: Մարթան հեղափոխական էր, և բնական է, որ չէր կարողանա գտնել իրեն Սուրենյանի կողքին: Նա Սուրենյանին համարում էր իր դարավոր ստրուկ և հալածված ազգի զավակը, ով վախկոտ է և չունի բնավորություն, նա կարող է լավ խոսել, պլաններ կազմել հայրենիքի համար, բայց գործնական քայլ անելու ընդունակ չէ. «Կինը սիրում է առյուծի և սիրել չէ կարող ոչխարի» [2, 154]:

Էմման ևս չի կարող տանել նման թույլ պահվածք, բայց նա չի հեռանում Սուրենյանից, այլ կարողանում է հասնել նրա վերափոխմանը. «Չգիտեմ, ինձ թվում է, որ ես չէի կարող սիրել մի չոր նյութական անձի, որ սիրո նպատակ է դնում միմիայն բնախոսական պահանջը» [2, 144]:

Սուրենյանի վրա հոգեբանական ներգործություն են ունենում Վուլ-

կանը և էմման: Հումանիստական լայն ըմբռնումներով և մարդկային խոր զգացումներով դաստիարակված ռոմանտիկ բնավորությամբ շվեդուհին դառնում է Սուրենյանի հայրենասիրական ծրագրերի իրականացման ոգևորիչ ուժը և նրա նյութական միջոցների հենարանը: Վուլկանը իր հերթին խրատում է, փորձում է ճիշտ ճանապարհի դնել Սուրենյանին, այն ժամանակ երբ նա ցանկանում էր էմմայի հոր պահանջը կատարելու պատճառով հրաժարվել հայրենիք վերադառնալու նպատակից և գործել հայրենիքից հեռու. «Եվրոպա ուսում ստացած և այնտեղ էլ տաք անկյունի մեջ կծկված փոքրոգի երիտասարդների շնորհիվ հայ ժողովուրդը միշտ մնում է տգիտության, թշվառության և արյունի մեջ» [2, 166]:

Սուրենյանը վերջապես հասկանում է, որ այս իրավիճակում չի կարող օգնություն չցուցաբերել իր հայրենիքին. «Եվրոպա նստող հայերի գործունեությունը նման է հեռու նստող բժշկի՝ հիվանդին տված, վիրավորին ուղարկած խորհուրդների. նրանք կամ քիչ են տալիս չնչին օգուտ կամ հաճախ վնաս: Եթե չես կարող օգուտ տալ հայրենիքիդ, գոնե գիտցիր մեռնել նրա համար» [2, 181]:

Այս վեհանձն որոշումը ոչ միայն չի տխրեցնում էմմային, այլև ուրախացնում է: Նա պատրաստ է ամեն ինչ անել Հայաստանի համար և նույնիսկ ապրել այնտեղ: Վեպի երրորդ մասում Փափազյանը իր հերոսին արդեն պատկերում է Կովկասի հասարակական այն միջավայրում, որտեղ դարավերջին ուժեղ պայքարի մեջ էին հայ դեմոկրատական գրականությունը և հրապարակախոսական միտքը: Սուրենյանը լինում է Բաքվում և Թիֆլիսում, սակայն ամեն անգամ նրա ձեռնարկած գործերը չեն ստացվում: Սուրենյանը ամեն անգամ հիասթափվում է, այդտեղ բոլոր միջոցներով մեղադրվում են հայկական մամուլի գլխավոր օրգանները և կուսակցական խմբավորումները: Ոչ մի լրագրում Սուրենյանը չի կարողանում աշխատանք գտնել, նա փորձում է ստեղծել մի այնպիսի լրագիր, որ զերծ կմնար անմիտ կուսակցական կռիվներից, որ տար լավ գրվածքներ, հեռու չմնար առօրյա հարցերի լուրջ ուսումնասիրությունից, իսկ այն թերթերը, որ կային, հանուն իրենց անձնական շահի պատրաստ էին իրենց էջերը լցնել ամեն տեսակ ցանցառություններով:

Բաքվում Սուրենյանը ծանոթանում է նավթաշխարհի հերոսներին, որոնք իդեալի փոխարեն իրենց սնում էին շատրվաններից ցայտող «սև ոսկով»: «Իդեալը միշտ անոթի է, լալկան և ողորմելի,– ասում է նյութապաշտ ինտելիգենտը իդելաիստ Սուրենյանին,– իսկ նե՞ֆտը, դա ուրիշ բան է, դա ուժ է, բռունցք, անկախություն… արյուն է»:

Վեպի ավարտը գրողի հայեցողությունից պոկված մի բեկոր է, ծրագրային առաջադրույթ: Օժիտի պատկառելի գումարով եկել է էմման և Սուրենյանի ու երեք այլ նվիրյալների հետ բռնել Պարսկահայաստանի ճամփան: Նրանք գնում են ոգևորված՝ նպատակ ունենալով դպրոցներ

ու լրագիր բանալ, ճշմարիտ գրականություն ստեղծել, մտնել ժողովրդի մեջ, սովորեցնել կռվի սկզբունքները: Նրանք երազում էին կազմել մի նոր ինտելիգենցիա՝ նոր հովերով և նոր, մաքուր, վսեմ, անկեղծ ձգտումներով: Փափազյանը կանխատեսում է, որ այնտեղ կգնան նաև այն գրողները, ովքեր, վաղուց ի վեր զզված ու հեռացած կովկասահայ մամուլի աղտոտ, անկյալ և իր անկումով պարծեցող դրությունից, հեռու կանգնած, սպասում են մի նոր միջոցի՝ իրենց կուտակած և պայթելու պատրաստ ուժերը երևան հանելու համար: Կասկածից վեր է՝ այս տողերը գրվել էին Թեհրանում, և որոշակիորեն Փափազյանի անձնական նկրտումների, սեփական երազանքների արտացոլանքն էին. չէ՞ որ նա ինքը նման նպատակ էր հետապնդում «Շավիղի» խմբագրի պաշտոնում: Նրա ծրագիրը ձախողվեց, բայց գրողը փոփոխություն չմտցրեց վեպի ավարտի մեջ նույնիսկ 1901-ին, որովհետև չէր կարծում, որ նման գործունեությունը ապարդյուն կլինի [1,171]:

Ոչ մի դատապարտելի բան չկա, եթե մտավորականը գնում է տրամադրություններ ստեղծելու և մտքեր կառավարելու ժողովրդի մեջ՝ հանուն մեծ իդեալի: Ուրիշ կերպ չէր էլ կարելի պատկերացնել ապագա փոթորիկները: Այս չէ, ուրեմն, վեպի ամփոփիչ բաժնի թուլությունը: Ինչպես արդեն նկատվեց, «Էմման» անավարտ էր մնում: Անհրաժեշտ էր մանրամասնել հերոսների կյանքի այս նոր շրջանը՝ ընդարձակելով վեպի վերջին բաժինը կամ էլ մի նոր երկով շարունակել կիսատ մնացածը: Փափազյանը չարեց դա: Ըստ երևույթին այն պատճառով, որ դարասկզբի իրադարձությունները ուրիշ ճշմարտություններ հուշեցին գրողին: Այլ թերություններ նույնպես ուներ «Էմման»: Մասնավորապես վեպի երկրորդ ու երրորդ մասերը, ֆրագմենտալության պատճառով, թեև ստույգ և տարբերակված հայեցակետեր են զարգացնում, բայց կերպարներ չեն ստեղծում: Սակայն պետք է նշենք, որ Փափազյանն առաջինն էր մեզանում, որ ծավալուն կտավում սոցիալական ու քաղաքական հայեցակետերից սուր քննադատության ենթարկեց մի կողմից պաշտոնական մամուլի և մտավորականության, մյուս կողմից՝ քաղաքական կուսակցությունների գործունեությունը: Սրա մեջ էր հենց «Էմմայի» գրապատմական արժեքը [1,171]:

Չնայած բոլոր թերություններին՝ «Էմմա» վեպը կարողացավ ընթերցողին համոզել, որ շատ դեպքերում օտար ազգության պատկանող կանայք կարող են գործունեություն ծավալել Հայաստանի համար՝ հաճախ գուցե ավելի եռանդուն և նպատակաուղղված, քան հայ կանայք: Ինչ խոսք, մեր պատմության մեջ կարող ենք հիշել հայ կանանց հերոսական արարքները հայրենիքի փրկության համար, բայց օտարուհու նման վեհանձն պահվածքը գուցե շատ քչերը հասկանան և հավատան: Փաստ է մեզ համար, որ առանց Էմմայի ներգործության, Սուրենյանը և գուցե շատ

այլ նրա նմանները այդ պարագայում հանձնվեին: «Նա ներկայացնում է մի ուժգին, կարմրեցնող ապտակ՝ նետված հայ հարուստ, օժիտավոր և կարող աղջիկների դեմքերին…» [1, 171]:

Կարող ենք ասել, որ այս երկում ավելի շատ տեղ էր հատկացված գրողի մտքերին ու գաղափարներին, քան թե հենց գործող անձանց: Եթե ուշադիր ուսումնասիրենք Փափազյանի այս վեպը, ապա կարող ենք հանգել այն եզրակացության, որ «Էմմա» վեպում պատկերված սերը լիովին արհեստական է: Այն ավելի շատ չկա, քան կա: Եվ եթե սկզբում տեսնում ենք Սուրենյանի զգացումների ինչ-ինչ դրսևորումներ, ապա հետո կարծես հեղինակը այնքան է տարվում ներկայացնելով իր անբախտ հայրենիքի վիճակը, որ սիրային մոտիվները թողնում է հետևում: Այստեղ մենք շատ ավելի խորը տեսնում ենք հայրենասիրությունը, հեղինակը իր հերոսների միջոցով փնտրում է Հայաստանի համար փրկության միջոց: Փափազյանը իր հերոսների մեջ է, նա նրանց մեջ է դնում իր երազանքները: Նա Վուլկանի միջոցով փորձում է դարձի բերել ոչ միայն Սուրենյանին, այլև շատ ու շատ նրա նման հայերին: Փափազյանը փորձում է բոլորին խրատել և վերադարձնել Հայաստան, քանի որ նրա կարծիքով Հայաստանի փրկությունը հայ երիտասարդության մեջ է: Եթե բոլորը վերադառնան հայրենիք ու իրենց գիտելիքներ ներդնեն հայրենիքի զարգացման ու հզորացման գործում, ապա մենք կհասնենք ցանկալի արդյունքի: Նրա նպատակը չէր բնավ սիրային վեպ ստեղծելը, այդ իսկ պատճառով սիրային դրվագները ընթերցողին թվում են արհեստական ու թույլ: Նա նույնիսկ դեմ չէր, որ հային Հայաստան ուղղորդողը լինի այլազգի ներկայացուցիչ, ավելի կարևոր էր բուն արդյունքը: Նա Էմմայի միջոցով ցանկանում էր նաև հայ աղջիկներին մղել հայրենասիրական գործունեության:

Փափազյանի վեպը որոշակի սյուժետային գծերով կարող ենք համեմատել Տուրգենևի «Նախօրեին» վեպի հետ: Վեպի գլխավոր հերոսը Ինսարովն է, ով Սուրենյանի նման գտնվում է հայրենիքից հեռու, սակայն նա հոգով կապված է իր հայրենի Բուլղարիային և երազում է ազատել հայրենիքը օտարի լծից: Նա ևս սիրահարվում է այլազգի ներկայացուցչի՝ Ելենա Նիկոլաևնային: Ելենան Էմմայի նման հանուն սիրո որոշում է գնալ իր համար օտար մի երկիր և ապրել իր ամբողջ կյանքը օտարության մեջ: Նա պատրաստ է իր նոր հայրենիքի համար պայքարել մինչև վերջ: Մենք չենք կարող պնդել, որ Փափազյանը իր վեպը գրելիս օգտվել է Տուրգենևից, սակայն այն փաստը, որ Տուրգենևի վեպը ստեղծվել է «Էմմայից» քառասուն տարի առաջ, հիմք է տալիս մեզ ենթադրելու, որ Փափազյանը կարդացել է այս գործը և դրա ազդեցության տակ կարող էր գրել իր վեպը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
1. Ա.Օհանյան, Վրթանես Փափազյան, Երևան, 1976:
2. Վ.Փափազյան, Երկերի ժողովածու, Երևան, 1973:

ПРОБЛЕМЫ ПАТРИОТИЗМА И ЛЮБВИ В РОМАНЕ ВРТАНЕСА ПАПАЗЯНА «ЭММА»

Лилит Нерсисян
ГГУ, Факультет филологии,
Отдел армянского языка и литературы, курс 4-ый

РЕЗЮМЕ

***Ключевые слова**: Вртанес Папазян, Эмма, Суренян, роман, образ, любовь, Тургенев, патриотизм*

В статье рассматриваются проблемы патриотизма и любви. В то же время сообщаются определённые сведения по поводу создания произведения. Главный герой романа, Суренян-представитель той армянской молодёжи, который не жалел сил для блага родины. В статье также рассматривается и образ Эммы, связанный с эволюцией образа Суреняна. В работе выявлена идеологическая связь рассматриваемого романа с романом И. С Тургенева «Накануне».

PROBLEMS OF PATRIOTISM AND LOVE IN VRTANES PAPAZYAN'S NOVEL “EMMA”

Lilit Nersisyan
GSU, Faculty of Philology,
The Armenian Language and Literature Department, 4th year

SUMMARY

***Key words**:Vrtanes Papazyan, Emma, Surenyan, novel, image, love, Turgenev, patriotism*

Love’s and patriotism’s problems is described in the article. At the same time certain information is reported about the creation of the novel. The main hero of the novel is Surenyan, representative of the Armenian youth, who has spared no effort for the sake of the homeland. The image of Emma, associated with the evolution of the Surenyan’s image, is also examined in the article. It was found out that the novel has ideological similiarities with the novel " On the Eve" by I. Turgenev.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ԳՈՒՐԱՄ ՓԱՆՋԻԿԻՃԵԻ «ԱԿՆԱՔԱՐ» ՎԵՊՈՒՄ

Կարեն Մանուչարյան
ԿՊՀ, Բանասիրական ֆակուլտետ,
Հայոց լեզու և գրականություն, Մագիստրատուրա 1-ին կուրս
Գիտ. ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր ***Հ. Ալվազյան***

Հանգուցային բառեր՝ *կենսափիլիսոփայություն, իդեալ, հասարակական մոդել, խորհրդանշական պատկեր, կոմպոզիցիոն օղակ, խղճի փիլիսոփայություն:*

Ասաց, որ ամեն մի դարաշրջան արատավոր է եղել՝ հիվանդագին մտածողության դրսևորումներով ամայացրել, ժողովրդաթափ է արել հողագունդը, դրանից է բխում անցած ժամանակների կործանարար ազդեցությունը հետագա կյանքերի վրա: Ողջ աշխարհը խորքում՝ հորինվածքի մեջ, չարություն, անկում է:

Լևոն Խեչոյան

Դումբաձե և Փանջիկիձե

Յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է իր արատներն ու թերությունները: Դրանք պայմանավորել են հասարակական խոր աններդաշնակություններ, որոնց պատկերումը ծանրացել է ժամանակաշրջանի ճշմարիտ մտավորականների ուսերին: Գրողը սովորական արձանագրող, պատճենող չէ. նա յուրօրինակ մարտիկ է, որի վերջնական նպատակը հասարակական աններդաշնակության վերացումն է: Իր ժամանակաշրջանի այդպիսի մի ազնիվ տարեգիր է Գուրամ Փանջիկիձեն: Նրա «Ակնաքար» վեպում արտացոլված հասարակական մոդելը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի ճշմարիտ ըմբռնման արդյունք է, այլև տարբեր ժամանակաշրջանների հասարակական աններդաշնակությունների արտահայտիչ: Փանջիկիձեն խոսում է կոնկրետ հասարակության և կոնկրետ ժամանակաշրջանի մասին, բայց վեպում արտացոլված խնդիրները նշմարելի են նաև այլ հասարակություններում և ժամանակաշրջաններում: Վեպն ընթերցողի առաջ ժամանակային և հասարակական տարակերպ զուգահեռների մի երկար շարք է բացում:

Իր վառ դիտողականությամբ, ճշմարիտն արտացոլելու անկեղծ մղումներով և հոգեբանավորման բարձր արվեստով Փանջիկիձեն մոտ է կանգնած իր հոգեհարազատ նախորդներին՝ Դանիել Ճոնքաձեին և Ալեքսանդր Ղազբեգիին: Խոսքը ոչ թե թեմատիկ կամ պատկերային զուգահեռների մասին է, այլ արվեստի ճշմարտացիության յուրօրինակ ըմբռնման:

Տվյալ ժամանակաշրջանի արատները որսալու և գեղարվեստորեն ամբողջացնելու տեսանկյունից Փանջիկիձեի «Ակնաքար» վեպը հոգեհա-

րազատ է քսաներորդ դարի վրաց արձակի մյուս խոշոր ներկայացուցչի՝ Նոդար Դումբաձեի «Հավերժության օրենքը» վեպին: Երկու վեպն էլ մարդկային խեղված հարաբերությունների և ներդաշնակության ձգտման հակադրամիասնություն են: Երկու վեպում էլ հանդիպում ենք այնպիսի կերպարների, որոնք լիովին ենթարկվում են միջավայրի տրամաբանությանը: Երկու հեղինակն էլ ուղղակի կամ անուղղակի կերպով արտահայտում են հասարակական ներդաշնակության իրենց իդեալը: Դումբաձեի մոտ դա ստանում է **հավերժության օրենք**, իսկ Փանջիկիձեի մոտ՝ **ակնաքար** անվանումը: Սա հուշում է, որ խորագրի պոետիկայի տեսանկյունից նույնպես հոգեհարազատ են այս հեղինակները: Ե՛վ «Հավերժության օրենք», և՛ «Ակնաքար» խորագրերն արտահայտում են մարդկային հարաբերությունների ներդաշնակության հեղինակային ձգտումները:

Եթե Դումբաձեն ստեղծում է ապօրինի միջոցներով հարստացած Նուգզար Դարախվելիձեի կերպարը, ապա Փանջիկիձեն մեզ է ներկայացնում հղփացած և բարոյազուրկ հարուստների մի երկար շարք: Հատկանշական է այն հանգամանքը, որ երկու հեղինակներն էլ տարբեր չափերով անդրադարձել են կրթական համակարգի խնդիրներին: Խնդիրը դրսևորված ենք տեսնում նաև մեր գրականության մեջ. Վարդգես Պետրոսյանի «Ես արդեն մեծացել եմ, մայրիկ» վիպակում որոշակիորեն խոսվում է կրթական համակարգում առկա հովանավորչության մասին. «-Ես չեմ սիրում Զոովետը:

– Դա հիմա կարևոր չի: Ես էլ կուզեի, որ դու ինժեներ դառնաս, բայց Պոլիտեխնիկում որտեղի՞ց մարդ ճարեմ» [5, 64]: Փանջիկիձեն ավելի լայն անդրադարձ է կատարել կրթական համակարգում տիրող կամայականություններին: Փանջիկիձեի ըմբռնմամբ կրթական համակարգը կառուցված է ընդհանուր հասարակական սխեմայով: Հովանավորչության, տարակերպ ծանոթությունների հոսքը վերացնում է բուն կրթական գործընթացը, և ինչպես մյուս բոլոր հասարակական կազմակերպությունները, այնպես էլ կրթօջախը կորցնում է իր հիմնական գործառույթը՝ վերածվելով ձևական կառույցի. «Թամազ Իաշվիլին գիտեր, որ անբան տղայի թիկունքում բազմաթիվ հովանավորներ կան, որոնք սրան հրելով տանելու են և ոչ միայն դիպլոմի տեր են դարձնելու, այլև հասցնելու են շատ ավելի բարձր դիրքի: Շատ ժամանակ չի անցել նախորդ դեպքից: Այո, Գիորգածեին էլ այն տհասի բարի բախտն է սպասում՝ կթողնեն ամբիոնում և բոլորովին նշանակություն չունի, թե որ՝ մաթեմատիկայի, թե օրգանական քիմիայի, սև մետաղների մետալուրգիայի, թե հիդրավլիկայի: Կարծում եք դրանով կբավարարվե՞ն… Թեմա կտան, կօգնեն, առաջ կմղեն, պաշտոնի կդնեն: Եվ տարիներ անց նա հպարտությամբ կհիշի իր անցած ուղին, կգունազարդի ու կփայլեցնի, ինչպես իրեն է ձեռնտու» [7, 85-86]: Այս տեսանկյունից դատելով՝ կարող ենք նշել, որ Դումբաձեի Նուգզար Դարախվելիձեն համապատասխանում է ոչ միայն Փանջիկիձեի

վեպում արտացոլված դատարկապորտ հարուստների շարքին, այլև հենց ամբիոնի վարիչ Նիկո Կակաբաձեին: Եվ սա ավելի հստակ կերպով է արտահայտում հասարակական կյանքի անհուսալի անկումը. գիտության ոլորտի ներկայացուցիչը դառնում է գիտության դահիճը. նրա հոգեկերտվածքի ընդհանուր բնութագիրը գրեթե համահունչ է բարոյազուրկ հարուստների նկարագրին: Ե՛վ Փանջիկիձեն, և՛ Դումբաձեն հստակ կերպով արտահայտել են ոչ միայն իրենց երազած ներդաշնակությունը, այլև զայրույթը. եթե Փանջիկիձեի Թամազն ապտակում է հղփացած ուսանող Գեորգաձեին, ապա Դումբաձեի Բաչանան գիշերանոթն է փշրում Նուգզար Դարախվելիձեի գլխին. «– Աննամուսնե՛ր, ոչ խիղճ ունեք, ոչ պատվի զգացում, էս ի՛նչ մարդիկ եք դուք,– անսպասելի բացականչեց Թամազը և տեղից ցատկելով ապտակեց Գիորգաձեին» [7, 87]: «Դարախվելիձեն դույզն ետ գնաց: Բաչանան աչքով չափեց իրենց տարածությունը, ըստ կարելվույն լարեց բոլոր ուժերը, գիշերանոթը բարձրացրեց ու թափով իջեցրեց նրա գլխին: Անոթը փշուր-փշուր եղավ: Դարախվելիձեի աչքերը մթնեցին, դեմքի վրայով զարմացական ժպիտ սահեց, հետո նա աթոռից ընկավ ու երեսնիվեր փռվեց հատակին» [2, 82-83]: Այս պատկերները լավագույնս արտահայտում են հեղինակային զայրույթի աստիճանը: Անկախ վեպերում արտացոլված գործողությունների ընթացքից՝ և՛ Դումբաձեի, և՛ Փանջիկիձեի գլխավոր կերպարները «գիշերանոթ փշրողներ» են բոլոր կամայականությունների դեմ: Գիշերանոթ փշրող է Թամազ Իաշվիլին, երբ ապտակում է հղփացած ուսանող Գեորգաձեին, երբ հեռանում է հովանավորչության որջ դարձած ինստիտուտից, երբ առանձնանաում է ընտանիքից. գիշերանոթ փշրող է Օթար Նիժարաձեն, երբ ապտակում է Թամազին ծաղրող համադասարանցուն, երբ ընդառաջ չի գնում բարոյազուրկ Մանանա Գավաշելլու հրավերներին, երբ արժանապատվորեն հեռանում է խմբագրությունից:

Դումբաձեի վեպում կան մի քանի խորհրդանշական պատկերներ, որոնք լավագույնս արտահայտում են դարի էությունը: Վեպի կենտրոնական պատկեր-գործողությունը կարելի է համարել Բաչանայի ինֆարկտի տեսարանը. «Ցավն սկսվեց աջ ուսից: Հանկարծ շարժվեց դեպի սրտախորշը և կանգ առավ ծախ պտուկի տակ: Հետո ասես ինչ-որ մեկը ճեղքեց կուրծքը, կոշտուկապատ ձեռքը մխրճեց ներս և սիրտը կորզելով, սկսեց խաղողի ողկույզի պես ճմռել: Ճմռում էր դանդաղ և ջանադրաբար՝ մեկ-երկու, երկու-երեք, երեք-չորս…Ճմռեց, քամեց վերջին պուտ արյունը և սմքած ու ճխլած սիրտը նետեց մի անկյուն: Սիրտը կանգ առավ… Ո՛չ, ոչ թե կանգ առավ, այլ պատուհանին զարկված ճնճղուկի նման ապակու վրայով ընկավ ցած: Ընկավ, թպրտաց, դողդողաց ու անշարժացավ: Բայց սրտի կանգ առնելը դեռևս մահ չէ, այլ սարսափից լայն բացված աչքեր և տառապագին սպասում. Անիծյալը կբաբախի՞, կաշխատի՞

արդյոք, թե…» [2, 21]: Հիվանդ սրտի պատկերի միջոցով Դումբաձեն սիմվոլացրել է աներևդաշնակ հասարակությունը, որն արդեն դուրս է կոնկրետ իրականությունից:

Դումբաձեն ստեղծել է նաև դիմազուրկ մարդու՝ կապիկի խորհրդանշական պատկերը, որ կարող է ձևվել Փանջիկիձեի վեպի և ժամանակի այլ գրողների երկերում արտացոլված տարբեր կերպարների վրա: Դիմազուրկ են և՛ ամբիոնի վարիչ Նիկո Կակաբաձեն, և՛ ասիստենտության մեջ ծերացած դասախոսը, և՛ կարճահասակ դոցենտը, և՛ Գեորգաձեն, և՛ Մեդեա Զամբախիձեն, և՛ Մանանա Գավաշելլին, և՛ խմբագրության աշխատակիցներից մի քանիսը: Մարդկային դիմազրկության տագնապն է բարձրացրել նաև Դումբաձեի և Փանջիկիձեի հայ ժամանակակից Վարդգես Պետրոսյանը: Ճշմարտության բազմազանության արտահայտմամբ Պետրոսյանն ընդգծել է մարդկային դիմազրկությունը: Ի վերուստ միակը հռչակված ճշմարտությունը ոչ միայն երկփեղկվել է, այլև քառատվել, հնգատվել, բազմապատկվել, համապատասխանեցվել կոնկրետ իրավիճակների և կոնկրետ գործողությունների. «Հոր համար չկա մի ճշմարտություն, կա մի քանիսը, հարյուրը, նա կարծես թե մի մեծ, իսկական ճշմարտությունը մանրել է և ձեռք բերել մի քանիսը, հարյուրը,՝ ավելի փոքր, գործածական» [5, 67]: Դարի դիմազրկության այս տագնապը Պարույր Սևակն արտահայտել է «Դիմակահանդեսի գլխավորը» բանաստեղծությամբ.

Լսու՞մ եք ինձ:
Բավակա՛ն է,
Հանեցե՛ք ձեր դիմակները:
Հանեցե՛ք,
Որ քամու ձեռքով
Ձեզ կարոտած օդն ապտակի
Ձեր իսկական դեմքը տխեղծ… [6, 57]

Այս համատարած դիմազրկության փանջիկիձեական և դումբաձեական ըմբռնումները պայմանավորում են համապատասխան կերպավորման արվեստ: Դարի ընդհանուր ոգին պարտադրում է ստեղծել այնպիսի կերպարներ կամ ուղղակի անուններ, որոնք ենթարկվում են միջավայրի տրամաբանությանը: Դրանք բոլորը կարող են ձուլվել և ամբողջանալ դիմազուրկ մարդու դումբաձեական պատկերում: Բայց համատարած այդ դիմազրկությանը Փանջիկիձեն և Դումբաձեն հակադրում են այնպիսի կերպարներ, որոնք չեն ենթարկվում միջավայրի տրամաբանությանը: Դրանք ծնունդ են ներդաշնակության ձգտման:

Գուրամ Փանջիկիձեի կենսափիլիսոփայությունը

Փանջիկիձեի «Ակնաքար» վեպը խոր կենսափիլիսոփայություն ունի: Գրողը բերում է կեղծիքի և ճշմարտության, կյանքի և մահվան, բացարձակ արդարության և անարդարության իր ըմբռնումները: Դրանք լավա-

գոյնս արտացոլված են վեպի կերպարային համակարգում: Այս տեսանկյունից դատելով՝ կարող ենք նշել, որ Օթար Նիժարաձեի և Թամազ Իաշվիլու կերպարները որոշակիորեն հակադրվում են մյուս կերպարներին: Համատարած անարդարության օվկիանոսում նրանք ճշմարտության ու արդարության յուրատեսակ խտացումներ են: Իհարկե, Թամազի և Օթարի կերպարների մեջ նույնպես կան որոշակի տարբերություններ, որոնք զուտ մարդկային են: Ե՛վ Թամազը, և՛ Օթարը իրենց տեսակի մեջ «գիշերանոթ փշրողներ» են, բայց եթե Օթարն ուժեղ է փորձությունների և անարդարությունների դեմ, ապա Թամազը երբեմն թույլ և անօգնական է: Պատահական չէ այն հանգամանքը, որ գրողն Օթարի կերպարը ենթարկում է ամենածանր փորձության: Օթարն անընկճելի է անգամ մահվան ուժի առաջ: Ի հակադրություն Օթարի՝ Թամազը հեռազգաց չէ. հեղինակը ներկայացնում է նրա հոգեբանական անկման ամենածանր դրսևորումը՝ ինքնասպանության փորձը. «– Իհա՛րկե: Ավելի մեծ հիմարություն դժվար է պատկերացնել,– Օթարն զգաց, որ մխիթարելով կամ մեղմ խոսելով տհաճություն կպատճառի Թամազին,-Դու այնպիսի հիմարություն արեցիր, որ բոլորովին վայել չէ տղամարդուն, առավել ևս՝ քեզ նման կիրթ անձնավորությանը: Հիմնավոր պատճառ ունե՞ր, գուցե ուղեղիդ ծա՞լքը չլուսավորվեց գիտական աշխատանքի համար, գուցե ինստիտուտու՞մ պայմաններ չստեղծեցին: Նոր ինստիտուտում աշխատանքի ընդունվելուց հետո քո կողմից երախտամոռություն, ավելին՝ դավաճանություն էր ինքնասպանության փորձ անելը: Հապա հիշիր քեզ համար կուռք դարձած Աբելին, Գալուային և բազմաթիվ այլ մաթեմատիկոսների, որոնց անունները ես չեմ հիշում: Նրանք կարո՞ղ էին երազել նման պայմանների մասին: Ես նրանց ֆորմուլներն անգամ չգիտեմ, կենսագրություններին էլ ծանոթ եմ քո պատմածներից: Գեթ մի վայրկյան մտածե՞լ ես՝ վարվել նրանց նման, պայքարել այնպես, ինչպես նրանք են պայքարել: Առաջին իսկ արգելքը չկարողացար հաղթահարել, հուսահատվեցիր, զենքերդ վայր դրեցիր ու ձեռք բարձրացրիր սեփական կյանքիդ վրա» [7, 259]:

Աշխարհայացքային առումով և՛ Օթարը, և՛ Թամազը ընդօրինակելի և ընդունելի են հավասարապես, բայց չարիքին ընդդիմանալու ընդունելի եղանակը Օթարինն է, այլ ոչ թե Թամազինը: Թամազը բացարձակ արդարության ռոմանտիկ ձգտման կրողն է: Այդ ձգտումը երբեմն խոչընդոտում է անգամ գոյատևելու, ապրելու միջոցներին՝ ստեղծելով ծանր հակասություն, որի հաշտեցումը պիտի կայանար օթարյան կենսափիլիսոփայության միջոցով: Ե՛վ Թամազը, և՛ Օթարը ներկայացնում են բացարձակ արդարությանը հասնելու ուղիների հեղինակային ըմբռնումները: Պատահական չէ այն հանգամանքը, որ վեպի ողջ ընթացքում այս կերպարները տարակերպ բախումների միջով են անցնում, քանի որ վեպն իր ընդհանուր գաղափարական բնույթով ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդկայնո-

րեն վեհի և տիրող աներդաշնակության բախում: Մարդկայնորեն վեհի բախումը համատարած անարդարությանը ինքնին ողբերգական է, իսկ Թամազը և Օթարը, անկախ բնավորության առանձնահատկություններից, այդ ողբերգականի կրողներն են: Յուրօրինակ բախումներ են ոչ միայն Օթարի կռիվը փողացային խուլիգանների դեմ և Թամազի ապտակն անպատկառ ուսանողին, այլև Օթար-Մանանա և Թամազ-Մեդեա հարաբերությունները: Դարի չարիքի ամենաանողկալի դրսևորումներն են ներկայացնում այս կին կերպարները: Արտաքնապես գեղեցիկ և մինչև հոգու խորքն ապականված այս կանայք սիմվոլացնում են ընդհանուր հասարակությունը: Այս կերպարների զարգացման մեջ հեղինակը բացարձակապես հետևողական է: Զգացմունքազուրկ Մեդեայի համար ոչինչ չարժե բասկետբոլիստի կողմից պատվազրկվելը, ամուսնացած տղամարդու հետ կապվելը, և այն հոգեկան տառապանքը, որ, ըստ տրամաբանության, պիտի ապրեր Մեդեան, հեղինակը բեկում է Թամազի կերպարում: Մանանայի համար լիովին տրամաբանական է իր կիրքը Օթարի նկատմամբ, և ամուսնուն դավաճանելու մղումների ամոթը, որ պիտի դրսևորվեր իր մեջ՝ ենթարկելով խոր հոգեկան տառապանքի, բեկվում է Օթարի կերպարում: Հանճինս Մեդեայի և Մանանայի՝ Փանջիկիձեն ստեղծել է միայն ֆիզիոլոգիականով առաջնորդվող կերպարներ: Սա նույնպես արտահայտում է դարի նյութապաշտական էությունը. ֆիզիոլոգիականը նյութապաշտության յուրօրինակ դրսևորումներից է: Հայ բանաստեղծ Հովհաննես Շիրազը այսպես էր բնորոշում դարի էությունը.

Մենակ, այն էլ այս մարմնաշատ, այս մարմնապաշտ դարում…

[4, 368]

Օթարի վեհ պահվածքը լավագույն հաղթանակն էր այդ համատարած մարմնապաշտությանը:

Կառուցվածքային և գաղափարական տեսանկյունից մեծ նշանակություն ունեն վեպում տեղ գտած երկու առանձին պատմվածքները, որոնք շատ ավելին են արտահայտում, քան կարելի է պատկերացնել առաջին հայացքից: Այդ պատմվածքները բխեցված են վեպի կոնկրետ օղակից: Հեղինակը, կերպարային այլ հարթություն ստեղծելով, փորձում է պատճառաբանել գլխավոր սյուժետային գծի որոշակի իրողություն: Դիպաշարային այդ կապը կոմպոզիցիոն օղակի արժեք է ստանում՝ պատմվածքները հաջողությամբ կարելով վեպին: Բայց այդ պատմվածքների ձուլումը վեպին չի սահմանափակվում միայն սյուժետիկ ընդհանրություններով: Այդ պատմվածքներում հեղինակը տվել է իր կենսափիլիսոփայության յուրօրինակ խտացումները, որ կարող ենք տեսնել նաև վեպի այլ էջերում:

Առաջին պատմվածքում դրսևորվել է պատահականությունների փիլիսոփայությունը: Փանջիկիձեի ըմբռնմամբ բախտորոշը հաճախ պայմանավորված է պատահականով: Այս պատմվածքը կառուցված է հենց

պատահականությունների շղթայով, որի ավարտը ողբերգական մահն է. «Մի պայծառ, արևոտ օր Դավիթը իր նոր Մոսկվիչով Մցխեթա էր սլանում: Սպորտի պալատի առաջ, տրոլեյբուսի կանգառի մոտ, մոռացավ դանդաղեցնել ընթացքը: Հանկարծ նկատեց մի մարդու: Ոտքով անմիջապես սեղմեց արգելակը… Արդեն ուշ էր: Անիվների տակ Գրիգոլն էր: Դավիթը դուրս թռչելով մեքենայից՝ նետվեց դեպի զոհը: Գրիգոլն այլևս չէր շնչում» [7, 115]: Վեպում մենք քանիցս առնչվում ենք մահվան փիլիսոփայությանը: Փանջիկիձեն խոսում է ոչ թե օրինաչափի, այլ պատահականի մասին: Պատահականն օրինաչափի տարօրինակ խախտում է, բայց պատահականությունների փիլիսոփայությունը վեպում մեկ այլ օրինաչափություն է ստեղծում: Պատահականությունների ողբերգականությունը առաջ է բերում մի վայրկյանի փիլիսոփայությունը: Մի վայրկյանի անսահմանությունն իր մեջ ներառում է փրկության, մահվանը հաղթելու բոլոր տարբերակները, որ չեն ենթադրում ոչ մի անհավանականություն, ոչ մի սխրանք կամ հերոսություն, այլ միանգամայն օրինաչափ են, ավելի օրինաչափ, քան արդեն կատարվածը. «Այդ մի վայրկյանի փիլիսոփայությունը, չգիտես ինչու, մինչև հոգու խորքը վրդովում ու զայրացնում էր Թամազ Իաշվիլուն: Ո՛վ կարող է ասել, թե քանի-քանի «մի վայրկյան» ենք ունեցել մեր կյանքում և ահոգ ու անտարբեր անցել կողքով: Իր ողջ լայնքով ու երկարությամբ «մի վայրկյանը» երևան է գալիս, երբ դժբախտությունը տեղի ունեցած, իսկ մարդը մեռած է լինում: Ահա, թերևս այս պատճառով՝ Թամազին ոչինչ այնքան անիմաստ չէր թվում, որքան «մի վայրկյանի» փիլիսոփայությունը, վայրկյան, որի ընթացքում հնարավոր կլիներ խուսափելի մահից փրկել մարդու կյանքը» [7, 168]: Դաժան է ողբերգության փանջիկիձեական ընկալումը. «Երբեմն ողբերգության երրորդական, չորրորդական կողմը մարդու ավելի է դառնացնում կամ լացացնում, քան գլխավորը, կարևորագույնը» [7, 177]:

Երկրորդ պատմվածքում դրսևորվել է խղճի աղաղակի փիլիսոփայությունը: Սա ևս յուրօրինակ կերպով կապված է վեպի հիմնական սյուժետային գծի իրողություններին: Սրանով հեղինակն անուղղակի կերպով իր ցավն է արտահայտել խլացված մարդկային խղճի նկատմամբ: Հեղինակը խղճի աղաղակի արտահայտման հետաքրքիր գեղարվեստական հնար է կիրառել. այն դրսևորված ենք տեսնում նաև Դոստոևսկու, Սերո Խանզադյանի և այլ հեղինակների գործերում. «– Էլ ի՞նչ պտի պատահի, ա՛յ մարդիկ,– գոռաց նա և կարճ մեկնեց դեպի ինձ,– սրա՛ն նայեք, սրա՛ն, ա՛յ ձեր ոտքը պաչեմ: Էս կաթնակեր քորփան ռեխը վրաս ցրիվ է տալիս: Էն տեսակ խոսք ասաց, որ եթե շունն ուտի, կկատաղի: Ասում ա՝ «կնկանդ խրատի»: Խի իմ կնիկը դուրսընկա՞ծ ա, սիրական ա պահու՞մ: Խի իմ կնիկը գլխավերևը տղամարդ չունի՞, խի ես մեռա՞ծ եմ: Հը՞, ձեզ եմ հարցնում, ա՛յ ժողովուրդ, իմ կնիկն ի՞նչ ա, որ խրատեմ…» [3, 362-363]: «– Այդ ինչպե՞ս Դուք, այնուամենայնիվ արյունոտվեցիք,– ասաց Նիկո-

դիմ Ֆոմիչը՝ լապտերի լույսի տակ նկատելով արյան մի քանի թարմ բծեր Ռասկոլնիկովի բաճկոնակի վրա:

– Այո, արյունոտվել եմ… ամբողջովին արյունոտվել,– ինչ-որ մի առանձին տեսքով ասաց Ռասկոլնիկովը, հետո ժպտաց, գլխով արեց ու սանդուղքով ներքև գնաց» [1, 230]: Փանջիկիձեի գեղարվեստական հնարը հիմնված է արտաբերված խոսքի հոգեբանական արձագանքերի վրա: Այդ խոսքը, ի սկզբանե ասված լինելով բոլորովին այլ իրավիճակում, առաջ է բերում որոշակի հոգեկան ազդակ: Այն դառնում է հիշեցումը որևէ քողարկված կամ վաղուց մոռացված արարքի՝ առաջացնելով խղճի աղաղակ: Պատճառն ասված խոսքի և նախկինում կատարված դեպքի երևութական ընդհանրությունն է. «– Ախր, ինչու՞, բատոնո Ալեքսանդրե, մի՞թե չեք վստահում:

– Չեմ վստահու՞մ,– անսպասելի գոռաց Կոբիձեն: Նրա աչքերը չռվեցին, ծնոտը ծռվեց ձախ, իսկ այտերի մկանները սկսեցին խաղալ: – Չեզ ո՞վ ասաց, որ չեմ վստահում» [7, 135]:

Այսպիսով՝ Գուրամ Փանջիկիձեի «Ակնաքար» վեպն աչքի է ընկնում կյանքի խոր ճանաչողությամբ, կյանքի խավարը մերժելու անզուսպ մղումներով և մարդկայնորեն վեհի պանծացմամբ: Հեղինակն այստեղ առաջ է քաշել ժամանակաշրջանի բոլոր խնդիրները: Վեպը հագեցած է նաև խոր կենսափիլիսոփայությամբ, կյանքի և մահվան յուրօրինակ ըմբռնումներով, որ աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ: Փանջիկիձեի վեպը վրաց գրականության անմահ երկերից է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դոստոևսկի Ֆ., Ոճիր և պատիժ, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1962, 613 էջ:
2. Դումբաձե Ն., Հավերժության օրենքը, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1983, 264 էջ:
3. Խանզադյան Ս., Երկերի ժողովածու, 5 հատորով, հատոր 4, «Հայաստան» հրատ., Երևան, 1968, 524 էջ:
4. Շիրազ Հ., Քնար Հայաստանի, 3 գրքով, գիրք 3, Հայպետհրատ, Երևան, 1974, 416 էջ:
5. Պետրոսյան Վ., Ընտիր երկեր, 2 հատորով, հատոր 2, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1983, 608 էջ:
6. Սևակ Պ., Երկերի ժողովածու, 6 հատորով, հատոր 2, «Հայաստան» հրատ., Երևան, 1972, 472 էջ:
7. Փանջիկիձե Գ., Ակնաքար, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1982, 266 էջ:

РЕЦЕПЦИЯ СОЦИАЛЬНОЙ ДИСГАРМОНИИ В РОМАНЕ ГУРАМА ПАНДЖИКИДЗЕ «КАМЕНЬ ЧИСТОЙ ВОДЫ»

Карен Манучарян
ВГУ, Факультет армянской филологии,
Отдел армянского языка и литературы, магистратура 1-ый курс

РЕЗЮМЕ

***Ключевые слова**: жизненная философия, идеал, социальная модель, символический образ, композиционное кольцо, философия совести.*

В работе анализируется роман Гурама Панджикидзе «Камень чистой воды», в котором изображается безликость и социальная дисгармония данного периода времени. Проводятся параллели между различными произведениями Панджикидзе и современных ему армянских и грузинских писателей. В статье исследуется искусство воссоздания образности, особенности структуры произведений, акцентируется актуальность романа.

THE PORTRAYAL OF SOCIAL INCONSISTENCY IN GURAMPANJIKIDZE'S NOVEL "THE PRECIOUS GEM"

Karen Manucharyan
VSU, Faculty of Philology,
The Armenian Language and Literature Department, Master 1st year

SUMMARY

***Key words**: philosophy, ideal, social model, symbolic image, compositional circle, philosophy of conscience.*

The work studies GuramPanjikidze's novel "The precious gem", which illustrates the depersonalization and social inconsistencies of the time period. Parallels are drawn with Panjikidze's Armenian and Georgian contemporary authors' different writings. The author's art of characterization and the structural peculiarities of the novel are discussed. The novel's modernity and relevance are underlined.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՇԱՆԹԻ «ՀԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐ» ԵՎ «ԿԱՅՍՐ» ԴՐԱՄԱՆԵՐՈՒՄ

Նարեկ սրկ. Բեգունց
Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոց, 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ բ.գ.դ. ***Վ. Գրիգորյան***

Հանգուցային բառեր՝ *Լևոն Շանթ, «Հին աստվածներ», «Կայսր», մարդկային հոգու կատարելագործման խնդիր, Շանթի դրամատուրգիա, աբեղայի կերպարը*

«….կգա ժամանակը, երբ ճշմարիտ երկրպագուները
կերկրպագեն Հորը հոգով և ճշմարտությամբ,
քանի որ Հայրն էլ իրեն այդպիսի երկրպագուներ
է ուզում: Հոգի է Աստված, և նրա երկրպագուները
պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն…» (Հովհ.4:23-24)

Որպես նախաբան

Ասկետիզմը (ճգնակեցությունը) հատուկ է բոլոր կրոններին և գոյություն է ունեցել այն ժամանակներից սկսյալ, երբ ձևավորվել են կրոնական առաջին պատկերացումները հանդերձյալ կյանքի, հատուցման, պատժի և պարգևատրման մասին:

Բացառություն չկազմեց նաև քրիստոնեությունը: Ժամանակի ընթացքում ձևավորվեցին և կանոնակարգված ձև ստացան քրիստոնեական մենակեցության կանոնները, որոնք ոչնչով հետ չէին մնում նույնիսկ հնագույն կրոնների ասկետական ավանդույթներից: Եվ ինչպես շատ այլ կրոնների, այնպես էլ քրիստոնեության պարագայում, վանականությունը հանդիսացավ կրոնի ողնաշարը. որքան ուժեղ է ու զարգացած վանականությունը, այնքան ամուր են կրոնի հիմքերը:

Իրավամբ, ինչպես ուսումնասիրողներն են նշում, Լևոն Շանթը նոր խոսք ու նոր շունչ էր մեր գրականության մեջ, որ եվրոպական մակարդակի հասցրեց հայ դրամատուրգիան: Նույնիսկ չենք համարձակվի քննել այս իրողության տեխնիկական կողմը, առավել ևս այն պատճառով, որ դրանով անընդհատ զբաղվել են բազմաթիվ գրականագետներ և բարեբախտաբար դրանց շարքում նաև լավագույններն են եղել: Մեզ գրավողն ու հետաքրքրողն առավելաբար այս փաստի կրոնափիլիսոփայական կողմն է, և մեր ուսումնասիրությունն ընթացել է հենց այս ճանապարհով:

Ինչպես հայտնի է, Լևոն Շանթը բավականին տևական ժամանակ

ուսանել է Ճեմարանում, և այս հանգամանքը չէր կարող ազդեցություն չունենալ գրողի աշխարհայացքի վրա: Սրա, թերևս, ամենաակնհայտ ապացույցն է «Հին աստվածներ» դրաման, որի գաղափարական հիմքը կազմում է քրիստոնեական աստվածամարդացման, թեոսիսի ուղին:

«Հին աստվածների» աշխարհ գալուց մի քանի տարի հետո Շանթն ավարտեց իր «Կայսր» դրաման և ցույց տվեց, որ մարդկային հոգու կատարելագործման հարցում դեռ ամեն ինչ ասված չէ: Այսինքն՝ այս ստեղծագործությունը նախորդից սերված և նախորդի գաղափարական ընդգրկելիությունն ընդլայնող գործ էր:

Հետաքրքիր մի հանգամանք. «Հին աստվածներում» գլխավոր գաղափարակիր հերոսը՝ վանահայրը, ներկայացված է ավելի մռայլ՝ վանող գույներով, «Կայսրում» Օհան Գուրգենը, ինչքան էլ համակրելի, այնուամենայնիվ, որոշ վանող գծեր ունեցող գործող անձ է՝ արյունարբու, կնամոլ, վերջիվերջո, անկախ ամեն ինչից, նա ձեռք է բարձրացնում իր ընկերոջ վրա՝ անտեղյակ լինելով, որ ընկերը նույնն էլ պատրաստվում է անել իր դեմ: Միգուցե պատճառն այն է, որ հեղինակը որոշել է չիդեալականացնել գործող անձանց արհեստականությունից խուսափելու համար: Այնուամենայնիվ սրանք այն հերոսներն են, որոնց մեջ Շանթը զետեղել է ահռելի գաղափար՝ իր ստեղծագործության հոգին: Սրանք դառնում են հավիտենական կատարելագործման, հավիտենական վերելքի մարմնավորում:

Վ. Գրիգորյանն ասում է. «Ինչպես վանահայրը, այնպես էլ Օհանը, գոյակերպի անհեթեթությունը զգալուց հետո որոշում են դուրս գալ բնության ուժի տիրույթից»: Ի՞նչ է այս «բնության ուժի տիրույթ» ասվածը: Սա կրքերի ու բնազդային հակումների ամբողջություն է, որ ծանր բեռան նման խոչընդոտում է մարդկային հոգու թռիչքին: Մարդկային էության ամենախոցելի կողմը մարմինն է, և հենց այս կողմից է տեղի ունենում կրքերի հետևողական «հարձակումը»: Այս անողոք և հյուծող պայքարում մարմնի գլխավոր պաշտպանը մարդկային բանականությունն է…

Կան քննադատներ և հատկապես քրիստոնյա մտածողներ կամ քրիստոնեությանը դրսից ներս նայողներ, ովքեր մտածում են, որ քրիստոնեության մեջ հատկապես սրանք «հոգուն» և «հավատին» հակադրվող և դրանք բացառող եզրեր են, սակայն իրականությունն այլ է. սրանք անքակտելի և անօտարելի բաղադրիչներ են մարդկային էության, դրա կատարելությունն ու լիարժեքությունն ապահովող կարևոր մասնիկներ: Թյուր է այն կարծիքը, թե քրիստոնեությանը ատելի է ամեն երկրային ու նյութական բան: Ո՛չ, աշխարհի կատարածին մարդիկ Աստծո առաջ են կանգնելու ոչ միայն հարություն առած հոգիներով, այլև նորոգ-

ված մարմիններով: Քրիստոնեությունը իր հավատացյալին խոստանում է ոչ միայն Նոր երկինք, այլ նաև Նոր երկիր: Ուստի մարդու առաջ մեծ պատասխանատվություն է դրված՝ իր էության այս չորս կարևոր բաղադրիչները՝ մարմին-հոգի, հավատ-բանականություն, անխափան և անկորուստ հասցնել իրենց հավիտենական հանգրվաններին: Իսկ բանականության լույսն այն մեծագույն պարգևն է, որ մարդուն առանձնացրեց մնացյալ արարածներից և նրան արարչագործության պսակը դարձրեց, ուստի և անհնար է հասնել ճշմարիտ աստվածաճանաչողության, երբ այդ լույսը մարդու մեջ խավարած է:

Այլ հարց է, որ մարդկային էության այս բաղադրիչների միջև անվերջանալի պայքար է գնում կամ ավելի ճիշտ պե՛տք է գնա պայքար, քանի որ երկրային կյանքում այդ պայքարի ավարտը կնշանավորի մարդու պարտությունը հավիտենականության մեջ. «Քանի կապրինք, շինենք պիտի, պիտի շինենք մեր Աստծուն իր տաճարը. շինենք ու փլի, շինենք ու քանդենք, շինենք ու շինենք միշտ, բայց երբե՛ք, երբե՛ք չավարտենք: Հենց որ ավարտի, ալ տաճար չէ Աստծու, այլ…կռատուն» և հավելում «Կայսրը-…և մինչև ե՞րբ և մինչև ո՞ւր…

Հաննա-Մինչև ճերմակ բարձունքները, մինչև միգոտ կատարները, մինչև անհաս տենչանքները, մինչև մահուդ սահմանները…

Կայսրը-(տխուր երերացնելով գլուխը) մինչև անհուն տենչանքները…մինչև մահվան սահմանները…»:

Երկու գաղափարակիր հերոսներն էլ գտել են ճշմարիտ ուղին, սակայն առաջինի՝ վանահոր մեջ տեսնում ենք երկաթյա վճռականություն. նա գիտի՝ որտեղից է գալիս և ուր է գնում, և դա անում է անվարան: Իսկ ահա Օհանը հստակորեն չի տեսնում՝ իր ճանապարհն ուր է տանում. ի՞նչ արժի հավիտենական մաքառումը, եթե այն անփոխհատույց «ավարտվելու է» մահվան սահմանագծին…

Կցանկանայինք անդրադառնալ մի կարևոր հարցի, որին Շանթը ուղղակի և անուղղակի կերպով լայնորեն անդրադարձել է «Հին աստվածներում»:

Քրիստոսի կողմից երկրի վրա թողնված քրիստոնեությունը հայտնվեց խառը և տարասեռ մի միջավայրում, այն ժամանակվա աշխարհը ներկայացնող ներքին և արտաքին քաոսում, և այդ քաոսին այն պիտի տիրանար, օգտագործեր ի նպաստ իրեն, մարմնավորվեր նրա մեջ: Հասկանալի է, որ դա չէր կարող կարճ ժամանակում իրագործվել: Այն ժամանակների պատմական մարդկության զգալի մասը գերվեց քրիստոնեական ճշմարտությամբ, բայց անընդունակ գտնվեց այն յուրացնելու գիտակցաբար և ազատորեն: Քրիստոնեությունը ներկայացավ այդ մարդկանց

որպես գերագույն ուժ, որը տիրեց նրանց, բայց որին նրանք չկարողացան տիրել… այսպիսով ճշմարտությունը հեղինակություն զգեցավ, որը կույր վստահություն և հնազանդություն էր պահանջում…Մարդը՝ քրիստոնեությամբ ազատագրված աշխարհային թույլ ու տկար տարերքներից, ընկավ նոր հոգևոր իշխանության ավելի խորը ստրկության մեջ [3]: Այս ամենը տրամաբանական վախճանին հասավ, երբ մարդկային բանականությունը բարձրագոչ հռչակեց իր իրավունքները և բեկում մտցրեց հատկապես եվրոպական հասարակության հոգեմտավոր զարգացման ընթացքի մեջ: Այս ֆենոմենի ամենավառ արտահայտությունները եղան XVIդ-ի կրոնական ռեֆորմացիան և XVIII դ-ի քաղաքական դասակարգային հեղափոխությունը: Սրանից հետո մարդկությունն աստիճանաբար ընկղմվեց հակառակ ծայրահեղության մեջ: Աստիճանաբար բանապաշտությունն ու նյութապաշտությունը սկսեցին ամրացնել իրենց դիրքերը ի հաշիվ սկզբում եկեղեցու և ապա՝ հավատքի: Սակայն ռացիոնալիզմի մենիշխանությունը ևս հարատև չէր, քանի որ ըստ էության այն ճանապարհ էր դեպի անհայտություն և եթե այն լիուլի հագուրդ էր տալիս մարդկային բանականության ախորժակին, մյուս կողմից տեղիք էր տալիս ներքին, միգուցե նաև չգիտակցված, հոգևոր, ոգեկան սնունդի փնտրտուքի: Արդյունքն այն է, որ մեր ապրած օրերում մարդկությունը մի յուրատեսակ «շվեդական սեղանի» առաջ է, որից իր հոգեմտավոր հագեցումը ստանալու համար կարող է ազատորեն ընտրել, ըստ այնմ, թե ինչն է իր քիմքին ավելի հաճո:

Վերադառնանք Շանթին… ռացիոնալիզմի գերիշխանության ժամանակաշրջանի կիզակետում Շանթը մի կողմից դառնում է մեկը, ով ակնհայտորեն ձեռնոց է նետում եկեղեցու ընթացիկ բարքերին և մեկ առ մեկ ընդգծում է դրա բոլոր թերությունները, և մյուս կողմից մեկը, ով մատնանշում է աստվածամարդացման ճշմարիտ ուղին, և դրանով իսկ վեր է կանգնում իր ապրած ժամանակի բարոյախոսությունից: Շանթի հերոսը Աստծո համար կառուցվող տաճարին որպես հիմք դնում է իր բանականությունը, կամքը՝ որպես սյուն և հավատը՝ որպես հովանավոր և տանիք սրանց: Բանականության և սրբագործված հավատքի համաձուլվածքն է, որ մարդկային հոգուն վեր հառնելու թևեր է տալիս: Կույր հավատը, մի ինչ-որ կետի հասնելով, լճանում է և այլևս ընդունակ չի լինում վերելքի, իսկ մերկ բանականությունը օտարում է մարդուն Աստծուց: Իսկ կամքը պետք է մարդուն տոկալու համար: Անողոք է և անձանձիր մարդկային հոգու վերելքի դեմ պայքար մղող բնության ուժը, և աներևակայելի ուժ է պետք բնության տարերքին մինչև վերջ դիմադրելու և դրան չծուլվելու համար:

Կենսաբանության մեջ Քենոնի օրենք կա, ըստ որի՝ օրգանիզմի կատարելության մակարդակը որոշվում է նրա՝ շրջակա միջավայրի փոփոխություններից անկախ լինելու մակարդակով: Օրինակ՝ եթե ցածրակարգ սողունների մարմնի ջերմաստիճանը կախված է մթնոլորտային ջերմաստիճանից, ապա մարդու՝ որպես բարձրակարգ էակի, մարմնի ջերմաստիճանը հաստատուն է (36,6): Համեմատությունը տեղին է այս պարագայում ևս. որքան ավելի բարձր հոգեմտավոր մակարդակի վրա է գտնվում մարդը, այդքան ավելի քիչ է բնության և աշխարհի ազդեցությունը նրա վրա: Այսինքն՝ տերը պիտի իրեն վայել կարգավիճակում լինի և ոչ ենթակա իրեն ի սպաս դրվածների. արարչագործության պսակը պիտի լինի հենց «պսակին» վայել տեղում և ցույց տա, որ ինքն է արարչության զարդը:

Միաժամանակ Շանթը ցանկացել է ցույց տալ նաև, որ Արարչի և իր «գլուխգործոցի» հարաբերություններն ազատ են՝ զերծ պայմանականություններից, որովհետև դրանք արգասիք են կույր հավատի, հետևաբար՝ խոչընդոտ հոգևոր վերելքին: Երբ սամարացի կինը հարցնում է Հիսուսին երկրպագության ճշմարիտ վայրի մասին (մեր հայրերը[Գարիզին] լեռան վրա երկրպագություն արեցին, իսկ դուք ասում եք, թե միայն Երուսաղեմն է այն տեղը, ուր արժան է երկրպագել), նա հռչակում է գալիք կատարյալ հավատի առհավատչյան (…ճշմարիտ երկրպագուները կերկրպագեն Հորը հավատով և ճշմարտությամբ): Ահա այս նույն գաղափարի համար ընչաքաղց վանականները վանահորը հերետիկոս են անվանում: Պետք է նաև ճիշտ ընկալել եկեղեցու դերը. այն կոչված է իրագործելու մարդու և Աստծո հանդիպումը և հող նախապատրաստել ու մարդկային հոգում Աստծո հետ չմիջնորդավորված հարաբերության ծաղկման համար: Սակայն մարդը հակում ունի կաղապարվելու, իսկ այդ կաղապարից ինքը միայն կարող է ձերբազատվել. «Մինչև հոս ես կրնայի ձեզի բերել, մինչև հոս կարելի է բերել մարդը, բայց հոսկե անդին…հոսկե անդին, մարդը ի՛նքը պիտի երթա»: Ընդ որում՝ մարդու հոգին անպայմանորեն պիտի անցնի փորձությունների հնոցով, որպեսզի հնարավոր լինի նրա ազնվացումն ու կարծրացումը. «Ես ուզեր եմ անկարելին: Ես ուզեր եմ ազատեմ քեզի այն երկար գալարուն ճամփեն, որու դառնություններու ու տառապանքներու մեջեն միայն կիասնին մարդիկ այս սուրբ մենաստանը: Ես ուզեր եմ անկարելին»,– ասում է վանահայրը աբեղային, ով առաջին իսկ անգամից, առնչվելով աշխարհային փորձությանը, տանուլ է տալիս իր ողջ կուտակած հոգևոր հարստությունը: Աբեղայի հոգին «թևեր ուներ», նա ազատ էր կաղապարներից, սակայն նրա բանականությունը թրծված չէր կենսական փորձառությամբ: «Բանականություն չունեցողը չունի և

կամք, նա հեշտությամբ է տրվում գայթակղությանը, դառնում անկամ ու ենթարկվող» [1, 124]: Ի վերջո, ո՛չ իր անցյալը խորհրդանշող իշխանուհին, ո՛չ իր ներքին խոհերն ու զգացմունքները մարմնավորող ճերմակավորը չեն կարողանում գայթակղել ու ծնկի բերել Վանահորը: Իսկ Աբեղան ընկնում է ընդամենը իր պատրանքի սրից: Թերևս ճիշտ է Վ. Փիլոյանը. «Շանթի հերոսները նորի փնտրտուքի մեջ են» [2], բայց մի դեպքում տեսնում ենք, որ այդ փնտրտուքը հասցնում է կործանման (ի դեմս Աբեղայի), իսկ մյուս դեպքում տանում է մարդկային հոգու կատարելագործման (ի դեմս Վանահոր և Օհան Գուրգենի): Իսկ նրանք, ովքեր չեն գիտակցում այդ փնտրտուքի կարևորությունը, առանց այդ էլ կեցության ստորին սահմանագծին են մոտ:

Չենք թաքցնի, որ մեր համակրանքը առավել Վանահոր կերպարի կողմն է, քան «Կայսր» դրամայի հերոսի, քանի որ, մեր կարծիքով, Օհանի ձգտումը ավելի բանապաշտական էր, իսկ այդ ուղին, ինչպես վերը նշեցինք, գնում է դեպի անհայտություն: Ուստի և մենք ջատագովն ենք ավելի հիմնավորված մարդկային կեցության, համաձայնելով Դոստոևսկու՝ իր հերոսի բերանով արտահայտած գաղափարին. «Եթե անսկիզբ ու անվախճան Աստված չկա, ուրեմն ոչ մի առաքինություն էլ չկա, և այդ դեպքում պետք էլ չէ առաքինություն կոչվածը»:

Այսքանով ավարտենք մեր աշխատանքը՝ բնաբանի պարզաբանումը թողնելով «հավելված»-ին:

ԳՐԱԿՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Վ., Շանթի դրամատուրգիան, Հրազդան, 2002թ.:
2. Փիլոյան Վ., XX դարասկզբի գեղարվեստական ստեղծագործությունը և Լևոն Շանթի ստեղծագործությունը, Եր., «Լուսակն», 2006թ.:
3. Соловьёв Владимир Сергеевич, Исторические дела философии.

ВОПРОС СОВЕРШЕНСТВИЯ ЧЕЛОВЕЧЕСКОЙ ДУШИ В ДРАМАХ ШАНТА «СТАРЫЕ БОГИ» И «ИМПЕРАТОР»

Нарек Бегунц
Духовная семниария Вазгенян
Первопрестольного Святого Эчмиадзина, курс 4-ый

РЕЗЮМЕ

***Ключевые слова**: Левон Шант, драматургия Шанта, образ иеромонаха, «Старые боги», «Император», вопрос совершествии человеческой души*

Наша цель данной работе заключается в представлениидрамтургии Шанта, особенно в работах «Старые боги» и «Император», где мы хотим показать читателью, как автор, то есть Левон Шант, изображает совершествия человеческой души. Мы это обосновываем христианскими идеами. Как источник мы брали книгу В. Григоряна “Драматургия Шанта”.

QUESTION OF A PERFECTION OF A HUMAN SOUL IN SHANT’S DRAMAS "OLD GODS" AND "EMPEROR"

Narek Begunts
Vazgenyan thological academy of Sevan, course 4th

SUMMARY

***Keywords:** LevonShant, «Old gods», «Emperor», Question of a perfection of a human soul,Shant’sdramaturgy, character of monk*

Our purpose to this work consists in representation of a dramaturgy of Shant, especially in works "Old gods" and "Emperor" where we want to show readers as the author, that is LevonShant, represents perfection of a human soul. We prove it by Christian idea. As a source we took V. Grigoryan's book "Shant's Dramatic art".

ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑՈՒ «ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Սիլվա Գաստյան
ԿՊՀ, Բանասիրական ֆակուլտետ,
Հայոց լեզու և գրականություն, 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ **Լիլիթ Պետրոսյան**

Հանգուցային բառեր՝ *տերմին, լեզվական առանձնահատկություն, դեղաբույս, բնիկ և փոխառյալ բառեր:*

15-րդ դարի բժշկության մեծահամբավ ներկայացուցիչներից է Ա. Ամասիացին (մոտ 1420-1496 թթ.), որը հեղինակել է մի քանի բժշկագիտական երկեր՝«Ախտապատին», «Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց», «Օգուտ բժշկութեան»: Մենք ուսումնասիրել ենք մասնավորապես «Օգուտ բժշկութեան»[1] աշխատությունը (Ա. Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատությունը բաղկացած է երկու բաժիններից, որոնք հետևյալ խորագրերն ունեն՝ «Ուսումն բժշկութեան» (1459 թ., Կ. Պոլիս) և «Գիրք բժշկութեան տումարի») և կատարել դրանում առկա բուսաբանական տերմինների լեզվական առանձնահատկությունների քննություն:

Ա. Ամասիացու անձի և գործի հարցը ուշադրության կենտրոնում է եղել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի ուսումնասիրողների համար՝ Հ. Սեպետճյան, Դ. Հովնանյան, Ս. Վարդանյան, Լ. Հովհաննիսյան, Ա. Կարապետյան, Դ. Կարապետյան, Հ. Անասյան, Ի. Աբուլաձե և այլք:

Ա. Ամասիացու դեղագործական աշխատությունների քննությամբ զբաղվել է Հ. Սեպետճյանը: Վերջինս իր «Դեղագործությունը Հայաստանում ըստ Ամիրդովլաթի» հոդվածի մեջ, ուսումնասիրելով «Ախտապատին» և «Անգիտաց անպէտ» աշխատությունները, հանգում է այն եզրակացության, որ Հայաստանում բժշկական գիտելիքների հետ բավականաչափ զարգացած է եղել նաև դեղագործական արվեստը. «Այս հարցում Ամիրդովլաթի արժանիքը այն է, որ նա ամփոփել և սիստեմի է վերածել ժամանակաշրջանի դեղագիտությունը» [8, 87]:

Ա. Ամասիացու գիտական երկերի տերմինաբանությանը անդրադարձել է նաև Ս. Վարդանյանը: Հեղինակն իր արժեքավոր ուսումնասիրությունը կատարել է՝ հենվելով մասնավորապես «Անգիտաց անպէտ» աշխատության լեզվի քննության վրա: Ս. Վարդանյանն իրավամբ նշում

[1] Նշված աշխատությունն առկա է նաև թվային տարբերակով, որից օգտվել ենք մենք: Այդ տարբերակի էլ. հղումը հետևյալն է՝ http://www.digilib.am/digilib/:

է. «Ամիրդովլաթ Ամասիացին ոչ միայն հանճարեղ բժիշկ էր, այլ նաև իր ժամանակի հմուտ լեզվաբաններից ու բառարանագետներից մեկը: Մեծ ավանդ ունի նա բժշկական ու բուսաբանական տերմինաբանության բնագավառում: Իր «Օգուտ բժշկութեան», «Անգիտաց անպէտ», «Ախտապատին» աշխատություններում շարունակելով «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» և Մխիթար Հերացու «Ձերմանց մխիթարութեան» ավանդույթները, նա նոր ուղիներ բացեց հայրենական տերմինաբանության առջև» [4, 148-155]:

Ս. Վարդանյանը մեծարժեք տեղեկություններ է հաղորդում այդ ժամանակաշրջանում եղած բոլոր բժշկարանների և այն աղբյուրների մասին, որոնցից օգտվել է Ա. Ամասիացին: Հեղինակը կատարում է նաև ստուգաբանական աշխատանք՝ փորձելով ճշտումներ կատարել, թե տվյալ բառը Ա. Ամասիացին ո՛ր լեզվից է փոխառել և այլն:

Ներկայումս Ա. Ամասիացու աշխատությունների ուսումնասիրությամբ է զբաղվում Աստղիկ Կարապետյանը: Վերջինս տպագրել է Ա. Ամասիացուն նվիրված երկու հոդված՝ 1. «Ամիրդովլաթ Ամասիացու բժշկագիտական ժառանգության շուրջ» [4, 148-155] և «Արաբական փոխառությունները Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ» [5]: Առաջին հոդվածում հեղինակը համառոտաբար քննում է Ա. Ամասիացու բոլոր աշխատությունները և տալիս դրանց ընդհանուր նկարագրությունը, կարևոր դիտարկումներ կատարում բժշկապետի գործածած լեզվի, ինչպես նաև՝ օգտագործած գրականության շուրջ: Ա. Կարապետյանը նշում է. «….Ամիրդովլաթ Ամասիացին, ապրելով հայկական մշակույթի և գիտական մտքի բավականին մռայլ ժամանակաշրջանում, կարողացավ իր բժշկական աշխատություններով պահպանել համաշխարհային բժշկագիտական գրականության լավագույն ավանդույթներն ու յուրատեսակ առաջնորդ լինել հետագա դարերի բժիշկների համար:

Ա. Ամասիացին հսկայական ներդրում ունի հայ բժշկական մատենագրության մեջ՝ գրելով այնպիսի հիմնավոր աշխատություններ, որոնք յուրատեսակ դպրոց եղան հետագա դարերի բժիշկների համար» [4, 148]:

Մենք ևս, ուսումնասիրելով Ա. Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատությունը, ներկայացրել ենք հոդված հետևյալ վերնագրով՝ «Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկի բժշկական տերմինների լեզվական առանձնահատկությունները»[2]:

Այսպիսով, մենք սույն աշխատանքում նպատակ ունենք բուսաբա-

[2] Սույն հոդվածն այժմ տպագրման փուլում է. այն ներկայացվել է ԵՊՀ ՈՒԳԸ տարեկան գիտական նստաշրջանում, որը նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

նություն–լեզվաբանություն միջգիտակարգային հարաբերությամբ քննել Ա. Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկի բուսաբանական տերմինային համակարգը:

Դեղաբույսերի անվանումների կամ, այլ կերպ ասած, բուսաբանական տերմինների ուսումնասիրությունը պարզում է այն հանգամանքը, որ միջնադարյան մարդուն, թեկուզև բժշկին, ոչ միայն հայտնի են եղել այնպիսի դեղաբույսերի անուններ, որոնց գոյության մասին ներկայումս անգամ չգիտեն, կամ մոռացված են համարվում, այլև վերջիններիս տեղեկացվածությունն այդ դեղաբույսերի օգտագործման և օգտակարության գաղտնիքներին:

Ուսումնասիրելով աշխատության մեջ տեղ գտած դեղաբույսերի անունները՝ նկատեցինք, որ հեղինակը դրանք ներկայացնում է ըստ օգտակարության շրջանակների՝ կատարելով համապատասխան դասակարգումներ. Ա. Ամասիացին միավորում է այդ դեղաբույսերը՝ ըստ այդմ էլ աննկարագրելիորեն հեշտացնում է բժշկի կամ շարքային ընթերցողի գործը: Օրինակ՝ Ա. Ամասիացին գրում է. «Դեղեր որ զխլտն կտրէ», որից հետո ներկայացնում է այն բույսերի (և ոչ միայն) ցանկը, որոնք օգտակար են տվյալ պարագայում, կամ որոնց օգտագործումը կհանգեցնի համապատասխան հիվանդության բուժմանը կամ որոշակիորեն բարելավմանը, ինչպես՝ «Ոհպուլ. Հաշա. Իսխիլ. Խարտալ. Անճիրայ. Տարչին. Այրասայ. Զրեւանդ. Ախհաւան. Սազապ. Պապունաճ. Ծաթրին. Պօրայ. Ակրկարայ. Սխտոր. Ֆարֆիոն. Զաւտի. Ղուստ. Հարֆ. Նամնամ»:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Ա. Ամասիացին նկատել է միևնույն դեղաբույսի օգտակարությունը տարբեր հիվանդությունների ժամանակ. հեղինակը նման պարագաներում այդ բույսի անվանումը ներառում է միաժամանակ տարբեր շարքերում, ինչպես, օրինակ՝ «Ախհաւան» («Երիցուկ – *Matricaria*») բույսը օգտակար է միաժամանակ հինգ հիվանդությունների բուժման համար՝ 1. «Դեղեր որ զկալտածն բանայ», 2. «Դեղեր որ զխլտն կտրէ», 3. «Դեղեր որ ուռեցն հալէ», 4. «Դեղեր որ օգտէ կրակին այրածին», 5. «Դեղեր որ քուն բերե խիստ»: Կամ՝ «Այրասայ» բույսը, որը «Հիրիկ բույսը և նրա արմատը» (*Iris*) նշանակությունն ունի, նույնպես օգտակար է հինգ տարբեր հիվանդությունների բուժման նպատակով՝ 1. «Դեղեր որ զկալտածն բանայ», 2. «Դեղեր որ զխլտն կտրէ», 3. «Դեղեր որ օգտէ դեղնածի», 4. «Դեղեր որ աղէկ առնէ զխոցն», 5. «Դեղեր որ փսխեցնէ եւ զստամոքն սրբէ»:

Ա. Ամասիացին «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ, ի տարբերություն «Անգիտաց Անպէտ» և «Ախտապատին» աշխատությունների, ներկայացնում կամ պարզապես թվարկում է դեղաբույսերի անվանումները՝ ըստ վերջիններիս համապատասխան գործառույթի՝ այս կամ այն հիվանդության բուժման նպատակով, իսկ նշված մյուս երկու աշխատու-

թյունների մեջ անդրադառնում է արդեն այդ դեղաբույսերի բուն նշանակությանը և ցուցումներին, նկարագրում է դրանց արտաքին հատկանիշները, պահպանման առանձնահատկությունները և անդրադառնում նաև այդ դեղաբույսերի տարբերակման հիմունքներին, քանի որ, ինչպես գիտենք, շատուշատ դեղաբույսեր արտաքին մի շարք նմանություններ ունեն, և շատ հաճախ դրանց տարբերակումը լուրջ դժվարությունների կարող է հանգեցնել կամ նույնիսկ ակամա շփոթի պարագայում մարդկային կյանքի վտանգման կարող է հասցնել:

Մենք «Օգուտ բժշկութեան» երկում առանձնացրել ենք դեղաբույսերի շուրջ հարյուր իննսուն անուն:

Ներկայացնենք այդ բուսաբանական տերմիններից (բուսանուններից) մի քանիսը և դրանց քննենք առանձին-առանձին:

1. **Ասարոն** – Այս դեղաբույսի անվանումը հանդես է գալիս մի քանի տարբերակներով՝ *Ասարոն, Ասարում* և *Ասարօն:* Բառը փոխառություն է հունարենից (*ásaron*). զրվանդազգիների ընտանիքին պատկանող բույս է, հայտնի է նաև *սթեր* անվանումով, որի լատիներեն համարժեք անվանումն է հետևյալը՝*Asarum*: Դեղաբույսի օգտակարությունն Ա. Ամասիացին նշում է հետևյալ շարքում՝ «Դեղեր որ զերկնի բանայ»:

2. **Աֆթիմոն** – Այս տերմինն առկա է և՛ պարսկերենում, և՛ հունարենում հետևյալ տառակազմով՝ *aftimūn.* այսինքն՝ այս դեպքում ևս չենք կարող որոշել, թե Ա. Ամասիացին որ լեզվից է փոխառել նշված բառը: Աֆթիմոնը պատուտակազգիների ընտանիքին պատկանող բույս է՝ գաղձը, որի լատիներեն համարժեքն է *Cuscuta epithymum*-ը: Օգտակար է հետևյալ դեպքերում՝ 1. «Դեղեր որ զքամին վարէ եւ բանայ» և 2. «Դեղեր որ խլտերն բանայ»:

3. **Ըռազիան** – Գոյություն ունեն այս դեղաբույսի անվանման մի քանի տարբերակներ՝ *ըռազինայ, ըռազիան, ըռազիանայ, ըռազիանէ, ըռազիեան*: Այս տերմինն առաջ է եկել պարսկերեն *rāzyāna* բառից. այն հովանոցավորների ընտանիքին պատկանող բույս է՝ հոռոմ սամիթ: Բառի լատիներեն համարժեքն է հետևյալը՝ *Foeniculum officinale:*

4. **Ճինտիանայ** – Նշված դեղաբույսը նույնպես ունի իր անվան մի քանի համարժեքներ՝ *Ջինտիանայ, Ջանդիանէ:* Բուսաբանական այս տերմինի անվանումն առկա է և՛ արաբերենում (*ǰantiyān, ǰintiyānā*), և՛ պարսկերենում (*ǰentiyane*): Տվյալ դեպքում, այսինքն, պարզ չէ փոխառման մայր լեզուն: Այս դեղաբույսը բոգազգիների ընտանիքին պատկանող բույս է, հայտնի է նաև *բոգ* անվանումով: Տերմինի լատիներեն համարժեքն է հետևյալը՝ *Gentiana:* Դեղաբույսի գործածության դեպքերի նպատակահարմարությունը Ա. Ամասիացին նշում է հետևյալ շարքերում՝ «Դեղեր որ գոզն բանայ եւ յորդորէ» և «Դեղեր որ օգտէ դեղնածի», ինչը գալիս է կրկին ապացուցելու, որ դեղաբույսերը անկասկած բազմագոր-

ծառույթային (բազմաֆունկցիոնալ) են և կարող են օգտակար լինել միաժամանակ տարբեր հիվանդությունների բուժման համար:

5. **Շուշմայ** – Այս դեղաբույսի անվանումը փոխառնված է ասորերեն *šūšmā* բառից, այն քնջութազգիներին պատկանող բույս է՝ քնջութը: Լատիներեն համարժեքն է՝ *Sesamum:* Շուշման, ըստ Ա. Ամասիացու, օգտակար է փսխման և ստամոքսի մաքրման համար:

6. **Պասվայիճ** – Նշված դեղաբույսի անվանումը նույնպես մի քանի տարբերակներ ունի՝ *պասփայիճ, պասֆայիճ, պասպայիճ:* Տերմինն առաջացել է արաբերեն *bāsbayiǰ* բառից: Այն բազմոտիկազգիների ընտանիքին պատկանող բույս է՝ բազմոտիկ, կճութ: Այս դեղաբույսի անվան լատիներեն համարժեքն է՝ *Polipodium vulgare:*

7. **Պզր ղաթունէ** – Այս դեպքում նույնպես կան բուսանվան տարբեր համարժեքներ՝ *պզրկատուն, պզրկատունայ, պզրղաթուն, պզրղաթունէ, պզրղայտուն, պզրղատուն, պզրղատունայ, պզրղատունէ*: Բառը փոխառնվել է արաբերեն *bazr(a)qatūnā* բառից: Սա ջղախոտազգիների ընտանիքին պատկանող բույս է՝ հնդկական ջղախոտ, ճիականջ: Լատիներեն համարժեքն է՝ *Plantago indica:*

8. **Պուխուրի Մարիամ** – Դեղաբույսի անվանումը հայտնի է նաև հետևյալ հնչյունափոխված տարբերակներով՝ *Պխուրի Մարիամ, Պխուրմարիամ:* Տերմինի անվանումն առկա է ինչպես արաբերենում (*buxuri-maryam*), այնպես էլ պարսկերենում (*boxurmāryām*): Այս դեպքում ևս պարզ չէ փոխատու լեզուն: Պուխուրի Մարիամը գնարբուկազգիների ընտանիքին պատկանող բույս է, որը հայտնի է նաև *արջտակ* անվանումով: Բառիս լատիներեն համարժեքն է *Cuclamen europaeum*: Ա. Ամասիացին դեղաբույսի անվանումը ներկայացնում է «Դեղեր որ փսխեցնէ եւ զստամոքսն սրբէ» շարքում ի թիվս այլ դեղաբույսերի անվանումների:

9. **Սապռ** – Այս բուսանունն առկա է և՛ արաբերենում (*ṣabr*), և՛ պարսկերենում (*sabir*). այն շուշանազգիների ընտանիքին պատկանող բույս է՝ հալվե (*Aloë*): Այս դեպքում պարզ չէ տերմինի փոխառնման աղբյուր-լեզուն: Դեղաբույսն օգտակար է մի քանի հիվանդությունների բուժման համար՝ 1. «Դեղեր էր զխոցն չորացնէ առանց աղի», 2. «Դեղեր որ աղէկ առնէ զխոցն», 3. «Դեղեր որ կաշի բուսցնէ», 4. «Դեղեր որ խլտերն բանայ»:

10. **Սասալիոս** – Այս դեղաբույսի անվանումն առկա է և՛ արաբերենում (*sāsāliūs*), և՛ հունարենում (*séselis*): Սա հովանոցավորների ընտանիքին պատկանող բույս է, հայտնի է նաև *կապնդեղ* անվանումով, որի լատիներեն համարժեքն է *Seseli* բառը: Ա. Ամասիացին դեղաբույսի օգտակարությունը նշում է «Դեղեր որ զամրութիւն կակղացնէ» շարքում:

11. **Սուրինճան** – Նշված դեղաբույսն ունի անվանման մի քանի տարբերակներ՝ *Սուրինճան, Սորինճան, Սորնճան, Սորնջան:* Տերմինի

անվանումն առկա է և՛ արաբերենում (*sūrinǰān*), և՛ պարսկերենում (*surenǰan*): Այս բույսը շուշանազգիների ընտանիքին պատկանող բազմամյա բույս է, հայտնի է նաև *շնդեղ, վայրի քրքում* անվանումներով: Բառի լատիներեն համարժեքն է հետևյալը՝ *Colchicum:*

12. **Տրիֆիլ** – Այս բուսանունը Ա. Ամասիացին փոխառել էպարսկերեն *terfil* բառից: Այն ջրառվույտազգիներին պատկանող բույս է՝ ջրառվույտ եռատերև, լատիներեն համարժեքն է հետևյալը՝ *Menyanthes trifoliate:*

13. **Քեամոն** – Քեամոն բույսը հայտնի է նաև *քամոն* տարբերակով: Անվանումն առկա է և՛ արաբերենում, և՛ պարսկերենում, և՛ թուրքերենում: Առաջին երկու լեզուների դեպքում այն ունի *kammūn* տեսքը, իսկ վերջին դեպքում՝ *kimyon:* Սա հովանոցավորների ընտանիքին պատկանող բույս է, հայտնի է նաև *քեմոն, հայոց չաման* անվանումներով: Լատիներեն համարժեքն է հետևյալը՝ *Carum carvi:*

Ինչպես կարելի է նկատել, վերոբերյալ տերմինները (և ոչ միայն) գերազանցապես փոխառություններ են այլ լեզուներից՝ արաբերենից, պարսկերենից, հունարենից և այլն: Սակավ են բնիկ հայերեն բառերը (այս մասին կխոսվի ստորև):

Քիչ չեն նաև այնպիսի դեպքերը, երբ չենք կարող հստակորեն հավաստել, թե կոնկրետ որ լեզվից է փոխառնված այս կամ այն տերմինը, քանի որ այն միաժամանակ առկա է երկու և ավելի լեզուներում, որոնց հավասարապես տիրապետել է Ա. Ամասիացին: Թեական է նաև այն հարցը, թե արդյոք այդ տերմինները միջնորդավորվա՞ծ փոխառություններ են, թե՞ ոչ:

Ս. Վարդանյանը, խոսելով տերմինների փոխառյալ լինելու մասին, իրավամբ նշում է. «Միջնադարյան հայ բժշկական տերմինաբանության մեջ կիրառվող օտար փոխառությունները մուտք են գործել մեր լեզվի մեջ տարբեր պատմական շրջաններում: Սրանց մի մասն այնքան վաղուց է անցել հայերենին և մերվել նրա հետ, որ այլևս չի ընկալվում որպես օտար տարր» [9, 110]:

Ըստ այսմ, հաշվի առնելով վերոնշյալ այն հանգամանքը, որ բուսաբանական տերմինները մեծամասամբ փոխառնված բառեր են այլ լեզուներից, կատարել ենք նաև խնդրո առարկա տերմինների վիճակագրական հաշվարկ, որի արդյունքում տերմինները դասակարգել ենք հետևյալ բաժինների[3].

Ա) Փոխառյալ բառեր

1. **Արաբերենից փոխառություններ** – *ախհաւան (aqḥavān), ակրկարայ (ʿāqir qarḥā), ամլաճ (amlaǰ), այրասայ (ayrasa), աքլիլմէլիք*

[3] Տերմինները դասակարգելիս հաշվի ենք առել նաև ընդամենը մեկ օրինակի առկայությամբ դեպքերը:

(iklīl-ul-malik), զաճ (zāǰ), զանճապիլ (zanǰabil), ըռահան (rayḥan), ըռամաք (rāmak), թմրհինտի (tamra-ul-ḥindi), թրմուս (turmus), իթխիր (idxir), լուպնի (lubnī), լուֆահ (luffāh), խարպախ (xarbaq), խիարշամբայ (xiyāršanbar), համամայ (hamāmā), հանդաղուղ (handaqūq), հաշա(յ) (ḥāšā), հարմալ (ḥarmal), հարֆ (ḥurf), ղարիղոն (qariqūn), ղրտմանայ (qardmāni), ճաւզի մաթիլ (ǰauz-i-matil), մարմահուզ (marmāhūz), մու (mū), յուլէխ (ʻulaiq), շաֆքարան (šavkaran), շէհ (šiḥ), շէտարաճ (šitaraǰ), շուքահի (šukāi), պալիլաճ (balilaǰ), պահման (bahman), պասվայիճ (bāsbayiǰ), պատրուճ (bādrūǰ), պզր ղաթունէ (bazr(a)qatūnā), ջաւտայ (ǰutaj) (ǰuʻda), սալիխայ (salixa), սեքպինաճ (sakbanaǰ), ուպհուլ (ubhul), քարաւիայ (karaviā) և այլն:

2. **Պարսկերենից փոխառություններ** – *եապրոհ (yābruh), զրեւանդ (zerēvand), ըռազհան (rāzyāna), ըռասան (rāsan), ըռովանդ (revānd, rivānd), հայիֆարիղօն (hufariǧun), ճատվար (ǰadvar), մազարիոն (mazāryun), մարզանկոշ (mārzān-guš), նանախուհ (nānxāh, nanxuāh), շոնիզ (šunız), պարանճասիֆ (baranǰasaf, berenǰasef), սպանդ (sepānd, espānd), սունպուլ (sunbul, sombol), տարշիշան (daršišāʼan), տրիֆիլ (terfil), քալամ (kālām), քաշիմ (kāšim), քապարայ (kābār), քունթուս (kondoš)* և այլն:

3. **Հունարենից փոխառություններ** – *անիսոն (ánison), ասարոն (ásaron), մաստաքի (mastixa, mastixē)* և այլն:

4. **Թուրքերենից փոխառություն** – ընդամենը մեկ օրինակ՝ *սուսամ (susam)*:

5. **Ասորերենից փոխառություն** – ընդամենը մեկ օրինակ՝ *շուշմայ (šūšmā)*:

6. **Տերմիններ, որոնք առկա են և՛ արաբերենում, և՛ պարսկերենում** – *անճիտան* (արաբ. - *anǰudān*, պրսկ. - *angudān, angidan*), *ղուստ (qust), ճաւշիր* (արաբ. - *ǰāvšir*, պրսկ. - *gav-šir*), *ճնտիանայ* (արաբ. - *ǰantiyān, ǰintiyānā*, պրսկ. - *ǰentiyane*), *պան (ban), պանճ (banǰ), պապունաճ* (արաբ. - *bābūnaǰ*, պրսկ. - *babune*), *սազապ* (արաբ. - *sadāb, sazāb*, պրսկ. - *sodab*), *սաբր* (արաբ. - *ṣabr*, պրսկ. - *sabir*), *սումախ* (արաբ. - *summāğ*, պրսկ. - *somağ*), *սոտ* (արաբ. - *suʼd*, պրսկ. - *soʼd*), *ֆարասիոն (farāsiun), ֆարֆիոն* (և՛ արաբերենում, և՛ պարսկերենում այս բառն ունի միևնույն տառակազմը, իմա՝ *fārfiyūm, fārbiyūn*) և այլն:

7. **Տերմին, որն առկա է և՛ արաբերենում, և՛ հունարենում** – *սասալիոս* (արաբ. - *sāsāliūs*, հուն. - *séselis*):

8. **Տերմիններ, որոնք առկա են և՛ արաբերենում, և՛ պարսկերենում, և՛ թուրքերենում** – *յոտ* (արաբ. - *«ud*, պրսկ. - *ud*, թուրք. – *öd*), *սինամաքի* (և՛ արաբ., և՛ պրսկ. - *sanā-i-Mekki*, թուրք. - *sinameki*), *քեամոն* (և՛

արաբ., և՛ պրսկ. - *kammūn*, թուրք. - *kimyon*):

9. **Տերմին, որն առկա է և՛ արաբերենում, և՛ թուրքերենում** – ընդամենը մեկ օրինակ՝ *չախայիղ* (և՛ արաբ., և՛ թուրք. - *šāğayığ*):

10. **Տերմին, որն առկա է և՛ պարսկերենում, և՛ թուրքերենում** – ընդամենը մեկ օրինակ՝ *քարաւիզ* (պրսկ. - *kārāfs*, թուրք. - *kereviz*):

Ինչպես կարելի է նկատել, դեղաբուսական տերմինները գերազանցապես փոխառյալ բառեր են արաբերենից, երկրորդ տեղում են պարսկերենից փոխառությունները, իսկ հունարենից, թուրքերենից և ասորերենից փոխառությունները նկատելիորեն զիջում են նշված երկու լեզուներից փոխառնված բառերին: Փոխառնված բառերն էլ Ա. Ամասիացին աշխատել է տառադարձությամբ (որևէ լեզվի բառերի արտասանության գրանցումը մեկ այլ լեզվի այբուբենով կամ պայմանական նշաններով) հնարավորինս հարմարեցնել մեր լեզվի հնչյունական օրենքներին համապատասխան և միաժամանակ՝ նաև պահպանել մայր լեզվի արտասանությունն ու գրելաձևը, ինչպես, օրինակ՝ «hamāmā» արաբերեն բառը հեղինակը տառադարձել է հետևյալ կերպ՝ «համամայ» (ինչպես տեսնում ենք՝ բառը լիովին համապատասխանում է հայերենի՝ տվյալ դեպքում՝ միջին հայերենի հնչյունական օրենքներին), կամ՝ «kālām» պարսկերեն բառը տառադարձել է «քալամ»:

Կան նաև դեպքեր, երբ Ա. Ամասիացին դիմել է գրադարձության: Գրադարձությունը այլ լեզվի հնչյունների և հնչույթների գրառումն է համապատասխան լեզվի այբուբենով. այն ենթադրում է նաև դիակրիտիկ (տարորոշիչ) նշանների գործածություն անհրաժեշտության դեպքում: Բերենք համապատասխան օրինակ՝ *ʻāqir qarḥā* արաբերեն տերմինը հայերենում ստացել է *ակրկարայ* ձևը, որը նույնպես Ա. Ամասիացին աշխատել է գրադարձել հայերենի հնչյունական օրենքներին համապատասան:

Դեղաբուսական վերոբերյալ տերմինների ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ դեղաբույսերի անվանումները (բուսաբանական տերմինները) վերլուծական կամ համադրական բառեր են.

1. **Վերլուծական տերմիններ** – *ճաւզի մաթիլ, պզր դաթուլ* և այլն:

2. **Համադրական տերմիններ** – *անճիտան, հայիֆարիղօն, ղրտմանայ, պապունաճ, սազապ, սինամաքի, սումախ* և այլն:

Ինչպես կարելի է նկատել, համադրական բառերն իրենց քանակով գերազանցում են վերլուծական բառերին:

Բ) Բնիկ հայերեն բուսանուններ

Այս տերմինները, ի համեմատություն փոխառյալ բառերի, զգալիորեն զիջում են վերջիններիս: Սա, կարծում ենք, պայմանավորված է այն հանգամանքով, որ օտար ծագում ունեցող բժշկական և դեղաբուսական տերմինները համարվում են մասնագիտական, և նախապատվությունը,

թերևս, տրվել է այս տերմինների հենց մայր աղբյուր-լեզվով բառի գործածմանը, քանի որ այդօրինակ դեպքերում համապատասխան տերմինը մեծ մասամբ հասկանալի կլիներ միայն բժիշկ-մասնագետին և հասանելի չէր լինի սովորական բնակիչներին: Սա, ըստ երևույթին, նախազգուշական մեթոդի նպատակ էր հետապնդում, քանի որ այդ դեղաբույսի (և ոչ միայն) անվանումն արդեն իսկ կարող էր տվյալ հիվանդին հուշել իր չարորակ հիվանդության մասին, ինչը կարող էր վատ հետևանքների հանգեցնել և խաթարել այդ հիվանդի ապրելու ցանկությունը և այլն: Նաև մեր օրերում, ինչպես հայտնի է, գերազանցապես գործածվում են հիվանդությունների, դեղաբուսական միջոցների, բժշկական գարծառույթների և այլն լատիներեն համարժեքները: Սա էլ, թերևս, նույն նպատակն է հետապնդում՝ վատ ազդեցություն չթողնել հիվանդի առողջականի վրա և հավատարիմ մնալ Հիպոկրատի երդմանը՝ դրա կարևոր դրույթներին:

Հարկ է, սակայն, նշել, որ յուրաքանչյուր փոխառյալ տերմին ունի իր հայերեն համարժեքը, սակայն Ա. Ամասիացին գործածել է մեծ մասամբ փոխառյալները:

Այդուհանդերձ, Ա. Ամասիացին իր «Օգուտ բժշկութեան» երկում գործածել է բնիկ հայերեն մի քանի բառեր, որոնց ստուգաբանությունը կատարել ենք ըստ Հ. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան» (Երևան, 1971թ.) և Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարան» (Երևան, 2010թ.) բառարանների:

Ընդհանուր առմամբ մենք առանձնացրել ենք հայերեն ինը տերմին, որոնք, ըստ կառուցվածքի, դասակարգել ենք.

1. **Արմատական բառեր** – *դաղձ, կտաւատ* (կտավատազգիների ընտանիքին պատկանող բույս, վուշ)[4], *մօշ* (կարմրանազգիների ընտանիքին պատկանող թուփ, կարմրաև, մոշավայրի)[5], *սխտոր* (շուշանազգիների ընտանիքին պատկանող բույս)[6]:

2. **Բաղադրյալ բառեր** – *գառնալեզու* (ջղախոտազգիների ընտանիքին պատկանող բույս, ջղախոտ, եզան լեզու), *կանչխոտ* (հափուկազգիների ընտանիքին պատկանող բույս. հափ(ր)ուկ), *կապրցախ* (կապարազգիների ընտանիքին պատկանող բույս, հիրիկ), *հինկտերեւ* (աղավ-

[4] Այս բույսի անվան առթիվ Հ. Աճառյանը նշում է, որ ծագումն անհայտ է. հավանաբար մյուս լեզուները մեզնից են վերցրել (Հայերէն արմատական բառարան, Երևան, 1926, էջ 675):

[5] Այս բույսի անվան առթիվ Գ. Ջահուկյանը նշում է. «…. Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *mors - (*moro- > հայ. *մոր*)՝*մորշ>մշ* անցմամբ (հմմտ. *mors-> բ. *մոռ* (հ.-ե. *rs > *րշ* և *ռ* տարբերակմամբ)» (Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 534):

[6] Փակագծերում նշված բացատրությունը՝ ըստ **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան (2-րդ բարեփոխված հրատարակություն), Երևան, 2009 թ.:

նիճազգիների ընտանիքին պատկանող կարճ ծառ, աբրահամածառ, հագնի), *ձարխոտ* (բազմոտազգիների ընտանիքին պատկանող բույս, դիվաճար):

Բնիկ հայերեն տերմինների (և ոչ միայն) անվանումների որոշ մասը, ինչպես կարելի է նկատել, ստեղծվել է այդ տերմինների ասոցատիվ բնույթից, այն է՝ տվյալ դեղաբույսի արտաքին հատկանիշներից, կենդանու մարմնի որոշ մասի անվանումից (սովորաբար բառի մեջ առկա է լինում նաև տվյալ կենդանու անվանումը) և այլն, ինչպես, օրինակ՝ *գառնալեզու, կանչխոտ, հինկտերեւ* և այլն:

Այսպիսով, ուսումնասիրելով Ա. Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատությունը և սրանում առկա դեղաբուսական տերմինների (շուրջ հարյուր իննսուն անուն) լեզվական առանձնահատկությունները, գտանք, որ այդ տերմինների մեծամասնությունը փոխառություն է օտար լեզուներից՝ միաժամանակ հարմարեցված հայերենի հնչյունական օրենքներին: Հեղինակն իր աշխատության մեջ գործածել է նաև բուսաբանական բնիկ հայերեն տերմիններ, որոնք, սակայն, իրենց քանակությամբ նկատելիորեն զիջում են փոխառյալ տերմիններին:

Ա. Ամասիացու կատարած նշանակալից աշխատանքը մինչ օրս էլ իր անհատնում օգտակարությունն է բերում նաև այժմյան բժշկության, մասնավորապես՝ դեղագործության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան Հ., Հայերէն արմատական բառարան, Երևան, 1971:
2. Ամասիացի Ա., Օգուտ բժշկութեան, Երևան, 1940: http://www.digilib.am/digilib/?menu
3. Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երևան, 1979:
4. Կարապետյան Ա., Ամիրդովլաթ Ամասիացու բժշկական ժառանգության շուրջ, ԲԵՀ, 3 (120), Երևան, 2006:
5. Կարապետյան Ա., Արաբական փոխառությունները Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ, Կանթեղ, 2010, №3:
6. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան (2-րդ բարեփոխված հրատարակություն), Երևան, 2009:
7. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010:
8. Սեպետճյան Հ., Դեղագործությունը Հայաստանում ըստ Ամիրդովլաթի, Աշխատություններ ՀՍՍՌ ԳԱ ՀԲԲՊ սեկտորի, հմ. 2, Երևան, 1949:
9. Վարդանյան Ս., Ամիրդովլաթ Ամասիացին և միջնադարյան հայ բժշկական տերմինաբանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», № 4, Երևան, 1990:

ИЗУЧЕНИЕ БОТАНИЧЕСКИХ ТЕРМИНОВ ПРОИЗВЕДЕНИИ АМИРДОВЛАТА АМАСИАЦИ "ПОЛЬЗА МЕДИЦИНЫ"

Сильва Гасоян
ВГУ, Факультет армянской филологии,
Отдел армянского языка и литературы, курс 4-ый

РЕЗЮМЕ

Ключевые слова: *термин, языковая особенность, лекарственное растение, родные и заимствованные слова*

Наша цель данной работы заключается в изучении терминологической системы произведении А. Амасиаци "Польза медицины".

Изучая произведение А. Амасиаци "Польза медицины", а также языковые особенности лекарственных растений (сто девяносто), мы обнаружили, что большинство терминов заимствованны из иностранных языков, в то же время адаптированны к фонетическим законам армянского языка. Автор в своей работе так же использовал армянские родные ботанические термины, которые, однако, значительно уступают заимствованным словам.

THE EXAM OF BOTANICAL TERMS OF THE WORK "BENEFIT OF MEDICINE" BY AMIRDOVLAT AMASIATSI

Silva Gasoyan
VSU, Faculty of Armenian Philology,
The Armenian Language and Literature Department, 4th year

SUMMARY

Keywords: *Terminology, language feature, herbs, native and loan words.*

Our goal of this work is to examine the botanical terminology system works by A. Amasiatsi "Benefit of Medicine".

Studying A. Amaiatsi "Benefit of Medicine" by herbal and sharpened existing terms (one hundred ninety) language features, we found that the majority of loan terms in foreign languages at the same time adapted to the language phonetic laws. The author has used in his work as well Armenian native botanical terns, which, however, significantly lower than the amount of their loan terms.

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ ԱՊՐՈՒՄԻ ԲԱՌԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՍԻՄՎՈԼԻԿ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ (METAPHORA)

Սոնա Ալավերդյան
ԳՊՀ, Բանասիրական ֆակուլտետ,
Հայոց լեզու և գրականություն 4-րդ կուրս
*Գիտ. ղեկավար՝ բ.գ.թ, դոցենտ **Թեհմինա Մարության***

***Հանգուցային բառեր՝** Ե. Չարենց, սիմվոլ, մետաֆոր, կրակ, մուսա, ճանապարհ*

Բանաստեղծն ասում էր-
«Տվեք ինձ մի բառ և ես աշխարհը կշրջեմ ոտից գլուխ»:
Սոսկ մի բառ՝ թաքնված բոլոր բառերի մեջ [6]:

Ապրումի բառային դրսևորումների վերածումը սիմվոլիկ պայմանականության: Յուրաքանչյուրս որոշակի պատկերացում ունենք մեր մտավոր կամ հոգեբանական կյանքի մասին: Մենք պատկերացում ունենք արտաքին և ներքին աշխարհների գոյության մասին, ինչպես նաև՝ թե ինչպես է արտաքին աշխարհը ճանաչվում մեր կողմից: Այս առումով հետաքրքիր է պարզել, թե ինչպես է ապրումը ներկայացվում մեր «ներքին էկրանի» միջոցով՝ արտացոլելով «դրսի աշխարհը» և միևնույն ժամանակ զերծ մնալով օբյեկտիվ նկարագրություններից:

Կենտրոնանալով մարդկանց ներաշխարհի վրա՝ 19-րդ դարի վերջից սիմվոլիստները փորձում են ներկայացնել նրանց հոգեկան վիճակը, առարկաների ու երևույթների անճանաչելի էությունը՝ հենվելով բառ–խորհրդանիշների վրա: Իսկ այս բառ–խորհրդանիշներն էլ կապվում են սիմվոլիզմի գեղագիտական համակարգում առկա «ոգու ողբերգության» և իրականության հանդեպ անհաշտության գաղափարի, կեցության իմաստի և ճշմարտության հավիտենական իդեալի որոնումների, բացասական ամեն կարգի արժեքների նկատմամբ արտահայտված «գեղագիտական խռովության» և հույսի ծրագրերի հետ:

Այս առումով հայկական սիմվոլիզմը թեև ուշացած երևույթ էր, ինչպես Ս. Աղաբաբյանն է իրավացիորեն նկատում՝ «անժամանակյա (անախրոնիկ) արձագանք» [1, 41], բայց այն իր հետ բերեց մի ամբողջ ճկուն համակարգ, սիմվոլներով արտահայտված աշխարհվերաբերմունք:

Մի կողմից՝ ազգային – տեսլական հոգեբանությունը, մյուս կողմից՝ սիմվոլիստների տեսլական գեղագիտությունը՝ որպես երկու իմացական աղբյուրներ, սնում են վաղ Չարենցի գեղարվեստական մտածողությունը [1, 44]:

Մարդու ներաշխարհի բացահայտման համար Չարենցը իր ապրումները, հանելուկային տեսիլքներն է ներկայացնում բառի միջոցով՝ վերածելով այն **սիմվոլիկ պայմանականության**: Նրան այլևս հետաքրքիր չէ իրական աշխարհը, նա տարբերակներ է որոնում՝ արտահայտելու այն, ինչը թաքնված է նրա ետևում: Բանաստեղծը սկսում է իր ճանապարհը, որն անցնում է տեսիլների, երազ – իրականություն զուգահեռների միջով:

Իբրև օրինակ վերը քննված խնդրի (թե ինչպես է Չարենցը ընտրում սիմվոլներ, օգտագործում դրանք՝ ներկայացնելու իր ստեղծագործական բուն էությունը)՝ անդրադառնանք «կրակ» և «ճանապարհ» սիմվոլներին, քանի որ մյուսները (կին, ծիածան ևն) պատշաճորեն և համակողմանիորեն ուսումնասիրվել են գրականագետների կողմից:

Կրակ: Չարենցի ստեղծագործության մեջ «կրակի» սիմվոլը հասկանալու համար նախ և առաջ անհրաժեշտ է պարզել, թե ինչ կապ կարող է լինել հին հունական դիցաբանության Պրոմեթևսի, հին հնդկական դիցաբանության Սոմայի դիցաբանական կեպարների և աստվածաշնչյան Կրակի լճի միջև:

Հայտնի է, որ հին հունական դիցաբանության մեջ **Պրոմեթևսը**՝ մարդկանց հովանավորը, որը նաև մարդկային նորմալ գոյություն է, կերպարանք, գողանում է *կրակը* աստվածներից և նվիրում մարդկանց, ինչի պատճառով Զևսը դաժանորեն պատժում է նրան՝ գամելով Կովկասյան լեռներին: Այս առասպելում Պրոմեթևսը ներկայացնում է մարդկությունն ամբողջությամբ, որը, պատժվելով աստծուց, ապոկալիպսիսի կամ կրակի ոչնչացման վտանգի առջև է կանգնում: *Ապոկալիպսիսը* (հուն.՝ «բացահայտում») բառացիորեն թարգմանվում է իբրև իմացության մերկացում, այսինքն՝ բարձրացնում է հայտնության վարագույրը: Կրոնական կոնտեքստում այն սովորաբար ինչ – որ թաքնված բանի բացահայտումն է՝ «կանխատեսումը երկնային գաղտնիքների, որոնք կարող են իմաստ հաղորդել երկրային իրականությանը» [11, 59]: Աստվածաշնչի «Հայտնություն» գրքի հունարեն անունը «Ապոկալիպսիս» է: Սա հուշում է, թե ինչի մասին է գիրքը: Ըստ դրա՝ վերջին օրերին կհայտնվի մի կեղծ մարգարե (**Հակաքրիստոս**), ում մարդիկ կուրորեն կհետևեն: Նրան կհաջորդի

երկրի կործանումը, որը կլինի տարբեր եղանակներով: Մարդիկ կճաշակեն երկրաշարժեր, կտանջվեն սովից ու բնության այլ աղետների զոհը կդառնան: Այս ամենից հետո Հակաքրիստոսը կիշխի աշխարհը որոշ ժամանակ, մինչև որ չարի և բարու կռվում կհաղթի Քրիստոսը:

Սոման հին Հնդկաստանում աստվածային խմիչք էր, որը քուրմերը ճզմում էին հատուկ բույսի տերևներից և օգտագործում կրոնական ծիսակատարությունների ժամանակ: Այդպես էր նաև այդ խմիչքի աստծո անունը՝ Սոմա: Հաճախ Սոմային նույնացնում էին Լուսնի աստծո հետ, և լուսինն էլ էին կոչում այս անունով: Հետո Սոմա էին անվանում նաև անձրևը: Այսպիսով, Սոմա՝ բույս, անձրև, աստված:

«Այդ կրակի վրա աստվածները հավատի մատաղն են անում: Այդ մատաղից հայտնվում է տիրակալ Սոման… Այդ մատաղից հայտնվում է անձրևը… Այդ կրակի վրա աստվածները անձրևի մատաղն են անում: Այդ մատաղից հայտնվում է ուտելիքը»:

«Սոմային արված մատաղը ամենակատարյալն է…» [12, 115]:

Սոման համարվել է աշխարհի, երկնքի, օրենքների տիրակալը, **կրակի աստվածուհին**, առաջին արարիչը, որն իբր Արեգակին ստիպել է փայլել, պարգևել է հարստություն, բարիքներ, սնունդ, վանել է հիվանդությունները, սպանել հրեշներին, ոչնչացրել չարախոսներին, կատարել բազմաթիվ այլ բարի արարքներ: Հին հնդկական (վեդայական) կրոնի մեջ՝ ուրախության, առույգության ու քաջության աստվածը:

Այժմ անդրադառնանք աստվածաշնչյան **Կրակի լճին**: Այն խորհրդանշում է հավիտյան կործանում: Նույն բանն է, ինչ որ գեհենը, բայց տարբերվում է դժոխքից, որը մարդկանց համընդհանուր գերեզմանն է: Կրակի լիճը խորհրդանշում է մեկ այլ՝ «երկրորդ մահ»: Չնայած որ երկուսն էլ ներկայացնում են ամբողջովին անգործունյա վիճակ, սակայն տարբերվում են իրարից, քանի որ Աստվածաշնչում ոչ մի խոսք չկա երկրորդ մահից հարություն առնելու մասին: Օրինակ՝ Աստվածաշունչն ասում է, որ Հիսուսն ունի «դժոխքի և մահի բանալիները», ինչը ցույց է տալիս, որ նա իշխանություն ունի հարություն տալու այն մարդկանց, որոնք մահացել են Ադամից ժառանգած մեղքի պատճառով: Սակայն ո՛չ Հիսուսը, ո՛չ էլ մեկ ուրիշը չունի Կրակի լճի բանալիները: Այս խորհրդանշական լիճը ներկայացնում է **հավիտենական պատիժ**՝ հավիտենական կործանում: Կործանման ենթարկվել են սատանան, մահը, գազանը, սուտ մարգարեն:

Այս երեք, միմյանցից տարբերվող կոնտեքստները ունեն որոշակի

գլխավոր ընդհանրություններ: Նախ՝ բոլորում էլ առկա է «կրակի» կերպարը՝ սիմվոլը, ապա՝ բոլոր կոնտեսքտներում կրակը պատճառ կամ միջոց է դառնում հակադրության մեջ մտցնելու երկու ծայրակետեր՝ **չար ու բարի**, և այդ հակամարտության արդյունքում առկա է հաղթանակող կողմ (Զևսը հաղթում է Պրոմեթևսին (որ հետո քրիստոնեական կոնտեքստում պիտի ստանա Քրիստոս vs. Հակաքրիստոս տեսքը), Սոման՝ հրեշներին, չարախոսներին, իսկ Հիսուսը՝ սատանային, մահվանը, գազանին, սուտ մարգարեին):

Հիմա հասկանանք, թե ինչ կապ կա **չարենցյան «կրակի»** սիմվոլի և վերը թվարկվածների միջև: Սկսած «Հրո երկիր» շարքից՝ մեր աչքի առջև այն կա, ծավալվում, զարգանում և նոր բովանդակություն է ստանում: Հեղինակը դեռևս անորոշ երազում է մի երկիր, որտեղ «մարմինը ու հոգին» «ողջակիզվեն Արևի մեջ»: Կա ցավից փախուստ դեպի հաճույք, մահվան գիտակցման փաստից՝ դեպի կյանքի «ողջակիզվող կրակ»:

Դոփում են պայտերը, կայծկլտում են վա՛ռ,
Կայծերը նետի՛ պես ճեղքում ե՛ն գալիքը,
Հողմի մեջ փլչում են շենքերը մարմար.
Ամեն տեղ հրդեհ է, ու հուրը — բարիք է [9, 272]:

Տեսնում ենք, որ հուսահատության պահերին «կրակը» կարող է լինել հույսի սիմվոլ: Ահա թե ինչու քնարական հերոսը վերցնում է կրակը, **կամ ինչ դրանից մնացել է**, և հետևաբար ներկայանում որպես նոր մարդ:

Հեքիա՛թ է կյանքը, ու մարդը – կրակ [9, 67]:

Կրակի մասին խոսակցությունը ծավալվում է «Սոմա»-ում, որտեղ հնդիկների դիցաբանական բռնկումը բերվում է կենտրոն՝ խմիչքից փոխակերպվելով և ստանալով նոր աստիճան՝ հուր, կրակ, Ագնի: Կրակը որոշակի գործառույթ է իրականացնում.

1. նախ կիզելով մարմինը՝ ազատում է նրան գոյության ձևից, «աննյութանում», տանում վերացական – ցնորական աշխարհ (հիշենք աստվածաշնչյան Կրակի լճում գտնվողներին՝ անձև կերպարներին),

2. ապա տանում երկրային իրականություն՝ հագցնելով նոր մարմին, այսինքն՝ իջեցնում արդեն նյութական աշխարհ:

Ինչպես տեսանք, «կրակը» նախ տալիս է անմահություն, «անձնացում», հոգեկանացում (աստվածաշնչյան կոնտեքստում՝ սատանան, մահը, գազանն ու սուտ մարգարեն դատապարտված են անմահության. չկա հարություն, որովհետև չկա նաև հակառակ ասպեկտը՝

մահը), և ապա՝ հոգու մարմնականացում, նյութականացում: Բայց նոր մարմին ունենալը (հարություն առնելը) դեռևս չի ենթադրում ուրախության զգացում.

Տո՜ւ էր, տոնակա՜ն
Ձոհերի հանդես —
Բայց ինչո՞ւ այնքան
Տրտում էի ես... [10, 10]

Քնարական հերոսը շարունակում է փնտրել «անվերջ, անդադրում» հենման կետ: Հույս կա, որովհետև կրակը դեռ ապրում է իր մեջ բոլոր ոչնչացումների, ավերումների միջով: Սա ցույց է տալիս, որ հույսը դեռ ապրում է անգամ **ապոկալիպտիկ իրավիճակներում**: Կրակը իր ներսում կրելով՝ փորձում է գոյատևել չարության և մթության ժամանակներում և փնտրել: Եվ հանկարծ՝

Քո դեմքը տեսա, որպես սրբազան
Մի զոհաբերում.
Քո դեմքը տեսա աշխարհասասան
Այս հրդեհներում [9, 63]:

Տեղի է ունենում ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի թոթափում՝ **կատարսիս,** կրակի միջոցով, որը միշտ է եղել, բայց ներսում ամրակայած չի եղել ու չի հրդեհել: Հիմա սրտից դուրս է գալիս, «ծփալով» անցնում աշխարհով մեկ, որպեսզի վերը թվարկված երեք կոնտեքստների հիմնական խնդիրը լուծվի՝ «Եվ կյանքը այս չար, այս կյանքը տխուր» [9, 65] փոխվի: Իսկ փոխվելու համար միջոց դառնում է «հրդեհը մաքրող», «բոցը հրաշեկ» (ինչպես մեր քննած դեպքերում): Արդյունքում՝

Հո՛ւրը թող մնա,
Հրդե՛հը հոգու,
Ու հրաշք դառնա
Սո՛ւմա, խոսքը քո [9, 68]:

Ի՞նչ է մնացել, լոկ «հուրը», «հրդեհը հոգու»: Բայց եթե Կրակի լճի դեպքում կրակի առկայությունը **հավիտենական կործանման խորհրդանիշն** է, փրկության հույս այլևս չկա, ապա Չարենցի պարագայում կրակի առկայությունը **հավիտենական մաքրագործում** է, «սուրբ կրակ».

Բայց վառվի՛ պիտի սիրտս մոխրացած
Քո բոլո՛ր գալիք արշալույսներում [9, 69]:

Ապրումի բառային դրսևորումների վերածումը փոխաբերության (metaphora): Մետաֆորան (հուն.- փոխաբերություն), ըստ Արիստոտելի, «բառի սեփական նշանակությունը փոխադրում է այլ բառի վրա: Բառը ընդհանուր հասկացությունից փոխադրվում է մասնավորի վրա, մանավանդ ընդհանուրի վրա, մասնավորից մասնավորի վրա, կամ ըստ անալոգիայի՝ ընդհանուրից մասնավորի վրա» [4, 195-196]:

Մետաֆորի ձևավորման գործում շատ որոշակի դեր է խաղում գրողի երևակայությունը, բանաստեղծների գիտակցության մեջ արտացոլվող երևույթների հոգեբանական երկվությունը ստիպում է անիմանալիին ենթարկել անիմիստիկ առարկայացման: Դա մտքի այնպիսի մի թելադրանք է, անշահախնդիր խաղ, զորեղ անուրջների արգասիք, որ դուրս է մտքի վերահսկումից [3, 134]:

Հայ գրականության մեջ Չարենցը ստեղծել է մետաֆորային մի բարդ և հետաքրքիր համակարգ, որի իմաստային – գեղարվեստական կառուցվածքի մեջ բանաստեղծական լեզվի մյուս երևույթների հետ մտնում են նաև «սիմվոլը» և «միֆը»: Մետաֆորը ծառայում է բանաստեղծի ապրումի ներկայացմանը՝ մի դեպքում աշխարհի՝ իբրև սիվոլի և միֆի բացահայտմանը, ապա՝ աշխարհի՝ իբրև իրադարձության բացահայտմանը և վերջում՝ աշխարհի՝ իբրև ստեղծագործության բացահայտմանը (վերջինս դիտվում է մարդկային կեցության կոնկրետ դիրքերից):

Մուսա: Հայտնի է, որ Չարենցի ստեղծագործությունը որակական նոր հարթության վրա է կանգնում «էպիքական լուսաբաց» ժողովածուով: Բայց դրա համար նա պետք է կարողանար ինքն իրեն հաղթահարել, պետք է ստեղծեր որոշակի **հոգեբանական պատնեշ**: Պատնեշը թույլ կտար Չարենցին գտնել մի ձև՝ իր և իր գրածի շուրջ եղած արձագանքի համար պաշտպանվելու և նոր ուղիներով ընթանալու, նոր գործեր ստեղծելու. այսինքն՝ կառուցեր անհանգստության միջև ապահով տարածություն, մինչ ինքը կստեղծագործեր:

Մոդելներ փնտրելու ճանապարհին (**մոդել**, որ կդառնար իր հոգեբանական պատնեշը), նայելով տարբեր ժամանակների կտրվածքով, որպեսզի պաշտպանվի ստեղծագործական շնորհի հետ կապված էմոցիոնալ վտանգներից, նա հասնում է Հին Հունաստան և Հին Հռոմ:

Հին Հունաստանում և Հին Հռոմում մարդիկ չէին հավատում, որ ստեղծագործական շնորհը գալիս է մարդկային էակներից: Մարդիկ հավատում էին, որ ստեղծագործական շնորհն աստվածային ուղեկից ոգի է, որն այցելում է մարդկային էակներին մի հեռավոր և անճանաչելի աղբ-

յուրից հեռավոր և անճանաչելի պատճառներով: Հույները ստեղծագործական շնորհի այդ աստվածային ուղեկից ոգիներին անվանում էին «**դեմոն**»: Ինչպես գիտենք, Սոկրատեսը հավատում էր, որ նա ուներ մի դեմոն, որը հեռվից իրեն իմաստություն է հաղորդում: Հռոմեացիները ունեին նույն գաղափարը, բայց նրանք այդ ստեղծագործական շնորհին՝ մարմնից անջատ ոգուն, անվանում էին հանճար: Սա հետաքրքիր է, որովհետև հռոմեացիները չէին մտածում, որ հանճարը խելացի անհատն է: Նրանք հավատում էին, որ հանճարը կախարդական աստվածային էակն է, որը, ըստ իրենց, բնակվում է արվեստագետի սենյակի մեջ, դուրս է գալիս և անտեսանելիորեն օգնում արվեստագետին աշխատել:

Եվ ահա այս «հանճարն» էլ՝ մուսան, դառնում է Չարենցի հոգեբանական այն պատնեշը, որը պիտի օգնի աշխատանքի արդյունքից պաշտպանվելու համար (հիշենք, որ Չարենցից առաջ ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության ներկայացուցիչներից շատերն են դիմել այդ մոդելին): Եվ նա գիտի, թե դա ինչպես է գործում, նա գիտի, որ իր մարմնից անջատ ունի մի հանճար, որն օգնելու է: Բայց նախ պետք է փնտրել ու գտնել նրան.

Նախ՝ աղջիկ էիր դու մի հասարակ,
Որ դեմս ելար օրերում դժնի:
Անծրև էր մաղում իմ գլխին բարակ,
Ու չկար կյանքում սրբազան կրակ:
Ու լույսն էր ծորում երբեմն լուսնի [9, 358]:

Եվ եթե ինչ – որ խոչընդոտներ առաջանան, դա ամբողջությամբ իր մեղքը չէ, այդտեղ մեղավորության մեծ մասը պատկանում է մուսային: Այսինքն՝ ոչ թե բանաստեղծն է ստեղծագործական հասունացման փուլերով անցնողը, այլ իր մարմից անջատված «հանճարը»: Նա է մեղավոր, եթե երգերը «գունատ» էին, որովհետև

Գունատ էիր դու, ինչպես մահամերձ,
Եվ չգիտեին շրթերդ խնդալ.
Եվ տխուր էին գգվանքները մեր,
Եվ սերդ, ինչպես լուսնահարի սեր,
Անկիրք էր այնպես ու սանտիմենտալ [9, 358]:

Եվ այդ ստեղծագործական մրրիկները վնասել, «խանձել են» ոչ թե իր, այլ մուսայի դեմքը: Այսինքն՝ **«մուսայի» մետաֆորը** կապող միջոց է հեղինակի համար՝ փորձելու հասկանալ ստեղծագործական կյանքի ճանապարհի անհաջողությունների և հաջողությունների տարօրինակ և

անսպասելի հոգեբանական կապը:

Կյանքի մեծ մասը մարդ անցկացնում է իր գոյությունից դուրս մարդկային փորձի շղթայի միջնահատվածում, որտեղ ամեն ինչ նորմալ է, կանոնավոր ու հուսադրող: Բայց հանկարծ այդ հուսադրող աշխարհում մի կտրուկ ձախողում, և նա միանգամից ընկնում է մութ աշխարհ, հուսահատության «մթության շենք»: Ուստի միակ բանը, որ պետք է, պահպանելն է էմոցիոնալ հավասարակշռություն, ճշգրիտ հեռավորություն **նրա և նրանից շպրտված «եսի» միջև**: Չարենցի մոտ այդ շպրտված «եսը» հանդես է գալիս մուսայի տեսքով: Մուսայի գոյությունը արդեն իսկ հուսադրող է, որովհետև հեղինակը կարող է ձախողվել ու ձախողվել, մինչև որ վերջապես հաջողվի հաստատուն կանգնել՝ այդ ամբողջ ընթացքում լինելով ապահով միջակա դիրքում իր և իրենից շպրտված «ես»-ի՝ մուսայի միջև: Ահա թե ինչու է մուսան նրա ներկայանում քույր – գթասրտության, «միակ բարձր Ղեկավարի» տեսքով.

Քո՛ւյր իմ քարե... դու – մարմարե
Մի ձեռքով սուրբ բռնած քնար,
Մյուսով – սուր կայծակնահար,–
Եղել ես քո՛ւյր ինձ արդարև
Եվ միակ բա՛րձր Ղեկավար [9, 729]:

<u>Ճանապարհ</u>: Մարդկային ձեռնարկումների մի կարևոր մաս են կազմում ճանապարհները: **Ճանապարհը** և **շարժումը** ենթադրում են ոչ միայն մի կետից մյուսին անցում, այլ մի փոքր ավելի. այն մեր **հավաքական գիտակցությունն** է: Ճանապարհը մտնելու և միևնույն ժամանակ փախչելու միջոց է, այն ավարտի, բայց միևնույն ժամանակ զարգացման խորհուրդն ունի:

1934 թ. լույս տեսավ Չարենցի «Գիրք Ճանապարհի» ժողովածուն՝ ստեղծագործական գործունեության հավաքական վերջին մատյանը: Ինչո՞ւ այն վերնագրվեց որպես *Ճանապարհի գիրք:*

Գևորգ Էմինի վկայությամբ [8, 391] Չարենցը այդ շրջանում ծանոթացել է դաոսականության հիմնադիր **Լաո – Ցզիի «Գիրք Ճանապարհի և առաքինության»** աշխատության ռուսերեն թարգմանությանը: Այս վկայությունը հաշվի առնելով՝ Ս. Աղաբաբյանը [2, 252-253] մեզ հուշում է[1],

[1] Աղաբաբյանը արդարացիորեն նշում է, որ այդ կապի մասին առաջին անգամ խոսել է Թ. Մակուչյանը «Գիրք Ճանապարհի...» հոդվածում (Առանձնատիպ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտական գիտական աշխատությունների ժողովածու, № 6, 1-ին պրակ, Երևան, 1972):

նախքան Չարենցի վերջին մատյանին անդրադառնալը, քննել դաոսիզմը՝ հասկանալու Չարենցի ստեղծագործության վերջնարդյունքի ակունքները:

Հին չինական փիլիսոփայության մեջ առավել տարածված դպրոցների (կոնֆուցիոսականություն, մոհզմ, օրինապաշտներ, անուններ (իմաստուններ) և ինյաններ (բնափիլիսոփաներ)) կողքին լուրջ ուսմունք է **դաոսականությունը կամ դաոսիզմը**: Դաոսիզմի հիմադիրն է կիսառասպելական իմաստուն Լաո – Ցզին (ծերուկ երեխա): Նրան է վերագրվում «Դաո դե ցզի» («Գիրք Ճանապարհի և առաքինության») աշխատությունը, որում ամփոփված են դաոսական փիլիսոփայության հիմնական գաղափարները: Դաոսականները քննարկում են ինչպես տիեզերաբանական, բնափիլիսոփայական, այնպես էլ մարդաբանական և բարոյագիտական հարցեր:

Դաոսիզմի փիլիսոփայության հիմնական հասկացությունը **Դաոն** է, որը նշանակում է **ուղի**, **սկզբնապատճառ**, **օրենք, կարգ**, **աստված** և այլն: Չինական փիլիսոփայության պատմության մեջ Դաոն մեկնաբանվել է հիմնականում երկու իմաստով՝ մի կողմից որպես մարդակերպ գծերից զուրկ աստվածություն, որպես հոգևոր սկիզբ, բանականություն, իսկ մյուս կողմից՝ որպես նյութական նախասկիզբ, բնական ուղի, բոլոր գոյերի նախահիմք ու զարգացման բնական սկզբունք: Համենայն դեպս երկու մեկնաբանության դեպքում էլ Դաոն ըմբռնվում է որպես գոյի նախասկիզբ, որպես զարգացման ու փոփոխման ընդհանուր ուղի: Գոյություն ունեցող ամեն ինչ ծագում է Դաոյից, այն հավերժական է, միասնական, անփոփոխ, անվերջ ու անսահման:

«Մեծ Դաոն հոսում է ամենուր: Նա կարող է գտնվել և՛ աջում, և՛ ձախում: Նրա շնորհիվ էակները ծնվում են և աճում անարգել: Նա սխրանքներ է գործում, բայց չի ձգտում փառքի: Սիրով **դաստիարակում է բոլոր էակներին**, բայց իրեն չի համարում նրանց տիրակալ» [5, 17-18]:

Չարենցին ահա սա էր գրավել՝ «դաստիարակվելը»՝ առանց տիրակալի գոյության փաստը՝ որպես վահան, գլխավերևում ունենալու և, հակառակը, զարգանալը միմիայն **սեփական ճանապարհի**, շարժման շնորհիվ: Ընտրելով ճանապարհի մետաֆորը՝ բանաստեղծը ցույց է տալիս «եսի» և սեփական մշակույթի **ինքնաբացահայտման ուղին:** Ճանապարհը ճանապարհորդին ներկայանում է իբրև լայն հնարավորություն սեփականի հայտնության պահի համար: Բայց ողջ ընթացքը լի է զառիթափերով, և ամեն շրջադարձ, թվում է, նոր լույս և նոր վտանգ է:

Քո ռունգներում անմահ բույրե՛ր դու կբերես,
Որ թերևս և ո՛չ մի մահկանացու
Դեռ չի շնչել կյանքում, որ թերևս
Կենսատու են, կամ, գուցե, մահացու [9, 544]:

Եվ Չարենցը հանգում է **հավերժական ճանապարհի** գաղափարին.

Եվ կոպերիդ ներքո շռայլությամբ վերջին
Արևը իր բույրը կվառե,
Իսկ ժամանակը, որպես հավերժական երգիչ –
Կշշնջա անմահական բառեր... [9, 545]

Կարելի է զուգահեռ հիշել Կոմիտասի բանաստեղծություններից «Ճանապարհ»-ը.

Բարակ ուղին սողալով,
Ոտի տակին դողալով,
Ճամփի ծայրին բուսել է
Կյանքի ծառը շողալով:
Ի՜նչ լայն սիրտ է, որ ունի
Այս ճանապարհն Անհունի…
Մարդու, բույսի, գազանի
Եվ թևավոր թռչունի [7, 49]:

Երկու դեպքում էլ ունենք ճանապարհ և ճանապարհորդ, որոնք ուղևորվում են դեպի անծանոթ ու անհայտ աշխարհներ, և ահա գիտակցականի և ենթագիտակցականի, այսինքն՝ խոհի և հույզի ներծուլման կայարանում էլ տեղի է ունենալու հանդիպում «Անհունի» հետ: Բայց դա վերջին կանգառը չէ. այն ենթադրում է ոգու մշտական շրջապտույտ, հաջորդական գոյության ցիկլ՝ **սամսարա**՝ վերադարձ, որը ոգու մաքրագործման շարունակական ընթացքի մի փուլն է դեռ.

Հազար կարավանի բեռներից ավելի
Հարուստ կլինի ոգիդ վերադառնալիս,
Իբրև բարիք՝ կբերես բաղձանք անբավելի,
Կպարգևես նրանց, որ ցանկանան քեզ մահ և կորուստ
դառնագին... [9, 544]

Ինչպես տեսանք, չարենցյան «Ճանապարհը» մարմնի՝ գլխապտույտ հետագծով սուրալն է տարածության մեջ, ուր մարդը նայում է միայն **սեփական** աչքերով, որովհետև նա ընտրել է **սեփական ճանապարհը**, և ուրեմն ժամանակը չի մեռնում, չի ոչնչանում, քանի որ բոլորի աչքերով նայելն է սպանում ժամանակը, ոչնչացնում այն ամբող-

ջությամբ:

Այսպիսով, սույն վերլուծությունները, սիմվոլից դեպի մետաֆոր տանող ընթացքը ներկայացնելը նպատակ ունեին քննելու Չարենցի պոետական համակարգը գիտակցականի և անգիտակցականի միասնությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Աղաբաբյան, Եղիշե Չարենց, գիրք 1-ին, «Հայկական ՍՍՀ ԳԱ», Երևան, 1973:
2. Ս. Աղաբաբյան, Եղիշե Չարենց, գիրք 2-րդ, «Հայկական ՍՍՀ ԳԱ», Երևան, 1977:
3. Զ. Ավետիսյան, Գրականության տեսություն, «Նաիրի», Երևան, 1998:
4. Արիստոտել, Պոետիկա, «Հայպետհրատ», Երևան, 1955:
5. Ս. Ա. Զաքարյան, Փիլիսոփայության պատմություն, «Նաիրի», Երևան, 2000:
6. Հ. Էդոյան, Փողոցի բաժանվող մասում, «Ապոլլոն», Երևան, 2006:
7. Կոմիտաս, Բանաստեղծություններ, «Հայաստան», Երևան, 1969:
8. Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին (Չարենցի հետ), «Հայպետհրատ», Երևան, 1961:
9. Ե. Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, «Երևանի համալսարան», Երևան, 1984:
10. Ե. Չարենց, Պոեմներ և բալլադներ, «Լույս», Երևան 1985:
11. Bart D. Ehrman, How Jesus Became God: The Exaltation of a Jewish Preacher From Galilee, «HarperOne», 2014. https://sample-854704efb00b2a2a97502f0a456e0e5b.read.overdrive.com
12. Hermann Oldenberg, The Religion of the Veda, «Motilal Banarsidass», Delhi, 1988. https://books.google.am/books?id

ПРЕВРАЩЕНИЕ СЛОВЕСНОГО ПРОЯВЛЕНИЯ ЖИЗНИ В СИМВОЛИЧЕСКУЮ УСЛОВНОСТЬ И ПЕРЕНОСНОЕ СЛОВО (МЕТАФОРА) В ПОЭЗИИ Е. ЧАРЕНЦА

Сона Алавердяан
ГГУ, Факультет армянской филологии,
Отдел армянского языка и литературы, курс 4-ый

РЕЗЮМЕ

Ключевые слова: *Е. Чаренца, символ, метафора, огонь, музы, путь.*

Целью статьи является исследование поэтической системы Чаренца с участием сознательного и бессознательного. В этой системе символы и метафоры имеют особую роль, чтобы сохранить равновесие. Поэтому, чтобы в поэтической макросистеме Чаренца определить важные проблемы (действия, реакции), употребили символ "огонь" и метафоры "муза", "путь".

SYMBOLIC AND METAPHORICAL EXPRESSIONS OF FEELING IN THE POETRY OF Y. CHARENTS

Sona Alaverdyan
GSU, Faculty of Philology,
The Armenian Language and Literature Department, 4th year

SUMMARY

Key words: *Y. Charents, symbol, metaphor, fire, muse, road.*

The article aims at discussing Charents's poetic system through the combination of consciousness and unconsciousness. In the mentioned system the symbols and metaphors play specific roles to keep the balance. Thus, in order to define the most important things (actions, reactions) in Charents's poetic macrosystem we have used the symbol "fire" and the metaphors "muse", "road".

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ИНОСТРАННЫЕ ЯЗЫКИ, ЛИТЕРАТУРА

FOREIGN LANGUAGES, LITERATURE

THE COMPARATIVE ANALYSIS OF THE SOMATIC PHRASEOLOGICAL UNITS IN ENGLISH, GERMAN, RUSSIAN, ARMENIAN AND IN THE KARABAKH DIALECT

Ani Harutyunyan
ASU, English and literature, 3th year
*Scientific director-**Varduhi Gabrielyan***

Key words: *language, dialect, phraseological unit, structure, equivalence*

Language has literal and figurative meanings. The literal meaning is the direct reference of words or sentences to objects. The figurative sense, however, is different from the literal one in the sense that it is used for giving an imaginative description on a special effect. In linguistics, idioms are usuallypresumed to be figures of speech contradicting the principle of compositionality. This principle states, that the meaning of the whole should be constructed from the meanings of the parts that make up the whole. Modern linguistics is inconceivable without comparisons of the investigated objects. The mutual correlation, comparison and opposition of units, forms, types and other language phenomena act as an obligatory condition for the characteristic of each of them and for the establishment of essential, formal and semantic relations between them. These criteria are entirely relevant in the research of phraseological units.

The actuality of this article is supported by the fact that today the activities of the European Society of Phraseology (EUROPHRAS) and the European Association of Lexicography (EUROLEX) with their regular conventions and publications attest to the prolific European interest in the cross-linguistic and cross-cultural research in phraseology.Names of body parts are among the most frequently participating words in the formation of phraseological units that are part of mastering any language and providing answers to the given questions, the problem of understanding phraseological units will be simplified for those, who deal with English, German, Armenian, Russian and the Karabakh dialect.

The aim of the current paper is to carry out a comparative analysis of the somatic phraseological units of the English, German, Armenian and Russian languages and the Karabakh dialect, revealing the degree of interlingual phraseological equivalence and defining the factors influencing it.

Phraseological units represent what can probably be described as the

most picturesque, colorful and expressive part of the language's vocabulary. However, phraseological units in any language belong to the most difficult area of lexicology to define, grasp and categorize. AsG. Lakoff puts it: "The characteristic feature of phraseology and idiomatics as a discipline is that traditional and well-tested procedures, criteria and methodological approaches mostly fail here, and that is for the simple reason that these procedures, criteria and methodological approaches have been created for regular language and its phenomena. However, what is in principle valid for phraseology is that it is always somehow anomalous, irregular." [20, 321]

In her book " Idioms and Idiomaticity", Ch. Fernando gives the definition of idioms as referring only to "those expressions which become conventionally fixed in a specific order and lexical form, or have only a restricted set of variants, acquire the status of idioms and are recorded in idiom dictionaries". [14, 31]

Today most Russian scholars base their research work in the field of phraseology on the definition of a phraseological unit offered by Professor A. V. Kunin, the leading authority on problems of English Phraseology: "A phraseological unit is a stable word-group characterized by a completely or partially transferred meaning". [9, 8]

The German Krüger-Lorentz Dictionary side by side with the generally accepted phraseological units includes the so-called tale expressions, and that is irrelevant, because the mentioned expressions are nothing else but contracted German jokes, i. e. they are completely humorous passages. [12, 13]

Armenian linguists also have controversial opinions concerning the definition of a phraseological unit and the determination of its boundaries. V. Arakelyan, A. Murvalyan and A. Sukiasyan observe sayings, proverbs, blessings and various tale expressions as a subtype of phraseological units, while E. Gevorgyan, P. Bediryan and Kh. Badikian are the supporters of the theory of narrow perception of phraseological units according to which only set phrases with a transferred meaning are calledphraseologisms.

According to P. Bediryan, a phraseological unit is a fixed ready-made unit with a partially or completely transferred meaning, "where the independence of constituent parts is formal, the syntactical connection obscure". [2, 5]

M. Khamoyan defines phraseological units as follows: "Phraseological

units are nominations of objects of reality in the form of word-combinations and sentences, based on the principle of description and evaluation". [3, 7]

Thus, it can be concluded, that phraseological units are word-groups conveying a single concept, consisting of two or more words distinguished by the recurrence, by the wholesomeness of their meaning and by the fixed nature of their structure and components.

Names of human body parts (somatisms) belong to one of the most ancient layers of the word stock of different languages and serve as basis of somatic phraseology. It may be accounted for by the fact that parts of the body fulfill universal functions. Somatismis viewed as a part of somatic code of culture, as a cultural sign which transfers cultural information on whose basis the image of phraseological unit is perceived.

According to their phrase-forming activity words denoting *hand, eye, head* have the widest application in the contrasted languages. The mentioned components directly correspond to the perceptive (eyes) and the logical (head) stages of cognition and to its manifestation of practice (hand).

As A. Blume states, somatic phraseological units make up a large group in Modern English. The most frequently occurred somatism is *hand.* Further come *head, eye, face, foot, nose, finger, heart*. The rest of somatisms (*leg, arm, back, bone, brain, ear, tooth, skin, shoulder, neck, tongue*) are less used, however their phrase-forming activity is rather high. According to M. A. Pekler and A. D. Rachstein, among seventeen nouns most frequently occurred in the structure of Russian phraseological units eight lexical somatisms and among the corresponding seventeen German nouns eleven of them are found. This comes accordingly in succession: *глаз, рука, голова, нога, язык, нос, ухо, сердце, кровь, плечо, Hand, Kopf, Auge, Herz, Ohr, Fuss, Mund, Bein, Nase, Finger*. According to the " Phraseological Dictionary of the Armenian Language" by A. Sukiassyan and S. Galstyan the following "body part" names as the dominant component of the phraseological unit occur most frequently in Armenian: *գլուխ (կըլօխ), աչք (աշկ), ձեռք (ծը՛րք), ոտք (վը՛նը), բերան (պերան), սիրտ (սը՛րտ), լեզու (լուզու), ականջ (անգուձ), քիթ (քը՛թ)*. Less frequent are the components: *Zunge, Blut, Rücken, Zahn, рот, палец, лицо, волосы, зубы, արյուն (արուն), մազ (մազ), մատ (մանը), ատամ (կըռէք), ուսեր (ջընըղնէ)*.

Today phraseology has become one of the most widely investigated

and analyzed spheres of linguistics. Between June 9-11th, 2006, an International Conference was organized by the Institute of German Studies at the Pannonian University Vezprem and the European Society of Phraseology (EUROPHRAS).The main subject discussed was the concept “emotion” and its verbalization by means of somatic phraseological units. Accordingly, it’s pointed out, that mainly negative emotions are verbalized with the help of somatic phraseological units. Among them: irritation (*one’s hair stands on end – das Haarstehtzu Berge – волосыдыбомвстают – մազերըբիզ-բիզկանգնել – մազերըբիզ-բիզվը՞ննըկենալ*) ; contempt (*to thumb one’s nose at somebody – die Nasehochtragen – задиратьнос – քիթըվերցցել - քեթըյերգինքինօնել*); anxiety (*one’s heart bleeds for somebody – jemandemblutet das Herz – сердцекровьюобливается – սիրտըարյունովլցվել – սըրտավըարունքինալ*); suffering (*break somebody’s heart – jemanden ins Herztriffen – разбитьсердце – սիրտըկոտրել – սը՞րտըկօտրել*); offence (step on somebody’s toes – jemandem auf dem Fuss treten – наступитьнаногу – ոտքըկոխել – վը՞ննըկօխտալ).There are few positive emotions verbalized with the help of this group of phraseologisms, e. g. love (*to win one’s heart – jemandesHerzgewinnen – покоритьчье-либосердце – մեկիսիրտըշահել*).

In traditional linguistics the concept of many body parts carry some symbolic character and become a part of an idiom through the use of various stylistic devices and expressive means. Below are discussed connotational shades of some body parts.

Head/ Kopf/ голова/ գլուխ/ կըլöխ controls mind and reason. Hence, it follows the main connotational meaning of the somatism, designates reasonableness and wit or the lack of them, e. g. *to have a good head on one’s shoulders – seinen Kopf fürsichhaben – иметьсвоюголовунаплечах – ուսերինգլուխունենալ – ջընըղնէրէնյիրակըլöխինիլ*. The meaning of will and ability to concentrate is reflected in such phraseological line as: *to lose one’s head – den Kopf verlieren – потерятьголову – գլուխըկորցնել – կըլöխըկուրցընէլ*.

Hair/ Haar/ волосы/ մազ/ մազcan be considered both independently and as a possible attribute of head. Usually this word acquires a meaning of some emotion in the structure of a phraseological unit, e. g. fear: *one’s hair stand on end – die Haarestehenzu Berge – волосыдыбомстоят – մազերըբիզ-բիզ-բիզկանգնել - մազերըբիզ-բիզվը՞ննըկենալ*; vexation: *to tear one’s hair – sich die Haareausraufen – рватьнасебеволосы –*

մազերըփետել – մազէրըքանդիլ. “A hair” has the meaning of something small, unimportant: by a hair – um einHaar – наволосок – մազիչափ – մազումըչանք.

Eyes/ Augen/ глаза/ աչքեր/ աշկէր symbolize the main and natural function of this organ that is: observing, looking , watching, seeing, on the bases of which phraseological units are formed. Eyes are important exponents of surprise*: to open one’s eyes wide – die Augenaufreissen – вытаращитьглаза-աչքերըչորսանել – աշկէրըչօրսանէլ*; envy and ill-will: *the envy eye – einbösesAuge – дурнойглаз – չարաչք – մինինաշկընիկյալ*.

Nose/ Nase/ нос/ քիթ/ քըʰթ has a meaning of proximity often attended by the receipt of information, e. g. *not to see beyond one’s nose – nichtüber die eigeneNasehinaussehen – невидетьдальшесобственногоноса – քթիցայնկողմչտեսնել – քըʰթանհեռուտըʰսնումչի*; *to steal something under one’s nose – jemandemetwasvor der Nasewegschnappen – стащитьчто-либо у кого-либоизподноса – քթիտակիցփախցնել – քըʰթէնտականկուղանալ*; morbid curiosity: *to stick one’s nose into something – die Nase in etwasstecken – соватьсвойносвчто-либо – քիթըխոթել – քըʰթըկօխէլ*.

Teeth/ Zähne/ зубы/ ատամներ/ կըʰռէքնէ are the ancient symbol of an aggressive and defending force, e. g*. to show one’s teeth – einen Zahn gegenjemandenhaben – иметьзубпротивкого-либо-մեկիդեմատամունենալ/ատամտրել – կըʰռէքիհիմինիրա.*

Hand/ Hand/ рука/ ձեռք/ծըʰրք is used in various meanings, the most frequent of which are intercourse, activity, skill, exchange, i. e. the practical application of thought. Hand is the symbol of strength, leadership, power and capacity: *to take something in hand - die Hand auf etwaslegen – взять в своируки – ձեռքըառնել – ծըʰրըյօրօնել*; to be under one’s thumb – an der Hand sein – бытьподрукой – ձեռքիտակլինել – ծէրքէնտակէնինիլ.

The comparison of the somatic phraseological systems of these languages should provide answers to the following questions: what do the similarities and differences between the phraseological systems of the English, German, Armenian and Russian languages consist in; how do they manifest in the main aspects of the language: functional, semantic, structural; what degree of interlingual equivalence do the somatic phraseological units have?

The first and the main criterion that determines the presence of

equivalents among the phraseological units of these languages, is their semantic correlation. It implies a complete or partial coincidence of the main general meaning and the connotational meaning of the phraseological unit, e. g. *to scream at the top of one's lungs – mitvollemBackenausposaunen - кричатьвовсегорло – կոկորդովմեկգոռալ – սյասըկըլօխըքցէլ*. These phraseological units have identical lexical meanings but different components: to scream with full *throat* (in Russian and Armenian) – to scream with full lungs (in English) – to scream with full *cheeks* (in German) – to scream with *head* (the Karabakh dialect). The little differences that are noticed among the equivalent phraseological units of these languages maintain the common linguistic mentality of these nations. [1, 53]

The semantic criterion implies the generality of connotational meanings on the basis of which takes place the change of the meaning of a lexical combination into a phraseological unit in the English, German, Russian and Armenian languages and the Karabakh dialect. Such semantic relations are observed in the contrasted languages on the material of the phraseologisms with the most frequent components, such as : head/ Kopf/ голова/ գլուխ/ կըլöխ, eye/ Auge/ глаз/ աչք/ աշկ, hand/ Hand/ рука/ ձեռք/ ծըʰրք, heart/Herz/сердце/ սիրտ/ սըʰրտ, mouth/ Mund/ рот/ բերան/ պէրան, tongue/ Zunge/ язык/ լեզու/ լուզու. Phraseological series of this type constitute semantic group where the group seme, e. g. " the process of thinking" is associated with the somatic component, e. g. *head (brains)/ Kopf/ голова/ գլուխ/ կըլöխ*such as in *to cudgel one's brains over something – sich den Kopf überetwaszerbrechen - ломатьголовунадчем-либо–գլուխըպայթեցնել – կըլöխտըրըքցընէլ.*

However, the differences of connotational associations should be noted. In the phraseological line *to bare one's heart –jemandem das Herzausschütten -излитьдушу – սիրտը/ հոգինբացել – սըʰրտըպէնալ*. In Russian and Amenian the words *душа, հոգի*and *сердце, սիրտ*are identified.

The next criterion according to its significance is the structure of the phraseological unit. The structural (lexical and syntactical) organization unlike the first criterion defines the presence of complete structural semantic equivalents.

A. D. Rachstein pointed out that the semantic affiliation of constituent parts to this or that thematic group is faintly reflected on the degree of

interlingual phraseological equivalence. He affirms that only a few groups of phraseological units are an exception to the general rule. [11, 120]

For example, set phrases with component names of realities and proper names neither of English nor of Russian and Armenian origin possess a high structural - semantic equivalence; these are phraseologisms – internationalisms, i.e. loan – translations dating back to antiquity, biblical gospels. E. g. *Achille's heel –die Ferse des Achilles - ахиллесовапята – աքիլլեսյանգարշապարի; voice crying out in the wilderness – die StimmeeinesRufenden in der Wüste - гласвопиющего в пустыне – ձայնքարոզողհանապատի.*

The Karabakh dialect has no equivalents to the given series of phraseological units. It can be explained by the fact that these phraseologisms belong to the literary layer of vocabulary.

The low structural semantic phraseological equivalence is characteristic to the units including component parts, the equivalents of which either fail to appear in the lexico-semantic system of the contrasted languages or they have an outlying status. Anyway, A. D. Rachstein states that the phraseological units, the constituent lexemes of which occur frequently both in their independent use and according to their phrase-forming activity, possess a high structural semantic equivalence. [11, 127]

E.g. *to hold/ carry one's head high – den Kopf hochhalten - высокодержатьголову – գլուխըբարձրպահել – կրլօխըպէցուրպահէլ; to throw dust in somebody's eyes – jemandem Sand in die Augenstreuen - пускатьпыль в глаза – աչքերիմթոզփչել – ըշկէրէմթöզփըչիլ.* So, thenumber of equivalents among the phraseological units with a "body part" component is rather high, as somatisms possess a high phrase-forming activity.

The syntactical structure of phraseological units is important for the comparison of the languages where words are connected through identical rules. Thus, comparing the Armenian and the Russian languages (where case endings, prepositions, conjunctions and word forms are the indices of the syntactical relations of words) one can take into consideration the syntactico-structural patterns which possess or lack an unequivocal correspondence in the contrasted language and are characterized by low or high phraseological equivalence . E. g. the model "an adverbial participle of the perfective aspect + a noun" (сломяголову) is characteristic to the Russian language. The Armenian language has the equivalent

phraseological unit (գլուխկոտրելով), where the construction “a noun + an infinitive in the instrumental case” is used. As there are no adverbial participles in the English and German languages, consequently the given phraseological unit has no complete equivalents in these languages. Accordingly, to the phraseological units “ *сломяголову – գլուխկոտրելով*” correspond the following constructions: *to break one’s neck – mitdem Kopf nachunten,* which differ in structures. Thus, as the contrasted languages have serious differences in the verb system (a complicated tense system, a special system of participles, the presence of such a form as gerund, which undergoes no declension), and there are no categories of case and personal forms of verbs in English and as German, Russian and Armenian have different case systems, no strict structural semantic correspondences are possible among the phraseological units of these contrasted languages.

The grammatical peculiarities inherent to any language lie on the basis of its phraseological system. E. g. neither English nor German and Russian display the decisive role of the article for the semantics of phraseological units. The definite article changes the meaning of the phraseological unit in Armenian and the Karabakh dialect. [1, 52]

This phenomenon is most vividly observed on the material of the somatic phraseological units: աչքիընկնել(to be famous)-աչքինընկնել (to notice); գլուխպահել (to be passive)-գլուխըպահել (to make one’s living); սիրտտալ (to encourage)-սիրտըտալ (to devote oneself to somebody); ծըtքտալ (to play into one’s hands)– ծըtքըտալ (to help).

The presence of a somatic component in the structure of a phraseological unit predetermines in some way its colloquial style, except for the single phraseological units of biblical and antique origin. Anyway, among the sharply lowered colloquial structures very few stylistic structural semantic equivalents are found. As a rule, the low colloquial phraseology of each language has its own original construction, which has no direct analogues in the contrasted languages, e. g*. by the skin of one’s teeth; einegrosseLipperiskieren; ниуха, нирыла; հոգինկոպեկանոցշինել*.

The Karabakh dialect also has phraseological units of a colloquial style. Such ones are:ղուլուղնէնթակած (obedient), կըլօխըփալավատանէլ (to decieve), փօրըտափէրըքսէլ (to beg) are sharply lowered colloquial structures.

The structural semantic equivalence of phraseological units is lowered

together with the drop of productivity of the standard images, according to which phraseological units are formulated. According to V. V. Vinogradov and N. M. Shanskey the minimum of such an equivalence is attained by the phraseological units, on the basis of which unique images are laid, especially if the figurative motivation is obscure or completely lost for the modern state of the language. This means that the phraseological fusions have the least degree of equivalence.

Nevertheless, if the interlingual equivalence is defined by the metonymical change of the meanings of psycho-physiological processes common to all mankind or by the historically formed standard of cultural communities the phraseological structural semantic equivalence can be rather high. [11, 126]

E. g. to keep an eye/ one's eye on somebody – seinAuge auf jemandenlenken – неспускатьглаз с коголибо – աչքըվրանպահել – աշկըյէրանպահէլ. Consequently, if in the contrasted languages act the same productive "figurative ideas", according to which a considerable number of phraseological units with the same or close meanings are formulated, the probability that these phraseological units have structural semantic equivalents is rather high in the contrasted languages. [11, 127]

Thus, summing up we can state that the main criteria of defining the presence of equivalents among English, German, Russian and Armenian somatic phraseological units are the general meaning, the structure and the lexical construction of the phraseological unit. The phraseological units of the lexico-semantic field of "body parts present a large group of phraseologies and possess specific peculiarities. The majority of body parts have several connotational and symbolic meanings arising from the basic means of the "body part:" component. The somatic phraseological units of the English, German, Russian and Armenian languages and the Karabakh dialect possess a high interlingual equivalence that is explained by the fact that "body part" components are in the high-frequency vocabulary of these contrasted languages and their high phrase-forming activity raises the degree of the interlingual equivalence.

BIBLIOGRAPHY

1. Բադիկյան Խ. Գ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, ՀՍՍՀԳԱ հրատարակչություն, 1986:
2. Բեդիրյան Պ. Ս., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1973:
3. Խամոյան Մ. Հ., Քրդերեն լեզվի դարձվածաբանության հիմունքները, Երևան, ՀՍՍՀԳԱ հրատարակչություն, 1988:
4. Մինասյան Շ. Մ.,Ղարաբաղի բարբառի դարձվածքները, Ստեփանակերտ, Դիզակ «Պլյուս» հրատարակչություն, 2007:
5. Սարգսյան Ա. Յու, Արցախի բանահյուսությունը, Երևան, «Էդիտ Պրինտ» հրատարակչություն, 2015:
6. Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:
7. Блюм А., Семантические особенности соматической фразеологии, Москва, АСТ- пресс, 2000.
8. Виноградов В. В., Лексикология и лексикография: Избранные труды, Москва: Наука, 1977.
9. Кунин А. В., Фразеология современного английского языка, Москва: Издательство “Международные отношения”, 1972.
10. Пеклер М. А., Русско-немецкая идиотичность, Тбилиси: АКД, 1967.
11. Рахштейн А. Д., Сопоставительный анализ немецкой и русской фразеологии, Москва: Высшая школа, 1980.
12. Чернышева И. И., Фразеология современного немецкого языка, Москва: Высшая школа, 1970.
13. Шанский Н. М., Фразеология современного русского языка, Москва: Высшая школа, 1985.
14. Fernando Ch., Idioms AndIdiomaticity, Oxford University Press Publication, 1996.
15. Gibbs. R., Literal Meaning and Figurative Language, Discourse Process 16, 1993.
16. Iskov A., Lenkova A., Deutsche Lexikologie, Moscow, 1970.
17. Katz J. J. and Postal P.M., An Integrated Theory Of Linguistic Description, Cambridge, 2003.
18. Katz J. J. and Postal P.M., Semantic Interpretation Of Idioms And Sentences Containing Them,Quartely Progress Report of the Research Lab of Electronics, 1963.
19. Kunin A. V., English-Russian Phraseological Dictionary, Moscow 1984.
20. Lakoff G., Women, Fire And Dangerous Things, Chicago: University of Chicago Press, 1987.
21. Makkai A., Idiom Structure in English, The Hague: Mouton, 1972.
22. Weinreich U., Problems in the Analysis of Idioms: Substance and Structure of Language, University of California Press, Los Angeles, 1996.

ԱՆԳԼԵՐԵՆԻ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ, ՌՈՒՍԵՐԵՆԻ, ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ՝ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Անի Հարությունյան
ԱրՊՀ, Անգլերեն լեզու և գրականություն, 3-րդ կուրս

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հանգուցային բառեր՝ *լեզու, բարբառ, դարձվածք, կառուցվածք, հավասարարժեքություն*

Հոդվածում ներկայացվում է անգլերենի, գերմաներենի, ռուսերենի, հայերենի և Ղարաբաղի բարբառի մարմնի մասեր պարունակող դարձվածքները: Բացահայտվում են միջլեզվական դարձվածային հավասարարժեքությունը և դրա վրա ազդող գործոնները: Պետք է նշել, որ լինելով բարբառ՝ Ղարաբաղի բարբառը, իր հարուստ լեզվական պաշարներով, արժանվույնս կարողանում է համեմատվել վերը նշված լեզուների հետ:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СОМАТИЧЕСКИХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ АНГЛИЙСКОГО, НЕМЕЦКОГО, РУССКОГО, АРМЯНСКОГО И КАРАБАХСКОГО ДИАЛЕКТОВ

Ани Арутюнян
АрГУ, Английский язык и литература, 3-ий курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *язык, диалект, фразеологическая единица, структура, эквивалентность*

В работе анализирует соматические фразеологические единицы одновременно нескольких синтактических (немецкий, русский) и аналитических (английский, армянский) языков вместе с карабахским диалектом. Основываясь на трудах выдающихся лингвистов, этот сравнительный анализ выявляет степень межъязыковой фразеологической эквивалентности и определяет факторы, влияющие на нее. Примечателен тот факт, что, будучи диалектом, карабахский, с его богатым лингвистическим запасом, стоит вместе с противопоставленными языками.

THE SEMANTIC REPRESENTATION AND PRAGMATIC INTERPRETATION OF TAG QUESTIONS IN MODERN ENGLISH

Arpine Tatlyan
VSU, English Language and Literature, 4th-year student
Supervisor: ***Lusine Vardanyan***
Associate Professor, Ph.D in Philology, VSU

Key words: *tag questions, semantic, pragmatic, function, pronunciation*

Tag questions are characterized by multi-functionality and diversity of meaning which makes it difficult to classify them and to draw a clear-cut demarcation between their types and sub-types.They are important linguistic devices in the English language which require “considerable conversational skills” to be used and interpreted accurately (Holmes, 1982, p.61). They are syntactically, prosodically and semantically complicated (Bennett, 1989; Holmes, 1982; Bublitz, 1979; Armgost, 1972). Algeo (1988, 1990) classifies the pragmatic functions of English tag questions into five categories: the informational tag, the confirmatory tag, the punctuational tag, the peremptory tag, and the aggressive tag.

Bublitz claims that syntactic rules are not enough to explain the implicated meanings of tag questions unless they are accompanied by pragmatic theory. He also believes that only a grammatical theory which either includes a pragmatic component or is completed by a pragmatic theory has the explanatory power to explain the meanings of tag questions. According to him there are two kinds of tag questions in the English language: lexical tag questions such as “right, okay; and the intonational tag “eh”. Cheng and Warren (2001), on the other hand, adopt a different definition that classifies tag questions into two categories: canonical tag questions, with both matching and contrasting polarity, e.g., “It is hot, is it? And “It is hot, isn’t it?” and invariant tag questions, e.g., “right”. Thus, most scholars classify tag questions into two categories: canonical tag questions and invariant tag questions. The canonical tag question with contrastive polarity is referred to as a “checking tag” and the one with matching polarity is referred to as a “copy tag”. “Word tags”, according to Cheng and Warren (2001), refer to invariant tags.

As regards their syntactic structure, tag questions consist of an affirmative statement followed by a negative question, or a negative statement followed by an affirmative question. The first part is pronounced

with a falling intonation and the second part either with a rising intonation or a falling intonation. Most of the researchers single out four or five pragmatic functions of tag questions but the contextual method of analysis reveal that they are more. English has a complex system of disjunctive questions which can be used with a variety of forms and intonations. This type of questions has received large scholarly interest; still, there is little information about their historical development. Tag questions have a great usage: approximately a quarter of all the questions used in conversation. However, the usage of tags in fiction, in news and in academic prose is much lower. Actually, tag questions are predominantly used pragmatically rather than for requesting information.

Generally, tag questions are divided into three broad categories of use:

- marking the speaker's lack of commitment towards a proposition
- expressing the speaker's uncertainty
- showing more politeness

As for the pragmatic functions of tag questions, there have been different attempts to reveal their underlying meaning and illocutionary force. The theories of classification are mostly based on the utterance and the manners of pronunciation. Tag questions can have different pragmatic motivations. Thus, the novelty of our article is that tag questions are classified and studied in the light of pragmatic analysis. The main outcome of our research is the following classification of tag questions stated below.

- tag questions indicating a request for information
- tag questions indicating a request for agreement
- tag questions indicating inducement
- tag questions expressing emotions
- contact-initiating tag questions
- contact-supporting tag questions
- controlling tag questions

1) Tag questions indicating a request for information

This is one of the most frequently used pragmatic functions of tag questions. It presumes that sometimes the speaker is not sure that the statement is true and wants it to be reassured. In this case the tag question is pronounced with a rising intonation and it sounds like a real question requiring information.

(1)"Lowood Orphanage is the house where you have come to live in. I suppose you are an orphan, aren't you?"

(Chr. Bronte, “Jane Eyre” p. 25)

(2) ‘Well I’d like to stay and talk to this charming wife, ‘the sergeant replied. ‘But today we’re busy with the King’s business, aren’t we?’

(Ch. Dickens,“Great Expectations” p. 34)

In these examples the speaker asks a direct question, to which the hearer can give the definite answers ‘yes’ or ‘no’.

2) Tag questions implying a request for agreement

The speaker does not always need information by asking a tag question, but merely expects agreement; that is, the speaker expects the hearer to agree with the statement expressed in the main clause. In this case the speaker is sure that the statement is true and, therefore, a falling intonation is used on the tag.

(3) *“What is his name?”*

“Bingley,my dear. And he is single! And he has an income of four or five thousand a year. Most fortunate for our girls, huh?”

(Jn. Austen, “Pride and prejudice” p. 43)

(4)“It is quit warm in here,” Rhett was saying. “It’s a good time for having a walk, don’t you think so Miss O’Hara?”

(Mrg. Mitchell, “Gone with the wind”p. 56)

In these examples, ‘Don't you think' and ‘you agree’ are used as a tag since the speaker wants to ask the hearer's opinion about what he is saying. This can also be considered a kind of request for agreement.

3) Tag questions implying inducement

This kind of tag questions includes perlocutionary biased utterances; that is, utterances taking part in persuading and influencing. Tag questions implying inducement occur in context when the speaker tries to persuade the addressee to do something.

(5) *“He put his hand across her lips. “Don't say these things.”*

"But I love you, you know that I love you, right?”

(Mrg. Mitchell,“Gone with the wind”p.63)

As can be seen from the example, no reply to the question is expected or required.The tag “right” serves as a means of persuasion. The speaker indirectly and tactfully tries to persuade the hearer.

It should be noted here that tagged imperative questions also belong to this group of tag questions.

Sometimes a positive imperative is followed by a positive tag to fulfill the function of making a polite request. For example, ‘okay’ has the same connotation.

(6) “Call Estella,”Miss Havisham said at last.”Go to the door and call her, will you?”

“Well, be good then, Pip, and do what Mr .Jaggers tells you, okay?”

(Ch. Dickens,“Great Expectations” p.42)

Tags can also be used in invitations.

(7) “I suppose you wouldn’t come to tea with me one day, would you?”

(W.S. Maugham,“Theatre” p.35)

In this sentence the speaker doesn’t directly invite the hearer but asks a tentative question to see if the hearer would accept his invitation if he made it.

4) Tag questions expressing emotions.

The next pragmatic function tag questions may fulfill is to express different emotions. Depending on intonation they can express surprise, anger, concern or interest.

(8) “I have come to take your apprentice to London,” the lawyer said to Joe. "You won't stop him from coming I hope, will you?”

(Ch. Dickens,“Great Expectations” p. 71)

(9) A: The party Peter is giving is going to be fantastic.

B: You are going to that party, are you?

As can be seen from the example, the tag question consists of a positive sentence and a positive tag with a rising tone. This can be a reaction of a very curious person who is obviously not satisfied with the information he has. B wants to appease his curiosity by asking A to provide him with more detailed information about the coming party A is invited to. The question may give rise to a number of implicatures, such as

+>I am envious of her; how did it come about that she is invited to that party, but I am not.

+>What if she is lying. She is not on good terms with Peter, but I am.

The symbol +> stands for the conversational implicature.

It should be noted that the concept of implicature has its origin in the work of Paul Grice, who made a preliminary division between semantic meaning “what is said” and pragmatic meaning “what is implicated”.

5) Contact initiating tag questions

Contacts initiating tag questions are not really a request for information or agreement but an invitation to the hearer to continue the conversation. This kind of tag questions are used to provide a starting point for the illocutionary speech act and consequently function as a kind of rhetorical linking device between the interlocutors of the ongoing discourse. In other

words, using this kind of tag question the speaker wants to communicate with the hearer as it is obvious in the main clause that the statement is true.

(10) “Hard weather Mr. Bumble, isn’t it?” said the widow. “Yes, indeed, ma’am”

(Ch. Dickens, “Oliver Twist” p. 44)

In the Armenian translation we can see that ‘isn’t it’ is not translated altogether.

(11)–Ահավոր եղանակ է: -Իրոք որ:

The Armenian translation illustrates well enough that the tag question is a kind of a rhetorical question as the speaker is sure that the weather is bad. It is just a means of initiating contact with the hearer; the speaker wants to make the hearer speak.

6) Contact-supporting tag questions

Contact-supporting tag questions usually serve as a means of not losing contact with the hearer. In other words, it helps to break the conversation and to support contact with the hearer.

(12) “Mr.Bennet you should go and call on him as soon as he comes” said Darcy.

”There is no good reason for that is there?”

(Jn. Austen, “Pride and prejudice” p. 52)

7) Controlling tag questions

Controlling tag questions are aimed at checking the hearer's attention. They are usually made by means of ‘right’ and ‘okay’. Tags used for this purpose convey the meaning ‘do you understand?’ or ‘is it clear?’

(13) “I don’t want to hear you two girls speaking to him again. Okay?”

(Mrg. Mitchell,“Gone with the wind” p.61)

To sum up, tag questions are important hedging devices in the English language. They vary in form and meaning, and their appropriate use requires a high level of conversational skills.

BIBLIOGRAPHY

1. Algeo, J. (1988). The tag question in British English: It's different, i'n'it? English World-Wide, 9(2), 171-191.
2. Algeo, J. (1990). It's a myth, innit? Politeness and the English tag question. In: Christopher Ricks and Leonard Michaels (Eds.), The state of the language. 443-450. Berkeley, CA: University of California Press.
3. Algeo, J. (2006). British or American English? Cambridge: Cambridge University Press.
4. Armagost, L. (1972). English declarative tags, intonation tags, and tag questions. Studies in Linguistics and Language Learning, X , 1-54.
5. Bennett, W. (1989). The structure of English tag questions. Word, 3 (40), 315-333.
6. Bublitz, W. (1979). Tag questions, transformational grammar and pragmatics. Papers and Studies in Contrastive Linguistics, 9, 5-22.
7. Cheng, W., & Warren, M. (2001). 'She knows more about Hong Kong than you do isn't it: Tags in Hong Kong conversational English. Journal o f Pragmatics, 33 (9), 1419-1439
8. Chr. Bronte, "Jane Eyre", October 16th 1847), United Kingdom 507 pages.
9. Ch. Dickens,"Great Expectations", 1838, England ; 478 pages.
10. Jn. Austen, "Pride and prejudice", 28 January 1813; United Kingdom; 432 pages.
11. Holmes, J. (1995). Women, men and politeness. New York: Longman.
12. Holmes, J. (1983). The functions of tag questions. English Language Research Journal, 3, 40-65.
13. Mrg. Mitchell, "Gone with the wind", June 30, 1936, United States, 1037 pages.

ԱՆՁԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Արփինե Թաթլյան
ՎՊՀ, Անգլերեն լեզու և գրականություն, 4-րդ կուրս

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հանգուցային բառեր՝ *անջատական հարցեր, իմաստաբանական, գործաբանական, գործառույթ, արտասանություն*

Այս հոդվածի նպատակն է վերլուծել անջատական հարցերի իմաստաբանական և գործաբանական առանձնահատկությունները: Անջատական հարցերի ուսումնասիրության տարբեր մոտեցումները գործաբանական տեսանկյունից բացահայտում նրանց խորքային իմաստները: Անջատական հարցերի դասակարգման տեսությունները մեծամասամբ հիմնված են դրանց արտասանության ձևերի և առոգանության վրա: Անջատական հարցերը կարող են ունենալ գործաբանական տարբեր մեկնաբանություններ, որոնք էլ ներկայացված են այս հոդվածում:

ПРАГМАТИЧЕСКИЕ И СМЫСЛОВЫЕ ОСОБЕННОСТИ ВОПРОСОВ С ХВОСТОМ В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Арпине Татлян
ВГУ, Английский язык и литература, 4-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *вопросы с хвостом, смысловые, прагматические, функция, произношения*

Цель этой статье исследовать смысловые и прагматические функции вопросов с хвостом. С прагматической стороны для исследования вопросов с хвостом есть различные подходы, чтобы открыть их глубокий смысл. Теории классификации вопросов с хвостом в большинстве случаев обосновываются на их виды произношения и акцент. Вопросы с хвостом могут иметь разные прагматические мотивации, которые представлены в этой статье.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՔԻՄԻԱ

БИОЛОГИЯ, ХИМИЯ

BIOLOGY, CHEMISTRY

ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ՄԱՔՈՒՐ ԲՆԱՄԹԵՐՔԻ ՍՏԱՑՈՒՄԸ ՍԵՎ ԹԱՆԹՐՎԵՆՈՒ SAMBUCUS NIGRA L. ՏԵՍԱԿԻ ԲՈՒՅՍԻ ԳԵՆԵՐԱՏԻՎ ՕՐԳԱՆՆԵՐԻՑ

Անի Հովհաննիսյան
ԿՊՀ Կենսաբանաքիմիական ֆակուլտետ
«Կենսաբանություն» մագիստրատուրա 1-ին կուրս
Ղեկավար՝ կ. գ. դ. ***Զարուհի Վարդանյան***

Հանգուցային բառեր. *սև թանթրվենի, պտուղ, ծաղիկ, թուրմ, բուժիչ նշանակություն:*

Սև թանթրվենի Sambucus nigra բուսատեսակը արագորեն զբաղեցնում է հատատեղերը: Լոռու մարզի տարածքում քիչ են կատարված ուսումնասիրություններ սև թանթրվենու բույսի կենսաէկոլոգիական առանձնահատկությունների և բույսի տարբեր օրգանների բուժիչ նշանակության բացահայտման ուղղությամբ: Ուստի մեր կողմից առաջադրված թեման արդիական է, հրատապ և ունի գիտական ու գործնական կարևոր նշանակություն [2]:

Սև թանթրվենին (նկ.1) համարվում է դեղաբույս. նրա պտուղները, ծաղիկներն ու ծաղկաբույլերը ունեն բուժիչ նշանակություն:

Նկ. 1. Սև թանթրվենու բույսը՝ ծաղկման շրջանում (Գուգարք, 2016թ.)

Թուփ կամ 2-6 մետրի հասնող լայնասաղարթ ծառ է: Տերևները բարդ են՝ բնորոշ տհաճ հոտով: Ծաղիկները սպիտակ են, հոտավետ: Պտուղները սև են (այստեղից էլ ծագել է անունը), կլորավուն, հյութալի, պարունակում են 3-4 սերմ: Կարծում են, որ անունը ծագել է Իրանում տարածված եռալար երաժշտական գործիք սամբուկից, որը պատրաս-

տում են թանթրվենու փայտից: Սակայն, համաձայն հունական աղբյուրների, «սամբիքս» կամ «սանդիքս» նշանակում է կարմիր ներկ, խոսքն այն ներկի մասին է, որը ստանում են բույսի պտուղներից, և որով ներկում են գործվածքները:

Ծաղիկները պարունակում են գլիկոզիդ սամբունիգրին, որը ճեղքվելով տալիս է կապտածնաթթու, բենզալդեհիդ և գլյուկոզա, այնուհետև՝ C վիտամին, ռուտին, խեժ, եթերայուղ (մինչև 32 %), խոլին, կալցիումական աղեր, քլորածնային, կոֆեինային, վալերիանային թթուներ, խնձորաթթու և քացախաթթու: Պտուղներում հայտնաբերված են վիտամիններ՝ C (մինչև 50 մգ %), E, ինչպես նաև մի շարք նյութեր՝ կարոտին, քրիզանթեմին, թիրոզին, դաբաղանյութեր, գինեթթու, խնձորաթթու, կարբոնաթթու, գլյուկոզա, ֆրուկտոզա: Տերևներից անջատվել են սամբունիգրին, եթերայուղ, ալդեհիդներ, C վիտամին (մինչև 280 մգ %), կարոտին, ճյուղերի կեղևից՝ եթերայուղ, խոլին, ֆիտոստերին, իսկ սերմերից՝ ճարպայուղ [1]:

Աշխատանքի նպատակն է եղել.

1. ուսումնասիրել սև թանթրվենի բույսը՝ որպես դեղաբույս,
2. ստանալ թուրմ սև թանթրվենի բույսի ծաղիկներից և պարզել դրա բուժիչ նշանակությունը, ուսումնասիրել կիրառելիությունը:

Գրականության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բուժման նպատակով օգտագործվում է ամբողջ բույսը, անգամ կեղևը և արմատները, սակայն հիմնականում՝ ծաղիկները և պտուղները: Ծաղիկները հավաքում են չոր եղանակին՝ լրիվ բացվելուց հետո: Դանակով կամ մկրատով կտրում են ամբողջ ծաղկաբույլը, քանի որ վերջինս շուտ փչանում է, արագ չորացնում են ստվերում՝ լավ քամհարվող տեղում՝ թղթի վրա, միաշերտ փռված վիճակում: Պատրաստի հումքը պահում են չոր, քամհարվող տեղում, թանզիֆից պարկիկների մեջ: Ծաղկաբույլերը հավաքելիս երբեք չպետք է կտրել ճյուղերը, որ չպակասի բույսի հաջորդ տարվա բերքատվությունը: Պտուղները հավաքում են լրիվ հասունանալուց հետո (օգոստոս-սեպտեմբեր ամիսներին), չորացնում են 30-35° պայմաններում: Չոր հումքը պահում են տուփերի մեջ՝ 6 ամիս ժամկետով: Դալար տերևները հավաքում են գարնանը, կեղևը՝ ամռանը [1] :

Մարդկությանը վաղուց են հայտնի ծաղիկների, պտուղների, տերևների և կեղևի միզամուղ, քրտնամուղ և լուծող հատկությունները: Դրանք թուրմի և եփուկի ձևով կիրառվել են բրոնխիտների, տարբեր տեսակի ջերմերի, ռևմատիզմի, պոդագրայի, երիկամային քարային դիաթեզի (ավազի), փորկապության և փորի շրջանի ցավերի ժամանակ, իսկ արտաքին՝ ողողումների կամ թրջոցների ձևով՝ անգինայի, բերանի լորձաթաղանթի բորբոքումների, աչքերի և ականջների մի շարք հիվանդությունների դեպքում: Թութքի բուժման նպատակով թարմ տերևը դրվել է ախտահարված տեղին՝ կոմպրեսի ձևով: Պտուղները և արմատները՝ որպես միզամուղ և ընդհանուր կազդուրիչ, օգտագործվում են ջրգողության, շաքարախտի, դիզենթերիայի և այլ հիվանդությունների ժամանակ [1]:

Ամիրդովլաթը նշում է. «արմատը գինով եփած՝ ներքին ընդունման ձևով, օգտակար է ջրգողությանը և գազանահարին, կանանց մոտ կբացի արգանդը, եթե լոգանք ընդունեն, մազերը սև կներկվեն, եթե օծեն մազերը: Թարմ տերևը՝ գարու ալյուրով, եթե սպեղանի դրվի բորբոքական ուռուցքի, շան կծածի, այրվածքի և խուղակի վրա, տալիս է դրական արդյունք: Տերևահյութը ներքին ընդունման ձևով, օգնում է կոտրվածքին և սալջարդին» [1]:

Հայկական ժողովրդական բժշկարանների տվյալներով՝ թանթրվենու ծաղիկները՝ որպես քրտնամուղ և միզամուղ միջոց, օգտակար են ուրեմիայի ժամանակ, բարորակ են ներգործում ձայնի խզման և խռպոտման դեպքում: Ուկրաինական ժողովրդական բժշկության մեջ ծաղիկներին վերագրում են «արյունը մաքրող» հատկություն, իսկ մատղաշ տերևները՝ մեղրի մեջ եփված վիճակում, ներքին ընդունման ձևով, համարվում են նուրբ լուծողական: Ծաղիկների եփուկը թրջոցալաթի ձևով դնում են ցավող ականջին, ռևմատիկ և պոդագրիկ բնույթի ախտահարված հոդերի վրա: Կարմիր քամով ախտահարված մաշկին դնում են քերված կեղևի ջրաթուրմը, որը պատրաստում են կանեփի սերմերի կաթնահյութով: Մատղաշ տերևները կաթի մեջ թեթևակի եփելուց հետո, դնում են պառկելախոցի, բորբոքական օջախների, հատկապես թութքահանգույցների վրա: Ծաղիկներից՝ կապույտ տերեփուկի, ակնախոտի և արջընկույզի սերմերի հետ, պատրաստում են ջրաթուրմ և օգտագործում աչքի հիվանդությունների ժամանակ: Չեխական բժշկության մեջ պտուղների հյութն օգտագործում են եռորյակ գոտկասրբանային նյարդերի բորբոքումների ժամանակ: Թանթրվենու դեղամիջոցները հնդկական բժշկության մեջ և հոմեոպաթիայում հայտնի են որպես միզամուղ, քրտնամուղ և փսխեցնող միջոց: Բուլղարական բժշկության մեջ ծաղիկներից պատրաստված թեյը լայն կիրառում ունի մի շարք մրսածության, ջրգողության և ճարպակալման ժամանակ, իսկ պտուղներից պատրաստված մարմելադը հայտնի է որպես միզամուղ և լուծողական միջոց: Տերևներից պատրաստված եփուկը՝ լոգանքի ձևով, օգտագործվում է ռևմատիզմի, պոդագրայի, թութքի և մաշկային ցանավորումների ժամանակ: Բացի քրտնամուղ և միզամուղ լինելուց՝ ծաղիկներն ունեն նաև պատող, թեթևակի ախտահանող, ջերմիջեցնող և հակաբորբոքիչ հատկություն: Դրանք օգտագործվում են նաև լյարդի ախտահարումների դեպքում՝ որպես լեղամուղ: Ծաղիկները մտնում են քրտնամուղ, լուծողական և կոկորդային հավաքածուների մեջ: Ծաղիկների պատրաստուկները նպաստում են բրոնխներում կուտակված թանձր խուղի ջրիկացմանը և նրա արտազատմանը: Դեղաբույսի պատրաստուկները ինհալացիայի ձևով օգտագործվում են շնչական օրգանների հիվանդությունների, հատկապես բրոնխէկտազիաների ժամանակ: Բույսի ծաղիկներն ու պտուղներն օժտված են որոշակի բուժական ազդեցությամբ՝ սուր տրախեաբրոնխիտների, գրիպային վիճակի, սուր և քրոնիկական պիելոցիստիտների, հատկապես գաստրիտների և փորկապությունների ժամանակ: Վերջի-

նիս դեպքում դեղաբույսի պատրաստուկները ոչ թե առաջ են բերում լուծ, որը հաճախ վատ է անդրադառնում քրոնիկական փորկապությամբ տառապող հիվանդների վրա, այլ կանոնավորում են աղիների գործունեությունը: Ռենտգեն հետազոտությամբ պարզվել է, որ թանթրվենու պատրաստուկների ազդեցության տակ աշխուժանում է մինչև այդ ատոնիկ վիճակում գտնվող աղիների շարժունակությունը, վերանում սպաստիկ կոլիտի պատկերը, իսկ կլինիկորեն՝ դադարում են ցավերն աղիների հատվածում [1]:

Փորձերը և արդյունքները

Մենք առաջարկում ենք թանթրվենու ծաղիկներից թուրմի պատրաստման հետևյալ մեխանիզմը, որը օգտագործվում է հազի, հարբուխի դեպքում:

Ծաղիկները չորացնել թղթի վրա: 1 կամ 3 լ-ոց բանկայի մեջ դնել չորացրած ծաղիկներ, վրան դնել կիտրոնի օղակաձև կտրտված շերտեր: Նույն գործողությունը կատարել այնքան, մինչև բանկայի ամբողջ տարողությունը լցվի: Այնուհետև ավելացնել կիսաքաղցր սպիտակ գինի (նկ. 2):

Ծաղիկների մյուս մասը լավ չորացնել, կոթերը հեռացնել, պահել փակ ափսեում կամ տեքստիլ տոպրակներում: Այդ կույտը կարելի է օգտագործել որպես հյութ՝ թեյ:

Գինին լցնելուց հետո 3 շաբաթ պահել լուսավոր, արևոտ տեղ, այնուհետև քամել հեղուկը: Հեղուկին ավելացնել որոշ քանակությամբ շաքար և եփել թանձրույթը (նկ. 2): Ստացված թուրմը կարող են օգտագործել թե՛ երեխաները, թե՛ մեծահասակները:

Թուրմի ստացումը բջջային մակարդակով կատարվում է բջջի պլազմատիկ թաղանթի ընտրողական թափանցելիության շնորհիվ, որի հետևանքով կենսաբանորեն ակտիվ նյութերը բջջահյութից քամվում են արտաբջջային հյութի մեջ:

Ա *Բ*

Նկար 2 Ա. Սև թանթրվենի բույսի ծաղիկներից թուրմի պատրաստման ընթացքը
Բ. Սև թանթրվենի բույսի ծաղիկներից պատրաստված թուրմը

Ծաղիկներից թուրմ պատրաստելու համար 20 գ հումքը թրմում են 20 րոպե 1 լ եռման ջրում, հովանալուց հետո ըմպում 1-ական բաժակ՝ օրը 3 անգամ, կամ 2 թեյի գդալ ծաղկահումքը փոշի վիճակում 1 բաժակ եռման ջրում 10 րոպե թրմելուց հետո քամում են և ըմպում օրվա մեջ 3 անգամ: Պտուղներից ու տերևներից սառը ջրաթուրմ պատրաստելու համար վերցնում են կեսական թեյի գդալ, լցնում 1 բաժակ սառը ջրի մեջ, թողնում ամբողջ գիշերը և առավոտյան՝ քիչ տաքացնելուց հետո, ըմպում միանվագ: Ծաղիկներից եփուկ պատրաստելու համար 20 գ չոր հումքը 1 բաժակ եռման ջրում եռացնում են 10 րոպե, ավելացնում մեղր ու ըմպում 1/4 բաժակ, օրական 3-4 անգամ՝ ուտելուց 15 րոպե առաջ: Տերևներից և արմատից եփուկ պատրաստելու համար հավասար չափով իրար խառնված հումքերից վերցնում են 20 գ, 1 բաժակ ջրի մեջ եռացնում 20 րոպե, ապա ըմպում 1-ական ճաշի գդալ՝ օրական 3 անգամ, մեղրով:

Այսպիսով՝ սև թանթրվենին թեպետ արագ զբաղեցնում է հատված տարածքները և անտառգիտական տեսակետից հետաքրքիր չէ, այնուամենայնիվ այն խիստ արժեքավոր է որպես դեղաբույս: Հայկական ժողովրդական բժշկության մեջ այն գրեթե չի օգտագործվում, բայց մենք կարծում ենք, որ կարելի է հետևել այլ երկրների փորձին և օգտագործել ինքնազգացողությունը բարձրացնելու և դիմացկունությունը բարելավելու նպատակով [3]:

Ստացված թուրմը էկոլոգիապես մաքուր է, ունի բուժիչ նշանակություն և որոշ երկրներում ունի մեծ կիրառություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թորոսյան Ա., Հայաստանի դեղաբույսերը, Երևան, 1983, էջ 86-91
2. Վարդանյան Զ., Բայրամյան Լ., Լոքյան Ա., Մխիթարյան Հ., Sambucus nigra L. տեսակի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները Գուգարքի տարածաշրջանում, «Բանբեր», Երևան, 2015, էջ 82-87
3. http://www.mplants.org.ua/view_main_right.php

ПОЛУЧЕНИЕ ЭКОЛОГИЧЕСКИ ЧИСТОГО ПРОДУКТА ОТ ГЕНЕРАТИВНЫХ ОРГАНОВ ЧЕРНОЙ БУЗИНЫ SAMBUCUS NIGRA L.

Ани Оганнисян
ВГУ, Биологохимический факультет
Биология магистратура 1-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *чёрная бузина, плод, цветы, настой, целебное значение.*

Чёрная бузина Sambucus nigra L. быстро восполняет лесные вырубки и по мнению лесоводство, не интересно, но несмотря на это, она очень ценное лекарственное растения. Её плоды, цветы и венчики имеют целебное значение. От плодов и цветков чёрной бузины изготовливаяют настой. Изготовление настоя зависит от изберателной проницательности плазматического мембрана. Настой чёрной бузины могут употреблять и дети, и взрослие.

THE RECEIPT OF ENVIRONMENTALLY FRIENDLY GOODS FROM THE GENERATIVE ORGANS OF THE SAMBUCUS NIGRA PLANT SPECIES

Ani Hovhannisyan
Vanadzor State University
Faculty of Biology and Chemistry

SUMMARY

Key words: *Sambucus nigra, fruit, flower, tincture, healing importance.*

Although Sambucus nigra (Black Elder) quickly occupies reforested areas and is not interest-provoking from the forestry viewpoint, it is extremely valuable as a herb. Its fruits, flowers, and inflorescence have healing importance. The fruits and flowers of Sambucus nigra can be used to make tincture. The receipt of the tincture is based on the selective penetration of the plasma membrane. The tincture made from Sambucus nigra can be used both by children and adults.

LILIUM ՑԵՂԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Գարիկ Վանյան
ՎՊՀ, Կենսաբանություն, 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ գ. գ. թ., դոցենտ ***Լիլիա Բայրամյան***

Հանգուցային բառեր՝ *Lilium armenum, կենսաբազմազանություն, Շամուտ, բուսատեսակ,կենսազանգված, էնդեմիկ տեսակ*

Ժամանակակից բուսաբանական գիտության խնդիրներից մեկը համարվում է կենսաբազմազանության և ֆիտոբազմազանության ուսումնասիրությունը: Այս գործում շատ կարևոր է առանձին տեղամասերի ֆլորաների հետազոտությունը: Առավել կարևոր է կղզային էֆեկտ դրսևորող առանձին տեսակների ուսումնասիրությունը: Այդ երևույթը ուղեկցվում է մի շարք ռելիկտային, էնդեմիկ տեսակների նկարագրությամբ, ինչը պայմանավորված է բույսերի գոյության միջավայրի բազմազանությամբ: 20-րդ դարի 90-ական թվականներին տնտեսական երկարատև շրջափակման, վառելիքաէներգետիկ ճգնաժամի պատճառով կենսաբազմազանության պահպանության համար ստեղծվեց սպառնալից իրավիճակ տաքսոնոմիական կորստի տեսակետից: Լոռու մարզի տարածքի հիմնական էկոհամակարգերի և կենսաբանական վնասի գնահատման ուղղությամբ հետազոտությունները տեսական և գործնական մեծ հետաքրքրություն են ներկայացնում [2]: Անհամեմատ քիչ են ուսումնասիրությունները բուսական համակեցություններում առանձին բուսատեսակների աճման ու զարգացման ուսումնասիրության ուղղությամբ, առանց որի դժվար կլինի համակեցությունների պահպանության և օգտագործման համալիր միջոցառումների մշակումը: Ցանկացած ֆլորայի հետազոտման ժամանակ մեծ հետաքրքրություն են ներկայացնում սահմանափակ արեալ ունեցող և էնդեմիկ համարվող տեսակները: էնդեմիկ բույսերը ֆլորայի հատուկ բաղադրիչ մասն են կազմում, արտացոլում են նրա յուրահատկությունը և տարբերությունը այլ երկրների ֆլորայից: Հետազոտությունը հիմնված է Լոռու մարզի Շամուտ գյուղի վայրի բնության մեջ տարածված *շուշան* հայկական բույսի տեղախմբերի ուսումնասիրության վրա: Ուսումնասիրությունը կատարվել է 2013-2015 թթ. հետազոտվող տեղամասում: Շամուտ գյուղի շրջակայքում Շուշան հայկական տեսակի տեղախումբը պատկանում է բույսերի այն խմբին, որոնք ենթակա են պահպանության, քանի որ գտնվում են անհետացման եզրին, ինչը վտանգի առջև է դնում ուսումնասիրվող տարածքի կենսա-

բազմազանությունը:

Հետազոտվող տեղամասում մեր կողմից ուսումնասիրվել է մեկուսացված էնդեմիկի կարգավիճակում գտնվող *Lilium armenum* տեսակի տարածվածությունը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Լոռու մարզի Շամուտ գյուղի անտառային համակեցությունում *Liliaceae* ընտանիքի *Lilium* ցեղի ներկայացուցիչների տարածվածությունը:

Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ, մասնավորապես բացահայտել Շամուտ գյուղի շրջակայքում *Liliaceae* ընտանիքի *Lilium* ցեղի ներկայացուցիչների տարածվածությունը, տեսակային կազմը, վիճակը:

Պետք է նշել, որ Հյուսիսային Հայաստանում այս ընտանիքի ներկայացուցիչները հանդիպում են ենթալպյան և ալպյան գոտիներում, բայց հետազոտվող տեղանքում ցեղի տարածման արեալը խիստ մեկուսացված է, մոզաիկ: Առանձին նմուշներ հանդիպում են ձորակներում, անտառի վերին եզրերում, բացատներում:

Շամուտ գյուղը տեղակայված է Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի Մարցի ձորում, որը կոչվում է Մոտկորի ձոր (1480 մ ծովի մակերևույթից բարձրության վրա): Գյուղը գտնվում է Գուգարաց լեռնաշղթայի արևմտյան մասում: Լեռնաշղթայի մեծ մասը անտառապատված է: Գուգարաց լեռնաշղթան ձգվում է հյուսիսից հարավ և բավականին ուժեղ մասնատված է Փամբակ և Դեբեդ գետերի աջափնյա վտակներով: Գետերը արագահոս են, ինչը նպաստում է ինտենսիվ էրոզիոն գործընթացներին [2]: Հետազոտվող տարածքի անտառները 1992-2000 թթ. ենթարկվել են ինտենսիվ հատումների: Ներկայումս Շամուտ գյուղի էկոհամակարգերը գտնվում են մարդածին ճնշման ազդեցության տակ: Անտառային էկոհամակարգերում կատարվում են սուկցեսիոն գործընթացներ: Տուժում են ոչ միայն դենդրոֆլորայի ներկայացուցիչները, այլ նաև ռելիկտային, էնդեմիկ, հազվադեպ հանդիպող խոտաբուսատեսակները: Անտառի շրջակայքը աստիճանաբար վերածվում է խոտհարքների, արոտավայրերի: Գյուղը սահմանակից է Լորուտ, Աթան, Ահնիձոր համայնքներին: Մարզկենտրոնից հեռավորությունը 60 կմ է: Համայնքի աշխարհագրական դիրքը և կլիմայական պայմանները նպաստում են մի շարք հազվադեպ հանդիպող, էնդեմիկ տեսակների տարածմանը:

Բնապահպանության մեջ գոյություն ունի «ֆունկցիոնալ մահացում» հասկացությունը, որը նշանակում է, որ տեսակի ներկայացուցիչները բնության մեջ դեռ կան, բայց քանակի, գենետիկական բազմազանության նվազեցման պատճառով տեղախմբի վերականգնումը և արեալի մեծա-

ցումը գտնվում է «կրիտիկական» վտանգի մեջ: Շամուտ գյուղը ենթարկվում է ուղղածիգ գոտիականությանը, ինչի պատճառով էլ առանձին տեսակներ ունեն սահմանափակ արեալ: Դրանցից են *Liliaceae* ընտանիքի *Lilium* ցեղի ներկայացուցիչները գյուղի անտառային, ենթալպյան էկոհամակարգում: Չնայած աշխարհում տեսակի լայն տարածվածությանը, ՀՀ-ում տարածված է ցեղի *L.armenum, L. szovitsianum, L. Monadelphium* տեսակները: Բոլոր տեսակները բազմամյա սոխուկավոր բույսեր են: Ձևաբանական կառուցվածքի ուսումնասիրությունը վկայում է, որ ուսումնասիրվող տարածքում հանդիպում են *L.armenum, L. Szovitsianum* տեսակները (աղյուսակ 1): Պետք է նշել, որ այդ երկու տեսակները միմյանցից տարբերակելը խիստ դժվար է, քանի որ սրանց տեղախմբերի արեալները ծածկում են միմյանց:

Աղյուսակ1

Lilium ցեղի տեսակների մորֆոլոգիական տարբերությունները

Տեսակ	Lilium armenum	Lilium szovitsianum
ցողունային արմատներ	կոմպակտ	փռված
վերգետնյա ցողուն տերևակալած	խիտ/100-120	քիչ են /40-70/
տերևաաթիթեղի ստորին մակերեսը	մազմզոտ	թույլ
Պսակաթերթերի գույնը	ոսկեգույն դեղին	բաց դեղին,ծծմբադեղին
պսակաթերթերի գագաթը	թառամելու ժամանակ հետ են ծալվում	Կլորավուն,տափակ,ծաղիկը բացվելու ժամանակ ետ է ծալվում
ա/առէջաթելերի գույնը և ձևը բ/փոշանոթի գույնը	ա/կանաչ,ազատ կամ հազվադեպ սերտաճած բ/մուգ դեղին	ա/կանաչավուն,հազվադեպ սերտաճած բ/կարմրամանուշակագույն
Ծաղկափոշու գույնը	մուգ դեղին կամ ժանգագույն	Վառ կարմրանարնջագույն
վարսանդի սռնակը	Կարմիր ծայրերով	մանուշակակարմրավուն
Սոխուկի արտաքին Թեփուկների գույնը	Ոսկեգույն դեղին	Ոսկեգույն դեղին

Ինչպես տեսնում ենք, երկու տեսակներն էլ բնութագրվում են որոշակի զուգակցող հատկանիշներով: Ըստ մեր համոզման՝ Շամուտ գյուղի շրջակայքում հիմնականում տարածված է L. armenum տեսակը: Բույսերը ծաղկում են հունիսի սկզբին: Լավ հարմարված են Շամուտի կլիմային: Մեր կողմից հետազոտվել է տարբեր բարձրություններում աճող L. armenum տեսակը: Ուսումնասիրել ենք մեկ բուսանմուշի վերգետնյա և ստորգետնյա մասերի կենսազանգվածը: Տվյալ դեպքում կարևոր նշանակություն ունեն հողի և օդի խոնավությունը: Հողի խոնավությունը անտառի վերին եզրում պակասել է, և բույսի ցողունի զանգվածը ավելի փոքր է, քան լանջի գոգավոր մասում աճող բույսի մոտ: Անտառահատված տարածքներում նույնպես նկատվում է հողի և օդի խոնավության նվազում: Այդպիսի տեղամասերում նույնպես նկատվում է ցողունի քաշի նվազում՝ լանջի գոգավոր մասի հետ համեմատած: Միմյանցից տարբերվող միկրոկլիմայական պայմանների ազդեցությամբ տարբեր բարձրությունների վրա աճող *L. armenum* բույսերի տերևների, ցողունների և ծաղիկների զանգվածը տատանվում է, քանի որ ֆոտոսինթեզի գործընթացը տարբեր է, և սինթեզված օրգանական նյութի քանակը տարբերվում է: Հողի խոնավության տատանումները կարող են ազդել արմատների աճի հիմնական գործընթացների վրա: Ուրեմն, ստորգետնյա զանգվածի կուտակումը նույնպես ենթարկվում է տեղանքի միկրոկլիմայական պայմաններին: Բույսերի վերգետնյա և ստորգետնյա օրգաններում օրգանական նյութերի կուտակումը, հետևաբար և զանգվածը կախված են միկրոկլիմայական պայմաններից (աղյուսակ 2,3):

Աղյուսակ 2

Տարբեր միկրոկլիմայական պայմաններում
L. armenum բույսի վերգետնյա մասի կենսազանգվածը (գրամ)
Շամուտ (2014թ.)

Տեսակ	Վերգետնյա մաս/գրամ			
	Տերև	Ցողուն	Ծաղիկներ	Ընդամենը/գրամ
Անտառի վերին եզր				
L. armenum	120-130	25-30	15-20	160-180
Լանջի գոգավոր մաս				
L. armenum	150-155	40-45	25-30	215-230
Հատված անտառահանդակ				
L. armenum	100-115	20-25	10-15	130-155
Անտառի խորքը				
L. armenum	155-160	15-20	10-12	180-192

Աղյուսակ3

Տարբեր միկրոկլիմայական պայմաններում
L. armenum բույսի ստորգետնյա մասի կենսազանգվածը (գրամ)
Շամուտ (2014թ.)

Տեսակ	*Ստորգետնյա մաս /գրամ*	*Բույսի ընդհանուր զանգվածը/գրամ*
Անտառի վերին եզր		
L. armenum	*206-210*	*366-390*
Անտառի խորքը		
L. armenum	*215-220*	*395-412*
Լանջի գոգավոր մաս		
L. armenum	*215-230*	*430-460*
Հատված անատառահանդակ		
L. armenum	*194.5-200*	*324-355*

Ինչպես տեսնում ենք, աճման տարբեր միկրոկլիմայական պայմաններում փոփոխվել է արմատային համակարգի զանգվածը: Պարզվել է, որ միավոր տարածության վրա արմատների առավելագույն զանգվածը կուտակվել է լանջի գոգավոր մասում, միջին զանգվածի ցուցանիշը ներկայացված է անտառի վերին եզրում, իսկ հատված մասերում աճող բույսերի ցուցանիշները ամենացածրն են (աղյուսակ 3):

Հողի խոնավության տատանումները կարող են ազդել նաև արմատների աճի համար նպաստավոր ջերմաստիճանի վրա, բայց խոնավության խիստ տատանումներ չեն նկատվել և արմատների համար ստեղծված են նպաստավոր ջերմաստիճանային պայմաններ, ստորգետնյա օրգանների զանգվածի կտրուկ տարբերություններ չկան: Խոնավության տատանումները նույնպես կարող են ազդել հողի ջերմաստիճանի վրա: Ուստի նկատվում է փոխադարձ կապ օպտիմալ ջերմաստիճանի, խոնավության ու բույսերի արմատների զանգվածի միջև: Այսպիսով, Լոռու մարզի Շամուտ գյուղի անտառի վերին եզրի, ենթալպյան գոտու բարձրախոտերի ստորգետնյա օրգանների զանգվածի կուտակումը կախված է միկրոկլիմայական պայմաններից: Ընդ որում, միևնույն լուսավորվածության պայմաններում, խոնավությունը ազդում է բույսերի արմատամերձ միջավայրի ջերմային ռեժիմի վրա: Բույսերի վերգետնյա և ստորգետնյա օրգաններում կուտակվում է օրգանական նյութը: Ուշադրության է արժանի այն փաստը, որ վերգետնյա մասի աճը զգալի է գոգավոր մասում: Մեր կողմից ուսումնասիրվել է *Lilium* ցեղի մասնակցությունը ենթալպյան բարձրախոտերի կենսաարդյունավետության ուսումնասիրության գործում: Պարզել ենք, որ ուսումնասիրված բոլոր համակեցություններում *Lilium armenum* տեսակի ներկայացուցիչները համատարած բու-

սուտներ չի առաջացնում: Միայն Շամուտ գյուղի՝ 1550 մ ծովի մակերևույթից բարձրության վրա հանդիպել ենք բավականին մեծ չափեր ունեցող տեղախումբ, քանի որ բարձրախոտերը ամբողջ վեգետացիայի ընթացքում ապահովված են խոնավությամբ, որը և բարենպաստ պայմաններ է ստեղծում առանձնյակների վերգետնյա և ստորգետնյա օրգանների զարգացման համար: Փորձել ենք *Lilium armenum* տեսակի բուսանմուշը աճեցնել նաև տնամերձ հողատարածքներում և ծաղկանոցներում, սակայն դա արդյունք չի տվել: Ենթադրում ենք, որ գյուղի պայմանները տարբերվում են շրջակա լանջերի պայմաններից, ավելի չորային են և խոնավության ցուցանիշը համեմատաբար ցածր է, բույսը չի ադապտացվում այդ պայմաններին:

Այսպիսով, Լոռու մարզի Շամուտ գյուղը բնութագրվում է հարուստ անտառային, ենթալպյան բուսականությամբ: Պետք է նշել, որ *L. armenum* տեսակը ընդգրկված է եղել 1984թ. Կարմիր գրքում: Շուշան ցեղի ներկայացուցիչները համատարած բուսուտներ չեն առաջացնում և անհրաժեշտ է յուրահատուկ ուշադրություն դարձնել մոզաիկ տարածվածություն ունեցող *Lilium* ցեղի *L. armenum* տեսակի տեղախմբերի արեալների պահպանությանը: Շամուտ համայնքի ենթալպյան համակեցություն վրա մեծ է մարդու գործունեության բացասական ազդեցությունը: Նշված գոտին համարվում է ամառային արոտավայրի և խոտհարքի, ուտելի, դեկորատիվ, դեղաբույսերի ակտիվ հավաքի վայրը: Կենսաբազմազանության պահպանման տեսակետից՝ անհրաժեշտ է կանոնավորել հազվադեպ հանդիպող *L. armenum* տեսակի փոքր խմբավորումների վերաճը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազգային զեկույց, Շրջակա միջավայրի վիճակը Հայաստանում, ՀՀ բնապահպանության նախարարություն, Երևան, 2003թ.:
2. Բալոյան Ս., Հայաստանի ալպյան բուսածածկույթը,Երևան 2005թ.:
3. Բարսեղյան Ա. Մ., Հանրապետության հազվագյուտ և անհետացող բուսական համակեցություններն ու դրանց պահպանումը, Երևան, 1984թ.:
4. Սահակյան Գ. Ռ., Հայաստանի ենթալպյան բարձրախոտերի զարգացման առանձնահատկությունները, Երևան 2004թ.:
5. А.Л. Тахтаджян, Флора Армении, 2012.
6. Красная книга Армении-Флора
7. Э. Ц. Габриелян, Ключ для определения родов, 2010.
8. Долуханов А. Г., Субальпийские ландшафты Кавказа как убежища реликтовых элементов флоры // Проблемы ботаники, XII. М.-Л., 1974. - С. 27-34.

РАСПРОСТРАНЕНИЕ РОДА *Lilium* В ЭКОСИСТЕМАХ СЕЛА ШАМУТ ЛОРИЙСКОГО МАРЗА

Гарик Ванян
ВГУ, Биология, 4-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *Lilium armenum, биоразнообразия, Шамут, растение, биомасса, эндемический.*

Исследования показали, что в селе Шамут Лорийского марза представители вида Lilium armenum не образуют сплошных крупных зарослей, однако необходимо обратить внимание на резко выраженное мозаичное распространение популяции вида, как в верхней границе леса, так и в субальпийском поясе. Неравномерное размещение экземпляров растений можно обьяснить сильным антропогенным воздействием. Таким образом, с точки сохранения биоразнообразия, необходимо упорядочить воспроизводство некоторых редко встречаемых видов растений, таких как Lilium armenum.

DISTRIBUTION KIND *Lilium* IN ECOSYSTEMS SHAMUT VILLAGE OF LORI REGION

Garik Vanyan
VSU, Biology, 4th year

SUMMARY

Key words: *Lilium armenum, biodiversity, Shamut, plant, biomass, endemic.*

Armenian Lily (Lilium armenum) forms huge colonies among the subalpine tall Caucasus. In this lily large golden-yellow flowers, up to 20 or more on one stalk.

Odnobratstvennaya Lily (Lilium monadelphum) is named fused into a tube Staminate threads. This beautiful early-flowering lily growing in the central and eastern part of the Greater Caucasus mountain range at an altitude of 1800 meters above sea level on forest edges and thickets subalpine birch.

Studies have shown that in the village of Lori Marz Shamut members of the species Lilium armenum do not form a continuous large shrubs, but you must pay attention to the pronounced mosaic distribution of population of the species, both in the upper border of the forest and in the subalpine zone. Uneven placing specimens of plants can be explained by the strong anthropogenic influence. Thus, in terms of biodiversity, it is necessary to streamline the reproduction of some rarely encountered species such as Lilium armenum.

ՀԻՊՈԴԻՆԱՄԻԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐՈՒՄ

Նաննե Պետրոսյան
ՎՊՀ, կենսաբանաքիմիական ֆակուլտետ,
դեղագործական քիմիա, 4-րդ կուրս
Ղեկավար՝ կ. գ. թ., դոցենտ ***Շուշան Քառյան***

Հանգուցային բառեր: *Հիպոդինամիա, տարիքային խմբեր, օնլայն խաղեր, սոցկայքեր*

Հիպոդինամիան (հուն hypo–ներքև,dynamic-ուժ) կամ թերշարժունությունը համարվում է դարի զարգացման հիվանդություն: Օրգանիզմի շարժունակության ակտիվության սահմանափակման և մկանային կծկման ուժի իջեցման հետևանքով, առաջանում է օրգանիզմի մի շարք ֆունկցիաների խանգարում (մարսողություն, արյունատար համակարգ, հենաշարժողական ապարատ) [2]: Սա կենսական կարևոր խնդիր է տարիքային բոլոր խմբերի, մասնավորապես աճող օրգանիզմների համար: Երեխաների ԲՆԳ-ն պայմանավորվում է մանուկ հասակում ունեցած ֆիզիկական ակտիվության մակարդակով [1]: Երկար ժամանակ նստած լինելու պատճառով ստորին վերջույթների անոթներում տեղի է ունենում արյան կանգ, ինչը հանգեցնում է այդ օրգաններում, ինչպես նաև գլխուղեղում արյունամատակարարման թուլացման [2]: Վատանում է մտավոր աշխատանքը, հիշողությունը, ուշադրությունը, թույլ է զարգանում մկանային համակարգը: Հիպոդինամիան նպաստում է հավելուրդային զանգվածի ավելացմանը և դրա հետ կապված հիվանդությունների վաղաժամ զարգացմանը [1]: Այս ամենին, ակտիվորեն նպաստում է գիտատեխնիկական առաջընթացը. նորագույն համակարգիչները, հեռախոսները, ավտոմատացված խաղերը, որոնք դարձել են մարդկային հասարակության անքակտելի մասը:

<u>Աշխատանքի նպատակն ու խնդիրներն են .</u>

• Պարզել հիպոդինամիայի առկայությունը միջին, բարձր տարիքի դպրոցականների և ուսանողների շրջանում:

• Ի հայտ բերել նրանց ֆիզիկական ակտիվության աստիճանը:

• Պարզել տարիքային նշված խմբերում տարվածությունը օնլայն խաղերով և սոցկայքերով:

<u>Ուսումնասիրության մեթոդները</u>

Օգտագործել ենք անկետավորման կամ հարցաթերթիկների լրաց-

ման և զրույցի մեթոդը [3]: Կազմել ենք համապատասխան հարցաթերթիկներ, այն տրամադրվել է 10-13 տարեկան Վանաձոր քաղաքի Ա. Ս. Պուշկինի անվան թիվ 4 դպրոցի, 15-17 տ. Վանաձորի ֆիզմաթ «Էվրիկա» դպրոցի և Մ. Թավրիզյանի անվան երաժշտական քոլեջի 30-ական աշակերտների: Ընդհանուր թվով, հարցմանը մասնակցել են 90 աշակերտ և 18-21 տարեկան ՎՊՀ-ի 40 ուսանող:

Հարցաթերթիկները կազմել ենք՝ հաշվի առնելով տվյալ խմբի տարիքային առանձնահատկությունները: Հարցման տվյալները ենթարկվել են համակարգված վերլուծության և արտահայտվել են տոկոսներով:

Հետազոտության արդյունքներն են

• Հարցմանը մասնակցած 10-13տ. երեխաների 52%-ը զբաղվում է սպորտով, կամ հաճախում է պարային խմբակ: Տարիքային 15-17տ. խմբում այն 30 % է, ուսանողների մոտ `15% :

• 10-13 տ. երեխաների միայն 35%-ն է գերադասում խաղալ բացառապես բակում, մյուսները կամ գերադասում են օնլայն խաղեր (25%), կամ սիրում են համատեղել բակային խաղերը՝ օնլայն խաղերի հետ (21%): 15-17 տարեկանների խմբում օնլայն խաղերով տարվածությունը կազմում է 45%, ուսանողների մոտ՝ 65%:

• Բակը որպես շփման միակ միջոց չի ընտրվել որևէ մեկի կողմից: Երեխաների 45%-ը ընտրել է բոլոր 3 տարբերակները միաժամանակ, 15%-ը օնլայն շփում, իսկ 31%-ը՝ հեռախոսային շփում, 9 %-ը՝ շփվել չեն սիրում:

• Երեխաների (10-13տ.) մոտ 24%-ը գրանցված է սոցիալական կայքերում և օրական շփվում են 1-2 ժամ (ծնողների վերահսկման շնորհիվ): 15-17տ. 85%-ն է գրանցված սոցկայքերում և համակարգչի առջև անցկացնում է միջինը 5-6 ժամ: Ուսանողների մոտ այս ցուցանիշները ավելի մեծ են և համապատասխանաբար կազմում են 89% և 7-8ժամ: Այս ժամանակը տրամադրվում է նաև դասապատրաստմանը, որում համակարգիչը հանդես է գալիս նաև որպես տեղեկատվական աղբյուր:

• 10-13տ. երեխաների 15%-ը գերադասում է օնլայն շփում, իսկ 25 %-ը օնլայն խաղեր: 15-17 տարեկանների այս ցուցանիշը գրեթե հավասար է 45% և 55%, 18-21տ. ուսանողների շրջանում օնլայն շփումը գերադասում են 65% -ը և 55%-ը՝ օնլայն խաղերը:

• Հիպոդինամիայի աճի տենդենցը դեռահասության տարիքից մինչև պատանեկան տարիքը նկատելի է՝ միջինը 1.8 անգամ, որն ահազանգող է նշված տարիքային խմբերի համար:

Ֆիզկուլտուրայի ժամերը դպրոցներում, ուսումնարաններում և համալ-

սարանում հիմնականում կանոնավոր են, 5-րդ դասարանցիների համար շաբաթական 3 հանդիպում, ուսանողների և բարձր դասարանցիների համար շաբաթական 1-2 ժամ (չի վերաբերվում ֆիզիկական կուլտուրա և սպորտ բաժնի ուսանողներին՝ 5 և ավելի ժամ)

Եզրակացություն

• Հիպոդինամիան 10-13 տարեկան երեխաների շրջանում աղետալի չէ, սակայն ստավցած արդյունքները բավարար համարվել չեն կարող:

• 15-17 և հատկապես 18-21 տարեկանների շրջանում այն խիստ արտահայտված է:

• Հիպոդիանամիայի աճի միտումը ըստ տարքի՝ ակնհայտ է: Ենթադրելի է, որ համակարգչից կախվածության հիմնական պատճառները օնլայն խաղերն են և սոցկայքերը:

Աշխատանքը շարունակական բնույթ ունի: Արդյունքները ցանկանում ենք համեմատել նաև ՀՀ այլ քաղաքների ցուցանիշների հետ:

Մեր հետազոտությունից ելնելով՝ կոչ ենք անում լինել ավելի հետևողական: Երեխաների, դեռահասների և ուսանողների համար, բացի ֆիզկուլտուրայի դասերից ուսումնական գործընթացին զուգահեռ, կազմակերպել ֆիզկուլտուրայի կամ պարային խմբակներ:

Այն անշուշտ կոչված կլինի պահպանել և ապահովագրել մատաղ սերնդին հետագա, հիպոդինամիայի հետ կապված, առողջական խնդիրներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մինասյան Ս. Մ ., Ադամյան Ծ. Ի., Սարգսյան Ն. Վ., Մարդու ֆիզիոլոգիա, Երևանի համալս. հրատ., Եր., 2011, էջ 540:
2. Մինասյան Ս. Մ., Առողջագիտություն, Երևանի համալս. հրատ., Եր., 2009. էջ 240-249:
3. www.psychology.ru

НАЛИЧИЕ ГИПОДИНАМИИ И ВЫЯВЛЕНИЕ ДИНАМИКИ СРЕДИ РАЗНЫХ ВОЗРАСТНЫХ ГРУПП

Нане Петросян
В Г У биолог. Химический факультет,
фармацевтическая химия, IV курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *гиподинамия. возрастные группы. онлайн – игры, социальные сайты.*

Среди учеников от десяти до тринадцати, от пятнадцати до семнадцати лет, а также среди студентов от восемнадцати до двадцати одного года, обнаружилось наличие гиподинамии и уровень её проявления. Благодаря контролю родителей над детьми от десяти до тринадцати лет, показатель наличия гиподинамии ниже, чем у возрастной группы от пятнадцати до двадцати одного года. По данным нашего исследования, одна из главных причин гиподинамии – это зависимость от компьютерных игр и социальных сетей.

Наряду с возрастом обнаружилась растущая тенденция гиподинамии в среднем 1,8 раза.

THE EXISTENCE OF HYPODYNAMIA AND THE DISCOVERY OF DYNAMICS IN DIFFERENT AGE GROUPS

Nane Petrosyan
The 4th course student of V.S.U biochemicd faculty
(pharmaceutica chemistry)

SUMMARY

Key words: *Hypodynamia,age groups, on-line games,social network.*

The existence of hypodynamia has been discovered in different age groups (pupils from 10 to 13,from 15 to 17 and students from 18 to 21).It has been registered lower mark among the pupils from 10 to 13 and higher mark among the students from 18 to 21.The main reason is the parents control. According to aur analisis the main reasonof hypodynamia is the dependence on the computer games and social network.

There is growth trend of hypodynamia in average in 1.8 times according to the age

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЭКОНОМИКА

ECONOMICS

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2000-2015ԹԹ.

Անի Գևորգյան
ԿՊՀ, Կառավարում, 3-րդ կուրս
*Գիտ. ղեկավար՝ տ.գ.թ. **Հրայր Պապոյան***

***Հանգուցային բառեր**՝ պետական պարտք, բյուջե, տնտեսական աճ, պարտատոմսեր, տոկոսադրույք*

Պետական պարտքը տվյալ պետության և նրա կենտրոնական բանկի անունից (բացառությամբ ռեզիդենտների հանդեպ Կենտրոնական բանկի առկա պարտքային պարտավորությունների) ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է:

Կառավարության պարտքը կառավարության ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է:

Կենտրոնական բանկի պարտքը ոչ ռեզիդենտների, օտարերկրյա պետությունների առջև Կենտրոնական բանկի ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է:

Ըստ ՀՀ օրենսդրության՝ ներքին պետական պարտքը ՀՀ անունից կառավարության լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների հանդեպ փոխառության կամ վարկային պայմանագրերի հիման վրա ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է:

Արտաքին պետական պարտքը Հայաստանի Հանրապետության անունից և Կենտրոնական բանկի անունից Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների և օտարերկրյա պետությունների հանդեպ ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է [1]:

Երկրները պարտք են վերցնում երեք հիմնական նպատակներով.

1. ֆինանսավորել պետական բյուջեի պակասուրդը,
2. ֆինանսավորել որոշակի կոնկրետ ծրագրեր (սովորաբար ներդրումային),
3. համալրել միջազգային պահուստները:

Առաջին դեպքում ներգրավված միջոցները մուտքագրվում են պետական բյուջե և պետական բյուջեի միջոցներն օգտագործվում են պարտքը մարելու համար: Երկրորդ դեպքում միջոցները ներգրավվում են որոշակի կոնկրետ, հիմնականում ենթակառուցվածքային ծրագրերի

ֆինանսավորման համար, որոնք կարող են ավելացնել երկրի տնտեսական կարողությունը և ձևավորել միջոցներ, որոնք հնարավորություն կտան մարել պարտքը և երկիրն ավելի զարգացած, և բարեկեցիկ դարձնել: Երրորդ դեպքում երկրները պարտք են ներգրավում միջազգային պահուստները համալրելու համար:

ՀՀ արտաքին պետական պարտքը ձևավորվել է 1992 թվականից:

1993 թվականին ՌԴ-ին է փոխանցվել 1991 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ նախկին ԽՍՀՄ արտաքին պետական պարտքում և ակտիվներում ՀՀ-ի մասնաբաժինը, որի արդյունքում անկախության ձեռքբերման պահին Հայաստանի արտաքին պետական պարտքը եղել է զրոյական: Սակայն ՀՀ-ն ժառանգել է «Խնայբանկի» հայաստանյան ավանդատուների նկատմամբ պարտավորությունները և ճանաչել այն որպես ՀՀ ներքին պետական պարտք: Ներքին պարտքի կառուցվածքում են նաև պետական ու խնայողական պարտատոմսերը, ներգրավված վարկերը և այլն: Առաջին վարկատուն ԵՄ-ն էր, հետագայում վարկեր են ներգրավել ՌԴ-ից, Համաշխարհային բանկից (ՀԲ) և այլն [2]:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը եղել է 2,456.3 մլրդ դրամ:

Կառավարության պարտքը կազմել է 2,225.9մլրդ դրամ՝ այդ թվում, արտաքին պարտքը 1,857.5 մլրդ դրամ է, ներքին պարտքը՝ 368,4մլրդ դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 230.4մլրդ դրամ, որից 68,1մլրդ դրամը հանդիսանում է ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր:[3]

Գծապատկեր 1. ՀՀ պետական պարտքի դինամիկան 2000-2015թթ.[4]



Գրաֆիկից պարզ երևում է, որ 2000-2008թթ. ընկած ժամանակահատվածում պետական պարտքի չափերը մեծ ծավալով տատանումներ չեն արձանագրել, սակայն պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը զգալիորեն նվազել է և 2008 թվականին կազմել 16,4%: Սա վկայում է այն մասին, որ այդ ժամանակահատվածում ՀՀ-ում արձանագրվել է տնտեսական աճի բարձր տեմպ, և դրամը արժևորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ: Պետական պարտքը մեծ արագությամբ սկսում է աճել 2008 թվականին, պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը 16,45%-ից դառնում է 40,6%, որը հետևանք է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, բյուջեի դեֆիցիտի ավելացման և դրամի արժեզրկման: 2013 թվականին իրավիճակը որոշ չափով կարգավորելու նպատակով ՀՀ կառավարությունը առաջին անգամ թողարկեց եվրապարտատոմսեր 700մլն ԱՄՆ դոլար ծավալով, իսկ արդեն 2015թ. մարտի 26-ին երկրորդ անգամ թողարկվեց եվրապարտատոմսեր 500մլն ԱՄՆ դոլար ծավալով, որից 200մլն դոլարը տրամադրվեց 2013թ. թողարկված եվրապարտատոմսերի հետգնմանը: Վերջիններիս թողարկման վերաբերյալ տնտեսագետների կարծիքները հակասական են: Մեր կարծիքով եվրապարտատոմսերի թողարկումն ունի դրական կողմեր, բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվարկել դրանց ռիսկայնությունը և հետևել եվրոյի արժեքի տատանումներին՝ հետագայում ավելի լուրջ խնդիրների առաջ չկանգնելու համար: Այսպիսով, եվրապարտատոմսերի թողարկման բացասական կամ դրական երևույթ լինելն միանշանակ չենք կարող ասել, սակայն կարող ենք նկատել, որ 2015թ. պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 48,8%: Այն դեռևս չի գերազանցում 2000թ. ցուցանիշը, սակայն շատ մոտ է վերջինիս:

Գծապատկեր. 2 ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների արժութային կառուցվածքը [4]



Գրաֆիկից պարզ է դառնում, որ 2000-2015թթ. արտաքին պարտքի մեծ մասը վերցված է SDR-ով, իսկ արդեն 2007թ. սկսած պարտք ներգրավվել է նաև ճապոնական իենով: 2014թ համեմատ ԱՄՆ դոլարով ստացված վարկերի մասնաբաժինը աճել է 5.9 տոկոսային կետով՝ կազմելով 24.7%, ինչը պայմանավորված է դրանց զուտ ծավալի 220.6 մլն ԱՄՆ դոլարի աճով, որի ազդեցությունը ԱՄՆ դոլարով ստացված վարկերի մասնաբաժնում կազմել է 5.0 տոկոսային կետ, և ՀՀ կառավարության վարկերի արժութային զամբյուղում ներկայացված արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի արժևորմամբ: Նույն չափով փոփոխվել են մնացած արժույթների մասնաբաժինները, որտեղ SDR-ով, ճապոնական իենով և եվրոյով ստացված վարկերի մասնաբաժինները նվազել են համապատասխանաբար 5.0, 1.2 և 0.4 տոկոսային կետերով, իսկ այլ արժույթների մասնաբաժինը ավելացել է 0.7 տոկոսային կետով, որը նպաստել է ԱՄՆ դոլարով ստացված վարկերի մասնաբաժնի 0.9 տոկոսային կետով ավելացմանը [4]:

Գծապատկեր 3. Արտաքին աղբյուրներից ներգրավված վարկային միջոցների կառուցվածքը ըստ տոկոսադրույքի տեսակի [4]



Լողացող տոկոսադրույքով վարկերի դրույքաչափերը հաշվարկվում են հիմք ընդունելով Libor և Euribor տոկոսադրույքները: Վերջիններիս վրա իր ազդեցությունն է թողնում միջազգային ֆինանսական շուկայում առկա իրավիճակը: Այն խիստ տատանողական է, ինչն էլ հաճախ հանգեցնում է պարտքի առկա և ծրագրված ցուցանիշի տարբերությանը:

Ըստ ֆինանսների նախարարության հրապարակած տվյալների՝ 2015թ. վերջի դրությամբ ՀՀ կառավարության վարկերի ու փոխառությունների կառուցվածքում լողացող տոկոսադրույքով վարկերի մասնաբաժինը կազմել է 16.5%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 4. ՀՀ կառավարության պարտքի գծով տոկոսավճարները [4]

(մլրդ դրամ)	2014 փաստ	2015 ծրագիր	2015 ճշտված ծրագիր	2015 փաստ
Տոկոսավճարներ	**61.64**	**73.76**	**74.10**	**74.08**
		որից		
ներքին պարտքի գծով	33.05	35.20	32.19	32.1
արտաքին պարտքի գծով	28.59	38.56	41.91	41.90

Աղյուսակից պարզ է դառնում, որ 2015թ. ՀՀ կառավարության պարտքի գծով տոկոսավճարները աճել են 20.2%-ով և կազմել են 74.08 միլիարդ դրամ, ինչը արդյունք է պարտքի ծավալի աճի և կառավարության արտաքին պարտքի գործիքակազմի փոփոխությունների:

Գծապատկեր 6. Կառավարության պարտքի գծով մարումների գրաֆիկը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (մլրդ դրամ) [4]



Ինչպես երևում է գրաֆիկից, կառավարությունը նախատեսում է կատարել մեծ ծավալներով մարումներ արտաքին պարտքի գծով 2020թ. և 2025թ., ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2020թ. ավարտվում է 2013թ. թողարկված եվրապարտատոմսերի մարման

ժամկետը, իսկ 2025թ.՝ 2015թ. թողարկված եվրապարտատոմսերի մարման ժամկետը:

Առաջին հայացքից թվում է, թե պետական պարտքը բացասական երևույթ է և վտանգավոր է տնտեսության հետագա զարգացման համար, սակայն ռիսկերի ճիշտ գնահատումը և պետական պարտքի արդյունավետ կառավարումը կարող է հանգեցնել տնտեսության աճի և զարգացման:

Մեր պետության դեպքում պարտքը տարեցտարի ավելանում է, բայց տնտեսության մեջ էական տեղաշարժեր չեն գրանցվում: Մեր կարծիքով այն դեպքում, երբ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը գրեթե 50% է, անհրաժեշտ է առավել շատ ուշադրություն դարձնել այն ոլորտներին, որոնցից ստացված եկամուտը կհամալրի պետբյուջեն: Այն, որ ՀՀ պետական պարտքը բավականին դիվերսիֆիկացված է, ինչը արդյունք է նաև եվրապարտատոմսերի թողարկման, բավականին դրական երևույթ է, քանի որ դա հնարավորություն է ընձեռնում կախվածության մեջ չգտնվել պարտապան պետություններից: Եվրապարտատոմսեի թողարկման հիմք է հանդիսացել նաև այն, որ ՀՀ-ին արտոնյալ պայմաններով վարկեր այլևս չեն տրամադրվում:

ՀՀ պարտքի մեծ մասը վերցված է SDR-ով: Սա իհարկե դրական հանգամանք է, քանի որ այն համեմատաբար կայուն արժույթ է, սակայն պետք է նկատի ունենալ, որ մենք ունենք լողացող տոկոսադրույքով վերցված վարկեր, որը խիստ տատանողական է և պետական պարտքի կառավարումը բարդեցնում է:

Որպեսզի պետական պարտքը ծառայի իր նպատակին առավել արդյունավետ, կարծում ենք, անհրաժեշտ է վերահսկիչ համակարգը դարձնել լիարժեք անկախ մարմին, իսկ օրենսդրության մեջ կատարել այնպիսի փոփոխություն, որոնք նվազագույնի կհասցնեն պարտքի ոչ նպատակային օգտագործումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. http://www.parliament.am/legislation.php
2. http://hy.wikipedia.org/wiki/ՀՀ_պետական_պարտք
3. www.armstat.am/file/article/sv_02_15_221.pdf
4. http://minfine.am/website/images/files/8c806363.pdf

СТРУКТУРА И ДИНАМИКА РАЗВИТИЯ ВНЕШНЕГО ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА РА 2000-2015ГГ.

Ани Геворкян
ВГУ, Управления, 3-ий курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *государственный долг, бюджет, экономический рост, облигации, процентная ставка.*

В статье рассмотрена структура государственного долга, динамика роста в период 2000-2015гг. Мы попытались выявить причины экономических явлений, происходящих в положительных и отрицательных сторон и недостатков государственного долга. Мы представили свои предложения по их исправлению.

THE STRUCTURE OF EXTERNAL PUBLIC DEBT DYNAMICS AND DEVELOPMENT IN 2000-2015

Ani Gevorgyan
VSU, Management, 3th year

SUMMARY

Key words: *public debt, budget, economic growth, bonds, interest rate.*

The structure of the public debt and dynamics of development has been studied in the article for 2000-2015 period. We have tried to identify the causes of economic phenomena occurring in the positive and negative sides and flaws of public debt. We submitted our proposals for their correction.

ԴՈԼԱՐԻԶԱՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արփինե Մարտիրոսյան
ԿՊՀ, Կառավարում, 3-րդ կուրս
*Գիտ. ղեկավար՝ տ.գ.թ. **Հ. Պապոյան***

***Հանգուցային բառեր**՝ դոլարիզացիա, արտարժույթ, արտարժույթի շուկա, արտարժույթի փոխանակման կետեր, ավանդ, վարկ, ՀՆԱ, դրամավարկային քաղաքականություն:*

Ցանկացած տնտեսության համակարգում անկայուն մակրոմիջավայրն ու ազգային արժույթի նկատմամբ անվստահությունը կարող է հանգեցնել մի երևույթի, որը ենթադրում է ազգային արժույթի փոխարինում արտարժույթով (ամենից հաճախ ԱՄՆ դոլարով), ինչն էլ վերածվում է կարևորագույն հիմնախնդրի թե՛ պետական կառավարման ու դրամավարկային կառույցների և թե՛ տնտեսվարող սուբյեկտների համար: Այս երևույթը բնորոշ է հատկապես տնտեսության անցումային փուլում գտնվող մի շարք երկրներին և հայտնի է դոլարացում (դոլարիզացիա) անվանումով: Հայաստանի Հանրապետությունում դոլարիզացիայի արմատավորումը սկսվեց դեռևս 1993թ., երբ ներդրվեց ազգային արժույթը: Դեռևս անկախացման տարիներին, երբ ՀՀ Կենտրոնական բանկը կանգնեց «անհնարին երրորդություն» հիմնախնդրի առջև, որի համաձայն երկիրը կապիտալի ազատ հոսքից, գների և փոխարժեքի կայունությունից կարող է ապահովել միայն երկուսի համակցությունը, մեր երկրի պարագայում ընտրությունը հանգեց գնաճ-փոխարժեք երկընտրանքին [2, 100]: ՀՀ ԿԲ-ն որդեգրեց անկախ դրամավարկային քաղաքականությունը և դրամական ագրեգատների ծավալային կարգավորման ռազմավարությունը՝ գների կայունությունը ընդունելով որպես վերջնական նպատակ: Այս ամենն իր հերթին ենթադրում էր դրամի նկատմամբ վստահության մեծացում և երկրում դոլարացման մակարդակի նվազեցում: Չնայած Կենտրոնական բանկի որդեգրած ռազմավարությանը, երևույթի առկայությունը ներկայումս էլ համարվում է լուրջ հիմնախնդիր՝ որպես դրամի նկատմամբ վստահության թուլացման արդյունքում շուկայում գոյություն ունեցող կանխիկ ու թվային արտարժույթի նկատմամբ սուր պահանջի հետևանք: Դոլարիզացիայի հիմնական պատճառները թերևս բարձր գնաճային միջավայրն է տնտեսության ազատականացման ժամանակ, ֆինանսական շուկաների անկատարությունն ու անվստահությունը դրամավարկային մարմինների նկատմամբ: Այն համարվում է

տևական երևույթ, որն առնչվում է բոլոր տնտեսվարող սուբյեկտներին, այդ թվում հասարակ սպառողներին, և որից դժվար է ձերբազատվել անգամ մակրոմիջավայրի կայունացման ու գնաճի ցածր տեմպի պարագայում: Դոլարիզացիայի հետազոտության արդիականությունը կայանում է նրանում, որ առաջին հերթին այն առաջացնում է հակասական պատկեր թե՛ դրամավարկային քաղաքականության և թե՛ տնտեսության վրա ամբողջությամբ, հետևաբար որպես տնտեսության համար դեռևս ամբողջությամբ չբացահայտված խնդիր, երևույթի ուսումնասիրությունը ձեռք է բերում արդիական բնույթ, և պահանջում նորովի մոտեցում ու համակողմանի վերլուծություն՝ պայմանավորված ժամանակի տարաբնույթ տնտեսական մարտահրավերներով: Ելնելով հիմնախնդրի կարևորությունից՝ անհրաժեշտություն է առաջանում նախ և առաջ անդրադառնալ դոլարացման հասկացության վերլուծությանը, բացահայտել ՀՀ տնտեսության համակարգում երևույթի դրսևորման առանձնահատկությունները, հասկանալ, թե տնտեսության որ հատվածում է այն առավել խորացած և դրանով իսկ բացահայտել, թե որոնք են արտարժույթ օգտագործելու դրդապատճառները, ինչպես նաև արձանագրել տարբեր ժամանակահատվածներում դոլարացման ցուցանիշների դինամիկան և դրանց հետևանքները:

Դոլարացումը երկրի ներսում ազգային արժույթից պահանջվող տարբեր ֆինանսական գործառնությունների կատարումն է օտարերկրյա արժույթով (ամենից հաճախ ԱՄՆ դոլարով): Երևույթի սկիզբը կարելի է համարել դեռևս 1944թ., երբ Բրետոն-Վուդսյան համակարգը, ելնելով ԱՄՆ-ի համեմատաբար կայուն վիճակից և կուտակված ոսկու մեծ պաշարներից, ԱՄՆ դոլարը ճանաչեց որպես հիմնական ու պահուստային արժույթ: Առավել ամբողջականորեն պատկերացնելու համար, թե ինչ է այն իրենից ներկայացնում, նշենք դոլարիզացիային հանգեցնող հետևյալ դեպքերը՝ [3, 150-156]

1. **Արտարժույթով կանխիկ արժույթի փոխարինման մակարդակ** (իրական հատվածի դոլարացում) – ցույց է տալիս արտարժույթի չափը ընդհանուր կանխիկ փողի մեջ: Այս դեպքում արտարժույթը կատարում է շրջանառության և վճարման միջոցի գործառույթ: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S_{currency} = C_f / C = C_f /(C_n + C_f) \quad (1)$$

որտեղ՝ $S_{currency}$ – արտարժույթի փոխարինման մակարդակն է,

C_n – կանխիկ ազգային արժույթն է,

C_f – շրջանառության մեջ կանխիկ արտարժույթն է,

C – շրջանառության մեջ կանխիկ փողի հանրագումարն է:

Իրականում շրջանառության մեջ կանխիկ արտարժույթի չափելիու-

թյունն առաջ է բերում մի շարք դժվարություններ, որի արդյունքում իրական դոլարիզացիայի վերաբերյալ հստակ տեղեկատվության ձեռքբերումը դառնում է անհնարին: Այնուամենայնիվ 2004թ. ՀՀ Կենտրոնական բանկի վիճակագրական վարչության կողմից իրականացված հետազոտության համաձայն, բնակչության կանխիկ գումարի 84%-ը եղել է արտարժույթով՝ կազմելով 913,5 մլն դոլարին համարժեք արտարժույթ: Իսկ 2003թ. այն կազմել է 571,9 մլն դոլար, և դրամական զանգվածում արտարժույթով արտահայտված ավանդներն ու կանխիկ փողը կազմել են 80%՝ [4]: 2004 թ. հետազոտությունն իրականացվել է 900 տնային տնտեսությունների շրջանակներում, որոնք ըստ ապահովվածության բաժանվել են 4 խմբի՝ շատ աղքատներ, աղքատներ, միջին խավ և ապահովված խավ: Համաձայն արդյունքների 2340 անձանց 57%-ը նախընտրում է խնայողությունները պահել դոլարով և միայն 35%-ը դրամով [5]: Կարելի է եզրակացնել, որ կանխիկ արտարժույթի վերաբերյալ հարցումները դոլարիզացիայի մակարդակը գնահատելու այլընտրանքային տարբերակ են, որը, եթե ոչ ամբողջությամբ, ապա մասամբ նկարագրում է տնտեսության իրական դոլարացման մակադակը:

Այսպիսով իրական հատվածի դոլարացումը, որը ենթադրում է կանխիկ ազգային արժույթի փոխարինում արտարժույթով, սերտորեն կապված է ֆինանսական դոլարացման հետ՝ դառնալով նրա առաջացման գլխավոր պատճառը, քանի որ շրջանառության մեջ արտարժույթի գերադասումը ենթադրում է նաև ֆինանսական ակտիվների մեջ արտարժույթի նախապատվություն և ազգային արժույթի նկատմամբ վստահության նվազում: Գնահատել իրական դոլարիզացիայի մակարդակը տնտեսության մեջ իրականում գրեթե անհնար է, սակայն անհրաժեշտ է ընդունել, որ այն առաջացնում է բազմաթիվ խնդիրներ: Արտարժութային գործարքների միջոցով հեշտանում է հարկերի շրջանցումը, ազգային արժույթի նկատմամբ պահանջարկը դառնում է անկայուն և ի վերջո հաշվի առնելով, որ մի շարք երկներում գոյություն ունեն արտարժույթի կիրառման օրենսդրական սահմանափակումներ, պարզ է դառնում, որ շրջանառության մեջ կանխիկ արտարժույթի մեծ տեսակարար կշիռը վկայում է տնտեսության ստվերայնացման, ինչպես նաև մարդկանց՝ արտարժույթով կանխիկ խնայողությունների մասին:

2. **Արտարժույթով ֆինանսական ակտիվների փոխարինման մակարդակ** (ֆինանսական ակտիվների դոլարացում) – երկրի ռեզիդենտները ֆինանսական ակտիվները պահում են օտարերկրյա արժույթով, այսինքն արտարժույթը կատարում է կուտակման միջոցի գործառույթ: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S_{deposit} = D_f / D = D_f/(D_n+D_f) \qquad (2)$$

որտեղ՝ $S_{deposit}$ – ակտիվների փոխարինման մակարդակն է,
D_n – ավանդներն է ազգային արժույթով,

D_f – ավանդներն է արտարժույթով,

D – ընդհանուր ավանդների հանրագումարն է:

Եթե արտարժույթի նախապատվությունը դիտարկենք ոչ միայն ռեզիդենտների ֆինանսական ակտիվների, այլ նաև ֆինանսական պարտավորությունների տեսանկյունից (վարկերի), ապա կստանանք երկրում ընդհանուր ֆինանսական դոլարիզացիայի մակարդակը:

ՀՀ-ում ֆինանսական դոլարացումը սկսեց 1996-1999թթ., երբ վերականգնվեց վստահությունը բանկային համակարգի նկատմամբ՝ ընգրկելով 2002թ., իսկ այնուհետև բարձր տնտեսական աճի և ցածր կայուն գնաճի պայմաններում դրսևորվեց նվազման միտում: Այն մյուս կողմից պայմանավորված էր նաև «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով:

Ներկայումս ՀՀ-ում ֆիանանսական դոլարիզացիայի մակարդակը գնահատելու համար որոշենք երկրում ընդհանուր ավանդների ու տրամադրված վարկերի մեջ արտաժույթով ավանդների ու վարկերի տեսակարար կշիռը և արտարժութային ավանդների ու փողի զանգվածի հարաբերությունը: Այս նպատակով առանձնացնում են հետևյալ ցուցանիշները՝

D1 – ռեզիդենտների արտարժութային ավանդների և փողի զանգվածի հարաբերակցությունն է,

D2 – ռեզիդենտների արտարժութային ավանդների և ռեզիդենտների ընդհանուր ավանդների հարաբերակցությունն է,

D3 – ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով ցպահանջ ավանդների կշիռն է ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ ավանդներում,

D4 – ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով ժամկետային ավանդների կշիռն է ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ժամկետային ավանդներում,

D5 – ռեզիդենտ իրական հատվածին արտարժույթով տրամադրված վարկերի և ռեզիդենտ իրական հատվածին տրամադրված ընդհանուր վարկերի հարաբերակցությունն է:

Համեմատական վերլուծության համար ցուցանիշները դիտարկենք 2007-2016թթ. համար: 2016թ. համար դիտարկվել են առաջին հինգ ամիսները [1]:

Աղյուսակ 1
Ֆինանսական դոլարիզացիայի հաշվարկման ցուցանիշները

	D1	D2	D3	D4	D5
2007	24,7%	44,3%	52,7%	61,8%	42,9%
2008	20,6%	37,5%	43,4%	49,3%	38,3%
2009	42,1%	64,6%	54,4%	79,0%	48,9%
2010	45,9%	68,2%	60,7%	81,4%	54,0%
2011	43,9%	63,6%	57,8%	77,6%	58,9%
2012	44,4%	62,2%	54,6%	74,2%	63,3%
2013	46,7%	62,4%	51,8%	72,4%	63,2%
2014	47,1%	60,3%	47,9%	70,8%	62,8%
2015	52,0%	63,8%	54,2%	74,5%	66,3%
2016	52,5%	62,8%	54,8%	74,7%	66,6%

Քանի որ ՀՀ-ում դոլարիզացիայի մակարդակը գնահատելու համար հիմնականում դիտարկվում է D1 ցուցանիշը, ուստի ուսումնասիրենք նրա փոփոխման հիմնական պատճառները:

Աղյուսակից պարզ է դառնում, որ D1 ցուցանիշը, ինչպես նաև մնացած ցուցանիշները, 2008թ. արձանագրել են նվազման միտում: Այն հիմնականում կապված էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքների հետ: Այդ ընթացքում փոքր-ինչ նվազել են մասնավոր տրանսֆերտների, գործոնային եկամուտների և արտաքին ներդրումների ածի տեմպերը, իսկ արդեն վերջին եռամսյակում տնտեսության զարգացումների վերաբերյալ ձևավորված անորոշությունն առաջացրել է դրամի արժեզրկման սպասումներ, որը շարունակվել է 2009թ.: Կապիտալի և ֆինանսական միջոցների ներհոսքի դանդաղեցման պարագայում ստեղծվել է լարվածություն արժութային շուկայում: Ճգնաժամի արդյունքում արտահանման, մասնավոր տրանսֆերտների, գործոնային եկամուտների և արտաքին ներդրումների նվազման պատճառով արտարժույթի առաջարկն էապես կրճատվել է: Ստեղծված իրավիճակում ՀՀ Կենտրոնական բանկը ցուցաբերել է ակտիվ միջամտություն արժութային շուկայում, ապա հաշվի առնելով այն, որ ՀՀ բանկային համակարգը զգալի ավելացրել էր սեփական կապիտալը, միջոցներ էր ձեռնարկել ակտիվների և պարտավորությունների արժութային կազմի վերադասավորման ուղղությամբ՝ Կենտրոնական բանկը դադարեցրել է արտարժույթի վաճառքը համաձայն 2009թ. մարտին ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից կայացրած որոշման:

Այսպիսով 2009թ. սկսած ռեզիդենտների արտարժութային ավանդները ընդհանուր փողի զանգվածում ցուցաբերել են աճման միտում, որի պատճառ է հանդիսացել դոլարի նկատմամբ դրամի արժեզրկումը շուրջ

18,8%-ով, քանի որ այն իր հերթին ենթադրում է նաև բանկերում ներդրված դրամական միջոցների գնողունակության անկում: Փոքր-ինչ նվազելով 2011թ., ինչը կարելի է կապել այն հանգամանքի հետ, որ բանկային համակարգում դոլարացման մակարդակի իջեցման նպատակով Կենտրոնական բանկը նշված տարվա փետրվարին սահմանել էր առևտրային բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափի նոր՝ ավելի բարձր նորմատիվներ՝ D1 ցուցանիշը շարունակում է աճել մինչ այժմ [4]: Ընդհանուր ավանդների մեջ արտարժութային ավանդների տեսակարար կշիռը ամենաբարձր արդյունքն արձանագրել է 2010թ., որից հետո ցուցաբերել նվազման միտում որպես ԿԲ-ի և կառավարության կողմից իրականացվող ապադոլարացման միջոցառումների արդյունք: Նույնը կարելի է ասել նաև ռեզիդենտ ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդների մեջ արտարժույթով ցպահանջ ավանդների մասնաբաժնի և փոփոխման դինամիկայի մասին: Դոլարացման ամենաբարձր մակարդակը շարունակում է պահապանվել ռեզիդենտ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներում, չնայած այն հանգամանքին, որ 2015թ. ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները շարունակել են ցուցաբերել աճման միտում, մինչդեռ ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքները նվազել են:

Գրաֆիկ 1
Ֆինանսական դոլարիզացիայի հաշվարկման ցուցանիշների գրաֆիկական պատկերը



Իսկ արդեն 2015թ. նոյեմբերից «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում տեղ գտան փոփոխություններ, համաձայն որի դրամով և արտարժույթով ավանդների դեպքում երաշխավորված ավանդի չափը կազմում է համապատասխանաբար տասը և հինգ միլիոն դրամ:

Ինչ վերաբերում է արտարժույթով տրամադրված վարկերի աճին ընդհանուր վարկերի ծավալի մեջ, ապա դրա գլխավոր պատճառ կարելի է համարել բանկերի վարկային պորտֆելում աստիճանաբար մեծացող արտարժութային վարկերի տեսակարար կշիռը: Սակայն սխալ կլինի այս առումով մեղադրել բանկերին, քանի որ բանկերն էլ իրենց վարկային միջոցները ներգրավում են հիմնականում արտաքին աղբյուրներից և արտարժույթով: Այնուամենայնիվ այս ցուցանիշները դոլարիզացիայի վերաբերյալ միանշանակ պատկեր չեն տալիս, քանի որ չեն ընդգրկում բնակչության մոտ առկա կանխիկ արտարժույթը, որի քանակությունն ավելի մեծ է, և ըստ ԿԲ-ի նախկին նախագահ Բ. Ասատրյանի՝ իրական դոլարացումն ավելի բարձր է, քանի որ ընդգրկում է նաև ստվերը, իսկ ստվերը 80%-ով դոլարային է [4]:

3. **Դոլարացման ընդհանուր մակարդակ** – ցույց է տալիս ազգային արժույթից պահանջվող բոլոր գործառույթների մեջ արտարժույթով իրականացված գործառույթների ընդհանուր մակարդակը: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով `

$$Stotal = (Cf + Df) / (C + D) = Df / (Dn + Df) \qquad (3)$$

որտեղ՝ $S_{deposit}$ – դոլարիզացիայի ընդհանուր մակարդակն է:

Իրականում տնտեսության մեջ դոլարիզացիան կարող է դրսևորվել տարբեր հատվածներում ու ոլորտներում: Այդ առումով տարբերակում են դոլարիզացիայի դրսևորման հետևյալ հնարավոր տարբերակները [3, 157-168].

- Գների դոլարիզացիա, որի դեպքում արտարժույթը կատարում է արժեչափի գործառույթ, այսինքն գներն ու աշխատավարձը սահմանվում են արտարժույթով: Բայց, քանի որ մի շարք երկրներում, այդ թվում Հայաստանում, գոյություն ունեն արտարժույթի կիրառման օրենսդրական սահմանափակումներ, ուստի հաշվարկման տեսանկյունից այն բավականին բարդ է և համարվում է չբացահայտված դոլարիզացիա:
- Վճարումների դոլարիզացիա, որի դեպքում արտարժույթը կատարում է շրջանառության և վճարման միջոցի գործառույթ, այսինքն ցույց է տալիս շրջանառության մեջ կանխիկ արտարժույթի չափը:
- Տնտեսության իրական հատվածի խնայողությունների դոլարիզացիա, որի դեպքում արտարժույթն իրականացնում է կուտակման գործառույթ: Այս դեպքում պետք է հաշվի առնել ոչ միայն արտարժույթով ա-

վանդները, այլև կանխիկ արտարժույթով մարդկանց խնայողությունները:

- Տնտեսության իրական հատվածի ակտիվների դոլարիզացիա, որի դեպքում արտարժույթը կատարում է ազգային արժույթից պահանջվող գործառույթները, բացի արժեչափից, և որը գնահատելու համար անհրաժեշտ է բացահայտել արտարժույթով դրամական ակտիվների մասնաբաժինը ընդհանուր դրամական ակտիվներում:
- Բանկային համակարգի դրամական ակտիվների դոլարիզացիա, որը ենթադրում է բանկերի կողմից տրամադրված վարկերի մեջ արտարժույթով վարկերի տեսակարար կշիռը:

Հաշվի առնելով կանխիկ փողի մեջ դոլարի չափման դժվարությունները և այն հանգամանքը, որ միայն ֆինանսական դոլարիզացիայի մակարդակը հստակ չի նկարագրում տնտեսության դոլարացման մակարդակը, ներկայացնենք դոլարիզացիայի հաշվարկման նոր, այլընտրանքային տարբերակ:

$$ДОЛ._{ան.ց} = \frac{МԲ_{\$} + Բ_{\$} + ՆԲ_{\$} + АФЧ_{\$}}{ՀՆԱ} \qquad (4)$$

Որտեղ՝ ԴՈԼ.$_{ան.ց}$ – դոլարիզացիայի անուղղակի ցուցանիշն է,

МԲ$_{\$}$ – միջբանկային շուկայում գնված ԱՄՆ դոլարի ծավալն է,

Բ$_{\$}$ – բորսայում գնված ԱՄՆ դոլարի ծավալն է,

ՆԲ$_{\$}$ – ներբանկային շուկայում գնված ԱՄՆ դոլարի ծավալն է,

АФЧ$_{\$}$ – արտարժույթի փոխանակման կետերի կողմից ԱՄՆ դոլարով իրականացված գործառնությունների ծավալն է [1]:

Գրաֆիկ 2

Դոլարիզացիայի հաշվարկման անուղղակի ցուցանիշ



Այսպիսով, տարվա կտրվածքով արտարժույթի փոխանակման կետերի կողմից դոլարով իրականացված գործառնությունների ծավալին գումարելով արժութային շուկայում գնված դոլարի ծավալը և ստացված թիվը հարաբերելով դոլարային արտահայտությամբ տարեկան ՀՆԱ-ի վրա՝ [6] ստանում ենք դոլարիզացիայի հաշվարկման անուղղակի ցուցանիշ, որը ցույց է տալիս շրջանառվող դոլարի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, և կախված տարիների ընթացքում նրա դինամիկայի կառուցվածքից՝ կարելի է կատարել հետևություն դոլարային զանգվածի փոփոխման վերաբերյալ:

Որպես ուսումնասիրման ժամանակահատված դիտարկենք 2007-2016թթ. (2016թ. համար դիտարվել է առաջին եռամսյակը): Ամենացածր ցուցանիշն արձանագրվել է 2008թ. համաշխարհային ֆիանանսական ճգնաժամի արդյունքում արտահանվող ապրանքների գնանկման, արտաքին ֆինանսական միջոցների ներհոսքի դանդաղեցման և երկրում ստեղծված ֆիանանսական անորոշության պայմաններում: 2008թ. դոլարիզացիայի անուղղակի ցուցանիշը եղել է համեմատաբար ցածր, քանի որ նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի աճման տեմպը գերազանցել է արտարժույթի շուկայում և արտարժույթի փոխանակման կետերում ԱՄՆ դոլարով գործառնությունների ծավալի աճման տեմպերին: Ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունը ցայտուն կերպով արտահայտվեց 2009թ.: Ցուցանիշի աճը պայմանավորված էր միաժամանակ վերը նշված երկու ցուցանիշների նվազման հետ, իսկ դա տնտեսական աճի, բնակչության եկամուտների աճի, արտաքին հաշվեկշռի վատթարացման հետևանքն էր: Արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի անկումը և գնային ոչ բարենպաստ իրադրությունը խորացրել էր արտաքին հաշվեկշռի պակասուրդը: 2010թ. Հայաստանում սկսվեց տնտեսական ակտիվության վերականգնումը, որի արդյունքում արձանագրվեց 2,1% տնտեսական աճ, գրանցվեց արտաքին առևտրի և մասնավոր տրանսֆերտների աճի վերականգնում: Չնայած դրան գրեթե տեղաշարժ չնկատվեցին արտարժույթի շուկայում և փոխանակման կետերում ԱՄՆ դոլարով գործառնությունների ծավալի մեջ: Նույնը վերաբերում է նաև 2012թ., ինչի արդյունքում նկատվում է դոլարիզացիայի անուղղակի ցուցանիշի նվազում: Վերջինս, կայուն արդյունք ցուցաբերելով մինչ 2014թ., արձանագրեց նվազման միտում 2015թ.: ՀՀ տնտեսության վատթարացումը, որն արդեն նկատելի էր 2014թ. վերջում, առավել ընդգծված բնույթ կրեց 2015թ.: Նվազեց և՛ ՀՆԱ-ն, և՛ արտարժույթի շուկայում ու փոխանակման կետերում ԱՄՆ դոլարով գործառնությունների ծավալը: ՌԴ-ի և ԵՏՄ անդամ երկրների հետ նվազեց ՀՀ արտաքին առևտրի ծավալները, աշխատանքային միգրանտների քանակը,

նրանց կողմից դեպի ՀՀ ուղարկվող տրանսֆերտները և տեղի ունեցավ ազգային արժույթի կտրուկ արժեզրկում ԱՄՆ դոլարի նկատմամբ: Քանի որ 2016թ. համար դիտարկվել է առաջին կիսամյակը, ուստի այն համեմատելով 2015թ. առաջին կիսամյակի հետ՝ տեսնում ենք, որ ցուցանիշն արձանագրել է նվազման միտում:

Ելնելով ցուցանիշի ուսումնասիրությունից՝ գալիս ենք այն եզրահանգման, որ այն ևս մեկ միջոց է տարբեր տարիների ընթացքում դոլարի շրջանառության ծավալների համեմատական վերլուծության համար: Դիտարկելով արտարժույթի շուկայում և արտարժույթի փոխանակման կետերում դոլարով գործառնությունների ծավալը՝ մեր հաշվարկներում, թերևս, բացակայում են կանխիկ դոլարի շրջանառության ծավալը: Այնուամենայնիվ ցուցանիշի հաշվարկման հիմնական նպատակը ստանալ դինամիկա տարբեր տարիների համար և այն համեմատելով ֆինանսական դոլարիզացիան նկարագրող ցուցանիշների հետ՝ մենք կարող ենք գնահատել նրանց փոփոխման համաչափության աստիճանը:

Այսպիսով կատարված ուսումնասիրությունների արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ դոլարիզացիան՝ որպես ֆինանսական համակարգի կայունությանը սպառնող երևույթ, զգալիորեն դրսևորվում է նաև ՀՀ տնտեսության պայմաններում: Իսկ որպես դոլարիզացիայի առաջացման նախապայման հանդիսացել է դրամի նկատմամբ ցածր վստահությունը, որը նկատելի է նաև ներկայումս: Դրամն այդքան էլ վստահելի չէ կուտակելու, բանկերում ավանդ դնելու, վարկավորման համար, ուստի թե՛ բանկերը, թե՛ հանրությունը տվյալ դեպքերում նախապատվությունը տալիս են ԱՄՆ դոլարին: Հետևաբար ելնելով տնտեսության մեջ դոլարիզացիայի չափելիության առաջնահերթությունից՝ մեր հետազոտության մեջ ուսումնասիրել ենք ավանդների և վարկերի դոլարացումը, ինչպես նաև առաջ քաշել դոլարիզացիայի հաշվարկման անուղղակի ցուցանիշ: Վերջինիս հաշվարկման արդյունավետությունը գնահատելու համար այն համեմատենք ֆինանսական դոլարիզացիան նկարագրող հինգ ցուցանիշների հետ:

Գրաֆիկից պարզ է դառնում, որ դոլարիզացիայի անուղղակի ցուցանիշի դինամիկան գրեթե համընկնում է ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ ավանդներում արտարժույթով ցպահանջ ավանդների, ընդհանուր վարկերի մեջ արտարժույթով վարկերի մասնաբաժինների փոփոխությանը տարբեր տարիների ընթացքում, և աճման ու նվազման տեմպերը գրեթե համապատասխանում են մնացած ցուցանիշների փոփոխման հետ:

Գրաֆիկ 3
Դոլարիզացիայի հաշվարկման հնարավոր տարբերակների գրաֆիկական պատկերը



Ի վերջո դոլարիզացիայի տևական բնույթը պայմանավորված է նրանով, որ դրամի նկատմամբ անվստահությունը առաջացնում է արտարժույթի նկատմաբ մեծ պահանջարկ, որն իր հերթին հանգեցնում է դրամի էլ ավելի արժեզրկման, ինչը կրկին խթանում է արտարժույթի նկատմամբ պահանջարկի ավելացմանը և այսպես շարունակ: Այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետությունում շարունակվում է ապադոլարիզացիայի քաղաքականությունը: Այս առումով հարկ է նշել մի շարք գործոններ, ինչպիսիք են օրինակ դրամով ավանդների տոկոսադրույքների բարձր լինելը արտարժույթով ավանդների համեմատ, արտարժույթով ծառայությունների մատուցման, աշխատանքի կատարման, պայմանագրերի կնքման, ապրանքների առք ու վաճառքի իրականացման դեպքում գանձվող տուգանքների փոփոխման չափը, որը առաջին խախտման դեպքում կազմում էր նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը, իսկ երկրորդ խախտման դեպքում՝ 200-ապատիկը, իսկ 2009թ. հետո համապատասխանաբար 2000-ապատիկը և 4000-ապատիկը [4]: Սակայն հարկ է նշել, որ ՀՀ-ում դոլարացման կրճատմանն ուղղված բարոյահոգեբանական ազդեցությունը ավելի արդյունավետ է, քան վարչական միջոցառումները, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ միայն տնտեսական քաղաքականության նկատմամբ ունեցած բարձր վստահության պայմաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԿԲ տեղեկագիր 2007-2016թթ.:
2. Սարգսյան Տ., Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ, Եր., 2008 թ.:
3. Акиф Оглы Г. Д., Долларизация как феномен международных валютно-финансовых отношений, Москва, 2015 г.
4. www.168.am
5. www.armworld.am/detail.php
6. www.armstat.am/am

ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ДОЛЛАРИЗАЦИИ И ТЕМПЫ ИЗМЕНЕНИЙ В ЭКОНОМИЧЕСКОЙ СИСТЕМЕ РА

Арпине Мартиросян

ВГУ, Управление, 3-ий курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *долларизация, иностранная валюта, депозит, кредит, ВВП, наличные деньги, денежно-кредитная политика, валютный рынок, пункты обмена валют*

Долларизация является серьезной проблемой для денежно-кредитной политики страны, поэтому в данной статье мы попытались оценить основные причины существования этого явления, уровень доверия к национальной валюте экономической системы Армении. С этой целью мы рассмотрели долю долларовых депозитов и кредитов в общий объем депозитов и кредитов, пытаясь оценить уровень финансовой долларизации, а также предлагали косвенный показатель долларизации, который показывает отношение циркулирующего доллара и ВВП.

THE SPECIFICITIES AND CHANGE DYNAMICS OF DOLLARIZATION IN THE ARMENIAN ECONOMY

Arpine Martirosyan

VSU, Management, 3th year

SUMMERY

Key words: *dollarization, foreign currency, deposit, loan, GDP, cash money, monetary policy, foreign exchange market, exchanges points*.

Dollarization is a serious problem for state's monetary policy,therefore in this article we have tried to identify the main reasons behind its existence and the level of confidence towards the national currency in the Armenian economy. We have calculated the weight of dollar deposits and loans in the overall deposits and loans in Armenia to help us evaluate the level of financial dollarization. We have also introduced an indirect indicator of dollarization that shows the correlation between the amount of dollar circulating in the economy and GDP.

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ

Նինա Բալայան
ԱրՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ,
տնտեսագիտության տեսություն 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տնտեսագիտական գիտությունների թեկնածու,
դոցենտ ***Կարեն Ներսիսյան***

Հանգուցային բառեր. *վերլուծական կենտրոններ, գիտություն, ինտելեկտուալ հենք, փորձագիտական հանրություն, գիտակրթական համակարգ, կիրառական հետազոտություններ*

Վերջին տասնամյակներում համացանցի, ինչպես նաև տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և փոխանցման տեխնոլոգիաների թռիչքաձև զարգացումը թույլ է տալիս իրականացնել տնտեսական, քաղաքական, սոցիոլոգիական ոլորտի հետազոտություններ՝ միաժամանակ օգտագործելով առկա բաց աղբյուրների տվյալների բազաները և հայրենական ու արտերկրի փորձագետների կարողությունները: Ուստի գլոբալ տնտեսական զարգացումների արդի դարաշրջանի քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային մարտահրավերների համատեքստում կարևորվում է հետազոտական, վերլուծական, հատկապես հասարակական և տնտեսական կենտրոնների դերակատարությունը, որոնք ընդունակ են ակնթարթորեն արձագանքել տեղի ունեցող փոփոխություններին, արագ հարմարվել նոր մարտահրավերներին և յուրացնել անընդհատ փոփոխվող «խաղի կանոնները»: Ուղեղային կենտրոնները պետության մեջ որոշումների ընդունման համակարգում ինքնատիպ հանգուցային կետեր են, որոնք, բացի յուրօրինակ նոր գաղափարների արտադրման հանրահռչակ գործառույթից, նպաստում են նաև ապագա և նախկին փորձագետների մասնագիտական աճին ու ներգրավվածությանը, առաջարկում են ինտելեկտուալ հարթակներ բանավեճերի և տարբեր մակարդակի քննարկումների համար, բարձրացնում քաղաքացիների իրազեկվածության աստիճանը, նպաստում կարևոր հարցերի շուրջ ոչ պաշտոնական խորհրդատվությունների տրամադրմանը: Այսինքն, այս կենտրոնների գլխավոր գործառույթը ոչ թե ավանդական հիմնարար ու կիրառական հետազոտությունների անցկացումն է, այլ կապի հաստատումը, մի կողմից, գիտության ու հասարակության, իսկ մյուս կողմից՝ գիտության ու տեխնիկայի միջև: Զբաղվելով ոչ այնքան նոր գիտելիքների ստեղծմամբ, որքան տարածմամբ և ուղղված լինելով

գիտական մեթոդաբանության, մասնավորապես, գործողությունների հետազոտության մշակմանը, նրանց գործունեությունը չի սահմանափակվում գիտական թեմատիկայով, քանի որ անխուսափելիորեն կրում է միջգիտակարգային բնույթ:

Ըստ հետազոտվող թեմաների ընդգրկման՝ ուղեղային կենտրոնները լինում են գլոբալ, ներպետական և նեղ մասնագիտացված ու կատարում են հետևյալ գործառույթները.

1. Ինտելեկտուալ արտադրանքի մշակում. նոր գաղափարներ, գնահատականներ, մոտեցումներ, հայացքներ, առաջնահերթություններ՝ այն ամենը, ինչը կարող է հանգեցնել ոչ միայն օպտիմալ որոշումների ու գործողությունների, այլև նոր աշխարհայացքի:

2. «Պրոֆեսիոնալ թրեյնինգի» գործառույթ. Ըստ որի ապագա մասնագետները կայանում են փորձագիտական միջավայրում:

3. Լուսավորչական գործառույթ՝ իրազեկելով քաղաքացիներին, հանրության ուշադրությունը հրավիրելով այս կամ այն խնդրի վրա:

Ընդհանուր առմամբ առանձնացվում են ուղեղային կենտրոնների հետևյալ երեք գործառույթները՝ հետազոտական, կրթական և հաղորդակցային/միջնորդական: Վերջինիս դեպքում վերլուծական կենտրոնները հանդես են գալիս որպես միջնորդ.

- կառավարության և փորձագիտական հանրության միջև (հասարակական լսումներ, հասարակական փորձաքննության կազմակերպում),

- փորձագիտական հանրության, գիտության և բիզնեսի միջև (հանդիպումների կազմակերպում, հիմնախնդիրների քննարկում և նոր մոտեցումների, ծրագրերի մշակում):

Հիրավի, 21-րդ դարում ՎԿ-ների ոլորտն իրավամբ համարվում է ազգային անվտանգության համակարգի կարևոր բաղադրիչներից մեկը, որոնք ապահովում են հանրային քաղաքականության հարցերի անհրաժեշտ ինտելեկտուալ հենքն ու խորը դիտարկումը [2, 125]: Վերջին տասնամյակները նշանավորվեցին ողջ աշխարհում ՎԿ-ների թվաքանակի շարունակական աճով: Կարևոր է նշել, որ շատ երկրներում նման վերլուծական կառույցների ստեղծումը և զարգացումը սկզբնական փուլում խթանում էր պետությունն ինքը, ինչը պայմանավորված էր արտաքին քաղաքական, ռազմաստրատեգիական և հասարակության սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրների լուծման գործում մտավոր ներուժի կենտրոնացման անհրաժեշտությամբ: Հատկանշական է, որ տարբեր երկրներում նման ինստիտուտների ձևավորման գործընթացը դրսևորվում է տարբեր կերպ. մասնավորապես, ԱՄՆ-ում, որն ընդունված է հա-

մարել արդի ՎԿ-ների հայրենիքը, ինչպես նաև Արևմուտքի այլ երկրներում, նման ինստիտուտներն օբյեկտիվ պատճառներով ստեղծվել են շատ ավելի վաղ, քան հետխորհրդային տարածքի երկրներում և, առանձնապես, ԵԱՏՄ պետություններում: Հենվելով Փենսիլվանիայի համալսարանի «Ուղեղային կենտրոնները և քաղաքացիական հասարակությունը» ծրագրի շրջանակում իրականացվող ամենամյա գլոբալ վարկանիշի վրա՝ ԵԱՏՄ անդամ երկրների փորձագիտա-վերլուծաբանական կառույցների փոխգործակցությունը գնահատվում է թույլ, փորձագետների միջև երկկողմանի և բազմակողմանի կապերն ու շփումները՝ անկայուն: Եվ, չնայած ԵԱՏՄ երկրների առջև ծառացած մարտահրավերների և խնդիրների նմանությանը, այս համատեքստում ծագում է ոլորտում փոխգործակցության գործընթացի խթանման և աշխուժացման կարևորության հարցը, քանի որ փորձագիտական հանրույթի ջանքերի միատեղումը և ԵԱՏՄ երկրների վերլուծական կենտրոնների մտավոր ներուժի սիներգիան կարող են օգնել ընդհանուր մարտահրավերներին ավելի համարժեք և արդյունավետ պատասխաններ մշակելուն: Որպես երկարաժամկետ և համակարգային համագործակցության խթանիչ քայլ ցանկալի է կազմակերպել ԵԱՏՄ երկրների վերլուծական կենտրոնների գլոբալ համաժողով, որտեղ կհաստատվեին մասնագիտական կապեր և կնշվեին հետագա գործընկերության ուղիները:

Այսօր ուղեղային կենտրոնները հանրությանը տրամադրում են գաղափարների մի ամբողջ աշխարհ, և ժամանակակից գլոբալացման գործընթացներում դրանց դերակատարման մեծացումը պայմանավորված է ներկայիս ինֆորմացիոն դարաշրջանով և ինֆորմացիոն հասարակության ձևավորմամբ [1, 98]: Այնուամենայնիվ, չնայած այդ կենտրոնների կարևոր դերակատարությանը՝ նրանց աշխատանքը քիչ է ծանոթ լայն հասարակայնությանը և հատկապես ԼՂՀ-ում հասարակագիտական ոլորտի այս կարևոր դերակատարությունը դեռևս հստակորեն ու լիովին գիտակցված չէ. բնագավառի անհրաժեշտությունը գրեթե չի արժևորվում: ԼՂՀ-ում նման կենտրոնների ձևավորման հրատապությունը պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն համալսարանական տեսական բնույթի հետազոտությունների՝ հաճախ չկապված իրական քաղաքականության հետ, ուղեղային կենտրոնների փորձագիտական աշխատանքն ուղղակիորեն կապված է տնտեսական ու քաղաքական արդի հարցերի հետ: Հարկ է ընդգծել նման կենտրոնների դերը հատկապես մեր երկրի տնտեսական զարգացման գործընթացում որակյալ հետազոտությունների իրականացման և այլընտրանքային տեղեկատվության ապահովման, հանրային քաղաքականությունների և ծրագրերի վերլուծության ու գնա-

հատման, նախագծերի և առաջարկությունների մշակման, զարգացման ծրագրերի նախաձեռնման ու իրականացման առումով: **Գիտակցելով ԼՂՀ-ում վերլուծական կենտրոնների ներդրման խոր անհրաժեշտությունը՝ նշենք, որ դրա համար երկրում առկա են նաև անհրաժեշտ գիտակրթական բոլոր հիմքերն ու պոտենցիալը.** մասնավորապես, ազգաբնակչության գիտակրթական ներուժի համեմատական բարձր մակարդակը և բնական գիտությունների հանդեպ նրա հակվածությունը:

Վերլուծական կենտրոնների կամ, ինչպես ընդունված է անվանել՝ «ուղեղային կենտրոնների» (ՈւԿ) առաջացման և զարգացման միտումներն անմիջականորեն կապված են մեր երկրի ներքին քաղաքական և տնտեսական կառուցվածքի, ներքաղաքական իրավիճակի և հասարակական պահանջի հետ՝ հատկապես աշխարհաքաղաքական ներկա զարգացումների և Արցախի շուրջ տեղի ունեցող մտահոգիչ իրադարձությունների պայմաններում:

Ըստ իս՝ ԼՂՀ-ում վերլուծական կենտրոնների ներդրման հիմնական առաջնահերթություններ պետք է համարվեն.

- Միջազգային քաղաքական հարցերում ռազմավարական խորհրդատվություն իրականացնելու նպատակով ԼՂՀ ռազմավարական շահերի նախանշումը արտաքին և ներքին քաղաքականության մեջ,
- Օտարերկրյա պետությունների հետ ԼՂՀ ռազմավարական շահերին համապատասխան հարաբերությունների կառուցման և ընդլայնման նպատակով նոր մոտեցումների մշակումը,
- Նոր գլոբալ մարտահրավերներին համապատասխան ԼՂՀ զարգացման ռազմավարության վերլուծության ապահովումը (նոր տեխնոլոգիաներ, էներգետիկ անվտանգություն, ժողովրդագրություն, առողջապահություն և այլն):
- Երկրում և արտերկրում ընթացող քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումների մշտադիտարկումը, դրանցով պայմանավորված հնարավոր փոփոխությունները և ռիսկերի կանխատեսումը,
- Տարածաշրջանային հարցերի, հարևան երկրների հետ երկկողմ հարաբերությունների ուսումնասիրությունը,
- ԼՂՀ իշխանությունների և հասարակության միջև հարաբերությունների փոփոխությունների ուսումնասիրությունը,
- ԼՂՀ արտաքին և ներքին քաղաքականության վերաբերյալ բնակչության տարբեր խմբերի տեսակետներին ծանոթանալու նպատակով սոցիոլոգիական հարցումների անցկացումը,

- Տարբեր քաղաքական հիմնախնդիրների (այդ թվում՝ ԼՂ խնդրի, դրա քաղաքական, տնտեսական և իրավական ասպեկտների) լուծման նպատակով փորձագիտական առաջարկությունների ներկայացումը,
- Հետազոտական աշխատանքներում և ինովացիոն գործընթացներում երիտասարդների ներգրավումը:

Վերոնշյալ ուղղություններով աշխատանքներ իրականացնելու նպատակով կարծում եմ կենտրոններում պետք է գործեն հետևյալ ստորաբաժանումները.

- Մակրոտնտեսական հետազոտություններ,
- Գործարարության զարգացում և տարածաշրջանային խնդիրներ,
- Ագրարային սեկտորի զարգացում,
- Կայուն զարգացման խնդիրներ,
- Վիճակագրություն և վերլուծություն,
- Կրթություն և համակարգում:

Տնտեսական բարեփոխումների գիտահետազոտական նման ինստիտուտները, սոցիալ-տնտեսական հետազոտությունների արդյունավետ իրականացման համար, անխուսափելիորեն պետք է առաջնորդվեն գիտելիքի, գաղափարների, տեղեկատվության ու նորամուծության վեկտորներով [4, 65]: Կենտրոնանալով ԼՂՀ արտաքին ցնցումներին դիմակայելու կայուն երաշխիքների ձևավորման գործընթացի վրա՝ վերլուծական կենտրոնների ձևավորման պարադիգման և առաջընթացի շարժիչը պետք է համարել հենց գիտելիքի կուտակումը, նոր գաղափարների ստեղծումը և դրանց արդյունավետ յուրացումը: Որքան էլ տարբեր լինեն մոտեցումները զարգացման առանձին ասպեկտների վերաբերյալ, հաշվի առնելով ԼՂՀ զարգացման միտումներն ու հնարավորությունները, կայուն զարգացման ուղղորդիչ գործոնը հենց նորարարությունն է, որի ձեռքբերումը ինովացիոն զարգացումն է, իսկ մարտահրավերը՝ գաղափարների խզվածքի հաղթահարումը: Այս հարթությունում վերլուծական կենտրոնները կապող օղակ կարող են դառնալ միջազգային խոշոր ուղեղային կենտրոնների հետ համագործակցելու և հետազոտական նախագծերին ինտեգրվելու առումով՝ դրանով իսկ ուղի հարթելով միջազգային փորձը տեղայնացնելու և այն ազգային ինովացիոն համակարգում կիրառելու համար: Անշուշտ, նմանատիպ կենտրոններում մեծածավալ կիրառական հետազոտությունների և մշակումների իրականացումը կհանգեցնի առավել բարձր որակավորմամբ կադրերի անհրաժեշտության: Իհարկե, ներկայումս ԼՂՀ-ում մշակվում են կադրային, մասնագիտական որակավորման մի շարք ծրագրեր, որոնցում խոշոր դերակատարում ունեն

Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը և նրանում գործունեություն ծավալող Սիներջի Ինթրնեշնըլ Սիսթըմզ, Լոկատոր, Թեքնոլոջի ընդ Սայն Դայնամիքս, Վիքիքլաբ, Մեդիատոն «Սինոփսիս Արմենիա» և «Ինստիգեյթ Սիսթեմս» արցախյան ընկերությունները, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, գիտաարտադրական խնդիրների առաջադրման ու իրականացման նպատակով գործող Արցախի Գիտական Կենտրոնը, այնուամենայնիվ, կադրային արդյունավետ քաղաքականությամբ զբաղվող առաջնային գիտակրթական հաստատությունները բուհերն են՝ պոտենցիալ մասնագետների մրցունակության բարձրացման ու պահանջարկված դերակատարման դրսևորման առումով: Ուստի, հույժ կարևորություն ունի բուհերի մրցունակության բարձրացման ու միջազգային ստանդարտների համապատասխանեցման խնդիրը:

Վերլուծական կենտրոնների կողմից որոշումների ընդունման անխուսափելի մեխանիզմի հետ կապված՝ առաջնային է նաև կենտրոնների գործունեության հիմքում ընկած մեթոդների ու եղանակների ուսումնասիրությունը: Ապագա ռիսկերի վերաբերյալ ճշգրիտ կանխատեսումներ իրականացնելու նպատակով կարևոր է ոլորտում համակցված մեթոդների կիրառումը՝ տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների համադրմամբ: Այդ առումով միջազգային պրակտիկայում ընդունված գիտական կանխատեսման մեթոդաբանության բազմազան շարքից (համեմատական կամ տարբերակային, համակարգային, «Դելֆի» մեթոդ, Ֆորսայթ մեթոդ, սցենարների գրման, ռազմավարական միտումների, միտումների արտարկման, երաշխավորությունների, մոնիթորինգի, գնահատման մեթոդ, ընթացակարգային, խնդրի կառուցարկման) կարելի է առանձնացնել ներկայումս ԼՂՀ տնտեսական կանխատեսումներում գրեթե բացակայող մաթեմատիկական ու էկոնոմետրիկ մոդելավորման ստույգ հաշվարկներով հիմնավորված հիմքերի ներդրումը:

Վերլուծական կենտրոնների ներդրումն ու գործունեության հետագա ընդլայնումը իր հերթին ենթադրում է կանոնակարգված և հիմնավորված ֆինանսական միջոցների առկայություն [3, 18]: Այս տեսակետից կարևոր հիմնախնդիր է հետազոտությունների ֆինանսավորման մեջ պետության դերի պարզաբանումը: Փաստենք, որ զարգացած երկրներում հետազոտությունների և մշակումների վրա կատարվող համախառն ծախսերի միջինում 1/3-ը բաժին է ընկնում պետությանը, իսկ մնացած մասը կատարվում է մասնավոր աղբյուրներից: Հաշվի առնելով ԼՂՀ բյուջետային միջոցների սակավությունը՝ նմանօրինակ կենտրոնների գործունեության ֆինանսավորում կարելի է ակնկալել արտասահմանյան

մասնավոր կապիտալի ներհոսքից: Մյուս կողմից միջազգային փորձը ցույց է տալիս, որ տնտեսապես ոչ այնքան բարվոք երկրներում օտարերկրյա ներդրումներով և դրամաշնորհներով հիմնադրված ՎԿ-ների կողմից կատարվող աշխատանքները միշտ չէ, որ բխում են սեփական երկրի շահերից: Ասվածից հետևում է, որ մտավոր ռեսուրսները պետք է ֆինանսավորվեն պետության կողմից, քանի որ այլ պարագաներում դրանք կարող են աշխատել այլ երկրների շահերի համար: Այսինքն, պետք է ոլորտում առավելագույնս ներդրումներ ներգրավել հատկապես հայրենական գործարարության ակտիվության ընդլայնումից՝ գիտակցելով վերլուծական կենտրոնների անշրջելի դրական հետևանքները ոչ միայն կրթության և գիտության, այլև ԼՂՀ տնտեսության զարգացման հեռանկարների ու առհասարակ ողջ հասարակության համար: Այսպիսով, երկրի առջև ծառացած խնդիրների անկանխատեսելիության ու բարդության պատճառով մեծանում է գիտակցումը այն բանի, որ առանց զարգացած և անկախ փորձագիտական հանրության ու վերլուծական կառույցների ներդրման անհնար է իրականացնել հանրային և պետական արդյունավետ քաղաքականություն, դիմակայել ներկայիս լրջագույն վերափոխումներին և գնահատել բոլոր հնարավոր ռիսկերն ու մարտահրավերները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Գ., Կանխատեսումների մասին, Երևան, 2011, էջ 98,
2. Федотова Л., Анализ содержания – социологический метод изучения средств массовой коммуникации, Москва, 2002, с. 125,
3. Эклунд К., Эффективная экономика, Москва, 2001, стр.18,
4. Manly B., Multivariate Statistical Methods, Third edition, Chapman and Hall, 2005, p.65.

НЕОБХОДИМОСТЬ ФОРМИРОВАНИЯ АНАЛИТИЧЕСКИХ ЦЕНТРОВ В НКР

Нина Балаян
АрГУ, Факультет Экономики, Экономика, 4-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *аналитические центры, наука, интеллектуальная основа, экспертное общество, академическая система, прикладные исследования.*

В статье интерпретируется роль и значение аналитических центров в области устойчивого развития экономики, развития и прогресса страны. Обоснованы актуальность внедрения подобных центров в НКР, отделены основные приоритеты и требуемые единицы деятельности центров, номинированы источники финансирования центров в НКР. В статье обоснована, что, без развитых и независимых экспертов и научно-исследовательских институтов, невозможно проводить эффективную политику, чтобы противостоять нынешние серьезные реформы.

THE NECESSITY OF FORMATION ANALYTICAL CENTERS IN NKR

Nina Balayan
ASU, Faculty of Economics, Economics, 4th year

SUMMERY

Key words: *think tanks, science, intellectual basis, expert community, academical system, applied researches*

The article is interpreted the role and importance of think tanks in the sustainable development of the economy, development and progress of the country. There is justified the urgency of the introduction of similar centers in the NKR, are separated the main priorities and required units, are proposed funding sources for these centers in the NKR. It is substantiated that without the developed and independent experts and researching institutions, it is impossible to implement an effective policy to withstand the current serious reforms.

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ

Իննա Սարգսյան
ՎՊՀ, Կառավարում, 4րդ կուրս
*Գիտ. Ղեկավար՝ տ.գ.թ **Հրայր Պապոյան***

***Հանգուցային բառեր՝** գործազրկություն, պաշտոնապես գրանցված գործազուրկներ, տնտեսապես ակտիվ հատված, տնտեսապես ոչ ակտիվ հատված, տնտեսական աճ, ինֆլյացիա, անվանական աշխատավարձ*

Շուկայական տնտեսություն ունեցող ցանկացած երկրում, ինչպես նաև ՀՀ-ում, կարևոր է զարգացման բարձր տեմպերի ապահովումը, որոնք անմիջականորեն կապված են աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հետ:

Անգնահատելի է զբավածության դրական և գործազրկության բացասական ազդեցությունը ՀՀ տնտեության վրա: Քանի որ գործազրկությունը մակրոտնտեսական բացասական երևույթներից մեկն է, և այն կարող է հանգեցնել մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների անկմանը, այդ պատճառով աշխատանքի հիմնական նպատակը և խնդիրն է ուսումնասիրել գործազրկության մակարդակը 2000-2015թթ., ուսումնասիրել տնտեսական աճի և գործազրկության կապը ՀՀ-ում (Օուքենի օրենք), և ինֆլյացիայի, անվանական աշխատավարձի և գործազրկության կապը (Ֆիլիպսի կոր):

Աշխատանքային ռեսուրսներ են համարվում մարդը և այն ամենը, որոնց միջոցով կատարվում է աշխատանք:

Աշխատանքային ռեսուրսները դասակարգվում են հետևյալ կերպ՝

• Տնտեսապես ակտիվ հատված՝ զբաղվածներ, գործազուրկներ, ովքեր ստեղծում են աշխատաշուկան: Իսկ տնտեսական ակտիվության մակարդակ է համարվում տնտեսապես ակտիվ հատվածի տեսակարար կշիռը աշխատանքային ռեսուրսներում:

• Տնտեսապես ոչ ակտիվ հատված, ովքեր չեն համարվում զբաղվածների կամ գործազուրկներ կամ որոշ պատճառներով չեն փնտրում աշխատանք և չեն աշխատում (երեխաներ, սովորողներ, կենսաթոշակառուներ և այլք) [5]:

Գրաֆիկ 1

Տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ հատվածի դինամիկան բացարձակ արժեքով 2003 -2015թթ.:



Ըստ ՀՀ գործող օրենսդրության՝ զբաղված է համարվում 1663 տարեկան անձը, որը.

• կատարել է վարձու կամ ոչ վարձու աշխատանք՝ մշտական, ժամանակավոր, սեզոնային, պատահական կամ միանգամյա, նույնիսկ եթե այդ աշխատանքը կազմել է ընդամենը մեկ ժամ,

• ժամանակավորապես տարբեր պատճառներով բացակայել է աշխատանքից,

• զբաղված է եղել տնային կամ գյուղացիական տնտեսությունում, իսկ արտադրված արտադրանքը նախատեսված է եղել լրիվ կամ մասնակի իրացման, կամ սեփական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է կազմել տնային տնտեսության սպառման մեջ [4]:

Գործազուրկ է համարվում 1663 տարեկան այն անձը, որը.

• չի ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք,

• ակտիվորեն փնտրել է աշխատանք՝ օգտագործելով ցանկացած միջոց, այսինքն՝ դիմել է զբաղվածության պետական և (կամ) մասնավոր ծառայություն, աշխատանք է փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով,

• պատրաստ է եղել անմիջապես (այսինքն՝ առաջիկա երկու շաբաթվա ընթացքում) անցնել աշխատանքի [4]:

Պաշտոնապես գրանցված գործազուրկ են համարվում աշխատանք փնտրող աշխատունակ և գործունակ այն չզբաղված անձինք, ովքեր չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ, աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում, պատրաստ են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ: Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը հաշվարկվում է որպես գործազուրկների թվաքանակի հարաբերությունը տնտեսապես ակտիվ բնակչությանը [4]:

Գրաֆիկ 2
Զբաղվածների և գործազուրկների դինամիկան բացարձակ արժեքով 2003-2015թթ:



Ըստ տնային տնտեսություններում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության աշխատանքի շուկայի հետազոտության տվյալների՝ 2001-2015թ. առավել բարձր ցուցանիշ արձանագրվել է 2001թ.՝ 38,4%, որից հետո իրական գործազրկության մակարդակի կտրուկ անկում է նկատվել 2008թ.՝ կազմելով 16,4%՝ արձանագրելով ամենացածր ցուցանիշը: 2008թ.-ից. իրական գործազրկության մակարդակի ցուցանիշները չեն ունեցել կտրուկ տատանումներ, և 2015 թ. ցուցանիշը կազմել է 18,5%:

ՀՀ-ում իրական գործազրկության ցուցանիշները 2001-2015թ. բնութագրվում են հետևյալ տվյալներով [6].

Գրաֆիկ 3
Իրական գործազրկության դինամիկան բացարձակ արժեքով 2001-2015թթ:



Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2001-2015թ. պաշտոնապես գրացված գործազուրկների ամենաբարձր ցուցանիշը արձանգրվել է 2002թ.՝ 10,8%, որից հետո ունենալով նվազման միտում՝ 2012թ. ցուցանիշը կազմել է 4,2%, որը դիտարկված ժամանակաշրջանի ամենացածր ցուցանիշն է: ՀՀ-ում պաշտոնապես գրացված գործազրկության ցուցանիշները 2001-2015թ. բնութագրվում են հետևյալ տվյալներով [6].

Գրաֆիկ 4
Պաշտոնապես գրանցված գործազրկության դինամիկան բացարձակ արժեքով 2001-2015թթ:



Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում առկա են ֆրիկցիոն, կառուցվածքային և պարբերաշրջանային գործազրկության տեսակները: Ֆրիկցիոն գործազրկությունը առկա է տնտեսապես զարգացած բոլոր երկրներում և ունի կարճաժամկետ բնույթ: Ֆրիկցիոն գործազուրկները (առաջին անգամ աշխատանք փնտրողներ՝ կախված մասնագիտությունից, բնակության վայրի փոփխությունից) ունեն մոտ ապագայում աշխատանք ստանալու սպասումներ: Այն առաջացնում է անահմապատասխանություն աշխատանքի շուկայում՝ մի կողմից աշխատողների թվաքանակի, մյուս կողմից՝ աշխատատեղերի միջև: Երբ ֆրիկցիոն գործազուրկները գտնում են նոր աշխատանք, նրանց փոխարինելու են գալիս այլ աշխատանք փնտրողներ: Նման գործընթացը կրկնվում է անընդհատ, այդ պատճառով ֆրիկցիոն գործազրկությունը դառնում է ան-

խուսափելի: Ֆրիկցիոն գործազրկությունը առկա է լրիվ զբաղվածության կամ գործազրկության բնական մակարդակի պայմաններում:

Կառուցվածքային գործազրկությունը առաջանում է արտադրության և աշխատանքի պահանջարկի փոփոխության հետևանքով: Արտադրական նոր ճյուղերի, տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման, աշխատանքային ռեսուրսների մասնագիտական որակների բարձրացման նպատակով առաջ են գալիս նոր պահանջներ, որն էլ չի համապատասխանում ներկայիս որակական մակարդակին: Աշխատանքային ռեսուրսները փորձում են ադապտացվել, բարձրացնել որակական մակարդակները որոշակի ժամանակահատվածում:

Կառուցվածքային գործազրկություն կարող է առաջանալ նաև որոշակի տարածաշրջաններում աշխատատեղերի մասին տեղեկատվության պակասի դեպքում:

Պարբերաշրջանային գործազրկություն պայմանավորված է ցնցումներով, անկումներով տնտեսության առաջացմամբ [3, 161-163]:

Գործազրկության մակարդակը անընդհատ տատանվում է՝ տնտեսական վերելքի տարիներին կրճատվում, անկումային տարներին՝ ավելանում: Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում առկա է գործազրկության որոշակի մակարդակ՝ անկախ զարգացվածության մակարդակից, որը անվանում են բնական գործազրկություն կամ լրիվ զբաղվածություն: Լրիվ զբաղվածություն ասելով՝ կարող ենք հասկանալ աշխատուժի 100% զբաղվածություն, որը իրականում հնարավոր չէ: Ըստ տնտեսագետների՝ ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկությունը անխուսափելի է, հետևաբար կարող ենք ասել, որ բնական գործազրկության մակարդակը հավասար է ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկության գումարին, որը կազմում է 56% կամ պարբերաշրջանային գործազրկությունը հավասար է 0-ի: Այսպիսով՝ բնական գործազրկության ժամանակ շուկայում տիրում է հավասարկշռություն. աշխատանք փնտրողների թիվը հավասար է աշխատատեղերի թվին [3, 163]:

Տնտեսական աճի տեմպերի և գործազրկության մակարդակի միջև փոխադարձ կապը ուսումնասիրել է Արթուր Օուքենը: Քանի որ բարձր գործազրկության մակարդակը իր հետ բերում է տնտեսական և սոցիալական իրավիճակի անկում, և տնտեսությունը չի կարողանում ստեղծել բավականաչափ աշխատատեղեր բնակչության այն հատվածի համար, որոնք պատրաստ են աշխատել, ապրանքների և ծառայությունների արտադրանքը կոչվում է անվերադարձ [2, 62]: Այն տնտեսագիտության մեջ հաճախ անվանում են ՀՆԱ-ի խզում, որը ցույց է տալիս, թե ինչքանով է փոքր ՀՆԱ-ի փաստացի ծավալ պոտենցիալից: Իսկ ՀՆԱ-ի պոտենցիալ ծավալը որոշվում է գործազրկության բնական մակարդակի միջոցով՝

տնտեսական աճի նորմալ տեմպի պայմաններում: Ըստ Օուքենի՝ եթե գործազրկության մակարդակը գերազնցում է բնական մակարդակին 1%-ով, ապա ՀՆԱ-ի խզումը կազմում է 2,5%, որը մաթեմատիկորեն արտահայտվում է հետևյալ կերպ.

$$(YY^{*})/Y^{*}=qu_{c}\ (1)$$

որտեղ՝ Y – փաստացի ՀՆԱ, Y*պոտենցիալ ՀՆԱ, U_c – ցիկլային գործազրկություն, q – էմպիրիկ գործակից (սովորաբար ընդունում ենք 2,5):

Գրաֆիկ 5

Գործազրկության մակարդակի և ՀՆԱ-ի աճի տեմպի կախվածությունը(ԱՄՆ,1947-2002թթ.):



Գրաֆիկ 6

Տնտեսական աճի և իրական գործազրկության մակարդակի միջև փոխադարձ կապը ՀՀում 2002-2015թ.



Գրաֆիկ 7

Տնտեսական աճի և իրական գործազրկության մակարդակի միջև փոխադարձ կապը ՀՀում 2002-2015թ.



Ուսումնասիրելով իրական գործազրկության մակարդակը՝ 2002-2015թթ. ըստ գրաֆիկ 6-ի և գրաֆիկ 7-ի, 2002թ. գործազրկության մակարդակը նախորդ տարվա համեմատ նվազել է 3,1%-ով, հետևաբար ըստ Օուքենի՝ 2002թ ՀՀ տնտեսական աճը պետք է կազմեր 7,75%, սակայն այն կազմել է 4,26%: 2004թ ՀՀ գործազկությունը նախորդ տարվա համեմատ աճել է 0,4%ով, որը ըստ Օուքենի՝ կհանգեցներ ՀՆԱ-ի նվազման՝ 1%ով, սակայն ՀՀ-ում նվազել է 26,2%: 2009թ. Գործազրկությունը նախորդ տարվա համեմատ աճել է 2,3%-ով, որը հանգեցրել է ՀՆԱ 6,1% աճի՝ 5,75% անկման փոխարեն: 2015թ. գործազրկությունը նախորդ տարվա համեմատ աճել է 0,9 %ով, որը հանգեցրել է ՀՆԱի 3,3% նվազման 2,25%-ի փոխարեն [6]:

Գրաֆիկ 8

Տնտեսական աճի և պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակի միջև փոխադարձ կապը ՀՀում 2002-2015թ.



Գրաֆիկ 9

Տնտեսական աճի և պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակի միջև փոխադարձ կապը ՀՀում 2002-2015թ.



Դիտարկենք նաև պաշտոնապես գրացված գործզրկությունը 2002-2015թ.՝ ըստ գրաֆիկ 8-ի և գրաֆիկ 9-ի: 2002թ. պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը նախորդ տարվա համեմատ աճել է 0,4% ով, որը հանգեցրել է ՀՆԱի 33% նվազման 1%-ի փոխարեն: 2004թ. պաշտոնապես գրանցված գործազուրկների մակարդակը նախորդ տարվա համեմատ նվազել է 0,5%-ով, որը հանգեցրել է ՀՆԱ-ի 21% աճի՝ 1,25%-ի փոխարեն: 2009թ. պաշտոնապես գրանցված գործազուրկների մակարդակը նախորդ տարվա համեմատ աճել է 0,7%-ով, որը հանգեցրել է ՀՆԱ-ի 20% աճին՝ 1,75% նվազման փոխարեն: 2015թ., պաշտոնապես գրանցված գործազուրկների մակարդակը նախորդ տարվա համեմատ աճել է 1-%ով, որը հանգեցրել է ՀՆԱ-ի 3% նվազմանը 2,5%-ի փոխարեն [6]:

Գնաճի գործընթացը պատկերող արդյուավետ եղանակ է մշակել հայտնի տնտեսագետ Ֆիլիպսը: Հաշվի առնելով այն հանագամանքը, որ ամբոջական պահանջարկի աճը հանգեցնում է գների մակարդակի բարձացմանը և արտադրության ծավալների մեծացմանը, իսկ արտադրական ծավալներ մեծացման և գործազրկության միջև գոյություն ունի հակադարձ կապ, կարող ենք ասել, որ ինֆլացիայի բարձր տեմպերը ուղեկցվում են գործազրկության ցածր մակարդակներով:

Այսպիսով՝ ինչքան բարձր է ամբողջական պահանջարկի աճի տեմպեը, այնքան բարձր է ինֆլացիան, հետևաբար գործազրկության մակարդակը կլինի ավելի ցածր և հակառակը: Ըստ Ֆիլիպսի՝ երբ տնտեսության մեջ գործազրկության մակարդակը ցածր է, աշխատավարձը հակված է բարձրանալու և հակառակը: Հիմնական պատճառը վարձատրության բարձրացման համար աշխատավորների գործադրած ճնշման ավելի թույլ լինելն է, երբ այլ աշխատանքի քիչ հնարավորություն

կա, բացի այդ՝ վարձատրության բարձրացման պահանջների նկատմամբ ձեռնարկությունների դիմադրողականությունը ավելի ուժեղ է, երբ շահույթը ցածր է [3, 364]:

Ֆիլիպսի կորը օգտակար է գործազրկության և գնաճի կարճաժամկետ հեռանկարի փոփոխություններն ուսումնասիրելու համար:

Գծ. 10 Ինֆլյացիայի, գործազրկության կապը 1961-1969թթ:



Հորիզոնական առանցքում ներկայացված է գործազրկության մակարդակը, ուղղահայաց հատվածում՝ գների տարեկան աճի չափը: Երբ Ֆիլիպսի կորի վրայով շարժվում ենք ձախ՝ կրճատելով գործազրկությունը, կորով պատկերված գների աճի չափը մեծանում է:

Գրաֆիկ 11
ՀՀում իրական գործազրկության և ինֆլյացիայի հակադարձ կապը 2001-2015թթ:



Գրաֆիկ 12
ՀՀում պաշտոնապես գրանցված գործազրկության և ինֆլյացիայի հակադարձ կապը 2001-2015թթ:



Ֆիլիպսի կորը ունի էմպիրիկ բնույթ և ցույց է տալիս, որ գոյություն ունի հակադարձ կապ ինֆլյացիայի և գործազկության միջև: Վերոնշյալ գծապատկերներում պատկերված է ինֆլյացիայի և գործազրկության կապը ՀՀ օրինակով: Աշխատանքի շուկայում կա որոշակի անհավասարակշիռ վիճակ աբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի միջև, իսկ ԱՄՆ աշխատանքի շուկան բաղկացած է անհամեմատ մեծ թվով առանձինհին շուկաներից, որոք տարբերվում են միմյանցից թե՛ մասնագիտական հմտություններով, թե՛ աշխարհագրական դիրքով: Այդպիսի բազմազանություն ուեցող շուկաներում լրիվ զբաղվածության հնարավոր չէ միաժամանակ հասնել շուկայի բոլոր հատվածներում. որոշ հատվածներում կա լրիվ զբաղվածություն և նույնիսկ աշխատուժի դեֆիցիտ, իսկ որոշ հատվածներում գոյություն ունի գործազրկության որոշալի մակարդակ: Այս անհամապատասխանությունը գործազրկության 67% մակարդակի դեպքում իր հետ բերում է աշխատանաքի վարձատրության բարձրացում որոշ մասնագիտությունների նկատմամբ և որոշ շրջաններում: Աշխատավարձի մակարդակը բարձրանում է ծախսերի ավելացման և գների բարձրացման դեպքում [3, 365-366]:

Ամփոփելով կատարված վերլուծությունները, և փորձելով կիրառել գործազրկության վերաբերյալ տնտեսական օրենքները ՀՀ-ում 2001-2015թթ. ՝ կարող են եզրակացնել, որ արդյունավետ կերպով չի գործում տնտեսական աճի և գործազրկության կապը՝ Օուքենի օրենքը: Ֆիլիպսի կորը, որը արտահյտում է կապը ինֆլյացիայի, անվանական աշխատավարձի և գործազրկության միջև ունի էմպիրիկ բնույթ և ՀՀ-ում վառ արտահայտված չէ: Այս ամենի հետևանքով առկա է աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև անահամապատասխանություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7. ՀՀ ԿԲ տեղեկագիր 2000-2015թթ.:
8. Ղուշչյան Հ. Բ., Մակրոտնտեսական կարգավորում:
9. Макконнелл К. Р., Брю С. Л., Экономикс.
10. http://employment.am/
11. http://www.arlis.am/
12. http://armstat.am/am/

ИЗУЧЕНИЕ ДИНАМИКИ БЕЗРАБОТИЦЫ И ЕЕ ВЛИЯНИЕ НА МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПОКАЗАТЕЛИ

Инна Саргсяан
ВГУ, Управление, 4-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *Безработица, официально зарегистрированные безработные, экономически активный сегмент, экономически неактивный сегмент, экономический рост, инфляция, номинальная заработная плата*

Безработица является негативным макроэкономическим показателем, влияет над трудовыми ресурсами и может уменьшить объеме реального ВВП. Поэтому в этой статье хотим показать уровень безработицы по годам, а также полученного из экономических законов динамическое соответствие. Соответственно, в статье анализируется соотношение экономического роста и безработицы, а также отношение инфляции, безработица и номинальной заработной платы, пытаясь показать его влияние на макроэкономические показатели.

THE STUDY OF THE DYNAMICS OF UNEMPLOYMENT AND ITS IMPACT ON MACROECONOMIC INDICATORS

Inna Sargsyan
VSU, Management, 4th year

SUMMARY

Key words: *Unemployment, officially registered unemployed, economically active segment of the economically inactive segment, growth, inflation, nominal wages.*

Unemployment is a macroeconomic indicator negative affects on human resources and can reduce the amount of real GDP. So in this article we want to show the unemployment rate over the years, as well as resulting from the economic laws of dynamic mapping. Accordingly, the article analyzes the balance of economic growth and unemployment and inflation, unemployment and nominal salary, trying to show its effect on the macroeconomic indicators.

ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Լիանա Բարխուդարյան
ՎՊՀ, Պատմաաշխարհագրական ֆակուլտետ,
«Կառավարում» մասնագիտություն, 3-րդ կուրս
*Գիտ. ղեկավար՝ տ.գ.թ. **Հրայր Պապոյան***

Հանգուցային բառեր. *մոնոպոլիա, շուկայի մասնաբաժին, գերիշխող դիրքի չարաշահում, հակամենաշնորհային քաղաքականություն, տուգանք, ՏՄՊՊՀ, տրեստ, դոմինանտ դիրք:*

Հակամոնոպոլիստական քաղաքականության ուսումնասիրությունը բավականին արդիական խնդիր է, քանի որ մոնոպոլիան առհասարակ համարվում է բավականին բացասական երևույթ ցանկացած տնտեսության համար: Չնայած այն հանգամանքին, որ կան տնտեսագետներ, ովքեր գտնում են, որ մոնոպոլյաները ունեն նաև դրական ազդեցություն, այնուամենայնիվ բացասական ազդեցությունը շատ ավելի մեծ է, քան դրականը: Վերջին ժամանակներում Հայաստանի Հանրապետության կառավարությունն սկսել է ավելի մեծ ուշադրություն դարձնել մոնոպոլիաների խնդրին, բայց ընդհանուր արդյունքնում պետական մակարդակով մոնոպոլիաներ որպես այդպիսին գոյություն չունեն, այլ կան միայն գերիշխող դիրք ունեցողներ, և իրականացվում են գերիշխող դիրքի չարաշահման բացահայտմանն ուղղված գործողություններ: Սակայն տնտեսության զարգացման ցածր տեմպերը, գործազրկության, արտագաղթի ու աղքատության տարեցտարի ավելացող ցուցանիշները առաջացնում են պահանջ տնտեսության բոլոր ճյուղերի պոտենցիալ հնարավորությունները ուսումնասիրելու և հնարավոր բոլոր գործողությունները տնտեսության զարգացմանն ուղղելու համար: Իսկ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է մրցակցային դաշտի ապահովում, որը մոնոպոլիաների գոյության դեպքում հնարավոր չէ: Այժմ բավականին արդիական խնդիր է պետության հակամոնոպոլիստական քաղաքականության բարելավումը, և որ ամենակարևորն է, կիրառումը՝ ուղղված տնտեսության տարբեր ճյուղերին: Այդ պատճառով անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել տարբեր պետությունների հակամոնոպոլիստալան քաղաքականությունները, համեմատություններ անցկացնել Հայաստանի Հանրապետության օրենքների հետ և բացահայտել ՀՀ-ում այս ոլորտում առկա թերություններն ու կարգավորիչ անհրաժեշտ միջոցառումները:

Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

ընդհանուր առմամբ մոնոպոլիաների դեմ պայքարի 2 ձև գոյություն ունի.

1. Մենաշնորհների դեմ պայքարն է

2. Տնտեսական մրցակցության խրախուսումը

ԱՄՆ-ի հակամոնոպոլիստական քաղաքականությունը շատ այլ պետությունների համար հիմք է հանդիսացել:Այն որդեգրել է մոնոպոլիաների դեմ պայքարի առաջին եղանակը: ԱՄՆ-ում սկզբնական շրջանում մոնոպոլիաների ստեղծմանը չեն խոչընդոտում, բայց, երբ արդեն ձևավորվում են մոնոպոլիաները, պետությունը սկսում է մոնոպոլիաների ջախջախման քաղաքականությունը: Մոնոպոլ կազմակերպությունները տրոհում են տարբեր՝ միմյանց մրցակից կազմակերպությունների ու միաձգամից ճգնաժամային իրավիճակներ ստեղծում կազմակերպությունների ղեկավարների համար: Հակամոնոպոլիստական քաղաքականությունը - այժմ իրականացնում են դաշնային և տեղական դատավորները, արդարադատության նախարարության հակամենաշնորհային վարչությունը (գլխավոր օրենսդիր մարմին), Առևտրի ֆեդերալ հանձնաժողովը (գլխավոր կատարողական իշխանություն):

ԱՄՆ-ի հակամենաշնորհային քաղաքականության հիմնական օրենքներն են.

1. Շերմանի ակտը (1890թ.), որը ենթադրում է հավատարմագրերի արգելք, տրաստի տեսքով պայմանագրերի և համաձայնությունների արգելք, մենաշնորհային առևտրի կազմակերպման արգելք և առևտրի կազմակերպման սահմանափակումներ նահանգների միջև: Հակամրցակցային գործողությունները դիտարկվում են որպես քրեական հանցագործություններ, որը ենթադրում է պատիժ՝ 3 տարի բանտարկություն, 1 մլն. դոլլար տուգանք կազմակերպության համար և մինչև 100.000 դոլլար տուգանք մասնավոր անձի կամ կազմակերպության լուծարման համար: Շերմանի օրենքի երկրորդ հոդվածը արգելում է որևէ մեկին շուկայում ունենալ մոնոպոլ ուժ, որով կղեկավարի գները կամ կհանդիսանա շուկայի մուտքի խոչընդոտ: Չնայած այսպիսի գործողությունների մտադրությունը կարող է լինել պարզ արտահայտված կամ կարող է ենթադրվել, այնուամենայնիվ սոսկ շուկայի այդպիսի չափաբաժին տիրապետելը ինքնին անօրինական չէ: Սակայն, առանց բացառության, ֆիրման, որը ստեղծում է մոնոպոլիա նորարարության միջոցով և ապրանքը շուկայում առաջին անգամ ներկայացնելու միջոցով, կմեղադրվի քրեական հանցագործության մեջ: Ուստի մոնոպոլիզացիան, որպես երկրորդ հոդվածի խախտում կա՛մ մոնոպոլիայի անօրինական ձեռքբերում է, կա՛մ մոնոպոլ ուժի ցուցաբերում:

2. Քլեյթոնի ակտը (1914թ.), որը շեշտը դնում է ընդհանուր առմամբ մրցակցային հարաբերություններ և մրցակցային դաշտ ապահովելու հա-

մար: Սակայն այն օրինական է համարում խաղաղ գործադուլները և կազմակերպությունների դեմ բոյկոտները: Այն արգելում է կազմակերպությունների միաձուլումը, եթե դրանք հանգեցնում են մրցակցային հարաբերությունների խաթարմանը և ուղղված է գլխավորապես հորիզոնական միաձուլումներին:

3. Ռոբինսոնի ակտը, որը ենթադրում է գնային խտրականության արգելք և քրեական պատասխանատվության է ենթարկում թալանիչ գների համար, երբ սահմանվում է սահմանային միջին արժեքից ցածր գին՝ շուկայից մրցակիցներին դուրս հանելու նպատակով:

Հակամոնոպոլիստական պետական քաղաքականության մեկ այլ ուղղությունը վերաբերում է շուկայի տեղեկատվական ապահովվածության կանոնակարգին: Ընկերություններում ինֆորմացիայի աղավաղման հետ կապված խնդիր առաջանում է այն դեպքում, երբ դժվար է ստուգել ապրանքի որակը. ընկերությունները արտադրում են փորձնական ապրանքներ, իրականացնում ապրանքի թափանցիկ վաճառք կամ կարճաժամկետ սպեկյուլատիվ գործընթացներ:

Եվրամիությունում ընդունված է մոնոպոլիաների դեմ պայքարի երկրորդ մեթոդը, այսինքն՝ տնտեսական մրցակցության խրախուսումը: Այստեղ ընդհակառակը, կանխարգելում են մոնոպոլիաների առաջացումը: Կազմակերպությունների համար ստեղծում են այնպիսի հարկային դաշտ, որի առկայության պայմաններում նման կազմակերպություններին ավելի ձեռնտու է տրոհվել, քան մնալ այդ դաշտում: Եվրամիության հակատրեստային քաղաքականությունը զարգացել է 2 հիմքային կանոններից, որոնք սահմանված են Եվրոպական Միության գործունեության դաշնագրով:

Դաշնագրի հոդված 101-ով արգելվում է համաձայնությունները 2 և ավելի անկախ շուկայավարողների միջև, որոնք սահմանափակում են մրցակցությունը: Այս դրույթը ընդգրկում է համաձայնության 2 մակարդակներ՝ հորիզոնական համաձայնություններ (և՛ իրական, և՛ պոտենցիալ մրցակիցներին գործել նույն մակարդակի առաջարկի շղթայում) և ուղղահայաց համաձայնություններ (տարբեր մակարդակներում գործող կազմակերպությունների միջև, օրինակ համաձայնություն արտադրող կազմակերպությունների և առաքման ցանցի միջև): Միայն սահմանափակ բացառություններն են նախատեսված ընդհանուր արգելման համար: Անօրինական վարքի ամենասարսափեցնող օրինակը Կարտելների ստեղծումն է մրցակիցների միջև, որը կարող է ներառել գների ֆիքսում կամ շուկայի բաշխում (Market sharing) [1]:

Դաշնագրի հոդված 102-ով արգելվում է շուկայում դոմինանտ դիրք ունեցող ֆիրմաներին չարաշահել այդ դիրքը: Դոմինանտ դիրքը կարող են չարաշահել ապրանքների համար նշանակելով թալանիչ գներ, սահ-

մանափակել ապրանքի թվաքանակը կամ վերափոխել ապրանքը ի վնաս սպառողին [2]:

Եվրամիության երկրների համար հակամենաշնորհային քաղաքականության բացառիկ օղակը հանդիսանում է կարտելների դեմ պայքարը: Կարտելների դեմ գործողությունները հակատրեստային քաղաքականության կիրառման հատուկ ձև է: Օլիգոպոլ շուկաներում, կամ այն շուկաներում, որտեղ մի քանի ընկերություն գերիշխող դիրք ունեն մեծ է կարտելների ձևավորման վտանգը: Կարտելը գաղտնի համաձայնություն է, որ ձեռք է բերվում շուկայում մեծ մասնաբաժին ունեցող ընկերությունների միջև՝ համեմատաբար բարձր գներ սահմանելու, արտադրանքի թողարկման ծավալը սահմանափակելու, շուկան կիսելու վերաբերյալ: Եվ քանի որ կարտելները հակաօրինական համաձայնություններ են, դրանք գրավոր որևէ հիմնավորում չեն ունենում և, որպես կանոն, գաղտնի են կնքվում: Հենց դա էլ էապես բարդացնում է կարտելների բացահայտման գործընթացը: Կարտելների հայտնաբերումը, գոյության մասին փաստերը հեշտ չէ գտնել: Այդ պատճառով էլ Եվրամիությունում ընդունվել է «Ներման քաղաքականություն»-ը: Այն խրախուսում է կազմակերպություններին հանձնվել Եվրոպական Միությանը: Ցանկացած կարտելի առաջին կազմակերպությունը, խոստովանելով իր մեղքը, ստիպված չի լինի տուգանք վճարել: Այսպիսի օրենսդրական քայլը Կարտելում անկայունություն է ստեղծում: Վերջին տարիներին շատ կարտելներ հայտնաբերվել են Եվրոպական Հանձնաժողովի կողմից այն բանից հետո, որ կարտելի մի անդամ խոստովանել է և զիջում խնդրել: Այնուամենայնիվ Եվրամիության Հանձնաժողովը հաջողությամբ շարունակում է հետևել իր սեփական հետաքննությունները կարտելներ հայտնաբերելու համար:

Գերմանիայի հակամոնոպոլիստական օրենքն իր մեջ հիմնականում ներառում է հոլդինգների կամ այլ կորպորատիվ կազմակերպությունների ստեղծման մասին գործերի վերանայումը: Այդ դեպքում օգտագործվում են այնպիսի չափանիշներ ֆիրմաների գնահատականներում, ինչպիսիք են մոնոպոլ դիրքի ստեղծում կամ ուժեղացում: Ֆիրմայի մոնոպոլ դիրքը իրենից ներկայացնում է շուկայում մի իրավիճակ, երբ ֆիրման չունի մրցակից կամ ուժեղ մրցակիցներ, երբ ֆիրման շուկայում ավելի մեծ իշխանություն ունի, քան իր մրցակիցները:

Այստեղ վերահսկողության են ենթարկվում

– Ձեռնարկության ակտիվներն ամբողջությամբ ձեռք բերելը

– 20; 50 և ավելի տոկոս ձեռք բերելը

– ցանկացած գործարք, որի արդյունքում ձեռնարկությունը կունենա ուղիղ կամ մասամբ վերահսկողություն

– ցանկացած գործարք, ներառյալ 25% ակցիաների ձեռք բերումը, եթե դա տալիս է գնող ֆիրմային հնարավորություն ազդեցություն ունե-

նալ մյուս ֆիրմայի մրցակցային գործունեության վրա:

Ցուցանիշները, որի դեպքում ֆիրման կամ ֆիրմաները դիտարկվում են որպես շուկայի դոմինանտներ հետևյան են՝

- 1 ֆիրմայի համար շուկայի 1/3 մասնաբաժին,
- 3 ֆիրմայի համար շուկայի 50% -ից ոչ պակաս մասնաբաժին,
- 5 ֆիրմաների համար շուկայի 2/3-ից ոչ պակաս մասնաբաժին:

Իտալիայում միաձուլման քաղաքականությունը իրականացվում է տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից, որը վերանայում է արդյունաբերական հաստատությունների գործերը, բացառությամբ մասսայական տեղեկատվական միջոցների և բանկերի, ինչպես նաև քննում է գործեր ձեռքբերումների, միաձուլման և նոր ընդհանուր մասնաճյուղեր բացելու վերաբերյալ: Տույժերը իրականացվում են այն դեպքում, երբ առանց հանձնաժողովի թույլտվության կատարվել են գործարքներ, կամ այն գործարքների համար որոնք իրագործվել են՝ չնայած հանձնաժողովի արգելքներին: Տույժի չափն է 1-10%՝ շահույթի շրջանառությունից:

Ճապոնիայում հակամոնոպոլիստական քաղաքականություն իրականացնող մարմիններն են Ազատ առևտրի հանձնաժողովը, Արդյունաբերության և առևտրի նախարարությունը: Այս կարգավորող մարմինները սովորաբար չեն ընդունում պաշտոնական որոշումները, այլ նախընտրում են դժվար իրավիճակներում ոչ պաշտոնական պայմանավորվածություններ իրականացնել ֆիրմաների հետ: 2 մլրդ և ավելի իեն տարեկան շրջանառություն ունեցող ֆիրմաները Ճապոնիայում պետք է ամեն տարի ներկայացնեն հանձնաժողովին զեկուցում ուրիշ կազմակերպությունների հետ գործունեությունների մասին կամ հաշվետվություն հետագա հնարավոր համագործակցության վերաբերյալ: Իրականում ֆիրմաները անց են կացնում ոչ օֆիցիալ խորհրդակցություններ հանձնաժողովի հետ մինչև հետագա քայլերի հաջորդականության որոշումը (միաձուլվել, մասնակցել):

Դոմինանտ կազմակերպությունների միաձուլում թույլատրվում է.

- Ճգնաժամի դեպքում,
- Ճապոնիայի արտաքին պայմանավորվածությունների իրականացման անհրաժեշտության դեպքում,
- Իենի փոխարժեքի կուրսի պահպանման համար,
- Զբաղվածության շահերի համար,
- Անսպասելի դեպքերում, երբ անհրաժեշտ է օգնել ձեռնարկությանը սնանկացումից

Մոնոպոլյաների դեմ պայքարի իր յուրահատուկ ձևն ունի Հարավային Կորեան [3]: Այստեղ ամենահետաքրքիր երևույթն այն է, որ կորեա-

կան բոլոր մեծ ընկերություններն իսկզբանե արհեստական են ստեղծվել և օգնություն են ստանում պետությունից: Պետությունը նման ընկերություններին սկզբնական շրջանում տրամադրում էր հսկայական վարկեր ու շատ հաճախ զիջումների էր գնում, միայն թե այդ ընկերությունները կատարեին իրենց առջև դրված նպատակները: Դրանց կորեայում անվանում են Չեյբոլներ, իսկ ամենահայտնի Չեյբոլներն են՝ Samsung, Hyundai, Kia, Daewoo, LG և այլ ընկերություններ: Յուրաքանչյուր այսպիսի ընկերության առջև դրված էր հստակ քանակություն արտադրելու և արտահանելու ծրագիր: Չեյբոլները հանդիսացել և հանդիսանում են Կորեայի տնտեսության զարգացման առանցքային օղակը, բայց շատերն այժմ վախենում են, որ նմանատիպ խմբավորումները դարձել են բավականին ազդեցիկ, օրինակ միայն Samsung Group-ը տնօրինում է Հարավային Կորեայի ՀՆԱ-ի 20%-ը: Այնուամենայնիվ նման կազմակերպությունները բավականին մեծ են և օրինակ Samsung-ի նման կազմակերպության ձախողումը կլինի բավականին ավերիչ և հետևաբար կարելի է ասել, որ Կառավարությունը չափազանց պարտավոր է չեյբոլներին, որն էլ ազդում է Կառավարության քաղաքականության վրա: Օրինակ Կորպորատիվ կազմակերպությունների հարկերի դրույքաչափերը հաստատված են շատ ավելի ցածր, քան այլ երկրներում: Նույնիսկ այն հանգամանքը, որ սոցիալական ապահովության ծախսերը գնալով աճում են չի ստիպում կառավարությանը վերանայել որոշումները: Կառավարությունը վախենում է ինչ որ բան անել, որը կվնասի այդ մասսայական համագործակցություններին, որոնք զարգացնում են Հարավային Կորեայի տնտեսությունը: Եթե չեյբոլները անհաջողության մատնվեն, ապա Կորեան մղձավանջի մեջ կընկնի, նրանք ունեն անըմբռնելի ուժ կառավարության վրա, այն դրսևորում է կառուցվածքային ճնշում: Կառավարությունը պետք է աջակցի չեյբոլներին, որպեսզի կարողանա պահպանել ժողովրդականությունը: Մոնոպոլ կարգավիճակն ինքնին Կորեայում անօրինական չէ, եթե այն ձեռք է բերվել նորամուծության և աշխատասիրության միջոցով: Մրցակցային օրենքներն այստեղ հաճախ խոչընդոտում են մոնոպոլ ուժի կիրառման չարաշահումները, ներառյալ մոնոպոլիզացիան (մոնոպոլ կարգավիճակի պահպանում) և մոնոպոլացնելու փորձը (մոնոպոլ կարգավիճակի ձեռքբերում) դուրս մղելով մրցակիցներին կամ այլ անօրինական գործունեությունները: Սակայն էական պայքար այդպես էլ չի իրականացվում: Եթե դու Հարավ Կորեացի ես, ապա դու արթնանում ես Samsung-ի կառուցած բնակարանում, նայում ես լուրերը LG հեռուստացույցով, վարում ես Hyundai ավտոմեքենա, ընկերներիդ հետ ճաշը պատվիրում ես Lotte Hotel-ում քո Samsung հեռախոսով:

Ռուսաստանում նույնպես հակամրցակցային հիմնական գործողությունները վերաբերում են տնտեսական սուբյեկտների այնպիսի գործու-

նեություններին, ինչպիսիք են՝ գների սահմանափակումը, արտադրանքի ծավալի որոշումը, ապրանքի տարանջատումն ըստ տարածքի կամ ըստ ապրանքի տեսականու վաճառքի, պոտենցյալ մրցակիցների մուտքի խոչընդոտումը շուկա վաճառողի կամ գնորդի միջոցով: Առանձին դեպքերում թույլատրվում է կարտելային համաձայնագրերի ստեղծումը, եթե ֆիրմայի համաձայնեցված քաղաքականությունը նպաստում է շուկայում ապրանքի քանակության ավելացմանը, ապրանքի որակի բարձրացմանը, տեղական ապրանքների մրցակցության աճին, այդ թվում նաև համաշխարհային շուկայում: Օրենսդրության մեջ կարևոր դեր է խաղում առաջատար ֆիրմային որոշումը: Առաջատար ֆիրման որոշվում է ըստ նրա ֆունկցիոնալ բնութագրի: Ֆիրման համարվում է առաջատար, եթե այն ցուցաբերում է որոշիչ ազդեցություն շուկայում ընդհանուր ապրանքաշրջանառության պայմանների վրա, կամ դժվարացնում է գործակալների (այլ տնտեսվարող սուբյեկտների) մուտքը շուկա: Եթե ֆիրմայի շուկայական մասը 35%-ից քիչ է, ապա ֆիրման ոչ մի դեպքում չի համարվում առաջատար, 35-65%-ի դեպքում հակամենաշնորհային մարմինները պետք է ապացուցեն ֆիրմայի առաջատարությունը: Պետական օրգանների համար կարևոր է որ այն լինի կայուն [4]:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն ուսումնասիրելիս գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ հակամոնոպոլիստական քաղաքականության հիմնական, հիմքային մասը կազմված է Եվրամիության երկրների հակամոնաշնորհային օրենսդրությանը համապատասխան: Սակայն, ինչպես վերը նշեցինք Եվրամիության երկրներում պայքարում են ավելի շատ ոչ թե մոնոպոլիաների դեմ, այլ տնտեսական մրցակցությունն են ապահովում, սակայն մի պետությունում, որտեղ արդեն կան գերիշխող դիրք ունեցող կազմակերպություններ և երիտասարդ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով արդեն անհրաժեշտ է, որ պետությունը պայքարի ոչ թե մրցակցությունն ակտիվացնելու ուղղությամբ այլ, հետևելով ԱՄՆ-ի օրինակին, իրականացնի մոնոպոլիաների վերացնելու քաղաքականություն այնպես, ինչպես ԱՄՆ-ն արեց դեռևս 1911թ. երբ կառավարության որոշմամբ «Standard Oil» նավթային ընկերությունը բաժանվում է 3 տասնյակ մրցակից կազմակերպությունների: «Standard Oil»-ը 20-րդ դարի սկզբին տնօրինում էր ԱՄՆ նավթարդյունաբերության 95%-ը: ԱՄՆ հակամոնոպոլիստական օրենսդրության շնորհիվ Մորգանի, Ռոքֆելլերի և մյուս մոնոպոլիստների գերշահույթի զգալի մասը օրենսդրությամբ մտավ պետական բյուջե, բուռն զարգացում ապրեց մանր ու միջին բիզնեսը, և վերջինիս տված արտադրանքի ծավալը 1 տասնյակի ընթացքում կազմեց ԱՄՆ համախառն արտադրանքի 50%-ը: Համեմատության համար նշենք, որ Հայաստանում Փոքր ու Միջին ձեռնարկությունների արտադրանքի ծա-

վալը չի գերազանցում Հայաստանի ներքին արտադրության ընդհանուր ծավալի 4%-ը: Նշենք, որ այս ամենը տեղի է ունեցել մոնոպոլ կազմակերպությունների մասնատման միջոցով: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ոչ թե արգելվում է մենաշնորհը, այլ շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունը: Այսինքն, եթե որևէ տնտեսվարող սուբյեկտ բավարարի ամբողջ պահանջարկը, դա նորմալ է, սակայն եթե սկսի իր դիրքը չարաշահելով ուռճացված գներ սահմանել և գերշահույթներ ստանալ, ապա այդտեղ պետությունը պետք է միջամտի և համապատասխան քայլեր ձեռնարկի: Սակայն ինչպես ԱՄՆ օրենսդրությունն է ասում, եթե ձեռնարկությունը շուկայում մոնոպոլ դիրք է գրավում, ապա պարզ է նրա գերագույն նպատակը, հետևաբար անհրաժեշտ է մշտական ուսումնասիրություններ իրականացնել և հսկողության տակ պահել գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները:

Հայաստանի Հանրապետությունում հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար, գերիշխող դիրքի չարաշահման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամ [5]: Տուգանքի այսպիսի չափերը համեմատելով ԱՄՆ-ի տուգանքի չափերի հետ հասկանում ենք, որ կազմակերպություններն ու անձիք հակամրցակցային գործողություններ իրականացնելու համար ԱՄՆում շուրջ 2 անգամ ավելի թանկ են վճարում: Տուգանքների նմանատիպ ցածր մակարդակը գերիշխող դիրք ունեցող կազմակերպություններին հնարավորություն է տալիս ուղղակի վճարել տուգանքներն ու շարունակել իրականացնել հակաիրավական գործողությունները: Այնպես ինչպես հարկերն են վճարում, վճարում են նաև տուգանքներն ու շարունակում թալանիչ քաղաքականությունը: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է բարձրացնել յուրաքանչյուր հակամրցակցային քաղաքականությանն ուղղված գործողությունների տուգանքների չափերը, որը որոշ չափով կարող է զսպել գերիշխող դիրքի չարաշահումները: Սակայն հանձնաժողովը կարող է որոշում ընդունել տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ պատասխանատվության միջոց չկիրառելու մասին, եթե տնտեսվարող սուբյեկտը, մինչև տվյալ համաձայնության առնչությամբ Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի հարուցումը, օրենքով սահմանված կարգով, իր նախաձեռնությամբ առաջինն է դիմում Հանձնաժողովին և կամովին պարտավորվում դադարեցնել այդ հակամրցակցային համաձայնությանն իր մասնակցությունը և հետագայում բացառել այն՝ միաժամանակ ներկայացնելով տվյալ հակամրցակցային համաձայնությանը վերաբերող այնպիսի ապացույց(ներ), որը (որոնք), ըստ Հանձնաժողովի, բավարար հիմք է(են) տվյալ հակամրցակցային համաձայնության վերաբերյալ վարչական վարույթ հարու-

ցելու համար [6]:

Սա «Ներման քաղաքականությունն» է, որը Հայաստանի Հանրապետությունը ընդունել է Եվրամիության փորձն ուսումնասիրելուց հետո, սակայն այն ազգային մտածելակերպի առանձնահատկությունների հիման վրա էական ազդեցություն չունեցավ Հայաստանում: Բայց ԵՄ-ը իր առանձին ուսումնասիրությունները նույնպես իրականացնում է կարտելների բացահայտման ուղղությամբ:

Երբ Հայաստանի տնտեսությունում դրսեւորվում են գերիշխող դիրքի չարաշահման կամ հակամրցակցային համաձայնության երեւույթներ, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը վարույթ է սկսում, սակայն շատ դեպքերում տուգանքներ չի կիրառում՝ բավարար ապացույցներ չունենալու պատճառով: Հանձնաժողովի ծրագրում նշված է, որ օրենսդրությունը բավարար լիազորություններ չի տալիս հանձնաժողովին անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու, գործարարների ներկայացրած փաստերը ճշգրտելու և մեղադրանքները դատարանում ապացուցելու համար, ինչի հետևանքով արդյունավետ աշխատանքը չի հաջողվում: Օրինակ, գների չհիմնավորված բարձրացումների ապացուցման համար գնային դիտարկումները դատարանում լիարժեք հիմնավորում չեն համարվում: Համակենտրոնացումների իրական բնույթը, կարտելային համաձայնությունները չեն բացահայտվում, քանի որ տնտեսվարողները չեն ներկայացնում անհարժեշտ փաստաթղթերը: Իսկ համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այդ երկրներում Հանձնաժողովները շատ ավելի մեծ լիազորություններով են օժտված, օրինակ՝ Եվրամիության երկրները իրավունք ունեն խուզարկություններ կատարել և նույնիսկ վաղ առավոտյան «հարձակման միջոցով փաստաթղթեր և այլ իրեղեն ապացույցներ առգրավել [7]: Կարողանում են հետաքննական աշխատանքներ տանել ստուգելով հաշվապահական մատյաններից մինչև տնտեսվարողի անձնական նոթատետրը: ԱՄՆ-ում հակատրեստային մարմինները դատարանի որոշմամբ (Առևտրի Ֆեդերալ հանձնաժողովը և Արդարադատության նախարարության հակատրեստային դեպարտամենտը) իրավունք ունեն ստանալ ցանկացած տեղեկատվություն կամ փաստաթուղթ [7]: Ուկրաինայի մրցակցային նոր օրենսդրությամբ պետական մարմնին վերապահված է նաև խուզարկություն կատարելու և իրեղեն ապացույցներ առգրավելու իրավասություն [8]: Իսկ Ղազախստանն առաջինն էր, որ փորձեց հակամրցակցային համաձայնությունը բացահայտել ոչ միայն իրեղեն ապացույցների (գրավոր) հայտնաբերման, այլև վերլուծության միջոցով համաձայնության առարկա դրույթները համադրելով մրցակցության սահմանափակման դրույթներին [9]:

Սակայն Հայաստանի Հանրապետությունում մոնոպոլիաների դեմ

պայքարն ընթանում է ինչպես Հարավային Կորեայում, այսինքն Մոնոպոլիաներին հովանավորել ու պայքարել նրանց զարգացման համար: Սակայն ի տարբերություն Կորեայի, Հայաստանի գերիշխող դիրք ունեցող կազմակերպություններն այդպես էլ համաշխարհային բրենդներ չեն դառնում, և տնտեսության համար բացի բացասական ազդեցությունից, որևէ դրական ազդեցություն չեն կարողանում գործել: Իսկ համեմատության համար նշենք, որ Կորեայում ամենամեծ Չեյբոլը՝ Սամսունգ ընկերությունն ունի 500000 աշխատակից, իսկ Հայաստանի խոշոր ընկերություններից օրինակ Գրանդ Քենդին, որը համարվում է Հայաստանի խոշոր գործատուներից մեկը, ընդամենը 3200 աշխատակից:

Այսպիսով, մեր կարծիքով, կարելի է առանձնացնել որոշակի քայլեր, որոնք ըստ մեզ անհրաժեշտ են բարելավելու համար Տնեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատանքները: Օրենսդրական որոշակի փոփոխություններ, որոնք որոշակի չափով կզսպեն հակամրցակցային քայլերը.

1. Ավելացնել հակամրցակցային գործողություններին ուղղված տուգանքների չափերը և սահմանել ավելի խիստ պատիժ:

2. Գործունեություն իրականացնել մոնոպոլիաների ջախջախման, բաժանման և մրցակից կազմակերպությունների ձևավորման ուղղությամբ: Մոնոպոլիաների վերացումը կհանգեցնի տնտեսական մրցակցության պաշտպանմանը:

3. Մշտապես հսկողության տակ պահել գերիշխող դիրք ունեցող կազմակերպություններին: Ուսումնասիրությունները անհրաժեշտ է իրականացնել անընդհատ:

4. Մեծացնել ՏՄՊՊՀ-ի գործառույթները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. EU Competition low, Article 101 of the treaty
2. EU Competition low, Article 102 of the treaty
3. Chaebols in South Korea www.thomaswhite.com
4. Антимонопольная политика государства, gradars.ru
5. Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշում N122
6. www.competition.am
7. Միքայելյան Մ.Վ «Հակամրցակցային համաձայնությունների բացահայտման մի քանի հարց»
8. Закон Украины о защите экономической конкуренции от 11 I 2001, N 2210-III
9. Инструкция по выявлению соглашений субъектов рынка ограничивающих конкуренцию 06,02,2003г. N34-ОД

ВОЗМОЖНОСТИ И ЦЕЛЕСООБРАЗНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА АНТИМОНОПОЛЬНОЙ ПОЛИТИКИ В РА В НАРОДНОМ ХОЗЯЙСТВЕ

Лиана Бархударян
ВГУ, Историко-географический факультет,
Управление, 3-ий курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *монополия, антимонопольная политика, злоупотребление доминирующим положением, налог, ГКПЗЭК, трест, доминирующее положение*

Монополии являются серьёзными препятствиями для любой национальной экономики. Поэтому в этой статье мы попытаемся исследовать международный опыт антимонопольной политики, понять как разные борется против монополии. После исследования международного опыта необходимо сравнить его с антимонопольной политикой национальной экономики Армении и понять где лежит дефект в экономике Армении и какие действия помогут исправить нынешнюю ситуацию в экономики Армении.

ANTITRUST POLICY IN DIFFERENT COUNTRIES AND THE POSSIBLE USE OF INTERNATIONAL EXPERIENCE IN THE NATIONAL ECONOMY

Liana Barkhudaryan
VSU, Faculty of History and Geography
"Management", 3rd year

SUMMARY

Key words: *monopoly, antitrust policy, abuse of dominant position, penalty, SCPEC, trust, dominant position.*

Monopolies are serious obstacles for all national economics. That is why we tried to explore the international experiment of antitrust law in this article, understand how different countries struggle against the monopolies. After exploring international experience we need to compere it with national economies antitrust law and understand where we can define the defect of Arminian antitrust law and what kind of corrections we can make to struggle against monopolies more effectively.

ԱՐՏԱԳԱՂԹԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մելսիդա Թովմասյան
ԳՊՀ, Տնտեսագիտություն, 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ տ. գ. թ , դոցենտ ***Սամվել Ամիրխանյան***

Հանգուցային բառեր՝ *արտագաղթի հիմնահարցեր, գործազրկության մակարդակ, արտագաղթի հիմնական պատճառներ, միգրացիոն քաղաքականություն*

Հայաստանի Հանրապետության միգրացիոն վիճակը կտրուկ փոփոխությունների է ենթարկվել 1980-ական թվականների վերջից սկսած՝ պայմանավորված 1988թ. Սպիտակի երկրաշարժով. ԽՍՀՄ փլուզման հետևանքով քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի վերափոխումներով ու Ղարաբաղյան պատերազմի ծանր հետևանքներով: Վերջին 20 տարիների ընթացքում էապես փոխվել են ՀՀ միգրացիոն հոսքերը, դրանց դրդապատճառներն ու հետևանքները, միգրացիոն գործընթացների մեջ ներգրավված խմբերն ու նրանց խնդիրները: Այս խնդիրները պահանջում են միգրացիոն հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրություն և առկա բոլոր կապերի վերհանում:

Աղյուսակ 1-ում ներկայացված են 1992-2013 ՀՀ-ից մեկնածների և ժամանածների տվյալները:

Աղյուսակ 1. ՀՀ-ից մեկնածներն ու ժամանածները 1992-2013թթ. [3]

Տարի	Ժամանածները	Մեկնածները	Միգրացիոն սալդո (+,-)
1992	636.9	865.5	-228.6
1993	689.9	831.0	-141.1
1994	470.0	597.8	-127.8
1995	469.9	507.0	-37.5
1996	496.5	517.4	-20.5
1997	473.6	504.9	-31.3
1998	415.3	439.7	-24.4
1999	311.4	318.6	-7.2
2000	399.7	457.2	-57.5
2001	508.2	568.6	-60.4
2002	590.7	593.4	-2.7
2003	618.3	628.5	-10.2
2004	739.9	737.8	2.1
2005	854.8	833.3	12.5
2006	983.7	962.0	21.7
2007	1293.6	1296.8	-3.2

2008	1397.2	1420.2	-23.0
2009	1432.0	1457.0	-25.0
2010	1754.2	1800.9	-46.7
2011	1945.1	1988.9	-43.8
2012	2191.9	2234.7	-42.8
2013	2476.3	2507.5	-31.2

1988-2001թթ հանրապետությունից արտագաղթել են մինչև 1.0-1.1 մլն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, ինչը կազմում է մշտական բնաչության ներկայիս 1/3-ից ավելին; Ակնհայտ է, որ նման մասսայական երևույթն էական ազդեցություն է ունեցել և դեռ երկար կունենա երկրի իրողութունների վրա; Ազդեցությունը հատկապես մեծ է ժողովրդագրական պատկերի վրա: Կտրուկ փոփոխություն կրեց ինչպես ժողովրդագրական կազմը, այնպես էլ բնակչության սեռատարիքային կառուցվածքը: Ծնելությունը նվազեց շուրջ 2.2, իսկ ամուսնությունների թիվը՝ գրեթե 2 անգամ:

2002-2007 թթ. Արտաքին միգրացիոն տեղաշարժերի ծավալները կազմել են՝ արտահոսք՝ մոտ 750 հազար մարդ, ներհոսք՝ գրեթե 600 հազար մարդ, բացասական մնացորդ՝ շուրջ 150 հազար մարդ: Այս շրջանում տարեկան միջին հաշվով արտաքին միգրացիոն բացասական մնացորդը կազմել է գրեթե 25 հազար, որից 9 հազարը էմիգրացվել է մշտապես, իսկ 15-20 հազարը աշխատանքային միգրանտներ են, որոնք շարունակում են մնալ ընդունող երկրներում:

Մյուս կողմից պետք է փաստել, որ արտագաղթողների կողմից երկիր փոխանցվող դրամական միջոցները էապես մեղմեցին և շարունակում են մեղմել բնակչության անվճարունակության խնդիրը:

Ակներև է մի բան, որ վերջին 20 տարիների արտագաղթածները դժվար թե մասսայաբար վերադառնան, սակայն, հաշվի առնելով հայրենիքի հետ ունեցած սերտ կապերը, որոշակի սեգմենտի հայրենադարձությունը նույնպես չենք կարող բացառել:

ՀՀ միգրացիոն հոսքերում իր ծանրակշիռ տեղը ունի սեզոնային աշխատանքային միգրացիան: Այս հոսքը, որն առավելապես Ռուսաստանի Դաշնություն և նախկին ԽՍՀՄ երկրներ է ուղղված, ընդամենը լուծում է գոյատևման հարց: Մեկնողներն հիմնականում զբաղված են շինարարության, տրանսպորտի, առևտրի և սպասարկման ոլորտում և որպես կանոն, կատարում են ցածր որակավորում ունեցող աշխատանք: Կասկածից վեր է այն փաստը, որ հետագայում արտաքին միգրացիոն հոսքերը զգալի չափով կանխորոշվելու են արտերկրում կուտակված աշխատանքային տևական միգրանտների հետագա միգրացիոն վարքագծով: Առա-

վել մեծ խնդիր է ոչ թե նրանցից մեծ մասի չվերադառնալը, այլև իրենց ընտանիքների տեղափոխումը:

Այսպիսով՝ Հայաստանի միգրացիոն վիճակը մնում է բավականին բարդ և պահանջում հրատապ լուծումներ: Դրա հիմնական պատճառներն են աշխատանքի և արժանավայել գոյատևման համար անհրաժեշտ եկամուտների բացակայությունը, սոցիալ տնտեսական ոլորտում առկա հիմնախնդիրները, տարածքային զարգացման անհամաչափության խնդիրները:

ՀՀ-ում միգրացիան հանգեցնում է մի շարք հիմնախնդիրների, որոնցից կարելի է առանձնացնել՝

- Բնակչության ծերացում
- Վերարտադրության գործընթացի բարդացում
- Բնակչության թվի նվազում
- Աշխատանքային միգրանտների տևական բացակայության պատճառով ընտանիքների կայունության խախտում և այլն:

Պետության հզորության հարցում անքննելի է ժողովրդագրական բնութագրիչների դերը: Գիտականորեն հիմնավորված է, որ ազգային հզորությունը կարող է ներկայացվել հետևյալ բանաձևով՝

ԱՀ=(ԲԺՏԲ+ ՏԿ + ՈԿ)*(ՄՆ+ԱՍԿ) [1, 404-405]

Որտեղ՝

ԱՀ-ն ազգային հզորությունն է,

ԲԺՄԲ-ն՝ բնակչության ժողովրդագրական և տարածքային բնութագրիչները,

ՈԿ-ն՝ ռազմական կարողությունը

ԱՍԿ-ն՝ ազգային ստրատեգիային հետամուտ լինելու կամքը:

Բանաձևից պարզ է դառնում, թե որքան փոխկապակցված են առօրյա կյանքում միմյանց հետ առնչություն չունեցող աշխատավարձի մեծությունն ու պետության ռազմական կարողությունը, հարկային համակարգն ու տարածքի օգտագործման մակարդակը և այլն: Այդպես է նաև արտագաղթի պարագայում , խնդիրը պետք է ուսումնասիրվի համակողմանիորեն հաշվի առնելով դրա վրա ազդող բոլոր գործոններն ու դրանից ծագող հետևանքները:

Հաշվի առնելով հիմնախնդրի սրության աստիճանը ՀՀ-ում, կարող ենք ասել, որ այս ոլորտը ենթակա չէ ինքնակարգավորման, ավելին, պետության աղյունավետ միջամտության բացակայությունը կարող է էլ ավելի վատթարացնել իրավիճակը:

Պետությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ արտագաղթին նպաստող գործոնները կանխելու համար: Այդ նպատակով դեռևս անկախության առաջին տարիներին ստեղծվեց հատուկ մարմին, որը պետք է զբաղվեր միգրացիոն խնդիրներով, այն իր գոյության

ընթացքում կրել է տարբեր անվանումներ, սակայն ունեցել է մեկ առաքելություն, այն է, զբաղվել միգրանտների խնդիրներով և անհրաժեշտության դեպքում մշակել համապատասխան քաղաքականություն:

ՀՀ արտագաղթի հիմնական կառուցվածքը, միտումները, ուղղությունները, ինչպես նաև դրանց դրդապատճառները բացահայտելու համար ներկայացնենք Եվրոպական վերապատրաստումների հիմնադրամի կողմից պատվիրված հարցման արդյունքները: Հարցումն անցկացվել է ՀՀ ամբողջ տարածքով: Հետազոտության շրջանակներում ՀՀ բնակչությունը դասակարգվել է երեք խմբերի՝ չմեկնածներ, պոտենցիալ մեկնողներ և վերադարձածներ:

Հետազոտության արդյունքներով պարզ է դառնում, որ չմեկնածների խմբում 34%-ը մտադրություն ունի մեկնել ՀՀ-ից, ընդ որում վրջիններիս ավելի քան 80% հավանական է համարում հայրենիքի լքումը մոտակա երկու տարիների ընթացքում: Վերադարձածների խմբում, ի տարբերություն չմեկնածների, կրկին մեկնելու մտադրություն ունի 68.4%-ը, որոնցից 65.7%-ը մոտակա երկու տարվա ընթացքում:

Ամբողջ հետազոտական աշխատանքը վկայում է այն մասին որ Հայաստանից մեկնել ցանկացողները կազմում են բնակչության մեծամասնությունը:

Մենք մեր փոքրիկ հարցումը և հետազոտական աշխատանքը կատարեցինք նաև Գավառ քաղաքում, որի արդյունքում եկանք ցավալի եզրահանգումների: Քաղաքի յուրաքանչյուր 10-րդ տունը բնակչություն չունի, այցելելով բազմաթիվ բնակելի տներ ավելի ցավալի փաստ արձանագրեցինք: Դրանցում հիմնականում ապրում էին 50-ից բարձր տարիք ունեցող մարդիկ, որոնց երեխաները գտնվում են արտերկրում: Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ Հայաստանը լքելուն առավել հակված են երիտասարդ տղամարդիկ, ովքեր ցանկանում են մեկնել արտերկիր հիմնականում աշխատելու նպատակով: Այն հարցին, թե որն է երկիրը լքել ցանկանալու հիմնական պատճառը, հիմնականում նշվեց սոցիալական անարդարությունը, աշխատատեղերի բացակայությունը, ռազմաքաղաքական դրությունը, ինչպես նաը ապագայի նկատմամբ անորոշությունը:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ ներկայումս միգրացիայի հակված են առավելապես երիտասարդները, ինչը իր հերթին հանգեցնելու է երկրում իրականացվող բոլոր տեսակի տնտեսական բարեփոխումների արդյունավետության նվազման, ինչպես նաև խորացնելու է անվտանգությանն առնչվող հիմնահարցերը: Այս ամենը վկայում է երևույթի խորքային ուսումնասիրության անհրաժեշտութան մասին:

Այս ուղղությամբ քայլեր ձեռնարկելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ արտագաղթողների մեծամասնությունը առաջնորդ-

վում են երկարաժամկետ պլանավորմամբ, այսինքն **արտագաղթը խոչընդոտող հիմնական քայլերից մեկը պետք է լինի պետության նկատմամբ վստահության բարձրացումը:** Պետության կողմից կատարվող քայլերն ու մշակած ծրագրերը պետք է հասանելի լինեն հասարակության լայն զանգվածների, մատնանշվի դրանց արդյունքներն ու առավելությունները:

Հաջորդ կարևոր քայլը **բնակչության զբաղվածության ապահովումն է**, բոլոր տեսակի հետազոտությունները վկայում են այն մասին, որ արտագաղթի վրա ազդող կարևորագույն գործոն է հանդիսանում աշխատաշուկայի խնդիրները: Ցավով կարող ենք փաստել, որ ՀՀ-ում ոչ բավարար աշխատատեղերի և ցածր վարձատրության պատճառով արտագաղթում են բնական և ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչները:

Այս առումով պետության ուսերին ծանրանում է երկու կարևոր հիմնախնդիր. բարենպաստ գործարար միջավայրի ստեղծում և աշխատողի ու աշխատատեղերի որակական համապատասխանության ապահովում: Այս խնդրի լուծմանը կարող է նպաստել փոքր և միջին բիզնեսի զարգացումը, օտարերկյա ներդրումների խթանումը:

Այսպիսով՝ եթե փորձենք ընդհանրացնել, կարող ենք նշել, որ ՀՀ-ում արտագաղթի ծավալների կրճատման նպատակով կառավարությունը պետք է առաջնային ուշադրություն դարձնի հետևյալ խնդիրներին.

- Իրականացվող պետական քաղաքականությունը պետք է հնարավորին հասանելի լինի հասարակությանը,
- Բարենպաստ գործարար միջավայրի ստեղծումը,
- Բուհ-աշխատաշուկա կապի ապահովումը և սերտացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Սարգսյան, Ա. Մարդոյան, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները:
2. armstat.am ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն առընթեր Միգրացիոն պետական ծառայություն

ПРИЧИНА И ПОСЛЕДСТВИЯ МИГРАЦИИ В ТЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Мелсида Товмасяан
ГГУ, Экономика, 4-ый курс

РЕЗЮМЕ

***Ключевые слова**:проблемы миграции, уровень безработицы, основные причины миграции, безработица по возрасту, особенности миграционной политики*

В статйе рассматривается причины миграции и ее социально-экономические последствия в Респыблике Арменич. В регулировании миграционных вопросов важную роль играет государство в контексте осуществляемых социально-экономических программ.

CAUSES AND CONSEQUENCES OF EMIGRATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Melsida Tovmasyan
GSU, Economic, 4th year

SUMMERY

***Key words:** migration issues, unemployment level, mai reasons for emigration, unemployment by age, migration policy features*

This article discusses the causes of emigration from the Republic of Armenia and its social and economics consequeences.

The state plays a significant role in the regulation of migration issues, in the contexst of many social-economic programs' implementation.

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Մերի Խոյեցյան
ՎՊՀ, Կառավարում, 3-րդ կուրս
*Գիտ. ղեկավար՝ տ.գ.թ. **Հ. Պապոյան***

Հանգուցային բառեր՝ *Եկամտայի հարկ, աշխատավարձ, նվազագույն աշխատավարձ, աշխատող, եկամուտ, պետական բյուջե, սոցիալական հարկ, սոցիալական ֆոնդ, կենսաթոշակային վճար, հիմնախնդիր, դրույքաչափ, հարկ վճարող, պետություն։*

Պետության ծագման պահից հարկերը համարվել են հասարակության մեջ տնտեսական հարաբերությունների կարգավորման կարևորագույն միջոց: Յուրաքանչյուր երկրի ֆինանսական համակարգում առանձնահատուկ է հարկերի դերը, քանի որ դրանք արտացոլելով բնակչության, տնտեսվարող սուբյեկտների և պետության միջև հարաբերությունների կարագավորվածության աստիճանը, հանդիսանում են երկրի կայունության, ապահովման և պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կենտրոնացման հիմնական գործիք: ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելի քան 90%-ն ապահովվում է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին: Դրանցում մեծ է եկամտային հարկի տեսակարար կշիռը: Այս հարկատեսակի արմատները գալիս են կապիտալիստական կարգերի հաստատման ժամանակաշրջանից: Ստրկատիրական կարգերի փլուզումից հետո կապիտալիստները սկսեցին պահել վարձու աշխատողներ, որոնց պետք էր վճարել: Փաստացի շրջանառության մեջ էր դրվում աշխատավարձ հասկացությունը: Հետևաբար վարձու աշխատողին տրված աշխատավարձից որոշակի պահումներ էին կատարվում, որն էլ հետագայում կոչվեց եկամտահարկ:

Եկամտային հարկը տարբեր երկրներում մշտապես կրում է դինամիկ փոփոխություններ, ունի մեծ սոցիալական էֆեկտ, վերաբերում է հասարակության մեծ մասին, որովհետև բնակչության մեծամասնությունը ընդգրկված է աշխատանքային հարաբերություններում: Երկրի գործարար ակտիվության վիճակը նաև կախված է հարկային պարտավորություններց, որոնց մեջ մեծ մասնաբաժին ունի եկամտային հարկը, որն էլ ներկայումս գտնվում է փոփոխությունների փուլում:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել արտասահմանյան երկրներում աշխատավարձից գանձվող հարկերի տեսակները, դրանց առանձնահատկությունները և կիրառման հնարավորությունները Հայաս-

տանում: Իրականացնել համեմատական վերլուծություն տարբեր երկրներում եկամտային հարկի դրույքաչափերի վերաբերյալ և ներկայացնել որոշակի առաջարկություններ Հայաստանում օտարերկրյա փորձի տեղայնացման ուղիների մասով:

ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացման տեսանկյունից կարևոր քայլ դարձավ 2013թ. եկամտահարկի մասին օրենքում կատարված փոփոխություններն, երբ ուժի մեջ մտավ «Եկամտային հարկի մասին» նոր օրենքը և որով էլ ուժը կորցրած ճանաչվեցին «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները: Այս փոփոխությունը հիմնականում պայմանավորված էր երկրում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումներով և հետապնդում էր համապատասխան հիմնադրամի ձևավորման և տնտեսական շրջանառության մեջ, այսպես կոչված, «երկար փողերի» ներդրման նպատակով: Եկամտային հարկը հարկ վճարողների կողմից (օրենքով սահմանված դեպքերում հարկային գործակալի՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի միջոցով) օրենքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է [1]:

Հարկային գործակալի կողմից եկամտային հարկի հաշվարկման դրույքաչափերը

Աղյուսակ 1

Ամսական հարկվող եկամտի չափը	**Հարկի գումարը**
Մինչև 120000 դրամ	Հարկվող եկամտի 24.4 տոկոսը
120000-2000000 դրամ	29280 դրամին գումարած 120000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը
2000000 դրամից ավելի	518080 դրամին գումարած 2000000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

Հարկային գործակալի միջոցով չհարկված եկամուտներից եկամտային հարկի հաշվարկման դրույքաչափերը

Աղյուսակ 2

Տարեկան հարկվող եկամտի չափը	**Հարկի գումարը**
մինչև 1.440.000 դրամ	Հարկվող եկամտի 24.4 տոկոսը
1.440.000 դրամից ավելի	351.360 դրամին գումարած 1.440.000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը

Եկամտային հարկը նախորդ 10 տարիների ընթացքում արմատապես փոփոխություն է կրել միայն 2013թ., այդ ժամանակ օրենքում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ. եկամտահարկը վերափոխվեց դառ-

նալով եկամտային հարկ, որը իր մեջ ամփոփեց բոլոր տեսակի սոցիալական հարկերը և հանդես եկավ մեկ միասնական հարկի տեսքով [2]:

Եկամտային հարկի դինամիկան 2007-2015թթ.

Աղյուսակ 3

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Եկամտային հարկ,մլրդ. դրամ	74,6	53,7	60,2	73,9	81,2	91,7	256,9	289,2	311,7
Եկամտային հարկ/ՀՆԱ, %	2,4	1,5	1,9	2,1	2,1	2,2	5,6	6	6,2
Եկամտահարկի և եկամտային հարկի դրույքաչափեր	10	10	10	10	10	10	24,4	24,4	24,4
	20	20	20	20	20	20	26; 36	26; 36	26; 36

Տարբեր երկրներում աշխատավարձից գանձվող հարկերը տարբեր են, տաբեր են դրանց դրույքաչափերը, վճարման պայմաններն ու հարկ վճարողները:

ԱՄՆ-ում յուրաքնչուր հարկ վճարող պետությանը ներկայացնում է հայտարարագիր իր եկամուտների մասին: Եկամտային հարկի տոկոսադրույքը կախված է անհատի հետևյալ կարգավիճակներից, այդ թվում՝

1) անհատներ, ովքեր ամուսնացած են և ներկայացնում են միասին,
2) անհատներ, ովքեր ամուսնացած են, բայց ներկայացնում են առանձին-առանձին,
3) անհատներ, ովքեր միայնակ են,
4) անհատներ, ովքեր հանդիսանում են հիմնական կերակրող,
5) անհատներ, ովքեր հանդիսանում են միայնակ ծնող (միայնակ մայր կամ միայնակ հայր):

Երեխաները նույնպես ներկայացնում են հայտարարագիր և վճարում հարկեր: Մինչև 14 տարեկանը եկամուտի որոշված չեմը հաղթահարելու դեպքեում վճարում են ամենաբարձր հարկը:

ԱՄՆ-ում աշխատավածից նվազեցնում են հարկերի հետևյալ տեսակները՝

1. Դաշնային եկամտային հարկ

Ամբողջ ԱՄՆ-ի տարածքում այս հարկատեսակը նույնն է: Սակայն այն կախված է աշխատավարձի չափից: Կազմված է հարկման սանդղակ և այն հաշվարկվում է աճողական ձևով: Բացի այդ այն նաև կախված է ընտանեկան կարգավիճակից: Օրինակ՝ եթե Դուք ապրում եք միայնակ և ստանում եք $75000 աշխատավարձ, ապա Ձեր դաշնային եկամտային հարկը կկազմի 18%:

2. Նահանգի եկամտային հարկ

Այն կախված է, թե որ նահանգում է ապրում հարկատուն: Յուրաքանչյուր նահանգում տոկոսադրույքը տարբեր է, միջինում այն կազմում է 6,55%: Կան նաև որոշ նահանգներ, որտեղ այս հարկատեսակը բացակայում է: Որոշ նահանգներում այն ֆիքսված է, իսկ որոշներում՝ ունի աճողական բնույթ:

3. Սոցիալական ֆոնդին վճարվող հարկ

Այս հարկատեսակը աշխատավարձից նվազեցվում է 4,2%, իսկ բացի այդ գործատուն աշխատավարձի 6,2% նույնպես վճարում է որպես հարկ: Եթե դուք աշխատում եք Ձեզ համար, ընդհանուր 10,4% վճարվում է սոցիալական ֆոնդին:

4. Առողջապահական ֆոնդին հատկացվող հարկ

Այս հարկատեսակը աշխատավարձից նվազեցվում է 1,45%, իսկ գործատուն իր կողմից վճարում է ևս 1,45%: Եթե դուք աշխատում եք Ձեզ համար, ընդհանուր ստացվում է 2,9% [3]:

Ֆրանսիայում եկամտային հարկը հարկում են ընտանիքից: Մեկ մարդը նույնպես համարվում է ընտանիք: Ամուսինները հայտարարագիր ներկայացնում են միասին, որը ներառում է բոլոր ծախսերը և եկամուտնորը: Առանձին ներկայացնում են այն դեպքում, երբ ապրում են առանձին և ունեն տարբեր եկամուտներ: Ուսումնառության տարիների ընթացքում եկամտային հարկ չի գանձվում:

Եկամտային հարկի տոկոսադրույքը կախված է եկամուտի չափից: Տարեկան հաշվարկով մինչև 5963€ եկամտի դեպքում եկամտային հարկեր է գանձվում, 5963-11896€ գանձվում է 5,5%, 11897-26420€՝ 14%, 26421-70830€՝ 30%, 70831-150000€՝ 41%, 150001-1000000€՝ 48-49%:

Հարկման ենթակա եկամուտից նվազեցումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Եկամուտ/ընտանեկան գործակից

Ընտանեկան գործակիցը հաշվարկվում է հետևյալ գործակիցների գումարման միջոցով.

- Յուրաքանչյուր չափահաս մարդու գործակից՝ 1
- I և II երեխայի համար յուր. երեխան՝ 0,5
- III և ավելի երեխայի համար յուր. երեխան՝ 1

Գերմանիայում,համաձայն ընտանեկան կարգավիճակի, հարկերը բաժանվում ես հետևյալ դասերի.

I. ով չունի ընտանիք և երեխա կամ բաժանված է,
II. ով համարվում է միայնակ մայր կամ միայնակ հայր,
III. ում կինը կամ ամուսինը չի աշխատում,
IV. ով ունի ընտանիք,
V. ում կինը կամ ամուսինը քիչ է վարձատրվում,

VI. ով աշխատում է մի քանի տեղ:

Գերմանիայում չհարկվող աշխատավարձի շեմը համարվում է 8130€: 8130-13496€ եկամուտի դեպքում հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ (937,70*y+1400)*y, որտեղ y=(s(եկամուտ)-8130)/10000, 13470-52881€՝ (228,74*z+2397)*z +1014, որտեղ z=(s-13469)/10000, 52882-250730€՝ 0,42*s-2196, 250731€ և ավելի եկամտի դեպքեում՝ 0,45*s-15718:

Իսպանիայում 2015թ.-ին սկսվել են բարենպաստ հարկային փոփոխություններ: 2014թ.-ի համեմատությամբ եկամտային հարկի մինիմալ շեմը նվազել է 24,7%-20%: Մաքսիմալ շեմը այդ տարի նվազել է 5%-ով(52%-47%): 2016թ.-ի կառավավարության որոշմամբ ևս եղել են որոշ փոփոխություններ: 2015թ.-ի համեմատությամբ մինչև 12450€ եկամուտի դեպքում վճարվող 20%-ի փոխարեն վճարվում է 19%, 12451-20200€՝ 25%-24%, 20201-35200€՝ 31%-30%, 35201-60000€՝ 39%-37%, 60001€ և ավելի եկամտի դեպքում՝ 47%-45%:

Չհարկվող աշխատավարձի շեմը կազմում է 12000€(0% եկամտային հարկ), 1 երեխայի դեպքում՝ 12607€, 2 և ավելի անչափահաս երեխայի դեպքում՝ 13275€: Եթե անհատը ամուսնացած է մեկի հետ, ում աշխատավարձը տարեկան կազմում է 1500€, չհարկվող աշխատավարձի շեմը կազմում է 13696€ (առանց երեխայի), 14985՝ 1 երեխայի դեպքում, 17138€՝ 2 և ավելի երեխայի դեպքում [6]:

Բացի եկամտային հարկը, աշխատողը իր աշխատավարձից վճարում է սոցիալական վճար 6,35%-ի չափով, ևս 38% գործատուն իր կողմից է վճարում:

Նորվեգիայում կա մի հետաքրքիր փաստ հարկային քարտեզի հետ կապված: Հարկային քարտեզը տրամադրվում է յուրաքանչյուր աշխատողի, երբ նա անցնում է աշխատանքի: Այն իրենից ներկայացնում է աշխատանքային գրքույկ: Եթե հանկած աշխատողը չունի հարկային քարտեզ, ապա նրա աշխատավածից հարկային պահումը կազմում է 50% [4]:

Հարկերը հիմնականում կախված են աշխատավածից և հասանելի զեղչերից: Նորվեգիայում գոյություն ունեն 2 դասի աշխատողներ.

Դաս 1՝ միայնակ անձիք, ամուսնացած անձիք, որտեղ երկուսն էլ աշխատող են,

Դաս 2՝ միայնակ մայրը կամ հայրը, անձիք, ովքեր ամոսնացած են, բայց աշխատում է նրանցից միայն մեկը:

Աշխատավարձից կատարում են հետևյալ նվազեցումները.

1) Պարտադիր ապահովագրության նվազեցում

Վճարվում է աշխատավարձից հարկային զեղչերը հանելուց հետո: Վարձու աշխատողի դեպքում նվազեցվում է 8,2%, իսկ անհատ ձեռնե-

րեցի դեպքում՝ 11,4%: Չհարկվող սոցիալական հատկացումների նվազագույն շեմը համարվում է 49650 նորվեգական կրոն տարեկան:

2) Եկամտային հարկի նվազեցում

Եկամտային հարկը կազմում է 27%, անձնական զեղչերը հանած: Այն իր մեջ պարունակում է տեղական կառավարման հարկ՝ 13,95% և պետական հարկ՝ 13,05%: Ֆինմարկ մարզում պետական հարկը ցածր է՝ 9,55%: Անձնական զեղչերը կազմում են 50400 կրոն տարեկան I դասի համար և 74250 կրոն՝ II դասի համար: Ֆինմարկում կա լրացուցիր անհատական զեղչ՝ 15500կրոն յուրաքանչյուր դասի համար:

3) Լրացուցիր հարկ

Հարկվում է կեղտոտ աշխատավարձից: Մինչև 550550 կրոն տարեկան հարկվում է 0%, 550551-885600 կրոն՝ 9% (Ֆինմարկում՝ 7%), 8856001 կրոն և ավելիի դեպքում՝ 12%:

4) Այլ հարկեր և զեղչեր

Լրացուցիչ «Հարկ հարստության համար»: Միայնակ մարդկանց դեպքում գանձում են, երբ եկամուտը կազմում է 120 000 000կրուն և ավելի, իսկ ընտաիք ունեցողների դեպքում՝ 240 000 000կրոն և անելի: Այն իր մեջ պարունակում է 0,7% տեղական կառավարման հարկ և 0,15% պետական հարկ:

Շվեդիայում եկամտային հարկը մինչև 18824 շվեդական կրոնը չի գանձվում: 18825-443300 կրոնի դեպքում գանձվում է տեղական բյուջե, որը հիմնականում կազմում է 29-35%՝ կախված աշխատավարձի չափից և բնակավայրից, ամեն մարզ ունի իր ֆիքսված տոկոսադրույքը: 443001-629200 կրոնի դեպքում վճարում են լրացուցիչ պետական հարկ 20%-ի չափով: 629201 կրոնից ավելիի դեպքում գանձվում է նաև ավել գումարի 5%-ը:

Ֆինլանդիայում եկամտային հարկի մեջ մտնում են եկեղեցական հարկը: Եկամտային հարկը կախված է եկամտի չափից: Կազմում է 6-31%: Չհարկվող եկամտի շեմը համարվում է 16000€ տարեկան(0%): 16000-24000€-ի դեպքում գանձվում է 6%, 24000-39600€՝ 17%, 39600-71300€՝ 21,4%, 71300-100000€՝ 19,7%, 100000€ և ավելիի դեպքում՝ 31,7%:

Ֆինլանդիայում սոցիալական հարկը կազմում է 30%:

Ռուսաստանում եկամտային հարկը տատանվում է 9-35%: Հիմնական տոկոսադրույքը 13% է: Սակայն կան որոշ դեպքեր, երբ այն փոփոխվում է.

- ✓ 35% – շահումների և մրցանակների դեպքում, կախված չափից, ավանդի տոկոսից ստացված եկամուտի դեպքում,
- ✓ 30% – ոչ ռեզիդենտներից, բացի այն դեպքում, երբ դիվիդենտ ստացվում է մասնաբաժնից,

✓ 15% – ոչ ռեզիդենտներից, ովքեր ստանում են դիվիդենտ մասնաբաժնից,

✓ 9% – այն եկամուտի դեպքում, երբ

1. մասնաբաժինը ստացվել է դիվիդենտից,

2. կատարել է հիփոթեկային վճարներ մինչև 2007թ. հունվարի 1-ը [5]:

Հետևյալ տոկոսներից բացի, որոնք վճարում է աշխատողը իր աշխատավարձից, գործատուն ևս կատարում է որոշակի վճարումներ: Դրանք են՝

- Կենսթոշակային վճար՝ 22%,
- Առողջապահական ապահովագրության վճար՝ 5,1%,
- Սոցիալական ապահովագրության վճար՝ 2,9%,
- Սոցիալական ապահովագրություն՝ 0,2%:

Ղազախստանում աշխատավարձից կատարում են հետևյալ նվազեցումները.

1. Պարտադիր կեսաթոշակային վճար, որը կազմում է 10%,

2. Սոցիալական վճար՝ կեղտոտ աշխատավարձից հանվում է պարտադիր կեսաթոշակային վճարը և հաշվարկվում ստացված տվի 5%-ը,

3. Սոցիալական հարկ՝ կեղտոտ աշխատավարձից հանվում է պարտադիր կեսաթոշակային վճարը, հաշվարկվում ստացված թվի 10%-ը և հանվում սոցիալական վճարը,

4. Անհատական եկամտային հարկ՝ կեղտոտ աշխատավարձից հանվում է պարտադիր կեսաթոշակային վճարը, նվազագույն աշխատավարձը (որը կազմում է 22859տենգի), հաշվարկվում ստացված թվի 10%-ը,

5. Մաքուր աշխատավարձ՝ կեղտոտ աշխատավարձից հանվում է պարտադիր կեսաթոշակային վճարը և անհատական եկամտային հարկը:

Ղրղզստանում աշխատավարձից կատարում են հետևյալ նվազեցումները.

1) Կեղտոտ աշխատավարձից հանվում է նվազագույն աշխատավարձը, որը Ղըրղըզստանում կազմում է 650սոմ,

2) Ստացված թվից նվազեցվում է սոցիալական ֆոնդին հատկացվող վճարը, որը կազմում է 8%,

3) Ստացված թվից նվազեցվում է 10% եկամտային հարկ, իսկ արդյունքում ըստացվում է մաքուր աշխատավարձ:

Արդյունքում ստացվեց հետևյալ պատկերը.

Աշխատավարձից նվազեցվող հարկերը ըստ երկրների

Աղյուսակ 4

Երկիր	Աշխատավարձից նվազեցվող հարկեր	
ԱՄՆ	Դաշնային եկամտային հարկ	18%
	Նահանգի եկամտային հարկ	6,55%
	Սոցիալական հարկ	4,2%
	Առողջապահական վճար	1,45%
Ֆրանսիա	Մինչև 5963€	0%
	5963-11896€	5.5%
	11897-26420€	14%
	26421-70830€	30%
	70831-150000€	41%
	150001-1000000€	45%
	1000000€ և ավելի	48-49%
Գերմանիա	Մինչև 8130€	0%
	8130-13469€	(93770*y+1400)*y Y=(s-8130)\10000
	13470-52881€	(228.74*z+2397)*z+1014 Z=(s-134690)\10000
	52882-250730€	0.42*s-8196
	250731€ և ավելի	0.45*s-15718
Իսպանիա	Մինչև 12450€	19%
	12451-20200€	24%
	20201-35200€	30%
	35201-60000€	37%
	60001€ և ավելի	45%
	Սոցիալական վճար	6,35%
Նորվեգիա	Պարտադիր ապահովագրության նվազեցում 1. Վարձու աշխատողից	8,2%
	2. Անհատ ձեռներեցից	11,4%
	Եկամտային հարկ 1. Տեղական կառավարման հարկ	13,95%
	2. Պետական հարկ	13,5%
	Լրացուցիր հարկ Մինչև 550550կրոն	0%
	550551-885600կրոն	9%

	885601կրոն և ավելի	12%
Շվեդիա	Մինչև 18824 կրոն	0%
	18825-443300 կրոն	29-35% (1)
	443301-629200 կրոն	(1)+20%
	629201 կրոն և ավելի	Գերազանցող մասի 5%-ը
Ֆինլանդիա	Մինչև 16000€	0%
	16000-24000€	6%
	24000-39600€	17%
	39600-71300€	21,4%
	71300-100000€	29,7%
	1000000€	31,7%
Ռուսաստան	Եկամտային հարկ	13%
Ղազախստան	Պարտադիր կենսաթոշակային վճար	10%
	Սոցիալական վճար	5%
	Սոցիալական հարկ	10%
	Անհատական եկամտային հարկ	10%
Ղրղզստան	Սոցիալական ֆոնդին հարկացվող վճար	8%
	Եկամտային հարկ	10%

Ամփոփելով ուսումնասիրությունները՝ տարբեր երկրներում աշխատավարձից գանձվող հարկերի, տարատեսակ սոցիալական վճարների վերաբերյալ, գալիս ենք այն համոզմանը, որ կան որոշ երկրներ, որոնք ունեն զարգացած հարկային համակարգ, և եթե անգամ գրանցվում է բարձր դրույքաչափեր, ամեն կերպ հաշվի է առնվում բնակչության սոցիալական վիճակը: Եվրոպական զարգացած շատ երկրներում աշխատավարձի տարբեր մակարդակների դեպքում գանձվում է տարբեր տոկոսադրույք, այսինքն կատարված է տարբերակում և հստակ դասակարգած է, թե որքան աշխատավաձի դեպքում, որքան եկամտային հարկ է պահվում: Հայաստանում, միջակայքերը, որոնք ֆիքսված են աշխատավարձից եկամատային հարկի նվազեցումները կատարելու համար, քիչ են: Կա ընդամենը 3 միջակայք, որոնք սակայն լիովին չեն բնութագրում աշխատավարձի իրական մեծությունը: Դա թերություն է, որը մեր կարծիքով կարիք ունի վերանայման: Ինչպես նաև շատ երկրներում առկա է չհարկվող աշխատավարձի շեմ, որը ևս բացակայում է Հայաստանում: Առաջարկում ենք սահմանել աշխատավարձի շեմ, որի դեպքում եկամտային հարկը հավասար կլինի 0%-ի: Առաջարկում ենք նաև ավելացնել միջակայքերը և յուրաքանչյուրի համար սահմանել համապատասխան

տոկոսադրույք՝ մինչև 50000 դրամի դեպքում՝ 0%, 50000-120000 դրամ՝ 24,4%, 120000-1000000 դրամ՝ 26%, 1000000-2000000 դրամ՝ 30%, 2000000 դրամ և ավելիի դեպքում՝ 36%:

Շատ երկրներում աշխատավարձից պահումներ կատարելիս դիտարկվում է, թե ինչ ընտանեկան կարգավիճակում է գտնվում անհատը, ամուսնացած է, թե ոչ, քանի անչափահաս երեխա կա ընտանիքում, քանի հոգուց է բաղկացած ընտանիքը և այլն: Հայաստանում ընդհանրապես ուշադրություն չի դարձվում աշխատողի ընտանեկան և սոցիալական իրավիճակին: Օրենքի մեջ ըստ սոցիալական կարգավիճակի տարբերակումներ չկան: Մեր կարծիքով նպատակահարմար է ՀՀ-ում կիրառել ընտանիքի անդամների թվաքանակից կախված եկամտային հարկի հարկման չափի և դրույքաչափի տարբերակման մոտեցումը, որը մասնավորապես կիրառվում է Ֆրանսիայում:

Հաջորդ բացը, որը մեր կարծիքով արժանի է մատնանշման, վերաբերում է հարկերի լրիվ գանձում պետական բյուջե: Դա բացասական կողմ է երկրի տնտեսական կյանքում: Որոշ երկրներում, կախված տարբեր հանգամանքներց, աշխատավարձից գանձվող որոշ հարկեր գնում է տեղական բյուջե: Այդպիսի երկրներ թվին են պատկանում ԱՄՆ, Նորվեգիան, Շվեդիան և այլն: Այս երկրների փորձը Հայաստանում կիրառելու դեպքում կզարգանան տեղական բյուջեն, ընդ որում դրա համընթաց զարգացումն էլ մեկ այլ հիմնախնդիր է հանդիսանում Հայաստանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայություն:
2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:
3. http://blog.olegdubas.com/
4. http://www.norge.ru/nalogy/
5. https://www.nalog.ru
6. http://www.espanarusa.com/

ЗАРУБЕЖНЫЙ ОПЫТ РАСЧЕТА НАЛОГОВ С ЗАРАБОТНОЙ ПЛАТЫ И ВОЗМОЖНОСТИ ВНЕДРЕНИЯ В РА

Мери Хоецяан
ВГУ, Управление, 3-ий курс

РЕЗЮМЕ

Ключевые слова*-подоходный налог, заработная плата, минимальная зарплата, работник, доход, Гос бюджет, социальный налог, пенсионный фонд, основная задача, ставка, налогоблательчик, госвударство*

Подоходный налог в разных странах всегда носит динамические изменения, имеет большой социальный эффект, относится к большой части общества, потому что большество населения включены в трудовые отношения. Эта статья относится к зарубежному опыту по налогам от зарплаты и возможности иссведованное внедрениия в Армении. По этому поводу исследованы виды нологов от зарплаты, анализ ставок подоьодного налога, динамика изменеия подоходого налога в Армении в 2007-2015гг., сделано сравнение налогов от зарплаты с зарубежными странами и внедрениея возможности в Армении. В статье представлены некоторые предложения по части локализации направлений зарубежного опыта в Армении.

STUDY OF THE FOREIGN EXPERIENCE OF WAGE-TAX AND ITS APPLICATION POSSIBILITIES IN REPUBLIC OF ARMENIA

Mary Khoyetsyan
VSU, Management, 3th year

SUMMARY

Key words*: income tax, wages, minimum wage, employee, income, State budget, social tax, pension fund, prpblem, rate, ratepayer, state*

The income tax is constantly being changed dynamically in different countries, it has a big social effect, it relates to the big part of society, because the majority of population is engaged in labor relations. This article is devoted to the study of the foreign experience of wage-tax and its application possibilities in Republic of Armenia. For that purpose we have explored all the kinds of wage-tax, the rates of income tax and the dynamics of income tax change in the Republic of Armenia in 2007-2015 and we have shown the comparison of wage-tax in different developed countries and the possibilities of foreign experience application in Republic of Armenia. In this article there are represented some suggestions about localization paths of foreign experience in Republic of Armenia.

2013-2015 ԹԹ. ԵՏՄ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳՆԱՁԻ ԵՎ ՌՈՒԲԼՈՒ ԿՈՒՐՍԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Շուշանիկ Աբովյան
Վանաձորի պետական համալսարան,
Պատմաաշխարհագրական ֆակուլտետ
«Կառավարում» մասնագիտություն, 4-րդ կուրս
Գիտ. Ղեկավար՝ տ.գ.թ ***Հրայր Պապոյան***

Հանգուցային բառեր՝ *ներմուծում, գնաճ, արժույթի կուրս, գնողունակություն, ԵՏՄ, փոխարինման էֆեկտ*

2013-2015թթ. եղավ շրջադարձային ՀՀ տնտեսության համար, քանի որ այն թևակոխեց տնտեսական նոր փուլ: Այդ անցումը կապված էր մի կարևոր հանգամանքի հետ. ՀՀ-ն 2013թ. սեպտեմբերի 3-ին հայտարարեց «Մաքսային միության»-ը միանալու պատրաստակամության մասին՝ միաժամանակ հայտնելով ԵՄ-ի հետ տնտեսական համագործակցությունը շարունակելու ցանկություն [4]: ՀՀ-ն անդամակցեց ԵՏՄ-ին 2015թ. հունվարի 1-ից: Ըստ կանխատեսումների ԵՏՄ-ին անդամակցելը բազմաթիվ արտադրողների հնարավորություն կտար արտահանել իրենց արտադրանքը և գրավել նոր շուկաներ՝ մեծացնելով ՀՀ-ից արտահանման ծավալները: Սակայն դա տեղի չունեցավ, քանի որ 2013-2015թ. տեղի ունեցավ նավթի գների անկում. այն հասավ իր ամենացածր մակարդակին՝ 2014թ. կազմելով 29$ 1 բարելի համար: Նավթի գնի նվազումը հանգեցրեց ռուբլու կուրսի կտրուկ անկման, քանի որ ՌԴ-ի արտահանման ծավալների գերակշիռ մասը բաժին էր ընկնում նավթին: ՀՀ-ից արտահանման ծավալների մեծ մասը բաժին է ընկնում ՌԴ-ին, հետևաբար ռուբլու արժեզրկումը մեծ ազդեցություն ունեցավ ՀՀ արտահանման ծավալների վրա: Դրամը արժևորվեց ռուբլու նկատմամբ: Արժույթի արժեվորման դեպքում դրսևորվում են երկու հակադիր էֆեկտներ. գնի էֆեկտ, որը նվազեցնում է հաշվեկշռի պակասորդը, ծավալի էֆեկտ, որը ընդլայնում է այդ պակսորդը: Գնի էֆեկտի կայանում է նրանում, որ արժևորման արդյունքում արտահանումը թանկանում է, ներմուծումը՝ էժանանում, ինչը դրական է անդրադառնում առևտրային հաշվեկշռի վրա: Ծավալի էֆեկտի էությունը կայանում է նրանում, որ արտահանման թանկացումը նվազեցնում է արտահանումը, իսկ ներմուծման էժանացումը ընդլայնում է այն, ինչը բացասական է անդրադառնում առևտրային հաշվեկշռի վրա[1,233]:

ՀՀ-ից արտահանումը 2014-2015թթ. կրճատվել է 4.7%-ով, ընդ որում, դեպի ԵՏՄ նվազել է մոտ 27%-ով, ԵՄ՝ 5.8%-ով: Հատկապես նվազել է արտահանումը դեպի ՌԴ՝ 28.1%-ով և Եվրասիական տնտեսական միության մյուս երկրներ, օրինակ, Բելառուս՝ 41.9%-ով, Ղազախստան՝ 30.1%-ով, բացի այդ Ուկրաինա՝ մոտ 50%-ով: Արտահանման ծավալները էական կրճատվել են դեպի Գերմանիա՝ 7.1%, Բուլղարիա՝ 11.4%, Նիդեռլանդներ՝ 37.3%: Դեպի ԵՏՄ երկրներ արտահանման ծավալների անկում հիմնականում կապված էր արտահանման գների աճով: Արտահանման գները աճեցին շուրջ 15 %-ով, ինչը ՀՀ արտադրանքը դարձրեց քիչ մրցունակ: Ամփոփելով ասվածը՝ նշենք մի հանգամանք, որը նկատելի էր արդեն 2014թ. սկսած և ավելի ընդգծվեց ԵՏՄ-ի շրջանակում 2015թ.-ի ընթացքում, ՀՀ արտաքին առևտրի ծավալների նվազումն էր ՌԴ-ի և ԵՏՄ անդամ երկրների հետ (Բելառուս և Ղազախստան):

2013-2015թթ. տեղի ունեցավ ՀՀ ներմուծման ծավալների փոփոխությունը, որը էական ազդեցություն թողեց ՀՀ գնաճի մակարդակի վրա: ՀՀ-ում գնաճային կտրուկ փոփոխություններ ի հայտ եկան 2013-2015թթ: Գնաճի մակարդակի վրա իր ազդեցությունը թողեց ռուբլու կտրուկ արժեզրկումը, որի պատճառով ներմուծումը կատարվում էր ցածր գներով, ինչը իր հերթին խոչընդոտ հանդիսացավ հայրենական արտադրողի համար, քանի որ թողարկված արտադրանքը դարձավ ոչ մրցունակ: Այս ամեն հանգեցրեց ՀՀ-ում գնանկման 2015թվականին: Ներկայացնենք 2013-2016թթ. Գնաճի դինամիկան [2]:

Աղյուսակ 1:
Գնաճի դինամիկան 2013-2016թթ.

	2013	2014	2015	2016 (կանխատեսում)
Գնաճ (12-ամսյա)%	5.8	4.6	-0.1	-2.3

Այժմ ներկայացնենք գնաճի դինամիկան գրաֆիկական պատկերմամբ

Գծապատկեր 1:
Գնաճի դինամիկան 2013-2016թթ.



Գնաճի ցուցանիշներից պարզ է դառնում, որ 2013-2014թթ. գնաճի մակարդակը նվազել է՝ 5.8%-ից հասնելով 4,6% , իսկ 2015թ. ունեցել ենք 0,1% գնանկում: Ըստ ԿԲ-ի կանխատեսումների 2016թ. նույնպես տեղի կունենա գնանկում 2,3%-ով: 2015թ. գնանկումը պայմանավորված էր հիմնականում ռուբլու արժեզրկմամբ, քանի որ Հայաստան ներմուծվող ապրանքների մեծ մասը Ռուսաստանից էր: Ռուսաստանում ռուբլու արժեզրկմամբ պայմանավորված տեղի ունեցավ արտահանման գների կտրուկ փոփոխություն: Արտահանման գների մակարդակը կապված է գնաճից և ռուբլու կուրսից: Ներկայացնենք նրանց դիմանիկան 2013-2015թթ. [9] [10]:

Աղյուսակ 2:
Գնաճի, ռուբլու կուրսի և արտահանման ծավալների դինամիկան 2013-2015թթ.

	2013	2014	2015
Գնաճ(%)	6,25	11,36	12,91
Ռուբլու կուրսի փոփոխ(%)	↓2,46	↓18,76	↓60,33
Արտահանման գների փոփոխություն(%)	↓3,79	↓7,4	↓47,42

Գծապատկեր 2:
Գնաճի, ռուբլու կուրսի և արտահանման ծավալների դինամիկան 2013-2015թթ.



Ինչպես տեսնում ենք 2014-2015 թթ. տեղի է ունեցել արտահանման գների կրճատում 47,42%-ով, որի հիմնական պատճառը ռուբլու արժեզրկումն է 60.33%-ով: Արտահանման գների նվազումը հանգեցրեց նրան, որ ՌԴ-ից Հայաստան ներմուծվող ապրանքները էժանացան 47,42%-ով, քանի որ Հայաստանի ներմուծումը կազմում է ՀՆԱ-ի գերակշիռ մասը, իսկ Հայաստան ներմուծվող ապրանքների մեծ մասը Ռուսաստանից է, հետևաբար ՌԴ-ում արտահանման գների նվազումը ազդում է նաև ՀՀ-ի գների մակարդակի վրա: Հաշվենք ներմուծման ծավալների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2013-2015 թթ. համար: [6]

Աղյուսակ 3:

Ներմուծման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2013-2015թթ.

	Անվանական ՀՆԱ (մլն.դրամ)	Ներմուծման ծավալ (հազ. դոլար)	Արտար-ժույթի միջին կուրս	Ներմուծման ծավալ (մլն.դրամ)	Ներմուծման տեսակարար կշիռ (%)
2013	4555638,2	4488752	409,63	1838727,482	40,36157836
2014	4828626,3	4438391	415,92	1846015,585	38,23065754
2015	5032089	3373704	477,92	1612360,616	32,04157589

2013-2015թթ. ներմուծման ծավալները ճիշտ է նվազել են, սակայն ներմուծման տեսակարար կշիռը անվանական ՀՆԱ-ում շարունակում է բարձր մնալ՝ կազմելով մոտ 32%: Ներմուծման ծավալների կրճատման հիմնական պատճառը ռուբլու արժեզրկումն է: ՀՀ ներմուծման ցուցանիշներում տեղի է ունեցել ներմուծման ծավալների փոփոխություն ըստ երկրների: Այս հանգամանքը կապված է ՀՀ-ի ԵՏՄ-ին անդամակցության հետ: Դիտարկենք ՀՀ ներմուծման ծավալները ըստ երկրների խմբերի 2014-2015թթ[7]:

Աղյուսակ 4:

Ներմուծման ծավալներ (հազ. ԱՄՆ դոլար)

Երկրների խմբեր	2014	2015
ԵՏՄ	1123404,9	1110628,6
ԵՄ	1131558,8	774648,4
Ասիա	1481327	1038441,1
Ամերիկա	277141,3	211192
Այլերկրներ	215293,1	110711,6
Ընդամենը	4228723	3245620

ՀՀ ներմուծման ծավալները կրճատվելեն 30%-ով: ԵՏՄ-ից ներմուծման ծավալները կրճատվել են 1.15%ով, իսկ ԵՄ-ից ներմուծման ծավալները կրճատվել են 46%-ով: Այս կտրուկ կրճատման հիմական

պատճառը հանդիսանում է ռուբլու կտրուկ արժեզրկումը: Եթե 2014 թ. վերցնենք որպես բազիս և 2015թ. ներմուծման ծավալները հաշվարկենք բազիսային արժույթով, ապա կստանանք առավել իրական պատկեր:

Աղյուսակ 5 :
Ներմուծման ծավալներ (հազ. ԱՄՆ դոլար)
ըստ բազիսային տարվա կուրսի

Երկրների խմբեր	2014	2015 (2014 թ. կուրսով)
ԵՏՄ	1123404,9	1777005
ԵՄ	1131558,8	774648,4
Ասիա	1481327	1038441,1
Ամերիկա	277141,3	211192
Այլերկրներ	215293,1	110711,6
Ընդամենը	4228723	3911997

Հաշվարկներից պարզ է դառնում, որ ԵՏՄ-ից ներմուծումը ոչ թե կրճատվել է 1.15%-ով, այլ ավելացել է 58.18%-ով: Իսկ ընդհանուր ներմուծման ծավալը կրճատվել է 8%-ով և ոչ թե 30%-ով:

Աղյուսակ 6:
Ներմուծման ծավալների տեսակարար կշիռը 2014-2015թթ.
ըստ երկրների

Երկրների խմբեր	**2014(%)**	**2015(2014թվ կուրսով)%**	**Տեսակարար կշռի փոփոխ.(%)**
ԵՏՄ	26,5	45,5	↓ 19
ԵՄ	27	19	↓ 8
Ասիա	35	26,5	↓ 8,5
Ամերիկա	6,5	6	↓ 0,5
Այլ երկրներ	5	3	↓ 2
Ընդամենը	100	100	

Հաշվարկներից պարզ է դառնում, որ ԵՏՄ-ի տեսակարար կշիռը ՀՀ ներմուծման ծավալներում աճել է 19%-ով: ԵՏՄ-ից ներմուծման ծավալների աճը հիմնականում պայմանավորված է եղել ԵՄ-ից ներմուծման ծավալների տեսակարար կշռի նվազմամբ 8%-ով, Ասիայից 8.5%-ով, Ամերիկայից և այլ երկրներից կրճատում համեմատաբար քիչ է արձանագրվել: Կատարված հաշվարկներից պարզ է դառնում, որ տեղի է ունեցել ներմուծման ծավալների կրճատում, որի պատճառ, բացի արտարժույթի կուրսի փոփոխությունը, կարող է հանդիսանալ նաև բնակչության

գնողունակության անկումը և գնաճը: Դիտարկենք գնողունակության դինամիկան 2013-2015թթ, որի միջոցով կարող ենք որոշել գնողունակության ազդեցությունը ներմուծման ծավալների կրճատման վըրա [4] [6]:

Աղյուսակ 7:

Բնակչության գնողունակության դինամիկան 2013-2015թթ.

	Բնակչ. թվաքանակ (հազ. մարդ)	ՀՆԱ-ն ըստ գնողունակ. (մլն.դոլլ)	Դոլարի կուրս (դրամ)	Գնողունակ. (դրամ)	Գնաճ (%)	Իրական գնողունակ. (դրամ)
2013	3017,4	23100	409,63	3135962	5,8	2954076
2014	3010,6	24300	415,92	3357090	4,6	3202664
2015	2998,6	25300	477,92	4032171	-0,1	4036203

Բնակչության իրական գնողունակության մակարդակը 2013 թթ. 2014 թթ. համեմատությամբ աճել է 8.4%ով, իսկ 2015-2014թթ. համեմատությամբ աճել է 26.02%-ով: Հետևաբար ներմուծման ծավալների կրճատումը չի կարող պայմանավորված լինել գնողունակության անկմամբ, և հիմնական պատճառը ռուբլու արժեզրկումն է, ինչպես նաև արտահանող երկրում առկա գնաճի մակարդակը:

Ուսումնասիրենք գնաճի ազդեցությունը արժույթի կուրսի վրա: Գնաճը արժեզրկում է արժույթը, այդ պատճառով գնաճի բարձր մակարդակ ունեցող երկրներում արժույթը երկարաժամկետ հատվածում ավելի արագ կարժեզրկվի, քան գնաճի ցածր մակարդակ ունեցով երկրում: Կարճաժամկետ հատվածում գնաճը կարող է հակառակ ազդեցությունն ունենալ: Եթե գնաճի մակարդակը աճում է, ապա ԿԲ-ն բարձրացնում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ այդ կերպով դրական ազդեցություն թողնում արժույթի կուրսի վրա:

Ուսումնասիրենք գնաճի և արժույթի կուրսի միջև առկա կապը: Գնաճի և արժույթի կուրսի միջև առկա է փոխարինման էֆեկտ: Ըստ այդ էֆեկտի, երբ արժույթը արժեզրկվում է 5%-ով, այն իր հետ բերում է 1% գնաճ: Ուսումնասիրենք այս էֆեկտի ազդեցությունը Ռուսաստանի օրինակով: Աղյուսակում ներկայացված է 2013-2015թթ. գնաճը և ռուբլու կուրսի փոփոխությունը:

Աղյուսակ 8:
Գնաճի և ռուբլու կուրսի դինամիկան 2013-2015թթ.

	2013	2014	2015
Գնաճ(%)	6,25	11,36	12,91
Ռուբլու կուրսի փոփոխ(%)	↓2,46	↓18,76	↓60,33

Հիմա ստանանք աղյուսակ, որում կներկայացնենք գնաճը և արժույթի կուրսը հաշվարկված փոխարինման էֆեկտի միջոցով և կհամեմատենք փաստացի ցուցանիշների հետ:

Աղյուսակ 9:
Գնաճի և ռուբլու կուրսի դինամիկան 2013-2015թթ.
ըստ փոխարինման էֆեկտի

	2013	2014	2015
Գնաճ(%)	0.5	3.72	12,06
Ռուբլու կուրսիփոփոխ (%)	↓2,46	↓18,76	↓60.33

Ինչպես տեսնում ենք Ռուսաստանի դեպքում տվյալ ժամանակահատվածում փոխարինման էֆֆեկը չի գործում, քանի որ 2013-2015թթ. ՌԴ-ի համար ճգնաժամային էր, իսկ ճգնաժամային տարիներին, սովորաբար, օրենքները և էֆեկտները չեն գործում: Իրական գնաճի մակարդակը խիստ տարբերվում է փոխարինման էֆեկտի միջոցով հաշվարկված գնաճից: 2014թ. այդ շեղումը կազմում է մոտ 9%:

Ամփոփելով կատարված աշխատանքը, կարող ենք նշել, որ, հակառակ սպասվածի, ԵՏՄ անդամակցությունը չավելացրեց ՀՀ-ից արտահանման ծավալները, այլ, հակառակը, կրճատեց այն: Կրճատվեց նաև ներմուծման ծավալները, որի հիմնական և գլխավոր պատճառը ռուբլու արժեզրկումն էր: Քանակական արտահայտությամբ գրանցվեց ներմուծման աճ ԵՏՄ-ից և կրճատում ԵՄ-ից: ՌԴ-ում առկա տնտեսական վատ դրությունը իր ազդեցությունը թողեց ՀՀ-ի տնտեսության վրա, քանի որ այն համարվում էր ՀՀ առևտրային գլխավոր գործընկեր: ՀՀ-ում աստիճանաբար կրճատվեց գնաճի մակարդակը 2015թ. նույնիսկ արձանագրվեց գնանկում: Գնանկման ժամանակ բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներ հայտնվեցին ծանր դրության մեջ, քանի որ շուկայում մեծացավ պահանջարկը ներմուծվող և առավել մատչելի արտադրանքի հանդեպ,

ինչի պատճառը ՌԴ ից ներմուծվող արտադրանքի գների կտրուկ անկումն էր՝ 47,42%-ով: Ներմուծվող ապրանքների գների անկումը ՌԴ-ից հանգեցրեց նրան, որ էապես կըրճատվեց ներմուծումը ԵՄ-ից , քանի որ այդ ապրանքները նույնպես փոխարինվեցին ՌԴ-ից ներմուծվող արտադրանքով: Տեղի ունեցավ ներմուծման ուղղությունների կտրուկ փոփոխություն, կրճատվեց ներմուծման ծավալները Ասիայից և Ամերիկայից: Ռուբլու կուրսի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա հիմականում պայմանավորված է նրանով, որ ՀՀ ԿԲ-ն կիրառում է լողացող արժույթի քաղաքականություն, այսինքն ռուբլու կուրսի տատանումը մեծ չափով ազդում է դրամի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արման Գաբրիելյան «Փոխարժեք և առևտրային հաշվեկշիռ», Երևան, 2001-2016թթ.
2. ՀՀ ԿԲ տեղեկագիր, 2013-2015թթ.
3. http://armeconomist.com
4. https://hy.wikipedia.org
5. http://www.ng.ru
6. http://armstat.am
7. http://www.customs.am
8. www.statbureau.org
9. http://www.cisstat.com
10. http://www.finmarket.ru
11. http://rate.am

8-ВЛИЯНИЯ ИНФЛИАЦИИ И ИЗМЕНЕНИЯ КУРСА РУБЛЯ НА ТЕНДЕНЦИИ ИМПОРТА В РЕЗУЛЬАТАТЕ ЧЛЕНСТВО В ЕИО В 2013-2015 гг.

Шушаник Абовян
Ванадзорский государтвенный университет
Историко-географический факультет
Специальность «Управление», 4-ый курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *импорт, инфляция, обмен валюты, покупательный способность, ЕИО, эффект замещения*

В 2013-2015 гг. результате членство в ЕИО изменились тенденции импорта. В статье попытались оценить изменения тенденции импорта, а также влияние инфляции и курса рубля на изменения тенденций импорта. С этой целью мы анализируем инфляцию, динамику изменения курсов валют, а также изменение покупательной способности населения в тот же период в 2013-2015 годах.

THE EFFECTS OF INFLATION AND CHANGES IN THE RUBLE EXCHANGE RATE TRENDS ON IMPORTS AS A RESULT OF MEMBERSHIP IN THE EIO IN 2013-2015

Shushanik Abovyan
Vanadzor state university
Faculty of History and Geography

SUMMARY

Key words: *import, inflation, currency exchange, IBC, EEC, substitution effect*

The import trends changed as a result of membership in the EOI in 2013-2015. In this article we tried to evaluate changes in import trendsand the effect of inflation and the ruble exchange rate on changes in import trends. For this purpose, we analyze inflation dynamics of changes in exchange rates and changes in the purchasing power of the population in the same period in 2013-2015.

ՖԻԶԻԿԱ

ФИЗИКА

PHYSICS

ՊԻՐՈԷՖԵԿՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԳՆԵՏՈԷԼԵԿՏՐԻԿՆԵՐՈՒՄ

Հեղինե Դավթյան
ՎՊՀ, Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ,
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա բաժին, IV կուրսի
Ղեկավար՝ ֆիզմաթ գիտ. դոցենտ, ***Էդվարդ Ավագյան***

Հանգուցային բառեր: *պիրոէֆեկտ,պիրոէլեկտրական բյուրեղներ, պիրոգործակիցներ, սեգնետոէլեկտրիկներ:*

Որոշ դիէլեկտրիկներում էլեկտրական բևեռացումը կարող է գոյություն ունենալ առանց արտաքին էլեկտրական դաշտի կիրառման [1; 2; 3; 4]:

Սպոնտան բևեռացված դիէլեկտրիկներում ջերմային էներգիան կարող է անմիջականորեն վերածվել էլեկտրական էներգիայի, պիրոէլեկտրական էֆեկտի հաշվին, այսինքն՝ դիէլեկտրիկի սեփական բևեռացման փոփոխման հաշվին, նրանց տաքացման կամ սառեցման ժամանակ: Այսպիսով պիրոէլեկտրիկը էներգիայի պինդ մարմնային փոխարկիչ է: Պիրոէլեկտրիկի սեփական բևեռացումը իրեն ի հայտ է բերում միայն արտաքին պայմանների դինամիկ (ժամանակային) փոփոխման դեպքում: Բևեռային դիէլեկտրիկի ջերմաստիճանի բարձրացումը կամ իջեցումը փոխում է նրա մեջ մասնիկների ջերմային շարժման ինտենսիվությունը և այդ դեպքում փոխում է ինչպես բեռային մոլեկուլների կողմնորոշումը, այնպես էլ նրանց միջև եղած հեռավորությունը, որը բերում է սպոնտան բևեռացման փոփոխություն: Դրա հետևանքով բևեռային դիէլեկտրիկի մակերևույթին ի հայտ են գալիս չկոմպեսացված էլեկտրական լիցքեր: Եթե պիրոէլեկտրական էլեմենտը միացված է օհնակ ուժեղացուցիչ մուտքի դիմադրությանը, ապա այդ դիմադրության միջով հոսում է պիրոհոսանք: Բայց բյուրեղի դեպքում նրա վրա առաջանում է պիրոէլեկտրական լարում: Սակայն եթե հետագայում պիրոէլեկտրիկի ջերմաստիճանը մնում է հաստատուն, ապա պիրոհոսանքները և պիրոէելեկտրական լարումները աստիճանաբար անհետանում են [5; 6; 7]:

Ժամանակակից չափումները ցույց են տվել, որ ջերմաստիճանի ընդամենը 10 աստիճանի փոփոխությունը տուրմալինի բարակ (~1մմ) թիթեղում բերում է 1կվ էլեկտրական պոտենցիալի առաջացում: Դրա հետ միասին տուրմալինը համեմատաբար թույլ պիրոէլեկտրիկ է: Մեծ պիրոէլեկտրական գործակիցներով օժտված բյուրեղում նույնիսկ թույլ տաքացման դեպքում կարող են առաջանալ 10^5Վ կարգի պոտենցիալ, որը առաջ է բերում դիէլեկտրիկի էլեկտրական ծակում:

Ուժեղ պիրոէլեկտրիկների շարքին են դասվում սեգնետոէլեկտրիկները, որոնք հանդիսանում են պիրոէլեկտրիկների ենթախումբ, սակայն ի տարբերություն գծային պիրոէլեկտրիկների տրոհվում են դոմենների, իսկ նրանց բևեռացման վեկտորը կարելի է շրջել էլեկտրական դաշտով: Սեգնետոէլեկտրիկների պիրոգործակիցները սենյակային ջերմաստիճանում տասնյակ անգամ գերազանցում են տուրմալինի պիրոգործակիցներին, իսկ փուլային անցման մոտակայքում գերազանցում են հազարավոր անգամ:

Տեխնիկական կիրառությունները խթանել են պիրոէլեկտրականության ֆիզիկայի արագ զարգացմանը, ինչպես նաև նոր պիրոէլեկտրական նյութերի ստացման տեխնոլոգիաին: Ներկայումս սինթեզվել և հետազոտվել են տասնյակ պիրոէլեկրիկներ, ընդ որում նրանցից շատերը արդեն գտել են լայն տեխնիկական կիրառություն: Այդ նյութերի թվին են պատկանում նաև լիթիումի տանտալատի ($LiTaO_3$) բյուրեղները, որոնք լայնածավալ կիրառություններ են գտել քվանտային էլեկտրոնիկայում, օպտոէլեկտրոնիկայում, չափիչ տեխնիկայում, ինֆրակարմիր ճառագայթների հայտնաբերման և գրանցման տեխնիկայում և այլը [8;9;10;11]:

Այդ բյուրեղների համարյա բոլոր ֆիզիկական հատկությունները շատ զգայուն են արտաքին ազդեցությունների և մասնավորապես տարբեր միջավայրերում թերմոմշակման նկատմամբ [12]:

Տվյալ աշխատանքում բերված են ջրածնի միջավայրում թերմոմշակման ենթարկված մոնոդոմենային բյուրեղների պիրոէլեկտրական հատկությունների փորձարարական ուսումնասիրությունները:

Պիրոէլեկտրիկական բյուրեղներ

Դիէլեկտրիկ բյուրեղները, որոնք արտաքին էլեկտրական դաշտի բացակայության դեպքում ունեն 0-ից տարբեր բևեռացման վեկտոր, կոչվում են պիրոէլեկտրիկներ: Այդ բևեռացման վեկտորը կոչվում է սպոնտան բևեռացում և նշանակվում է $\vec{P}_S$ -ով:

Շնորհիվ սպոնտան բևեռացման առկայությանը՝ պիրոէլեկտրական բյուրեղից կտրված թիթեղի հակադիր նիստերի վրա գտնվում են կապված լիցքեր: Նրանց մակերևույթային σ խտությունը կախված է սպոնտան բևեռացման վեկտորի մեծությունից և նիստերի նկատմամբ ունեցած անկյունից : Իդեալական դեպքում

$$\sigma = \vec{P}\vec{n} = \left|\vec{P}\right| cos\alpha \qquad (1)$$

որտեղ $\vec{n}$ – թիթեղի նիստին ուղղահայաց միավոր վեկտորն է , α -ն $\vec{P}$ -ի և $\vec{n}$ -ի միջև կազմած անկյունը: Նշենք, որ իրական բյուրեղներում՝

$\sigma \neq \left|\vec{P}\right|$ մակերևույթային լիցքերի կոմպսացման պատճառով, որը հետևանք է բյուրեղի սեփական էլեկտրահաղորդականության: Լիցքերի մաքսիմալ խտությունը կդիտվի թիթեղի այն նիստերի վրա, որոնք կտրված են սպոնտան բևեռացման ուղղությանը ուղղահայաց: Սակայն հակադիր նիստերի միջև առաջացող պոտենցյալների տարբերությունը չի հաջողվում հայտնաբերել, այն պատճառով, որ կապված լիցքերը կոմպեսացվում են օդում գտնվող լիցքերով, ինչպես նաև այն պատճառով, որ պիրոէլեկտրական բյուրեղի էլեկտրահաղորդականությունը տարբեր է 0-ից, որի հետևանքով բյուրեղում առաջացող $\vec{E} = \chi\vec{P}$ դաշտի աղդեցությամբ առաջանում է

$$\vec{J} = \sigma\vec{E} \qquad (2)$$

հոսանք, որն էլ կոմպեսացնում է դաշտը: Այստեղ σ -ն բյուրեղի էլեկտրահաղորդականությունն է:

Պիրոէֆեկտ

Պիրոէլեկտրիկների ջերմաստիճանի համասեռ փոփոխության դեպքում, փոխվում է նաև նրանց սպոնտան բևեռացման մեծությունը: Բյուրեղների սպոնտան բևեռացման փոփոխությունը ջերմաստիճանի համասեռ փոփոխության դեպքում կոչվում է պիրոէլեկտրական էֆեկտ կամ պիրոէֆեկտ:

Եթե տեղի է ունենում ջերմաստիճանի ոչ մեծ ΔT փոփոխություն բյուրեղի բոլոր կետերի համար (համասեռ տաքացում), սպոնտան $\Delta\vec{P}$ բևեռացման փոփոխությունը համեմատական է ջերմաստիճանի փոփոխությանը՝

$$\Delta\vec{P} = \vec{\gamma}\Delta T \qquad (3)$$

կամ

$$\Delta\vec{P}_i = \vec{\gamma}_i\Delta T \qquad (4)$$

որտեղ $\vec{\gamma}\ (\gamma_1, \gamma_2, \gamma_3)$ - կոչվում է պիրոէլեկտրական գործակից: Ինչպես երևում է (4)-ից $\vec{\gamma}$ վեկտորի բաղադրիչները որոշվում են ինչպես

$$\vec{\gamma}_i = \frac{d\vec{P}_i}{dt} \qquad (5)$$

$\vec{\gamma}$ - պիրոէլեկտրական գործակիցը վեկտոր է և ընդունում է դրական արժեք, եթե ջերմաստիճանի աճը բերում է սպոնտան բևեռացման աճին:

Պիրոէլեկտրական գործակիցների որոշման փորձարարական մեթոդները

Պիրոէլեկտրիկների γ պիրոէլեկտրական գործակիցների չափման համար անհրաժեշտ է չափել այն լիցքի մեծությունը, որը առաջանում է որոշակի ձև և կողմնորոշում ունեցող բյուրեղի մակերևույթի վրա T ջերմաստիճանի փոփոխման դեպքում: Դրա համար սովորաբար օգտագործվում են հարթ զուգահեռ թիթեղներ, որոնք կտրված են բյուրեղի բևեռային ուղղությանը (սպոնտան բևեռացման ուղղությունը) ուղղահայաց: Թիթեղի հարթ զուգահեռ մակերևույթները ծածկվում են հաղորդող էլեկտրոդներով: Բյուրեղի ջերմաստիճանի փոփոխությունը ΔT-ով բերում է $\Delta Q_{\Pi} = \gamma S \Delta T$ կապված լիցքի և $U = \frac{\Delta Q}{C_0}$ պոտենցյալներիտարբերության առաջացմանը էլեկտրոդների վրա: Այստեղ S-ը էլեկտրոնների մակերեսն է, C_0-ն նմուշի ունակությունը: Լիցքի չափման համար K բյուրեղային կոնդեսատորը տեղադրվում է թերմոստատում (Նկ. 1), որի ջերմաստիճանը կարող է փոփոխվել:



Նկար 1

Պիրոէլեկտրական լիցքի առաջացման դեպքում A կետի պոտենցյալը փոփոխվում է և կարելի է չափել էլեկտրոններով: Կոմպեսացիոն սխեման, որը կազմված է մարտկոցից, պոտենցիոմետրից , կոնդեսատորից

և փոխարկիչից ծառայում է կոնդեսատորի լիցքի նշանի փոփոխման համար: Q լիցքը C կոնդենսատորի վրա ընտրվում է այնպես, որ A կետի պոտենցյալը հավասարվի 0-ի: Այս դեպքում $Q = \Delta Q_n$: Այս մեթոդը կոչվում է պիրոէլեկտրական գործակիցների չափման ստատիկ մեթոդ:

Պիրոգործակիցների չափման դինամիկ մեթոդի դեպքում չափվում է պիրոէլեկտրական հոսանք, որը անցնում է կոնդենսատորի շրջադիրների միջև արտաքին շղթայով նմուշի T ջերմաստճանի անընդհատ փոփոխման դեպքում (Նկ. 2):



Նկար 2

Ջերմաստիճանի փոփոխության տված $\frac{dT}{dt}$ արագության դեպքում γ -ն որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\gamma = \frac{I}{S}\left(\frac{dT}{dt}\right)^{-1} \qquad (6)$$

արտահայտությամբ: Ընդ որում $R_i >> R_e$: Այսպիսով խնդրի դժվարությունը կայանում է ջերմաստիճանի փոփոխման արագության որոշման մեջ:

Տվյալ աշխատանքում պիրոէֆեկտը հետազոտվել է ջրածնի միջավայրում էլեկտրական դաշտի առկայությամբ թերմոմշակման ենթարկված $LiTaO_3$ բյուրեղում: Մեր կողմից ուսումնասիրվող բյուրեղները աճեցվել են Չոխրալսկու մեթոդով իրիդիումից պատրաստված տիգելներում ազոտի մթնոլորտում՝ բարձր հաճախությամբ տաքացուցիչի օգնությամբ, բյուրեղաֆիզիկական Z առանցքի ուղղությամբ: Աճեցված բյուրեղները որպես կանոն եղել են պոլիդոմենային: Մոնոդոմենիզացման պրոցեսը կատարվել է հատուկ պատրաստված վակուումային վառարանում ջրածնի մթնոլորտում, 0.5մթ. ճնշման տակ:

Վերականգնողական թերմոմշակման նպատակը եղել է ուսումնասիրել նրա ազդեցությունը բյուրեղի պիրոգործակիցների վրա, քանի որ

հայտնի է, որ այդպիսի մշակումից հետո $LiTaO_3$ բյուրեղները (ինչպես նաև $LiNbO_3$ բյուրեղները) մոտ կտրուկ փոփոխվում են մի շարք ֆիզիկական հատկություններ: Մասնավորապես ցույց է տրված, որ եթե չվերականգնված $LiTaO_3$ բյուրեղներում ֆոտոգալվանական էֆեկտը արտահայտված է շատ թույլ, ապա վերը նշված թերմոմշակումից հետո նկատվում է ֆոտոգալվանական էֆեկտի գործակիցների կտրուկ աճ, որը ամենամեծն է հայտնի սեգնետոէլեկտրական բյուրեղների ֆոտոգալվանական գործակիցներից [13; 14]:

Բյուրեղներից հետազոտման համար կտրվեն Z, X և Y բյուրեղաֆիզիկական առանցքների ուղղությամբ կողմնորոշված, հղկված նիստերով, (10x10x10մմ^3)չափերի նմուշներ: Բևեռային առանցքին (Z առանցք) ուղղահայաց նիստերի վրա նստեցվել են գրաֆիտե կամ արծաթե մածուցիկ էլեկտրոդներ:



Նկար 3

Նկ. 3 -ում բերված են $LiTaO_3$ բյուրեղները և նրանցով պատրաստված նմուշները : Չափումները դինամիկ մեթոդով իրականացվել են E-13A թերմոմետրի միջոցով, հոսանքի աղբյուրի ռեժիմում (գալվանական ռեժիմ):



Նկար 4

Նկ. 4–ում բերված է կայանքի բլոկ-սխեման: Նմուշը տեղադրվել է թերաոմետրի թերմոմեկուսիչ խցիկում, որի վրա արված է փոքր անցք: Արտաքին օդային հոսանքներից խուսափելու նպատակով անցքը փակվել է ապակով:

Նմուշի ջերմաստիճանի փոփոխությունը կատարվել է 400Վտ հզորությամբ վոլֆրամե շիկացման թելիկով լամպի լույսով, որը 15մմ տրամագծով փնջով ուղղվել է նմուշի X կամ Y առանցքների ուղղությամբ: Ճառագայթման կորուստներից խուսափելու համար նմուշի լուսավորվող մակերևույթը սևացվել է չհաղորդող ներկով:

Նմուշի վրա ընկնող լուսային հոսքի հզորությունը որոշվել է թերմոէլեմենտի օգնությամբ, որը ըստ հզորության աստիճանավորված է եղել $W_L = 10^{-3}$ *Վտ* հզորությամբ էտանոլային լազերի միջոցով: Թերմոէլեմենտի թերմոհոսանքը չափվել է միկրոամպերմետրի և ուժեղացուցիչի միջոցով: Եթե լազերի W_L հզորությանը համապատասխանող հոսանքն է, իսկ լամպի W_O հզորությանը համապատասխանող հոսանքը՝ I_P ապա

$$W_0 = \frac{I_P \cdot W_L}{I_L}$$

Լազերի համար ստացել ենք $I_L = 0.5 \cdot 10^{-6}$ *Ա:* Այսպիսով

$$W_0 = \frac{I_P \cdot 10^{-3}}{5 \cdot 10^{-7}} \quad Վտ$$

կամ $$W_0 = 2 \cdot 10^3 I_P \quad Վտ:$$

Հայտնի է, որ դինամիկ մեթոդով նմուշի ջերմաստիճանի փոփոխության արագությունը կարելի է որոշել

$$\frac{dT}{dt} = \frac{\eta \cdot W_0}{2C} \qquad (7)$$

բանաձևով, որտեղ η -ն կլանման գործակիցն է, W_0 -ն ճառագայթման հզորությունը, C -ն նմուշի ջերմունակությունը:

Պինդ մարմինների ջերմունակության Դեբայի քվանտային տեսությունից հետևում է, որ բոլոր պինդ մարմինների համար Դեբայի ջերմաստիճանից բարձր ջերմաստիճաններում մոլյար ջերմունակությունը կարելի ընդունել հավասար

$$C_M = 25 \quad Ջ/Կ\,մոլ$$

Նմուշի ջերմունակությունը կլինի

$$C = n \cdot C_M \qquad (8)$$

որտեղ n–ը մոլերի թիվն է: n -ը գտնելու համար հաշվենք $LiTaO_3$ -ի մոլեկուլային կշիռը

$$\mu = 6{,}94 + 180{,}9 + 48 \approx 235{,}4 \quad Ջ/մոլ$$

$$\mu = 235{,}4 \cdot 10^{-3} \quad կգ/մոլ$$

Հետազոտվող նմուշի կշիռը կազմել է

$$M = 7{,}5 \cdot 10^{-3} \quad կգ$$

Այսպիսով

$$n = \frac{M}{\mu} = 0{,}032 \quad մոլ$$

Օգտվելով

$$C = 25 \cdot 0{,}032 = 0{,}79 \approx 0{,}8 \quad Ջ/Կ$$

$$C = 0{,}8 \quad Ջ/Կ$$

Քանի որ մեր նմուշը ամբողջությամբ կլանում է իր վրա ընկնող ճառագայթումը, ապա կարող ենք ընդունել $\eta = 1$: Հաշվի առնելով η - ի և C -ի արժեքները կարող ենք վերջնականապես գրել

$$\frac{dT}{dt} = \frac{W_0}{1.6} \quad Կ/վր$$

Այստեղից հետևում է, որ

$$\gamma = \frac{I \cdot 1.6}{S \cdot W_0} \tag{9}$$

որտեղ $S=10X10մմ^2=10^{-4}մ^2$: Վերջնականապես հաշվարկների համար կունենանք

$$\gamma = \frac{1.6 \cdot 10^{-4} I}{W_0} \tag{10}$$

որտեղ I –ն պիրոհոսահքի ուժն է:

Չափումներ

Նկ. 5-ում բերված է պիրոհոսանքի ժամանակային կախվախությունը վերականգնված $LiTaO_3$ բյուրեղներում՝ $W_0 = 1$ Վտ հզորությամբ ճառագայթման ազդեցությամբ:



Նկար 5

Ինչպես երևում է կորից պիրոհոսանքը առաջանում է անմիջապես լուսավորման պահին կտրուկ հասնելով $I = 8 \cdot 10^{-12}$ Ա մաքսիմալ արժեքին սկսում է դանդաղորեն նվազել մինչև զրոական արժեքը: Լույսը անջատելուց հետո նորից առաջանում է պիրոհոսանք բայց արդեն հակա-

ռակ նշանով հասնելով որոշ մաքսիմալ արժեքի նույնպես որոշ ժամանակ անց վերադառնում է զրոյական դիրքի: Ընդ որում տվյալ լուսավորվածության դեպքում ուսումնասիրվող բյուրեղներում պիրոհոսանքի մաքսիմալ արժեքը լուսավորման պահին միշտ ավելի մեծ է եղել լույսի անջատումից հետո առաջացող հակառակ նշանի մաքսիմալ արժեքից, անկախ նրանից, թե ժամանակի որ պահին ենք անջատում լույսը:

Արդյունքների քննարկում

Պիրոհոսանքի ժամանակային կախվածությունը կարելի է բացատրել հետևյալ կերպ: Լույսի միացման պահին սեգնետոէլեկտրական բյուրեղի ջերմաստիճանի փոփոխման արագությունը մաքսիմալ է, որն էլ համաձայն (6)-ի բերում է մաքսիմալ պիրոհոսանքի առաջացման: Այնուհետև բյուրեղի ջերմաստիճանի փոփոխման արագությունը շրջապատի հետ ջերմափոխանակման հետևանքով սկսում է նվազել: Համակարգի ջերմային հավասարակշռության պայմաններում պիրոհոսանքը անհայտանում է, քանի որ բյուրեղի ջերմաստիճանը այլևս չի փոխվում: Ջերմային հավասարակշռության վիճակում բյուրեղի T_2 ջերմաստիճանը անընդհատ լուսավորման ժամանակ ավելի մեծ է նախքան լուսավորելը հավասարակշիռ վիճակի T_1 ջերմաստիճանից: Այդ պատճառով լույսը անջատելիս բյուրեղը սկսում է հովանալ, բայց ավելի փոքր արագությամբ, քան նա տաքանում է լուսավորման պահին: Դա բերում է նրան, որ հակառակ նշանի պիրոհոսանքի մաքսիմալ արժեքը միշտ փոքր է լուսավորման պահին առաջացող պիրոհոսանքի մաքսիմալ արժեքից:

Պիրոգործակիցների արժեքների տարբերությունը մեր կարծիքով կարելի է բացատրել հետևյալ կերպ: Հայտնի է, որ սեգնետոէլեկտրական բյուրեղների էլեկտրահաղորդականությունը շատ զգայուն է թերմոմշակման նկատմամբ և որպես կանոն նա կտրուկ մեծանում է վերականգնողական թերմոմշակումից հետո: Դա բացատրվում է տարբեր արատների առաջացումով և լիցքակիրների թվի կտրուկ ավելացումով: Պարզ է, որ հաղարդականության մեծացումը պետք է բերի սպոնտան բևեռացման էկրանացման պրոցեսի արագացմանը, համաձայն հայտնի օրենքի՝

$$\tau = \frac{\varepsilon\varepsilon_0}{\delta}$$

Այս բանաձևում τ-ն էկրանային պրոցեսների Մաքսվելյան ռելաքսացիայի ժամանակն է, δ-ն բյուրեղի հաղորդականությունը, ε-ը դիէլեկտրիկ հաստատունը, $\varepsilon_0 = 8.82 \cdot 10^{-12}$ Ֆ/մ վակուումի դիէլեկտրիկ հաստատունը: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ P_s-ի էկ-

րանացման պրոցեսը հիմնականում պայմանավորված է միջմակերևույթային շերտերի հաղորդականությամբ, որը կարող է մի քանի կարգով ավելի մեծ լինել քան δ ծավալային հաղորդականութունը, ապա պարզ է որ, վերականգնողական թերմոմշակումից հետո նրանց սպոնտան բևեռացման փոփոխության արագությունը տաքացման ժամանակ պետք է ավելի փոքր լինի քան վերականգնումից առաջ, որն էլ բերում է γ-ի արժեքի փոքրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Струков Б.А. “Сегнетоэлектричество в кристаллах и жидких кристаллах: зовне переходы, нестационарные состояния вещества”, “Соровсовский Образовательный Журнал”, 1996 И4 с 81-89.
2. Струков Б.А., Лавенюк А. Р. “Физические основы сегнетоэлектрических явлений в кристаллах” М. физ-мат лит 1989.
3. Новик В. К.,Говрилва, Н.Д. и др. “Пироэлектрические преобразователи” М.Сов. радио. 1979.
4. Bezdentny N. M., Khutozsky V.E., Zeinally A. Kh., “Polazization distribution in ferroelectrics by iegularization method from pyroelectric measurements”, “Ferroelectrics”, 1983, V46 с 2849-2851.
5. Малышкина О. В., Мовчикова А. А., “Новый метод определения координальных зависимостей пиротоков в сегнетоэлектрических материалах” фтт,-2009, Т.51 внп.7 с 1307-1309”.
6. Александров С.Е., Гаврилов А.А. и др.”Сегнетоэлектрики-пелексоры как материали дел НК-фотоприемников”, ЖТФ, 2004, Т.74 вып9.
7. Болгомолов А. А., Дабижа Т.А., Наземец О. В., “Особенности пироэффекта в кристаллах ДТГС в области фазаового перехода. Сегнетоэлектрики и пезоэлектрики”,Сб. Науч. Тр-Калинин 1989, с. 154-161.
8. Богусловский С. ЖРФХО., физ отд. Вып5,247, 1915.
9. Askerman W. Ann. “Physik”. 46. 197-230, 1915.
10. Желудов Н. С., “Физика кристаллических диэлектриков” М. Наука 1968.
11. Гинзбург В. А., “Физика твердого тела 2”, 2031, 1960.
12. Нона Ф., Ширание Д., “Сегнетоэлектрические кристалли”, “Мир” 1965.
13. Авагян Э. М., Белабаев К. Г., Саркисов А. Х. “Наблюдение спонтанного электрического пробоя в сегнетоэлектрических кристаллах ниобата и танталата лиция”.Кристалография 1976 г. т. 21 в 6 с 1214-1215.
14. Авагян Э. М., “Влияние электрического поля на оптические свойцтва ниобата лиция”. Сборник ВНМН “РНПОРТ” И8 1975 г..

ИССЛЕДОВАНИЕ ПИРОЭФФЕКТА В СЕГНЕТОЭЛЕКТРИКАХ

Гегине Давтян
ВГУ, Факультет физико-математических наук,
раздел прикладная математика и физика IV курс

РЕЗЮМЕ

Ключевые слова: *пироэффект, пироэлектрические кристаллы, пирокоэффициенти, сегнетоэлектрики.*

В работе представлены иследование пироэффектических свойств термообработаных в среде водорода кристаллов танталата лиция. По лученние результати показивают, что значение пирокоэффицентов в этих на поряадок ниже чем у необработанних кристаллов.

PIROEFFECT RESEARCH IN FERROELECTRICS

Heghine Davtyan
VSU, Faculty of Physics and Mathematics,
department of Applied Mathematics and Physics IV course
,

SUMMARY

Key words*:pyroeffect, pyroelectrical crystal, pyro-coefficients, ferroelectrics.*

The work includes experimental studies of pyroelectrical prooerties of monodomenal crystals undergone thermal process in hydrogen atmosphere.

As a result we state thet pyro-coefficients of restored $LiTaO_3$ cristals are almost one order lower then pyro-coefficients of not restored crystals.

ԶՐՈՅԱԿԱՆ ՄՈԴԻ ԱՎՏՈՄԱՏ ՍԵԼԵԿՑԻԱՆ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ ԷՄԻՏԵՐՆԵՐՈՎ ՀԵՏԵՐՈԼԱԶԵՐՆԵՐՈՒՄ

Հերմինե Ճարոյան
Վանաձորի պետական համալսարան, Ֆիզմաթ, Ֆիզիկա III կուրս
Գիտ. ղեկավար՝ ֆ. մ. գ. թ., դոցենտ ***Վիլեն Քոչարյան***

Հանգուցային բառեր. *հետերոլազեր, լայնական մոդեր, օպտիկական սահմանափակման գործակից, ալիքային հավասարում, գեներացիա, էյրիի ֆունկցիա:*

Ստիպողական ճառագայթման միջոցով լույսի ինտենսիվության մեծացման երևույթը (լազերային էֆեկտը) առաջին անգամ իրականացվել է 1960թ. քրոմով լեգիրացված AI_2O_3-ի միաբյուրեղում: Դրան հետևել է 1961թ. գազային լազերի հայտնագործումը, իսկ 1962թ-ին՝ GaAs-ից դիոդային ինժեկցիոն լազերինը [1]:

Առաջին ինժեկցիոն լազերները, որոնք ստեղծվել էին ուժեղ լեգիրացված p-n անցումների հիման վրա (հոմոլազերներ), բնութագրվում էին գեներացիայի հոսանքի շեմային խտության մեծ արժեքներով (սենյակային ջերմաստիճանում ≈25-50 կԱ/սմ^2), ելքային հզորության ցածր արժեքով, փոքր ՕԳԳ-ով, ցածր դիֆերենցիալ քվանտային էֆեկտիվությամբ և ճառագայթման հաճախ նկատվող խառը բևեռացվածությամբ [2]:

1963թ. ցույց տրվեց, որ կիսահաղորդչային լազերի աշխատանքը հնարավոր է բարելավել ուղղագոտի կիսահաղորդիչներով հետերոանցումային ներարկիչների կիրառմամբ [1]: Այդ ներարկիչներն իրենցից ներկայացնում են ուժեղ լեգիրացված կիսահաղորդիչների շերտեր (մեկը՝ n+ տիպի, մյուսը՝ p+), որոնց արգելված գոտու լայնությունն ավելի մեծ է, քան ճառագայթող շերտի կիսահաղորդչինը [1,3]: Լայնագոտի ներարկիչներից ներարկված լիցքակիրները՝ շնորհիվ հետերոանցումային արգելքների, մնում են ճառագայթող ակտիվ տիրույթում, այնպես, որ ինվերսիոն բնակեցումը ավելի շուտ է իրականացվում, և լազերի հզորությունը մեծանում է: Բացի դրանից, եթե հետերոանցման ներարկիչների համար օգտագործենք $Al_X Ga_{1-X} As$, որի բեկման ցուցիչը փոքր է $GaAs$-ի բեկման ցուցիչից, ապա հետերոլազերում կիրականանա ճառագայթման ալիքատարային սահմանափակում և կորուստները կփոքրանան: Բոլոր հետերոանցումային կառուցվածքների համար կիրառելի են Ֆաբրի-Պերոյի ռեզոնատորի և հարթ դիէլեկտրիկ ալիքատարների տեսությունները [1, 2], քանի որ հետերոանցումներում բեկման ցուցչի փոփոխությունը տեղի ունի շատ փոքր հեռավորության վրա, իսկ բարակ (≤1մկմ) ակտիվ շերտում անհամասեռությունները կարելի է հաշվի չառնել [3]:

Ինժեկցիոն հետերոլազերներում գեներացիայի շեմային հոսանքի խտությունը որոշվում է հետևյալ արտահայտությամբ [1, 2].

$$J_{th} = \frac{d}{\eta_i} J_0 + \frac{d}{\eta_i}\left[\frac{1}{\Gamma_m \cdot \beta}\left(\alpha_i + \frac{1}{2 \cdot L}\ln\frac{1}{R_1 \cdot R_2}\right)\right]^{1/b} \quad \text{Ա/սմ}^2 \qquad (1)$$

որտեղ β և b բնութագրում են g ուժեղացման գործակցի կախումը հոսանքի խտությունից ($g = \beta \cdot J^b$), d-ակտիվ շերտի լայնությունն է(մկմ), η_i-ստիպողական ճառագայթման ներքին քվանտային էֆեկտիվությունն է (հաստատուն է $J \geq J_{th}$ դեպքում), α_i-ներքին կորուստների գործակիցն է, որի մեջ մտնում են ակտիվ և պասսիվ շերտերում կլանումն ու ազատ լիցքակիրների կողմից կլանումը(սմ$^{-1}$), L-Ֆաբրի-Պերոյի ռեզոնատորի երկարությունն է(սմ), R_1 և R_2-ռեզոնատորի հայելիների անդրադարձման գործակիցներն են, J_0-ն լազերի հոսանքի նոմինալ խտությունն է $d = 1$ մկմ դեպքում, երբ ուժեղացումը համակշռում է բոլոր կորուստներին, Γ_m-ակտիվ շերտում լայնական m-րդ մոդի օպտիկական սահմանափակման գործակիցն է, որը որոշվում է d լայնությամբ ակտիվ շերտին բաժին ընկնող լույսի ինտենսիվության հարաբերությամբ լույսի ընդհանուր ինտենսիվությանը՝

$$\Gamma_m = \frac{\int_0^d |E_m|^2 dx}{\int_{-\infty}^{\infty} |E_m|^2 dx} \qquad (2)$$

Օպտիկական սահմանափակման Γ_m գործակիցը կախված է ակտիվ շերտի d լայնությունից, ալիքատար տիրույթի լայնությունից, ալիքատար շերտի սահմաններին բեկման ցուցչի մեծությունից և թռիչքների փոխհարաբերությունից ու գրգռվող մոդի տեսակից: Հետևաբար, հետերոլազերների բնութագրերի նկարագրման համար անհրաժեշտ է իմանալ էլեկտրամագնիսական դաշտի բաշխումն ըստ ալիքատարների հաստության:

Ներկայումս գոյություն ունեն հետերոանցումներով կիսահաղորդչային ինժեկցիոն լազերների մի քանի տեսակներ (հաստատուն կազմի էմիտերներով երկշերտ, եռաշերտ, քառաշերտ, հնգաշերտ և փոփոխական կազմով լայնագոտի էմիտերներով), որոնք հիմնականում իրականացված են $Al_X Ga_{1-X} As$ համաձուլվածքային համակարգերում [1, 2, 4, 5]:

Հաստատուն կազմի էմիտերներով կառուցվածքներում ինժեկցիայի բարձր մակարդակներում գեներացվում են զրոյական ու ավելի բարձր կարգի մոդել [1, 2, 4] և միայն սահուն փոփոխվող կազմով էմիտերով հետերոանցումային լազերներում է իրականացվում զրոյական մոդի ավտոմատ սելեկցիա, որի շնորհիվ էլ ապահովվում են ելքային մեծ հզորություններ [5]:

Որպեսզի որոշենք հետերոլազերի ալիքատարում m-րդ TE մոդի էլեկտրական դաշտի բաշխումը, ենթադրենք, որ x և z ուղղություններով բեկման ցուցիչը մնում է հաստատուն և ալիքատարում բեկման ցուցիչի փոփոխությունները տեղի ունեն միայն y ուղղությամբ: Այս դեպքում ալիքային հավասարումը կախված է միայն y կոորդինատից և պետք է բեկման ցուցիչի տվյալ պրոֆիլի համար լուծենք հետևյալ ալիքային հավասարումը [1, 4, 5]՝

$$\frac{d^2E_m}{dy^2} = \left(\beta_m^2 - n^2(y)\cdot k_0^2\right)E_m,$$

կամ

$$\frac{d^2E_m}{dy^2} + k_0^2\left[n^2(y) - N_m^2\right]E_m = 0 \qquad (3)$$

որտեղ $\beta_m = \frac{v_m}{c} = k_0 N_m$ տրված m-րդ մոդի տարածման հաստատունն է (N_m-մոդերի շրջման կետերում էֆեկտիվ բեկման ցուցիչն է), $n(y)$-դիէլեկտրիկ ալիքատար շերտերում բեկման ցուցիչը, $k_0 = \frac{\omega}{c} = \frac{2\pi}{\lambda}$՝ վակուումում լույսի տարածման հաստատունը (ընդունված է $m = 1$ մոդը անվանել զրոյական, $m = 2$-ը՝ առաջին և այլն):

Դիտարկենք (3) հավասարման լուծումը, երբ ակտիվ շերտի երկու կողմերում էմիտերների բեկման ցուցիչները փոփոխվում են նույն գծային օրենքով (նկ. 1)՝

$$n(y) = \begin{cases} n_S\left(1 + \dfrac{y+d}{2b}\right), & y \le -d \\ n_0, & -d < y < 0 \\ n_S\left(1 - \dfrac{y}{2b}\right), & y \ge 0 \end{cases} \qquad (4)$$

Ակտիվ շերտի $(d \approx 0)$ և լայնագոտի էմիտերների պարամետրերն $(y \approx 0 \div 6$ մկմ, $b \approx 20)$ ընտրվում են այնպես, որ լայնական մոդերը սահմանափակված չլինեն ակտիվ շերտում: Այդ դեպքում բեկման ցուցչի սահուն փոփոխվող պրոֆիլով ալիքատարերում լայնական մոդերի լոկալացման տիրույթներն աճում են մոդի համարի մեծացման հետ (նկ.1 $\Delta Y_0 < \Delta Y_1 < \Delta Y_2 < \ldots$) և օպտիկական սահմանափակման գործակիցը զրոյական մոդի համար միշտ մեծ է, քան բարձր կարգի մոդերի համար ($\Gamma_0 > \Gamma_m; m > 0$):

Ցույց տանք դա քանակապես՝ բեկման ցուցչի գծային փոփոխությունով լայնագոտի էմիտերների (նկ. 1) դեպքում:



Նկար 1. *Բեկման ցուցչի գծային փոփոխությունով լայնագոտի էմիտերներով հետերոլազերի սխեմատիկ կառուցվածքը: Ներկայացված են առաջին երեք լայնական մոդերի լոկալացման տիրույթները:*

Դիտարկենք (3) ալիքային հավասարումը (4)-ով որոշվող բեկման ցուցիչների դեպքում, որտեղ $d << y << b$ և էմիտերներում $n^2(y)$-ում հաշվի չենք առնի $\frac{(y+d)^2}{4b^2}$<<1 և $\frac{y^2}{4b^2}$<<1 փոքր մեծությունները: Տեղադրելով (4)-ը (3)-ում, և կատարելով բացասական տիրույթում $y+d=-\mu\cdot t,$ դրական տիրույթում

$y=\mu\cdot t, \quad \mu=\left(\frac{b}{k_0^2 n_S^2}\right)^{1/3}, \gamma_m=\mu^2 k_0^2(n_S^2-N_m^2)$ նշանակումները,

կստանանք՝

$$\begin{cases} \frac{d^2E_m}{dt^2}-(t-\gamma_m)E_m=0; y<-d & (5.ա) \\ \frac{d^2E_m}{dy^2}+k_0^2(n_0^2-N_m^2)E_m=0; -d<y<0 & (5.բ) \\ \frac{d^2E_m}{dt^2}-(t-\gamma_m)E_m=0; y>0 & (5.գ) \end{cases}$$

Հաշվի առնելով, որ (5ա)-(5գ) հավասարումների լուծումները պետք է բավարարեն $y\to\pm\infty$ դեպքում ֆունկցիայի սահմանափակության պայմանին, կստանանք հետևյալ լուծումները՝

$$E_m(y)=\begin{cases} A\cdot Ai\left(\dfrac{y+d}{\mu}-\gamma_m\right), & y<-d \\ B\cdot\cos(S_m y+\psi_m), & -d<y<0 \\ C\cdot Ai\left(\dfrac{y}{\mu}-\gamma_m\right), & y>0 \end{cases} \qquad (6)$$

որտեղ $Ai(x)$-ը էյրիի առաջին կարգի ֆունկցիան է և $S_m=k_0\sqrt{n_S^2-N_m^2}$:

$y=-d$ և $y=0$ կետերում էլեկտրական դաշտի և նրա ածանցյալների անընդհատության պայմանից կստանանք.

$$\begin{cases} A\cdot Ai(-\gamma_m)=B\cos(\psi_m-S_m d) \\ \dfrac{A}{\mu}Ai'(-\gamma_m)=-B\cdot S_m\sin(\psi_m-S_m d) \\ B\cdot\cos\psi_m=C\cdot Ai(-\gamma_m) \\ -BS_m\sin\psi_m=\dfrac{C}{\mu}Ai'(-\gamma_m) \end{cases} \qquad (7)$$

(7) հավասարումների համակարգից

$$A=\frac{B\cos(\psi_m-S_m d)}{Ai(-\gamma_m)},\quad C=\frac{B\cos\psi_m}{Ai(-\gamma_m)}$$

և կամայական B հաստատունը ընդունելով հավասար 1-ի, (6)-ից կստանանք.

$$E_m(y)=\begin{cases} \dfrac{\cos(\psi_m-S_m d)}{Ai(-\gamma_m)}\cdot Ai\left(\dfrac{y+d}{\mu}-\gamma_m\right), & y<-d \\ \cos(S_m y+\psi_m), & -d<y<0 \\ \dfrac{\cos\psi_m}{Ai(-\gamma_m)}\cdot Ai\left(\dfrac{y}{\mu}-\gamma_m\right), & y>0 \end{cases} \qquad (8)$$

(7) համակարգի լուծումից ստացվում է $tg\psi_m=tg(\psi_m-S_m d)$ դիսպերսիոն հավասարումը, որը համարժեք է հետևյալ պայմանին՝

$$S_m d=\pi\cdot m,\quad m=1,2,3,\cdots \qquad (9)$$

Այստեղից, տեղադրելով $S_m=k_0\sqrt{n_S^2-N_m^2}$, կստանանք լայնական մոդերի շրջման կետերում N_m էֆեկտիվ բեկման ցուցիչները՝

$$N_m = \sqrt{n_s^2 - \frac{\pi^2 m^2}{k_0^2 d^2}} \qquad (10)$$

Մոդի շրջման կետում $(y = y_{tm})$ կունենանք

$$N_m = n(y_{tm}) = n_S\left(1 - \frac{y_{tm}}{2b}\right) = \sqrt{n_s^2 - \frac{\pi^2 m^2}{k_0^2 d^2}},$$

կորոշենք շրջադարձի y_{tm} կետերը և մոդերի լոկալացման տիրույթների Y_m լայնությունները:

$$y_{tm} = \frac{\pi^2 b m^2}{k_0^2 d^2 n_s^2};\ \ Y_m = 2y_{tm} + d = \frac{2\pi^2 b m^2}{(k_0 d n_s)^2} + d \qquad (11)$$

Ստացանք, որ լայնական մոդերի լոկալացման տիրույթների լայնությունները Y_m և օպտիկական սահմանափակման գործակիցը զրոյական մոդի համար միշտ մեծ է, քան բարձր կարգի մոդերի համար $(\Gamma_0 > \Gamma_m; m > 0)$: Հետևաբար, բեկման ցուցիչի սահուն փոփոխությամբ լայնագոտի էմիտերով հետերոլազերներում միշտ պետք է դիտվի լայնական մոդերի սելեկցիա՝ միայն զրոյական մոդի գեներացիայով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Х. Кейси, М. Паниш – Лазеры на гетероструктурах, том 1, 2, изд. «Мир», Москва,1981.
2. О.В.Богданкевич, С. А. Дарзнек, П.Г. Елисеев – Полупроводниковые лазеры, часть 1, М., «Наука», 1976.
3. А. Милнс, Д. Фойхт - Гетеропереходы и переходы металл-полупроводник, изд. «Мир», Москва, 1981.
4. H. Kressel, H. F. Lockwood, F.Z. Hawrylo – Low-threshold LOC GaAs injection lasers, Appl. Phys. Lett., 1971, vol. 18, No. 2, p. 43-45.
5. В. А. Елюхин, В. Р. Кочарян, Е. Л. Портной, Б. С. Рывкин – Особенности генерации когерентного излучения в гетеролазерах с плавным волноводным слоем, Письма в ЖТФ, 1980, т.6, N4, стр. 244-246.

АВТОМАТИЧЕСКАЯ СЕЛЕКЦИЯ НУЛЕВОЙ МОДЫ В ГЕТЕРОЛАЗЕРАХ С ПЕРЕМЕННЫМ СОСТАВОМ ЭМИТТЕРОВ

Эрмине Чароян
Ванадзорский государственный университет, физмат, физика III

РЕЗЮМЕ

***Ключевые слова**: гетеролазер, поперечные моды, коэффициент оптического огеаничения, волновое уравнение, генерация, функция Эйри.*

Представлены распределения оптических полей поперечных мод в гетеролазерах с переменним показателем преломления эмиттеров. Показано, что такая конструкция в гетеролазерах реализирует автоматическая селекция поперечных мод и обеспечивает генерация только нулевой моды.

AUTOMATIC SELECTION OF ZERO MODE IN EMITTER VARIABLE STRUCTURE HETEROLASERS

Hermine Tjaroyan
Vanadzor State University, Faculty of Physmath, physic III

SUMMARY

***Key words**: heterolaser, transfer modes, optical restriction coefficient, wave equation, generation, Airy function.*

The article deals with the study of optical fields' distributions of transfer modes in emitter semiconductor heterolasers with the indicator of variable refraction. The article indicates the fact, that such a structure performs an automatic selection of transfer mode in heterolasers and provides only zero mode generation.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Անահիտ Հովակիմյան
ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՔՎԵՍՏԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ 8

Արմինե Խրոյան
ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 12

Արմինե Շախկյան
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԱԿԻՐՆԵՐԻ ՀԵՏ.....19

Արմինե Սևումյան
ԴԵՌԱՀԱՍԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ: ԶԳՈՒՇԱՆԱ՞Լ, ԹԵ՞ ԽՐԱԽՈՒՍԵԼ.....28

Նարգիզ Մկրտչյան
ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ 35

Նարե Ալիզադայան
ՊՐՈԲԱՑԻՈՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՎԱԽԱԽՏՆԵՐԻ ՀԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ.....43

Ռիմա Պետրոսյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 51

Ռիմա Պետրոսյան
ՈՒՍՄԱՆ ՄԵՋ ՉԱՌԱՋԱԴԻՄԵԼԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ.....55

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Էմմա Թորիկյան
ՄԱՐՏՈՒՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ «ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵՐԳԵՐ» ՎՈԿԱԼ ՇԱՐՔԸ 61

Վարդիթեր Կարապետյան
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 67

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղունիկ Սահակյան
1848 Թ. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ...73

Զինա Ավետիսյան
ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՏՈՒՍՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻՆ 83

Հասմիկ Սողոմոնյան
ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ 91

Յուրի Գասպարյան
ԻՆՔՆԻՐԱՎՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱՁՄԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 98

Նոննա Ալավերդյան
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ 107

Աննա Սաղաթելյան
ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ 115

Տիգրան դպիր Ասատրյան
ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 125

Անի Օհանյան
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԵՎ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 133

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անի Չատինյան
ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ 146

Լիլիթ Ղուլինյան
ԵՐԱԺՇՏԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌՈՎ ԳՐՎԱԾ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 152

Լիլիթ Ներսիսյան
ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐՈ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆԻ «ԷՄՄԱ» ՎԵՊՈՒՄ 158

Կարեն Մանուչարյան
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ
ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ԳՈՒՐԱՄ ՓԱՆՋԻԿԻՋԵԻ «ԱԿՆԱՔԱՐ» ՎԵՊՈՒՄ 165

Նարեկ սրկ. Բեգունց
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՇԱՆԹԻ
«ՀԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐ» ԵՎ «ԿԱՅՍՐ» ԴՐԱՄԱՆԵՐՈՒՄ 174

Սիլվա Գասոյան
ԱՄԻՐՊՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑՈՒ «ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ»
ԵՐԿԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 181

Սոնա Ալավերդյան
Ե. ՉԱՐԵՆՑԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ ԱՊՐՈՒՄԻ ԲԱՌԱՅԻՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՍԻՄՎՈԼԻԿ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ (METAPHORA) 192

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անի Հարությունյան
ԱՆԳԼԵՐԵՆԻ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ, ՌՈՒՍԵՐԵՆԻ,
ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ՝ ԲԱՐԲԱՌԻ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐՈՎ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ 205

Արփինե Թաթլյան
ԱՆՁԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ 216

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՔԻՄԻԱ

Անի Հովհաննիսյան
ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ՄԱՔՈՒՐ ԲՆԱՄԹԵՐՔԻ ՍՏԱՑՈՒՄԸ
ՍԵՎ ԹԱՆԹՐՎԵՆՈՒ SAMBUCUS NIGRA L. ՏԵՍԱԿԻ ԲՈՒՅՍԻ
ԳԵՆԵՐԱՏԻՎ ՕՐԳԱՆՆԵՐԻՑ 224

Գարիկ Վանյան
LILIUM ՑԵՂԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ 230

Նանե Պետրոսյան
ՀԻՊՈԴԻՆԱՄԻԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ
ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐՈՒՄ 237

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անի Գևորգյան
ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2000-2015 ԹԹ. 242

Արփինե Մարտիրոսյան
ԴՈԼԱՐԻԶԱՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....249

Նինա Բալայան
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ 261

Իննա Սարգսյան
ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ 269

Լիանա Բարխուդարյան
ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ 280

Մելսիդա Թովմասյան
ԱՐՏԱԳՂԹԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....291

Մերի Խոյեցյան
ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 297

Շուշանիկ Աբովյան
2013-2015 ԹԹ. ԵՏՄ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳՆԱՃԻ ԵՎ ՌՈՒԲԼՈՒ ԿՈՒՐՍԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ 308

ՖԻԶԻԿԱ

Հեղինե Դավթյան
ՊԻՐՈՒՖԵԿՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԳՆԵՏՈՒԼԵԿՏՐԻԿՆԵՐՈՒՄ.....318

Հերմինե Ճարոյան
ԶՐՈՅԱԿԱՆ ՄՈԴԻ ԱՎՏՈՄԱՏ ՍԵԼԵԿՑԻԱՆ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ ԷՄԻՏԵՐՆԵՐՈՎ ՀԵՏԵՐՈԼԱԶԵՐՆԵՐՈՒՄ 330

СОДЕРЖАНИЕ

ПЕДАГОГИКА, ПСИХОЛОГИЯ, СОЦИАЛЬНАЯ РАБОТА

Анаит Овакимян
ИСПОЛЬЗОВАНИЕ ОБРАЗОВАТЕЛЬНОГО
КВЕСТА В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ 8

Армине Хроян
РОЛЬ СКАЗОК В НАЧАЛЬНЫХ КЛАССАХ С ТОЧКИ ЗРЕНИЯ
ТЕРАПЕВТИЧЕСКОЙ ФУНКЦИИ 12

Армине Шахкян
ОСОБЕННОСТИ СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ
С ВИЧ-ИНФИЦИРОВАННЫМИ 19

Армине Севумян
ПОДРОСТОК И КОМПЬЮТЕР: ПРЕДУПРЕЖДАТЬ ИЛИ ПООЩРЯТЬ 28

Наргиз Мкртчян
ПЕДАГОГИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ КОМИТАСА 35

Наре Аслизадян
ОСОБЕННОСТИ ИСПЫТАТЕЛЬНОГО КОНТРОЛЯ
СОЦИАЛЬНОЙ РАБОТЫ С ПРАВОНАРУШИТЕЛЯМИ 43

Рима Петросян
НАСИЛИЕ ДЕТЕЙ В СОВРЕМЕННЫЕ ВРЕМЕНА 51

Рима Петросян
ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ НЕПРОГРЕСС
КАК ПЕДАГОГИЧЕСКАЯ ПРОБЛЕМА… 55

ИСКУССТВОВЕДЕНИЕ

Эмма Торикян
ВОКАЛЬНЫЙ ЦИКЛ МАРТУНА ИСРАЭЛЯНА «ОСЕННИЕ ПЕСНИ» 61

Вардитер Карапетян
КАМЕННЫЕ СВИДЕТЕЛЬСТВА МУЗЫКИ 67

ИСТОРИЯ, ЮРИСПРУДЕНЦИЯ

Агуник Саакян
ВИДНЫЕ ДЕЯТЕЛИ ФРАНЦУЗСКОЙ РЕВОЛЮЦИИ 1848 Г. 73

Зина Аветисян
СВАДЕБНАЯ ЦЕРЕМОНИЯ В НОРАТУСЕ
ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 20-ГО ВЕКА 83

Асмик Согомонян
ПРАВОВАЯ КУЛЬТУРА КАК УСЛОВИЕ СТАНОВЛЕНИЯ
ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА 91

Юри Гаспарян
НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ
СОСТАВА САМОУПРАВСТВА 98

Нонна Алавердян
НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В СРЕДНЕЙ АЗИИ 107

Анна Сагателян
СОВРЕМЕННЫЕ И ТРАДИЦИОННЫЕ ПРОЯВЛЕНИЯ
ПОХОРОННОГО РИТУАЛА В ГОРОДЕ ГАВАР 115

Тигран Асатрян
УСТАНОВЛЕНИЕ АРАБСКОГО ВЛАДЫЧЕСТВА В АРМЕНИИ 125

Ани Оганян
ПРОСТРАНСТВЕННОЕ И ФУНКЦИОНАЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ
СВЯТЫХ МЕСТ ГОРОДА ГАВАР 133

АРМЯНСКИЙ ЯЗЫК, ЛИТЕРАТУРА

Ани Чатинян
ОМОНИМИЧНЫЕ ОКОНЧАНИЯ ГЛАГОЛА В СРЕДНЕАРМЯНСКОМ 146

Лилит Гулинян
ВЫРАЖЕНИЕ МУЗЫКАЛЬНЫХ СЛОВ В НАРОДНЫХ СКАЗКАХ,
НАПИСАННЫХ НА АРАРТСКОМ ДИАЛЕКТЕ 152

Лилит Нерсисян
ПРОБЛЕМЫ ПАТРИОТИЗМА И ЛЮБВИ В РОМАНЕ
ВРТАНЕСА ПАПАЗЯНА «ЭММА» 158

Карен Манучарян
РЕЦЕПЦИЯ СОЦИАЛЬНОЙ ДИСГАРМОНИИ В РОМАНЕ
ГУРАМА ПАНДЖИКИДЗЕ «КАМЕНЬ ЧИСТОЙ ВОДЫ» 165

Нарек Бегунц
ВОПРОС СОВЕРШЕНСТВИЯ ЧЕЛОВЕЧЕСКОЙ ДУШИ В ДРАМАХ ШАНТА «СТАРЫЕ БОГИ» И «ИМПЕРАТОР» 174

Сильва Гасоян
ИЗУЧЕНИЕ БОТАНИЧЕСКИХ ТЕРМИНОВ В ПРОИЗВЕДЕНИИ АМИРДОВЛАТА АМАСИАЦИ “ПОЛЬЗА МЕДИЦИНЫ” 181

Сона Алавердяан
ПРЕВРАЩЕНИЕ СЛОВЕСНОГО ПРОЯВЛЕНИЯ ПЕРЕЖИВАНИЯ В СИМВОЛИЧЕСКУЮ УСЛОВНОСТЬ И ПЕРЕНОСНОЕ СЛОВО (МЕТАФОРА) В ПОЭЗИИ Е. ЧАРЕНЦА 192

ИНОСТРАННЫЕ ЯЗЫКИ, ЛИТЕРАТУРА

Ани Арутюнян
СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СОМАТИЧЕСКИХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ АНГЛИЙСКОГО, НЕМЕЦКОГО, РУССКОГО, АРМЯНСКОГО И КАРАБАХСКОГО ДИАЛЕКТОВ 205

Арпине Татлян
ПРАГМАТИЧЕСКИЕ И СМЫСЛОВЫЕ ОСОБЕННОСТИ ВОПРОСОВ С ХВОСТОМ В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ 216

БИОЛОГИЯ, ХИМИЯ

Ани Оганнисян
ПОЛУЧЕНИЕ ЭКОЛОГИЧЕСКИ ЧИСТОГО ПРОДУКТА ОТ ГЕНЕРАТИВНЫХ ОРГАНОВ ЧЕРНОЙ БУЗИНЫ SAMBUCUS NIGRA L. 224

Гарик Ванян
РАСПРОСТРАНЕНИЕ РОДА Lilium В ЭКОСИСТЕМАХ СЕЛА ШАМУТ ЛОРИЙСКОГО МАРЗА 230

Нане Петросян
НАЛИЧИЕ ГИПОДИНАМИИ И ВЫЯВЛЕНИЕ ДИНАМИКИ СРЕДИ РАЗНЫХ ВОЗРАСТНЫХ ГРУПП 237

ЭКОНОМИКА

Ани Геворкян
СТРУКТУРА И ДИНАМИКА РАЗВИТИЯ ВНЕШНЕГО ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА РА 2000-2015ГГ. 242

Арпине Мартиросян
ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ДОЛЛАРИЗАЦИИ И ТЕМПЫ ИЗМЕНЕНИЙ В ЭКОНОМИЧЕСКОЙ СИСТЕМЕ РА 249

Нина Балаян
НЕОБХОДИМОСТЬ ФОРМИРОВАНИЯ АНАЛИТИЧЕСКИХ ЦЕНТРОВ В НКР 261

Инна Саргсяан
ИЗУЧЕНИЕ ДИНАМИКИ БЕЗРАБОТИЦЫ И ЕЕ ВЛИЯНИЕ НА МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПОКАЗАТЕЛИ..... 269

Лиана Бархударян
ВОЗМОЖНОСТИ И ЦЕЛЕСООБРАЗНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА АНТИМОНОПОЛЬНОЙ ПОЛИТИКИ В РА..... 280

Мелсида Товмасяан
ПРИЧИНА И ПОСЛЕДСТВИЯ МИГРАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 291

Мери Хоецяан
ЗАРУБЕЖНЫЙ ОПЫТ РАСЧЕТА НАЛОГОВ С ЗАРАБОТНОЙ ПЛАТЫ И ВОЗМОЖНОСТИ ВНЕДРЕНИЯ В РА 297

Шушаник Абовян
ВЛИЯНИЕ ИНФЛЯЦИИ И ИЗМЕНЕНИЯ КУРСА РУБЛЯ НА ТЕНДЕНЦИИ ИМПОРТА РА В РЕЗУЛЬАТАТЕ ЧЛЕНСТВА В ЕЭС В 2013-2015 ГГ. 308

ФИЗИКА

Гегине Давтян
ИССЛЕДОВАНИЕ ПИРОЭФФЕКТА В СЕГНЕТОЭЛЕКТРИКАХ..... 318

Эрмине Чароян
АВТОМАТИЧЕСКАЯ СЕЛЕКЦИЯ НУЛЕВОЙ МОДЫ В ГЕТЕРОЛАЗЕРАХ С ПЕРЕМЕННЫМ СОСТАВОМ ЭМИТТЕРОВ..... 330

CONTENTS

PEDAGOGY, PSYCHOLOGY, SOCIAL WORK

Anahit Hovakimyan
THE USE OF EDUCATIONAL QUEST IN PRIMARY SCHOOL.....8

Armine Khroyan
THE ROLE OF FAIRY TALES IN THE POINT OF VIEW
OF THERAPEUTIC FUNCTION PERFORMANCE
IN PRIMARY CLASSES 12

Armine Shakhkyan
SPECIFICS OF SOCIAL WORK WITH HIV-INFECTED PATIENTS 19

Armine Sevumyan
TEENAGER AND COMPUTER: TO BE WARNED OR TO ENCOURAGE 28

Nargiz Mkrtchyan
PEDAGOGICAL VIEWS OF KOMITAS 35

Nare Aslizadyan
PROBATION CONTROL FEATURES
IN SOCIAL WORK WITH OFFENDERS.....43

Rima Petrosyan
CHILDREN'S VIOLENCE IN OUR DAYS 51

Rima Petrosyan
THE EDUCATION UNPROGRESS AS A PEDAGOGICAL PROBLEM 55

ART SCIENCE

Emma Torikyan
COMPOSER MARTUN ISRAYELYAN'S VOCAL SYCLE "AUTUMN SONGS".... 61

Varditer Karapetyan
STONE EVIDENCE OF THE MUSIC 67

HISTORY, JURISPRUDENCE

Aghunik Sahakyan
IMPORTANT FIGURES IN THE FRENCH REVOLUTION OF 1848 73

Zina Avetisyan
THE WEDDING CEREMONY IN NORATUS
IN THE MIDDLE OF 20TH CENTURY 83

Hasmik Soghomonyan
LEGAL CULTURE AS A CONDITION OF FORMATION
OF CIVIL SOCIETY 91

Yuri Gasparyan
SOME ISSUES OF IMPROVING THE CORPUS
DELICTI OF ARBITRARINESS 98

Nonna Alaverdyan
THE NATIONAL ISSUE IN THE MIDDLE ASIA..... 107

Anna Saghatelyan
TRADITIONAL AND CONTEMPORARY MANIFESTATIONS
OF FUNERAL RITUALS IN GAVAR..... 115

Tigran Asatryan
THE BASIS OF THE ARAB DOMINION IN ARMENIA 125

Ani Ohanyan
THE SPATIAL AND FUNCTIONAL SIGNIFICANCE
OF THE HOLY PLACES OF GAVAR 133

ARMENIAN LANGUAGE, LITERATURE

Ani Chatinyan
HOMONIMIC VERBAL ENDINGS IN MIDDLE ARMENIAN 146

Lilit Ghulinyan
EXPRESSION OF MUSICAL WORDS IN TALES
WRITTEN IN ARARAT DIALECT 152

Lilit Nersisyan
PROBLEMS OF PATRIOTISM AND LOVE IN VRTANES
PAPAZYAN'S NOVEL "EMMA" 158

Karen Manucharyan
THE PORTRAYAL OF SOCIAL INCONSISTENCY
IN GURAM PANJIKIDZE'S NOVEL "THE PRECIOUS GEM"..... 165

Narek Begunts
QUESTION OF A PERFECTION OF A HUMAN SOUL IN
SHANT'S DRAMAS "OLD GODS" AND "EMPEROR".....174

Silva Gasoyan
THE EXAM OF BOTANICAL TERMS OF THE WORK
"BENEFIT OF MEDICINE" BY AMIRDOVLAT AMASIATSI.....181

Sona Alaverdyan
SYMBOLIC AND METAPHORICAL EXPRESSIONS OF FEELING
IN THE POETRY OF Y. CHARENTS 192

FOREIGN LANGUAGES, LITERATURE

Ani Harutyunyan
THE COMPARATIVE ANALYSIS OF THE SOMATIC PHRASEOLOGICAL
UNITS IN ENGLISH, GERMAN, RUSSIAN, ARMENIAN
AND IN THE KARABAKH DIALECT.....205

Arpine Tatlyan
THE SEMANTIC REPRESENTATION AND PRAGMATIC
INTERPRETATION OF TAG QUESTIONS IN MODERN ENGLISH.....216

BIOLOGY, CHEMISTRY

Ani Hovhannisyan
THE RECEIPT OF ENVIRONMENTALLY FRIENDLY
GOODS FROM THE GENERATIVE ORGANS
OF THE SAMBUCUS NIGRA PLANT SPECIES.....224

Garik Vanyan
DISTRIBUTION KIND Lilium IN ECOSYSTEMS SHAMUT
VILLAGE OF LORI REGION 230

Nane Petrosyan
THE EXISTENCE OF HYPODYNAMIA AND THE DISCOVERY
OF DYNAMICS IN DIFFERENT AGE GROUPS 237

ECONOMICS

Ani Gevorgyan
THE STRUCTURE OF EXTERNAL PUBLIC DEBT DYNAMICS
AND DEVELOPMENT IN 2000-2015 242

Arpine Martirosyan
THE SPECIFICITIES AND CHANGE DYNAMICS
OF DOLLARIZATION IN ECONOMY OF RA 249

Nina Balayan
THE NECESSITY OF FORMATION ANALYTICAL
CENTERS IN NKR 261

Inna Sargsyan
THE STUDY OF THE DYNAMICS OF UNEMPLOYMENT
AND ITS IMPACT ON MACROECONOMIC INDICATORS 269

Liana Barkhudaryan
ANTITRUST POLICY IN DIFFERENT COUNTRIES AND
THE POSSIBLE USE OF INTERNATIONAL EXPERIENCE
IN THE NATIONAL ECONOMY 280

Melsida Tovmasyan
CAUSES AND CONSEQUENCES OF EMIGRATION IN
THE REPUBLIC OF ARMENIA 291

Mary Khoyetsyan
STUDY OF THE FOREIGN EXPERIENCE OF WAGE-TAX AND
ITS APPLICATION POSSIBILITIES IN REPUBLIC OF ARMENIA 297

Shushanik Abovyan
THE EFFECTS OF INFLATION AND CHANGES IN THE RUBLE
EXCHANGE RATE TRENDS ON IMPORTS AS A RESULT
OF MEMBERSHIP IN THE EIO IN 2013-2015 308

PHYSICS

Heghine Davtyan
PIROEFFECT RESEARCH IN FERROELECTRICS 318

Hermine Tjaroyan
AUTOMATIC SELECTION OF ZERO MODE
IN EMITTER VARIABLE STRUCTURE HETEROLASERS 330

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 6-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Երևան
«Արման Ասմանգուլյան» ԱՁ
2017

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМ. О. ТУМАНЯНА

МАТЕРИАЛЫ РЕСПУБЛИКАНСКОЙ СТУДЕНЧЕСКОЙ 6-ОЙ КОНФЕРЕНЦИИ

Ереван
«Арман Асмангулян» ЧП
2017

RA MINSITRY OF EDUCATION AND SCIENCE

VANADZOR STATE UNIVERSITY
AFTER H. TOUMANYAN

MATERIALS OF THE 6TH REPUBLICAN STUDENT CONFERENCE

Yerevan
"Arman Asmangulyan" Individual Entrepreneur
2017

Սրբագրիչ՝ Լիլիթ Ղուլինյան
Համակարգչային ձևավորող՝ Աշխեն Գալստյան

Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60 X 84 1/16
Ծավալը՝ 22 մամուլ
Տպաքանակը՝ 100

Տպագրվել է ԱՁ «Արման Ասմանգուլյան»-ում
Երևան – 2017

Корректор – Лилит Гулинян
Компьютерное оформление – Ашхен Галстян

Бумага – офсетная
Размер – 60 X 84 1/16
Объем – 22 печатных листов
Тираж –100 экземпляров

Издано в «Арман Асмангулян» ЧП
Ереван – 2017

Proofreader: Lilit Ghulinyan
Computer Design: by Ashkhen Galstyan

Offset Paper
Size: 60 X 84 1/16
Amounted to 22 Press
Print Run: 100

Published in “Arman Asmangulyan” PE
Yerevan – 2017